



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ  
ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ**

**ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

# **ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆ**

**Կյանքը և գործը**

**ԵՐԵՎԱՆ**

**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**2013**

ՀՏԴ 809.198.1  
ԳՄԴ 81.2Հ  
Ս 887

**Խմբագրությամբ Պ. Ստեփանյանի  
և Ա. Տեր-Ստեփանյանի**

**Ստեփանյան Գ.**

Ս 887 Հրաչյա Աճառյան: Կյանքը և գործը / Գ. Ստեփանյան.-  
Եր.: ԵՊՀ Հրատ., 2013.- 344 էջ:

ՀՏԴ 809.198.1  
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-1787-8

Ստեփանյան Գ., 2013  
ԵՊՀ Հրատ., 2013

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայ իրականություն մեջ դժվար է գտնել մտքի մի այլ մշակ, որն ունենա այնպիսի բեղմնավոր գործունեություն, ինչպիսին ունեցել է Հրաչյա Աճառյանը՝ Փիղիկապետ թույլ, փոքր հասակից մի աչքից զրկված, նախասովետական տարիների Հայ ուսուցչի ճակատագրի բերումով քաղաքից քաղաք շրջագայած, միայն գիտությունը զինվորագրված այդ տարօրինակ գիտնականը, որի զարմանալի ջանասիրությունը, տոկունությունը, բարեխղճությունը, սկզբունքայնությունը առածի կարգ էր անցել դեռևս նրա կենդանություն օրերին: Նա այժմ հանգչում է Երևանի Հայ մշակույթի գործիչների պանթեոնում, գրանիտե սրբատաշ մի շիրմաքարի տակ, որի վրա արձանագրված է բազմախոս մի բառ՝ **Աճառյան:** Ոչ մի շիրմաքար չէր կարող համեմատվել այն հսկա, առհավետ կենդանի հուշարձան կոթողի հետ, որ կերտել է նա իր 60-ամյա մեղվաջան աշխատանքով: Այդ կոթողն ինքնին Հայագիտությունն է, պատվանդան ունենալով «Հայոց լեզվի արմատական բառարանի» 6 սովոր հատորները, «Հայոց լեզվի պատմություն» երկու հատորները, «Հայոց լեզվի համեմատական քերականություն» տասը հատորները, բարբառագիտական, պատմաբանասիրական բազում այլ երկեր, որոնք իրավամբ հեղինակի համար ապահովում են արժանի տեղ համաշխարհային լեզվաբանություն մեջ:

Ու այժմ, երբ փորձում ենք բաց անել մեծավաստակ հայագետի կյանքի ու ստեղծագործությունից դոնները, ընթանալ նրա արահետներով, թափանցել մութ ու անկոխ խորշերը, օրինական անհամարձակությունն ու երկյուղածությունը, միախառնված պատասխանատվության խոր գիտակցությունը, բռնում են մեր գրիչը, հետ պահում, հուշում մեր ականջին, թե արդյո՞ք պիտի կարողանանք ցուցադրել մարդն ու գիտնականը հատկանշող տիտանական այդ մեծությունը:

Մեզ չի զբաղեցնելու միայն գիտնականը, նրա գիտական

Ժառանգութիւնը, այլև մարդն իր հոգեկան ու մտավոր հարուստ ներաշխարհով, բնավորութեան գծերով, հակասութիւններով ու բարդ ելևէջներով, միով բանիվ՝ հոգեկան կառուցի ամբողջութեամբ, որ բնութագրական էր միայն Աճառոյանին:

Որպես խոշորագույն հայագետ մնում է անհաս բարձրութիւն, հորդառատ մի աղբյուր, որը դեռևս սնելու է շատ սերունդներին:

Դժվար է ու բարդ նման մի մեծութեան կենսագրի պարտականութիւնն ստանձնելը: Համարձակվում ենք այդ քայլը կատարել՝ նկատի ունենալով այն հարուստ ատաղձը, որ հավաքել ենք անցած քսանհինգ տարիների ընթացքում: Մեզ ուժ է ներշնչում նաև մեր քսանամյա անձնական ծանոթութիւնը: Գրաչարութեան տարիներից՝ 1934 թվականից մտերմական կապերով կապված ենք եղել Աճառոյանի հետ, երբ շարում էի «Արմատական բառարանի» հավելվածային 7-րդ հատորը: Հետո շարեցի «Գրաբարի ծաղկաքաղը», ավելի ուշ՝ «Պարսկական հատընտիրը»: Գրաչարութեանը հաջորդեցին ուսանողական անկրկնելի տարիները, մի ամբողջ հնգամյակ համալսարանում որպես ուսանող, տանը որպես բարեկամ վայելելով մեծ գիտնականի մտերմութիւնը: Հետո եկավ ասպիրանտական շրջանը, երբ առավել փոքրաթիվ մի խումբ ուսանողներ, - բոլորն էլ այժմ լեզվաբանութեան բնագավառի հայտնի դեմքեր, - երեք տարի անհագուրդ ըմբոշխնում էինք մեծ ուսուցչապետի ամեն մի նախադասութիւնը: Չէինք բավարարվում դասաժամերով, ուղեկցում էինք մինչև տուն, հաճախ այցելում երեկոները և հյուրընկալ սեղանի շուրջ՝ նորից ու նորից լսում նրա անհատնում գրույցները հայ լեզվաբանութեան, գրականութեան, մշակույթի գանազան հարցերի, անցած գնացած դեպքերի, գալիք օրերի մասին:

Երկար տարիներ մոտիկից կապված լինելով նրա հետ, ուսումնասիրել ենք առօրյա կյանքը ամենայն մանրամասնութեամբ, տեսել ենք նրան տարբեր հոգեվիճակների մեջ՝ զայրացած, փոթորկումների պահերին, հանգիստ, ուրախ վիճակում, կերուխումի ժամանակ, ծանր վշտի օրերին, ընտանեկան ջերմ մթնոլորտում կամ պաշտոնական վայրերում, տեսել ենք երբ սովորեցնում էր, երբ սովորում էր, երբ հանդիմանում էր կամ գուրգուրում, տեսել ենք Մեյքեի նամակներն ընթերցելիս կամ անձնական հարցով որևէ

Հիմնարկի դիմում գրելիս: Ու այս բոլոր դեպքերում նա մեզ ներկայացել է նույն բարեմիտ, ազնիվ, անմիջական մարդ, նույն հոգով, նույն ղեմքով: Հազվադեպ նկարագիր առհասարակ հայ մշակույթի պատմություն մեջ:

Այս ամբողջ ժամանակամիջոցում իմ սովորությունն էր նշումներ կատարել, գրի առնել սիրելի ուսուցչի պատմածները: Այդ գիտեին իմ ընկերները, գիտեր և ինքը, որ բարեմիտ ժպիտով ասում էր. «Գրեցեք, մի օր պետք կգա»:

Այս աշխատության բուն հիմքը կազմող նյութը, սակայն, վերցրել եմ մի այլ առիթով, որն ուզում եմ հիշատակել ընթերցողի ներողամտությունը հայցելով: 1946 թվականին, Աճառյանի ծննդյան 70-ամյակի առիթով Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերության կողմից ինձ հանձնարարվեց գրել կենսագրական ընդարձակ հոդված՝ սփյուռքի հայ մամուլի համար:

Մի երեկո եղա նրա մոտ. տրամադրությունը վատ էր, հուզված, ինչ-որ առիթով զայրացել էր, բղավում էր, սենյակում արագ քայլում: Ցանկացա հետ դառնալ, հարցրեց, թե ով է եկողը. առաջարկեց նստել:

Հնազանդվեցի: Աստիճանաբար հանգստացավ, եկավ նստեց բազկաթոռին, հարցրեց ղեսից ղենից: Հայտնեցի այցիս նպատակը և խնդրեցի որոշել մի այլ օր, երբ տրամադրությունը տեղը կլինի, որպեսզի պատմի իր կյանքի հիմնական դրվագները:

Սկզբում տհաճությամբ լսեց. ավելորդ համարեց նման մի հոդված, բայց հետո, երբ արդեն սուրճի դատարկ բաժակը դրեց սեղանին, փոխվեց, հանգստացավ, սկսեց սովորական կատակները: Այդպես էր նա. ծովի հուժկու ալիքների նման կարող էր փոթորկվել, զայրանալ, բայց իսկույն էլ հանգստանալ: Առանց կրկնել տալու առաջարկ՝ ինքնաբերաբար սկսեց պատմել: Հանեցի լրագրողի անբաժան ղենքերը՝ թուղթ ու մատիտ, սկսեցի նշումները: Սկզբում պատմում էր անտրամադիր, ցաք ու ցրիվ, ինչ որ իր հիշողության գրատախտակի վրա ավելի խորն էր դրոշմված: Հետո, երբ նկատեց իմ եռանդուն գրառումները, ասաց. «Լավ, սկզբից պատմեմ»: Ու պատմեց մանրամասնորեն, հետզհետե խանդավառվելով, երևակայությամբ տեղափոխվելով անցյալ դարավերջի Պոլիսը՝ իր առեղծվածային հակասություններով,

բարքերի գանազանուծյամբ, ուրույն կենցաղով, նիստ ու կացով: Պատմեց մինչև ժամը 11-ը. հասել էր պատանեկան տարիներին, իր առաջին սիրո դրվագներին. հիմա մի քանի ժամ առաջվա գայրացած մարդը չէր, փոխվել էր դեմքի գույնը, խոնավացել էին աչքերը. կատարվել էր մի սքանչելի հրաշափոխություն, որն ամենից շուտ նշմարեց կինը՝ տիկ. Սոֆիկը և մի առիթ գտնելով շնչաց ականջիս. «Բնչ լավ եղավ, որ եկաք, Հրաչյան հանգստացավ»: Ինչպես հեքիաթ պատմող գուսաններն են անում, ամենահետաքրքիր տեղը հասնելով՝ ընդհատեց պատմությունը, առաջարկեց շարունակել հաջորդ օրը նույն ժամին: Ինձ համար էլ դա հաճելի էր. ուզում էի լսել մանրամասնորեն: Երկրորդ օրը պատմեց Փարիզյան ծանր տարիները, մինչև Ստրասբուրգ գնալը: Պատմեց երրորդ, չորրորդ օրերն էլ, հասցնելով մինչև մեր օրերը:

Նրա պատմածները գրի էի առնում գրեթե սղագրելով: Ստացվել էր թղթերի մի մեծ դեզ, որին նայելով վերջին օրը ժպտաց ու ասաց կնոջը.՝ Սոֆիկ, կարծում ես թե մի հոգվածի համա՞ր է գրի առնվում այսքան նյութ: Գիտեմ, նա պահելու է այս բոլորը և հետագայում գրելու է իմ ընդարձակ կենսագրությունը: Այդ իմանալով՝ մանրամասն պատմեցի, մանավանդ որ դժար թե ժամանակ ունենամ ինքս գրի առնելու հիշողություններս: Թող գրի:

Բարեբախտաբար, հետագայում, կյանքի վերջին տարիներին հնարավորություն ունեցավ թելադրելու իր արժեքավոր հուշերը, որոնք գրի առնվեցին նրա սիրասուն դուստր Քնարիկ Աճառյանի և աշակերտներից մեկ երկուսի կողմից և տպագրվեցին վերջին տարիներս:

Իմ ընդարձակ հոգվածը տպագրվեց սփյուռքահայ թերթերում ու ամսագրերում: Վերոհիշյալ թերթերից մի քանիսը ուղարկվել էին իրեն: Կարդում էր և մանկական հրճվանքով ցույց տալիս մասնավորապես պոլսահայ թերթերը,՝ ծննդավայրիս մարդիկ թող իմանան, որ դեռ աշխատում եմ, ասում էր:

Եվ այսպես, այս գրքի սկիզբը դրվեց 1946 թվականին: Ե՞րբ պիտի այն ամբողջացնեի: Աճառյանը մահացավ 1953 թ. ապրիլի 15-ին:

Առաջին տարիներին չէի համարձակվում ձեռնամուխ լինել այս գործին: Ժամանակը պիտի հասունացներ: Միայն 15 տարի անց սկսեցի ուսումնասիրել Աճառյանի գիտական ամբողջ

Ժառանգությունը, նայել բազմաթիվ արխիվներ, պարբերականներ, գրքեր, այդ թվում նրա տպագրված հուշերը:

Թող ներողամիտ լինի ընթերցողը, եթե երբեմն նրան լեզվաբանական հարցերի ոլորտից փոխադրենք Աճառյանի անձնական կյանքի քարքարուտ արահետները, իսկ վերջին տասնամյակների մասին խոսելիս՝ օգտագործենք մեր հուշերը: Կարծում ենք դա կօժանդակի ապագա սերունդներին՝ Աճառյանին հասկանալու ու ճանաչելու իր գրքերից դուրս, առավել ամբողջական, միաժամանակ կօգնի այն մարդկանց, որոնք առավել հանգամանալից գիտական հետազոտություններ պիտի գրեն ականավոր հայագետի մասին:



---

## Գլուխ առաջին

### Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հրաչյա Աճառյանի նախնիները ապրել են Մարմարա ծովի եվրոպական ափին գտնվող Ռոդոստո փոքրիկ քաղաքում, որը թուրքերն անվանում են Թեքիրդաղ: Այդ քաղաքն ունեցել է 3000 տուն հայ, 2000 տուն թուրք և 1000 տուն հույն բնակչություն<sup>1</sup>:

Հայերն այնտեղ են գաղթել պատմական Հայաստանի Կամախ և Եկեղյաց գավառներից, դեռևս 17-րդ դարի սկզբներին, Ջալալիների հայտնի արչավանքից հետո. հետագայում եկել են նաև այլ վայրերից, զբաղվել արհեստներով, երկրագործություններով, առևտրով և աստիճանաբար թվական գերակշռություն ձեռք բերել թե՛ այդ քաղաքի վաղեմի բնակիչ հույների և թե՛ տիրապետող թուրքերի նկատմամբ: Նրանք պահել են իրենց մայրենի լեզուն, տոհմիկ սովորությունները:

Աճառյանի նախնիները կոչվել են Հյուպրուք օղլիներ:

1840-ական թվականների վերջերից Հյուպրուքյանների ընտանիքը տեղափոխվել է Պոլիս, բնակություն հաստատել Մամաթիա աշխատավորական թաղամասում, որտեղ ծնվել է Աճառյանի հայրը՝ Հակոբը, 1850 թվականին:

Հակոբը հնարավորություն չի ունեցել հիմնավոր կրթություն ստանալու: Թաղի ծխական դպրոցում գրաճանաչ դառնալուց հետո ընդհատել է ուսումը, հետևել կոչկակարության: Ամուսնացել է Ընծա Քեմահճյան անունով անգրագետ մի աղջկա հետ:

Հակոբը ամուսնությունից հետո տան մի անկյունը դարձնում է խանութ, ձեռք բերում գործիքներ, սկսում կոչկակարի համեստ աշխատանքով ապահովել օրեցօր մեծացող ընտանիքի ապրուստը:

Ունեցել է վեց երեխա: Առաջինը՝ Արմենուհին, մեռել է փոքր հասակում, իսկ մյուսները մեծացել են, մեծացնելով նաև կոչկակարի հոգսը:

Արհեստավորի այս խղճուկ տանը 1876 թվի մարտի 8-ին ծնվում է կոչկակար Հակոբի երրորդ զավակը՝ Հրաչյան, առաջին արու զավակը, մեծ ուրախություն պատճառելով ծնողներին ու հարազատներին: Բայց դժբախտությունն էլ աննկատելիորեն ներս է մտնում նրանց տնից հենց հաջորդ տարի, վճռական հետք թողնելով նորածինի վրա: Միամիտ մայրն ամռան թեժ արևի տակ նրան գրկած բակ է դուրս գալիս և իր բազուկների մեջ պահում այնպիսի դիրքով, որ արևի ճառագայթներն ընկնում են ուղիղ երեխայի աչքերի մեջ և կուրացնում: Բժիշկներին հաջողվում է մի աչքը բուժել, իսկ մյուսը այնպես էլ կուրանում է, դարձնելով Հրաչյային միականի, այն էլ չիլ մի երեխա:

«Այսպես, ես իմ ամբողջ կյանքում միականի մնացի, - գրում է Աճառյանը, - փորձով կարող եմ ասել, որ մի ոտքով կամ մի ձեռքով լինելը շատ վատ բան է, բայց մի աչքով լինելը ոչ մի նշանակություն չունի: Ահագին «Արմատական բառարանս», հինգ հատոր «Անձնանունների բառարանս», 10 հատոր «Լիակատար քերականությունս» մի աչքի արդյունք են»<sup>2</sup>:

Հակառակ լավատես այս հավաստիացման, նա շատ է տառապել տկար տեսողության պատճառով: Լեզվաբանական հիսնամյա լարված աշխատանքը աստիճանաբար թուլացրել է նաև մյուս աչքը և կյանքի վերջին տարիներին գրեթե չէր տեսնում, ծանոթներին, հարազատներին ճանաչում էր ձայնից, աշխատում արդեն թելադրելով:

Բացի մահացած Արմենուհի և իրենից մեծ Հերսիլիա քույրերից, Հրաչյան ուներ իրենից փոքր երկու քույր (Արչալույս և Արմենուհի) և մի եղբայր (Հայկ): Հոգով ամենից շատ կապված է եղել Արմենուհու հետ:

Աճառյանը հորից սովորել է աշխատասիրություն: Նա ընտանիքում ճանաչեց աշխատանքով հաց վաստակելու դառնությունն ու քաղցրությունը, նրա համար աշխատանքը եղավ կյանքի խթանը, իսկ հանրօգուտ աշխատանքը՝ կյանքի միակ իմաստը: Չի պատկերացրել ավելի մեծ պատիժ, քան անգործությունը: Մինչև անգամ կյանքի ամենավերջին տարում 1952 թվականին իրեն միշտ զբաղեցրել է անաշխատ մարդու ճակատագիրը: Հուշերում պատմում է թե հաճախ երազում տեսնում է, որ մնացել է անգործ, անօգնական: Ու երբ դարձնում է, հիշում, որ զբաղմունք ունի, նոր միայն հանգստանում է:



**Հր. Աճառյանի ծնողները՝ Հակոբ և Ընժա Աճառյաններ**

Այս մտասևեռումը բնութագրական էր նրան: Հենց դա էլ այն վառելահյութն էր, որ փոքր հասակից ուժ տվեց՝ շարժվելու առաջ, միչտ առաջ, մաքառելու, հաղթելու, առանց վախենալու ճանապարհի փորձություններից ու դժվարություններից:

Այժմ դուրս գանք կոչկակար Հակոբի տնից, դիտենք շրջապատը՝ Պոլիսը, կախարդական Բոսֆորը, չքնաղ ափերով, ծովի ու ցամաքի գիրկընդխառնումներով, փարթամ բուսականությունամբ, տեսարժան վայրերով, բուժիչ ջրերով, մի խոսքով, բնություն հրաշալիքը կոչվելու իր բոլոր բարեմասնություններով, որոնք այնքան խորն են ազդել այդ քաղաքն այցելողների վրա և չէին կարող չազդել բանաստեղծական խառնվածքով օժտված պատանի Հրաչյայի վրա:

Պոլսի համար բնորոշը միայն բնության գեղեցկությունը չէր: Պոլսը Արևելքի և Արևմուտքի երկու հզոր մշակույթների, կենցաղի, սովորույթների, բարքերի խաչաձևման կետն էր: Այնտեղ համատեղ ապրում էին բազմալեզու, բազմակրոն, բազմակենցաղ տասից ավելի ժողովուրդներ՝ իրենց հոգեկան ուրույն կյանքով, զբաղմունքներով: Վաղեմի Բյուզանդիոնից մնացած ճարտարապետական հրաշակերտների կողքին, - ինչպիսին էր Այա Սոֆիայի համբավավոր տաճարը, - նշմարվում էին արաբա-թուրքական ճարտարապետության բազմաթիվ նմուշներ, կառուցված Բոսֆորի երկու ափերին՝ գերազանցապես հայ ճարտարապետների նախագծերով: Պերայի թատրոններում Ռոսինիի «Սևիլյան սափրիչ» օպերան լսողը մի քանի քայլ այն կողմ կարող էր ունկնդրել թուրքական սրճարաններում նեյ նվագողների, արևելյան մանիններ երգողների: Փողոցներում փարիզյան վերջին մոդայով հագնված կանանց կողքին կարելի էր նշմարել տրեխավոր գավառացիների, քառաձի չքեղ կառքերի հետևից՝ ավանակի վրա բազմած մարդկանց: Ու այս բոլորը՝ Բոսֆորի ափերին՝ այն Բոսֆորի, որի մասին Աճառյանի ուսուցիչներից մեկը գրել է թե որտեղ էլ որ եղել է, Եվրոպայի որ գեղատեսիլ վայրում, միշտ երազել է Բոսֆորը և կրկնել. «Հոն, սիրելիս, հոն կուզեմ որ տանիք դիս»<sup>3</sup>:

Նույն տպավորությամբ ապրեց Աճառյանը ամբողջ կյանքում: Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում Պոլսի մասին, հուզվում էր, երևակայությամբ տեղափոխվում Բոսֆորի ափերը:

Նա բնության այդ գեղեցկությունը չի դիտել Պերայի հարուստ ընտանիքների երեխաների աչքերով՝ նստած զբոսանավերի, գեղեցիկ նավակների մեջ, երգուպարի միջավայրերից, այլ տեսել է սամաթիացի առնական ձկնորսների բնության դեմ մղած ծանր պայքարի համանվագի տակ, տեսել նավահանգստային բանվորների տաժանակիր աշխատանքի շողկապումով:

Սամաթիա թաղամասը, որտեղ անցել է պատանու մանկությունը, Պոլսի այն հնագույն թաղերից էր, որտեղ 400 տարուց ի վեր հաստատվել էր հոծ հայություն: Սամաթիան հակադրությունն էր Պերայի: Եթե Պերայում կենտրոնացված էին մայրաքաղաքի հարուստ խավերը (մեծ վաճառականներ, պետական պաշտոնյաներ, բանկիրներ, օտարազգի առևտրա-

կան տներ, դիվանագետներ և այլն) և այստեղ ապրող հայերի կենցաղն էլ շատ էր նման ֆրանսիականին, ապա Սամաթիան, որտեղ ապրում էին հիմնականում ձկնորսներ, կոշկակարներ, երկաթագործներ և այլ արհեստավորներ, խորապես պահել էր ազգային դեմքը:

Հակոբ Պարոնյանն իր «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» երկում, միմյանց հակադրելով այդ երկու թաղամասերը, հարուստ հայերին համարում է օտարացած, այլասերված, «մաքուր ձեռքերով ու կեղտոտ խղճով» մարդիկ, որոնք ոչինչ չունեն հայ ժողովրդի հետ, իսկ մեծ հիացմունքով է խոսում Սամաթիայի հայերի մասին, ընդգծելով նրանց աշխատասիրությունը, ազգասիրությունը, մարդասիրությունը, հոգատարությունը դեպի դպրոցն ու գիրը, կապը ազգային կյանքի հետ<sup>4</sup>: Գրա բնորոշ ապացույցներից մեկը չէ՞ այն փաստը, որ Աճառյանի անգրագետ մայրը և կիսագրագետ հայրը իրենց երեխաներին տվել են հայկական կրթություն:

Սամաթիացի երիտասարդները Պոլսում հայտնի էին ֆիզիկական ուժով, թաղամասի պատիվը բարձր պահելու համառությամբ, արհամարհանքով՝ դեպի նրբացած, օտարացած էֆենդիները: Աճառյանը հպարտությամբ էր հիշում «Ախպարըմ Սամաթիայը» ժողովրդական արտահայտությունը, որ բառացի նշանակում է «եղբայրս Սամաթիացի» և ակնարկ է Սամաթիա թաղի առավելության՝ մյուս թաղամասերի համեմատությամբ:

Ականավոր հայագետն իր աշխատասիրության, ուղղամտության, կարիքավորների նկատմամբ ունեցած հոգատարության, առհասարակ բնավորության մի քանի գծերի ու գաղափարախոսության համար շատ բան է պարտական աշխատավորական այդ միջավայրին<sup>5</sup>:

Ձխոսեցինք ազգային կյանքի մասին, այն տարիների, երբ Աճառյանը երեխա էր:

Արևմտահայերի ոտմանտիզմի շրջանն անցել էր: Նախընթաց երկու տասնամյակներում հայ ժողովուրդն ապրել էր ազգային զարթոնքի բուռն վերելք: Գրականությունը, թատրոնը, մանավանդ մամուլը ցնցել, դարավոր քնից զարթեցրել էին ժողովրդին, հարկադրել մտածելու, որ ստրկությունը, կրավորական համակերպումը ի վերուստ սահմանված չէին հայ

ժողովրդի համար, որը նույնպես, ինչպես հույները, պիտի ոտքի կանգնեն, մտածեն իր ազատություն մասին: Հրաչյան երկու տարեկան էր, որ Սան Ստեֆանոյում խոսվում էր այդ մասին, ռուսական զորքը հասել էր Պոլսի ափերը, ռուս և հայ սպաները քայլում էին փողոցներով, թատրոնների կամարների տակ թնդում էին Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի և ուրիշների ազատասիրական բանաստեղծությունները, այն էլ Ադամյանի և այլ մեծ արվեստագետների կատարմամբ:

Աճառյանն իր տարրական կրթությունն ստացել է Սամաթիայի Արամյան վարժարանում, որտեղ նրան սովորեցրել են հայերենի, ֆրանսերենի, թուրքերենի նախազիտելիքները:

Այդ վարժարանը, որտեղ նա սովորել է երկու տարի, քիչ բան է տվել ուսման ծարավի երեխաներին. և եթե տվել է որևէ բան, ապա դա եղել է մղումը դեպի լեզուները, մասնավորապես մայրենի լեզուն:

Սակայն, ինչ որ չկարողացավ տալ Արամյան կոչվող այդ մասնավոր նախակրթարանը, տվեց Սամաթիայի Սահակյան վարժարանը, որը վճռական դեր է կատարել Աճառյանի նախասիրությունների ճշտման, հայրենասիրական զգացումների կազմավորման գործում: Այդ դպրոցի մասին մեծանուն հայագետը հարգանքով է խոսել մինչև կյանքի վերջին օրերը և ասել, թե շատ բան է պարտական նրան:

Սահակյան վարժարանը հիմնադրվել էր 1832 թվականին: Մեկ տասնամյակ անց կազմակերպվել էր «Սանուց միությունը», որի ջանքերով վարժարանում ստեղծվել էր ճոխ գրադարան, Վենետիկից, Թիֆլիսից ձեռք էին բերվել հազվագյուտ գրքեր, պարբերականներ:

Չանցած ևս մեկ տասնամյակ՝ 1851 թ. վարժարանն ունեցել էր իր տպագիր պաշտոնաթերթը՝ «Բուրաստան սուրբ Սահակյան» ամսագիրը, որն իր աշխարհաբար լեզվով, ճոխ բովանդակությամբ (գրականություն, պատմություն, աշխարհագրություն, ճշգրիտ գիտություններ) կարող էր մրցել ոչ միայն նույն 1851 թվականին Հիսարյանի խմբագրությամբ Պոլսում լույս տեսած «Բանասեր» հանդեսի, այլև Վենետիկի «Բազմավեպի» հետ: Դժբախտաբար այն շարունակվել է ընդամենը երկու տարի:

1860-ական թվականների ազգային զարթոնքը, քաղաքա-



**Այն տունը Կ. Պոլսում, ուր ծնվել է Հր. Աճառյանը**

կան ոռմանտիզմն իր ոլորտի մեջ էր առել Սահակյան վարժարանը, այն դարձրել Հայրենասիրական կրքեր հրահրող մի կենտրոն, որտեղ կրոնա-քարոյախոսական քարոզների, գիտելիքների փոխարեն թևածուծ էր պատմական անցյալի փառքը, նրա հերոսական զրվագների խանդավառ հոգեկոչումը:

Ստեղծվել էր նույն Սանուց միության թատերախումբը, որի բեմադրած բոլոր պիեսները, փաստորեն, բեմական խոսքի միջոցով մատաղ սերնդին սովորեցնում էին Հայ ժողովրդի պատմությունն իր ամենահպարտ էջերով՝ Արտաշեսի, Տիգրանի, Վարդանի սխրագործություններով<sup>6</sup>:

Վարժարանի պատերից մեկում մեծ ու կարմիր տառերով դրոշմված էր ղպրոցի հիմնական ոգին արտահայտող հետևյալ նախադասությունը. «Կյանքդ և արյունդ Հայրենիքիդ համար, խելքդ ու միտքդ գիտության համար»:

Այդ նույն միտքն էր հղովվում վարժարանի պաշտոնական քայլերգի մեջ, որտեղ ասվում էր, թե Սահակյան վարժարանի սաները Հայկա թոռներն են և պետք է բարձր պահեն Հայի անունը<sup>7</sup>:

Ահա այս ղպրոցի շեմքից ներս էր մտնում 9 տարեկան Հրաչյան 1885 թվականին:

Շատ բան էր փոխվել քաղաքական կյանքում: Ռուս-թուրքական պատերազմից հետո սկսված գրաքննական կաշկանդումներն իրենց հորձանուտի մեջ էին առել նաև ղպրոցները: Արգելվել էր Հայ ժողովրդի պատմություն, աշխարհագրություն, դասավանդումը, առհասարակ անցյալի վերհուշը: Գպրոցի պատերից ջնջված էր «Կյանքդ ու արյունդ Հայրենիքիդ համար» Հայտնի պատգամը, բայց ծեփի տակից դեռ կարդացվում էր նշանավոր միտքը ու գուցե ավելի խորը դրոշմվում երեխաների սրտերի մեջ, քան եթե այն չլիներ ջնջված: Մի մեծ կողպեք ազդարարում էր նաև քառասնամյա գրադարանի փակումը:

Անկախ մամուլի վրա զրված խիստ կաշկանդումներին, պարբերաբար ստացվող հրահանգներին, վարժարանում դեռ շարունակում էր Հայկական մթնոլորտը և այդ առաջին հերթին Հայրենասեր ուսուցիչների ջանքերով ու քաջալերանքով, որոնք որոնում և գտնում էին Հայրենասիրական դաստիարակություն չունեցող միջոցներ: Նրանց թույլտվությամբ աշակերտներ-



րը շարունակում էին երգել Ազգային Սահմանադրության և դպրոցի քայերգերը, «Կիլիկիա», «Մայր Արաքսի ափերով», «Ազատություն» և այլ հայրենասիրական երգերը, կարդում էին պաշտոնապես արգելված գրքեր:

Սահակյան վարժարանում դասավանդվում էին տասից ավելի առարկաներ՝ հայերեն (աշխարհաբար և գրաբար), թուրքերեն, ֆրանսերեն, թվարանություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն, գծագրություն, նկարչություն, եկեղեցական պատմություն, կրոնների պատմություն և այլն:

Առարկաների այս սոսկական թվարկումն անգամ ցույց է տալիս, թե որքան մեծ տեղ է տրվել գործնական նշանակություն ունեցող գիտելիքներին, առաջին հերթին լեզուներին ու ճշգրիտ գիտություններին:

Իսկ եթե ասենք, որ վերոհիշյալ առարկաները ավանդել են ժամանակի հայտնի դեմքերից շատերը, պարզ կարող է դառնալ, թե որքան ամուր է եղել այնտեղ ուսման պատվանդանը:

Աճառյանի վրա անջնջելի տպավորություն է թողել դպրոցի հայոց լեզվի ուսուցիչ Պաղտիկ ձիկերճյանը, որի նկատմամբ ունեցած իր երախտագիտությունը հետագայում արտահայտել է «Արմատական բառարանի» վերջում ուսուցիչների նկարների շարքում առաջին տեղը հատկացնելով նրան:

Դպրոցի բարձր դասարանում գրաբար է դասավանդել արձակագիր Մելքոն Կյուրճյանը: Նա գրական ասպարեզ էր մտել նույն այդ տարիներին՝ արևմտահայ իրապաշտ գրականության մեջ բաց անելով ուրույն մի էջ՝ հայ գավառի քայքայման մեծ ողբերգության ցուցադրումով: Ինչպես ձիկերճյանը, Կյուրճյանն էլ եղել է աշակերտների սիրելի ուսուցիչներից: Այս մասին ավելի ընդարձակ կխոսենք Կենտրոնական վարժարանին նվիրված էջերում:

Թուրքերենի ուսուցիչն էր ականավոր թուրքագետ, բազմաթիվ դասագրքերի, ձեռնարկների հեղինակ Միհրան Աբիկյանը, որն իր թուրքերենի խոր իմացությունը միացնում էր մանկավարժական հարուստ փորձը: Հետագայում տարբեր դպրոցներում շատ թուրքեր իրենց լեզուն սովորել են Միհրան Աբիկյանից:

Նույնպիսի կարող մասնագետ, դասագրքերի հեղինակ է

եղել ֆրանսերենի ուսուցիչը՝ բանաստեղծ Հակոբ Ոսկանը, մշակութային աչքի ընկնող մի գործիչ, որի անվանը հաճախ ենք հանդիպում արևմտահայ մամուլում:

Պատմության ուսուցիչն էր հայտնի մանկավարժ, բազմաթիվ գրքերի հեղինակ Դավիթ Նաչկոնցը, ֆիզիկայի, քիմիայի և մարդակազմության ուսուցիչը՝ տասնյակ դասագրքերի հեղինակ Ենովք Թեյյանը, իսկ թվարանության ուսուցիչը՝ ամբողջ Պոլսում Մյուսյու Փասգալ անունով հայտնի Հարություն Թյուլյանը:

Հրաչյան վերոհիշյալ առարկաներից ամենից շատ սիրել է լեզուները և պատմությունը, նվիրվել դրանց յուրացմանը:

Նրա մտավոր զարգացումը կատարվել է երկու ճանապարհով. մի կողմից դպրոցական պարապմունքների, մյուս կողմից՝ ընթերցանության: Երկու դեպքում էլ ցուցաբերել է մոլեռանդ ջանասիրություն: Վերցրել է այն առավելագույնը, որ կարող էին տալ ուսուցիչները, թերին լրացրել է գրքերի աշխարհից:

Սկզբում գրքեր է վերցրել ուսուցիչներից, կարդացել և վերադարձրել է ճշտապահորեն, վերցրել է ինչ որ պատահի, մեծ մասամբ վեպեր: Այդ տարիների նրա կարդացած գրքերից են եղել Հ. Հաճյանի «Բերայի գիշերները», Մ. Պիտար Արապաճյանի «Երկու դրկից ընկերները» (հայատառ թուրքերեն), Շատոպրիանի «Աթալան», Վիրգիլիոսի «էնեականը» (ֆրանսերեն) և այլն:

Շուտով, սակայն, խառնիխուռն ընթերցմանը հաջորդել է լուրջ ընտրությունը, հասկացել է ժամանակի արժեքը, տարվել է օգտակար, իր ընդհանուր զարգացմանը նպաստող գրքերով: Եվրոպական թարգմանական վեպերը, որոնցով ողողված էր պոլսահայ գրական հրապարակը, քիչ են հրապուրել նրան, հակվել է դեպի հայ դասական գրականությունը:

Բաֆֆին իր կախարդական ազդեցության տակ է առնում նրան: «Ջալալեդդինը» դառնում է սեղանի գիրքը: Կարդացել է մեկ չնչով, այնքան ազդվել, որ փորձել է մի վեպ գրել ազատասիրական ոգով, անգամ լեզուն պահելով արևելահայերենը: Պատանեկական խանդավառ պոռթկում, որ իհարկե, գլուխ չի եկել:

Երկրորդ մեծ հեղինակը, որ խորապես ազդել է նրա վրա, եղել է Պետրոս Դուրյանը: Նրա բոլոր բանաստեղծությունները իմացել է անգիր, չարունակ արտագրել, հաճախ երկրորդ օրինակը ուրիշի նվիրելու համար: Այդ ազդեցության տակ էլ

փորձել է գրել բանաստեղծություններ, անգամ մի ողբերգություն «Տիգրան Բ» վերնագրով: Վերջապես՝ սիրել է Պեշիկթաշյանին, նույնպես անգիր արել:

Ու այս բոլորը 12-13 տարեկան հասակում: Ուաղին շատ քիչ ժամանակ է հատկացրել: Ուաղալիքը եղել է գիրքը: Կարդացել է ազահորեն, ոչ հոգնություն է իմացել, ոչ ձանձրույթ:

Հրաչյայի միտքը հեղաշրջող, դեպի ուրույն մի աշխարհ մղող գիրքը, սակայն, եղել է Ֆրանս-Հայ մի բառարան, որ հայրը նվեր է առել նրա համար: Նա ոչ թե օգտագործում է այն ըստ անհրաժեշտության, այլ տասնյակ անգամ կարդում ծայրեծայր, ինչպես պիտի կարդար որևէ վեպ: Սերը դեպի բառարանագրությունը, առհասարակ դեպի բառերը, որ հետագայում ուղեկցեց նրան ամբողջ կյանքում, սկիզբ է առնում ճակատագրական այդ գրքից: Հենց այս բառարանն էլ նրան թելադրում է որոնել ու գտնել զանազան բառերի ստուգաբանությունը, համեմատել դրանք ուրիշ լեզուների բառերի հետ, ուրախանալ գյուտերով, այնքան մեծ հրճվանքով, որքան այդ տարիքի երեխաները պիտի ուրախանային որևէ նվերով:

Ի՞նչ տվեց Սահակյան վարժարանը բացառիկության բոլոր տվյալներով օժտված պատանուն:

Նախ՝ այնտեղ բավականաչափ ծանոթացավ Հայ ժողովրդի պատմությանն ու մատենագրությանը: Նրա գիտելիքները հասան այն աստիճանի, որ փորձեց բնագրից թարգմանել Մովսես Սորենացու, Ասողիկի, Ղևոնդ Երեցի և այլ մատենագիրների երկերը, իր փոքրիկ սեղանը ծանրաբեռնելով հազարավոր էջերով: Կարևորն այն էլ, թե դրանք ինչ արժեք էին ներկայացնում, այլ այն, որ այդ տարիքից ի հայտ էր բերում բանասերի, հետազոտողի ակնհայտ կարողություն:

Երկրորդ՝ այդ վարժարանում յուրացրեց գրաբարը, թուրքերենը, ֆրանսերենը այն աստիճան, որ Կենտրոնական վարժարան ընդունվելիս շարադրություն գրեց այդ երեք լեզուներով և արժանացավ բարձր գնահատման: Նա այդտեղ ստացավ անգամ անգլերենի նախագիտելիքները:

Լեզվական այս գիտելիքները, սերը դեպի բառարանագրությունը վերջնականապես գծեցին այն ուղին, որով ընթանալու էր նա ապագայում:

## Գլուխ երկրորդ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

1889 թվականին Հրաչյա Աճառյանը ընդունվում է Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանը, որը բոլորել էր իր գործունեություններից երրորդ տարին:

Կենտրոնական վարժարանը արևմտահայ իրականության մեջ կատարել է խոշոր դեր: Գրողների, արվեստագետների, հրապարակախոսների, գիտնականների այն սերունդը, որ իր ուսումն ստացել է 1880-ական թվականների կեսերից հետո, մեծ մասամբ սովորել է այնտեղ և ավարտել հիշյալ դպրոցը:

Ուստի շատ ընդհանուր գծերով ծանոթանանք այս կարևոր հաստատությունից պատմությունը:

Հիմնադրվել է 1886 թվականին, բայց իրականում այն ծնունդն էր 60-70-ական թվականների ազգային ուսմանտիպի տենդոտ մթնոլորտի: Այդ թվականներին էր, որ հասունացած հարց էր համարվում արևմտահայ իրականության մեջ ունենալ ուսումնական երկու կենտրոն, մեկը Կոստանդնուպոլսում, մյուսը՝ պատմական Հայաստանի սրտում՝ Կարինում:

1870-ական թվականների կեսերից Ներսես Վարժապետյանի ջանքերով հիմնադրվում է Կենտրոնական վարժարանը, սակայն վերահաս քաղաքական դեպքերը՝ տնտեսական պատճառներ և այլ հանգամանքներ, հնարավոր չեն դարձնում այն դնել կայուն հիմքերի վրա ու միայն մեկ տասնամյակ անց, երբ Վարժապետյանն արդեն վախճանվել էր, հնարավոր է դառնում հիմնադրել դպրոցը ու նրա տեսչի պաշտոնը հանձնել հայ հասարակական գրական կյանքում նկատելի դեր կատարած, հայկական հարցի հրահրման օրերին Խրիմյանի գլխավորած պատվիրակության հետ Բեռլին մեկնած, դրանով ժողովրդականություն վաստակած Մինաս Չերազին:

Այդ տարիներին Պոլսում գործում էին մի քանի տասնյակ դպրոցներ, որոնցից առավել հայտնիներն էին Սասգյուղի Նուպար-Շահնազարյան, Օրթագյուղի Թարգմանչաց, Սամաթիայի

Սահակյան վարժարանները, Պերպերյան և Մեղպուրյան մասնավոր դպրոցները և այլն:

Սրանց մեծ մասը նախակրթարաններ էին՝ ուսման ծրագրերի որոշ տարբերություններ, դասարանների շատություն, որով, մասնավորապես վերջին երկուսը ձգտում ունեին հավասարվելու երկրորդ աստիճանի դպրոցներին:

Բուն լիցեյական կրթությունը օտար դպրոցների մենաշնորհն էր, ինչպես Ռոբերտ կոլեջի և Կալաթա Սերայի, որոնցից առաջինը ամերիկյան էր, լեզուն՝ անգլերենը, երկրորդը՝ ֆրանսիականը, ֆրանսիացի ուսուցիչներով, ֆրանսերենով:

Այս երկու դպրոցների աշակերտության նկատելի մասը հայեր էին, դրա համար էլ Ռոբերտ կոլեջը ունեցել է հայկական բաժին որոշ առարկաների հայերեն դասավանդումով: Կալաթա Սերայի լիցեյում էլ ֆրանսերենին զուգընթաց թուրքերեն էր դասավանդվում:

Այս դպրոցներն ավարտած աշակերտները հիանալի տիրապետում էին օտար լեզուների, Ռոբերտ կոլեջն ավարտողները՝ անգլերեն, Կալաթա Սերայը՝ ֆրանսերեն: Թե որքան հիմնավոր կրթություն են տվել եվրոպական դպրոցների ծրագրով գործող Կալաթա Սերայի լիցեյն և Ռոբերտ կոլեջը, երևում է այն փաստից, որ Գրիգոր Ջոհրապի նման բազմակողմանի զարգացման տեր մի մտածող իր սքանչելի ֆրանսերենը սովորել էր սրանցից առաջինում:

Եվրոպայի հետ տնտեսական, առևտրական կապերի զարգացման այդ տասնամյակներում օտար լեզուների իմացությունը կենսական նշանակություն ուներ, ուստի հայ շատ ընտանիքներ, մասնավորապես ունևոր դասակարգը, իր երեխաներին ուսման էր տալիս կամ Ռոբերտ քոլեջում կամ Կալաթա Սերայում:

Հայ հասարակական կյանքում այդ երկու դպրոցները կատարել են նկատելի դեր, բայց միաժամանակ դրանք հայ երիտասարդությունը մղում էին դեպի օտարացում: Մասնավորապես այն երիտասարդները, որոնք իրենց տարրական կրթությունն ստացել էին օտար դպրոցներում, ավարտելով վերոհիշյալ լիցեյները, իսպառ կտրվում էին հայ կյանքից: Եթե մի Գրիգոր Ջոհրապ Օրթագյուղի Թարգմանչաց դպրոցում մայրենի լեզուն լավ ուսանելուց հետո էր սովորել Կալաթա

Սերայում և մնաց հայ մշակույթի գործիչ, ապա տասնյակ այլ մարդիկ՝ փաստաբաններ, հրապարակախոսներ, գիտնականներ այնպես էլ հեռացան մայրենի ժողովրդից:

Ահա այս օտարացման առաջն առնելու, հայ մասնագետներ պատրաստելու նպատակն էր հետապնդում ազգային ծրագրով գործող նոր դպրոցների հիմնումը արևմտահայ իրականություն մեջ թե՛ Պոլսում և թե՛ գավառում, քանի որ գավառում էլ դարձյալ երկրորդ աստիճանի դպրոցները գտնվում էին օտար միսիոներների ձեռքին:

Կարող էր Կենտրոնական վարժարանը մրցել Կալաթա Սերայի և Ռոբերտ կոլեջի հետ, եթե պարփակված լիներ միայն ազգային կաղապարով:

Հիմնական տեղը հատկացնելով ազգային դաստիարակությունը, դպրոցը պետք է ապահովեր օտար լեզուներից զերթ մեկն ու մեկի տիրապետումը: Դա կյանքի թելադրանքն էր: Անգամ տարրական դպրոցները՝ գիտակցելով օտար լեզուների անհրաժեշտությունը, շեշտը դնում էին դրանց վրա և Կենտրոնական վարժարան ընդունվողը արդեն կարող էր շարադրություն գրել երեք լեզվով՝ հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն:

Վարժարանի ծրագրով՝ մայրենի լեզվով դասավանդվում էին այն առարկաները, որոնք անմիջապես կապվում էին հայ մշակույթի հետ՝ հայոց լեզու, մատենագրություն, պատմություն: Իսկ մյուս առարկաները դասավանդվում էին ֆրանսերեն (ֆիզիկա, քիմիա, երկրաչափություն և այլն), ուստի աշակերտներն այդ հինգ տարիների ընթացքում հիմնովին կատարելագործում էին ֆրանսերենը:

Նույնը պետք է ասել թուրքերենի մասին: Այդ լեզվով դասավանդվում էին թուրքերեն, թուրքերենի գեղագրություն և արաբերեն, այնպես որ վերոհիշյալ առարկաների ավանդման ընթացքում աշակերտը հնարավորություն ուներ կատարելագործելու թուրքերենը և բավականաչափ գաղափար կազմելու պարսկերենի և արաբերենի մասին, որոնք այնքան սերտորեն չադկապված էին թուրքերենի հետ: Անշուշտ հիմնական դեր էր կատարում նաև այն հանգամանքը, որ Պոլսի առօրյա խոսակցական լեզուն թուրքերենն էր:

Կենտրոնական վարժարանն ավարտողը կարող էր

հպարտությամբ ասել, որ ինքը տիրապետում է երեք լեզվի, իսկ սա նշանակում էր, որ կարող էր մրցել Ռոբերտ քոլեջի և Կալյաթա Սերայի հետ:

Այս՝ լեզուների մասին:

Բայց Կենտրոնական վարժարանի ծրագիրը շատ մեծ էր: Լեզուներին հատկացնելով հանդերձ հիմնական տեղ, աչակերտությունը տալիս էր ժամանակի եվրոպական լիցեյական լրիվ դաստիարակություն: Պետք է նկատի ունենալ, որ նրա ծրագրի՝ ճշգրիտ գիտություններին վերաբերող մասը նույնությամբ վերցված էր ֆրանսիական նույն աստիճանի դպրոցների ծրագրից, մասնավորապես Փարիզում գործող և այդ տարիներին ամբողջ եվրոպայում հայտնի École Centrale դպրոցի ծրագրից: Ի վերջո Կենտրոնական վարժարան հորջորջումն էլ թարգմանությունն էր նույն անվան:

Վարժարանում դասավանդման մեթոդը մասնագիտացված էր: Երկրորդ կամ երրորդ դասարաններից աչակերտները ճշտում էին իրենց նախասիրությունները և գնահատումներն էլ որոշվում էին ըստ այդ նախասիրության: Եթե աչակերտը, ասենք, քննությունների ժամանակ հանձնելու էր մի քանի առարկա, որոնց գնահատականների ընդհանուր քանակը պետք է կազմեր որոշված մի թիվ, - ապա որևէ աչակերտ կարող էր երկու-երեք առարկայից կտրվել, բայց դուրս չմնալ դպրոցից, եթե իր նախասիրած բնագավառի գնահատականները բարձր էին և հասնում էին սահմանված միջին աստիճանին:

Գնահատման այս մեթոդը, որն իր հուշերում արդարացնում է Հրաչյա Աճառյանը, հնարավորություն է տվել կարող աչակերտներին՝ խորանալու իրենց մասնագիտության մեջ, տկարներին կես ճամբից հետ կանգնելու և այլ բնագավառ ընտրելու: Այսպես, հենց Աճառյանի հետ քննություն տվող մոտ 30 աչակերտներից հազիվ 12-ն են ավարտել:

Կենտրոնական վարժարանի տնօրեն Հարություն Մոստինյանի տարիներ անց գրած մի նամակից իմանում ենք, որ դպրոցի խնամակալների ծրագրի մեջ եղել է վարժարանը աննկատելիորեն վերածել փոքրիկ համալսարանի, հինգերորդ դասարանից հետո ավելացնելով երկու նոր դասարան, որտեղ ավանդվելու էին մանկավարժական և իրավաբանական

առարկաներ: Մանկավարժական ճյուղն ավարտողները, որոնք աշխատելու էին հայ իրականությունում, բարձրագույնի վկայականով կարող էին պաշտոնավարել հայկական դպրոցներում, իսկ իրավաբանական ճյուղն ավարտողները հնարավորություն պիտի ունենային ավելի հեշտ ընդունվելու պետական իրավաբանական համալսարան:

Վերահաս դեպքերը ջուրը գցեցին այս բոլոր երազանքները:

1888 թ. նոյեմբեր ամսին սուլթանական կառավարությունը մամուլի վրա սահմանեց նոր խստություններ, պաշտոնապես արգելվեց Հայաստան, հեղափոխություն, բռնակալություն և այլ նման բառերի գործածությունը: Գրաքննիչները ծայրահեղություն հասցնելով որոշումը, կազմեցին նոր ցանկեր, որոնց մեջ մտնում էին հարյուրավոր անմեղ բառեր, ինչպես աստղ (որն իբր թե ակնարկ կարող էր լինել Յըլտըզ սուլթանական պալատի), սուրհանդակ, որը իբր թե կարող էր մեկնաբանվել՝ սուր հանիր թագի դեմ: Այսպես, Վարդովյան թատրոնում (1869–1879) բեմադրված և մամուլում տասնյակ անգամ հայտարարված «Լիոնի սուրհանդակը» Մնակյանի թատրոնում դարձել էր «Լիոնի թղթատարը»:

Աճառյանը Կենտրոնական վարժարան էր մտնում այն օրերին, երբ նոր էր լույս տեսել այս օրենքը և հրապարակը ողողված էր լրտեսներով: Նրա ընդունվելու ամիսներին սուլթան Համիդի թիկնապահներից մեկը այցելելով այնտեղ, հայտարարել էր, որ դպրոցը չպետք է շեղվի սուլթանի նկատմամբ «հավատարմություն դպրոց» լինելու ուղուց, ազդարարություն, որը հակառակ ազդեցությունը թողեց տաքարյուն երիտասարդության վրա:

Քաղաքական ճնշումը ինքնին առաջացնում էր հակաճնշում: Հայ մտավորականությունը որոնում ու գտնում էր միջոցներ՝ հակառակ դրսի խստություն վարժարանից ներս ազգային ոգին վառ պահելու համար:

1891 թվականի կեսերից Արփիար Արփիարյանը հիմնադրել էր «Հայրենիք» օրաթերթը, որի շուրջ համախմբվել էին ժամանակի ամենաառաջավոր մտավորականները (Բաշալյան, Զոհրապ, Չոպանյան, Երվանդ Օտյան, Կամսարական, Հրանդ և ուրիշներ): Կենտրոնական վարժարանի և այդ առաջավոր թերթի միջև ստեղծվել էր հոգեկան սերտ կապ: Աճառյանը



պատմում էր, թե իրենք ինչ հափշտակությամբ էին ընթերցում թերթը, հաճախ գնում խմբագրությունն ղոնների մոտ՝ տեսնելու համար, թե ովքեր էին իրենց հայրենասիրական սնունդ տվող մարդիկ:

Ազգային այս մթնոլորտը ստեղծողը եղել էր Մինաս Չերազը, «որը,- ինչպես պատմում են նրա աշակերտները,- Կեղրոնականին տվավ հոգի մը, որ 1889-ի իր անակնկալ մեկնումեն հետո ալ ապրեցավ այդ պատերուն ներքև»<sup>1</sup>:

Չերազի և նրա հավաքագրած ուսուցչական կազմի ամբողջ գործունեությունը ուղղված է եղել սուլթանի հայահալած քաղաքականության հետևանք հանդիսացող ուժացման, ազգամոռացման դեմ: Դրսում վխտում էին լրտեսները, կառավարության կողմից քաջալերվում էր մատնությունն ու դավաճանությունը, պարգևատրվում, չքանչաններ էին ստանում այն մարդիկ, որոնք մատնություններով կործանում էին իրենց ազգակիցներին: Կենտրոնական վարժարանը իր անձնագոհ ուսուցչական կազմով պայքարում էր այդ երևույթի դեմ: Չէր քաջալերում այնպիսի մարդկանց, որոնք հակվում էին դեպի բարոյական կործանում: Ճնշումը, հետապնդումը կարծեք ավելի էր միացրել մարդկանց, դարձրել մի բուռնցք՝ ընդդեմ բռնապետական կարգերի:

Մի ուշագրավ դեպք վկայում է այդ կուռ միասնության մասին:

Մի օր վարժարանի սաներից մեկը խախտում է դպրոցի ներքին կանոնադրությունը: Մի այլ ուսանող գնում տնօրենին հայտնում է եղելությունը:

«Մենք գիտցանք այդ բանը,- գրում է ժամանակակիցներից մեկը, և կ'սպասեինք հասկնալու համար, թե ինչ պիտի ըլլար: Չերազ եկավ ներս. կատակախոս մեր տնօրենը բացառապես չէր խնդար, խոժոռ չէր, բայց տխրություն մը կար աչքերուն մեջ. Այսինչ պարոնը այսինչ հանցանքն է գործեր և այսինչն ալ եկավ ինքնաբերաբար ինձի իմաց տվավ: Ասիկա ավելի մեծ հանցանք է, քան մյուս գործվածը: Հանցավոր պարոնը «ազդարարություն» մը պետք է ընդուներ, հիմա այդ պատիժը ներված է իրեն և փոխանցված է զինքը մատնող ընկերոջը»<sup>2</sup>:

Նոր տնօրենը՝ Մոստիչյանը եղել է ավելի զգույշ, ծանրախոհ, միաժամանակ ավելի բազմակողմանի զարգացման տեր

*մարդ: Օքսֆորդի համալսարանում կրթություն ստացած, հայ քաղաքական եռուղեոից որոշ չափով հեռու կանգնած այս մարդն էլ հարկադրված էր տեղի տալ ընդհանուր մտայնությանը և շարունակել Չերազի ուղին, աշխատելով որոշ սահմանի մեջ պահել վտանգներով լի պոթկուճանները:*



1893

*Մոստիչյանի դաստիարակչական սկզբունքներից մեկն է եղել Կենտրոնականում սովորող երիտասարդներին աշակերտական հոգեբանությունից դուրս բերելը, այն գիտակցություն սերմանումը, թե իրենք կոչված են ջահակիրները լինելու ժողովրդի մտավոր զարգացման, հետևաբար ամենից առաջ պետք է իրենց մեջ զարգացնեն ազգայինի հետ՝ մարդկային արժանապատվությունը, հարգանք ունենան ոչ միայն ուսուցիչների նկատմամբ, այլև միմյանց: Նրանք պիտի լինեն ազատ, բայց մեկի ազատությունը չպետք է վնասի մյուսի ազատու-*

Թյանը, մասնավորապես ժողովրդի ազատությանը: Նա աշխատել է աշակերտների միջից արմատախիլ անել ՀլուԹյան, մեղկուԹյան, քծնանքի, բարոյական ԹուլուԹյան զգացումը, դրանց տեղը դնելով ՀպարտուԹյան, տոկունուԹյան, աշխատասիրուԹյան, անձնվիրուԹյան զգացումը:

Մոտտիչյանը տարիներ հետո գրած մի նամակում ասել է, թե ինքը դպրոցում չի ունեցել չքեղ տառերով գրված և պատերին կախված ներքին կանոններ, չի փորձել աշակերտներին վախեցնել պատիժներով, օգտագործել է բարոյական խթանը: «Շատ ու շատ անգամներ հանցավոր ուսանող մը կը պատժեի պարզապես... չպատժելով»<sup>3</sup>:

Այս բոլորի շնորհիվ տնօրենը վայելել է բացարձակ հեղինակություն:

Կենտրոնականի սաներից Ա. Ալպոյաճյանը 60 տարի հետո գրած իր հիշողություններում վկայում է. «Տնօրենին ներչնչած պատկառանքը և հարգանքը, ինչպես նաև սերը հավանորեն մեծ դեր կը կատարեին և զգալի չէր ըլլար ունէ պակաս»<sup>4</sup>:

Այս էր բարոյական մթնոլորտը այն դպրոցի, որտեղ սովորեց Աճառյանը 1889-1893 թվականներին, ուղիղ չորս տարի: Անհանգիստ տարիներ են եղել դրանք. քաղաքական խստությունների սաստկացման, ազգային իրավունքների աստիճանական սահմանափակման, լրտեսական ցանցի աշխուժացման, ընդհանուր լճացման տարիներ: Կենտրոնական վարժարանը եղել է Բ Գոան նշանախեցը մանավանդ այն պատճառով, որ նախորդ տնօրենը փախել էր արտասահման, Լոնդոնում հրատարակում էր L'Arménie հակաթուրքական թերթը, իսկ նոր տնօրենը չէր պայքարում ազատագրական խմորումների դեմ, անգամ անուղղակի կերպով օժանդակում էր հայկական հարցի հրահրմանը, որպես թարգման աշխատելով ըմբոստ պատրիարք Մ. Իզմիրյանի մոտ:

Գում Գափուի հայտնի ցույցը 1890 թվականին, որին մասնակցել էին վարժարանի մի քանի սաներ, մեծացրել էր վտանգը:

Կենտրոնականն այժմ նմանվում էր պաշարված մի բերդի, որը դիմադրում էր Յըլըզլից եկած հարվածներին գերմարդկային ճիգերով: Համիդին հաջողվել էր այդ առողջ մարմնի մեջ գցել որդեր, թուրքերենի ուսուցչի քողի տակ դպրոցի պա-

տերից ներս էին մտցվել մի քանի լրտեսներ, որոնք որսում էին ամեն մի բառ, ամեն մի քայլ:

Բայց անառիկ բերդը պահում էր իր ուժը, անձնատուր չէր լինում: Հայերի նկատմամբ կատաղությունը լցված, իր ցինիզմով հայտնի Ասրմ բեյը հագիվ էր դուրս գալիս թուրքերենի դասից, որ մտնում էին Ե. Տեմիրճիպաչյանը, Մ. Կյուրճյանը, Մ. Ասքանազը և ուրիշներ, իրենց հետ ներս բերելով հայ ոգին, սերը դեպի մայրենի մշակույթը:

Հայ ժողովրդի պատմությունն արգելված էր, բայց չէր կարող պատճառ դառնալ, որ Մելքոն Կյուրճյանը վերարկուի գրպանից զգուշությամբ հաներ Ս. Պալասանյանի «Հայոց պատմությունը» և գրաբարի դասը վերածեր հայ ժողովրդի պատմության ժամի, աշակերտական դասարանը վերածեր դասախոսական սրահի:

«Երբեմն թատերախումբի երևույթը կ'առներ դասարանը, երբ անիկա ձեռքով ոտքով կը պատկերացներ պատմական դրվագներ և անցքեր, որոնցով կը համեմեր իր դասը», - գրում է նրա աշակերտներից մեկն իր Հիշողություններում<sup>5</sup>:

Նույնը վկայում է Հրաչյա Աճառյանը:

Մենք ընդարձակ կանգ առանք քաղաքական մթնոլորտի վրա ո՛չ միայն այն պատճառով, որ առանց դրա դժվար է հասկանալ հայ մշակույթի զարգացումը այդ տարիներին, այլև այն պատճառով, որ խստությունը, ճնշումը, հայրենասիրական գաղափարների արգելքը ինքնին ավելի էր մոտեցնում երիտասարդներին միմյանց, մոտեցնում ուսուցիչներին: Ավելին, մոտեցնում էր մայրենի մշակույթին: Նույնիսկ այն աշակերտները, որոնք ունեցել են հակում դեպի ճշգրիտ գիտությունները, դեպի մաթեմատիկական և ֆիզիկական, հայրենասիրական այս մթնոլորտում նվիրվել են հայ մատենագիտության, պատմագրության, լեզվի ուսումնասիրմանը: Մեսրոպատառ գրականությունը, մեսրոպաչունչ տպագիր խոսքը խանդավառել է նրանց, կապել իրեն:

Առանց այս բոլորի անհնար է հասկանալ Աճառյանի մոլեռանդ երկրպագությունը դեպի մեր լեզուն ու գրականությունը, որը եղավ նրա հավատամքը մինչև կյանքի վերջը: Կենտրոնական վարժարանը տվեց նրան կրքոտ սեր դեպի հայ լեզվաբանությունը:

Այժմ՝ կրթական ընթացքի մասին:

Աճառյանը Կենտրոնական վարժարան էր ընդունվել որպես առաջին դասարանի աշակերտ, բայց ցանկացել էր որ Հաջորդ դասարանի քննություններն էլ Հանձնի և միանգամից նստի երկրորդ դասարան: Չերազը մերժել էր, ասել, թե պետք է գոհ լինի, որ ընդունվում է Կենտրոնական վարժարան:– Բայց ես սամաթիացի եմ, հոխորտացել էր Աճառյանը: Ծիծաղել էր Չերազը, նստեցրել առաջին դասարան:

Իր ուժերին վստահ պատանին դժգոհ էր մնացել այդ կարգադրությունից, համառել իր պահանջի մեջ, Հաջորդությամբ Հանձնել լրացուցիչ քննությունները, նստել երկրորդ դասարան:

Առաջին տարում նա սովորել է հետևյալ առարկաները. Հայոց լեզվի և գրականության տեսություն, Փրանսերեն, Թուրքերեն, Ընդհանուր, հին ազգերի և օսմանյան պետության պատմություն, մաթեմատիկա, հաշվապահություն և այլն: Հայոց լեզվի և գրականության տեսության ուսուցիչը եղել է Միհրան Ասքանազը, որ շատ լավ իմացել է գրաբար: Նա կազմած է եղել գրականության տեսության դասագիրք, որի մասին դրվատանքով է խոսում Աճառյանը:

Ֆրանսերենը դասավանդել է բանաստեղծ, դրամատուրգ Թովմաս Թերզյանը: Թուրքերենի ուսուցիչը եղել է Միհրան Աբիկյանը, որին աշակերտել էր Աճառյանը Սամաթիայի Սահակյան վարժարանում: Աճառյանը հպարտությամբ էր խոսում այս մարդու մասին և ասում, որ նրան է պարտական թուրքերենի իմացությունը:

Իր գրավոր հիշողություններում նա բացառիկ ջերմությամբ է խոսում Հակոբ Պարոնյանի մասին, որը եղել է նրա հաշվապահության ուսուցիչը: Ըստ երևույթին Պարոնյանի հմայքին պետք է վերագրել այն փաստը, որ մոլեռանդորեն լեզվաբանությամբ նվիրված լինելով հանդերձ, նա սիրել է նաև հաշվապահությունը, այնքան յուրացրել, որ տասնամյակներ անց՝ ի թիվս շատ առարկաների, Պարսկաստանում դասավանդել է նաև հաշվապահություն:

«Մենք Պարոնյանին չէինք ճանաչում,– գրում է Աճառյանը,– և նայում էինք նրան միայն իբրև սոսկական մարդու կամ ուսուցչի վրա: Բարձր հասակով, երկարավիզ, հեղինակա-

քթով մի մարդ էր: Չափազանց լուրջ և ուղղամիտ էր... Շատ բարի մարդ էր, ոչ մի աշակերտի պակաս թվանշան տալ չգիտեր»<sup>6</sup>:

Դժբախտաբար կարճ է տևել Պարոնյանի պաշտոնավարությունը. մի քանի ամսից հիվանդացել է, 1890 թվականի վերջից թողել է Կենտրոնական վարժարանը. վախճանվել հաջորդ տարվա գարնանը, մեծ վիշտ պատճառելով բոլորին: Թե որքան են սիրել Պարոնյանին Կենտրոնականի սաները, երևում է հետևյալ փաստից. նրա հիվանդությունից տևողության ամբողջ ընթացքում նրանք իրենց նախաճաշի մի քանի կոպեկները խնայելով՝ հանգանակել են գումար, հանձնել Մոստիչյանին, նրա միջոցով հասցրել անօգնական, նյութական ծանր վիճակում գտնվող երգիծաբանին:

Եվ դա բնական էր: Հոգեկան փլուզման, քաղաքական ճնշման մոռալ այդ օրերին Պարոնյանի ստեղծագործությունները ուժ են ներշնչել երիտասարդությունը, թարմացրել նրանց, լավատեսություն հաղորդել: Ինչպես Ա. Չոպանյանն է վկայում, Պարոնյանի գրքերը, մասնավորապես «Նիկարի» տետրակները պահված են եղել աշակերտների արկղներում և միշտ կարդացել են ձանձրալի դասերի ժամերին<sup>7</sup>:


Երրորդ դասարանում մեծ փոփոխություններ չեն կատարվել ուսման ծրագրում: Ավելացել է միայն Մ. Կյուրճյանի առարկան, որի մասին խոսեցինք:

Բայց հաջորդ տարին շատ բան է փոխում: «Դ դասարանը իմ լուրջ խմորման վայրը եղավ,- գրում է նա,- հասարակական գիտություններից ունեցանք իրավաբանություն, տնտեսագիտություն, փիլիսոփայություն, պատմություն, պատմության փիլիսոփայություն, քաղաքակրթության պատմություն, Արևելքի և Արևմուտքի գրականության պատմություն, գեղեցկագիտություն և այլն»<sup>8</sup>:

Չհիշատակեցինք ճշգրիտ գիտությունները, որոնց թիվը անցնում էր հինգից, բոլորն էլ բարձր դպրոցների ծրագրին համապատասխան առարկաներ:

Սոսկական այս թվարկումն անգամ ցույց է տալիս, թե մրցման ընթացքում մինչև չորրորդ դասարան հասած աշակերտին ինչպիսի դժվարություններ էին սպասում, ուժերի ինչպիսի գերլարում, ժամանակի նպատակահարմար բաշխում

**Հ. Աճառյանի ուսուցիչներից մի քանիսը**



**Պ. Ճիտերճյան**



**Մ. Կյուրճյան**



**Ե. Տեմիրճիպաչյան**



**Ս. Գարաճաչյան**



**Թ. Թերզյան**

էր անհրաժեշտ հաղթահարելու համար դժվարին աշխատանքը:

Աճառյանը մեծ ճկունությունը մշակում է իր անելիքները. համարձակ նետվում կրթական այս ծրագրի խորխորատները, ուշադրությունը բևեռելով հիմնականում երկու ուղղություն վրա՝ լեզուների և հայ հին մատենագրության, քանի որ այդ երկուսի շաղկապումով պիտի կատարեր երկրորդ քայլը՝ նվիրվեր լեզվաբանության:

Այդ առարկան Կենտրոնականում չէին անցնում: Լեզվաբանությունը նա ուսումնասիրում է ինքնուրույն: Դրան նպաստում էր նախորդ երկու բնագավառների լավ իմացությունը: Լեզուների ուսումնասիրությունը մեծ դժվարությունների առաջ չի կանգնեցրել նրան: Նա գիտեր գրաբար, ֆրանսերեն և թուրքերեն: Թուրքերենի իմացությունը նպաստել էր պարսկերենի և արաբերենի հաղթահարմանը: Այդ երկու լեզուների ազդեցությունը թուրքերենի վրա այնքան ուժեղ էր, որ վերամբարձ ոճով գրված շատ երկեր, մանավանդ չափածո ստեղծագործություններ հաճախ քերականությամբ միայն, այսինքն բայական վերջավորություններով հնարավոր էր որոշել լեզվի թուրքերեն լինելը, քանի որ բառապաշարն ամբողջապես վերցված էր արաբերենից ու պարսկերենից:

Եթե նկատի ունենանք այն, որ մի քանի լեզուների իմացությունը հեշտացնում է նորերի ուսումնասիրությունը, իսկ նա ունեցել է բնական հակում դեպի լեզուները, ապա պարզ կարող է դառնալ, որ Կենտրոնական վարժարանում նա շատ չի տանջվել այս բնագավառի հաղթահարման համար:

Հայ հին մատենագրության յուրացումը կապված էր որոշ դժվարությունների հետ: Արգելված էին արտասահմանում տպված բոլոր գրքերը, իսկ հայ մատենագիրների երկերը մեծ մասամբ լույս էին տեսել Վենետիկում: Աշակերտներին թույլատրված էր կարդալ միայն Եզնիկի «Եղծ աղանդոցը», որը գրեթե անգիր էին արել: Հայրենասեր ուսուցիչների օգնությամբ, սակայն, նրանք ձեռք են բերում Ագաթանգեղոսի, Բուզանդի, Կորյունի, Սորենացու, Եղիշեի և այլ մատենագիրների երկերը, ընթերցում գաղտնի: Այդ գրքերն օգնում էին նրանց խորանալու և՛ գրաբարի մեջ, և՛ լավ իմանալու հայ ժողովրդի պատմությունը: Պակասը լրացնում էին ուսուցիչները, մերթ



դասերի ժամանակ, մերթ անհատական գրույցներով:

Չորրորդ և հինգերորդ դասարաններում Աճառյանը գտնվել է Եղիա Տեմիրճիպաչյանի և Մատաթիա Գարազաչյանի ուժեղ ազդեցություն տակ: Սրանցից առաջինի մասին նա ուղղակի գրում է. «Իմ մտավոր կազմակերպության վրա ամենամեծ ազդեցություն գործել է Տեմիրճիպաչյանը»<sup>9</sup>:

Մատաթիա Գարազաչյանը հայ բանասիրությունից և փիլիսոփայական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից էր: Վիեննայի Մխիթարյանների դպրոցում ձեռք բերելով իր կրթությունը, սովորելով լեզուներ, հմտանալով մեր հին մատենագրությանն ու համաշխարհային փիլիսոփայական մտքին, նա հրաժարվել էր հոգևորական մնալու մտքից, աստիճանաբար մղվել դեպի մատերիալիզմը, հրատարակել բանասիրական, փիլիսոփայական տասնյակ գրքեր, որոնց մեջ բացառիկ արժեք է ներկայացնում «Տրամաբանությունը»<sup>10</sup>: Կենտրոնական վարժարանում դասավանդելու տարիներին գտնվում էր խոր ծերություն հասակում, չէին լսում ականջները, բայց զարմանալիորեն պահել էր հիշողությունը և առաջավոր դավանանքը, իր աշակերտներին մղելով հաճախ մինչև աստծո գաղափարի ժխտման: Նա էլ ուսուցանում էր, որ լեզուների, ժողովուրդների առաջացման վերաբերյալ աստվածաշնչային առասպելները չեն կարող գիտություն հիմք հանդիսանալ: Տեսական հարցերում այդքան առաջավոր դիրքերում կանգնած մտածողը, սակայն, մի բնագավառում պահպանողական էր. դա գրաբարի նկատմամբ ունեցած կույր պաշտամունքն էր, որի ապացույցներից մեկն այն է, որ նա մի այլ գրաբարամուլի՝ Հակոբ Գուրգենի հետ 1887 թվին պարբերական հրատարակեց գրաբար լեզվով, այն էլ հինգերորդ դարի գրաբարով<sup>11</sup>: Ժամանակավրեպ քայլ, որ հաջողություն չունեցավ: Այդ տարիներին նրան հանձնարարվել էր գրաբարից աշխարհաբար թարգմանել Աստվածաշունչը, բայց պատվիրատուն՝ Բայրլ Հաուզի ընկերությունը ծանոթանալով թարգմանված հատվածներին՝ մերժեց, կիսագրաբար լեզվի համար: Այդ նույն տարիներին նա գրեց պատմագրական իր գլուխգործոց ստեղծագործությունը՝ «Հայ ժողովրդի քննական պատմություն» չորս հատորները, որոնք լույս տեսան Թիֆլիսում<sup>12</sup>:

Այսպիսի ականավոր մի մտածող, անշուշտ, կարող էր ազդել Աճառյանի վրա դրական առումով: Իսկ Եղիա Տեմիրճի-պաշյա՞նը:

Տեմիրճիպաշյանը Հայ գրականություն և փոխադասական մտքի ամենաառեղծվածային ղեմքերից է: Գրել է արձակ և չափածո երկեր<sup>13</sup>, լեզվաբանական, փոխադասական, պատմագրական հոդվածներ, կազմել է Ֆրանսերենից Հայերեն բառարան, խմբագրել պարբերականներ: Եղել է շատ կարդացած, զարգացած մարդ, հին արևելքի, մասնավորապես հին հնդկական և չինական գրականության ու փոխադասականության ջերմ սիրահար. իմացել է անտիկ աշխարհի և նոր ժամանակների եվրոպական գրականությունը: Սիրել է աջ ու ձախ մեջբերումներ կատարել օտար հեղինակներից, որի համար բազմիցս ծաղրվել է Հակոբ Պարոնյանի կողմից: Ծաղրվել է նաև իր հակասական մտքերի, հեղհեղուկ աշխարհայացքի համար: Չի ունեցել կայուն դավանանք: Նրա երկերում հակակրոնության հասնող համարձակ մտքերի մոտ կարելի է նշմարել մոլեռանդ քրիստոնյայի աղերսանք ու ապավինում գերբնական էակների: Մերթ մերժել է ամեն ինչ, մերթ ընդունել, մերթ ըմբոստացել է, մերթ աղերսել: Տարիների ընթացքում, մանավանդ համիդյան բռնապետության շրջանում մասամբ խախտվել է նրա մտավոր վիճակը, նրա մոտ գերակշռող է դարձել երկչոտությունը, կասկածամտությունը, մտասևեռում սարսափը, ո՛չ թե մահվանից, այլ կյանքից: Այն տարիներին, երբ նա Կենտրոնական վարժարանի ուսուցիչ էր, իսկ Աճառյանը նրա աշակերտը, նա իր բանաստեղծություններից մեկում գրում էր.

**Մեռնիլ ես ինչպես կ'ուզեի, գիտե՛ք,  
Անձնասպանությունը, օղակախվելով...<sup>14</sup>**

Ու փորձեր էլ կատարել էր անձնասպանության, նետվել էր ծովը, բայց ազատել էին: Ունեցել էր անգամ կիսախելագարության նոպաներ, որոնցից մեկի ժամանակ, ցնցոտիներ հագած, եկեղեցու դռանը փող էր մուրացել: Մամուլը այս բոլորի համար ծաղրել էր նրան, գրել, թե ժողովրդականություն ձեռք բերելու համար է անում, բայց երբ 1903 թվականին վերջ տվեց իր կյանքին հենց «օղակախվելով»,

այսինքն առաստաղից կախվելով, բոլորը համոզվեցին, որ ներքին հոգեկան փոթորիկներն էին նրան մղել ճակատագրական այդ քայլին:

Հոգեպես խախտված այս մարդը,- որի մասին Աճառյանն էլ ասում է, թե այնքան քայքայված ջիղեր է ունեցել, որ շարունակ լաց է եղել դասարանում, իր բոլոր գիտելիքներով, հոետորական տաղանդով հանդերձ ի՞նչ ազդեցություն կարող էր ունենալ մի պատանու վրա, որն իր նկարագրով, բնավորության գծերով, լավատեսությունը ու ապագայի ծրագրերով միանգամայն հակապատկերն էր անդրաշխարհի դոները բախող ուսուցչի: Ինչո՞վ բացատրել, որ Աճառյանը ամբողջ կյանքում իրեն երախտապարտ համարեց Տեմիրճիպաչյանին և 1935 թ. «Արմատական բառարանի» 7-րդ հատորում տպագրելով իր ուսուցիչների նկարները, պատվավոր տեղերից մեկը հատկացրեց նրան:

Արտաքուստ անբացատրելի այս երևույթը հնարավոր կլինի հասկանալ, եթե իմանանք հարակից մի քանի եղելություններ:

Բանն այն է, որ Կենտրոնական վարժարանում սովորելու հենց առաջին տարվանից Աճառյանը խանդավառվել էր հնդեվրոպական լեզվաբանությունը: Նախագիտելիքներն ստացել էր Մ. Մամուրյանի մի գրքից, շարունակությունը՝ «Հանդես ամսօրյայի» էջերից, ապա նույն այդ օրերին ձեռք էր բերել հայր Սերովբե Տերվիչյանի «Հնդեվրոպական նախալեզու» աշխատությունը:

Ընդամենը երկու հարյուր էջից բաղկացած այդ գիրքը հեղաշրջել էր նրան, վերջնականապես կապել մի ուսմունքի, որի գիտականությունը երբեք չկասկածեց. իր ամբողջ կյանքում, ի գին չատ տառապանքների:

Տերվիչյանի գիրքը խտացած ձևով և մատչելի շարադրանքով ներկայացնում է այն ամենը, ինչ ձեռք էր բերել հնդեվրոպական լեզվաբանությունը նախորդ տասնամյակների ընթացքում: Տերվիչյանը լեզուների ծագման ու ցեղակցության հարցերում պաշտպանում էր այնպիսի առաջավոր տեսակետներ, որոնք անհարիր էին նրա կրոնավորի վեղարին: Օրինակ գտնում էր, որ «հնդեվրոպական մայր լեզվին հեղինակը ստուգիվ ոչ Աստված կրնար եղած ըլլար, ոչ ալ Ադամ»<sup>15</sup>:

Աճառյանին ամենից առաջ գրավել էր Տերվիչյանի գրքի

բուն ատաղձը՝ հնդեվրոպական նախալեզվի բառակազմի ու քերականության քննությունը՝ բազմաթիվ լեզուների համեմատությունը հնդեվրոպական արմատների ցանկով:

Նա այժմ գիտեր, որ ոչ երբայերենը և ոչ էլ գրաբարը չէին կարող Ադամ-Եվայի լեզու համարվել և որ ավանդական լեզվաբանությունը չուներ գիտական հիմք, բայց սովորել էր նաև, որ հնդեվրոպական լեզուները համարվելով հանդերձ քույր լեզուներ, նրանցից մեկը՝ զենդերենը, ավելի մոտ էր նախալեզվին և որ հենց Տերվիչյանի բնութագրմամբ զենդերենը պետք է համարվեր լեզուների մեջ ավագ քույրը:

Աճառյանը որոշում է հենց այդ հնագույն լեզվի հետ էլ ծանոթանալ: Բայց ո՞վ կարող էր օգնել նրան այս հարցում, եթե ոչ հնդկական փիլիսոփայությունն ու մշակույթին քաջածանոթ Եղիա Տեմիրճիպաչյանը, որը ամբողջովին ապրում էր հնդկական փիլիսոփայությամբ ու իրեն պատկերացնում Նիրվանայի գրկում:

Նա այդ բոլորին ծանոթ էր անշուշտ ֆրանսերեն թարգմանություն միջոցով: Այնքան էր խանդավառվել որոշ երկերով, որ ինքն էլ փորձել էր թարգմանել դրանք հայերեն: Իր գրադարանում ուներ հնդկական կրոնին ու հավատալիքներին վերաբերող այնպիսի գրքեր, որոնք լույս էին տեսել երկու լեզուներով՝ այսինքն զենդերեն բնագրով և ֆրանսերեն թարգմանությամբ:

Այդ գրքերը տալիս էր աշակերտներին, հորդորում անպայման կարդալ: Ոոտում էր այդ բոլորի մասին մեծ հուզականություն, արտասովաթոր աչքերով:

«Պարապում էր եռանդով ու հուզմունքով, - գրում է Աճառյանը, - իբրև ջղային հիվանդ՝ հաճախ լաց էր լինում և պատում էր մեզ իր կյանքի տխուր դեպքերի մասին: Նա մեր մեջ մեծ սեր զարթեցրեց դեպի Արևելքը. մանավանդ դեպի Հնդկաստանը, որ ինքը պաշտում էր: Շատ գրքեր է տվել ինձ կարդալու: Շաբաթական գոնե մի անգամ գնում էի իր բնակարանը և ընթերցման համար մի որևէ կարևոր գիրք գրկելով՝ տուն էի գալիս»<sup>16</sup>:

Եթե հնդկական փիլիսոփայության նկատմամբ եղած սերը ուսուցչի համար առօրյա վշտերի ամոքման, մոռացման սպեղանի էր, դեպի մահը սահող մարդու հրաժեշտի զոդանջներ,

ապա աշակերտի համար ուներ գործնական նշանակություն. այդ գիտելիքներով ուզում էր նոր կյանք մտնել, ողջունել ապագայի արշալույսը: Հուզվում էր ուսուցչի հետ, բաժանում նրա ապրումները, բայց ավելի շատ հետաքրքրվում էր այն լեզվով, որով գրվել էին վերոհիշյալ գրքերը:

Տեմիրճիպաչյանը Աճառյանին տվել է սանսկրիտով գրված մի ժողովածու՝ ֆրանսերեն թարգմանությամբ, բառարանով և կանոնների բացատրությամբ, նվիրել է հնդկական «սուրբ» գրքերից մեկը՝ «Բհագավաթգիթան», դարձյալ ֆրանսերեն թարգմանությամբ:

Սրանց միջոցով նա մեծ ջանասիրությամբ ուսումնասիրում է հնդկերենը, աստիճանաբար այնքան սիրում այդ գրականությունը, որ տարիներ անց 1910 թ. թարգմանում է «Բհագավաթգիթան», լույս ընծայում է ջմիհաճում<sup>17</sup>:

Ե. Տեմիրճիպաչյանի միջոցով է Աճառյանը հաղորդակից դարձել մի այլ գրքի՝ Ֆրանց Բոպպի «Grammaire comparée des langues indoeuropéennes» բազմահատոր աշխատությունը, որը հանդիսանում էր հնդեվրոպական լեզուների համեմատական ընդարձակ քերականությունը:

«Չեմ կարող նկարագրել այն հրճվանքը, - գրում է Աճառյանը, - երբ ես ունեցա ձեռքիս տակ այդ գիրքը: Արագությամբ կարդացի, լափեցի ամբողջը՝ առանց մի փոքր ծանոթություն բաց թողնելու: Ես թարգմանեցի մինչև անգամ այն բոլոր հատվածները՝ ուր հեղինակը խոսում էր հայերենի մասին: Երբ-ը կարդալով կարող էի ասել, թե ես լեզվաբանություն սովորել եմ, որովհետև այն ժամանակ Երբ-ից բարձր գիրք չկար»<sup>18</sup>:

Այժմ հասկանալի է դառնում պաշտամունքի հասնող այն սերն ու հարգանքը, որ Աճառյանն ունեցել է Ե. Տեմիրճիպաչյանի նկատմամբ:

Այս բոլորը ձեռք բերելուց հետո՝ նրան մնում էր անցնել բուն հայկական նյութի մշակման: Նա Կենտրոնական վարժարանում ձեռնարկում է մի այլ ծանր աշխատանքի՝ կարդում է «Նոր հայկազյան բառարանի» երկու ստվարածավալ հատորները սկզբից մինչև վերջ, դուրս գցելով բարդ և ածանց բառերը, արտագրում է բոլոր արմատ բառերը. ստացվում է հիսուն մեծադիր էջից բաղկացած մի տետր: Ապա յուրաքանչյուր արմատի դիմաց նշանակում է ծագումը, ունենում

ապագա «Արմատական բառարանի» ուրվագիծը: Այդ ժամանակ կարող էր մտածել, թե ինչպես «Արմատական բառարանի» վերոհիշյալ տետրը իր հետ շրջելու էր երկրից երկիր, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, արտագրվելու է նորից ու նորից, ճոխանալու է, հասնելու մինչև 9000 էջի և միայն 1925 թվականից ստանալու է հրատարակվելու հնարավորություն, սարերից սկիզբ առնող առվակների նման, որոնք իրենց ճանապարհին մեծանում են, խորանում, դառնում լայնանիստ գետ:

Նա «Արմատական բառարանի» ուրվագծով չի բավարարվում: Ձեռնարկում է նաև «Գավառական բառարանի» ստեղծմանը: Գավառացի ընկերներից, տպագիր գրքերից ու մամուլից հավաքում է գավառական բառեր, արտագրում հատուկ տետրակի մեջ, սկիզբ դնելով մի նոր աշխատանքի, որ նույնպես տարիների ընթացքում ճոխանալու էր, տպագրվելու մի մեծ հատորով, թեև նախորդի արժեքը չէր ունենալու:

Բնորոշ է այն հետաքրքրությունը, որ նա ցուցաբերել է թուրքերենի հետազոտությունից ուղղությունը: Մայրե ծայր կարդում է իր ուսուցիչ Մ. Աբիկյանի «Բառգիրք երեք լեզվյան, տաճկ. հայ. գաղ.» հայտնի բառարանը, որի Ա. տպագրությունը կատարվել էր 1888 թ., հետագայում վերահրատարակվել մեկից ավելի անգամներ:

Այստեղ էլ նրան հետաքրքրում են թուրքերեն արմատական բառերը: Դուրս գցելով պարսկերեն, արաբերեն հազարավոր բառերը, նաև հունարեն և իտալերեն փոխառությունները, այս անգամ էլ կազմում է թուրքերենի արմատ բառերի ցուցակը՝ իրենց ածանցներով:

Թուրքերենից արաբերեն և պարսկերեն բառերի հանելը ինքնին ենթադրել է տալիս այդ երկու լեզուների բավականաչափ հմտությունը: Բայց էականը դա չէ, այլ նպատակադրումը: Հայտնի է, որ այդ տասնամյակներում լավ թուրքագետ էր համարվում նա, ով խոսում և գրում էր ամենավերամբարձ ոճով, իսկ դա կատարվում էր բացառապես արաբերեն և պարսկերեն բառերի առատ օգտագործմամբ: Աճառյանի հոր ծանոթներից Մ. Արապաճյանը, - որ հայատառ թուրքերեն մի շատ գրքերի հեղինակ է, - նույն տարիներին (1890) լույս է ընծայել «Սազիների էչար» (Գանձ քերթվածոց)

խորագրով բանաստեղծությունների մի ժողովածու՝ այնքան խրթին արարա-պարսկական թուրքերենով, որ դժվար թե այն հասկանան ժամանակակից թուրք գրողներն ու հրապարակախոսները: Ժամանակի ոգին էր այդպես: Թուրք գրականությունը շատ ակնազարկ ներկայացուցիչներ գրում էին նման ոճով: Նոր-նոր էր սկսվել դեպի ժողովրդական լեզուն գնալու շարժումը, որն իրեն զգացնել էր տալու 1908 թվականի օսմանյան սահմանադրությունից հետո՝ հանձին Մեհմեդ էմինի և այլ գրողների, իսկ հաղթանակելու էր միայն քսանական թվականների վերջերից՝ այն էլ դարձյալ մի հայի՝ Հակոբ Մարթայանի մասնակցությամբ<sup>19</sup>:

Այժմյան թուրքերենից զտված, հանված է պարսկերեն և արաբերեն բառերի մեծագույն մասը:

Ուրեմն Աճառյանը դեռևս 1890-ական թվականների սկզբներին զբաղվում էր մի հարցով, որը թուրքերենի զարգացման բուն ուղին էր լինելու ապագայում: Թուրքերենի արմատական բառարանի ստեղծմամբ զբաղվել էին նաև անգլիացիները, բայց Աճառյանը այդ մասին իմանում է իր աշխատանքն ավարտելուց հետո, 1893 թ.: Գուցե դա էլ պատճառ է դառնում, որ չչարունակի, ամբողջովին նվիրվի հայերեն արմատական բառերի հավաքմանը:

Կենտրոնական վարժարանում նրա միտքը միառժամանակ էլ զբաղվել է ուզրո-ֆիննական լեզուների ուսումնասիրմամբ: Ցանկացել է կազմել ուզրո-ֆիննական և ուրալ-ալթայան լեզուների համեմատական քերականությունը: Եվրոպայից բերել է տվել հունգարերենի, ֆիններենի և թունգուզերենի քերականությունները՝ ֆրանսերեն լեզվով: Ուսումնասիրման ընթացքում սակայն, համոզվելով, որ դրանք մի ընտանիք չեն կազմում, հրաժարվել է այդ մտքից:

Եթե այս բոլորի վրա ավելացնենք նաև այն, որ նա Կենտրոնական վարժարանում շարունակել է հավաքել պոլսահայ բանահյուսության նմուշներ, պարզ կարող է դառնալ, թե նրա համար որքան արգասավոր են եղել այն չորս տարիները, որ անցկացրել է վերոհիշյալ դպրոցում:

Մեր բերած փաստերն, անշուշտ, գիտական հայտնագործություններ չեն, բայց դրանք ցույց են տալիս, թե նա որքան էր խորացել լեզուների ուսումնասիրման մեջ, ծանոթացել

Հնդեվրոպական լեզվաբանությունը: Այդ փաստերը միաժամանակ վկայում են նրա՝ վերլուծելու, տրամաբանելու, փաստերից եզրակացություններ հանելու կարողություն մասին, որը գիտությունը զբաղվելու հիմնական նախապայմաններից մեկն է:

Այստեղ նա կատարել է նաև բանասիրական և ստուգաբանական փորձեր: Առաջինի վկայությունն է Կաղանկատվացու մասին գրած շարադրությունը, որ արժանացել է Մ. Գարագաչյանի հավանությունը և հետագայում, 1897 թ. տպագրվել է «Բաղմավեպ» հանդեսում, իսկ երկրորդին՝ Հայերեն և լատիներեն բառերի ստուգաբանությունը, որ հրատարակել է ձեռագիր «Ասպարեզ» թերթում:

Մտավոր այս պաշարով 1893 թ. գարնանը նա ներկայանում է ավարտական քննությունների: Դա շատ տարբեր է եղել սովորական քննություններից: Քննական հանձնաժողովի մեջ եղել են պատկառելի մի շարք գիտնականներ, ինչպես Մ. Գարագաչյանը, Մխիթարյան Միաբանության անդամներից Հայր Գ. Մենեվիչյանը, դպրոցի տնօրեն Հ. Մոստիչյանը, Հայտնի հրապարակախոս, հմուտ գրականագետ Մ. Գոչունյանը, որը հետագայում առաջինը թարգմանել է «Նարեկը» աշխարհաբար<sup>20</sup>: Եղել են և այլ հյուրեր:

Իր ուժերին վստահ աշակերտը ոչ միայն չի չփոթվել, այլև հրաժարվել է հարցաթերթիկներով պատասխանելու դպրոցական ձևից, խնդրել իրեն հարցեր տալ ինչից որ ցանկանան: Պատասխանել է համարձակ, ինքնավստահ, տրամադրված, յուրաքանչյուր դեպքում ցուցաբերելով իր ուրույն տեսակետը: Տրվել են նաև հարցեր, որոնց պատասխանը գիտությունը զեռչէր տվել այդ տարիներին և որոնց չուրջ մինչև մեր օրերում էլ միմյանց են բախվում տեսակետներ: Դրանցից էր Մ. Խորենացու ժամանակի որոշումը, որի մասին այլ կարծիքի էին Աճառյանի ուսուցիչ Մ. Գարագաչյանը, Վիեննայի Մխիթարյանները, այլ կարծիքի էին Վենետիկի Մխիթարյանները:

Այս դժվարին հարցին նա պատասխանում է իրեն հատուկ հմտությամբ և համարձակությամբ: Ասում է, թե կան տարբեր տեսակետներ, թե իր ուսուցիչ Գարագաչյանը չի ընդունում, որ Խորենացին 5-րդ դարի հեղինակ է, բայց իր կարծիքով վաղաժամ է Խորենացուն ենթարկել գիտական խճրճանքի:

Հանձնաժողովի անդամների մոտ աշխուժություն է առա-





**Ձախից աջ Ա. կարգ. - Գէորգ Մկրտիչեան - Համբարձում Թոռնեան - Արամ Խաչատուրեան (✕)- Արամ Թաշթաճեան (✕) - Միքայէլ Աբխտղոմեան (✕) - Ձախէն աջ Բ. կարգ.- Ներսէս Թիւլեան (✕) - Հրաչեայ Աճառեան (✕) - Սարգիս Մինասեան (✕) - Բառնաբաւ Զաքարեան - Պետրոս Փարեան (✕) - Արամ Նիկողոսեան (✕) - Միհրան Իտարէճեան;**

Ղացնում աշակերտի վստահ պատասխանը: Այն հետաքրքրում է Գարագաշյանին, որ ծանր էր լսում: Նրան ասում են. «Քու աշակերտդ քեզի հակառակ կը խոսի կոր»: «Թող խոսի, թող խոսի», - պատասխանել է ուսուցիչը աշակերտի առաջադիմությունից զգացած գոհունակություն ժպիտը դեմքին:

Նա բարձր գնահատական է ստանում ոչ միայն այդ առարկայից, այլև մյուսներից:

Նույն տարվա հոկտեմբեր ամսին տեղի է ունենում մրցանակաբաշխության հանդեսը Ազգային երեսփոխանական ժողովի սրահում: Տասներկու չրջանավարտների այդ թվում Հ. Աճառյանին տրվում է ավարտական վկայական: Նրան մի հատուկ վկայական էլ տալիս է Մ. Գարագաշյանը:

Ձեն բավարարում այդ բոլորը: Դիմում է Ուսումնական խորհրդին և խնդրում, որ քննիչ հանձնաժողովը տա ուսուցչի վկայական, որպեսզի կարողանա աշխատել: Հանձնաժողովը, հայտնի գրականագետ Հակոբ Գուրգենի նախագահությամբ, մանրամասն քննում է, գոհ մնում: Նախագահը ասում է, թե ուսուցչի վեց վկայական կա՝ մասնագետ ուսուցիչ, օգնական մասնագետի և այլն: Ո՞րն է ցանկանում ինքը:

- Առաջինը, - պատասխանում է Աճառյանը:

- Առաջինը ես եմ, - ասում է Հակոբ Գուրգենը. - այս տարի քեզ կտամ երկրորդ աստիճանի վկայական, իսկ եկող տարի՝ առաջին աստիճանի:

Այսպես ապագա լեզվաբանը ավարտում է Կենտրոնական վարժարանը: Նրա նպատակը եղել է մեկնել Վիեննա, չարունակել հայագիտությունը, սակայն դրան խանգարել է արտաքուստ երկրորդական թվացող մի հանգամանք: Մխիթարյանների մոտ սովորելու նախապայմաններից մեկը դավանափոխ դառնալն էր: Ժամանակի ազատամիտ գաղափարներով տոգորված երիտասարդությունն համար կրոնը երկրորդական հարց էր, բայց դավանափոխությունը հավասար էր դավաճանություն: Ուստի երբ Մխիթարյան միաբանությունն անդամներից Մենեվիչյանը հարցնում է նրան, թե ինչպես է լուծելու դավանական հարցը, Աճառյանը միանգամից պատասխանում է, - Կգնամ, կաթոլիկությունը կընդունիմ, ուսումնս կստանամ, հետո՝ երբ վերադառնամ Պոլիս, նորից կհետևեմ իմ դավանանքին:

Այս միամիտ խոստովանությունն էլ խափանում է ծրագիրը: Հետագայում Աճառյանը քանիցս ասում էր, թե միևնույնն է, ինքը չէր կարող հոգևորական դառնալ: Կենտրոնական վարժարանի ազատախոհ միջնորդտը, իր աշխարհիկ զգացողությունը շատ էր հեռու նման բանից:

Աճառյանը Կենտրոնականում ընթերցել էր Աստվածաշունչը գրեթե ամբողջությամբ, բայց ավելի շատ նրա մեջ աշխարհիկը տեսնելու մղումով, նույնիսկ անպատշաճ նկարագրությունների վրա ուշադրություն դարձնելով, քան թե աստվածայինը որոնելով: Նա իր հուշերում հպարտությամբ գրում է, որ երկու անգամ կարդացել է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը: Թողնենք որ աստծո չէր հավատում անգամ իր ուսուցիչը՝ նախկին վարդապետ Մատաթիա Գարագաչյանը:

Ի վերջո այս հարցի հետ է առնչվում Աճառյանի առաջին սիրո պատմությունը, որի մասին նույնպես պետք է խոսել:

\* \* \*

Երբ Աճառյանին հարցնում էին նրա առաջին սիրո մասին, պատասխանում էր.- Այո, ես էլ ունեցել եմ առաջին սեր, քանի որ ամեն մի կենսագրություն պիտի ունենա այդ անխուսափելի գլուխը, իմ կենսագրությունն էլ երբ գրվի՝ թող ունենա, չնայած այնքան զբաղված եմ եղել գրքերով, որ ժամանակ չեմ գտել նման բաներով տարվելու, մանավանդ որ աղջիկները կարևորություն չէին տալիս ինձ նման տղեղ երիտասարդի: Իր հիշողություններում էլ նույնն է կրկնում գրելով. «Ես տղեղ և ճղճիմ պատանի էի, մի աչքս ծուռ և վնասված, վախ չէի զգում նրանցից», այսինքն աղջիկներից:

Չնայած բանավոր և գրավոր այս հավաստիացմանը, նաև Աճառյանի կյանքի մանրամասնություններին քիչ տեղյակ որոշ մարդկանց պնդումներին, թե նա հեռու է եղել իզական սեռից, իրական փաստերը հակառակն են ցույց տալիս: Եղել է աշխարհիկ մարդ, սիրել է վայելել, ունեցել սիրարկածներ: Նրա բազմազբաղ ուղեղը միշտ մի անկյուն պահել է կնոջ համար: Կինը եղել է նրա հոգնաբեկ մտքին զովություն, թարմություն, հանգստություն տվող սպեղանի, սիրել է խոսել կանանց մասին, անեկզոտներ պատմել ու լսել: Մինչդեռ այլ

գիտնականների ներկայութեամբ մարդիկ զգուշացել են արտահայտվել սիրային հարցերի, կանանց մասին, Աճառյանի մոտ ազատ են զգացել, պատմել ու լսել են սիրարկածներ: Նա իր առաջին սերո մասին միշտ պատմել է հաճույքով, պատմել է հուզումով, արտասուքը աչքերին, կարծեք մի պահ տեղափոխվելով Կ. Պոլիս՝ Կենտրոնական վարժարանի տարիները: Եվ արդարև այն մի գեղեցիկ նորավեպ է, որի մասին գրել է նաև իր հիշողություններում: Դժբախտաբար այդ հուշերը թելադրելիս, գուցե օրվա ոչ նպաստավոր տրամադրություն հետևանքով՝ թելադրել է ավելի չոր ու ցամաք, քան բանավոր էր պատմում. կարծեք լիներ մի բանաստեղծ, գերզգայուն հոգի:

Մենք այդ առաջին սերը ուզում ենք պատմել առաջնորդվելով իր գրավոր հիշողություններով: Կավելացնենք մի քանի փոքր դրվագ, որոնք թելադրելիս մոռացել է:

Պատմությունն սկսվում է Սամաթիայի դպրոցում սովորելու տարիներից: Մի օր տուն գնալիս նկատում է, որ տախտակյա կամրջի վրա կանգնած մի հույն տղա հրում, ջուրն է գցում մի հայ տղայի: Վազում է, կովի բռնվում հույնի հետ, ինքն էլ նրան գցում: Հենց այդ բուսկին կամուրջի աջ կողմից լսվում է քնքուչ մի ձայն, որ հայերեն ասում է. «Աֆերիմ տղա, պզտիկ բոյովը նայե ընդոր ծեծեց խոս խոջաման տղան ու ձգեց»:

Հրաչյան դառնում է ձայնի կողմը, դիմացի լուսամուտին տեսնում մի սիրուն աղջկա:

Ահա այդ կամրջի վրա է որ նա, 11 տարեկան հասակում, դեմ առ դեմ կանգնում է սիրո հետ, փոթորկվում է ամբողջ էությունը, առանց հասկանալու կատարվածի էությունն ու հոգեբանական խորությունը: Առաջին անգամ տրոփում է նրա սիրտը անիմանայի, անբացատրելի մի զգացումից: Կանգնում է, աղերսարկու ակնարկ գցում դեպի պատուհանը, ապա ամաչելով՝ խոնարհում աչքերը, նայում հանդարտորեն հոսող ջրին:

Վերադառնում է տուն, հոգու խորքում, շատ խորքում զգալով մի խուլ խլրտում, որ նրան էր հաղորդվել աղջկա զրնգուն ձայնից, կախարդող նայվածքից, թեթև ժպիտից: Նա այդ ժպիտի մեջ փորձում է որոնել իմաստ, վերաբերմունք՝ ոչ միայն կատարվածի համար, այլև համակրություն նշույլ:

Մի օր նորից հանդիպում է, այս անգամ աղբյուրի մոտ:

Նորից չարաճճի, խորհրդավոր ակնարկներ, նորից թույլ, աննկատելի ժպիտներ: Նրա մանկական միտքը մի քանի շաբաթ զբաղվում է այդ աղջկանով: Հետաքրքրվում է, իմանում, որ նրանց տունը «Վարպետ տուտուի» տունն է, այսինքն փոքրիկ երեխաների յուրահատուկ մանկապարտեզ: Մեծ է լինում Հրաչյայի ուրախությունը, երբ ծնողները համաձայնվում են նրանց տունը տանել իր փոքր եղբորը: Հանձն է առնում ինքը տանել ու բերել, որպեսզի առիթ ունենա հանդիպելու խորհրդավոր աղջկան՝ էոթենին: Այժմ հանդիպում է հաճախ, հանդիպում, միշտ մի թույլ ժպիտ փոխանակում ու դրանով կարծում, թե արդեն մտերիմներ են:

Այնուհետև, դպրոցական պարապմունքների ընթացքում, ուսուցիչների հաճելի ու տհաճ գրույցների ժամանակ, տետրակների միջից, թվաբանության խնդիրների ու պատմական դեպքերի հետ նրա ուղեղը զբաղեցնում է այդ աղջնակի սիրուն դեմքը, համեստ, չիկնող, քնքուշ ժպիտը, որին արժանանում էր ամեն անգամ երբ եղբոր ձեռքից բռնած՝ ներս էր մտնում նրանց դռնից: Փորձում է բանաստեղծություններ գրել էոթենի մասին: Դրանցից մեկը Աճառյանը հիշում էր և խոր ծերություն հասակում էլ արտասանում: Ահա մի քանի տող մանկունակ այդ բանաստեղծությունից, գրված 1887 թվականին, այն չըջանում, երբ նրա տարեկից ընկերները մանկական խաղերով էին տարված:

Աչքեր ունի վառ ի վառ,  
Ու փայլփլոզ աստղի պես,  
Թարմ ծաղիկ մ'է նա կարծես,  
Կա՞ ծաղիկ մ'ալ անոր պես:  
Անմեղ, ինչպես մանիչակ,  
Անուշահոտ, քան մեխակ...  
Կա՞ հրեշտակ մ'ալ անոր պես<sup>21</sup>:

Սիրային այս պարզունակ ոտանավորի վրա նկատելի է Մ. Պեչիկթաշյանի «Գոհարիկ» բանաստեղծությունից ազդեցությունը:

Մի քանի ամսից աղջկա ընտանիքը տեղափոխվում է այլ փողոց: Աճառյանների ընտանիքն էլ Սամաթիայից տեղափոխվում է Սարըյար: Ու այսպես կորցնում է սիրուն մա-

նուշակին, բայց մանկական սերը ոչ միայն չի հանգչում, այլ ավելի ու ավելի է բորբոքվում, տանջում պատանուն: Սիրո ուժեղ ազդեցություն տակ փորձում է գրել հոգեբանական վեպ, որի հերոսը ինքն էր լինելու: Դա արդեն Կենտրոնականի առաջին դասարանում էր: Վեպը տալիս է Տեմիրճիպաչյանին՝ կարդալու: Հավանում է ուսուցիչը, կատարում որոշ սրբագրություններ: Քաջալերված դրանից՝ գրում է «Վերջալույս» վերնագրով մի երկ, դարձյալ իր սիրո մասին: Էոժենին նրա համար դառնում է մաքրություն, համեստություն, անբժուկության ու քնքշություն խորհրդանիշ, եթերային մի էակ, ինչպիսին էր Դանթեի Բեատրիչեն:

Բայց էլ չեն հանդիպում: Ժամանակը կատարում է իրենը: Մխրճված լեզվաբանության արահետների մեջ՝ աստիճանաբար մոտանում է սամաթիացի աղջկան:

1893 թ. գարնանը պատրաստվում էր ավարտական քննությունների: Վերջին քննությունը պատրաստելու օրերին ընկերներով գնում են Ազգային հիվանդանոցի պարտեզը, որը հանդիսանում էր պոլսահայերի ամենասիրելի զբոսավայրերից մեկը: Տարածված խոտերի վրա, կրկնում են դասը: Հանկարծ լսում են հունական Լաթերնա նվագի ձայնը: Նայում են: Պարտեզի դռնից ներս են մտնում երկու հույն երիտասարդներ, երկուսն էլ հարբած, իրենց հետ քարչ տալով նույնքան հարբած, սև ակնոցներով սիրուն աչքերը թաքցրած մի աղջկա: Նումբը մոտենում է: Աճառյանը նայում է ու հանկարծ ամբողջ էությունը ցնցվում: Ճանաչում է: Իր սերն էր դա, հրդեհով բռնված, հեղեղի մեջ խեղդված ու կոյուղի ընկած սերը: Աղջիկը իր ընկերների հետ անցնում է հայ երիտասարդների մոտով, մի անզգա ու մոլորուն հայացք գցելով Հրաչյայի վրա, ճանաչում է, բայց անցնում է անտարբեր, Լաթեոնայի գոռ երաժշտությանը խառնելով անծանոթ ինչ-որ երգի ձայն:

Հրաչյան ընկնում է գետին, հեկեկում. «Ես առաջին անգամ պատանի հասակում լաց եղա», պատմում էր ավարտելով այս տխուր պատմությունը:

Վերադառնալով տուն, գրում է հետևյալ բանաստեղծությունը.

Ինչպես ցողիկն առավոտյան,  
Նոտին, ծաղկին կիջնե վրան,  
Քու ալ սերդ մեղրանման,  
Իջավ սրտիս ծաղկի վրան.  
Առավոտյան ցողիկին պես  
Դու շուտ անցար, թռար գրկես,  
Ինձ մնաց լոկ հուշ մը անտես,  
Թռչնած, թռոմած սրտիս վրա<sup>22</sup>:

*Այսպիսի վախճան է ունենում Աճառյանի առաջին սերը,  
խորապես խոցելով զգայուն երիտասարդի սիրտը:*

## Գլուխ երրորդ

### Դ Ե Պ Ի Կ Յ Ա Ն Ք

Կենտրոնական վարժարանի առաջին շրջանավարտներով փոխվում էր Կ. Պոլսի ազգային դպրոցների ավանդական պատկերը, փոխվում էին մանկավարժական հին մեթոդները: Հին գաղափարների տեր սպիտակամորուս պատվելիների սերունդը իր տեղը զիջում էր ֆրանսիական գաղափարներով դաստիարակված նոր սերնդին: Չնայած նահանջող ուժը հեշտուժյամբ չէր զիջում իր դիրքերը, մղում էր մոլեգին պայքար, նորերին մեղադրում անկրոնություն, ազատ վարքի մեջ, սակայն ժամանակը գործում էր հօգուտ նորերի. հների ձայնը անլսելի էր մնում, անգամ ծաղրի առարկա դառնում: Տերոյնցի, Ս. Միսաքյանի սերունդը ասպարեզը թողել էր 17-18 տարեկան երիտասարդների, որոնք չունեին ուսուցչական փորձ, բայց ունեին օգտակար գիտելիքներ, իրենց ժողովրդի մտավոր զարգացմանը սատարելու անսահման պատրաստակամություն: Նրանց համար հաճելի էր որպես ուսուցիչ մտնել այնպիսի դասարաններ, որտեղ սովորում էին նոր գաղափարներն ընկալելու պատրաստ աշխույժ երեխաներ, ժիր ու չարածձի տղաներ ու աղջիկներ: Հաճելի էր տալ նրանց թարմ մտքեր, սովորեցնել օգտակար բաներ, առաջին հերթին սերմանել հայրենասիրություն:

Հոգեկան այդ վիճակում էր Հր. Աճառյանը 1893 թվականի աշնանը, երբ նրան վստահվեց ուսուցչական պաշտոն միանգամից երկու դպրոցում՝ Ղալաթիայի թաղային վարժարանում, որը միաժամանակ հանդիսանում էր Կենտրոնական վարժարանի նախակրթարանը, և Կաղըզյուղի վարժարանում:

Կաղըզյուղի երրորդ դասարանի աչակերտուհի Մելինե Գովանձյանը, - որ հետագայում դարձել է մշակութային եռանդուն գործիչ, աշխատակցել սփյուռքահայ մի շարք պարբերականների, - իր արժեքավոր հիշողություններում այսպես է նկա-



րագրում Աճառյանի մուտքը իրենց դասարանը. «Կեղրոնական կամ ուրիշ բարձրագույն վարժարաններն ելած երիտասարդ ուսուցիչներու հույլ մըն էր, որ կը հաջողեիր մեզ՝ մինչև այն ատեն դասախոսող ճերմակ մազ ու մորուք ունեցող ուսուցիչներուն: Այդ երիտասարդ ուսուցիչներուն հույլին մաս կը կազմեին Լ. Սեղրոսյան (Շանթ), Ա. Չոպանյան, Որբերյան և ուրիշներ: Երրորդ դասարանի աշակերտուհիներ էինք մենք, երբ ներկայացավ մեզ Հ. Աճառյան, իբրև գրաբարի ուսուցիչ: Մաքուր հագված, նրբակազմ, շատ թուխ դեմք մը, չըջանակված սև մորուքով»<sup>1</sup>:

Հակառակ այս հանդիսավոր սկզբնավորման, Աճառյանը գոհ չի մնացել դպրոցից, մանավանդ աղջիկների դասարանից: Հարուստ բնտանիքների աղջիկները շատ անպատկառ են պահել իրենց, անտեղի գվարճություններով զայրույթ պատճառել երիտասարդ ուսուցչին, որը նրանց վերաբերմունքը բացատրել է իր մարմնական թերություններով, աչքի կուրությունը, ոչ հրապուրիչ արտաքինով: Հիասթափվել է, ընկճվել:

Ղալաթիայի թաղային դպրոցը ավելին չի տվել նրան:

Բացի այս բոլորից, անհանգիստ բնավորությունը, որոնող միտքը, գուցե և խորտակված սերը նրան մղել են այլ հորիզոններ: Դեռևս այդ թվականից նա նպատակ է ունեցել շարունակել ուսումը արտասահմանում, բայց քաղաքական, նաև տնտեսական պայմանները գեթ այդ օրերին աննպաստ են եղել նման մի ծրագրի կենսագործման համար:

Լավագույն է համարում մեկնել Հայաստան, որի մասին այնքան շատ էին լսել ու երգել, երազներ հյուսել: Հայաստանը իրենց սրտից դուրս էր մղել կրոնն ու եկեղեցին, դարձել պաշտամունքի նոր առարկա: Հայաստանը ավելի մեծ կարիք ուներ իրենց նման ուժերի, մանավանդ որ այնտեղ աշխատելու, գավառի հայերին լուսավորելու համար երգվել էին դեռևս Կենտրոնական վարժարանի նստարանների վրա:

Մինչև 1870-ական թվականները գավառի մասին քիչ էին մտածում Պոլսում. կարծեք արևմտահայ ժողովուրդը բաղկացած լիներ այն 200.000 հայերից, որոնք ապրում էին Պոլսում և Զմյուռնիայում: Ավելի քան երեք միլիոնանոց գավառի մասին լսում էին թերթերից, գրքերից և Պոլիս թափված հազարավոր պանդուխտներից, որոնց կյանքն այնքան մեծ

տաղանդով նկարագրել էր Աճառյանի ուսուցիչը՝ Մ. Կյուրճյանը, «Մասիս» շաբաթաթերթում տպագրած ցնցող պատկերներում<sup>2</sup>;

Վաթսունական թվականների սահմանադրական շարժումից հետո, երբ օրակարգի հարց էր դարձել Հայաստանի ինքնավարությունը, արևմտահայ մտավորականությունը որոշ չափով հետաքրքրվել էր գավառով, ժողովուրդին լուսավորելու ծրագրեր կազմել, գավառի կյանքը սկսել էր գրականության նյութ դառնալ, սակայն կատարվածը շատ աննշան էր: Գավառը շարունակում էր տնքալ տգիտության խավարում: Պոլսեցիները գավառի մեծ ողբերգությունը հաղորդակից էին դարձել մամուլից, գրքերից, չէին տեսել կյանքը մոտիկից:

Այս բոլորը հուզում էր հայրենասեր երիտասարդությանը, որոնց մեջ էր Հ. Աճառյանը, քաղաքական արկածախնդրությունից հեռու կանգնած, բայց ժողովրդին ծառայելու համար ամեն գոհողության պատրաստ երիտասարդը: Առաջին երգվյալ ուխտավորներից մեկն էր ուզում լինել Կենտրոնականը ավարտողների մեջ. սպասել էր առիթի: Ու ահա, 1894 թ. գարնանը եկել էր առիթը: Ապագա Հայաստանի մայրաքաղաքը նկատվող Կարին քաղաքից ուսուցիչ էին պահանջում տեղի Սանասարյան վարժարանի համար:

Այդ հարցով զբաղվում էր հայտնի հասարակական, պետական գործիչ Գաբրիել Նորատունկյանը: Աճառյանը վերցնում է «Արմատական բառարանի» 50 էջանոց տետրը, թուրքերենի արմատական բառերը, պոլսահայ բանահյուսության նմուշները, գավառական բառերի հավաքածուն, գրած վեպը և այլն, ներկայանում է Նորատունկյանին: Վերջինս՝ լուրջ ու ծանրակշիռ մի գործիչ, կարևորություն անգամ չի տալիս այդ բոլորին, խորհուրդ է տալիս գրաբար մի դիմում գրել Պետերբուրգ՝ Սանասարյան դպրոցի կտակակատար Կ. Եզյանին:

Գործը հաջողվում է: Աճառյանը պատրաստություններ է տեսնում: Լավ ըմբռնելով հանդերձ երկար ճանապարհի հետ կապված դառնությունները և Կարինում կրելիք դժարությունները, չի նահանջում: Բնավորությամբ մեղմ ծնողները չեն առարկում, չնայած սարսափում են այդ մտքից, որովհետև յուրաքանչյուր օր սպանությունների, ոճիրների ու թալանի նորանոր լուրեր էին գալիս Հայաստանից: Նա լսում էր այդ

բոլորը, գիտեր դրանց մասին, բայց ինչ փույթ, ոռոմանտիկ երազներով տարված պատանու համար չկար ավելի հաճելի բան, քան Հայաստանի հրավերը: Հպարտությունից ուռչում էր նրա սիրտը, երբ մտածում էր թե մեկնելու է Հայաստան, որպես ժողովրդին անհրաժեշտ անձնավորություն: «Մանավանդ աշակերտական նստարաններու վրա այնքան սիրված ու երազած Հայաստանը տեսնելու պատեհությունը բավականին խրախույս տվին ինձ» գրում է:

Հուլիսի 16-ին Փրանսիական Բաքե ընկերություն շոգե-նավերից մեկով ճանապարհ է ընկնում դեպի Տրապիզոն:

Աճառյանի մեկնումը հուզել է ոչ միայն հարազատներին, այլև ուսուցիչներին, մանավանդ Ե. Տեմիրձիպաչյանին, որի երազն էր աշակերտին տեսնել Փարիզում, քանի որ նրա մեջ նկատել էր ապագա: Մեկնումից անմիջապես հետո, բաժանման ծանր ապրումների տակ, նա գրում է ողջերթի յուրահատուկ մի խոսք և տպագրում «Ծաղիկ» պարբերականում:

Քանի որ դա Աճառյանին վերաբերող տպագիր առաջին խոսքն է, այն էլ Տեմիրձիպաչյանի նման հայտնի մի անձնավորության կողմից ստորագրված, ավելորդ չենք համարում կատարել որոշ մեջբերումներ. «Հինգշաբթի, մենարանիս մեջ առանձին, բառարանի փորձ կը նայեի, երբ դեպի խուցս՝ վարի պարտեղի ճամբեն, թեթևոտն քայլափոխի ձայն մը նշմարեց ականջս: Ճանչցա Հրաչյայի գաղտնապահ քայլածքն: Աճառյան յուր վաղեմի դասատուն եկավ տեսնել միշտ նույն երկչոտ կամ երկյուղած քայլածքով, զի մի գուցե խոռվե նորա մենատան ու մենահոգվույն խորհրդաղված լուծությունն: Եկավ մերթ՝ զիս տեսնել, մերթ՝ փոխ տված գրքերս ինձ վերադարձնել, և մերթ՝ հարցասիրել հայերեն մայր բառարանն (Ստուգարանական բառարանի մը համար՝ որուն ձեռնարկած էր) որուն պետք ունենալով միշտ ֆրանսահայ բառագրքիս համար՝ զոր կը հորինեի՝ չէի կրնար հեռու տեղ փոխ տալ դայն: Հինգշաբթի մեծ ծրարով մը բեռնավորյալ եկավ Հրաչյան: ... Հինգշաբթի ավուր հուզումը տարբեր էր անշուշտ, սան մըն էր, բարեկամ մըն էր, որ պիտի հեռանար մայրաքաղաքես, անընդմիջական խանդաղատանքես, որովհետև համեստ ու ծանրաբարո պատանի մ'էր Հրաչյա՝ նվիրյալ ուսման... պարզորեն խոսելով՝ չատ տրտմեցա, երբ ծրարը ձեռքը ներս մտավ մենարանեն»<sup>3</sup>:

Հողվածից պարզվում է, որ քաղաքից մեկնելու պատ-  
րաստվող Աճառյանը վերադարձրել է կարողալու համար իր  
ստացած գրքերը, որոնց մեջ եղել են Ֆ. Նեսի «Հնդկաստանի  
գրական դարաշրջանը», էմիլ Բյուռնյուֆի «Սանսկրիտի  
քերականությունը», Ս. Ռայնակի «Դասական բանասիրու-  
թյունը», «Ռիկ-վեդան»:

Թվարկելով այս գրքերը, Տեմիրճիպաչյանը ասում է, թե  
սիրահոժար տրամադրել է դրանք, որովհետև «իբրև գլուխ և  
իբրև սիրտ՝ մեծ ապագա» է գուշակել Կեղրոնականի այդ  
շրջանավարտի համար: «Առողջությունն է միայն Հրաչյային  
մաղթանքս - եզրակացնում է խոսքը ուսուցիչը,- ուրիշ ամեն  
բան ունի հառաջանալու»<sup>4</sup>:

Այս բոլորը ասվել է ժամանակի հեղինակություններից մեկի  
կողմից՝ միջնակարգ դպրոցը նոր ավարտած 18-ամյա մի  
պատանու մասին:

Տեմիրճիպաչյանը անշուշտ ունեցել է նաև այլ մտորումներ,  
որոնք չէր կարող տպագրություն հանձնել գրաքննական  
խստությունների մոլեգնոտ օրերին, երբ ինչպես տեսանք  
Հայաստան բառը արգելված էր գործածել մամուլում և  
տպագրվող գրքերում: Անգամ Բաքե ընկերությունը թուր-  
քական ջրերի մեջ երթևեկելու իրավունք ձեռք բերելու համար  
հարկադրված էր իր «Արմենիե» նավը կոչել միայն Ա. սկզբնա-  
տառով և այդ տառը դրոշմել նավի ճակատին:

Աճառյանը մինչև Տրապիզոն ճանապարհորդելու էր  
լրտեսների խուզարկու ակնարկների տակ, իսկ այնտեղից  
մինչև Կարին՝ ավազակային հարձակումների ահը սրտում:  
Նավը շարժվում է Պոլսի նավահանգստից, ճանապարհին անց-  
նում Մեզար Բուռնույով, Սարըյարով, Յենի մահլեով՝ այլ  
խոսքով իր բնակած թաղի առջևով: «Հոս ահա ծովին ափը,  
խայտացող ջուրերուն առջև նստած է փոքրիկ ու անչուք իմ  
հայրենի տունը: Հոն է անշուշտ մայրս, որ աչքերը ծովին  
հառած՝ դուրսի շոգենավներուն կը նայի, վերջին անգամ մ'ալ  
տեսնելու իր պանդխտող որդին: Դիտակ չունիմ նայելու  
համար. բավական հեռուեն կանցնինք և աչքերս չեն գորեր:  
Ահագին սավան մը ունիմ պատրաստ, կը փռեմ շոգենավեն  
դուրս և իբր դրոշակ կը ծածանեմ, տունեն տեսեր են իմ այդ  
ձերմակ թաշկինակս և պատախաներ են»<sup>5</sup>:

Նա հետագայում աշխույժ ոճով ու իրեն հատուկ հումորով նկարագրել է իր այս շատ հետաքրքրական ճանապարհորդությունը «Պոլսեն-Կարին» վերնագրով, որը լույս է տեսել Նոր Նախիջևանում 1909 թվականին «Հացի կտոր գեյթուն-ցուն» ժողովածուի մեջ: Ուշագրավ այդ փաստաթուղթը հարուստ տեղեկություններ է տալիս այդ թվականների Սամսոն, Տրապիզոն և այլ հայաչատ վայրերի տնտեսական, կրթական ու քաղաքական կյանքի մասին, երևան հանելով հայրենասեր պատանու հոգեկան աշխարհը: Ճանապարհորդական այդ տպավորություններից երևում է, թե ինչպիսի շիկացած, քաղաքական փոթորիկներով հղի ժամանակաշրջան է եղել: Ամեն քայլափոխում կանգնեցրել են ճանապարհորդների կարավանը, խուզարկել մարդկանց նավի վրա, նավահանգիստներում, քարքարոտ ճանապարհների նեղ կածաններում. խուզարկություններ, որոնց ընթացքում որոշ դեր կատարել է ամենագոր կաշառքը, բայց անգամ առօրյա գործածություն համար անհրաժեշտ փոքրիկ գմելիներն ու դանակները վերցվել են նրանց ձեռքից, պատճառաբանելով թե հայր իրավունք չունի նման բաներ պահելու:

Աճառյանը հենց ճանապարհին համոզվում է, որ ինչպես Պոլսում պաշտոնական, պետական ճնշման դեմ ծառանում էր հայ ժողովուրդը, այնպես էլ զավառում ստեղծվում է ուժեղ բռունցք՝ ընդդեմ բռնապետության: Մինչդեռ կառավարությունն արգելում էր սովորական մի դանակ ունենալ, ժողովուրդն իր գոյությունը պահպանելու համար զենք ու հրացան էր թաքցնում:

Այդ տպավորությունն է ստացել իր հյուրընկալներից մեկի տանը, ճանապարհին: «Գիշերը անկողին ճարելու մասին հարցուցի: Տիգրան ինձ տարավ մոտակա խանութ մը, որ նույնպես իրենն էր և ուր սափրիչություն կըներ: Ափ ի բերան մնացի խանութեն ներս մտնելով. պատերու վրա կախված էին հրացաններ, դաշույններ, մեծ ու փոքր դանակներ, կատարյալ զինանոց: Տաճկաստանի մեջ հայ և գենք... - Ասոնք քո՞ւկդ են, հարցուցի: - Հապա որի՞նը պիտի ըլլա»<sup>6</sup>, պատասխանել է Ջղանա գյուղից հաղթանդամ երիտասարդը և պատմել, թե ինչպես շրջապատի ավազակների դեմ պայքարելու, նրանցից մի քանիսին ձերբակալելու, մի քանիսին էլ սպանել կա-

րողանալու համար կառավարությունը նրան թույլ է տվել գեներ պահելու:

Տիգրանի դեպքը տիպական չէր անշուշտ Հայաստանի համար: Հայ գյուղացիության ճնշող մեծամասնությունը ապրում էր ահավոր երկյուղի մեջ: Ամեն ընդհանուր քուրդ և թուրք ավազակների հարձակման: Աճառյանը սարսուռով է նկարագրում բուն Հայաստանի հողը ոտք դնելն ու այնուհետև մինչև Կարին իր ճանապարհին ընկճված ժողովրդի տեսնելու փաստը: Ուշագրավ են քնարական այն գեղումները, որ հանդիպում ենք վերահիշյալ նկարագրություններում:

«Ինչպիսի անձկությամբ կ'սպասեի տեսնել վերջապես բուն Հայաստանի քաղաք մը. ինչ գեղեցիկ, ինչ հրապուրիչ տեսարան պիտի ունենար արդյոք այն: Արդեն հեռուեն կ'երևան պարիսպի նման բաներ. քիչ մ'ալ առաջ կ'երթանք և ահա քաղաքը ամբողջությամբ մեր առջին է: Մհ, որքան հուսալիս եմ: Հողակերտ, հասարակ տուններ. կարծես թե համաճարակ հրդեհ մը լափել է ամեն ինչ և ընդհանուր ավերակ մ'է միայն մնացեր: Անշուր Հայաստան, դարեր ամբողջ հարված հարվածի ետևէ հասցուցին քեզի. սուր, սով, հուր ու մահ, ասոնք եղան քո բաժինդ. քու շեն քաղաքներդ ավերակ դարձան, քու հպարտ զավակներդ ստրուկ դարձան. քու միլիոնավոր ժողովուրդդ ցանեցավ. ցրվեցավ ի սփյուռս աշխարհի: Եվ հիմա, այրի կնոջ նման, դու նստեր ես ավերակներուն մեջ, աչքերդ արցունքով. ո՞վ պիտի գա քովդ, քեզի ձեռք կարկառելու, քու զավակներդ քեզի դարձնելու, քու ավերակներդ նորեն շենցնելու»<sup>7</sup>:

Նա համոզվում է, որ ոչ հատ ու կենտ տիգրանների ունեցած գեները, և ոչ էլ իր և իր նմանների մթերած գիտությունը չեն կարող հեշտությամբ ոտքի կանգնեցնել տրորված ժողովրդին, շենցնել նրա քաղաքները, որքան էլ որ ազատության վառ հույսը չէր մարել աշխատավոր գյուղացու սրտում:

Կարինը այդ թվականներին դարձել էր ամբողջ աշխարհի ուշադրության կենտրոնը: Ըստ 1877-78 թթ. Ռուս-թուրքական պատերազմի օրերի մտայնության՝ այն դառնալու էր ապագա Հայաստանի մայրաքաղաքը: Այնտեղ արդեն կային մեծ տեղությունների, այդ թվում ռուսական հյուպատոսություններ: Կրթական եռուն գործունեություն էր ծավալվել:

Այդ գործունեութեան արդյունքներից մեկն էր Հայտնի մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանի փողով 1881 թվին հիմնադրված Համանուն վարժարանը, որը գավառում կոչված էր կատարելու այն դերը, ինչ Կենտրոնական վարժարանը Կ. Պոլսում: Եթե Կենտրոնական վարժարանում սովորում էին հիմնականում Պոլսի տարբեր թաղամասերի դպրոցների լավագույն շրջանավարտները և աննշան թիվ էին կազմում գավառից եկած երիտասարդները, ապա Սանասարյանում բացառապես սովորում էին Հայաստանի տարբեր շրջանների նախակրթարաններն ավարտածները: Վարժարանի Հետ կապված էին մեծ հույսեր, այն մտավոր ուժեր էր պատրաստելու ամբողջ Հայաստանի համար:

Ռուս-թուրքական պատերազմի օրերին Կարինում ծրագրվել էր թերթ հրատարակել, թատրոն հիմնել: Սիրողների ուժերով տրվել էին առաջին ներկայացումները, որոնց ներկա էին եղել ոռու զինվորականներ<sup>8</sup>: Սոսվել էին Հայրենասիրական ճառեր: Բայց պատերազմից Հետո ամեն ինչ շուտ էր եկել: Համիդյան ժանդարմները բնում խեղդել էին գավառացի երիտասարդների բոլոր ծրագրերը: Ծանր մի հուսահատություն պատել էր ժողովրդին՝ ոռուական բանակների քաշվելուց Հետո, որոնք իրենց Հետ տարել էին գաղթականական մի մեծ հոսանք: Սանասարյան վարժարանի բացումով Կարինը փորձում էր նորից դառնալ մտավորական և քաղաքական զարթոնքի կենտրոն: Հայ ժողովրդի ապստամբական առաջին շարժումը գավառում սկսվեց Կարինում, 1890 թվականին, շարժում, որը թուրքական կառավարությունը ճնշեց արյունահեղ դատաստանով: Երբ պարզ դարձավ, որ Կարինում հայերը ունեն զենքի պահեստներ և պատրաստվում են ապստամբություն, թուրքական կառավարությունը առավել մեծ հսկողություն սահմանեց քաղաքի վրա: Սակայն եվրոպական դիվանագիտական խաղերի շարունակվելը, միաժամանակ Կարին քաղաքում հայ ժողովրդի մեծ տոկոս կազմելը, հնարավորություն էին տալիս Սանասարյան վարժարանին՝ անարգել գործելու: Առաջավոր մտավորականությունը շատ էր մտահոգված վարժարանի բախտով: Այդ դպրոցի շրջանավարտներն էին, որ պետք է մտավորական շարժում ստեղծեին Հայաստանի բոլոր վայրերում: Ծրագրի

սխալ ընտրությունը, դպրոցին տրվող սխալ ուղղությունը կարող էր ճակատագրական լինել:

Եթե հայ քաղաքական կուսակցությունները առաջին հերթին մտահոգված էին աշակերտների ֆիզիկական դաստիարակությամբ, որը պիտի օժանդակեր զենքի գործածությանը, ապա առավել հեռատես և առաջավոր մտածողներ, չբացառելով ֆիզիկական դաստիարակության դերը, առաջնայինը համարում էին դասավանդվող առարկաների գործնական օգուտի հարցը՝ գավառի պայմաններում: Նրանք ուզում էին, որ Սանասարյանը չհետևի Կենտրոնական վարժարանի օրինակին, որտեղ դասավանդման մեթոդը ֆրանսիական մանկավարժությունն էր, լայն տեղ էր տրվում հասարակագիտական առարկաներին, հատկապես լեզուներին: Դրանք Պոլսի պայմաններում կարող էին օգտակար լինել, բայց ոչ գավառի: Ա. Արփիարյանի խմբագրած «Հայրենիք» օրաթերթը հենց նույն այն թվերին, երբ Աճառյանը որպես ուսուցիչ մեկնում էր Կարին, առաջնորդողներ էր գրում նվիրված մանկավարժական հարցերին և գավառական դպրոցներին խորհուրդ էր տալիս հետևել ոչ թե ֆրանսիական մանկավարժությանը, այլ գերմանականին, տեղ տալ գործնական առարկաներին: Այդ պահանջը առաջադրվել է վարժարանի հիմնադիր Մկրտիչ Սանասարյանի կողմից էլ, որը ամեն կերպ օժանդակել է դպրոցը գերմանական դաստիարակություն ստացած ուսուցիչներով ապահովելուն:

Սանասարյան վարժարանը գործել է գերմանական լրիվ միջնակարգ դպրոցների ծրագրով: Բացի ընդհանուր առարկաներից, աշակերտները պարտավոր էին սովորելու որևէ արհեստ (հյուանություն, կոշկակարություն, դարբնություն և այլն): Դպրոցում պարտադիր էր գյուղատնտեսական գիտելիքների դասավանդումը:

Այդ տարիներին վարժարանում սովորում էր 130-140 աշակերտ: Զբաղորների ուսումը ձրի էր: Դասախոսների մեծ մասը Սանասարյանի ծախսով Գերմանիայում բարձրագույն կրթություն ստացած մարդիկ էին<sup>9</sup>:

Ահա այսպիսի մի դպրոց էր գալիս Աճառյանը որպես գրաբարի ուսուցիչ: Կարինում մնում է ուղիղ մեկ տարի՝ 1894 թ. հուլիս ամսից մինչև 1895 թ. ամառը: Նա մեծ տարբերություն



է տեսնում պոլսական մեղկ միջավայրում մեծացած աշակերտների և գավառացի հայրենասեր, աշխատասեր երեխաների միջև: Նրան գրավում է աշակերտների ջանասիրությունը, անմիջականությունը, հարգալից վերաբերմունքը դեպի դասավանդվող առարկան և ուսուցիչը: Մեծ մասամբ արհեստավորների, գյուղացիների երեխաներ էին կապված առօրյա աշխատանքի հետ: Պոլսից կամ Եվրոպայից եկած մի ուսուցիչ նրանց թվում էր գերբնական էակ, որի ամեն մի խոսքը արագորեն ծիլարձակվում էր, ինչպես պարարտ հողի վրա ընկած հատիկը:

Աճառյանը հետագայում տասնյակ վայրերում է եղել ուսուցիչ, բայց ոչ մեկի մասին այնքան հուզմունքով չէր պատմում, որքան Կարնո Սանասարյան վարժարանի: Գուցե այդտեղ դեր է կատարել նաև քաղաքական միջնուղորտը, վերահաս ինքնավարությունն պատրանքի ոռոմանտիզմը, որով տողորված էին հողագործից մինչև ուսուցիչը, աշակերտից մինչև հոգևորականը:

Վարժարանի վարչությունն էլ ամեն կերպ աշխատում է գոհ թողնել պոլսեցի ուսուցչին, նրան հատկացնում են առանձին սենյակ, աշխատավարձը սահմանում ութ օսմանյան ոսկի, որից երկուսը պահվում էր սննդի փոխարեն, վեցը տալիս էին իրեն: Գավառական նման մի քաղաքում, որտեղ չկային զվարճությունների վայրեր և համեստ էին մարդկանց կենցաղային պահանջները, ութ ոսկին նկատելի գումար էր: Աճառյանի պես սակավապետ ու խնայող մի երիտասարդ կարող էր հետ գցել որոշ գումար:

Բայց կար մի անպատեհություն. գիտություն ծարավ պատանին չէր ուզում նվիրվել միայն մանկավարժական աշխատանքի: Ուզում էր սովորել: Մեկն արգելակում էր մյուսին: Մի կողմից ցանկանում է ավելի շատ ժամեր հատկացնել աշակերտներին, նրանց հետաքրքրությունը բավարարելու համար պարապել նաև դասերից դուրս, ընտանիքներում, չփվել Հայաստանի ծոցում ապրող ու սնվող այդ մարդկանց հետ, լսել նաև նրանց, ոչ միայն սովորեցնել, այլև սովորել, մյուս կողմից ուզում էր շարունակել լեզուների ուսումնասիրությունը: Ֆրանսերեն, թուրքերեն, գրաբար արդեն լավ գիտեր: Անգլերենն ու գերմաներենը այնքան էր յուրացրել, որ խորացնում

էր գրքեր կարդալով: Հունարենի համար Ֆրանսիայից բերել է տալիս մի քերականութիւն, մաս մաս ուսումնասիրում է: Լատիներենը սովորում է Նոր կտակարանը հայերենի հետ համեմատելով: Եվրոպայից բերել է տալիս իտալերեն սովոր մի ժողովածու և ազատ ժամերին,- որն այնքան քիչ էր նրա համար,- կարդում է նաև իտալերեն: Պարսկերենը շարունակում է կատարելագործել Սաադիի «Ֆուխտանով»:

Կարինում նա առաջին անգամ տեսնում է հայ հին ձեռագրեր: Սկսում է ծանոթանալ դրանց: «Գժի նման ընկա Սանասարյանի 40 ձեռագրերի վրա և անմիջապես ձեռնարկեցի կազմել նրա ցուցակը», - գրում է:

Այստեղ գրում է իր գիտական առաջին հոդվածը «Քանի մը դիտողութիւնք» վերնագրով, նվիրված Եղիշեի պատմութեան աղբյուրներին: Տպագրվում է «Հանդես ամսօրյայի» 1895 թվականի օգոստոսի համարում: Ստորագրութեան մոտ կարդում ենք. «Սանասարյանց վարժարան ի Կարին, հունիս 10, 1895»: 19-ամյա Աճառյանը այդ հոդվածում կատարում էր Եղիշեի տեքստը մեկնաբանող ու բացատրող այնպիսի դիտողութիւններ, որոնցով զբաղվում էին հայագիտութեան բնագավառում երկար տարիներ աշխատած Մխիթարյան գիտնականները: Դրանով պետք է բացատրել նրանց գիտական հանդեսում հոդվածի հյուրընկալումը: Ըստ էութեան 1895 թվականի օգոստոսին տպագրված այդ հոդվածով նա ոտք է դնում հայագիտութեան բնագավառը:

Հաջորդ տարվա հունվար ամսից, դարձյալ «Հանդես ամսօրյայի» էջերում սկսվում է տպագրվել «Սանասարյանի» 40 ձեռագրերի նկարագրութիւնը «Յուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին» վերնագրով, որը շարունակվել է նաև 1897 թվականին, ապա լույս տեսել առանձին գրքով<sup>10</sup>:

Կարինում նորից է ձեռնարկում «Արմատական բառարանին»: Այս մասին ունի ուշագրավ վկայութիւն. «Իմ երկու բազմերախտ ուսուցիչներից Եղիա Տեմիրճիպաչյանի և Մաղաթիա Գարագաչյանի առաջնորդութեամբ ծանոթանալով լեզվաբանական տարրական տեղեկութեանց, օգտվելով մանավանդ հայր Ս. Տերվիչյանի «Հնդեվրոպական նախալեզու» անուն աշխատութիւնից, որ իմ առաջին ուսուցիչս է եղած գիտական

լեզվաբանության մեջ, երկրորդ անգամ ձեռնարկեցի ավելի ընդարձակ մի գործ պատրաստելու, նախկին հասարակ բառացանկիս մեջ յուրաքանչյուր արմատի դեմ ավելացրի քերականական ծանոթություններ, աշխատեցա տալ արմատների լեզվաբանական ծագումը և այսպես կազմեցի 300 էջից բաղկացած մի աշխատութուն, սկսելով 1894 թ. մարտի 13-ին և ավարտելով 1895 թ. մարտի 10-ին, Կարնո մեջ, Սանասարյան վարժարանում»<sup>11</sup>:

Նույն այդ տարում Նոր Նախիջևանցի բժիշկ Գ. Տիգրանյանի անունով մի կտակ է ասպարեզ գալիս, երկու հազար ուրբու մրցանակ էր տրվելու այն լեզվաբանին, որը կկազմեր հայոց լեզվի արմատական բառարան: Աճառյանը 1894 թ. դեկտեմբերի 24-ին մի նամակ է գրում էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին, - առաջարկում իր աշխատութունը:

Մեջ ենք բերում լեզվաբանի այդ տարիների գրավոր վկայություններից միակը հանդիսացող վերոհիշյալ նամակից մի քանի հատված:

«Նոր Նախիջևանցի հանգուցյալ բարեհիշատակ բժիշկ Գևորգ Տիգրանյանցի կտակի գործողությունը հանձնված էր ս. էջմիածնա վանքին. իմ ներկայացունելիք աշխատությանս համար՝ «Քննական բառարան հայ լեզվի արմատներու», հարմար դատեցի գրել ձեզ՝ մտածելով թե այդպիսի ուսումնական գործերու քննությունը բանասերիդ հանձնված կլինի:

Իմ աշխատությունս կը բաղկանա 500 երեսներե. կը պարունակե հայ լեզվի ամբողջ արմատները (այբուբենական կարգով), քաղված վեներտիկի Մեծ և փոքր Հայկազյան բառարաններեն, ավելի մեծ թիվ մը արմատներ որ չեն նշանակված անոնցմե ոչ միույն մեջ. ինչ. գաճ, գուրգուրալ, վրձին ևն: Արմատներու թիվը 5500-ի կհասնի ... յուրաքանչյուր արմատի դեմ դրված է տեղն, ուր գործածված է այն արմատն առաջին անգամ, օրինակ կամ կոչում չեմ դրած բոլորովին՝ դուրս համարելով աշխատությանս նպատակեն. հետո դրված է խումբ մը բառ ծագած այն արմատեն. անշուշտ ջնջելով շատ հայտնի ածանցմունքները և բարդությունները. ի հարկին բացատրելով և մեկնելով անոնց կազմության կերպը, եղանակը օրենքները ևն, ընդարձակ կամ համառոտ, հետո կդրվի

այն արմատին մեկնությունը ըստ արդի լեզվաբանություն, համեմատելով հին և նոր ցեղակից լեզուներու հետ. այսպես մեկնված արմատներու թիվը 3000-են ավելի էր, որոնցմե 1500-ը իմ առանձին քննությունցս արդյունքն է:

Դժբախտաբար աշխատութենես մեկ օրինակ միայն ունիմ, և չպիտի կրնայի ուղարկել Ձեզ. ուստի կ'օրինակեմ հոս քանի մը բառեր՝ ավելի ցուցնելու համար գործին արժեքը, եթե կարենա գործս ներկայացյալ ուրիշ աշխատությունց մեջ դիրք մ'ունենալ և եթե հարկ դատեք օրինակ մը ստանալ, կը խոստանամ քանի մը ամիսեն պատրաստել և ուղարկել Ձեզ»<sup>12</sup>:

**Ապա Աճառյանն իր նամակում մեջ է բերում բժիշկ, բույր, գազաթն, սոխ, խստոր, փեթակ բառերը որպես նմուշ:**

Մենք այս ընդարձակ մեջբերումը կատարեցինք ցույց տալու համար, թե ինչպես է պատկերացրել այդ տարիներին Աճառյանը «Արմատական բառարանը», ինչ վերնագիր է ցանկացել տալ, որքան է եղել ծավալը:

Ինչպես երևում է նամակից, այդ ժամանակ Աճառյանին թվացել է, թե բառարանը կարող է լինել 500 էջ, մինչդեռ հետագայում դարձավ 9000 էջ: Էականը, սակայն, քանակի մեջ չէ, այլ այն մեթոդի, որով փորձել է կազմել բառարանը դեռևս մասնագիտական հիմնավոր կրթություն չստացած, պարզապես լեզվաբանական հակումներ ունեցող երիտասարդը: Ըստ երևույթին նրա տրամադրություն տակ եղել են մի քանի գրքեր, նվիրված հնդեվրոպական լեզվաբանություն: Հյուբլանի հայտնի «Armenische grammatik» գիրքը դեռ լույս չէր տեսել, որից ամենից շատ օգտվեց հետագայում: Դրա համար էլ բառերի բացատրությունը սահմանափակ է. ասում է այն, թե առաջին անգամ որտեղ է գործածվել բառը (առանց վկայություն), ո՛րն է արմատը, այլ լեզուներում ինչպես է նույն բառը:

Շատ պարզունակ ու սահմանափակ բացատրություններ են տրված: Հասկանալի է, որ այն չէր կարող բավարարել Տիգրանյան կտակի պահանջներին: Կ. Կոստանյանը չի էլ պատասխանում նամակին:

Կարինում պաշտոնավարած մեկ տարում Աճառյանը գրում է մի քանի աշխատություն և ցանկանում է անպայման տպագրել, բայց կանգնում է դժվարությունների առաջ, այն-

տեղ տպարան գոյութիւն չունեն, իսկ այդ տարիներին Թուրքիայի խորքերից եվրոպա հողված ուղարկելը կապված էր մեծ դժվարութիւնների հետ:

Այստեղ նա ծանոթանում է, ուսումնասիրում և նկարագրում հին գերեզմանատան արձանագրութիւնները, նկարագրում շիրմաքարերի վրա փորագրված քանդակները, որոնք շատ ուշագրավ են եղել հայ ժողովրդի հին տարազի, սովորութիւնների տեսակետից: Կարնո ս. Ոսպ վանքի գերեզմանատան արձանագրութիւնները,- որոնք ունեցել են 6-7 հարյուր տարվա հնութիւն, նյութ դարձնելով մի արժեքավոր հողվածի, ուղարկում է Վիեննա «Հանդես ամսօրյային», 1895 թվականին, բայց արդեն սկսված կոտորածների պատճառով հողվածը տեղ չի հասնում:

Մեծ կորուստ պետք է համարել հողվածի անհետացումը: Հայտնի է, որ Հայաստանի տեղագրութեամբ զբաղվող գիտնականներից և ոչ մեկը (Ղ. Ալիշան, Գ. Սրվանձտյանց, Միրախորյանց և ուրիշներ), անգամ հենց Կարինի մասին աշխատութիւններ գրած Քոստյանը, Ղ. Չարրզը, Կարնո գերեզմանատների և այլ հուշարձանների մանրամասն նկարագրութիւնը չեն թողել: Վերահաս քաղաքական դեպքերը այլևս բոլորովին անհնար դարձրին այդ բանը, մինչև որ առաջին համաշխարհային պատերազմի մեծ աղետը սրբեց տարավ հայ բնակչութեանը, որից հետո, թուրք հետադիմական տարրերի վայրագ թողտվութեամբ 50 տարի շարունակ քանդվեց ու ամայացվեց ամեն ինչ այնքան եռանդով ու հաճույքով, ինչպիսի եռանդով շինել, կառուցել էր հայ աշխատասեր ժողովուրդը: Ու հիմա, երբ մարդ թերթում է թուրքական պատմագրական կամ հնագիտական գրականութիւնը, կարող է միայն զարմանալ, թե արդյոք Կարինում է հայեր էլ ապրե՞լ են<sup>13</sup>:

Քանի որ իսպառ կորսվել է Աճառյանի վերոհիշյալ արժեքավոր հողվածը, մեջ բերենք գեթ նրա վկայութիւնը, թե ինչպես է գերեզմանատնից հավաքել վերոհիշյալ նյութերը.

«Երբ ամառ եկավ, Սանասարյանի աշակերտները ըստ սովորութեան Սրտաձոր տարինք՝ ամառն անցնելու: Հոս, բաց դաշտին մեջ, առվակի մը առջև, քանի մը ընդարձակ վրաններ զարկինք մեկը իբրև սերտարան, մյուսը իբրև ննջարան, ուրիշ

մը իբրև խոհանոց և այլն և հոն բնակութիւն հաստատեցինք: Շատ անգամ շրջանակները կ'երթայինք պտըտելու բնութեան գեղեցիկ տեսարաններ կամ հայրենյաց հնավայրերը դիտելու: Ասոնց մեջն կարևոր կը համարիմ հիշել Սաչկավանքի հին գերեզմանատունը, որ Սրտածորեն հեռու չէ: Գերեզմանաքարերը հին հայկական սովորութեամբ խոյածև կամ օրրանածև են. վրաները կան արձանագրութիւններ ԺԳ-ԺԴ դարերէն, որով գերեզմանատունը կունենա գոնե 6-700 տարվան հնութիւն: Բայց հոս կարևորը արձանագրութիւնները չեն, այլ այն զանազան պատկերները, որ քանդակված են քարերուն վրա, ինչպես բաժակ, նվագարան, գործիքներ և այլն: Այս տեսակ պատկերները վերին աստիճանի հետաքրքիր են հնագիտական տեսակետով: Մեր հին առտնին կյանքի ուսումնասիրութեան համար մեր մատենագիրները, ղժբախտաբար, բան մը տված չեն. շատ բան կ'ընայինք հետեցնել այսպիսի պատկերներէ, որոնց յուրաքանչյուրը հազար նկարագրութենէ կամ գունագեղ ենթադրութիւններէ ավելի կ'արժէ»<sup>14</sup>:

Սրտածորում Աճառչանը մնում է 15 օր, որից հետո հրաժեշտ առնելով սիրելի աշակերտներից ու պաշտոնակիցներից, լեռնային ճանապարհով վերադառնում է Պոլիս:

Ինչպիսի հուզմունքով ու երկուղածութեամբ էր նա մտել Հայաստան, սրտի նույնպիսի ցնցումով էլ բաժանվում է հայկական սրբազան հողից: Բարերդի լեռներն անցնելուց հետո, որտեղ Հայաստանի վերջին սահմաններն են, ձիապաններից ծածուկ ցած է իջնում, համբուրում հողը: «Ծուր դրի գետինը ու կարոտով համբուրեցի հայրենիքիս սուրբ հողը, զոր ո՞վ գիտէ, մնեմ մըն ալ պիտի տեսնեի՞ արդյոք»<sup>15</sup>:

Ո՞րն էր այս արագ մեկնման շարժառիթը: Դա փախուստ էր այն ասպարեզից, որին նվիրվել էր Կենտրոնական վարժարանում: Աճառչանի կենսագիրներից մեկը այդ մեկնումը փորձում է բացատրել նրանով, որ երիտասարդ ուսուցիչը հայագետ Կ. Կոստանյանից չստանալով իր նամակի պատասխանը, հիասթափվել էր, միաժամանակ ցանկանալով ուսումը շարունակել Եվրոպայում, թողել էր պաշտոնը և վերադարձել ծննդավայրը<sup>16</sup>: Եվրոպայում ուսումը շարունակելու հարցը նրան մտահոգել էր նախքան Կարին գալը: Դա ճիշտ է: Իսկ առաջին ենթադրութիւնը թյուրիմացութիւն է:

Ի՞նչ հուսախաբուծյան մասին խոսք կարող է լինել 19 տարեկան մի պատանու համար, որն արդեն «Հանդես ամսօրյայի» նման լուրջ պարբերականում գիտական հոդվածներ էր տպագրում:

Ամենևին չփստելով եվրոպայում ուսում ստանալու ցանկության շարժառիթը, որի մասին ինքն էլ ակնարկ ունի «Պոլսեն Կարին» ուղևորական էջերում, գտնում ենք, որ նա այդքան արագ, հենց ամառանոցային հանգստից անմիջապես հետո Կարինից փախչում էր հիմնականում քաղաքական դրդապատճառներով: Կար անշուշտ նաև առողջական նկատառումը, քանի որ ծանր կերպով հիվանդացել էր ու հաղիվ ազատվել մահից: Իր ուղեղում գիտական այնքան շատ ծրագրեր ունեցող մի անձնավորություն, որի հեռանկարը այնուամենայնիվ ուսուցչությունը չէր, անշուշտ պիտի հաշվի առնեիր նաև առողջական նկատառումը, բայց կրկնում ենք, էականը քաղաքական այն միջնորդտն էր, որի մեջ ապրում էր Կարինը:

Այդ միջնորդտը տազնապալից էր հայ ժողովրդի համար: Կարինը կանգնած էր այնպիսի դեպքերի առաջ, որոնք ակնհայտնի կերպով կոտորած ու տառապանք պիտի բերեին ժողովրդին և բերին:

Հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, որոնք Կարին էին գալիս Պոլսից կամ Թիֆլիսից, անծանոթ տեղական պայմաններին, գոյավիճակին, իրենց անխոհեմ գործունեությամբ, թեթևսոլիկ ճառերով հրահրում էին երիտասարդությունը, խոստանում եվրոպական պետությունների օժանդակությունը այնպիսի վստահություններ, որ կարծես առաքված էին նրանց կողմից, առանց հաշվի առնելու, թե զինված մի բախում ճակատագրական ինչպիսի նշանակություն կարող էր ունենալ բնակչության համար: Աճառյանը տեսնում էր այս բոլորը և հոգու խորքում մնալով հանդերձ մեծ հայրենասեր, չէր բաժանում արկածախնդիրների կարծիքները: Ապացույց՝ այնպես էլ նա իր կյանքում քաղաքական ոչ մի կուսակցության չհարեց, ոչ դաշնակցական եղավ, ոչ էլ հնչակյան, մինչդեռ հենց իր դասընկերներից ոմանք հարելով վերոհիշյալ կուսակցություններին, մասնակցեցին քաղաքական արկածախնդրությունների և հատուցեցին իրենց կյանքով առանց որևէ

արդյունքի, ինչպես Պետրոս Փարյանը, որը մասնակցեց Բանկ Օթոմանի գրավմանը և զոհվեց:

Աճառյանը դեռևս ճանապարհին էր, որ սկսվել էր Սասունի կոտորածը: Կարինում լուրեր էին տարածվում, թե թուրքական կառավարությունը զորքեր է կենտրոնացրել Հայաբնակ գավառներում, որպեսզի կոտորի Հայերին, թե զորաչարժը կատարվում է գիշերով: Հասկանալի է, որ այս սպառնալիքները ամենից առաջ պետք է ուղղված լինեին Կարնո դեմ, քանի որ Հայերը ամենից շատ այնտեղ էին աշխուժություն հանդես բերում: Քաղաքական գարթոնքի ղողանջը, վառողի հոտը էրզրումից էր գալիս.

«Անգամ մը լուր տարածվեցավ, թե տաճիկները որոշել են գատկին Հայոց վրա հարձակվելու և անխնա կոտորելու,- գրում է Աճառյանը,- մեծ մարտկոցին վրայեն թնդանոթները լարած էին Սանասարյանի վրա, որ կը կարծեին, թե ումբերու և զանազան տեսակ հրանոթներու մթերանոցն է: Դրուխյունը խիստ լուրջ էր, այնպես որ դպրոցին օտարահպատակ տեսուչները հյուպատոսներու պաշտպանությունն էին խնդրած: Մեր ու աշակերտներու կյանքը ըստ կարելույն պաշտպանելու համար քանի մը հրացան ու ատրճանակ ճարած էին ու քանի մը օր զինված դասարան կը մտնեինք»<sup>17</sup>:

Մի կողմից իրական նման սպառնալիք էր կախված Սանասարյան վարժարանի գլխին, մյուս կողմից դյուրախաբ ու միամիտ ժողովուրդը դեռ սպասում էր եվրոպական միջամտություն մը Հայաստանին տրվելիք ինքնավարությունը: Պատրանքը շատ էր ուժեղ: Երբ մեծ տերությունների քննիչները Սասուն մեկնելիս անցել են Կարինով, Հայերը, ի տես այդ դեսպանների՝ այնքան են խանդավառվել, որ կարծել են, թե արդեն լուծված է հայկական հարցը:

«Ամենն սկեպտիկն ալ հավատացած էր,- գրում է Աճառյանը,- թե ահա կուգա Հայոց իշխանը և վեց վիլայեթներու իշխանապետությունն գլուխը կանցնի: Մեծ էր ոգևորությունը, գինեպան մը իր մթերած գինիներու առուտուրը դադրեցուց ըսելով, թե Հայոց իշխանին եկած օրը քաղաքին ուրախություն պիտի տա»:

Աճառյանը բերում է նաև մի այլ դեպք, ոչ նվազ բնորոշ բազմադարյան ստրկություն մեջ մնացած ժողովրդի խանդավառ երազների համար:



«Օր մը,- գրում է նա,- Սանասարյանի աշակերտները խմբովին բաղնիք տարինք: Խանութներու առջև չարված ամենքը մեզի կը դիտեին: Երեկոյին ետ դարձանք: Կը հարցնեին մեզի,- Հապա ո՞ւր է:- Ո՞վ:- Հայոց իշխանը: Կարծեր էին, թե Հայոց իշխանը կուգա և մենք դիմավորելու գացած էինք»<sup>18</sup>:

Խարված ժողովուրդ:

Աճառյանի Կարինից հեռանալու հետ կապված մի ուրիշ փաստ էլ ունենք: Այդ ամիսներին նրա ձեռքից վերցրել էին բարձր դասարանները և նա ուսուցանում էր միայն փոքրահասակներին: Ի՞նչ էր պատահել: Չէ՞ր բավարարել նրա գրաբարի գիտելիքները, որ զարմանք էին պատճառել Գարագաշյանի, Հակոբ Գուրգենի նման գրաբարագետների: Պատճառաբանության մեջ ասվել էր, թե նա ընկերական կապերով կապված լինելով մեծահասակ աշակերտների հետ, խախտել է մանկավարժական կանոնները, աշակերտի և ուսուցչի փոխհարաբերության համար սահմանված անջրպետը: Իհարկե, սա միամիտ պատճառաբանություն է: Փաստն այն է, որ Աճառյանը հեռու լինելով հանդերձ արկածախնդրական քայլերը քաջալերելուց, աշակերտներին հաղորդել է ջերմ հայրենասիրություն, նրանց իրազեկ պահել այնպիսի իրադարձությունների, որոնք քաղաքական շիկացած այդ օրերին գուցե վախեցրել են չափավոր հայացքների տեր տեսուչներին: Մեր ասածը ավելի է հաստատում այն փաստը, որ Հրաչյա Աճառյանին փոխարինելու համար Պոլսից հրավիրվում է իր պահպանողական հայացքներով հայտնի Հակոբ Գուրգենը, որից էր Աճառյանը ստացել ուսուցչի վկայականը:

Հակոբ Գուրգենի ժամանումից հետո անիմաստ էր մնալ Սանասարյանում:

Աճառյանը երբ Պոլիս է հասնում, շատ բան փոխված է գտնում այնտեղ: Քաղաքական խստությունները, գրաքննական կաշկանդումները հասել էին աննկարագրելի չափերի: Լրտեսական ցանցը պատել էր ամենուր, ինչպես առաջացած քաղցկեղն է տարածում իր ճյուղավորումը:

Նա Պոլսում մնում է ընդամենը մի քանի օր: Հազիվ ծնողների կարոտը առած, գիշերով նետվում է նավ, մեկնում Մարսել, առանց իմանալու, թե ինչ կյանք է սպասում իրեն այնտեղ: Նա իր հետ տանում էր մի փոքրիկ պայուսակ՝ լիքը ձեռագրերով: Այս էր նրա ամբողջ հարստությունը:

## ԳԼՈՒԿ ԶՐՐՐՈՐԴ

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Աճառյանի միակ ձգտումն է եղել ստանալ Համալսարանական կրթություն, խորանալ լեզվաբանություն մեջ: Վիեննա գնալու ծրագրի խափանումից հետո որոշել էր մի կերպ ընկնել Փարիզ:

Փարիզը եղել է արևմտահայ մտավորականության ձգող մագնիսական մի կենտրոն՝ սկսած 19-րդ դարի 30-ական թվականներից: Անցած կես դարի ընթացքում այնտեղ բարձրագույն կրթություն ստացած հայ ուսանողների թիվը անցնում էր հարյուրից: Սակայն դրանք՝ բացարձակ մեծամասնությամբ հարուստի երեխաներ էին, նյութապես ապահովված: Ծնողները նրանց հետ ղնում էին ոչ միայն անհրաժեշտ գումարներ, այլև, հաճախ, հսկողներ, որպեսզի Փարիզի լաբիրինթոսների մեջ չկորչեն, մայրաքաղաքի զվարճության վայրերը իրենց մեջ չխեղդեն փակ կենցաղում մեծացած երեխաներին: Այդպես էին վարվել ամիրայական շատ տներ: Իհարկե, այս խստապահանջությունը չէր խանգարում, որ հաճախ վերոհիշյալ խնամակալները իրենց հսկողությանը հանձնված երիտասարդների հետ միասին նետվեին զեխ ու գայթակղեցնող կյանքի հորձանուտի մեջ:

Աճառյանը ոչ նյութական հնարավորություններ ուներ, և ոչ էլ բարոյական այդպիսի հենարան, բայց ուներ ամենից կարևորը՝ կամքի բացառիկ ուժ, սովորելու բուռն ցանկություն և առասպելական աշխատասիրություն: Մնացածը թողնելու էր պատահականության, նետվելու էր մարդկային օվկիանոսի մեջ, ապավինելով իր ուժերին, խելքին ու բազուկներին: Գուցե այդ էր, որ փրկեց նրան: Գուցե փողը, հարստությունը չեղեր ուղիղ ճանապարհից, ինչպես շատերին էր չեղել:

Ինչպիսի՞ երազներ էր կապել Աճառյանը Փարիզի հետ: Նրան, իհարկե, Փարիզի մարդիկ, բարքերը չէին թվում

երազային: Շատ բան էր լսել: Մտածում էր այն անակնկալների մասին, որոնց հանդիպելու էր ամեն քայլափոխում: Սարսափում էր հատկապես համալսարանական քննություններից: Ի՞նչ առարկաներ էին քննելու, ի՞նչ հարցեր էին տալու, ովքե՞ր էին իրեն քննողները, իր ապագա ուսուցիչները: Ավելի շատ այս հարցերն են զբաղեցրել ուղեղը, քան այն, թե ինչպես է ապրելու, որտեղ է գիշերելու:

1895 թ. հոկտեմբերին հասնում է Փարիզ, իր հետ ունենալով մի վերմակ, մի անկողին և այնքան գումար, որով կարող էր խնայողությամբ ապրել մոտ մեկ տարի: Կայարանում նրան դիմավորում են Կենտրոնական վարժարանի ընկերներից մի քանիսը՝ Արամ Թահտաճյանը, Միհրան Խտարեճյանը և Արտաչես Հանըմյանը, որոնք ավելի առաջ էին փախել Պոլսից: Երեքն էլ հայ մշակույթի պատմության մեջ կատարել են նկատելի դեր, բայց որքան փոքր, համեմատած Հրաչյայի հետ:

Ընկերները նրան առաջնորդում են մի հյուրանոց, որը հայտնի է եղել էժան գներով: Երկրորդ հարկում նրան տրամադրվում է նեղիկ մի սենյակ օրական մեկ ֆրանկ վարձով: Ուրախալին այն էր, որ հյուրանոցը գտնվում էր ուսանողական թաղամասի կենտրոնում, Բուլվար Սեն Միշել պողոտայի մոտ: Այստեղ ապրող ուսանողները կարիք չեն ունեցել փոխադրականի փող վճարելու մինչև համալսարան գնալու համար:

Հենց առաջին օրերին ընկերները նրան ցույց են տալիս ոչ միայն տեսանելի, արտաքին, չքեղ Փարիզը, այլև թաքուն, բարոյապես ընկած անկյունները, կասկածելի վայրերը: Կ. Պոլսում, աղջիկների միջավայրում իրեն այնքան ամաչկոտ պահող պատանին ընկնում է փարիզուհիների որոգայթների մեջ հենց ժամանման հաջորդ օրերին: Մոտիկից ծանոթանում է այդ կյանքին, իր նյութական ու բարոյական ուժերը չափում նրա հետ և համոզվում, որ դա չէր կարող մաս կազմել փարիզյան իր կենցաղի: Պետք էր կատարել ընտրություն. կամ գնալ դեպի գվարձություն վայրերը, կամ դեպի ծանր մաքառում, գիտություն նվաճում: Իսկ դա նշանակում էր առաջին հերթին մասնակի սահմանազատում նյութապես ավելի ապահով վիճակում գտնվող ընկերներից: Ամուր կամքը, տոկունությունը, գիտակցական հաշվեհարդարը հաղթում են երիտասարդական թուլությունը: Ընտրում է ղժվարինը, կարո-

դանում է իր մենակյաց ու աղքատ ուսանողի կյանքը կազմակերպել այնպես, որ Հնարավոր լինե՞ր առավելագույն չափով օգտվել ոչ թե հրապույրների Փարիզից, այլ մտքի, գիտությունից Փարիզից:

Ընկերների միջոցով նա գտնում է դպրոցը, որտեղ սովորելու էր: Դա Սորբոնի համալսարանի այն ճյուղն էր, որը կոչվում էր «Բարձր ուսումների վարժարան»:

Աճառյանը իր հիշողություններում հուժժորով պատմում է համալսարան ընդունվելը, նկարագրում շենքը, մարդկանց և հարակից այլ դեպքեր: Զանց առնելով այդ բոլորը, մեջ բերենք նրա ընդունվելու հետ կապված փաստերը:

«Նշանակված էին բազմաթիվ դասախոսների անուններ, որոնց կողքին դրված էր իրենց առարկան: Հրճվանքով կարդում էի առարկաների և լեզուների անունները՝ սանսկրիտ, զենդերեն, թուրանական լեզվաբանություն, սեմական լեզուներ և այլն: Այս է իմ փնտրած դպրոցը, ասացի Արամին»<sup>1</sup>:

Նրան թվացել է, թե ընդունվելու համար կան մեծ ծիսակատարություններ, մինչդեռ բացատրել են, թե ով ում ուզի, կարող է լսել: Առաջին ժամին լսել է աշխարհահռչակ եգիպտագետ Մասպերոյին: Պրոֆեսորը հաշվել է ուսանողների թիվը և նկատելով, որ 30 հոգի են, ասել է. «Եգիպտաբանությունը այնքան դժվար գիտություն է, որ եթե շարունակեք մինչև ձեր կյանքի վերջը, վերջին օրում հազիվ թե իմանաք»:

Աճառյանը համոզվում է, որ եգիպտագիտությունը իր ասպարեզը չէ: Դուրս է գալիս դասարանից մտամոլոր: Այստեղ ճակատագիրը նրան դեմ հանդիման կանգնեցնում է այն մարդուն, որը լինելու էր նրա ճշմարիտ մենտորը, առաջնորդելու էր նախասիրած ուղիով, հետևելու էր նրա առաջընթացին ամենաանկեղծ մարդասիրությամբ, քաջալերելու էր ամենափոքր հաջողություններն անգամ, մինչև որ մի օր դարձներ խոշորագույն հայագետներից մեկը:

Բայց լսենք Աճառյանին, որն այս բոլորը պատմում է այնքան հյուսիս լեզվով:

«Դուրս եկա դասարանից և տեսա կապկանման մի մարդ, այժի մորուքով, այտերը ուռած, թաթարի նման, աչքերին ակնոց, վզին սպիտակ կաշնե: Մոտեցավ ինձ և հարցրեց.

– Դուք հայ եք:

– Այո, – պատասխանեցի:

– Եկեք ինձ մոտ, – ասաց և հեռացավ»:

Նրա մեկնելուց հետո Աճառյանը ուսանողներին հարցնում է, թե ով էր այդ մարդը:

– Դա պարոն Մեյեն է, – պատասխանում են»<sup>2</sup>:

Այդ անունը նա առաջին անգամ էր լսում: Հարցնում է, իմանում, թե ինչ առարկաներ է դասավանդում: Իր որոնած մարդն էր: Արձանագրվում է նրա ուսանողը:

Վերցնելով Մեյեի հասցեն, գնում է նրա տուն: Մեյեն մոտիկից ծանոթանում է Աճառյանին, իմանում, որ նա պոլսեցի է, գիտի բացի հայերենից նաև գրաբար, ֆրանսերեն, թուրքերեն, մի քիչ էլ պարսկերեն ու արաբերեն: Ուրախանում է, խորհուրդ տալիս հետևել Սիլվեն Լևի սանսկրիտի դասերին, հայերենը սովորել իր մոտ՝ տանը, զենդերենը դարձյալ իրենից, համալսարանում:

Դա եղել է Աճառյանի կյանքի ամենաերջանիկ օրերից մեկը: Այդ օրվանից նա դառնում է 1600 թվականին հիմնված Սորբոնի համալսարանի ուսանող:

Համալսարանը ունեցել է չորս բաժին՝ պատմական և բանասիրական, գրական, կրոնների պատմություն, բնախոսական հոգեբանություն: Աճառյանին հրապուրել է առաջինը:

Նա երեք տարի աշակերտում է Անտուան Մեյեին թե՛ համալսարանում և թե՛ տանը, դառնալով նրա ընտանիքի ամենասիրելի անդամներից մեկը: Մեյեն տանը իր աշակերտի հետ պարապում էր հայերենի ձայնական օրենքները: Նույն առարկան, դարձյալ Մեյեի տանը, լսել է նաև մի այլ հայ ուսանող՝ Մելիք Սարգիս Դավիթբեկյանը, որ եղել է արաբ-կիրցի, բայց Փարիզում իրեն ներկայացրել է որպես Սյունեցի, Դավիթ Բեկի ժառանգներից, հետևելով այն հայ երիտասարդների օրինակին, որոնք Եվրոպայում հարուստ կանանց շրջանում հաջողություն ձեռք բերելու համար ներկայանում էին որպես ազնվական տոհմի շառավիղներ և միամիտ մարդկանց միջավայրում ստեղծում հեղինակություն, հաճախ ձեռք բերում նաև հարստություն: Այդպես էր վարվել վանեցի Ոստանիկ Տեր-Մարգարյանը 1870-ական թվականներին, ապրելով վիպային կյանքով և ունենալով նույնքան վիպային ու ողբերգական վախճան: Այդ ճանապարհով էր իր համար

Համբավ և նյութական փառք ստեղծել Սորեն Գալֆայանի եղբայրը՝ Ամբրոսիոս Գալֆայանը, իրեն ներկայացնելով իր և կրիկյան Լուսինյան թագավորական տոհմի շառավիղ:

Դավիթ Բեկը, ահա, այդ կարգի մարդկանցից է եղել<sup>3</sup>: Մուտք գործելով Մեյեի տունը, իրեն պահել էր իշխանական հպարտությամբ, հագնվել է մաքուր, թողել ծանր մարդու տպավորություն: Շուտով, սակայն, Մեյեն գլխի է ընկել, որ երիտասարդը այլ հակումներ, նախասիրություններ ունի, գիտությունը այնպես նվիրված չէ, ինչպես համեստ հագնված, նյութական անձուկ վիճակի մեջ գտնվող Աճառյանը, որին էլ նվիրել է ամբողջ ուշադրությունը:

Բացի հայերենից, Աճառյանը Մեյեի մոտ սովորում է հունարեն լեզվի պատմություն, սակայն մեծ հետաքրքրություն հանդես չի բերում: Նրա ուրախությունը անսահման է լինում, երբ Մեյեն Սորբոնի համալսարանում պաշտոնապես սկսում է դասավանդել համեմատական քերականություն, որը դառնում է Աճառյանի ամենասիրած առարկան:

Նա հետաքրքրվում է նաև զենդերենով, որ դարձյալ սովորում է Մեյեից, համալսարանում: Որպես դաս թարգմանել են «Ավեստան»: Այնքան վարժ է կարդացել զենդերենը, որ մի օր Մեյեն ասել է.- «Նա ինձնից լավ է կարդում, որովհետև արևելցի է»: Մեյեն, խանդավառված իր աշակերտի առաջադիմությամբ, առաջարկում է նրան կազմել զենդերենի հոլովների մասին առանձին ուսումնասիրություն, մի բան, որ կատարում է հմտորեն, ցանկանում այն ներկայացնել որպես ավարտական շարադրություն, բայց նույն օրերին հրապարակ է գալիս Բարթոլոմեի հայտնի բառարանը, որտեղ գիտականորեն շարադրված է եղել այդ հարցը:

Սանսկրիտը Աճառյանը սովորում է Սիլվեն Լեից, վերջինիս Հնդկաստան մեկնելուց հետո շարունակում է ուրիշի մոտ:

Պահլավերենի դասախոսն է եղել պրոֆեսոր Բլոչեն, որ այդ գծով միակ մասնագետն է համարվել Փարիզում: Վեց ամիս աշակերտում է նրան: Կարդացել են Արտավիրակի անգլիական հրատարակությունը: Ինչպես զենդերենում ու սանսկրիտում, պահլավերենում էլ նա աշակերտի կրավորական սերտումից դուրս գալով ցուցաբերել է հետազոտական, ստուգաբանական հմտություն: Այսպես, նա առաջարկում է Նախչակ ուսմիթունեղ

(քվե գցել) նախադասութեան մեջ նախակը սրբագրել վա-  
յիչակի և կապել հայերեն վիճակ բառի հետ, քանի որ  
պահլավերեն ն և վ տառերը միևնույն ձևով են գրվում, իսկ  
իմաստն էլ այդպես է թելադրում: Պահլավերենի ուսուցիչը չի  
կարողանում կողմնորոշվել, իսկ Մեյնն խանդավառվում է  
սրբագրութեան համար, առաջարկում է այդ ստուգաբա-  
նութիւնը դարձնել հատուկ հոդվածի նյութ: Աճառչանի  
բախտից այս անգամ էլ հրատարակվում է Մյուլլերի հոդվածը  
ճիշտ նույն բացատրութեամբ:

Գիտութեան նկատմամբ ազահուցութեան հասնող ծարավ  
ունեցող ուսանողը բացի Սորբոնի համալսարանում, Մեյնի  
ընտանիքում ուսանելուց, հետևում է նաև Կոլեջ դի Փրանսի և  
Արևելյան կենդանի լեզուների վարժարանի դասախոսու-  
թյուններին: Առաջինում նա լսել է բևեռագետ Օպպերտին, իսկ  
Արևելյան կենդանի լեզուների վարժարանում հետևել է  
արաբերենի:

Այս բոլոր բնագավառներում ցուցաբերել է մեծ առա-  
ջադիմութիւն, աստիճանաբար համարվել է հեղինակութիւն  
լեզվաբանների շրջանում:

Սորբոնի համալսարանի պրոֆեսորներից մեկը, հունաբան  
Փսիխարին 1897 թ. թուրքերեն դասեր է վերցրել Աճառչանից:  
Այս բանը ավելի է բարձրացրել նրա հեղինակութիւնը և ահա  
Մեյնն և Փսիխարին Աճառչանին ներկայացնում են Փարիզի  
լեզվաբանների ընկերութեան վարչութեանը, որպեսզի նրան  
ընդունեն ընկերութեան անդամ: Փետրվարի 13-ին նա պաշ-  
տոնապես ընտրվում է այդ ընկերութեան անդամ, մասնակցում  
բոլոր գիտական նիստերին, որոնք տեղի էին ունենում ամիսը  
երկու անգամ: Այդ տարվանից մինչև 1935 թիվը նա  
աշխատակցել է ընկերութեան գիտական տեղեկագրին (*Bulletin de la Société linguistique de Paris*):

Ընկերութեան գիտական նիստերում պարբերաբար կար-  
դացել է իր հետազոտական աշխատութիւնները:

Այս շրջանում է, որ լեզվաբան Աբբա Ռուսլոն հնարում է  
կոկորդի ձայները մրոտ թղթի վրա գրանցելու հարմարանք:  
Սորբոնի համալսարանի վարչութիւնը Ռուսլոյի տրամադրու-  
թեան տակ է դնում հատուկ փորձասենյակ, որտեղ նա  
կատարում է փորձերը և կարդում դասախոսութիւններ  
փորձնական ձայնաբանութեան մասին:

Ռուսլոյի առաջին աշակերտը դառնում է Աճառյանը, երեք ամիս աշխատում է նրա մոտ, սովորում այդ գիտությունների, սկսում հայերեն ձայների վրա փորձեր կատարել: Փարիզում գտնում է գավառացի հինգ հայ ուսանողների, փորձեր կատարում նրանց վրա, որից հետո արդյունքները ամփոփում է մի գրքում:

1897 թ. սեպտեմբերի 5-12-ը Փարիզում գումարվում է արևելագետների 11-րդ համաժողովը, որին մասնակցում են մի քանի հայեր, այդ թվում Կարապետ Եղյանը, Աբգար Հովհաննիսյանը, Կարապետ Բասմաճյանը և Հրաչյա Աճառյանը: Վերջինս մասնակցում է արիական լեզուների խմբի աշխատանքներին, որը ղեկավարում էր ականավոր արևելագետ Հյուբշմանը:

Համաժողովի սեպտեմբերի 5-ի նիստում նա կարդում է մի հաղորդում պրոֆեսոր Ռուսլոյի կատարած փորձերի հիման վրա իր գրած «Փորձառական ձայնախոսություն» աշխատությունից մասին: Հյուբշմանը ուշադրություն է դարձնում երիտասարդ լեզվաբանի համարձակ փաստարկումների վրա, իսկ երբ հաջորդ նիստում հայագետ Կարիերի մի զեկուցումից հետո կարդում է մի այլ հաղորդում՝ հայերեն նպաստ բառի ստուգաբանության մասին, Հյուբշմանը ավելի է հետաքրքրվում նրանով, տալիս է իր համաձայնությունը նրա ստուգաբանության մասին:

21 տարեկան պատանու այս համարձակ քայլը, որով նա հանդես էր եկել ականավոր արևելագետների կողքին, վկայում է, թե որքան հասունացած և իր մասնագիտության մեջ հմտացած ուսանող էր նա այդ տարիներին: Այս փաստը չէր վրիպել Մեյեից, չի վրիպում և Հյուբշմանի աչքից: Երկրորդ զեկուցումից հետո նա հրավիրում է Աճառյանին իր մոտ, կրկնում դրական կարծիքը նրա զեկուցումների մասին, նշում լաբորատոր փորձերի նշանակությունը և խորհուրդ է տալիս դրանք շարունակել նաև այլ բարբառների վրա: Զրույցի ընթացքում, նկատելով, որ Աճառյանը գիտի մի քանի լեզուներ, բավարար չափով նաև զերմաներենը, հրավիրում է Ստրասբուրգ՝ իր դասախոսությունները լսելու:



Մենք խոսեցինք Աճառյանի միայն Հաջողությունների մասին, բայց նրա կյանքը, տնտեսական վիճակը Հակադարձ Համեմատություններ էր առաջ գնում: Նույն այն օրերին, երբ նրան ընդունում էին Փարիզի լեզվաբանական ընկերությունն անդամ, նա ապրում էր ամենածանր պայմաններում: Պոլսից բերած գումարը սպառվելուց հետո սկսվում է Աճառյանի կյանքի ամենադառն շրջանը, որի մասին խոսելիս ամեն անգամ հուզումից դողում էր նրա ձայնը: Օրվա ապրուստը հայ-թայթելու համար նախ որոշում է կատարել լրագրավաճառի աշխատանք, սակայն չի կարողանում մրցել Փրանսիացի ճարպիկ երեխաների հետ, մանավանդ որ նրանք աշխատում էին ամբողջ օրը, իսկ ինքը դասերից հետո էր զբաղվելու այդ գործով:

Հետո փորձում է կոչիկ ներկել: Բուլվար Սեն Միչել փողոցի վրա հանդիպում է մի երիտասարդի, որը ցերեկները մի քանի ժամով հանգստանում էր: Առաջարկում է այդ ժամերին նստել նրա տեղը, ստացված գումարի կեսը նրան տալ: Մարդը համաձայնվում է, բայց արդյունքը այնքան չնչին է լինում, որ հրաժարվում է:

Կինոյի հայտարարություններ է բաժանում:

«Անձրևոտ օր էր,- գրում է իր հիշողություններում,- անձրևը բարակ շաղում էր. ես, բարակ հագնված, կիսաքաղց երկու ժամ թղթեր ցրեցի և վերադարձա պաշտոնյայի մոտ, վճարեց մի Փրանկ, միևնույն ժամանակ իրավունք տալով դիտելու կինոն: Առաջին անգամն էր, որ ցուցադրվում էր կինո և ես էլ առաջին անգամն էի տեսնում»<sup>4</sup>:

Հպարտ երիտասարդը իր ծանր վիճակը չի հայտնում ոչ դասախոսներին, ոչ էլ ծանոթ հայերի: Հարկադրված է լինում ծախել ունեցած չունեցածը. և արդեն ի՞նչ ունեք որ: Ծախում է անկողինը, վերմակը, մի քանի կենսական իրեր: Հնարավորություն չունենալով տան վարձը տալ, դուրս է գալիս զբաղեցրած փոքրիկ սենյակից, որոնում օթևանելու ավելի էժան տեղ: Վարձում է Օդեոն թատրոնի մոտակայքում գտնվող շենքի ութերորդ հարկում, կտուրի տակ մի խցիկ, ոչ մահճակալ, ոչ անկողին: Լրագրերի մի դեզ օգտագործել է

որպես անկողին, իսկ գրքերը՝ որպես բարձ: Միառժամանակ քնել է առանց շորերը հանելու, որպեսզի չմրսի:

«Օրական ուտում էի մի փոքր կտոր հաց՝ 5 սանտիմի, և երկու փոքր գազար՝ 5 սանտիմի: Լսել էի, թե ամենասննդարար և միևնույն ժամանակ ամենաէժան բանը գազարն է: Այսպիսով՝ օրական ծախսս լինում էր 10 սանտիմ, ամսական 3 ֆրանկ: Ամբողջ ժամանակ քաղցած էի, թեև դասերս չարունակում էի անխափան»<sup>5</sup>:

Մի անգամ, թատրոնի հայտարարություններ բաժանելիս երբ անցնում է սրճարանի առջևով, նկատում է լայն ճակատով, բոցկլտուն աչքերով մի մարդ, որ ուղիղ նայում է իրեն: Ճանաչում է Արչակ Չոպանյանին, որին գիտեր Պոլսից: Չոպանյանը կանչում է նրան իր մոտ, հետաքրքրվում է, իմանում նրա վիճակը, առաջարկում դիմել Փարիզի հայ հարուստներին: Աճառյանը հաջորդ օրը դիմում է մի երկուսին, հուսախաբ լինում: Նախընտրում է հայտարարություններ ցրել, քան թե դիմել այդ ստորացուցիչ միջոցին: Չոպանյանը, որ իր կյանքի 60 տարիները անցկացրել է Փարիզում և շատ շատերին է օժանդակել, մանավանդ փարիզյան կյանքին անծանոթ հայ ուսանողների, օժանդակում է նաև Աճառյանին, նրա համար գտնելով թուրքերենի դասեր: Սակայն դա էլ չի կանոնավորում վիճակը: Սկսում է բոհրած պիստակ ծախել Փարիզի փողոցներում՝ «կակահայույեթ, կակահայույեթ» բղավելով: Առաջին օրը չահում է 7 ֆրանկ, տալիս է պարտքերի մի մասը, երկրորդ օրը՝ 5 ֆրանկ: Աստիճանաբար իջնելով նա օրական ստանում է 20–30 սանտիմ՝ չնչին գումար: Առավոտ ժամը 7–ին գնում էր համալսարան, որտեղ մնում էր մինչև գիշերվա ժամը 10–ը.

«Համալսարանում վառում էին և տաք էր, միևնույն ժամանակ ներսում շատ ընտիր գրադարան կար և մեր ուզած գիրքը մեր ձեռքով վերցնելով կարդում էինք»<sup>6</sup>: Գիշերվա ժամը տասին համալսարանը փակվում էր, յուրաքանչյուրը գնում իր տուն, պատասպարվում հարազատ հարկի տակ: Անօթևան մնում էր միայն մի ուսանող, ամենից համառը սովորողների մեջ, բայց ամենից թշվառը, որը ոչ տուն ուներ, ոչ ապաստան և ոչ էլ փող:

Աճառյանին սիրել են բոլորը, բայց ոչ ոք չի կարողացել օգնել նրան: Ո՞ր մեկին օգնեին: Նույն տարիներին, նույն ծանր

վիճակում, Փարիզի սալահատակների վրա իրենց ողջ կյանքը քարշ էին տալիս շատ ավելի ականավոր, հանրությանը հայտնի դեմքեր՝ հայ գրողներ, հրապարակախոսներ, արվեստագետներ, ինչպես Արփիար Արփիարյանը, Երվանդ Օտյանը, Լևոն Բաչայանը և ուրիշներ: Տառապանքներով լի այդ կյանքը գունագեղ վրձինով նկարագրել է Ե. Օտյանը իր «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրություններում, որտեղ հանդիպում ենք այժմ անհավատալի թվացող դեպքերի. այսպես, քաղցը Օտյանին և Արփիարյանին այն աստիճան են նեղել, որ նրանք հարկադրված են եղել վաճառել ոչ միայն իրենց ամենակենսական իրերը, այլև վարձով ապրած տան խոհանոցային պարագաները:

Աճառյանը համալսարանում իրեն պահել է հպարտ. շատ մոտ մարդիկ են միայն իմացել վիճակը, այդ թվում Մեյնեն, որը նույնպես գտնվել է նյութական ոչ նախանձելի դրություն մեջ: Բացի գիտությունից նա ուրիշ բան չի կարողացել տալ իր աչակերտին:

Եղել են մարդիկ, որ ցանկացել են չնչին գումարներով օգնել Աճառյանին, բայց մերժել է իրեն հատուկ հպարտությամբ: Մի անգամ, մի անգլիացի, իմանալով նրա հայ ուսանող լինելը, պիտակ գնելիս տասը սանտիմի փոխարեն ուզում է վճարել մեկ ֆրանկ:- Ո՛չ,- ասում է Աճառյանը, մի փաթեթ կակույեթի գինը 10 սանտիմ է:- Այն ժամանակ տասը փաթեթ տվեք, բայց վերցրեք մեկ ֆրանկը:- Ո՛չ,- համառում է հայը,- դուք մեկ փաթեթ էիք ուզում, տվեք ինձ տասը սանտիմ:

Անգլիացին ժպտում է ու գոհ այդ չքավոր երիտասարդի արժանապատվության բարձր գիտակցությունից, օրորում է գլուխը, հեռանում:

«Ես հայ էի, այն էլ Սամաթիացի, չէի կարող ողորմություն ընդունել,- գրում է Աճառյանը իր հիշողություններում»: Իրավացի է. նա իր ամբողջ կյանքում քրտնաջան աշխատանքով է ապահովել իր ապրուստը:

Նա կատարել է ավելի ծանր աշխատանքներ, որոնց մասին չի գրել հիշողություններում: Մի անգամ ամբողջ գիշերը լվացել է հաջորդ առավոտ Փարիզից մեկնելու պատրաստվող գնացքի վագոնները, որի համար նրան տվել են քսան ֆրանկ: Հաջորդ օրը չի կարողացել Սորբոն գնալ, այնքան հոգնած է

եղել: «Այդ միակ օրն էր,- պատմում էր նա,- որ ես հիվանդ չէի, բայց չկարողացա համալսարան գնալ»: Այս փաստը Աճառ-յանը պատմել էր նաև Ավետիք Իսահակյանին, որ հիշեց Աճառ-յանի մահից հետո, ընտանեկան մի սեղանի շուրջ:

Այդ օրերին Աճառյանի ընկերներից մեկը հրավիրում է նրան Անգլիա, բայց ճանապարհածախս չունենալով, չի կարողանում գնալ:

«Եթե միայն յոթ և կես Ֆրանկ ունենայի, ես այն ժամանակ Անգլիան տեսած կլինեի»:

Եղել է ժամանակ, որ հուսահատվել է, մտածել ուսումը թե-րի թողնելու, Պոլիս վերադառնալու մասին: Բարեբախտաբար քաղաքական դրդապատճառները խանգարել են նրա այս ծրագրին: Պատմենք դեպքը, որ բնութագրական է և՛ Աճառ-յանի և՛ Փարիզում տիրող մթնոլորտի համար:

Աճառյանը Պոլիս վերադառնալու համար դիմում է թուր-քական դեսպան Մյունիթր փաշային, որն, ի դեպ, Փարիզում շատ ավելի զբաղված էր լրտեսական մի մեծ ցանց ղեկավարելու գործով, քան դիվանագիտական աշխատանքով: Թուրք պատմաբան Օսման Նուրին վկայում է, որ սուլթանի կողմից նրան տրված պետական առաջադրանքի մեջ հիմնական տեղը բռնում էր Փարիզում սովորող թուրք և հայ երիտասարդությունից քաղաքական տրամադրություններին հետևելը: Այդ թվականներին երիտասարդ թուրքերի կազմակերպությունը, հայ քաղաքական կուսակցությունները գործում էին հիմնականում երկրից դուրս: Բռնապետությունում դեմ պայքարելու, ապստամբություններ կազմակերպելու ծրագրեր էին կազմում Փարիզի և Ժնևի սրճարաններում:

Ինչպես Պոլսի փողոցներում, հասարակաց վայրերում, այստեղ էլ ամենտուր վխտում էին Մյունիթր փաշայի կողմից առատորեն վարձատրվող լրտեսները:

Փարիզում սովորող հայ ուսանողները սերտ կերպով կապ-ված էին միմյանց հետ, ունեին իրենց կենտրոնները, երկու «Ուսանողաց միություններ», որոնցից մեկի հովանավորու-թյունը իր վրա էր վերցրել Արչակ Չոպանյանը: Նա այդ թվե-րին նախապատրաստական աշխատանքներ էր կատարում «Անահիտ» հանդեսը հիմնադրելու ուղղությամբ<sup>7</sup>:

Ուսանողները պարբերաբար կազմակերպում էին

երեկույթներ, համերգներ, դասախոսություններ: Գրականագիտական զեկուցումներով հաճախ հանդես էր գալիս Չոպանյանը: Նա այդ տարիներին զեկուցում է կարդացել ինչպես Արուստիանի մասին: Բայց երեկույթ-ցերեկույթներում կենտրոնական հարցը մնում էր բռնապետության դեմ մղվող պայքարը: Հայ ժողովրդի ճակատագիրը օտարներին ծանոթացնելու գործում մեծ դեր էր կատարում հենց Չոպանյանը, որն ավելի շուտ էր եկել Փարիզ, ծանոթ էր բարքերին ու կյանքին, Ֆրանսիացի շատ նշանավոր գրողների, հասարակական-քաղաքական գործիչների, այդ թվում «Յումանիտեի» խմբագիրներից Ժան Ժորեսին, գրողներ Անատոլ Ֆրանսին և ուրիշների: Ամբողջ եվրոպական մամուլը ողողված էր հայկական հարցի հետ կապված հոդվածներով, թուրքական ջարդերին նվիրված նկարագրություններով: Մարդասիրական հոդվածներով հանդես էին գալիս պետական, մշակութային բազմաթիվ գործիչներ:

Այս աղմուկ-աղաղակից հեռու չէր կարող մնալ Աճառյանը: Մասնակցում էր հակաթուրքական բնույթ կրող հավաքույթների, որոնցից մեկի ժամանակ փայլուն ճառով հանդես էր եկել Ժան Ժորեսը, խոսել հայ ժողովրդի փառահեղ անցյալի, համաշխարհային մշակույթին մատուցած ծառայությունների մասին, դատապարտելով թուրքիայում մոլեգնող վայրագ ջարդերը:

Նա մասնակցել է նաև փողոցային ցույցերի, որոնցից մեկի ժամանակ, ի թիվս բազմաթիվ Ֆրանսիացի ուսանողների, ձերբակալել են նաև նրան, բայց նույն գիշեր էլ ազատ արձակել:

Անգամ քաղաքական կյանքից հեռու կանգնած մարդիկ, ինչպիսին էր Մեյեն, չէին կարող անտարբեր դիտել այս բոլորը: Աճառյանը քանիցս պատմել է, թե ինչպես ժամերով, հենց Մեյեի տանը, գլուխ-գլխի զրուցել են հայ ժողովրդի վիճակի մասին և թե ինչպես Մեյեն նրանից է լսել Զեյթունի, Սասունի, Կարնո դեպքերի մանրամասնությունները:

Աշխատում էր նաև Մյունիխ փաշան լրտեսների իր ոհմակով: Նա մոտիկից գիտեր, թե թուրք և հայ ուսանողներից ով ինչ գործ է կատարում, որտեղ է լինում, ինչ մթնոլորտում է շնչում: Մյունիխը ամեն կերպ աշխատել է թուլացնել հակապետական տրամադրությունները՝ ոմանց կաշառելով, - իբր թե սուլթանի

բարեսրտությամբ ապրուստի միջոցներ տալով,- ուրիշներին երկրում մեծ պաշտոններ խոստանալով: Առավել ըմբոստ երիտասարդներին համոզել է վերադառնալ Թուրքիա, վստահ, որ այնտեղ հեշտ էր դատաստան տեսնել նրանց հետ: Թուրքիա վերադարձողների անձնագրի մեջ դեսպանը ստորագրում էր երկու տեսակ. մի ձևով հայտնում էր վերադարձողի վստահելի լինելը, մի այլ ձևի ստորագրությամբ՝ հասկացվում էր, որ եկողը անբարեհույս տարր է, որի հետ պետք է վարվել այնպես, ինչպես գիտեին վարվել թուրքական դահիճները:

Բարեբախտաբար Փարիզում այդ գաղտնիքը իմացել էին և՛ Հայ, և՛ թուրք երիտասարդները, մանավանդ այն բանից հետո, երբ հայտնի էր դարձել, թե ինչպես սուլթանի հրամանով մի քանի տասնյակ ազատամիտ թուրք երիտասարդներ Եվրոպայից հայրենիք վերադառնալիս հենց նավից գցել էին ջուրը, ոտքերին կապելով ծանրություններ: Դրանից հետո քչերն են համաձայնվել մտնել Թուրքիա: Հայ ուսանողներից մեկը, որ թուրքական դեսպանից փող պոկելու համար կապված է եղել դեսպանատան հետ, Աճառյանին հայտնում է, որ Մյունխր փաշան նրա անձնագրում ստորագրել է այն ձևով, ինչ ձևով ստորագրում է վտանգավոր մարդկանց անձնագիրը:

Հենց սա էլ Աճառյանի համար դառնում է բարեբախտություն: Հրաժարվում է Պոլիս մեկնելու մտքից: Գաղտնիքը հայտնում է Մեյեին, որը զարմանում է թուրքական խորամանկության վրա և խորհուրդ է տալիս անպայման մնալ, մի քիչ էլ տոկալ դժվարություններին, մինչև որ որևէ հիմնավոր գործ ճարվի:

Արչակ Չոպանյանի օժանդակությամբ, մասամբ էլ մի լյուքսեմբուրգցի ընկերոջ ջանքերով՝ նա գտնում է թուրքերենից ֆրանսերեն թարգմանության և մի ֆրանսիացի զինվորականի թուրքերեն սովորեցնելու աշխատանքներ:

Հրաժարվում է պիստակ վաճառելուց: Պարտքերը տալիս է: Ասում են հաջողությունը կամ դժբախտությունը իրար հետևից են գալիս: Նույն այդ օրերին նրա համար ստեղծվում են ապրելու համար ավելի նպաստավոր պայմաններ: Կարապետ Բասմաջյանի փոխարեն դառնում է վերևում մեր հիշատակած Գվիդոն (Ամբրոսիոս) Լուսինյանի «Ֆրանս-Հայ» բառարանի բարտուղարը: Աշխատանքը ծանր չի եղել, օրվա մեջ ընդամենը

մի քանի ժամ: Գալֆայանի ձեռագիրը եղել է շատ վատ, մանավանդ Հայերենը ֆրանսիացի գրաչարի համար անհասկանալի, անընթեռնելի: Աճառյանի պարտականությունն էր մաքուր ձեռագրով արտագրել բառարանի էջերը, նաև կատարել սրբագրություններ:

Ի դեպ, Գվիդոն Լուսինյանի մոտ Բասմաջյանից ու Աճառյանից բացի աշխատել են նաև ուրիշներ, այդ թվում վիպասանուհի Զապել Եսայանը:

Գվիդոն Լուսինյանը հարուստ մարդ էր, միաժամանակ խելոք, լեզուների գիտակ, շատ բանով տարբեր կեղծ ճանապարհով ազնվական դարձած այլ մարդկանցից, այդ թվում Դավիթ Բեկից: Նա, հետևելով իր եղբոր՝ Ոորեն Գալֆայանի օրինակին, իրեն հայտարարել էր հայոց իշխան, դարձել իշխան Գվիդոն Լուսինյան, իր իշխանական ծագումնաբանական փաստաթղթերը հաստատել տվել ֆրանսիական և անգլիական կառավարությունից մոտ: Միամիտ մարդկանց նույնիսկ բաժանել էր իշխանական պատվո նշաններ: Դավիթ Բեկից տարբերվել էր նրանով, որ սրա կարթը բռնել էր հարուստ որս, ամուսնացել էր ֆրանսիացի բազմահարուստ, միաժամանակ գեղեցիկ մի կնոջ հետ, որը հարևան է եղել Վիկտոր Հյուգոյին: Քաշված իր ապարանքը, նյութապես միանգամայն ապահով հայ իշխանը կատարում է շատ օգտակար գործ՝ պատրաստում ֆրանսերենից հայերեն մի մեծ բառարան, որը հայ բառարանագրությունից ամենահաջողված նմուշներից մեկը կարող է համարվել և մինչև այժմ էլ չի կորցրել իր արժեքը:

Աճառյանը նրանից ստացել է այնքան գումար, որը լիուլի բավարարել է իրեն: Նա այդ օրերին մեծագույն գոհունակությամբ Պոլիս՝ իր հարազատներից մեկին գրել է. «Եթե իմ վրաս տեղեկություններ հարցնես, ճիշտ երազած, մտադրած կյանքս անցուցի, մակույկի մը պես եղա, որ փոթորկի բռնված ըլլա, ինկա, ելա և հիմա, սակայն, խաղաղ օրերս հասան ինձ համար: Մեկ տարի անցուցի իմ ունեցած դրամովս, վեց ամիս ալ հոս աշխատելով դպրոցս շարունակեցի: Բայց ի՞նչ աշխատեցա, չես սպասեր ամենևին, չեքերճի, Փստղճի, լրագրավաճառ, իլանճի: Այս արհեստներն ըրի գիշերները, երբ դպրոցը կը գոցվեր, երբ դաս չըլլար, կիրակի օրերը: Մնացյալ ժամանակը դպրոցը կը շարունակեի մինչև որ գտա երկու

դասեր տաճկերենի ու հայերենի ու անոնցմով սկսա ապրել»<sup>8</sup>;

Աճառյանի հիշատակած աշխատանքներից **Փատղճին** պիստակ ծախելն է, **իլանճին** կինոյի հայտարարություններ բաժանելը (իլան – թուրքերեն նշանակում է հայտարարություն), մեզ համար նորություն է շեքերճին, կնշանակի նաև կոնֆետեղեն, շաքարեղեն է վաճառել, որի մասին մոռացել է գրել իր հուշերում կամ պատմել:

Անդրադառնալով նոր պաշտոնին, նույն նամակում շարունակում է. «Հոս գրագիր եղա Լուսինյան դիվանին: Ան ֆրանսահայ բողոքք մը կը հրատարակե: Այդ բողոքքին տպագրության գործը ինձի հանձնված է: Գործը կարագրեմ և այլն և ասով 100 ֆրանկ ամսական, իսկ մյուս առաջվա դասերեն ալ 30 ֆրանկ ունիմ: 180 ֆրանկ ամսական, իսկ բառարանը պիտի տևի երեք տարի դեռ ու հեղինակն ալ ինձմե գոհ է»<sup>9</sup>:

Այսպես վերջանում է Աճառյանի փարիզյան կյանքի դառնությունների շրջանը: Գվիդոն Լուսինյանի մոտ քարտուղար դառնալուց հետո փաստորեն կարողանում է ապրել ճշմարիտ ուսանողի կյանքով, համարձակ մասնակցել Փարիզի լեզվաբանական ընկերության նիստերին: Պետք է պատկերացնել մի քանի ամիս առաջ փողոցներում, մարդկանց խուզարկու ակնարկներից խուսափող, պիստակ վաճառող երիտասարդին այժմ այդ ընկերության պատկառելի մարդկանց շարքում՝ արդեն հպարտ ու ինքնավստահ:

Մեր նկարագրած դեպքերը վերաբերում են 1897 թ. աշնանը: Պոլիս ուղարկած վերոհիշյալ նամակում նա ուրախ տրամադրությամբ ասում է, թե մի քանի ամիս էլ կմնա Փարիզում, ապա կմեկնի Գերմանիա, որտեղ մնալու է վեց ամիս. նույնիսկ որոշակի նշում է մեկնելու ամիսը՝ ապրիլ:

Ե՞րբ է նա Փարիզից մեկնել Գերմանիա, 1898 թ. ապրիլ՞ում ամիսն, ինչպես գրել էր իր նամակում: Նրա կենսագիրներից ոմանք ապրիլ ամիսն են ընդունում, ինչպես բանասեր Գր. Գարեգինյանը<sup>10</sup>: Աճառյանի անունը Փարիզի լեզվաբանների Տեղեկագրում վերջին անգամ հանդիպում ենք 1898 թ. մարտի 5-ին: Ուրեմն այդ ամիսն նա դեռ Փարիզում էր: Բայց մեր ձեռքի տակ ունենք մի վավերական փաստ, որի համաձայն, նա ոչ թե ապրիլ ամիսն է մեկնել Ստրասբուրգ, այլ մարտի



կեսերին: Համենայն դեպս մարտի 19-ին Ստրասբուրգում էր. այդ օրը մի բացիկով շնորհավորել է ծնողների գատիկը<sup>11</sup>:

Մեկնելով Գերմանիա՝ իհարկե, նրա նպատակը միայն Հյուբըմանի դասախոսությունները լսելը չէր, այլ ծանոթանալ գերմանական լեզվաբանությունյան նվաճումներին, ինչպես այդ երևում է արդեն մեր հիշատակած նամակից, որտեղ ասում է, թե Գերմանիայում շատ առաջ է գնացել լեզվաբանությունը:

Ստրասբուրգում նա ջանասիրությունը կատարելագործում է գերմաներեն լեզուն:

Ինչպես Մեյեն Փարիզում, այստեղ էլ Հյուբըմանը եղել է Աճառյանի լավագույն պաշտպանն ու հոգատար ուսուցիչը: Չի խնայել ոչ եռանդ, ոչ ժամանակ ուշիմ պատանու հարցասիրությունները բավարարելու, նրան ամեն կերպ օգտակար լինելու համար:

Աճառյանն էլ իր հերթին աշխատել է իմաստությունը օգտագործել ժամանակը, ականավոր հայագետից վերցնել առավելագույնը, վերցնել և՛ համալսարանում և՛ տանը:

Նա գիտակցել է, որ ուսումնառություն չըջանն ավարտելուց, հայ իրականություն վերադառնալուց հետո այլևս զրկվելու է Մեյեի, Հյուբըմանի նման հայագետների կենդանի խոսքը լսելու հնարավորությունից, ուստի որոշել է դասախոսությունները գրի առնել ամենայն մանրամասնությամբ: Իր համար մշակել է սղագրման յուրօրինակ մի ձև, որով կարողանում էր արձանագրել դասախոսի պատմածն ամբողջությամբ: Այդպես էր վարվել դեռևս Կենտրոնական վարժարանում, այդ ձևը կիրառել էր Փարիզում, կիրառում է նաև այստեղ:

Հյուբըմանը, ինչպես Մեյեն Փարիզում, համալսարանական դասախոսություններից դուրս, տանն էլ, անվճար սովորեցրել է գերմաներեն: Այն դերը ինչ ժամանակին կատարել է Դորպատի համալսարանի դասախոս Պարրոտը Ս. Աբովյանի համար, նույնը Հյուբըմանը կատարել է Աճառյանի համար, որը մինչև իր խոր ծերությունը երկյուղածությամբ էր արտահայտվում Մեյեի և Հյուբըմանի մասին, նրանց օգնությունը պարտական համարելով իր ձեռք բերած գիտելիքները:

Ամենևին չնսեմացնելով այդ երկու պատկառելի գիտնականների մարդասիրական ազնիվ վերաբերմունքը օտարություն մեջ հուսալքման մատնված հայ ուսանողի նկատմամբ,

արդարությունը պահանջում է նշել միաժամանակ, որ նրանք էլ օգտվել են Աճառյանից՝ իրենց գիտական շատ եզրակացութունների ստուգման համար: Հանձին Աճառյանի՝ չէին տեսնում սովորական մի ուսանողի, այլ լեզվաբանական անհրաժեշտ իմացություն ձեռք բերած, խելոք, հասկացող, տրամաբանող այնպիսի մի ուժի, որը սքանչելի գիտեր հին և նոր հայերենը, գաղափար ուներ հայ բարբառների մասին, տիրապետում էր թուրքերենին, մասամբ պարսկերենին ու արաբերենին, որոնց թե բառացանկը և թե քերականությունը նրան ծանոթ էին դեռևս Պոլսից: Մեյն և Հյուբչմանը ոչ միայն այդ թվականներին, այլև հետագայում մինչև իրենց կյանքի վերջը անձնական նամակագրություններ պահպանեցին Աճառյանի հետ, օգնելով վերջինիս՝ շատ բառերի ստուգաբանության գործում, բայց իրենք էլ բազմաթիվ հարցեր տալով նրան, ստանալով գոհացուցիչ պատասխան, իրենց երկերում վկայակոչելով մեծանուն հայ գիտնականին:

Ասացինք, որ Ստրասբուրգում Աճառյանը սղագրել էր Հյուբչմանի դասախոսությունները: Դրանք անսպառ նյութ են տվել նրան՝ իր հետագա հետազոտությունների ընթացքում: Հայտնի է, որ Հյուբչմանը մահացավ շուտ՝ 1908 թվին. հնարավորություն չունեցավ լույս ընծայելու ոչ իր այդ դասախոսությունները, ոչ էլ նրանցում պարունակվող ուշագրավ եզրակացությունները: Աճառյանը՝ պահպանելով գիտական էթիկան, ուսուցչի բազմաթիվ դիտողությունները հիշատակել է իր աշխատություններում միշտ որպես հեղինակ վկայակոչելով Հյուբչմանին:

Ստրասբուրգում Աճառյանի հետ միասին Հյուբչմանի մոտ համեմատական քերականություն է սովորել նաև մի այլ հայ՝ էջմիածնի միաբանության անդամ Եղնիկ Վարդապետը, որի ընդունակությունների, բնավորության գծերի մասին Աճառյանը շատ էլ նպաստավոր կարծիք չի ունեցել և առհասարակ նա հայ մշակույթի պատմության մեջ որևէ հետք չի թողել:

## Գլուխ Հինգերորդ

### Գ Ի Տ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Փաստորեն փարիզյան տարիներից է սկսվում Հրաչյա Աճառյանի լեզվաբանական գործունեությունը և այդ թվականներից էլ նա որպես հայագետ լեզվաբան, լայն ճանաչում է գտնում եվրոպական գիտական շրջաններում: Ճիշտ է, «Բազմավեպի» 1895 թ. օգոստոսի համարում տպագրվել էր մի փոքրիկ հոդված Եղիշեի տեքստում կատարված որոշ ճշտումների մասին, որով զբաղվել էր Աճառյանը Կարինում, բայց դա սոսկ նախափորձ էր:

Նույնը պիտի ասել Կարինից «Հանդես ամսօրյային» ուղարկված «Ցուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի» աշխատություն մասին: Անշուշտ այս վերջինը վկայում է հեղինակի բանասիրական աշխատանք կատարելու կարողությունը, ձեռագրերի գիտական ցուցակ կազմելու մեթոդների յուրացումը, նաև գիտական բժախնդրությունը, կողմնորոշումը, սակայն այս բոլորով հանդերձ դա էլ բարձր մղել նրան դեպի լեզվաբանությունը և ունենալ այն նշանակությունը, որ ունեցավ, ասենք մի նպաստ բառի ստուգաբանությունը: Վերջինով նա թեև կոխում էր համեմատական լեզվաբանության ոլորտը ու փորձում էր կատարել այնպիսի աշխատանք, ինչպիսին կատարում էին աշխարհահռչակ գիտնականներ Մեյեն, Հյուբշմանը և ուրիշներ:

Կենսագրության մանրամասներին անդրադառնալիս տեսանք, որ Փարիզում շատ դռներ էր բախել, բայց նրան գրավել էր ամենից շատ պատմահամեմատական մեթոդը, որը խոշոր նվաճումներ էր արձանագրել և աշխարհի լեզուները բաժանելով տարբեր լեզվախմբերի, որոշել էր հայերենի տեղը այդ լեզվախմբերում: Մեթոդը մշակված էր, ծանր աշխատանքը մնում էր, նոր-նոր պետք էր հայոց լեզվի բազմահազար բառերը, լինեն դրանք արմատական թե փոխառյալ, ինչպես և քերականական ձևերը, համեմատել համապատասխան լեզ-

վարձատանիքի այլ լեզուների բառերի հետ ու տալ ստուգաբանությունը: Գիտական հայտնագործումների մի ամբողջ աշխարհ կարող էր բացվել ուսումնասիրողի առաջ: Առաջին նախափորձերը կատարել էին պատմահամեմատական մեթոդը մշակողները, մի քանի տասնյակ բառերի ստուգաբանությամբ: Գրանով հարցը միայն սկսվում էր: Օտար հայագետները, որքան էլ նշանավոր դեմքեր լինեին, չէին կարող ըստ ամենայնի խորանալ հայ լեզվաբանության մեջ և լուծել հանգուցային շատ հարցեր, որոնք կապվում էին լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների հետ, իրենց դրսևորումներն ունեին բարբառներում, արդյունք էին սոցիալ քաղաքական հարաբերությունների: Ինքը Հյուբերտը մի առիթով ասել է, թե շատ գործ կա անելու և թե այդ գործը անկարող են անել միայն եվրոպացիները. «Հայերը պիտի աշխատեն և սակայն հայոց մեջ որչափ ցանցառ է լեզվաբանությամբ զբաղվողներու թիվը»<sup>1</sup>:

Աճառյանի լեզվաբանական հակումների մշակմանը մեծապես նպաստում է այդ գիտակցությունը:

Իհարկե, հայագիտությունը չէր սկսվում Հրաչյա Աճառյանով, այդ բնագավառում խոշոր գործ էին կատարել ամենից առաջ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանները, ինքը Աճառյանը շատ բան էր սովորել նրանցից. չէր հաճախել նրանց դպրոցները, բայց նրա համար ճշմարիտ դպրոց էին հանդիսացել Մխիթարյանների մամուլը, նրանց հրատարակությունները: Աճառյանի ուսումնասիրության տարիներին թե՛ «Հանդես ամսօրյան» և թե՛ «Բազմավեպը» գերազանցապես զբաղվում էին հայագիտական հարցերով: Տաշյանի, Տերվիչյանի և այլոց լեզվաբանական ծանրակշիռ աշխատությունները իրենց ազդեցությունն են թողել Աճառյանի վրա: Բայց վերջ ի վերջո՝ ինչպես օտար հայագետները, Մխիթարյան հայրերն էլ մեր լեզուն ուսումնասիրում էին գերազանցապես գրքերով, ոչ կյանքում, մինչդեռ այն, մանավանդ նրա աշխարհաբար հատվածը ոչ լատիներեն էր, ոչ էլ հին հունարեն: Այդ լեզվով խոսում էին միլիոնավոր մարդիկ: Մխիթարյանները հնարավորություն չունեին ուսումնասիրելու, հետազոտելու կենդանի լեզուն լայն ոլորտի մեջ, նրանց չփումը կյանքի հետ դուրս չէր կարող գալ իրենց վանքերից. չփումը գավառից եկած

մի քանի աշակերտների կամ մի քանի վաճառականների հետ՝ այս էր բոլորը: Եթե հաշվի առնենք նաև այն, որ Մխիթարյանների մոտ սովորելու եկող աշակերտները այնքան փոքր էին, որ չունենալով լեզվի գիտական զգացողությունը, չէին կարող օգնել վարդապետներին՝ հետազոտելու այս կամ այն բարբառը, ապա պարզ կարող է դառնալ, որ հայոց լեզվի մշակումը ամենևին չէր կարող իր գիտական բարձրություն վրա կանգնել Մխիթարյանների կողմ: Անհրաժեշտ էին մարդիկ, որոնք ստանալով եվրոպական բարձրագույն կրթություն, հաղորդակից դառնալով համաշխարհային լեզվաբանության նվաճումներին, Մխիթարյան հրատարակությունների և մխիթարյան հայկաբանների միջոցով լավ յուրացնելով հայ հին մատենագրությունը, բառապաշարը, մտնեին իրական կյանք, չրջագայեին քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, արհամարհեին աշխարհիկ կյանքի զվարճությունն ու վայելքը ու ավանդական մարգարեների նման մախախը ուսերին, հենված ձեռնափայտի վրա, չրջեին ավանից ավան, ոչ թե մարգարեի խոսքը քարոզելու, այլ լսելու հարյուրավոր անգրագետ գյուղացիների ձայնը, ուսումնասիրելու նրանց բարբառները:

Սա անշուշտ ավելի դժվար էր, քան աշխարհիկ կյանքից կտրված մի կղզու մեջ հավաքված վանականների կատարածը: Հետո՝ մինչդեռ այդ վանականները զեթ ապրուստի մասին չէին մտածում, յուրահատուկ այս «միսիոներները» պարտավոր էին կրել ամեն զրկանք: Այդպիսի մի մարտիրոսացած դեմք էր անգլիացի բևեռագետ Սեյսը, որը Վանի ուրարտական արձանագրությունները ընդօրինակելուց հետո հայրենիք չվերադարձած զոհ գնաց վայրենի քրդերի դաշույնին: Հեշտ բան չէր նվիրվել նման մի բնագավառի, որ պահանջում էր ամենից առաջ անձնագոհություն, համառություն և տոկունություն:

Աճառյանի գիտական առաջին աշխատությունը, որ լույս է տեսել 1897 թվականին Փարիզի լեզվաբանական ընկերություն տեղեկագրում, նվիրված է լազերենի ուսումնասիրմանը: Վերնագիրն է «Etude sur la Langue laze»: Նա լազերենով հետաքրքրվել է Կեստրոնական վարժարանի վերջին դասարանում: Այն ժամանակ նրանք ապրում էին Սարը յար թաղում: Մի անգամ, իրենց տան ներքևում հանդիպում է մի լազի, որը եկել էր Բաթումից և զբաղվում էր միրգ ծախելով: Սոսքի է

բռնվում նրա հետ, հարցնում, թե ծախսածը ինչ է, մարդը պատասխանում է, թե դուրձենի է: Նա այս բառը իսկույն կապում է հայերեն հաղարձ բառի հետ: Հետո նույն մարդուց լսում է քացախուրի բառը, որ կապվում էր հայերեն քացախ բառի հետ: Նրանից լսում է նաև ժուր բառը.

«Երեք բառ էի հարցրել,- գրում է Աճառյանը, երեքն էլ հայերեն դուրս եկան: Վճռեցի լազերեն սովորել, որպեսզի մնացյալ բառերն էլ հավաքեմ: Դրանից հետո ամեն երեկո գնում է նրա մոտ ու վերցրած Առձեռն բառարանը, մեկ-մեկ հարցնում էի, թե այսինչ բառին ինչ են ասում լազերեն»<sup>2</sup>:

Հետո ավելի դժվարություններ սովորում է քերականությունը. մի քանի ամսում այնքան է առաջադիմում, որ որոշում է նրա հետ խոսել լազերեն:

Կարինում պաշտոնավարելու ժամանակ էլ գտնում է մի լազ և խորացնում գիտելիքները, սովորում է լազերեն երգեր, որոնք գրի է առնում և հետագայում մտցնում իր գրքի մեջ:

Մղումը դեպի լազերենը առաջացել էր մի քանի բառերի նույնությունից, բայց չուտով նկատել էր, որ դրանք առաջինն ու վերջիններն են և որ լազերենը կապ չունի հայ լեզվի հետ, ուստի աշխատությունը ստանում է միանգամայն այլ բովանդակություն ու երանգ: Լազերեն լեզուն ոչ գրականություն ուներ և ոչ էլ ուսումնասիրված էր: Աճառյանի աշխատանքը կարող էր օգտակար լինել լեզվաբաններին: Ահա թե ինչու Մեյեն, ծանոթանալով այդ աշխատությունը, խանդավառվում է և ներկայացնում Փարիզի լեզվաբանական ժողովին: Դրա հիման վրա էր, որ Աճառյանը ընտրվել էր Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, ինչպես տեսանք նախորդ գլխում:

Ուսումնասիրությունը պարունակում էր լազերենի համառոտ բառարանը, նույն լեզվի տարբեր բարբառների համեմատական քերականությունը և նմուշներ անգիր բանահյուսությունից:

Մեյեն Աճառյանի լեզվաբանական այս առաջին աշխատության մասին գրել է.

«120 էջանոց այս փոքրիկ գիրքը մի կատարյալ ու համառոտ չարագրանքն է այն բոլորի, որ մենք գիտենք ըստ ամենայնի հետաքրքիր այս լեզվի մասին»:

Հետագայում Մառը լազերենի մասին հրատարակել է չատ

ավելի ամբողջական և գիտական աշխատություն, լազերենը դիտելով որպես Կովկասի լեզուներից մեկը: Սակայն այդ լեզվի ուսումնասիրման առաջնությունը պատկանում է Աճառյանին:

Աճառյանի երկրորդ ծավալուն հետազոտությունը, դարձյալ գրված Փարիզում, «Քննություն Ասլանբեկի բարբառի» երկն է, որ տպագրվել է «Բազմավեպի» 1893 թ. համարներում<sup>3</sup>: Սա արդեն նրա բարբառագիտական առաջին հետազոտությունն էր: Երբ այն համեմատում ենք հեղինակի հետագա տարիների նման գործերի հետ, տեսնում ենք նկատելի տարբերություն: Նա Ասլանբեկի բարբառը հետազոտելիս դեռ չէր մշակել բարբառների ուսումնասիրման ուրույն սկզբունքները:

Այստեղ սկզբում տալիս է Ասլանբեկի տեղագրությունը (գտնվում է Նիկոմիդիայից 3 ժամ հեռավորության վրա), ապա՝ ձայնաբանությունը, թե ինչ հնչյուններ ունի այդ բարբառը: Խոսում է ձայնական փոփոխությունների մասին, բերում օրինակներ, թե հայերեն բառերը ինչպիսի փոփոխության են ենթարկվում այդ բարբառում և ինչ սկզբունքով: Այս բոլորից հետո անցնում է քերականությանը, խոսում հոլովների, խոնարհումների և քերականական այլ երևույթների մասին, իսկ վերջում տալիս է ժողովրդական բանահյուսությունից նմուշներ:

«Բազմավեպում» այս հետազոտության հրապարակումը մեծ հետաքրքրություն է առաջացրել հայագիտական շրջաններում: Հեղինակին քաջալերել են Մեյեն, Հյուբշմանը, Գրիգոր Սալաթյանը, Լևոն Մսերյանցը և ուրիշներ, կատարելով նաև որոշ դիտողություններ: Այս առիթով էլ եղել է առաջարկ՝ մշակելու բարբառների ուսումնասիրման որոշակի մեթոդ, որ կատարել է Աճառյանը և հետագայում առաջնորդվել է դրանով:

Բացի վերոհիշյալ ծավալուն երկու հետազոտությունից, Փարիզում և Ստրասբուրգում նա զբաղվել է հայերեն մի շարք բառերի ստուգաբանություններով, մատենագրական սրբագրություններով ու ճշգրտումներով, իր եզրակացությունները հրատարակելով Փարիզի Լեզվաբանական ընկերության տեղեկագրում (BSL), «Բազմավեպում», «Հանդես ամսօրյա-յում», «Բյուրակնում» և «Արարատում»:

Գաղափար կազմելու համար այդ աշխատությունների

մասին, կանգ առնենք մի քանիսի վրա:

1897 թ. ապրիլ ամսից «Բազմավեպում» «Հայկականք» ընդհանուր խորագրով տպագրել է ստուգաբանական մի քանի մանր երկեր:

Առաջին «Հայկականք»-ում<sup>4</sup> նա ճշտում է Սերետսի պատմության մեջ գործածված մի բառ: Սերետսի «Պատմութիւն ի Հերակլն» գրքի հենց առաջին հատվածում գրված է «... և ցուցից համառոտիւք զարդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութեան զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով»:

Աճառյանը նկատել է, որ գրքի ոչ այդ էջում և ոչ էլ հետագա գլուխներում հինգ թագավորների մասին խոսք չկա և առաջարկում է հինգ բառը սրբագրել հին և գրել հին թագաւորացն: Անկախ այն բանից, որ Սերետսի պատմության նոր հրատարակությունում (Թիֆլիս, 1913 թ.), հաշվի չի առնվել Աճառյանի ուղղումը և պահպանվել է Պատկանյանի հրատարակության տեքստը, վերոհիշյալ ճշգրտումը վկայում է Աճառյանի սուր մտքի մասին:

«Հայկականքի» հաջորդ հատվածը նվիրված է Հայերեն հուբառի ստուգաբանությունը, որ նշանակում է շարավ, թարախ: Աճառյանն այն կապում է պարսկերեն հու, թարախ բառի հետ, համարում է փոխառություն պարսկերենից: Հյուբջմանը ընդունել է այդ ստուգաբանությունը, որը և հետագայում տեղ է գտել «Արմատական բառարանում»:

«Հայկականքի» այս շարքում ամենից ուշագրավը Հայերեն նպաստ բառի ստուգաբանությունն է, որ նախ տպագրել է «Բազմավեպում», հետագայում, ինչպես ասել ենք, գեկուցել է Արևելագետների միջազգային 11-րդ համաժողովում: Նա նպաստ բառը բխեցնում է հպրս, ni-upasta բառից, այն գտնում նաև պարսկերենում հենց upasta ձևով:

Այս ստուգաբանությունը նույնպես մտել է «Արմատական բառարան» հետևյալ բացատրությամբ. Müller-ից անկախաբար վերի մեկնությունը տվավ Աճառ. «Բազմ.». 1897, 170, նույնը խոսեց նաև Արևելագիտաց ԺԱ համաժողովին՝ Պարիզ (ՀԱ, 1897, 310 և 316), ուր և նախագահ Հյուբջմանը տվավ իր հավանությունը (անձնական):

Նույն այդ տարում նա Փարիզի Լեզվաբանական ընկերու-



Թյան Տեղեկագրում (BSL) տպագրում է Փրանսերեն մի հոդված, որի թարգմանությունն հրատարակվում է «Բազմավեպում»՝ «Հայկականք» խորագրով: Այս հոդվածում խոսում է օտարանմանություն կամ կաղապարում կոչվող լեզվական երևույթի մասին, որը հետևյալն է: Երբ երկու լեզուներ միմյանց հետ հաղորդակցություն մեջ են և նույն իմաստն հայտնելու համար իրար շատ նման բառեր ունեն, այդ բառերից մեկը կարող է ազդել մյուսի վրա ու ձևափոխել այն:

Աճառյանը բերում է հայերեն տախտակ բառը և ցույց տալիս, թե ինչպես հին պարսկերենից փոխ առնված տախտակը հետագայում ձևափոխվել է դախտակ, իսկ ավելի ուշ, թուրքերենի ազդեցությամբ նորից դարձել է տախտակ:

1897 թվականին նա «Բազմավեպում» տպագրել է նաև այլ հոդվածներ, ինչպես «Անվանք հայկական ամսոց»:

Նրա այս շրջանի աշխատությունների մեջ շատ կարևոր է Աբբա Ռուսլոյի հետ գրած ձայնաբանական հայտնի աշխատությունը, որի մասին խոսել ենք իր տեղում և որը լույս է տեսել 1898 թ. Փարիզում և իսկույն թարգմանվել է ու զետեղվել «Հանդես ամսօրյայում», «Հայ տառերու հազագաբանությունը» վերնագրով: Թարգմանիչը՝ հայր Հ. Թաչյանը հոդվածին կցել է մի զրվատական գրախոսություն, որտեղ ի միջի այլոց կարդում ենք.

«Առջևնիս ունինք տետրակ մը Հ. Աճառյանե հրատարակված, որ հայոց համար յուր տեսակին մեջ առաջինն է ու միակը. չէ թե զուտ լեզվագիտական գրվածք մըն է, այլ նոր փորձառական գրություն մը, մերձեցված հայերենի, Ռուսլոյի ձայնագիտական աշխատանոցին մեջ, և անոր գործիքներով: ... Մեծ արդյունք մը կը համարինք, որ Աճառյան ունեցած է այս օգտակար գաղափարը ու առաջին փորձը ըրած հայ հնչյունները ձայնագիտորեն ճշգրտելու: Տետրակիս մեծ մասը Աճառյանին գրչեն է»<sup>5</sup>:

Ուշագրավ է Թաչյանի այն վկայությունը, թե Ռուսլոյի հետ միասին հրատարակած գրքի մեծագույն մասը գրել էր Աճառյանը:

Այսքան արագ աշխատող մի անձնավորություն հնարավորություն չէր ունենա անթերի գործեր դնել հրապարակի վրա: Ստուգաբանությունները կարող էին ընդունվել կամ

մերժվել գիտական աշխարհի կողմից, բայց բարբառագիտական աշխատանքները այդպես չէին, դրանք պահանջում էին օրինակների ստուգում, ճշգրտում, վկայություններ և այլն:

Բարբառագիտական հետազոտություններ գրելիս նա սկզբում հեշտ է պատկերացրել գործը: Թվացել է, թե եթե լավ յուրացնի լեզվաբանական մի քանի օրենքներ, հատկապես կապված ձայնաբանությունն ու ձայնափոխությունն հետ, և եթե կազմի մոտավոր մի ծրագիր որևէ բարբառի ուսումնասիրման համար, ապա կկարողանա հեշտությամբ գլուխ բերել այն տվյալ բարբառով խոսող մի քանի անձնավորությունների հետ զրուցելով, նյութեր քաղելով:

Այդպես էր վարվել նա Ասլանբեկի ու Սուչովայի բարբառներն ուսումնասիրելիս: Աճառյանի բարբառագիտական այդ փորձերը բարձր գնահատվեցին Մեյեի, Հյուբլմանի և այլոց կողմից: Բայց այս ականավոր գիտնականները չէին կարող նկատել այն թերությունները, որ կարող էր տեսնել Սուչովացի հասարակ մի աշխատող, ասենք մի ուսուցիչ կամ առհասարակ որևէ գրագետ անձնավորություն: Ու ահա, հետագայում, հենց «Բյուրակն» պարբերականում հանդես եկավ արևմտահայ իրականությանը ոչ անհայտ Մուչեղ եպիսկոպոս Սերոբյանը և բավականաչափ թունոտ ու ընդարձակ մի հոդվածով ցույց տվեց, թե որքան հապճեպ է կատարված Աճառյանի աշխատանքը և ինչպիսի սխալներ, թյուրիմացություններ կան նրա հետազոտությունում<sup>6</sup>:

Մուչեղ Սերոբյանի դիտողությունները այնքան ճիշտ էին ու համոզիչ, որ ոչ Աճառյանը և ոչ էլ նրա կողմնակիցները չկարողացան պաշտպանողական դիրք բռնել այս հարցում:

Աճառյանը նման հապճեպ ձևով հրատարակեց նաև «Ղարարադի բարբառը»:

Ու այդտեղ էլ կանգ առավ: Հետագայում նա արդեն յուրաքանչյուր բարբառի ուսումնասիրմանը հատկացնում էր երկար տարիներ, տասնյակ ու տասնյակ անգամ ստուգում փաստերը, մանավանդ, երբ նկատել էր, որ այս կամ այն բարբառի մասին նյութեր քաղելիս որոշ անպատասխանատու մարդիկ, չհասկանալով իրենց կատարած հանցանքի մեծությունը գիտությունն առաջ, խաբում էին իրեն՝ միանգամայն շինծու բռուեր հուշելով: Այդ բանը պատահել էր մանավանդ

էջմիաճնում, որից հետո միանգամայն ղգաստացել էր լեզվաբանը:

Պոսեցինք գերազանցապես փարիզյան տարիների գիտական ստեղծագործությունների մասին, բայց Ստրասբուրգում նույնպես, որտեղ մնաց ընդամենը 6 ամիս և քիչ ժամանակ ուներ ստեղծագործելու, գրել է մի քանի աշխատություն:

Այնտեղ սովորելու ամիսներին Ստրասբուրգի համալսարանը մրցանակ էր հայտարարել ուսանողների մեջ հայերենի կրկնավոր ու բնաձայն բառերի հետազոտություն համար:

Մրցմանը մասնակցում է նաև Աճառյանը: Հավաքելով 630 նման բառեր, գրում է բավականաչափ ընդարձակ մի հետազոտություն: Հյուբշմանը ծանոթանում է և տալիս իր հավանությունը:

Աշակերտների գրած հետազոտություններից և ոչ մեկը չի բավարարում մրցանակի պահանջներին: Ըստ երևույթին չի բավարարում նաև Աճառյանի գրածը, սակայն այն Հյուբշմանի խորհրդով որոշ վերամշակման ենթարկվելուց հետո հեղինակի կողմից ուղարկվում է «Հանդես ամսօրյային», որտեղ և լույս է տեսնում:

Այդ ամիսներին Աճառյանը գրում է մի այլ համարձակ հոդված «Ձայնաբանություն վրացերենի, հայերենից փոխառյալ բառերի»: Այդ ընդարձակ աշխատությունը նույնպես Աճառյանը ուղարկում է «Արարատ» ամսագրին, որը լույս է ընծայում 1898 թ. հուլիս-օգոստոս ամիսներին:

Հոդվածում հեղինակը մի համառոտ ակնարկ գցելով հայ և վրաց ժողովուրդների հարաբերությունների վրա, ցույց է տալիս այն կապը, որ կա երկու լեզուների միջև, ապա կանգ է առնում հայերենից կատարված փոխառությունների, դրանց ժամանակի, դրդապատճառների, բնույթի և այլ հարակից հարցերի վրա: Նա իրավացիորեն գրում է.

«Դժբախտաբար մինչև այժմ ոչ մի գիտական աշխատություն չի պատրաստված այդ փոխառյալ բառերի մասին: Ոչ մեր ազգային, ոչ վրացի և ոչ էլ օտար լեզվաբանների կողմից. մի այսպիսի աշխատություն օգտակար է ոչ միայն վրացերեն լեզվի քննության և նրա աղբյուրների հետ լավ ծանոթանալու, այլ նույնիսկ հայերեն լեզվի համար, որովհետև այս փոխառությունների ուսումնասիրությունը մենք կարող ենք լուծում

գտնել հայ լեզվի հնագույն հնչյունների, մասնավորապես երկ-բարբառների նկատմամբ մեր ունեցած տարակույանների համար»<sup>7</sup>:

Աշխատություններից երկրորդ մասում հեղինակը ներկայացնում է այն փոփոխությունները, որ կրել են հայերեն հնչյունները վրացերենում: Նախ տալիս է ձայնավորների կրած փոփոխությունները, ապա բաղաձայնների, մանրամասն թվարկելով, թե միևնույն հնչյունը ինչպիսի փոփոխությունների է ենթարկվում:

Մեծ համարձակություն էր կովկասում բոլորովին չապրած, վրացերենի հետ երբեք հարաբերություններ չունեցած մի պատանու համար ձեռնարկել նման մի գործի: Այս դեպքում նա հարկադրված էր հետևել եվրոպացի արևելագետների օրինակին, որոնք լեզուների փոխազդեցությունը մեծ մասամբ ուսումնասիրում էին գրավոր աղբյուրներով, առաջին հերթին բառարաններով: Այս աշխատությունը գրելիս Աճառյանի հիմնական աղբյուրը եղել է Չուբինովի վրաց-Փրանս-ուս հայտնի բառարանը, ինչպես նաև մի քանի այլ բառարաններ:

Բնորոշ է այն կտրուկ, համարձակ դիրքորոշումը, որ հեղինակը ցուցաբերում է իր ուսուցչի՝ Հյուբշմանի նկատմամբ, ոչ ճիշտ համարելով նրա այն տեսակետը, թե վրացերեն լեզուն կամայաբար յուր փոխ առած բառերի մի քանիսի ծայրից կտրում է, իսկ մյուսների վրա ի կամ ու ավելացնում, ինչպես **ձեշմո, ձեշմարիդի, ձշմարիտ:**

Աճառյանը ասում է, թե գիտությունը նման խաղեր չի ընդունում, պետք է որոնել ու գտնել օրենքը: Նա ցանկություն է հայտնում, որ այս լուրջ գործով զբաղվեն իրենք՝ վրացիները, քանի որ իրենք ամենից ավելի լավ գիտեն լեզուն ու նրա օրինաչափությունները:

«Շատ օգտակար կլինեն,- գրում է նա,- եթե պրոֆեսոր Շուխարտ կամ պր. Սախանով մի այսպիսի գործ պատրաստեին, որով կարելի լիներ հինն ու վավերականը որոշել նորերից»<sup>8</sup>:

Այդ հողվածում Աճառյանը զարգացնում է այն տեսակետը, թե փոխառյալ բառերը կարող են օգնել թե փոխառու ժողովրդի լեզվի ուսումնասիրմանը, նրա մշակույթի հետագոտմանը, թե փոխատու: Վրացերենը խոր անցյալից բառեր

վերցնելով հայերենից ու դրանք ենթարկելով իր ձայնական օրենքներին, կարող է պահած լինել տվյալ բառի նախնական ձևը, մինչդեռ այն հետագայում հնարավոր է, որ փոփոխություն ենթարկված լինել փոխատու լեզվում: Այդ բանը նկատել էին նաև հին պարսկերենը ուսումնասիրողները: Պարսկերեն այն բոլոր բառերը, որոնք պահպանված ազդեցություն չունի այն անցել հայերենին, պահել են հնագույն ձևը, մինչդեռ նույն բառերը պարսկերեն լեզվում ենթարկվել են լուրջ փոփոխության, ինչպես պահպանվել են նամակ, պարսկերեն, նամե, հայերեն նամակ:

Այսպես էլ վրացերենում:

«Այսպես թե այնպես, - գրում է Աճառյանը, - վրացերենի մեջ ունինք քսանի չափ բառերը, որ անկասկած ներկայացնում են հայերեն բունը, կամ հայերենի մինչև Ա դարու վիճակը, քիչ փոփոխությամբ»<sup>9</sup>:

Նշելով հանդերձ ինը հարյուր բառ, որ վրացիները վերցրել են հայերենից, հետագա տասնամյակներում «Արմատական բառարանում» նույն բառերին անդրադառնալիս՝ կատարել է բազմաթիվ ճշգրտումներ, ասենք վրացերեն քալաքի բառը, որ առաջ համարում էր հայերենից փոխառյալ, «Արմատական բառարանում» զետեղված է որպես վրացերենից փոխառյալ հայերեն բառ:

Աճառյանի սույն հոդվածը «Արարատում» տպագրված է արևելահայ գրական լեզվով, մինչդեռ ինչպես հայտնի է նա այդ տարիներին գրում էր արևմտահայերեն: Լեզվաբանի մասին գրված աշխատություններից մեկում հայտնվել է այն կարծիքը, թե հոդվածը Աճառյանը գրել է գերմաներեն լեզվով, «Արարատի» խմբագիրները այն թարգմանել են արևելահայերենի<sup>10</sup>:

Սխալ չէր լինի կարծել, որ Աճառյանը գրել է հայերեն, քանի որ այդ տարիներին նա կղժվարանար գերմաներեն գրել, ապա Ստրասբուրգում իր ընկերների և ուսուցիչների օժանդակությամբ թարգմանվել է գերմաներեն, գուցե նպատակ ունենալով հրատարակելու գերմանական մի հանդեսում, բայց հետո ուղարկվել է «Արարատին»:

Ստրասբուրգում, գուցե Հյուբշմանի թելադրությամբ, Աճառյանը հետաքրքրվում է մի այլ հարցով, որը հետագայում,

տարիների ընթացքում զբաղեցրել է նրա միտքը: Հայտնի է, որ մինչ այդ արևելագետները զբաղվում էին բացառապես այն խնդրով, թե արևելյան և արևմտյան ո՛ր լեզուները ինչ չափով են ազդել Հայերենի վրա: Նրանց չէր զբաղեցրել այն, թե Հայոց լեզուն էլ ազդե՞լ է ուրիշ լեզուների վրա:

Աճառյանը, առաջինը Հայագիտություն մեջ, փորձեց քննություն անել այս հարցը՝ ուսումնասիրելով հատկապես կովկասյան լեզուները, թուրքերենը և այլն: Այդ հետազոտությունների արդյունքն էր վրացերենի և Հայերենի կապին նվիրված հոդվածը, որի մասին խոսեցինք: Սակայն եթե կովկասյան լեզուները՝ վրացերենը, լազերենը, մենգրելերենը և արևազերենը Հայերենից կատարել էին փոխառություններ, չէր կարող նման փոխառություն չկատարել թուրքերենը, քանի որ Հայերը մոտ հինգ դար չփվել էին թուրքերի հետ: Անշուշտ տիրապետող և տիրապետվող ժողովուրդների հարաբերությունը իր կնիքն էր դնելու փոխառության վրա, շատ ավելի Հայերը պետք է ազդվեին թուրքերենից, քան թուրքերը Հայերենից, սակայն առօրյա շփման ընթացքում Հայերենից էլ բառեր կարող էին անցնել թուրքերենին:

Հավաքելով բավականաչափ նյութ, նա նույն 1898 թվականին մի կոչ է հրատարակում «Բյուրակն» պարբերականում և առաջարկում գավառում աշխատող Հայ ուսուցիչներին, բանասերներին, հավաքել և հրատարակության տալ իրենց գավառի թուրքերի կողմից գործածվող Հայերեն բառերի ցանկը<sup>11</sup>: Կոչը ամենից առաջ ողջունվում է «Բյուրակն» պարբերականի խմբագրության կողմից, որը նրան կցում է հետևյալ ծանոթագրությունը:

«Համակրելի պր. Հ. Աճառյանի, որ *Laboratoire de phonétique experimentale*-ի մեջ էդիտոնի ձայնագրով *König*-ի բոցերով (*Tlamme de König*) ու *Abbé Rousselot*-ի ձայնական գործիքներով քննած է Հայ հնչաբանության - ձայնախոսական օրենքը, նորագույն սերնդին ամենեն ձեռնհաս լեզվաբանն է, որ կոչում կրնե գավառացի բանահավաքներուն՝ վերև չեչտվածներուն վրա ուշադրություն դարձնելու. «Բյուրակն» պատրաստ է ամեն ձեռնտվություն ընելու, որ իր նպատակն է»<sup>12</sup>:

Առաջինը այդ կոչին արձագանքում է Եվդոկիայում որպես ուսուցիչ աշխատող Հովհ. Գազանճյանը, որը լեզվաբանական

ուչազրավ հողվածներով աշխատակցել է ժամանակի պարբերական մամուլին («Հանդես ամսօրյա», «Բազմավեպ», «Բյուրակն», տարեցույցներ, և այլն):

Գազանձյանը «Բյուրակնում» տպագրում է «Հայերենն փոխառյալ բառեր թրքերենի մեջ» հոդվածը, որտեղ՝ խոսելով Աճառյանի կոչի մասին, գրում է. «Թեպետև համակրելի լեզվաբանին հաղորդելու այս կարգի բառերու բավական պաշար մը չունիմ դեռ հավաքած,- բավական ատենն ի վեր այդ մասին ալ հետամուտ ըլլալով հանդերձ,- որ հրատարակութեան տայի, բայց պր. Աճառյանի հուզած խնդրին՝ մտքիս մեջ ծագեցուցած կարգ մը դիտողութունները, իբրև քիչ թե շատ շահեկան, ավելորդ չեմ համարիր ներկայացնել հետաքրքիր բանասերներու ու բանահավաքներու մտադրութեան»<sup>13</sup>:

Ապա բերում է մի շարք բառեր,- գերազանցապես կրոնական հասկացողութուններ, որոնք օգտագործվում են թուրքերենում որոշ հնչյունափոխութեամբ, ինչպես բերկենտենք - բարեկենդանք, ժեմկեոչ - ժամկոչ, խաչ-խաչ, վենք-վանք և այլն: Գազանձյանը բերում է նաև այլ թվով քիչ օրինակներ: Նրա հոդվածի առավել շահեկան մասն այն է, որ տալիս է հայերեն բառերի թուրքերենում կրած ձայնաբանական փոփոխութունների որոշ օրինաչափութունը, որով բացատրվում է առհասարակ թուրքերեն լեզվի թողած ազդեցութունները տարբեր գավառաբարբառների վրա:

Գազանձյանից հետո, դարձյալ «Բյուրակն» պարբերականում նույն հարցին նվիրված հոդված է տպագրում Կ. Բասմաձյանը Բևեռագիր ծածկանունով և ներկայացնում Կարնո չրջանում իր հավաքած հայերեն բառերը, որոնք օգտագործվում են թուրքերենում: Դժբախտաբար Բասմաձյանի հոդվածը շատ ավելի մակերեսային է, առանց լեզվական օրենքների բացահայտման կամ որևէ լուրջ եզրակացութեան:

Ապա հանդես է գալիս հայտնի բանահավաք, բանասեր Տրդատ Պալյանը, ներկայացնելով այն բառերը, որոնք «Կեսաւրիո ու չրջակա դրացի թուրք ու թուրքմեն ժողովրդի լեզվի մեջ գործածական են»<sup>14</sup>:

Պալյանի հոդվածի առավելութունն այն է, որ նա հայերեն բառեր է գտնում ոչ միայն թուրքերենում, այլև տեղի հույների լեզվում: Դժբախտաբար հոդվածագիրը չի հայտնում, թե հույ-

ները հայերեն այդ բառերը օգտագործում էին հունարեն լեզվով, թե թուրքերենում, քանի որ Կեսարիայի չրջանի և՛ հայ բնակչությունը և՛ հույները խոսում էին թուրքերեն, կրոնական ծիսակատարությունների հետ կապված ազգային որոշ բառապաշարի խառնուրդով:

Կոչին պատասխանում են նաև ուրիշներ, որոնք բոլորն էլ հրատարակում են թուրքերենում օգտագործվող իրենց հավաքած հայերեն բառեր, ճոխացնելով այն բառացանկը, որ պետք է հիմք դառնար հայերենից փոխառյալ բառերի ամբողջական բառարանի:

Չնայած այս ուղղությունը ամենից մեծ աշխատանքը կատարել էր Աճառյանը, նա այնպես էլ չհրատարակեց հատուկ աշխատություն հայերենից փոխառյալ թուրքերեն բառերի մասին: Դրանք հետագայում օգտագործեց իր «Արմատական բառարանում»: Ըստ երևույթին արդյունքը շատ ավելի փոքր է եղել, քան ինքը կարծել է սկզբից:

Աճառյանի ուսանողական տարիների բանասիրական աշխատությունների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում «Մովսես Կաղանկատվացի» հետազոտությունը, որ տպագրվել է «Բազմավեպում»: Մենք իր տեղում ասել ենք, որ այդ երկը գրել է ղեռևա 1893 թ. Կենտրոնական վարժարանում:

Ո՞րն էր Աճառյանի բերած նորությունը այս աշխատությունում: Մինչ այդ՝ Կաղանկատվացու «Պատմություն» հրատարակիչ Կ. Շահնազարյանը և Մխիթարյանները այն կարծիքն էին հայտնել, թե Կաղանկատվացին ապրել և իր պատմությունը գրել է 7-րդ դարում, սակայն հետագայում՝ 10-րդ դարում վերախմբագրվել է, թե առաջին դեմքով չարագրված մասը Կաղանկատվացունն է: Աճառյանը մերժում է այդ առաջարկը, ասում թե առաջին դեմքով չարագրված հատվածները ընդգրկում են 195-200 տարվա մի ժամանակաշրջան, ուրեմն չէին կարող գրվել մի մարդու կողմից: Նա գտնում է, որ Կաղանկատվացին ապրել է 10-րդ դարում, իմի է հավաքել նախորդ դարերում տարբեր մարդկանց կողմից գրված նյութեր, կազմել ժողովածուն, անփոփոխ պահելով հեղինակների լեզուն, բերելով անգամ նրանց հիշատակարանները, որոնցից էլ պարզվում է դրանց բուն հեղինակների անունները (Վեհիկ, Պողոսիկ և այլն)<sup>15</sup>:



Նույն՝ 1897 թվին այս խնդիրը քննություն է առնում Հակոբ Մանանդյանը հատուկ մի հետազոտություն մեջ, որը հանդիսանում է նրա դոկտորական դիսերտացիան: Երկու գիտնականների եզրակացությունները համընկնում են միմյանց:

Աճառյանը Ստրասբուրգում ավարտում և տպագրություն է հանձնում մի այլ աշխատություն: Նա Փարիզում՝ Կոլեժ դը Ֆրանսում երեք ամիս լսել էր Միշել Բրեալի դասախոսությունները «Լեզվի հոգեբանություն» մասին, որը եղել է լեզվաբանական նոր ուսմունք, ունեցել է տեսական բնույթ: Բրեալը, որ հայտնի էր գիտական աշխարհին Բուպլի քառահատոր «Քերականություն» թարգմանությամբ, եղել է Կոլեժ դը Ֆրանսի լավագույն դասախոսներից: Աճառյանը պատմում է, որ մեծ ուշադրությամբ է լսել այդ պատկանելի, ծանրաբարո լեզվաբանին, գրի առել նրա յուրաքանչյուր բառը, ապա թարգմանել և հեղինակի թույլտվությամբ ուղարկել Պոլիս՝ «Բյուրակն» հանդեսին, որտեղ էլ լույս է տեսել:

Աշխատության արժեքը ավելի է բարձրանում նրանով, որ Ֆրանսերեն բնագրից առաջ լույս է տեսել հայերեն թարգմանությունը լրացրած հայոց լեզվից վերցված օրինակներով, ինչպես երևում է Աճառյանի տված հետևյալ բացատրությունից:

«Գիտություն այս ճյուղը, զոր կարելի է համարել զուտ դրական, կը կայանա երկու ցեղակից լեզուներու ձայնական առնչությունները գտնելու և անոնց պայմանները հաստատապես որոշելու մեջ «..... Իմ եռամյա շրջանիս մեջ, որ անցուցի Պարիս լեզվաբանական ուսմանց պարապելու համար, մասնավոր ջանասիրությամբ հետամուտ լինելով նաև այս ուսման, օգտակար համարեցի անկե բաժին հանել հարգելի ընթերցողակիցներուս. ուստի և ուսուցչապետին մասնավոր թույլտվությամբ կը թարգմանեմ իր այս անտիպ աշխատությունն և առանձին հոդվածներով կը հրատարակեմ պատ. «Բյուրակնի» մեջ: Հեղինակը, որ անծանոթ է մեր լեզվին, հայերենը բնավ նկատի չի առած իր դասախոսությունց մեջ. այս թերին կը լրացնե թարգմանիչը և կը նշանակե յուրաքանչյուր օրենքին ազդեցությունը հայերենի վրա»<sup>16</sup>:

1893 թվին «Բազմավեպում» Աճառյանը տպագրել է «Հայոց լեզվի ուսուցման եղանակը յԱրևմուտս» հոդվածը: Մենք դրա

վրա գուցե ուշադրութիւն չդարձնեինք, քանի որ այն սովորական մի թղթակցութիւն է Ֆրանսիայում և Գերմանիայում հայոց լեզվի ուսումնասիրման վիճակի մասին, եթե այն չդիտեինք որպէս Աճառյանի վերաբերմունքը իր ուսուցիչներին նկատմամբ, միաժամանակ հարազատ նկարագիրը հայոց լեզվի ուսուցման, որը այժմ էլ շատ կողմերով հետաքրքիր է:

Հոգվածում շատ դրական է խոսվում այն մեծ աշխատանքի մասին, որ կատարում են Մեյեն՝ Փարիզում, Հյուբշմանը՝ Ստրասբուրգում, հայոց լեզվի ուսուցման, հետազոտման ուղղութեամբ: Աճառյանը ջերմորեն է արտահայտվում հատկապէս Մեյեի մասին, գրելով, որ նա սիրում է հայ ժողովրդին, նրա մշակույթը, կարգում է հայերեն թերթեր ու գրքեր, եղել է Հայաստանում՝ Էջմիածին, Աշտարակ և այլն, սակայն սուր քննադատութեան է ենթարկում Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցը, որտեղ հայերենի ուսուցչապետն էր Կարիերը:

Կարիերը լավ չի իմացել հայ ժողովրդի հին մշակույթը, մասնավորապէս՝ լեզուն, չի կարողացել աշակերտների մեջ սեր առաջացնել դեպի գրաբարը:

Ահա թե ինչպէս է նկարագրում Կարիերի դասերից մեկը: Աշակերտների թիվը եղել է 5-6 հոգի, բոլորն էլ ֆրանսիացի: Երբ Աճառյանը մտել է նրանց լսարանը, աշակերտներից մեկը «գրադած էր պատին գամելու Վենետիկ տպված Հայաստանի քարտեզը և Լևոն Բ-ի Եվրոպայի վաճառականաց տված մեկ հրովարտակը, որոնք արդեն գամված էին: Քիչ հետո ուսուցիչը եկավ և դասը սկսավ: Պարոններն իրենց դասը շատ լավ պատրաստած էին ... Սերեռսեն մաս մըն էր: Մեկ ժամու մեջ (կարդացին ամենաբարբարոս արտասանութեամբ) և թարգմանեցին հագիվ կես էջ ... Սույն էջին մեջ հանդիպեցավ «առ դրան խորանին» ասութիւնը, այստեղ աշակերտք միաձայն հայտնեցին, թե բոլոր բառարանները պրպտած և չէին գտած դրան: Կար՝ դրամ, բայց դրան ձև մը չկար»: Չի իմանում նաև Կարիերը: Նա էլ հարցնում է Աճառյանին, նոր միայն սովորում, թե դրան՝ դուռն բառի սեռական հոլովն է...<sup>17</sup>:

Աճառյանի այդ հոգվածից իմանում ենք, որ Գերմանիայում, բացի Ստրասբուրգից՝ հայերեն է ավանդվել նաև Թյուրինգե-

նում և Ենայում: Թյուրինգենում դասախոսել է Ֆեթթերը, Ենայում՝ Գեյցերը:

Թե չ. Աճառյանը այդ թվականներին ինչպիսի հեղինակություն էր հայագիտության բնագավառում, երևում է հետևյալ փաստից: Հայ մամուլում բացվել էր բանավեճ հայերեն պատարագ բառի ստուգաբանության շուրջ: «Արարատ» ամսագիրը տպագրել էր մի հոդված, որը մերժելով Հյունքյարպեյենտյանի քմահաճ ստուգաբանությունը, թե պատարագ բառը առաջացել է պրս. badar kardan «դուրս անել» ձևից, այդ բառը ծագած էր համարում արաբերեն Փատիր ձևից, Գ. Ուաչկոնցը «Բյուրակնում» մերժում է այդ ստուգաբանությունը: Կ. Բասմաճյանը դարձյալ «Բյուրակնում» պատարագը կապում է ասորերեն փատիրա «անխմոր հաց, բաղարջ» ձևի հետ: Վերջապես նույն 1898 թ. վեճին մասնակցում է Աճառյանը, «Արարատ» ամսագրում տպագրված մի հոդվածով անառարկելի փաստերով հիմնավորում է բառի ծագումը, այն համարելով իրանական փոխառություն paiti - մասնիկով, իբրև պ՛լ. \*pataraq<գնդ. \*paitiragayāmi «ընծայեմ, նուիրեմ»:

«Արարատ» ամսագրի խմբագրությունը հետևյալ ծանոթագրությունն է ավելացնում Աճառյանի հոդվածին և փակում վեճը:

«Պր. Աճառյանի ներկա բացատրությունը պատարագ բառի մասին, միակ հիմնավոր և ուղիղ բացատրությունը լինելով՝ վերջ է դնում, կարծում ենք այդ հարցին»<sup>18</sup>:

Վեճին մասնակցողներից Գ. Ուաչկոնցը մամուլում հանդես է գալիս և ընդունում է Աճառյանի ստուգաբանությունը:

Ամփոփելով չ. Աճառյանի գիտական գործունեության առաջին շրջանի մասին մեր ասելիքը, պետք է նշել, որ նա հենց այդ ուսանողական տարիներից ոչ միայն յուրացրեց լեզուներ, հնդեվրոպական լեզվաբանության ձևեր բերած նվաճումները, խորամուխ եղավ Հայ հին մատենագրության, - այլ խոսքով սովորեց առավելագույնը, որ կարող էր, - այլև իր գիտահետազոտական երկերով արդեն արժանի տեղ նվաճեց Հայագիտության մեջ, ուշադրությունը կենտրոնացնելով միաժամանակ երեք ուղղության վրա՝ բարբառագիտություն, ստուգաբանություն, բանասիրություն:

1898 թ. ապրիլի 19-ին Ստրասբուրգից Կ. Պոլիս՝ ծնողներին ուղարկած շնորհավորական մի բացիկի վրա կարդում ենք. «Շնորհավոր ս. զատիկ ծնողացս: Շուտով կրկին տեսություն»:  
Այս տողերից երևում է, որ հակառակ Մյունխի փաշայի՝ իր անձնագրում կատարած աննպաստ նշումին, ցանկացել է վերադառնալ Պոլիս, ըստ երևույթին ենթադրելով, թե գուցե Թուրքիայում թուլացել են հալածանքները, սակայն հետո նորից փոխել է միտքը և եկել է էջմիածին: Մեր կարծիքով էջմիածինը ընտրելու հարցում որոշ դեր կատարած պիտի լինի Ստրասբուրգում նրա հետ սովորող, էջմիածնի միաբան Եզնիկ վարդապետը, որը և գուցե, վերցրել էր Մայր Աթոռի համաձայնությունը: Բայց որ քաղաքական մթնոլորտն է արգելք հանդիսացել Պոլսից հրաժարվելուն՝ անկասկած է:

Այդ մասին ինքը՝ Աճառյանը՝ հայր Ն. Ակինյանին ուղարկած իր ինքնակենսագրականի մեջ գրել է. «1898 թ. ավարտեց Սորբոնը և անցավ Ստրասբուրգ՝ հետևելու հայազետ Հյուբշմանի դասախոսությունաց: Նույն թվի ամառը՝ կոտորածներու պատճառով չկրնալով վերադառնալ հայրենիք, անցավ Կովկաս»<sup>19</sup>:

Բայց հենց դա էլ եղավ բարեբախտ շրջադարձ Աճառյանի կյանքում: Եթե գնար Պոլիս, վերջնականապես բնակություն հաստատեր այնտեղ, նրա ճակատագիրը տարբեր չէր կարող լինել արևմտահայ մտավորականության տխուր ճակատագրից, թողնենք, որ գիտական գործունեությունն էլ երբեք այնքան արդյունավոր չէր լինի, որքան եղավ Կովկասում»:

## Գլուխ վեցերորդ

### Թ Ա Փ Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ք Ի Տ Ա Ր Ի Ն Ե Ր

#### Ա. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1898 թ. ամռանը Հրաչյա Աճառյանը Ստրասբուրգից ուղևորվում է Էջմիածին: Վերջին երկու տարվա ընթացքում գիտական կյանքում նա այնպիսի մեծ փառքի էր հասել, որ հեռվից երևի մարդիկ կարծում էին, թե գործ ունեն նյութապես ապահով, բարձր շրջանների հետ կապված, նրանց մթնոլորտով չնչոզ մի լեզվաբանի հետ:

Իրականում պատկերը հակառակն էր: Ստրասբուրգում Աճառյանը ծախսել էր իր խնայած գումարների վերջին մնացորդները: Աշխատակցած հանդեսներից և ոչ մեկը չէր վարձատրում նրա հոդվածները, նման վճարը առհասարակ բացառիկ երևույթ էր նախասովետական հայ մամուլի համար: Գերմանիայում որևէ եկամուտ չէր ունեցել: Պոլիս մեկնելու նախնական մտադրությունը շատ էլ չէր վախեցրել նրան, կգնար ծնողների մոտ՝ իր հարազատ միջավայրը, որևէ աշխատանք կկատարեր: Բայց ահա փոխվել էր ծրագիրը, նա ճանապարհ էր ընկնում դեպի մի վայր, որտեղ չգիտեր, թե ով է դիմավորելու իրեն, ինչ է անելու: Մաշվել էին շորերը, ոչ կարգին հագուստ ուներ, ոչ կոշիկ, ոչ գրպանում՝ փող:

Ստրասբուրգից մինչև Էջմիածին նրա ճամփորդությունը կատարյալ մի ողիսական է, որը գերազանցել է փարիզյան թշվառութան օրերը: Յուրաքանչյուր կայարանում, քաղաքում կրել է փողազուրկ ուսանողի ծանր դառնությունը: - Մինչ այդ ես երբեք փողի և չքավորության հակադրությունը չէի տեսել այդքան շեշտված: Մի կողմից կայարանային ճաշարաններում, չքեղ սրահներում կերուխում, խնջույքներ, զվարճություններ, մյուս կողմից մարդկանց ակնարկներից խույս տվող մարդիկ, որոնք իրենց ստամոքսն էին ուզում խաբել մի քանի թուզով կամ ձիթապտղի հատիկներով»<sup>1</sup>:

Այս վիճակումն է եղել Աճառյանը: Բայց հուսահատություն չձանաչող գիտնականը պահել է իր կենսուրախությունը, նրան ուժ է ներշնչել մանավանդ այն գիտակցությունը, որ գալիս է Հայաստան, չիվելու է Հայ ժողովրդի հետ, հնարավորություն է ունենալու տեղում գրուցելու, նյութեր քաղելու տարբեր գավառներից եկած մարդկանցից: Մեծ հույսեր էր կապել այդ ճանապարհով բազմաթիվ բարբառների օրինաչափությունները ուսումնասիրելու հնարավորության հետ:

Էջմիածնի մատենադարանը նրան օգնելու էր ընթերցելու բազմահազար հայերեն ձեռագրեր: Հայոց լեզվի հետազոտման ընթացքում մինչ այդ նրա հիմնական առաջնորդը եղել էր «Նոր Հայկազյան բառարանն» ու «Առձեռն բառարանը»: Քանի քանի հազարավոր բառեր տեղ չէին գտել այդ բառարաններում, բայց պահպանվում էին ժողովրդի բերանում. բառեր, որոնցից մի քանիսը ունեին հնդեվրոպական ծագում և նա ստուգաբանում էր դրանք այլ լեզուների համեմատությամբ: Հետո՝ որքան բառեր կարող էին դեռ մնացած լինել մագաղաթների էջերում, որոնք նույնպես տեղ չէին գտել Մխիթարյանների հրատարակություններում: Անհրաժեշտ էր հավաքել այս բոլորը: Հետագայում նրա կյանքի նպատակներից մեկը եղավ նման բառերի հայտնաբերումը և հրատարակումը մամուլում կամ առանձին գրքույկներով:

Ահա այսպիսի մտորումներով է, որ ժամանակի անմխիթար փոխադրական միջոցներով հասնում է Կովկաս, Աղստաֆայի ճամփով գալիս է Դիլիջան, Սևանի չքնաղ ափերը, իջնում Քանաքեռ, տեսնում Արարատը, իջևանում Երևանում, միշտ ուղեկցելով զավեչտական դեպքերի: Երևանում հաց է գնում. «չգիտեմ որ տեսակից, գնեցի, ցամաք կերա փողոցում, ամաչելու ոչինչ չունեի»<sup>2</sup>:

Իրավացի էր. Փարիզում կամ Ստրասբուրգում նրա կյանքը շատ էլ տարբեր չէր այս վիճակից:

Էջմիածնում նրան ընդունում են սառը. հագուստ-կապուստը, անհրապույր արտաքինը այնքան էին վանողական, որ մարդիկ ուշադրություն էլ չեն դարձրել նրա վրա, անգամ գիչերելու տեղ չեն տվել: Եվ դա շատ հասկանալի է: Աճառյանի հարստությունը ոչ նրա պայուսակի մեջ էր, ոչ էլ զգեստի վրա, տեսանելի չէր:

Բայց մի դեպք փոխում է մարդկանց վերաբերմունքը: Նույն օրը էջմիածին էր եկել գերմանացի պրոֆեսոր Ռորբախը: Նրան դիմավորողները գերմաներեն չեն իմացել, իսկ նա էլ չի իմացել տեղական լեզուն: Հարց ու փորձից տեղեկանալով, որ Աճառյանը գերմաներեն գիտի, խնդրում են թարգմանի դեր կատարել: Եվ որովհետև Ռորբախը և Աճառյանը Եվրոպայից ծանոթներ էին միմյանց, սկսվում է մտերմիկ զրույց նրանց միջև, որը չըջապատի վրա թողնում է տպավորություն: Նա այդ օրը ականավոր Հյուրի հետ նստում է սեղան, անց կացնում հաճելի երեկո: Արդեն քնելու տեղ էլ են տալիս:

«Պառկեցի և քնեցի: Առավոտ զարթնեցի խայտառակ դրության մեջ. լու, մլուկ, մլակ, մոծակ, ճանճ: Այս հնգյակը խուռն բազմությունը հարձակվել էր վրաս: Նրանցից մլակ կոչվածը նոր էի տեսնում. մյուսները հին ծանոթներ էին»<sup>3</sup>:

Մի քանի օրից նրան ներկայացնում են կաթողիկոսին: Խրիմյանը ուշադիր լսելով Աճառյանի կյանքի պատմությունը, ասում է. «Դուն ալ ինձի պես գլորվելով-գլորվելով եկեր ինկեր ես էջմիածին, հա'-հա'-հա'»:

Նշանակում են թուրքերեն լեզվի ուսուցիչ Գևորգյան ճեմարանում: Անշուշտ կարող էր այլ առարկաներ էլ դասավանդել, բայց նախ տեղերը զբաղված են եղել, և հետո ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանը հենց սկզբից վատ է տրամադրվել պոլսեցի ուսուցչի նկատմամբ:

Ի՞նչ միջավայր էր ընկնում Աճառյանը Փարիզից, Ստրասբուրգից հետո:

էջմիածինը Գևորգ 4-րդ կաթողիկոսի օրերին մշակութային նկատելի աշխուժացում ապրելուց, 80-ական թվականներին որոշ լճացման տարիներ անցնելուց հետո 1890-ական թվականների սկզբներից, Մկրտիչ Խրիմյանի ընտրությունից հետո, բոլորել էր մտավոր զարգացման մի նոր շրջան, դարձել հայագիտության ուրույն մի կենտրոն:

Նախ՝ միաբանություն պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը վերակառուցվելով՝ դարձել էր պատմա-բանասիրական, հայագիտական լուրջ հանդես, շատ հարցերում մրցելով Մխիթարյանների հայտնի երկու ամսագրերի հետ:

Այնտեղ տպագրվում էին լեզվաբանության, մանկավարժության, պատմության, հնագիտության վերաբերյալ ծան-

րակչիո հողվածներ, գեղարվեստական ստեղծագործություններ, թարգմանություններ: Արտաքինով էլ նմանվելով «Հանդես ամսօրյային», վերջինիս նման պարբերաբար իր ընթերցողներին իրազեկ էր պահում հայագիտության բնագավառում կատարվող աշխատանքներին, բանավեճերի մեջ էր մտնում հայտնի արևելագետների, պատմաբանների հետ, հաճախ հայ և օտար մամուլը զբաղեցնելով իրենով:

Երկրորդ՝ վերակառուցվել էր Մայր Աթոռի տպարանը, ձեռք էին բերվել նոր մեքենաներ, հայագիտական հողվածների տպագրության համար անհրաժեշտ բազմատեսակ տառեր: Առաջին անգամ արևելահայ իրականության մեջ մի պարբերական կարող էր տպագրել լեզվաբանական, հնագիտական այնպիսի հետազոտություններ, որոնց մեջ կային հին և նոր շատ լեզուների տառանմուշները: Դա առհասարակ նվաճում էր արևելահայ տպագրական կյանքում: Տպարանի այս վերակառուցումը պայմաններ էր ստեղծել ընդարձակելու հրատարակչական գործը: Էջմիածնի տպարանից լույս էին տեսնում գիտահետազոտական, մանկավարժական բազմաթիվ գրքեր: Գրքի արժեքն իմացող Խրիմյանը ամեն կերպ ձգտել է, որ իր ղեկավարած վանքը մրցի Մխիթարյանների հետ, որքան այդ հնարավոր էր հետամնաց գավառական այս կենտրոնում:

Նկատելի թարմացում էր ապրել Գևորգյան ճեմարանը: Եթե անցյալում այնտեղ պաշտոնավարում էին գերազանցապես հոգևորականներ, իսկ ավանդվող առարկաների մեծ մասը կապված էր կրոնի ու հայ եկեղեցու պատմության հետ, ապա այժմ, պահելով հանդերձ կրոնական ուղղությունը, ճեմարանը նկատելիորեն թեքվել էր դեպի ժամանակի գիտությունը: Այնտեղ դասավանդում էին Մ. Արեղյանի, Հ. Մանանդյանի, Ս. Մալխասյանի, Կոմիտասի, Ս. Մանդինյանի, Գ. Տեր-Մկրտչյանի նման ականավոր դեմքեր, որոնք բոլորն էլ իրենց բարձրագույն կրթությունն ստացել էին Ռուսաստանում կամ Գերմանիայում և վայելում էին մեծ համբավ:

Նույն այս անձնավորությունները ծավալել էին գիտահետազոտական լայն աշխատանք «Արարատ» ամսագրի էջերում և նրանից դուրս: Այդ տարիներին ստեղծվեց Մ. Արեղյանի «Հայոց վեպը» մեծարժեք հետազոտությունը, որ նախ լույս տեսավ «Արարատում», ապա առանձին գրքով:



Աճառյանը համալրում էր գիտական այս կաճառը: Նա ստացել էր մասնագիտական լուրջ կրթություն, հայտնի էր լեզվաբանական աշխարհում: Էջմիածնում նրա պաշտոնավարելը անհրաժեշտություն էր:

Չնայած այն բանին, որ մեկ-երկու անձնավորություն այնքան էլ բարյացակամ վերաբերմունք չեն ցուցաբերել նրա նկատմամբ, մասնավորապես Կարապետ Կոստանյանը, ընդհանուր առմամբ նա շատ հանգիստ է զգացել իրեն Էջմիածնում: Դյուրահաղորդ, ընկերասեր, կատակասեր բնավորությունը, գիտելիքների հարստությունը, որոնք այնքան հաճելի էին դարձնում նրա օգտակար զրույցները, օրեցօր մեծացնում են համակիրների շրջանակը: Նա մտերմական կապերով է կապվում Սեդրակ Մանդինյանի, Կոմիտասի, Հակոբ Մանանդյանի, Ստեփան Կանայանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի և այլոց հետ, որոնց բոլորի մասին շատ դրական է արտահայտվում իր հիշողություններում:

Առավել մոտիկ է եղել ճեմարանի երաժշտության ուսուցիչ Կոմիտասին, ապրել են միևնույն սենյակում, օր ու գիշեր եղել են միասին: Կոմիտասը նույնպես եղել է կատակասեր, կենսուրախ մարդ. «Կոմիտաս մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր,- գրել է Աճառյանը իր հիշողություններում,- չափազանց աշխատասեր, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, ընկերասեր, քաղցր և համեստ ամենուն նկատմամբ»<sup>4</sup>:

Երկուսն էլ սիրել են մասնակցել աշակերտական զվարճությունների, երեկույթ-ցերեկույթների: Աճառյանը Կոմիտասի առաջարկով հաճախ երգել է թուրքերեն շարքիներ: Միասին կարդացել են Պարոնյանի երկերը, այնքան խանդավառվել դրանցով, որ Կոմիտասը որոշել է գրել մի օպերետ «Քաղաքավարության վնասների» սյուժեներով: Գրել է մի հատված, որը կատարվել է աշակերտների ուժերով, բայց այլ աշխատանքներ խանգարել են և չի շարունակել: Վերոհիշյալ հատվածը սևագիր վիճակում հասել է մեզ և պահպանվում է Հայաստանի Գրականությունից և արվեստի թանգարանի երաժշտական բաժնում, Կոմիտասի արխիվում:

Հետագայում, երբ Կոմիտասը մեկնում է Էջմիածնից, նրանք պայմանավորվում են զրավոր կապ պահպանել միմյանց հետ:

«Կոմիտասը հարգեց իր խոստումը,- գրում է Աճառյանը,- յոթ հատ պատկերազարդ բաց նամակներ ուղարկեց. յոթերորդ բացիկը մեր սիրաջերմ ընկերական թղթակցության վերջին հիշատակը եղավ»<sup>5</sup>:

Այդ թանկագին նշխարներից մեկը այժմ պահվում է Գրականության և արվեստի թանգարանում, գրված է Թիֆլիսից, 1901 թ. մայիսի 30-ին, պարունակում է հայատառ թուրքերեն մի նախադասություն. «Պու կին չըքտըմ, չոք սելամ սանա վե քգքարտաչընա» (Այսօր դուրս եկա: Շատ բարև քեզ և քրոջդ):

Էջմիածին գալու հաջորդ տարին Աճառյանը Բյուրականում, կաթողիկոսի ամառանոցում ծանոթանում է հայագետ Ն. Յա. Մառին: Առաջին ըոպեններից մտերմանում են, հանդես բերում փոխադարձ հարգանք: Մառը այդ ժամանակ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր էր: Նա համաձայնում է, որ Աճառյանը մասնակցի Արտաշատում իր կատարելիք պեղումներին: Այս առիթով 10 օր լինում են միասին և ավելի մտերմանում:

«Այն կարճ շրջանում, որ ես ապրեցի Մառի հետ,- գրում է Աճառյանը, լավ ուսումնասիրեցի նրա անձնավորությունը: Չափազանց բարի, ընկերական և ազնիվ մարդ էր... պատմեց իր կենսագրությունը, հայրը իուլանդացի էր, Կովկասում ամուսնացել էր մի մենզոել աղջկա հետ և ըստ ցարական օրենքի կնքվել է ռուս: Կովկասում սովորելուց հետո գնում է Պետերբուրգի համալսարանը, ուր աշխատակցում է Քերովբե Պատկանյանին, դասընկեր ունենալով Ստեփան Մալխասյանին»<sup>6</sup>:

Մառը առաջարկել է Աճառյանին միասին մեկնել Պետերբուրգ, մեկ տարի իր մոտ սովորել ռուսերեն, ապա այնտեղ էլ պաշտոնավարել: Աճառյանը չի համաձայնվել, չցանկանալով կտրվել էջմիածնի մատենադարանից:

Այսքան՝ նրա ստեղծած նոր միջավայրի, ծանոթների մասին:

Աճառյանի նման աշխատասեր մի մարդ էլ կարող բավարարվել միայն թուրքերենի դասերով, նա ուներ ընկերական ծրագրեր (ծնողներին օժանդակել նյութական միջոցներով, նրանց տեղափոխել էջմիածին, ամուսնանալ, վերջ տալ ամուրի կյանքին), որոնք անհրաժեշտ էին դարձնում վարել լրացուցիչ պաշտոններ, խնայել որոշ գումար: Առաջարկում են

աշխատել մատենադարանում, որպես գրադարանավար, տպարանում՝ որպես սրբագրիչ. համաձայնվում է:

1899 թ. Պոլսից գալիս են հայրը և Արմենուհի քույրը, մի տարի անց՝ նաև մայրը և մյուս քույրը՝ Հերսիլիան:

Հայրը էջմիածնի Մայր Աթոռի մոտակայքում պատրաստել է տալիս մի փայտյա կրպակ, գրադվում կոչիկ կարկատելով: Հետագայում կաթողիկոսը նրան նշանակում է մառանապետ: Ապրում են հանգիստ ու համերաշխ:

Մնում էր ամուսնություն հարցը:

Ասել ենք, որ այդ տարիներին նրա մտերիմներից էր Հակոբ Մանանդյանը, որոնց տունը այցելում էր հաճախ: Հենց այդտեղ էլ նա ծանոթանում է Մանանդյան եղբայրների քրոջ՝ Աստղիկի հետ և սիրահարվում.

«Այն ժամանակվա սիրահարությունը բոլորովին նման չէր արդի սերերի հետ, - գրում է իր հուշերում, - Սիրահարը դառնում էր ամաչկոտ, լուսկյաց, տխուր և ապրում էր միայն ներքին հուզմունքով: Այդպես և ես: Իմ սիրո արդյունքը այն եղավ, որ ուղեցի ավելի մոտենալ Մանանդյանին, ցույց տալ իմ աշխատասիրությունը և դրանով ինձ սիրելի դարձնել ... Իմ սիրահարություն պատմությունը թաքուն չէր կարող մնալ: Ընկերներս մի օր տարին ինձ Երևան, Հրազդանի ափին գտնված մի գրոսավայր: Այնտեղ նրանք լավ խմեցին, ինձ էլ մի քանի բաժակ գարեջուր խմեցրին, որից հարբելով, դառնագին լաց եղա և գաղտնիքս բաց արի նրանց առաջ: Լուրերով աղքատ է էջմիածինը, չնչին բան էր փնտրում մեծացնելու համար: Այսպես տարածվեց իմ սիրո պատմությունը ամբողջ Վաղարշապատում: Նրանից անտեղյակ չէր կարող լինել Մանանդյանը, որի վերաբերմունքը իմ հանդեպ ոչ միայն չփոխվեց, այլ ընդհակառակը ավելի լավացավ»<sup>7</sup>:

Աճառյանը առիթներ է որոնել ավելի հաճախ լինելու Մանանդյանների տանը:

Առիթ է դառնում «Հայոց նոր վկաներ» ժողովածուի ստեղծումը, որը նրա առաջարկով պատրաստում են Հակոբ Մանանդյանն ու ինքը: Որպես գրադարանավար Աճառյանը համառորեն պրպտում էր ձեռագրերը և այնտեղից քաղում նյութեր այն հայ պատմական անձնավորությունների մասին, որոնք իրենց կրոնին ու ժողովրդին հավատարիմ մնալու

պատճառով նահատակվել էին տիրապետող մահամեղականների կողմից: Դրանք ըստ էության սրտաուռ կենսագրական ակնարկներ էին, մեծ մասամբ չափածո:

Համատեղ աշխատանքի այս օրերին Աճառյանը գրեթե ամեն օր լինում է Մանանդյանների տանը, բայց չի համարձակվում որևէ ակնարկ անել:

1900 թվականի ամռանը Մանանդյանները գնում են Դիլիջան՝ հանգստանալու: Հակոբը հրավիրում է ընկերոջը ամառն անցկացնել միասին: Աճառյանը մինչև խոր ծերությունը հուզումով էր պատմում այդ ճանապարհորդությունը, որն այնպես էլ նրա պատանեկական հոգին ու ընդմիջտ կապել աղջկա հետ: Իր հիշողություններում էլ լայն տեղ է հատկացրել դրան: Ամբողջ ճանապարհին, գտնվելով նույն կառքում, նստած դեմ հանդիման, նրանք ամոթխած ակնարկների շղարչը դեն գցած, կատակում են, սրախոսում խորհրդավոր ակնարկներով արտահայտում իրենց զգացումները:

Երազային օրերը շարունակվում են Դիլիջանում: «Երբեմն չորս հոգով պտույտի էինք դուրս գալիս. Ես, Մանանդյանի մայրը, փոքր եղբայրը՝ Արսենը և օրիորդը: Մեծ եղբայրը ընդհանրապես դուրս չէր գալիս: Փոքր եղբայրը շատ կատակախոս և զվարճասեր երիտասարդ էր:

Դիլիջանից վերադառնալուց հետո Աճառյանի ծնողները որոշում են պաշտոնապես խնդրել աղջկա ձեռքը: Մեծ եղբոր՝ Հակոբ Մանանդյանի վերաբերմունքը թվում է, թե լուծել էր հարցը: Աղջկա մայրն էլ համաձայն է եղել: Մնում էր ձևական ծիսակատարությունը: Բայց կատարվում է հակառակը: Աճառյանի ծնողները ձեռնունայն են վերադառնում Մանանդյանների ընտանիքից: Պաշտոնական մերժումը ձևակերպվում է այն բանով, թե վաղահաս է մտածել աղջկա ամուսնություն մասին, իսկ անպաշտոն կերպով Աճառյանը լսում է, թե հակառակվել է Մանանդյանի փոքր եղբայրը՝ Արսենը և ասել է. «Ես այդ կոլոտ և գիժ վարժապետին քույր տվողը չեմ»<sup>8</sup>:

Աճառյանի զգայուն սրտի վրա շատ խորն է ազդում այդ մերժումը: Դադարում է Մանանդյանների ընտանիքում լինելուց: Դադարում է նաև միառժամանակ ամուսնություն մասին մտածելուց:

Մանանդյանների հետ նրա հարաբերությունների առաջին փուլը ունեցավ այսպիսի վախճան, հրապարակ եկավ ոչ թե ամուսնություն, այլ «Հայոց նոր վկաներ» հատորը որպես վաղաթաղ սիրո համար շիրմաքար, և «Թուրքերենն փոխառյալ բառեր» աշխատությունը, որի վրա աշխատել է նա Դիլիջանում հանգստանալու օրերին:

Մենք խոսեցինք Աճառյանի էջմիածնական տարիների առօրյա կյանքի մասին, հիշատակեցինք ընտանեկան, կենցաղային դեպքեր: Դրանք անհրաժեշտ են իմանալու համար, թե ինչպիսի դժվարին պայմաններում է ապրել նա, հաղթահարել ամեն դժվարություն, թե նրա ստեղծագործական կյանքը որքան աննպաստ պայմաններում է ընթացել, երբ նա՝ Դիլիջանում իր սիրային ամենաերազային օրերում անգամ գեթ մեկ ամիս չի վայելել կատարյալ հանգիստ, գիշերները լուսացրել է Աբիկյանի «Բառարանը» կարդալով, նրանից պոլսահայ բարբառում օգտագործվող բառերը դուրս բերելով, որոնք հետագայում կազմելու էին մի ամբողջական աշխատության հիմքը<sup>9</sup>:

Գիտական այս լարված աշխատանքը ուղեկցել է նրան ամբողջ կյանքի ընթացքում, ուստի փորձենք շատ ընդհանուր գծերով ուրվագծել էջմիածնական տարիների նրա գործունեությունը, ավարտուն երկերի ծանոթացումը թողնելով հաջորդ գլուխներին:

Իր հետաքրքրական հիշողություններում դժբախտաբար գիտական գործունեության մասին խոսում է շատ ժլատ տողերով: Նրան հիմնականում զբաղեցրել են առօրյա դեպքերը, մարդիկ, շրջապատը և այլն, ինչ որ ամեն մի հուշագրության հիմնական խնդիր է:

Փորձենք մեզ զբաղեցնող հարցը շարադրել հենվելով Աճառյանի այդ տարիների նամակագրության և մամուլում տպագրված նյութերի վրա:

Դեռևս ճանապարհին նրան ամենից շատ հրապուրել էր երկու բան. այն թե էջմիածնում հնարավորություն պիտի ունենար ծանոթանալու էջմիածնի Մատենադարանի հազարավոր ձեռագրերին և միաժամանակ պիտի կարողանա տարբեր գավառներից եկած աշակերտներից ուսումնասիրելու գավառաբարբառները:

ձեմարանում պաշտոնավարելու առաջին ամիսներից մխրճվում է Մատենադարանի ձեռագրերի մեջ: Սկզբում աշխատել է շատ լայն ծրագրով, արտագրել է չափածո և արձակ հարյուրավոր ստեղծագործություններ, նպատակ ունենալով պատրաստել ստվար մի ժողովածու միջնադարյան հայ չափածո գրականություն, մի ժողովածու էլ արձակ գրականություն:

Հետագայում, սակայն, կազմում է ավելի որոշակի ծրագիր: Այլևս չի արտագրում չափածոն, արձակը վերցնում է «Հայոց նոր վկաների» համար միայն<sup>10</sup>: Գրա փոխարեն ամբողջովին խորամուխ է լինում «Արմատական բառարանը» ճոխացնելու գործին:

Միաժամանակ՝ իր աշակերտներից նյութեր քաղելով՝ շարունակում է բարբառների ուսումնասիրումը, ձեռնարկում «Հայերեն գավառական բառարանի» ստեղծմանը:

Եվ վերջապես՝ այդ տարիներին աշխատակցում է հայ և օտար հանդեսների, գրելով ստուգաբանական, բանասիրական արժեքավոր երկեր, որոնց մասին կխոսվի հաջորդ գլխում:

Սրանք են եղել Աճառյանին զբաղեցնող հարցերը 1898-1902 թթ. էջմիածնում պաշտոնավարելու տարիներին:

Այդ ամբողջ ժամանակաընթացքում նրա միտքը զբաղեցնող հիմնական հարցերից մեկը եղել է իր ավարտված կամ ավարտվելիք երկերի տպագրություն խնդիրը, որը նվազ ժամանակ չի խլել նրանից և քիչ հուզումներ, հոգեկան տանջանքներ չի պատճառել:

1900 թ. հունվարի սկզբներին նա ստանում է մի նամակ Գր. Խալաթյանից, որը հրավիրել է նրան աշխատակցելու «էմինյան ազգագրական ժողովածուին»:

Սկսվում է սրտազին նամակագրություն Աճառյանի և Խալաթյանի միջև և շարունակվում ավելի քան մեկ տասնամյակ:

Մեր կարծիքով՝ Աճառյանի նախասովետական տարիների կյանքում ոչ ոք չի կատարել այն օգտակար դերը, որ կատարել է Գր. Խալաթյանը: Լազարյան ձեմարանի դասախոս, երկարամյա տեսուչ, հայագիտական մի շարք հետազոտությունների հեղինակ այդ լուրջ անձնավորությունը, որի եռանդուն ջանքերով էր հիմնադրվել «էմինյան Ազգագրական

ժողովածուն», ճանաչել է Աճառյանի կարողությունը, գնահատել, քաջալերել: Ապացույց՝ ազգագրական այդ ժողովածուի 9 հատորներից երեքի տրամադրումը Աճառյանի երկերին, այդ թվում ավելի քան հազար էջանոց «Գավառական բառարանին»:

Ստանալով Նալաթյանի հրավերը, Աճառյանը 1900 թ. հունվարի 25-ի նամակով հայտնել է իր պատրաստակամությունը աշխատակցելու «էմինյան ժողովածուին», միաժամանակ նշել, թե ներկայացնելու է «Թուրքերենն փոխառյալ բառերը»: Նալաթյանի քաջալերական նոր նամակից հետո ամբողջովին նվիրվում է գործին, նոր նամակներով հայտնում աշխատանքի ընթացքի մասին, ավարտում և ուղարկում: Գիրքը տպագրվում է Վաղարշապատում, Մայր վանքի տպարանում, 1902 թ. որպես «էմինյան Ազգագրական ժողովածուի» Գ. հատոր, Գր. Նալաթյանի ռուսերեն սեղմ առաջաբանով, որտեղ ներկայացվում է աշխատության բովանդակությունը, կառուցվածքը, նրա նշանակությունը: Այս գրքի տպագրություն ընթացքում հեղինակը կատարել է նաև գրաչարական աշխատանք, քանի որ էջմիածնի տպարանի գրաչարները դժվարացել են շարել արաբատառ թուրքերեն բառերը:

Նալաթյանին գրած նամակներում Աճառյանը ծանոթացնում է նաև «Արմատական բառարանի» և «Գավառական բառարանի» պատրաստման ուղղությամբ իր կատարած աշխատանքները, խնդրելով նրա օժանդակությունը դրանց տպագրության գործում: Վերոհիշյալ նամակները հարուստ տեղեկություններ են պարունակում այդ բառարանների ստեղծագործական պատմության մասին, պարզում են, թե էջմիածնական տարիներին ինչ ծրագրեր է ունեցել հեղինակը՝ դրանց կառուցվածքի, ընդգրկման վերաբերյալ, վերջապես ինչ աստիճանի էր հասել աշխատանքը:

Նախ՝ «Արմատական բառարանի» մասին:

1900 թ. մարտի 10-ին գրած նամակում նա հայտնում է, թե ցանկանում է «Արմատական բառարանը» ներկայացնել Տիգրանյան մրցանակի, սակայն չի կարողանում, որովհետև տպագրված չէր, մինչդեռ կտակով սահմանված պահանջներով դա անհրաժեշտ էր: Գործը կոչում է ոչ թե «Արմատական բառարան», այլ «Ստուգարանական բառարան

Հայոց լեզվի արմատներու»։ Գուցե այդպես է կոչել Տիգրանյան մրցանակի պայմաններին հարմարվելու համար։ Խնդրում է Խալաթյանին, որ աշխատությունը տպագրվի «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատորներից մեկում, որպեսզի կարողանա ներկայացնել կտակակատար Հանձնաժողովին։ Խոսում է բառարանի կառուցվածքի մասին։ Պարզվում է, որ դեռևս այդ տարիներին վերջնականապես ճշտված են եղել նրա ընդգրկման սահմանները։ Հետագա աշխատանքը ընթացել է բացառապես նոր բառերի ավելացման, ստուգաբանությունների ճշտման, վկայությունների հարստացման ուղղությամբ։ Հայտնում է, թե ինչ է օգտագործել այլ գիտնականներից, որն է անմիջապես իրենը<sup>11</sup>։

Այդ ժամանակ փոխվել էր Գևորգյան ճեմարանի տեսուչը, Աճառյանի հակառակորդ Կոստանյանի փոխարեն պաշտոնավարում էր Կարապետ Տեր-Մկրտչյանը, որը բարյացակամ է եղել լեզվաբանի նկատմամբ։ Նա խոստացել է օժանդակել ամեն կերպ, առաջարկել է վերջնական տեսքի բերել բառարանը, որպեսզի ուղարկվի կարծիքի։

Աճառյանը լծվում է ծանր աշխատանքի. օր ու գիշեր զբաղվում է այդ գործով։ Երկու տարվա ընթացքում նկատելի չափով հարստացնում է։ 1902 թ. բառարանը արդեն դարձել էր 2080 էջից բաղկացած ընդարձակ մի գիրք։ Այդ վիճակում ներկայացնում է ճեմարանի վարչությունը, մասնակցելու համար Տիգրանյան մրցանակին։ Կ. Տեր-Մկրտչյանը այն 1902 թ. մայիսին ուղարկում է Խալաթյանին՝ կարծիքի։

Նույն թվականի սեպտեմբերին ստացվում է Խալաթյանի հետևյալ դրական կարծիքը.

«Ձնայած պարոն Հր. Աճառյանի աշխատության մի քանի պակասներին և այլ մանր թերություններին, որ անխուսափելի են այսպիսի մեծածավալ գործի մեջ, չնայած մի շարք բառերի վիճելի բացատրություններին ու համեմատություններին, որ կարող են դեռ լրացվել ու բարեփոխվել, հեղինակը, - որ կարևորագույնն է, - կանգնած է լեզվագիտության ուղիղ ճանապարհի վրա և բացի իր ուսումնասիրություններից օգտվել է, լուրջ կերպով, բոլոր նշանավոր Հայ և օտար լեզվաբանական հետազոտություններից, որով նրա «Արմատական բառարանը» մի զնահատելի և խիստ կարևոր գործ է հանդիսանում



մեր գրականությունն մեջ. ուստի և նորա հեղինակը, որ երկար տարիներ է նվիրել այս ընդարձակ աշխատության, միանգամայն արժանի է քաջալերության և խրախուսանաց, իսկ նորա գործը տպագրության, լույս տեսնելու»<sup>12</sup>:

Թվում էր, թե ամեն ինչ լուծվել է: Բայց այդպես չի լինում. բանն այն է, որ Սալաթյանի կարծիքը դեռ տեղ չհասած՝ նորից փոխվում է ձեռնարանի տեսուչը, դարձյալ գործի գլուխ է անցնում Կարապետ Կոստանյանը, որը և ձեռագիրը վերադարձնում է Աճառյանին:

Այժմ՝ «Գավառական բառարանի» մասին:

Ըստ երևույթին Սալաթյանը շատ ավելի խանդավառվել է այս գործով, քան «Արմատական բառարանով» և այդ ոչ թե վերջինիս արժեքը չհասկանալու կամ կատարված աշխատանքից գոհ չլինելու պատճառով, այլ այն նկատառումով, որ «Գավառական բառարանը» ավելի մոտ էր իր խմբագրությանը լույս տեսնող «էմինյան ազգագրական ժողովածուի» նպատակին:

Սալաթյանը հանդես է եկել ոչ միայն տպագրական գործին օժանդակողի դերում, այլ տվել է խորհուրդներ, կատարել առաջարկներ, լսել հեղինակի բացատրությունները, մի խոսքով, «Գավառական բառարանի» բնույթի վերաբերյալ նրանք ունեցել են մտքերի լայն փոխանակություն:

1900 թ. փոխանակված մի քանի նամակներում արծարծվել է այն հարցը, թե որն է լինելու նման մի բառարանի նպատակը՝ տալ գրաբար որևէ բառի գավառական ձևերը, թե հավաքել տարբեր բարբառների մեջ գտնված և գրաբարում չեղած հայերեն բառերը: Սալաթյանը համաձայնվել է վերջինիս. «Կազմել բառարան՝ գրաբարում չպահպանված գավառական հայերեն բառերի, որոշելով նոցա նշանակությունը որևէ եվրոպական լեզվով»:

Աճառյանին չի բավարարել այս սահմանումը: Նա առաջարկել է յուրաքանչյուր բառի մոտ նշանակել, թե ո՞ր գավառներում է գործածական: «Այսպիսով, օր մը հետքեր պիտի ունենանք գաղթականությանց խումբերը որոշելու և անոնց անցած ճամփաները երևան հանելու, ինչպես փորձվեցավ գնչուներու և հունգարացիներու համար»<sup>13</sup>:

Նա «Գավառական բառարանի» նշանակությունը պատկե-

րացրել է հետևյալ կերպ. այն պետք է գիտությունը տար երեք կարգի օգուտ.

«1. Լեզվաբանական, որպեսզի հնարավոր լինի դրանով ուսումնասիրել այլևայլ բարբառների մեջ գտնված ձայնաբանական օրենքները.

2. Ազգագրական, որպեսզի հնարավոր լինի գաղափար կազմել տվյալ գավառի քաղաքակրթական աստիճանի մասին.

3. Գրական, «Որպեսզի այդ գավառական բառերը մտնեն մեր նոր լեզվի մեջ և այս նոր տարրով ավելի հարստանա ու ճոխանա մեր գրական բարբառը»<sup>14</sup>:

Այս էր «Արմատական բառարանի» և «Գավառական բառարանի» վիճակը 1902 թ. ամռանը, երբ Աճառյանը վերջնականապես թողեց էջմիածինը, մեկնեց Շուշի:

Էջմիածնից հեռանալու որոշումը նա տվել էր վաղուց: Գեոևս 1901 թ. գրած իր նամակներից մեկում հայտնում էր, թե մտադիր է ամռանը հեռանալ էջմիածնից:

Ինչո՞ւ: Ասացինք, որ Տեր-Մկրտչյանի փոխարեն ճեմարանի տեսչի պաշտոնը նորից հանձնվել էր Կոստանյանին: Այս մարդու հետ Աճառյանը այնպես էլ լեզու չի գտել և մինչև իր կյանքի վերջը նրա մասին խոսել է շատ աննպաստ: Երբեք չի փորձել սիրաշահել իր համոզմունքների մեջ համառություն հասնող հետևողականություն ունեցող գիտնականը, որ ոչ ոքի չի զիջել, չէր կարող, անշուշտ, տեղի տալ Կոստանյանի վիրավորանքներին: Անախորժ միջնորդտը գնալով խտացել էր էջմիածնում առհասարակ թուրքիայից այնտեղ թափված մյուս գաղթականների նկատմամբ: Աճառյանն իր հիշողություններում իրավացիորեն դա չի գիտում որպես այս կամ այն անհատի անձնական չկամություն արտահայտություն, այլ դրա մեջ փորձում է տեսնել տնտեսական հիմք: Ասում է, թե թուրքական կոտորածներից խուսափած այնքան շատ մարդիկ էին լցվել էջմիածին՝ իրենց հույսը դնելով Մկրտիչ Նրիմյանի վրա, որ դա անդրադառնում էր տեղացիների կյանքի վրա: Մարդիկ սկսել էին ծաղրել եկվորներին: Գաղտնիք չէ, որ Պոռչյանի նման մի գրող իր «Ցեցեր» գրքում բավականաչափ թունոտ տողերով է արտահայտվել Նրիմյանի ու նրա շուրջ հավաքված մարդկանց նկատմամբ: Այժմ էլ, հենց Աճառյանի պաշտոնակիցներից մեկը, Սելթ Հարությունյանը, մամուլում

տպագրած մի պամֆլետում ծաղրում էր Աճառյանների ընտանիքի տեղափոխությունը Պոլսից Էջմիածին, առանց հաշվի առնելու, թե քաղաքական ինչ դրդապատճառների արդյունք էր դա:

Աճառյանի սիրտը խորապես խոցվում է այս բոլորից, նաև այն բանից, որ գիտություն բնագավառում իր ունեցած այդքան մեծ հաջողություններից հետո էլ դեռ ճեմարանում իրեն վստահվում էր միայն թուրքերենի դասավանդումը:

Այս պայմաններում, իհարկե, անիմաստ էր մնալ այդտեղ:

1902 թ. ամռան ամիսներին Էջմիածին է գալիս Շուշու Թեմական դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետը: Ծանոթանալով լեզվաբանին առաջարկում է պաշտոն Շուշու Թեմական դպրոցում: Աճառյանը, որ արդեն պաշտոն էր որոնում, իսկույն համաձայնվում է և նույն ամռանն էլ տեղափոխվում Շուշի, ուսումնական տարին սկսում տեղի Թեմական դպրոցում:

## Բ. ՇՈՒՇՈՒՄ

1902-1904 թթ. Աճառյանն աշխատում է Շուշում որպես Թեմական դպրոցի ուսուցիչ:

Նա Շուշի էր գալիս այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ այդ քաղաքը վաղուց դարձել էր արևելահայ մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Դեռևս 1830-ական թվականների կեսերից այնտեղ գործում էր Թեմական դպրոցը, որն անցել էր ավելի քան 70 տարվա ճանապարհ: Այդ ժամանակամիջոցում դպրոցը հիմնովին փոխել էր ոչ միայն Շուշի քաղաքի, այլև շրջակա գյուղերի մտավոր վիճակը, գրաճանաչ դարձնելով հազարավոր դարաբաղյինների:

Շուշում վաղուց կար տպարան, տպագրվում էին գրքեր: Այնտեղ էր կատարվել Րաֆֆու «Նենթի» առաջին հրատարակությունը: Քաղաքում ապրում էին հոծ թվով մտավորականներ: Թե երիտասարդությունը ինչպիսի սեր ուներ դեպի լուսավորությունը, արվեստը, թատրոնը, երևում է այն ջերմ ընդունելությունից, որ Շուշու թատերասերները ցույց էին տվել հանճարեղ դերասան Պետրոս Աղամյանին՝ 1880-ական թվականների սկզբներին:

Շուշու Թեմական դպրոցը անցել էր առաջավոր մտավորա-

կանության և աղայական դասի միջև մղվող տևական պայքարի բովով: Եվրոպայում կամ Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում սովորած, առաջավոր գաղափարներով դեպի կյանք եկած մարդիկ միշտ պայքարի մեջ են եղել իրենց թիկունքը էջմիածնին տված, նրանից հրահանգներ ստացող կղերա-պահպանողական խավի հետ: Հայտնի է մասնավորապես տենդագին այն պայքարը, որ Ղարաբաղի հետադիմական խավը մղել է Թեմական դպրոցի տեսուչներից Պետրոս Շանչյանի դեմ:

Այդ պայքարի օրերին գրված դիմումները, բողոքները, բնակչության խնդրագրերը՝ ուղղված կաթողիկոսին, ցույց են տալիս, որ Շուշու Թեմական դպրոցի շուրջ հավաքված մտավորականության ու նրանց ազդեցության տակ գտնվող բարձր դասարանների աշակերտների նպատակն է եղել վերանայել գոյություն ունեցող ուսումնական ծրագրերը և դրանց մեջ մտցնել փոփոխություններ, որոնք ուժեղացնեին օգտակար, ճշգրիտ գիտությունների դասավանդումը ի հաշիվ կրոնական առարկաների<sup>15</sup>:

Աճառյանի այնտեղ հասնելու տարիներին մթնոլորտը բավականաչափ հանդարտվել էր: Գպրոցում պաշտոնավարում էին Ռուսաստանում կամ արտասահմանում կրթություն ստացած ուսուցիչներ, որոնցից էին Գաբրիել Ղուլի Քեվվսյանը,- հայրը Հայկ Գյուլիքեվլյանի,- Արշակ Մեհրաբյանը, Համբարձում Աբովյանը, հասարակական գործիչ Խաթակը, Հարություն Մելիքյանը: Վերջին երկուսն իրենց կրթությունն ստացել էին Գերմանիայում: Գրեթե բոլորն էլ հայ հասարակական կյանքում ճանաչված անձնավորություններ էին, Կովկասահայ մամուլում հաճախ երևացող մարդիկ: Նրանք բացառիկ մտերմական ու հաճելի մթնոլորտ են ստեղծել նորեկ ուսուցչի նկատմամբ, որը դասավանդել է հայոց լեզու: Աճառյանների ընտանիքը հազիվ է տեղավորվում հյուրընկալ այդ քաղաքում, որ չըջապատվում է տեղական բնակչության հոգատարությունը, օգնող վերաբերմունքով:

«Մենք բոլորս սիրեցինք Շուշին,- գրում է Աճառյանը իր հիշողություններում,- համեզ ջուրը, փափուկ կլիման, չըջակա անտառները, զբոսավայրերը, հիանալի տեսարանը, բնակիչները, նրանց զվարթ, անշահախնդիր բնավորությունը հա-

ճելի դարձրին կյանքը»<sup>16</sup>:

Շուշի տեղափոխվելուց մի քանի ամիս անց՝ էջմիածին՝ Գ. Տեր-Մկրտչյանին գրած նամակում Աճառյանը ասում է. «Այստեղ չափազանց հանգիստ եմ ես և գոհ. աշխատում եմ որչափ ժամանակը ներում է»<sup>17</sup>:

Ժամանակ այստեղ ավելի է ունեցել: Եթե էջմիածնում գերազանցապես զբաղված էր նյութերի կուտակմամբ, նայել էր հազարավոր ձեռագրեր, նյութեր քաղել իր աշխատությունների համար, ապա այստեղ զբաղվում է կուտակված վիթխարի նյութի մշակմամբ, ձեռագիր աշխատությունների լրացմամբ ու մաքրագրություններով, միաժամանակ ուսումնասիրելով Ղարաբաղի բարբառը կենդանի միջավայրում:

Շուշում նա Կ. Կոստանյանից հետ է ստանում «Արմատական բառարանը»՝ ուրախացնող և տխրեցնող մի նամակի հետ: Ուրախացնողն այն էր, որ Կոստանյանը հայտնում էր, թե այժմ՝ Նալաթյանի դրական գնահատականից հետո կարող է «Արմատական բառարանը» ներկայացնել Տիգրանյան մրցանակին, արժանանալ 2000 ռուբլուն, եթե կատարի կտակի պայմանը՝ ներկայացնի տպագրված: Բայց այդ եթեն էլ ամեն ինչ ջուրն էր գցում: Ինչպե՞ս կարող էր նա իր միջոցներով տպագրել տալ այդքան ծավալուն, տպագրական մեծ դժվարություններ ներկայացնող բազմաձև մի գործ:

Միմյանց հաջորդող նամակներով Աճառյանը դարձյալ դիմում է Գր. Նալաթյանին՝ խնդրելով տպագրել գիրքը «էմինյան Ազգագրական ժողովածուի» հատորներից մեկում: Նալաթյանը չի կարողացել օժանդակել այս հարցում, բայց Աճառյանին մղել է մի նոր բնագավառ, որը նվազ ժամանակ չի խլել նրանից, առաջարկել է գրել Մեսրոպ Մաշտոցի ընդարձակ կենսագրությունը և հայ գրերի գյուտի պատմությունը և ներկայացնել Լազարյան ճեմարանի կողմից հայտարարվող մրցանակի:

Ամեն ինչից շուտ ոգևորվող, խանդավառվող լեզվաբանը այս անգամ էլ թողնում է «Արմատականը» և ամբողջովին նվիրվում այդ գործին: Մեր հին մատենագրությունը այնքան քաջահմուտ գիտնականի համար դժվար չէր նման մի երկ գլուխ բերելը, բայց պահանջում էր մեծ ժամանակ: Համենայն դեպս 1904 թ. վերջերին ընդարձակ հետազոտություն հիմնա-

կան մասը արդեն ունեցել է պատրաստ<sup>18</sup>:

Շուշում կատարած իր գիտական աշխատանքների մեջ մեծ կարևորություն է տվել Եզնիկի նորագյուտ ձեռագրի ուսումնասիրմանը: Նա դեռևս 1902 թվականին, էջմիածնի հարուստ մատենադարանը պրպտելիս, գտել էր Եզնիկի կորսված համարված ձեռագիրը: Իսկույն լուրը հայտնել էր Վիեննայի Մխիթարյաններին և Գալուստ Տեր-Մկրտչյանի հետ միասին սկսել էր ձեռագրի ուսումնասիրումը: Թե նա որքան է խանդավառվել այդ գյուտով, երևում է նրա նամակից՝ ուղղված Վիեննայի Մխիթարյան միաբանությունն անդամ Հակոբոս Տաչյանին:

«Ուրախություն ունիմ ավետելու ձեզ, թե Եզնիկի միակ ձեռագիրը, որ իբր թե այրած էր Զմյուռնիո հրդեհին մեջ, գտնվեցավ ս. էջմիածնի ձեռագրատան մեջ, հինգչաբթի, 25 ապրիլ, 1902-ին: Երեկ սկսանք համեմատել տպագրյալին հետ նվաստս և Գ. Տեր-Մկրտչյան սարկավազը: Մեր քննությունն արդյունքը շատ շուտով լույս կը տեսնե տպագրությունը»<sup>19</sup>:

Հազիվ նրանք ավարտել էին համեմատությունը, գրել իրենց դիտողությունների մի մասը, որ Աճառյանը տեղափոխվել էր Շուշի:

Այստեղ գալուց անմիջապես հետո, հենց 1902 թ. նոյեմբերի վերջերին նամակով խնդրում է ձեռագիրը Տեր-Մկրտչյանից, որպեսզի ավարտի աշխատանքը և ուղարկի տպագրություն: Ստանում է իսկույն, միասին կատարված աշխատանքի վրա ավելացնում է նոր գլուխներ, գրում առաջաբան, ուղարկում «Հանդես ամսօրյային», որտեղ տպագրվում է «Քննություն և համեմատություն Եզնիկի նորագյուտ ձեռագրին» խորագրով, երկուսի ստորագրությամբ<sup>20</sup>: Աշխատությունը նույն թվականին լույս է տեսնում նաև առանձին գրքով, մեծ հետաքրքրություն առաջացնելով հայագիտական շրջաններում:

Շուշի տեղափոխվելու առաջին տարում այնտեղ է գալիս Աճառյանի սիրելի ուսուցիչը՝ Անտուան Մեյեն, որի հետ արդեն պահպանել էր կանոնավոր նամակագրություն: Մոտ երկու շաբաթ նա հյուրընկալվում է Աճառյանների տանը, առիթ ստեղծելով գիտական անվերջ զրույցների, համատեղ շրջագայությունների բնության ծոցում, հիշարժան վայրերում: Մեյեն ունեցել է գործնական նպատակ՝ իր կազմած հայերենի

քերականության ձեռագիրը միասին կարգալ նախքան տպագրելը և կատարել որոշ ճշտումներ: «Ամեն օր բարձրանում էինք Քերժ, ինչ հաճույք էր զգում, դիտելով ընդհանուր տեսարանը, մանավանդ երբ տեսնում էր կանաչների մեջ թաղված կարմիր կտուրները ... Մեյեի գալուստը ուրախությամբ դիտվեց ամբողջ Շուշում: Երբ մենք միասին ման էինք գալիս բուլվարում, բոլորը հետաքրքրությամբ դիտում էին: ... Վերջին անգամ էր, որ տեսա իմ ուսուցչին»<sup>21</sup>:

Դրանք եղել են Աճառյանի կյանքի ամենաերջանիկ օրերը ո՛չ միայն Մեյեի ժամանման պատճառով, այլև ընտանեկան բարեբախտ մի քանի իրադարձություններիով: Ամուսնացել էին նրա երկու քույրերն էլ՝ Թե՛ Հերսիլիան, Թե՛ Արմենուհին<sup>22</sup>: Մեկը հարս էր գնացել էջմիածին, մյուսը ընտանիք կազմել Շուշում: Ինքն էլ հավանել էր շուշեցի մի աղջկա, հետաքրքրվում էր նրանով, նորից սիրային բանաստեղծություններ գրում, առանց համարձակվելու սեր բացատրել: Հետո արդեն մտերմանում է, գրած բանաստեղծություններ հանձնում նրան, հանդիպումներ ունենում:

1904 թ. մայիսի 14-ին տեղի է ունենում հարսանիքը: Ծնողները շատ գոհ են եղել ընտրությունից, բայց ցանկացել են վերադառնալ Պոլիս: Հայրը՝ սովոր Պոլսի կենցաղին, լեզվին, բարքերին, Շուշում զգացել է իրեն խորթ, մանավանդ որ որդին չի թույլատրել նրան զբաղվելու որևէ գործով՝ իր արհեստով: Բուլվարներում քարչ գալուց ձանձրացած, առաջարկել է իրեն ուղարկել Պոլիս: Նրա համար մասամբ էլ դժվար է եղել Ղաբարաղի բարբառը հասկանալը:

Ծնողները մեկնում են Բաթում, բայց հարկադրված մնում են այնտեղ:

Ու այսպես Աճառյանը ամուսնանում է, կազմում ընտանեկան ջերմիկ մթնոլորտ, իր ամբողջ կարողությունը տրամադրում գիտական աշխատանքներին:

Բայց՝ այս անգամ էլ քաղաքական մթնոլորտն է մթազնում, 1903 թ. ցարական կառավարության հրովարտակով գրավվում են հայոց եկեղեցական կալվածները: Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելուց հետո՝ առաջին անգամ հայ ժողովուրդը միահամուռ ուժերով դուրս է գալիս ցարական կառավարության հակահայկական քաղաքականության դեմ:

Ամենուր ազգային իշխանություններից, մասնավորապես կաթողիկոսից պահանջում են չհանձնել ազգային սեփականություն հանդիսացող եկեղեցական կալվածքները: Էջմիածին հասնող պատգամավորություններին վերջ չկար: Խրիմյանը վճռական դիրք է բռնում այդ ապօրինի գրավումների դեմ: Երբ նահանգապետ կոմս Տիգենհաուերը ներկայանում է նրան և խնդրում ստորագրել հանձնման գրությունը, ուղղակի վոնդում է ցարական բարձրաստիճան պաշտոնյային, ասելով:

– Գնա, գնա կրսեմ քեզի, կհասկնա՞ս ինչ կը նշանակե գնա՛... իչտե անոր փաշոլ կրսեք, ինչ կրսեք<sup>23</sup>:

Տիգենհաուերը կանչում է Վաղարշապատի Հայ դարբիններին, որպեսզի կոտրեն Մայր Աթոռի գանձարկղը, որի բանալին չի հանձնել կաթողիկոսը: Դարբինները հրաժարվում են: Կոմսը Երևանից բերել է տալիս օտար դարբիններ, որոնք ջարդում են գանձարկղը...

Հայ ժողովրդի իրավունքներն ու ազգային զգացումները մուրճի հարվածներով ջարդող այս արարքը աննկարագրելի ցասում է առաջացրել ժողովրդի մեջ ընդդեմ ցարական կառավարության: Ամենից վճռական դիրք բռնող վայրերից է եղել Շուշին, որտեղ այդ առիթով տեղի են ունեցել փողոցային ցույցեր, ոստիկանական միջամտություններ, լավել են կրակոցներ, սպանվել են մի քանի կազակներ: Ինչպես էջմիածնում, այստեղ էլ ի վերջո բացվում է գանձարկղը, բայց հուզումները չարունակվում են:

Փակվում է Թեմական դպրոցը: Խուզարկվում են բազմաթիվ բնակարաններ, այդ թվում՝ Աճառյանի տունը. նա հազիվ կարողանում է խուզարկող վրացու ձեռքից փրկել այնքան հոգնատանջ աշխատանքի արդյունք իր ձեռագրերը:

Թեմական դպրոցի փակումից հետո նա այլևս անելիք չունի Շուշում: Նամակով դիմում է Թավրիզի Հայոց Արամյան դպրոցի տնօրենին, առաջարկում իր պաշտոնավարությունը այնտեղ: Ստանում է դրական պատասխան, պատրաստվում մեկնելու:

Շուշին բացի հոգեկան հանգստից, բարեկեցիկ կյանքից՝ նրան տվեց այնպիսի մի նվեր, որը ավելի քան մեկ քսանամյակ եղավ Աճառյանի ներչնչման աղբյուրը, նեցուկը և միաժամանակ լավագույն օգնականն ու քաջալերողը նրա



ծանր ու հոգեմաշ բառարանագրական աշխատանքում:

Այդ նվերը Արուսյակն էր, շուշեցի համեստ ու պատվավոր ընտանիքից սերած մի աղջիկ, որը սիրեց Աճառյանին, իր բախտը կապեց այդ տարօրինակ, երիտասարդ աղջկա համար շատ քիչ հրապույրներ ներկայացնող մարդու, ու առավել «տարօրինակ» նրա զբաղմունքի հետ: Ի՞նչ էր այդ զբաղմունքը՝ կտրված կյանքի զվարճություններից, ամբողջ օրը մխրճված հին ու բազմաթիվ լեզուների բառարանների լաբիրինթոսներում, հավաքել բռներ, դասավորել, ցանկ կազմել, արտագրել, անվերջ արտագրել: Մինչ այդ ինքն էր կատարում արտագրությունը: Ամուսնությունից հետո «Արմատական բառարանն» ու այլ աշխատանքներ սկսում են արտագրվել Արուսյակի մարգարտաչար ձեռագրով: Հոգեկան ամենաջերմ զգացումներով ամուսնու հետ կապված կինը սիրում է նաև այդ աշխատանքը, թեթևացնում կյանքի ընկերոջ բեռը: Ու այնուհետև թափառական կյանքի ոլորապտույտ ճանապարհներում, որոնք ձգվում են Հայաստանից Հյուսիսային Կովկաս, այնտեղից Պարսկաստան, նորից Հայաստան, մենք տեսնում ենք նույն աշխատանքին լծված, նույն հոգսերով անխոնջ ամուլին անտրտունջ քայլելիս:

#### Գ. Թ Ա Վ Ր Ի Ջ Ո Ւ Մ

Աճառյանը տեղափոխվելով Թավրիզ՝ ընկնում էր ուրույն մի աշխարհ, որը շատ կողմերով տարբեր էր մինչ այդ նրա շրջագայած բոլոր երկրներից: Տարբեր բարքեր, սովորություններ, մանավանդ հայ կյանքի բացառիկ յուրահատկություն: Հետամնաց մի երկիր էր, որի բնակչությունն ապրում էր միջնադարյան ավատական կենցաղով, համատարած տգիտություն մեջ, ամենուր հիվանդություններ, համաճարակներ: Նա դեռ Կովկասում էր, որ լսել էր, թե ժանտախտը մեծ թափով մուկեցնում է Պարսկաստանում: Հենց Թավրիզում այդ օրերին հարյուրավոր մարդիկ էին մեռնում: Թերթերը գրել էին, թե մի օրում հազար դիակ են հավաքել փողոցներից: Այդպիսի պայմաններում մեծ անխոհեմություն էր Աճառյանի համար երիտասարդ կնոջ հետ գնալ նման մի երկիր: Բարեբախտաբար նա անվնաս հասնում է նոր քաղաքը, տեղավորվում իրեն

Հատկացված բնակարանում:

Թավրիզն ուներ մոտ երեք Հարյուր Հազար բնակիչ, ան-  
Համեմատ մեծ էր, քան Թեհրանը, բայց բնակչությունն ապ-  
րում էր համատարած խավարի մեջ: Երբ շահը այցելել էր  
այնտեղ, ասել էր՝ Այս ինչ մեծ գյուղ է: Մահմեդական մուլե-  
ռանդ կրոնի կապանքները հնարավորություն չէին տալիս  
տեղական բնակչությանը՝ չփվելու եվրոպական քաղա-  
քակրթության հետ: Ծատ էր մեծ հակադրությունը Կովկասի և  
այստեղի միջև: Կովկասում փոքր ժողովուրդները գտնվում էին  
ռուսական առաջավոր մտքի ուժեղ ազդեցությունից տակ, որը  
խթանում էր նրանց մտավոր զարգացմանը: Այստեղ՝ Պարս-  
կաստանում տիրապետող ժողովուրդը ծայր աստիճան հե-  
տամնաց, ոչնչով չէր կարող օգտակար լինել փոքր ժողո-  
վուրդներին: Ավելին՝ նա անգամ հաղորդակից չէր Պարս-  
կական հին ու հույակապ գրականությունը, արվեստին, որով  
իրավամբ հպարտանում էր քաղաքակիրթ աշխարհը: Այդ երկ-  
րում ապրող հայերը կամ օտարները ավելի էին հետաքրքրվում  
Ֆիրդուսիով կամ Օմար Խայամով, քան պարսիկ ժողովրդի  
ճշտող մեծամասնությունը:

Պարսկական կառավարությունը սակայն չէր խանգարում  
քրիստոնյա հպատակներին զարգացնելու իրենց մշակույթը:  
Այդ հնարավորությունից առաջին օգտվողները հայերն էին,  
որ մեծ թիվ էին կազմում այնտեղ:

Թավրիզն ուներ 5-6 հայկական դպրոց: Հատկապես հայե-  
րով բնակեցված երկու խոշոր թաղերը՝ Ղալան և Լիլավան  
դարձել էին ուրույն հայկական մտավորական կենտրոններ,  
ունեին իրենց եկեղեցիներն ու դպրոցները, ակումբները, ան-  
գամ թատերախմբեր, թերթեր: Բուռն ձգտում կար դեպի լու-  
սավորությունը: Անպատահությունն այն էր, որ քաղաքական  
երկու կուսակցությունները՝ դաշնակցությունն ու հնչակյան-  
ները իրենց ձեռքը վերցնելով համայնքի ղեկավարության  
գործը, մրցում էին միմյանց հետ այնպիսի վայրագություններ,  
ինչպես չպիտի մրցեին գուցե տարբեր ազգություն, կրոնի  
պատկանող ժողովուրդները: Դաշնակցությունը իր տիրա-  
պետության տակ էր պահում Լիլավան, իսկ հնչակյանները՝  
Ղալան: Տգետ, պոռոտախոս, փառասեր ու պորտաբույծ որոշ  
մարդիկ, ապրուստի միջոց դարձնելով ազգային մարմինների

ղեկավարման գործը, կրթական, դպրոցական հոգևոր կյանքին տալիս էին իրենց ցանկացած ուղղությունը, հաճախ լուեցնելով առողջ բանականության տեր մարդկանց ձայնը:

Աճառյանը պաշտոնավարում է Ղալա թաղամասի դպրոցում, դասավանդելով հայերեն և ֆրանսերեն: Ինչպես նախորդ տարիներին, այստեղ էլ նա հեռու է կանգնում հայ քաղաքական կուսակցությունների պայքարից, ամբողջովին նվիրվում է մանկավարժական և գիտական աշխատանքին:

Նա այդ դպրոցում իրեն զգում է հանգիստ: Ճիշտ է, հուշերից երևում է, որ ոչ մի վայր այնքան խոր տպավորություն չի թողել նրա վրա, որքան Շուշին իր հյուրընկալ ժողովուրդով, տոհմիկ բարքերով, կենցաղով, կլիմայով և այլն, սակայն այստեղ էլ նպաստավոր հանգամանք է եղել ապրուստի էթանությունը: Աճառյանի կնոջն էլ տրվել է մի պաշտոն և երկուսը միասին ստացել են մոտավորապես 90 ուրբի փող, որը լիովին բավարարել է նրանց, հնարավորություն տվել անգամ պահելու տնային ծառայող: Ինչպես Շուշում, այստեղ էլ Աճառյանը մասնակցում է հանրագուտ աշխատանքների, օգնում աշակերտների կողմից կազմակերպվող երեկույթ-ցերեկույթների, մասնակցում թատերական ներկայացումների:

Նա միտք է հղանում ստեղծել հայ գրականության պատմության դասընթաց: Առաջարկը դպրոցի տեսչության կողմից ընդունվում է ջերմորեն: Նա առարկան մաս մաս թելադրում է աշակերտներին: Այսպես ստեղծվում է յուրահատուկ մի սղագրություն, որը հետագայում, արդեն նորից Կովկասում, մշակելով, ընդարձակելով տպագրում է «Պատմություն հայոց նոր գրականության» վերնագրով, ինչպես պիտի տեսնենք հետագա էջերում:

Մի օր նա, հենց այնպես, ասում է, թե ինքը եղել է հայ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի աշակերտը Կենտրոնական վարժարանում, թե նրանից սովորել է հաշվապահություն: Դպրոցի տեսուչը ուրախությամբ լսելով այդ, հարցնում է, թե չի կարող արդյոք դասավանդել նաև հաշվապահություն, քանի որ ուսուցչի կարիք ունեն և մտածում են Կովկասից հրավիրել: Ընդունում է առաջարկը և հաջորդ ուսումնական տարվանից դասավանդում է նաև հաշվապահություն:

Հանձն առնելով այսքան շատ առարկաների դասավանդման

ծանր պաշտոնը, հարկադրված է լինում իր ժամանակի զգալի մասը հատկացնել ուսուցչական աշխատանքին, հայ գրականության դասագրքի ստեղծմանը, սակայն չի ընդհատում բառարանների և «Մեսրոպ Մաշտոցի կենսագրություն» գործը: Ուշադրություն կենտրոնում մնում է «Մեսրոպ Մաշտոցը», որ ցանկացել է անպայման ներկայացնել Լազարյան ճեմարանի հայտարարած մրցանակին:

1904 թ. դեկտեմբերի 18-ին Գր. Սալաթյանին հղած նամակում ասում է, թե արդեն ուղարկել է աշխատություն ձեռագիրը, թվում այն նկարների անունները, որ ցանկանում է կցել գրքին<sup>24</sup>:

Սալաթյանը նամակին պատասխանել է դրական, ասել, թե աշխատությունը բավարարում է առաջադրվող պայմաններին, կարող է ընդունվել, միայն պետք է փոքրացնել ծավալը: Աճառյանը տվել է իր համաձայնությունը, հաջորդ տարվա մարտ ամսին գրել է նրան շնորհակալական նամակ, միաժամանակ թվել այն աշխատությունները, որոնք մտադիր է եղել պարբերաբար ուղարկել «էմինյան ազգագրական ժողովածուի» խմբագրությունը: Նկատի ունենալով, որ այդ ցանկը շատ կարևոր է թավրիզյան տարիներին նրա միտքը զբաղեցնող երկերի համար, բերենք այստեղ.

«1. Ռուսերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ. (նույն ծրագրով, ինչպես թուրքերենի փոխառյալ բառերը):

2. Եվրոպական փոխառյալ բառեր ժողովրդական լեզվի մեջ (նույնպիսի):

3. Քննություն Կ. Պոլսի բարբառին (մանրամասն):

4. Քննություն Սուչավայի բարբառին, որ «Բազմավեպի» մեջ սկսավ տպվիլ, բայց կիսատ մնաց բոլորովին:

5. Քննություն Սարբերդի բարբառին<sup>25</sup>»:

Հիշատակված աշխատություններից առաջինը և հինգերորդը այնպես էլ չի գրել, մյուսները լույս են տեսել տարբեր ժամանակներում:

Թավրիզյան երկու տարիները հնարավորություն են տվել նրան կատարելագործելու պարսկերենը: Ճիշտ է, այդ լեզուն սովորել էր դեռևս Կ. Պոլսում, սակայն երկար տարիներ հեռու լինելով միջավայրից, դժվարանում էր խոսել: Էջմիածնում պաշտոնավարելու տարիներին, երբ պարսից շահն այցելել էր

Երևան և նրան առաջարկվել էր թարգմանի պաշտոն, Փրանսերենով էր կատարել այդ հանձնարարությունը և ոչ պարսկերենով:

Աճառյանը դեռևս Թավրիզում էր, որ Ռուսաստանում բռնկվեց 1905 թ. հեղափոխությունը: Դեկտեմբերյան զինված ապստամբությունից լուրերը ոգևորություն էին լցնում մարդկանց սրտերը: Կովկասից ստացվում էին ուրախ լուրեր: Աճառյանը Շուշուց հեռացել էր Թեմական դպրոցի փակման պատճառով: Շուտով վերաբացվեցին դպրոցները: Կովկասի կլիմային ու պայմաններին սովոր գիտնականը նորից է ծրագրում տեղափոխվել այնտեղ:

Եվ ահա կրկին նրան տեսնում ենք ձեռագրերով ծանրաբեռնված ճամպուրակները ձեռքին, Արուսյակի հետ, հարազատ Արաքս գետից անցնելիս:

Վերադառնալով Կովկաս՝ նախ գնում է Բաթում, ծնողներին մոտ, հանգստանում միառժամանակ, մանավանդ որ կազդուրվելու խիստ կարիք է ունեցել կինը:

«Թավրիզից հեռանալով՝ ես անգործ էի, - գրում է Աճառյանը, - պետք էր պաշտոն գտնել: Ոչ մի ծանոթ չունեի, որ նրան դիմեի: Նորից էջմիածին գնալ չէի ուզում: Տիգրիսի Ներսիսյան դպրոցը դիմել չէի համարձակվում: Հայկաբան Մալխասյանի մոտ ես ի՞նչ արժեք ունեի: Մտատանջ ապրում էի»<sup>26</sup>:

Իմանալով, որ Նոր Բայազետի հայկական երկսեռ դպրոցի համար հայոց լեզվի ուսուցչի պահանջ կա, նամակով հայտնում է իր համաձայնությունը, ստանում հրավեր, Դիլիջանի վրայով մեկնում այնտեղ:

## Դ. ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ

Փարիզից, Ստրասբուրգից հետո էջմիածին, Շուշի, Թավրիզ, վերջապես Հայաստանի ամենահեռամասնաց վայրերից մեկը՝ Նոր-Բայազետ: Սա ճակատագրի ծաղրն էր լեզվաբանի նկատմամբ, ճակատագրի, որի հետ պայքարի մեջ էր գիտությունից զրկված համառ մարդը: Զարմանալի հակադրություն կար նրա գիտական հոգակի ու ապրուստի թելադրանք պաշտոնների միջև: Որքան բարձրանում էր գիտական ասպարեզում, նրա անունը տեղ էր գրավում հա-

մաշխարհային ամենալուրջ հանդեսներում, նշանավոր լեզվաբանների անունների կողքին, այնքան բախտը հալածում էր նրան, հրում կյանքի խորղ ու բորղ արահետները, տատասկոտ տափաստանները: Բայց զարմանալիորեն լավատես, համառ, գիտությունների նվիրված ուսուցիչը կարծեք չէր նկատում դժվարությունները, համարում բնական՝ հետամնաց հայ միջավայրի համար:

Նոր Բայազեղը փոքր չէր, ուներ մոտ 8000 բնակիչ, բոլորն էլ հայ: Կլիման առողջարար էր, ձմեռը երկար, բայց մեղմ, ուներ սքանչելի ջուր: Կյանքն էլ եղել է բավական էժան:

Թավրիզի նման, այստեղ էլ Արուսյակը պաշտոնավարում է դպրոցում որպես ձեռագործի ուսուցչուհի, ստանալով 50 ո. ամսական: Իր ուժիկն էլ եղել է 60 ո.: Ի հարկե բավարար էր ապրուստի համար նահապետական բարքերով ապրող նման մի վայրում: Բայց արդյո՞ք միայն օրվա սնունդն էր որոշում ամեն ինչ:

Նա ուներ այլ ծախսեր: Եվրոպական տարբեր քաղաքներից շարունակ բերել էր տալիս հայագիտական գրքեր, հանդեսներ: Պարտավոր էր նյութական օգնություն ցույց տալ ձեռունի ծնողներին: Վերջապես ուներ իր գրքերը տպագրելու ծրագրեր, որոնք առանց փողի չէին կարող լինել: Ուրեմն՝ պետք էր խնայել որոշ գումար:

Այս բոլորից հետո միայն հասկանալի կարող է դառնալ արտաքուստ ազահույթուն թվացող այն եռանդը, որ ցուցաբերել է նա՝ մի աշխատության գործը չվերջացած՝ մի այլ երկի ձեռնարկելու և մրցանակի ներկայացնելու ուղղությամբ<sup>27</sup>:

Չնայած Նոր-Բայազեղում պաշտոնավարել է ընդամենը մեկ տարի, 1905 թ. աշնանից մինչև 1906 թ. ամառը, սակայն ունեցել է ստեղծագործական բեղմնավոր գործունեություն: Շուշում ընտանեկան որոշ իրադարձություններ՝ երկու քույրերի և իր ամուսնությունը, Մեյեի ժամանումը և այլն, նրանից խլել են բավական ժամանակ: Այստեղ օրվա դասերից դուրս բացառապես նվիրվում է ստեղծագործական աշխատանքի:

Հետո՝ այժմ ուներ Արուսյակի նման օգնական, որը հազարավոր էջեր արտագրել է գեղեցիկ ձեռագրով:

Բացի մեկ ծանոթ աշխատություններից՝ Նոր-Բայազեղում Աճառյանի միտքը զբաղեցնում է մի նոր գիրք՝ «Հայ գաղթա-

կանուխան պատմությունը»: Ե՞րբ է սկսել նա այդ մասին մտածել, նյութեր հավաքել՝ մեզ հայտնի չէ, առաջին անգամ այդ օրերին Գր. Սալաթյանին ուղղած նամակից ենք իմանում որոշ մանրամասնություն, նա գրում է. «Քանանյան մրցանակի համար գաղթականության պատմության վրա աշխատում եմ բավական ժամանակե ի վեր. հավաքել եմ անհամար նյութ և հույս ունեմ, որ մի հազարանոց էջով հատոր կարող կլինիմ ներկայացնել որոշված ժամանակին՝ հիշյալ մրցանակին մասնակցելու համար»<sup>28</sup>: Ուրեմն՝ նա այդ նյութերը հավաքել էր նախքան այնտեղ գնալը:

Նույն նամակի մեջ նա խոսում է նաև «Գավառական բառարանի» մասին, ասում, թե հիմնականում պատրաստ է:

Մի այլ նամակում հայտնում է, թե գավառական բառերի թիվը արդեն հասել է 26.000-ի և առաջարկում է տպագրել «էմինյան Ազգագրական ժողովածուի» հատորներից մեկում:

Սալաթյանը խանդավառվել է «Գավառական բառարանով», ամեն կերպ քաջալերել: Այդ է վկայում Աճառյանի այդ ամիսների նամակներից մեկի վրա նրա կատարած հետևյալ նշումը. «Տեղեկանալ քանի թերթ կը դուրս գա Մեսրոպը: Բայց լավ է ինքը հրատարակի. բառարանը չտապի հավաքել»:

Նոր-Բայազետում նա վերջնական խմբագրման է ենթարկում «Հայ գրականության պատմությունը», որ ինչպես ասել ենք, ձեռնարկել էր Թավրիզի հայկական դպրոցում պաշտոնավարելու շրջանում: Այստեղ ավարտում է գրքի Ա. մասը, իր ծախսով տպագրում Վաղարշապատում:

Անկախ այս բոլորից՝ գավառական այս անկյունը քիչ հրապուրիչ էր, մանավանդ նրա երիտասարդ կնոջ համար, որը ամուսնուն հոգեկան հաճույք պատճառելու ցանկությունը օրն ի բուն բանտարկված նեղլիկ սենյակում արտագրում էր ու արտագրում, հեռու հասարակական միջավայրից, զբոսանքներից ու բարեկամների հանդիպումներից: Աճառյանի համար մենակյացի կյանքը դարձել էր կենցաղ, Պոլսում նա մտածել էր անգամ Մխիթարյանների միաբանության անդամ դառնալ, որպեսզի ազատ ընտանեկան հոգսերից ամբողջովին նվիրվի իր սիրած հայագիտությանը: Բայց ամուսնացել էր, կազմել ընտանիք, չէր կարող պարտադրել կնոջը ճգնական ծանր կյանքը: Նա մինչև կյանքի վերջն էլ հուզումով էր պատմում այդ մասին

և ասում, եթե Արուսյակը ըմբոստանար իր դեմ, վիճեր, իր կամքը թելադրեր, հիմա ինքը այդքան չէր տառապի, մինչդեռ սերը դեպի ամուսինը եղել է այնքան խոր և գիտակցված, որ անտրտունջ կատարել է նրա բոլոր կարգադրությունները, հրամանները, իսկ Աճառյանը, ունենալով հանդերձ շատ քնքուշ սիրտ, լարված, խելացնոր արագություն պահանջող աշխատանքի ընթացքում հաճախ եղել է խիստ, նույնիսկ որոշել, թե օրական քանի էջ պետք է արտագրել:

Ու արտագրել է Արուսյակը մեծագույն համբերությամբ, սպասելով ավելի հաճելի օրերի: Իսկ երբ հետագայում եկան այդ օրերը՝ նա արդեն հիվանդ էր, գրեթե չվայելեց:

Աճառյանը որոշում է թողնել Նոր Բայազեդը:

Բայց ո՞ւր գնալ: Դեռևս Թավրիզում աշխատելու օրերին, 1905 թ. ամռանը, դիմել էր Նոր Նախիջևան, իր ծանոթներից մեկին և հարցրել, թե այնտեղ իր համար հարմար պաշտոն կա՞: Բացասական պատասխանից հետո էր, որ հարկադրված եկել էր Հայաստան:

1907 թ. ամռանը մի քանի օրով գալիս է Ալեքսանդրապոլ՝ աշխատանք որոնելու: Այնտեղ լսում է, թե Նոր Նախիջևանի Թեմական դպրոցի համար որոնում են հայոց լեզվի ուսուցիչ: Իսկույն մի նամակով դիմում է դպրոցի տեսուչ Ե. Շահազիզին, խնդրում նկատի ունենալ իրեն, ապահովել գեթ 24 ժամվա դասեր:

Նրա հետագա նամակագրությունից երևում է, որ Շահազիզը սկզբունքային համաձայնություն տվել է և հայտնել, թե հեռագրով կհրավիրի:

Աճառյանը վերադառնում է Նոր Բայազեդ, փակում հաշիվը տեղի դպրոցի հետ, գնում նախ Բաթում, իր ծնողներին տեսնելու, ապա այնտեղից Շուշի՝ Արուսյակի ծնողներին տեսնելու:

Օգոստոսի սկզբին նորից է դիմում Շահազիզին.

«Որովհետև,- գրում է նա,- տեղյակ չեմ Նոր Նախիջևանի Թեմականի տեղական հանգամանքներին, թե օրինակ երբ կբացվի դպրանոցը, երբ կսկսվեն վերաքննությունները և այլն, ուստի կը խնդրեի, որ բարեհաճիք երկտողով հայտնել ինձ, թե երբ հարկավոր է ինձ գտնվիլ իմ պաշտոնի գլուխ»<sup>29</sup>:

Ստանալով Շահազիզի հրավերը, նույն ամսի վերջերին կնոջ հետ մեկնում է Նոր Նախիջևան, մի քաղաք, որտեղ աշխատեց



ավելի քան տասը տարի, ունենալով բեղմնավոր գործունեություն:

Բայց մեկնում է ահը սրտում: Բանն այն է, որ Նոր-Նախիջևանից նրան խոստացել էին Թեմական դպրոցում Փրանսերենի ուսուցչի պաշտոն տալ, եթե ներկայացներ Համալսարանականի վկայական, մինչդեռ չունեի այդպիսի փաստաթուղթ:

Իր տեղում արդեն ասել ենք, որ Սորբոնի Համալսարանում Մեյնն որպես ավարտական շարադրանք հանձնարարել էր նրան զենդերենի հոլովումը. պատրաստ էր աշխատությունը, որ լույս էր տեսել Բարդոլեմի բառարանը, որտեղ գիտականորեն տրված էին զենդերենի հոլովման, խոնարհման ձևերը: Աճառյանի կատարածը անցել էր ապարդյուն: Անհրաժեշտ էր գրել նոր աշխատություն, իսկ ինքը, նյութական միջոցներ չունեի, որ երկար մնար Փարիզում, ուստի անցել էր Ստրասբուրգ, այնտեղից Կովկաս՝ առանց որևէ վկայականի:

Այժմ վկայականի հարցը դառնում է վճռական: Դիմում է խորամանկություն, հեռագրում է Նոր-Նախիջևան, թե վկայականը կներկայացնի նոյեմբեր ամսին:

Իսկույն ձեռնարկում է Հայ բարբառների համակարգությունը նվիրված Հայտնի աշխատությունը, որը դառնալու էր հեղինակի գլուխ-գործոց հետազոտություններից մեկը:

Ընկնում է ճանապարհ:

«Նույնիսկ, երբ զնացքով գնում էինք զեպի Նոր-Նախիջևան, շոգեկառքում, մեծ ցնցումների տակ շարունակում էի գրել աշխատությունը»<sup>30</sup>:

Նոր-Նախիջևանում ավարտում է գիրքը, սեպտեմբեր ամսին ուղարկում Փարիզ, մի նամակով Մեյնից խնդրելով ժամանակավոր վկայական՝ մինչև աշխատության քննարկվելը: Ստանում է Մեյնի պատասխանը. նա հայտնում է, թե գրքի քննարկումը կտևի մեկ տարի, ուստի ուղարկում է մի վկայագիր՝ համալսարանն ավարտելու մասին. Մեյնն չորս էջանոց այդ գրությունն մեջ մեծ գովեստով խոսում էր Աճառյանի աշխատասիրության, գիտելիքների մասին, ավելացնելով, թե եթե նա մնար Փարիզում, ընդունեի Փրանսիական հպատակություն, կլինեի Փարիզի համալսարանի դասախոսներից:

Մեյնի այս գրությունը փոխարինում է ամեն ինչի: Աճառյանը ընդունվում է:



### Ե. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ

Նախասովետական տարիներին Աճառյանը ոչ մի քաղաքում այնքան երկար չի ապրել, որքան Նոր Նախիջևանում: Եթե չհաշվենք ամառային արձակուրդների կարճատև շրջաօթյությունները Կովկասի տարբեր վայրերում, Պոլիս այցելությունը 1910 և 1912 թվականներին, ապա ամբողջ մեկ տասնամյակ՝ 1907 թ. աշնանից մինչև 1918 թ., նա ապրել է այդ քաղաքում:

Առաջին տարիներին սուր օդը, սառը քամիները վախեցրել են նրան, հաճախ են հիվանդացել ինքն էլ, կինն էլ: Սակայն հետագայում այնքան է ընտելացել կլիմային, մարդկանց, բարձրերին, որ այն համարել է Պոլսից հետո երկրորդ հարազատ քաղաքը:

Նոր Նախիջևանը շատ կողմերով է նրան գրավել: Նախ՝ այն հայ մշակույթի խոշոր կենտրոններից մեկն էր, հայ գրա-

կանուխյանը տվել էր Միքայել Նալբանդյանի, Ռափայել Պատկանյանի նման պայծառ դեմքեր:

1850-1860-ական թվականների մտավոր զարթոնքը նկատելի ազդեցություն էր թողել իր ազգային ուրույն կյանքով ապրող համայնքի վրա: Նալիբյան-Հակախալիբյան պայքարից հետո,- որին այնքան եռանդով մասնակցել էր Միքայել Նալբանդյանը,- ամրացել էր առաջավոր գաղափարներով տոգորված հոսանքի դիրքերը: Աշխուժացում էր ապրում կրթական կյանքը: Սկսվել էին թատերական փորձեր: Թ. Ֆասուլաճյանի թատերախմբի երկամյա գործունեությունը 1869-1871 թատերաշրջաններում, Պ. Աղամյանի այցելությունները 1880-ական թվականներին, և վերջապես արևելահայ տարբեր թատերախմբերի ներկայացումները այնտեղ, երիտասարդությունը կապել էին հայ թատրոնի հետ: Ստեղծվել էին սիրողական խմբեր<sup>31</sup>:

Դեռևս 18-րդ դարի վերջերից գործող հայկական տպարանը ընդլայնել էր իր աշխատանքները:

19-րդ դարի երկրորդ կեսին նկատվող մտավորական այս վերելքի կենտրոնում էր գտնվում տեղի Թեմական դպրոցը: Որքան էլ որ հսկողությունը եկեղեցու ձեռքին էր, ժամանակի առաջավոր մտայնությունը հեշտությամբ թափանցում էր պատերից ներս, ազդում երիտասարդության վրա: Բեղմնավոր ճանապարհ անցած դպրոցը մասնավորապես դարասկզբին գտնվում էր ոռոսական առաջավոր մտքի ուժեղ ազդեցություն տակ: Այնտեղ սովորող մարդկանցից ոմանք հետագայում դարձան համառուսաստանյան չափանիչով հայտնի դեմքեր: Դրանցից էր, օրինակ, ականավոր պետական-կուսակցական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը, որը Թեմականը ավարտել էր 1903 թվականին:

Դպրոցն ապահովված էր մասնագետ ուսուցիչներով, մեծ մասամբ բարձրագույն կրթությամբ: Աճառյանը դասավանդել է Փրանսերեն, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն:

Շաբաթական 24 ժամ զբաղված էր դասերով, մնացած ժամերին ազատ էր:

Մինչ այստեղ նա ամեն ճիգ ու ջանք թափում էր, որ գոհ թողնի Թեմական դպրոցի աշակերտներին ու հոգաբար-

ձուլթյանը, Փարիզում Մեյեն աշխատում էր արագացնել սիրելի աշակերտի ավարտական շարադրանքի քննարկումը: Արդյունքը եղել է շատ ավելին, քան կարող էր ենթադրել զբքի հեղինակը:

1908 թ. հունվարի 5-ին Սորբոնի համալսարանը Աճառյանին շնորհում է համապատասխան կոչում հետևյալ որոշմամբ.

«Նկատի առնելով պարոն Մեյեի հաղորդումը, որը պաշտոնակից տնօրենն է համեմատական քերականությունների հանձնաժողովի, և պարոններ Ռ. Գոթիոյի և Ֆ. Մաքլերի, որոնք հանդիսանում են պատասխանատու հանձնաժողովը, սույն հիշատակագիրը պարոն Հրաչյա Աճառյանին շնորհում է Բարձր ուսումների գործնական դպրոցի պատմություն և բանասիրության բաժնի պակավոր աշակերտի տիտղոս»:

Փաստաթուղթը ստորագրված է եղել Մեյեի և այլոց կողմից:

Սորբոնի համալսարանն ունեցել է այսպիսի կարգ. եթե ուսանողի ավարտական շարադրանքը ընդունելի է, բայց գիտական բացառիկ արժեք չի ներկայացնում, նրան շնորհվում էր կոչում և հեղինակը պարտավոր էր իր ծախսով տպագրել գիրքը, 50 օրինակ նվիրել Համալսարանին, իսկ եթե ունի բացառիկ արժանիքներ, ապա համալսարանն է հրատարակում իր ծախսով, 50 օրինակ ձրի նվիրում հեղինակին: Աճառյանի աշխատությունը արժանանում է վերջինիս, տպագրվում է 1909 թ. որպես *Bibliothèque de l'École des Hautes Etudes* մատենաշարի 173-րդ գիրքը՝ 300 տարվա ընթացքում: Սա մեծ պատիվ էր հեղինակի համար:

Գրքի ստացումը Նոր Նախիջևանում առաջացնում է մեծ հետաքրքրություն Աճառյանի նկատմամբ, որն արդեն այն թարգմանել և ներկայացրել էր Թիֆլիս՝ Ղուկասյան մրցանակի:

Թվում էր, թե օտարների կողմից բարձր գնահատված աշխատությունը հեշտությամբ պիտի հարթեր ճանապարհ նաև հայ իրականությունում: Այդպես չեղավ: Աճառյանն ստանում է անսպասելի հարված. այն էլ ումի՞ց՝ Ստրասբուրգի իր դասընկեր Եզնիկ վարդապետ Գյանջեցյանից:

Ղուկասյան մատենաշարի հանձնաժողովը նրան էր ուղարկել գիրքը կարծիքի: Գյանջեցյանը, որ այդ ժամանակ պաշտոնավարում էր Արմավիրում, Աճառյանի աշխատու-

Թյունն ստանում է 1908 թվականի հունվար ամսին, իր ընդարձակ կարծիքն ուղարկում մարտի քսաներեքին, գրված շատ անբարյացակամ ոգով, ակնհայտ թշնամանքով, որ էջը կարող այլ պատճառ ունենալ, քան սովորական նախանձը: Նրանք միասին էին սովորել, վերադարձել Կովկաս: Մեկը՝ Եզնիկը «Արարատում» թարգմանական մի քանի հոդված տպագրելուց հետո պատասպարվել էր կրոնական վեղարի տակ, վարում էր հոգևոր պաշտոններ՝ հայագիտության մեջ հաջողություն չունենալուց հետո: Մինչդեռ ընկերը անսպասելի արագությամբ բարձրացել էր, հռչակվել հայագիտական աշխարհում:

Եզնիկ վարդապետի կարծիքը մեծ վիշտ է պատճառում լեզվաբանին, բայց նա արհամարհում է ու չի էլ փորձում պաշտպանել իրեն: Իր պաշտոնակիցներից մեկը, Ա. Տեր-Հարությունյանը «Մշակում» տպագրած ընդարձակ հոդվածով պատասխանում է Գյանջեցյանին, փորձելով ցույց տալ գրքի արժանիքները:

Եզնիկ վարդապետի համար, սակայն չչմեցնող էր այն նոր վերաբերմունքը, որ ցուցաբերվեց գրքի նկատմամբ Փարիզում: Մեյեն հատուկ հոդված տպագրեց *Journal Asiatique*-ում: Իսկ Կարստը չվարանեց հայտարարել, թե «Այդ գիրքը պետք է կազմի հայ բարբառագիտության հիմնաքարը»: Գուշակություն, որ իրականացավ այնքան ճշտորեն:

Եզնիկ վարդապետն էլ մոռացվեց, նրա ասածն էլ: Գուցե լավ եղավ, որ «Համակարգություն հայ բարբառագիտության» գիրքը չտպագրվեց 1908 թվականին: Գիտության լայնահուն ճանապարհով հեխև վազող գիտնականը դժվար թե հնարավորություն ունենար նորից վերադառնալու տպագրված գրքին, ինչպես չի վերադարձել իր հրատարակված աշխատություններից և ոչ մեկին, մինչդեռ այդ գրքի վրա աշխատեց երկար ժամանակ և տպագրեց 1911 թվականին, եռապատիկ ընդարձակված, լրացված, «էմինյան ազգագրական ժողովածուի» մատենաչարով՝ «Հայ բարբառագիտություն, ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» խորագրով:

Աճառյանի մի նամակից տեղեկանում ենք, որ վերնագրի փոփոխությունը, մանավանդ ուրվագիծ բառի օգտագործումը թելադրել է Մեյեն հրատարակչական նկատառումներով:

Արդարությունը պահանջում է ասել, որ այս աշխատություն

տպագրությունն էլ, ինչպես և 1913 թվին լույս տեսած «Գավառական բառարանի» տպագրությունը, պարտական ենք Աճառյանի երկերը այնքան գնահատող ու նրան օժանդակող պրոֆեսոր Գրիգոր Սալաթյանին: «Հայ բարբառագիտությունը» նա լույս է ընծայել որպես «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ը հատոր, իսկ «Գավառական բառարանը»՝ բաղկացած 1141 էջից, որպես նույն մատենաչարի Թ հատոր:

Էջմիածնից հեռանալուց հետո Աճառյանի ժամանակի զգալի մասը խլել էին երկու այլ պատմաբանասիրական աշխատություն, որոնցից մեկը՝ «Հայ գաղթականություն պատմությունը», ամենևին չէր առնչվում լեզվաբանության հետ, իսկ մյուսը՝ «Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը և Հայ տառերի գյուտի պատմությունը» առնչվում էր մասամբ, «Հայոց գրերը» հատվածով:

«Հայ գաղթականություն պատմության» հրատարակ գալը կապված էր Լազարյան ձեռարանի հայտարարած մրցանակաբաշխության հետ, այլապես նա նպատակ չի ունեցել նման գործ գրելու: Նա պաշտոնավարում էր Թավրիզում, որ հայտարարվել էր մրցանակաբաշխությունը: Ոոստացվում էր 2000 ռուբլի վարձատրություն, տրվում էր երկու տարի ժամանակ:

Նա հավաքում է հսկայական նյութ՝ քաղելով մեր պատմագիրներին, տարբեր հետազոտություններից, մամուլից, գրում է աշխատությունը, ներկայացնում է Լազարյան ձեռարանի մրցանակին: 1909 թ. վարձատրվում է 1000 ռուբլի պարգևով:

Գիրքը, սակայն, մնում է անտիպ: Ապարդյուն են անցնում Կովկասի հայոց հրատարակչական ընկերության միջոցով տպագրել տալու ուղղությունը հեղինակի թափած ջանքերը: Այժմ էլ այն ձեռագիր է, պահվում է Աճառյանի անտիպ ժառանգությունների մեջ, սպասում տպագրության, որին արժանի է իր բոլոր թերություններով հանդերձ, Ա. Ալպոյաճյանի, Ա. Աբրահամյանի նույն հարցին նվիրված և արդեն հրատարակած բազմահատոր աշխատությունների առկայություն ղեկավարում անգամ:

Միանգամայն այլ ճակատագիր ունեցավ «Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը և Հայ տառերի գյուտի պատմությունը»: Այս գրքի առաջին մասը («Աղբյուրները») լույս է տեսել Բասմաջյանի «Բանասերում»<sup>32</sup>: Երրորդ մասը՝ «Հայոց

գրերը», տպագրվել է «Հանդես ամսօրյայում», սկսած 1910 թ. փետրվարից, շարունակվել է Հաջորդ տարիներին, առանձին գրքով հրատարակվել է շատ ուշ, 1928 թ. Վիեննայում, որպես «Ազգային մատենադարանի» ԿԹ հատորը: Բ մասը մնացել է ձեռագիր:

Այժմ ամենաՀիմնականի՝ «Արմատական բառարանի» մասին: Հեղինակին միջազգային համբավ ապահովող այդ գործը փաստորեն Նոր Նախիջևանումն է, որ ստացավ իր ավարտուն տեսքը:

Քանի որ այդ բառարանի և նրա Հեղինակի ճակատագիրը սերտորեն կապված են եղել միմյանց, շարունակենք ընդհատված պատմությունը:

Ինչպես ասել ենք, Աճառյանը ուզում էր «Արմատական բառարանը» ներկայացնել Տիգրանյան մրցանակի: Արդեն ստացվել էր Գր. Նալաթյանի դրական կարծիքը: Կտակի պայմաններից մեկն էր ստանալ պրոֆ. Մառի դրական կարծիքը: Դեռևս Նոր-Բայազետում աշխատելու շրջանում նա արտագրում է բառարանի մի մասը, ուղարկում Մառին, խնդրում տալ իր կարծիքը:

Այդ թվականներին Մառի և Աճառյանի հարաբերությունները դեռևս չէին սրվել: Մառը պաշտոնապես չէր հրապարակել իր տեսությունը, որի մասին բանավոր հայտնել էր Աճառյանին Բյուրականում: Դա շատ տարբեր էր հետազայում զարգացրած նրա տարօրինակ տեսությունից, որի հետևանքով սովետական լեզվաբանությունը մոտ քսան տարի կանգնեց փակուղու առաջ: Նա այն ժամանակ գտնում էր, թե հայերենը հանդիսանում է արիական-հնդկական լեզու, բայց հայերենում կա մի շերտ, որը ցեղակից է վրացերենին, ունի տեղական երանգ: Վրացիներին և հայերին նա համարում էր հետնորդները երկու եղբայր ժողովուրդների, որոնք հետագայում անջատվել էին միմյանցից ազգագրական, լեզվաբանական, մշակութային և քաղաքական այլևայլ պատճառներով:

Աճառյանը ոչ միայն դեմ չի եղել Մառի այս տեսությանը, այլ այնքան է խանդավառվել, որ նրանից առաջ փութացել է հասարակությունը ծանոթացնել «Վտակ» ժողովածուում լույս ընծայած մի հոդվածում: Նա անհավանական չի համարել, որ

Հայոց լեզուն հնդեվրոպական լինելով հանդերձ, իր մեջ ունենար մի շերտ, որի էթնիկական ծագումը կապված լիներ Կովկասի բնիկ ժողովուրդների հետ: Մյուս կողմից՝ Մառն էլ այդ թվականներին այնքան մոլեռանդ հակառակորդ չի եղել հնդեվրոպական լեզվաբանություն: Այս բոլորը հույս էին ներշնչել Աճառյանին, որ նա կտա անկողմնակալ կարծիք իր բառարանի մասին:

Եվ արդարև 1907 թ. գարնանը ստացվում է նրա կարծիքը, որտեղ ի միջի այլոց կար հետևյալ գնահատականը. «Պարոն Աճառյանի գործը, իմ կարծիքով, ամբողջովին տպագրվելուց հետո մեծ երևույթ կլինի լեզվաբանական գրականության մեջ՝ Հայոց լեզվի մասին, որպես արժեքավոր ձեռնարկ, որի նմանը չկա ոչ միայն Հայ, այլև եվրոպական գիտական գրականության մեջ»<sup>33</sup>:

Ուլաթյանի և Մառի դրական կարծիքներն ստանալուց հետո Աճառյանը դիմում է կտակակատարին՝ այսինքն էջմիածնի Գևորգյան ձեռնարանին, որի տեսուչն էր այդ ժամանակ Մինաս Պերպերյանը: Վերջինս ձեռագիրը մեկ տարի պահելուց հետո, կարծեք այդքան ժամանակվա ընթացքում նոր միայն նկատելով, որ այն տպագիր չէ, 1908 թ. հոկտեմբերի երկուսին վերադարձնում է հեղինակին, հետևյալ գրությունը.

«Պարոն Հրաչյա Աճառյանը ժամանակին ներկայացրել է մանկավարժական ժողովին յուր «Հայերեն Արմատական բառերի» բառգիրքը. ժողովն ուղարկել է այդ աշխատությունը պպ. Գրիգոր Ուլաթյանին և Ն. Մառին և ստացել սոցա միանգամայն նպաստավոր կարծիքը այդ աշխատության մասին: Բայց, որովհետև համաձայն կտակի մրցանակը տրվում է տպագրված աշխատանքին, ուստի և Մանկավարժական ժողովը որոշեց Հայտնել պ. Հ. Աճառյանին, որ սա կարող է ստանալ մրցանակը, եթե միայն ներկայացնի յուր աշխատության տպագրած օրինակը, որի համար և նշանակեց մի տարի ժամանակ»<sup>34</sup>:

Աճառյանը դիմում է Բաքվի կուլտուրական ընկերությունը, «էմինյան Ազգագրական ժողովածուի» վարչությունը: Ապարդյուն: Մառի առաջարկով դիմում է Պետերբուրգի Գիտությունների ակադեմիային, Վիեննայի Մխիթարյան միաբանության, էջմիածնի տպարանական վարչության, ինչպես նաև մասնավոր տպարանների: Գրքի տպագրության հետ կապված տեխ-



նրկական դժվարությունները վախեցրել են մարդկանց, մի մասը չի էլ պատասխանել հեղինակին, մի մասը ուղղակի մերժել է: Միայն էջմիածնի տպարանի տեսուչ Ե. Տեր-Մինասյանն է, որ լավ հասկանալով հանդերձ, թե ինչպիսի դժվարությունների հետ էր կապված այդպիսի մի գրքի տպագրությունը, ուզում է օգտակար լինել, սկսում է բանակցել հեղինակի հետ, առաջարկել պայմաններ: Աճառյանը համաձայնվում է ամեն պայմանի, հանձն առնում բոլոր գոհողությունները. համաձայնվում է տպարանին վճարել իր ստանալիք 2000 ռուբլու կեսը՝ 1000 ռուբլի, կատարել 100-120 մամուլ ծավալ ունեցող գրքի ամբողջ սրբագրությունը և վերջապես գրքի տպագրված բոլոր օրինակները թողնել տպարանին: «Հայ գիտնականը առհասարակ իրեն երջանիկ կհամարեր,- գրում է Ե. Տեր-Մինասյանը՝ Աճառյանի իրեն ուղղած նամակները «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրելիս տված բացատրության մեջ,- երբ իր աշխատությունը որևէ ձևով լույս տեսներ, դրամական վարձատրության մասին նա երազել անգամ չէր կարող»<sup>35</sup>:

Ճիշտ էր հարգելի պրոֆեսորը: Եթե անգամ նկատի ունենանք ստանալիք մրցանակի ակնկալությունը, դարձյալ չէր արդարացվի այդքան տառապանքը: Նա համաձայնվել էր 2000 ռուբլու կեսը թողնել տպարանին, հրաժարվել էր տպագրված օրինակներն ստանալու իրավունքից, մնացած հազար ռուբլու մի մասն էլ եթե հաշվելու լինենք սրբագրության վարձատրությունը, ինչ էր մնում իրեն:

Բայց այդ էլ չի ստացվում: Գործը կարող էին սկսել միայն այն ժամանակ, երբ Կտակակատար մարմինը համաձայնվեր երկարաձգել տրված ժամանակը, քանի որ մեկ տարում երեք հնարավոր չէր գլուխ բերել նման ծանր աշխատանք, ամիսներ էին պետք տպարանը անհրաժեշտ գիտական տառերով ապահովելու համար: Այդպիսի հնարավորություն չի տրվում Աճառյանին: Վրա է հասնում Ե. Տեր-Մինասյանի հրաժարումը պաշտոնից: Խափանվում է գործը:

Աճառյանը որոնում է նոր ճանապարհներ:

1910 թ. աշնանը նա ծրագրում է իր տիկնոջ հետ մեկնել Պոլիս, թե՛ ծնողներին տեսնելու, թե՛ ծննդավայրի կարոտն առնելու, քանի որ նա այնտեղից դուրս էր եկել 15 տարի առաջ, համիդյան սարսափի տարիներին: Հիմա շատ բան փոխվել էր

այնտեղ, հռչակվել էր սահմանադրություն, գահընկեց արվել սուլթան Համիդը, վերացել էր գրաքննությունը, նկատելի աշխուժացում էր ապրում մամուլը, գրականությունը, առհասարակ հայ մշակույթը: Վերադարձել էին Եվրոպա փախած մտավորականներից շատերը: Ամենուր տիրում էր աննկարագրելի ոգևորություն: Աճառյանի ընկերները, հատկապես Կենտրոնական վարժարանի շրջանավարտ Մ. Շամտանճյանը հրավիրել էին նրան այցելել Պոլիս<sup>36</sup>:

Աճառյան ամուսիններն ընկնում են ճանապարհ, հետներին՝ «Արմատական բառարանի» անվերջանալի պատմությունը, որը շարունակվելու էր Պոլսում զավեշտական դրվագներով:

Մինչև կյանքի վերջին օրերը Պոլսի բնական գեղեցկություններով այնքան ոգևորված Աճառյանն իր արժեքավոր հիշողություններում ընդարձակորեն խոսում է Բաթումից Պոլիս կատարած ուղևորության մասին, վերապրելով պատանեկան տարիների տպավորությունները: Նա կնոջը ցույց է տվել Պոլիսի իր հետաքրքրական բոլոր կողմերով, ծանոթացրել մտերիմներին, բարեկամներին: Ինքն էլ եղել է բոլոր թերթերի, ամսագրերի խմբագրություններում, աշխատակցել է որոշ պարբերականների, խոստումներ տվել Նոր-Նախիջևանից կանոնավոր կապ պահպանել նրանց հետ: Եղել է իր սիրած Սամաթիայի աշխատավոր մարդկանց միջավայրում, սեղան նստել նրանց հետ:

Այժմ կանգ առնենք նրա գիտական կյանքի հետ կապված դեպքերի վրա, մասնավորապես այն փաստերի, որոնք կապված են «Արմատական բառարանի» հետ:

Բանն այն էր, որ Պոլսում հրապարակ էր եկել յուրօրինակ մի նոր կտակի՝ Յուանեսկուի կտակի հարցը: Ռումինահայ մեծահարուստ այս մարդը, հետևելով ավանդական լեզվաբանության, տարիներ առաջ ձեռնարկել էր ընդարձակ մի աշխատություն, որի մեջ ուզում էր ապացուցել, թե աշխարհի բոլոր լեզուները առաջացել են հայերենից: Լինելով բավականաչափ հարուստ, նա նյութական խոչոր միջոցներ էր վատնել իր այդ ցնդաբանությունը գիտական տեսք տալու համար: Ապրում էր Փարիզում, որտեղ տնտեսական ամենածանր պայմաններում իրենց օրերն էին անցկացնում բազմաթիվ հայ մտավորականներ, փախած համիդյան բռնապետության տարիներին: Յուա-

նեսկուն այդ մարդկանց համար դառնում է ապրուստի յուրահատուկ միջոց: Ոմանք աշխատավարձով աշխատել են նրա բառարանի վրա, ուրիշներ վարձատրություններ են ստացել նրա համար հավաքել են գավառական բառեր, վաճառել հազվագյուտ բառարաններ:

Այս տարօրինակ մարդու մասին հատուկ հումորով է գրել Երվանդ Օտյանը իր «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրություններում: Օտյանն էլ մի քանի ամիս եղել է նրա քարտուղարը, բայց չկարողանալով հանդուրժել Յուանեսկուի այլանդակ գաղափարներին, ընդհարվել է նրա հետ, թողել հեռացել է:

Յուանեսկուն մինչև կյանքի վերջին օրերը չկարողանալով ավարտել իր զարմանալի բառարանը, ազգին կտակում է 158.000 ֆրանկ՝ այն ավարտելու և տպագրելու համար: Գումարի 50.000-ը տրվելու էր լեզվաբան Կարապետ Բասմաջյանին՝ աշխատանքն ավարտելու համար, իսկ 108.000-ը հատկացվելու էր տպագրություն ծախսերին:

Ճակատագրի դառն խաղով՝ այսպիսի գավեշտական մի նպատակի կենսագործումը դրված էր Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանի և Հայոց ազգային ժողովի վրա, որպես կտակակատար մարմին: Պատրիարքարանը, հատուկ մասնագետների խորհրդատվությամբ զբաղվելով՝ գտնում են հակազիտական, շատ այլանդակ կտակարարի պահանջը, բայց որովհետև հենց կտակի մեջ հիշատակված է եղել բանասեր Կ. Բասմաջյանի անունը, առաջարկում են նրան՝ պատրաստել գիտական հիմունքներով մի «Արմատական բառարան», որը վեր էր Բասմաջյանի ուժերից և պահանջում էր մեծ ժամանակ: Բասմաջյանը, խանդավառված գումարի մեծությունից, ձեռնարկում է գործին, պատրաստում մի պրակ: Ծարունակությունը լսենք Աճառյանից.

«Աշխատությունը մերժվում է միաձայն: Բասմաջյան դիմում է ինձ իբրև իր հին դասընկերին և առաջարկում է իր տրամադրության տակ ղենել իմ բառարանը: Ես, որ մի հրատարակչի պետք ունեի, ուրախությամբ եմ ընդունում առաջարկը. դիմում ենք պատրիարքարան և Գուրյան պատրիարքի ներկայությամբ հետևյալ պայմանն ենք կապում.- աշխատությունը պիտի բաղկանա երեք մասից. առաջին մասը, որ պիտի կազմեն

պր. Բասմաջյանը, պիտի լինի մի քաղվածք այն թերթերից, որ թողել էր Յուանեսկու: Երկրորդ մասում պարոն Բասմաջյանը պիտի ընե մի տեսություն գիտական լեզվաբանություն մասին և պիտի ցույց տա, թե Յուանեսկուի տեսությունը սխալ մի վարկած է: Այս երկու մասերը շատ աննշան ծավալ պիտի բռնեն և հատկապես գրված պիտի լինին կտակի ոգին գոնե ձևապես պահած լինելու համար: Երրորդ մասը պիտի լինի իմ «Արմատական բառարանը»<sup>37</sup>:

Այսպիսով, վերջապես, լուծվում էր «Արմատական բառարանի» տպագրության գործը: Կտակակատարները, ծանոթանալով գրքին, հավանություն են տալիս, Դուրյան պատրիարքը առաջարկում է Աճառյանին՝ չվախենալ ծավալից, ընդարձակել, քանի որ կտակի գումարը բավականաչափ պատկառելի էր:

Աճառյանը, գոհ իր ձեռք բերած հաջողությունից, հանգիստ ու լավ տրամադրությամբ շարունակում է զբոսանքները կնոջ հետ, միաժամանակ շարունակում բարբառների ուսումնասիրությունը Ռոդոստոյում, Տրապիզոնում և այլուր: Նա այնքան որոշակի է համարում գործի բարեհաջող ելքը, որ ամեն կերպ համոզում է ծնողներին՝ վերջնականապես թողնել Պոլիսը, տեղափոխվել Նոր Նախիջևան: Կինը՝ Արուսյակը նույնպես պնդում է այդ: Չորսով վերադառնում են Կովկաս, հասնում Նոր Նախիջևան, վարձում նոր բնակարան՝ Մարիետա Շահինյանի հոր տանը: Այստեղ, սակայն, հազիվ մեկ ամիս անցած, ծանր թոքատապով հիվանդանում է հայրը և մեռնում, 1910 թ. սեպտեմբերի վերջերին: Կարճ ժամանակից մայրը որոշում է վերադառնալ Պոլիս:

Աճառյանը, որ ամենածանր վշտի սպեղանին համարել է աշխատանքը, հաջորդ ամսից ձեռնարկում է «Արմատական բառարանի» վերջնական վերամշակմանը, ավելացնելով 1902 թվականից հետո հրատարակված ստուգաբանությունները: 1912 թ. ամռանը նա նորից է մեկնում Պոլիս, ապահովում պայմանավորվածություն ուժի մեջ լինելը, աշնանից էլի թափով աշխատում. «Այսպես ձևացավ 3103 մեծադիր երեսից բաղկացած ստվար մի աշխատություն, որ կնոջ՝ Արուսյակ Աճառյանի ամենագեղեցիկ արտագրությամբ ուղարկեցի Պոլսի պատրիարքարանը տպագրության համար»<sup>38</sup>:

Բայց այս անգամ էլ խանգարում է Առաջին համաշխարհային պատերազմը, որն իր բոցերի մեջ էր առել աշխարհի շատ երկրներ: Բառարան տպագրելու մասին խոսք կարող էր լինել:

Հեղինակն այդ մասին մտածելու առիթ պիտի ունենար մեկ տասնամյակ անց միայն, սովետական պայմաններում:

Պետք է ասել՝ ժողովրդական «չկա չարիք առանց բարիքի» խոսքը վերաբերում է բազմաչարչար այս բառարանին: Նրա հեղինակը՝ տնտեսական կարիքից դրդված՝ շատ էր շտապել այն տպագրություն հանձնել դեռևս 1890-ական թվականների վերջերից. չէ՞ որ նա դեռևս կարինում պաշտոնավարելու օրերին (1895 թ.) ցանկացել էր ներկայացնել մրցանակի, մինչդեռ այդ ժամանակ բառարանը ընդամենը 300 էջից բաղկացած մի նախափորձ էր: 1902 թ. նրա հասնելը 2000 էջի վկայում է, թե որքան հեռանկար ուներ ճոխանալու, մինչդեռ արդեն ներկայացվել էր Տիգրանյան մրցանակի: 1915 թ. բառարանը դարձել էր 3100 էջ: Իսկ երբ հինգերորդ անգամ վերամշակվելուց հետո սկսեց հրատարակությունը, կրկնապատկվել էր նախորդ ծավալը, ավարտվեց 9000 էջով: Անշուշտ նման գործ ինչ որ կետում պետք է համարվեր պատրաստ, բայց տպագրություն ուչացումից եթե նյութապես տուժել է հեղինակը, չահել է բառարանը:



## Զ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐ

Պատերազմը ցնցել էր ամբողջ հայ ժողովրդին: Առաջին ամիսներին յուրահատուկ մի ոգևորություն էր տիրում Կովկասում: Շատերը կարծում էին, թե վերջապես հասել է արևմտահայաստանի ազատագրությունից ժամը: Այդ երազը կապվում էր ռուսական բանակի առաջխաղացման հետ, որի հաղթանակի համար հայ ժողովուրդը չխնայեց ոչ նյութական միջոցներ, ոչ մարդկային կյանք: Ոգևորությունն այնքան մեծ էր, որ հեռավոր Ամերիկայից Կովկաս էին գալիս հարյուրավոր հայ երիտասարդներ, համալրում կամավորական զնդերը: Թիկունքում մնացած մարդիկ օգնում էին ինչով որ կարող էին, որպեսզի ռուսական զորքը չարժվի առաջ:

Նոր-Նախիջևանը համընդհանուր այս շարժումից դուրս չի մնացել: Այնտեղ էլ ամենուր ժողովներ, ճառեր, հանգանակություններ, կամավորական շարժմանն օգնելու միջոցառումներ: «Նոր ազգային կյանք ստեղծվեց համարյա հայությունը կորցրած այդ քաղաքում», - գրում է Աճառյանը:

Եռուզեռի, ուժերի կենտրոնացման այս օրերին Աճառյանին գտնում ենք գիտական աշխատանքը մասամբ ընդհատած, ամբողջովին հասարակական կյանքի տենդով բռնված վիճակում: Մասնակցում է բազմաթիվ միջոցառումների, ռազմաձևակատի համար կատարվող հանգանակություններին, պարբերաբար կազմակերպվող դասախոսություններին: Թեմական դպրոցն այժմ դարձել էր հայրենասիրական զգացմունքների բորբոքման մի հնոց, ամենաչափավոր հայացքների տեր ուսուցիչներն անգամ համակված էին օրվա քաղաքական մտայնությամբ:

Աճառյանին առաջարկվում է կարդալ զեկուցում՝ հայկական հարցի անցած փուլերի մասին: Սիրով համաձայնվում է. նրա զեկուցումը, որ տևել է չորս ժամից ավելի, այնպիսի հաճույքով է լսվել ու ոգևորել հանդիսականներին, որ առաջարկվել է գրի առնել այն և լույս ընծայել գրքույկով: Նա մեծագույն հաճույքով և շատ արագորեն, ընդամենը մի քանի օրում կատարում է պահանջը, հրատարակում «Տաճկահայոց հարցի պատմությունը» խորագրով<sup>39</sup>, վաճառքից ստացվելիք ամբողջ գումարը հատկացնելով կամավորական շարժմանը:

Բայց ճակատագրի քմահաճույքին խաղալիք «Հայկական Հարցը» այդ օրերին էլ չի լուծվում, ավելին՝ մխրճվում է արյան մեջ: Արևմտահայության գրեթե կեսը սպանվում է թուրք ջարդարարների ձեռքով, ազատված մասը տեղահան արված դարավոր օջախից, բռնում է գաղթի ճանապարհը, նաև լցվում Կովկաս:

Հետզհետե լսվում են Մեծ եղեռնի մանրամասնությունները՝ Եփրատի ափերում կատարված, պատմության մեջ աննախադեպ ոճիրների սարսուղղեցիկ դրվագները, լսվում են Հայ մտավորականության ջարդի լուրերը:

Համատարած մի թախիժ պատում է բոլորին:

Աճառյանը փորձում է մեծ վշտի թեթևացման միջոց համարել աշխատանքը, բայց չի ստացվում. այդ տարիների նրա նամակներում երևում է մեծ հայրենասերի հոգեկան փլուզումը, անհույս, անհեռանկար մարդու մորմոքը:

Այդ ծանր օրերին հոգեկան մասնակի թեթևացման առիթ է դառնում Հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանից 1916 թ. աշնանը ստացած մի նամակ: Հայտնվում էր, թե ստեղծվել է Հայկական ընկերություն, որի նպատակն է թիֆլիսում հիմնադրել Հայկական Համալսարան: Թումանյանն առաջարկում է դասախոսական պաշտոն Աճառյանին:

Նա այս հրավերին պատասխանել է 1916 թ. նոյեմբերի 6-ին ընդարձակ մի նամակով, որն ուշագրավ է շատ կողմերից: Նախ իմանում ենք, որ դեռևս պատերազմից առաջ, 1913 թվականին, երբ ստորագրվել էր Հայկական նահանգների բարենորոգումների, մասնակի ինքնավարության համաձայնագիրը, նա ծրագրեր է կազմել մեկնել Վան, իր խնայած միջոցներով բաց անել Հայ լեզվաբանության բարձրագույն դասընթացներ, հավաքել աշակերտներ, սովորեցնել նրանց:

«Եթե հասարակությունը կամ նորակազմ կառավարությունը ինձ օգնական կհասնեն, - գրում է Թումանյանին, - ավելի լավ, իսկ եթե ոչ՝ միևնույնն է, ես կաշխատեի իմ կարողության չափով: Այդ պիտի լիներ, եթե կարելի է ասել, առաջին հայագիտական համալսարանը: ... Իմ մտադրության մասին գրել էի նաև իմ ուսուցիչ Հայագետ Մեյեխին, որ սակայն խորհուրդ տվեց ինձ չչտապել և մի քիչ էլ սպասել, մինչև բարենորոգումների գործադրությունը: Վրա հասավ պատե-

րազմը և ամեն ինչ կերպարանափոխվեց: Այժմ Ձեր նամակը գալիս է վերարձարծելու իմ մտքերը և նրանց գործադրությունների ուրիշ ճանապարհ ցույց տալու»<sup>40</sup>:

Թումանյանի առաջարկած դասընթացն ունենալու էր երեք բաժին – Ա. Հայոց լեզու, Բ. պատմություն, որի մեջ մտնելու էին նաև Հնագիտությունն ու ազգագրությունը, Գ. Հայոց գրականություն:

Աճառյանը Հայտնելով, թե այս երեքից միայն առաջինում կարող է օգտակար լինել, ներկայացնում է ընդարձակ ծրագիր, թվարկելով դասավանդվելիք առարկաները, որոնք էին լինելու Ա. լեզուներ՝ Հունարեն, լատիներեն, սանսկրիտ՝ որպես դասական լեզուներ, Փրանսերեն, գերմաներեն, անգլերեն՝ որպես նոր լեզուներ, զենդերեն, հին պարսկերեն, պահլավերեն, նոր պարսկերեն՝ որպես իրանական լեզուներ. քրդերեն, թուրքերեն, արաբերեն՝ հարևան ժողովուրդների լեզուներ, որոնց ազդեցությունը մեծ է նոր հայերենի վրա, վերջապես՝ Հայ բևեռագրություն: Բ. – Ընդհանուր լեզվաբանություն (համեմատական լեզվաբանություն, ձայնաբանություն, լեզվաբանության պատմություն). Գ. – Հայ լեզվաբանություն (հայերեն համեմատական քերականություն, հայերեն լեզվի պատմություն, բարբառագիտություն, հայ լեզվաբանության պատմություն):

Ինչպես նկատում ենք այս թվարկությունից, նա փաստորեն ներկայացրել է համալսարանական դասընթացի լրիվ ծրագիր, որն ավանդվելու էր երկու տարում:

«Ամեն կերպով և ամեն ձևի տակ ես պատրաստ եմ աշխատելու», – գրում է և անցնելով վարձատրության, ասում է, թե Նոր-Նախիջևանում ինքը Թեմական դպրոցից և մասնավոր դասերից ստանում է ամսական 200 ռուբլի. այդքանով էլ կբավարարվի նոր պաշտոնում:

Թումանյանը նոր նամակներով ավելի է հուսադրում Աճառյանին, որը 1917 թ. օգոստոսի 7-ին Բաքվից գրած նամակում արդեն խոսում է Նոր-Նախիջևանում պաշտոնը թողնելու, նոր ուսումնական տարվա սկզբից Թիֆլիսում լինելու հնարավորության մասին և ասում է, թե անհամբեր սպասում է նրա վերջնական հրավերին:

Թումանյանը պատասխանել է, թե ամեն ինչ լինելու է ծրագրի համապատասխան, թե աշնանը Թիֆլիսում կկայանա



ապագա այդ համալսարանի դասախոսների ընտրությունը, հենց որ ինքն էլ ընտրվեց, իսկույն կիմացնի: Դրանով էլ պարզվում էր, որ համալսարանի բացումը չէր կարող լինել նոր ուսումնական տարվա սկզբին:

Պատասխանելով Թումանյանի նոր նամակին, Աճառյանը գրում է. «Թեև Հայկազյան ընկերության որոշումների մանրամասները չգիտեմ, բայց ցավալի է, որ համալսարանի բացումը հետաձգված է: Քանի՞ տարով: Եթե ուզում եք նոր միայն ուսուցիչներ պատրաստել, նշանակում է պետք է արդեն մի քանի տարի սպասել: ... ուսուցչությունս 25-ամյակի նախօրյակին արված այս առաջարկությունները և առհասարակ Ձեր նամակների տոնը մեծ պատիվ են ինձ: Երանի թե կարող լինեի սպասվածի գոնե կեսի չափ օգտակար լինել»<sup>41</sup>:

1917 թ. նոյեմբերին գրված մի նամակով ավարտվում են բանակցությունները, առանց որևէ արդյունքի: Պարզվում է, որ նախընթաց ամիսներին Աճառյանը նորից է ստացել հուսադրող նամակներ, պատրաստություններ տեսել Նոր-Նախիջևանից հեռանալու, թողել է բնակարանը, ծախել կահույքը, կապտել գրքերը, «Ամառը ես ու կինս անցանք Բաքու, - գրում է նա, - և հույս ունեինք այնտեղից անցնելու Թիֆլիս: Ձեր վերջին նամակը ստացա օգոստոսի կեսին. դա մի այնպիսի վճռական տոնով գրված թուղթ էր, որ քիչ էր մնում բոլորովին հրաժարվելի պաշտոնից և ուղղակի Նախիջևան էլ չգայի: Սակայն բարոյական պարտք համարեցի չանել այդ քայլը և խնդրեցի, որ Հայկ. ընկերությունը՝ դիմելով հոգաբարձություն՝ առաջարկեր՝ արձակել ինձ: ... Մտածելով, թե աշնանը պետք է կանչվիմ, ես կնոջս թողել եմ Բաքու և այժմ այստեղ մենակ, առանց հաստատուն բնակարանի, պանդուխտի պես թափառում եմ այս ու այն խղճուկ սենյակում: ... Գրքերս կապտտած լինելով՝ գրեթե զրկված եմ գրական աշխատանքից»<sup>42</sup>:

Վերահաս քաղաքական իրադարձությունները, ղենիկինյան բանակների շարժումը դեպի հարավ՝ հարկադրում են Աճառյանին թողնել Նոր-Նախիջևանը: Փախուստն այնքան հապճեպ է լինում, որ ձեռագրերի մի մասը՝ այդ թվում տարիների ընթացքում հավաքած վիմագիր արձանագրությունների ժողովածուն՝ «Հայարձանը» հարկադրված է լինում թողնել Նոր-Նախիջևանում:

Աճառյանի և Թումանյանի երազած համալսարանը բացվեց միայն Հայաստանում Սովետական կարգերի հաղթանակից հետո և դարձավ մեծ լեզվաբանի հարազատ հաստատությունը, որտեղ պաշտոնավարեց նա մինչև իր կյանքի վերջին օրը:

Բայց հետևենք դեպքերի ընթացքին: Աճառյանի կինը՝ Արուսյակը, Բաքվում սպասում էր, որ ամուսինը գա և միասին մեկնեն Թիֆլիս՝ նոր պաշտոնատեղին: Ուրեմն պետք էր նախ Բաքու ընկնել:

«Ճանապարհորդությունը շատ դժվար էր, գնացքների երթևեկությունը անկանոն: ... պատահամբ այդ օրը կամավորական մի մեծ խումբ մեկնում էր դեպի Կովկաս: Խմբի մեջ մտել էին մեր վերջին դասարանի աշակերտներից շատերը, նաև նախորդ տարիների չըջանավարտներից նրանք, որ արդեն ռուսական գինվորական ծառայության մեջ էին: Ես էլ միացա նրանց: ... Կամավորները եկան մինչև Արմավիր, ուր միանալով 400 ուրիշ կամավորների, մեկնեցին ծով»<sup>43</sup>:

Այս ճանապարհորդության ընթացքում լսում են, որ Կարինը թուրքերը հետ են գրավել: Լուրը ծանր է ազդում բոլորի վրա: Տարբեր խմբեր տարբեր կողմ են շարժվում: Արմավիրից Աճառյանը անցնում է Ղզլար, մնում երկու շաբաթ, ապա Աստրախանի վրայով հասնում է Բաքու, գտնում կնոջը, միասին փախչում են Էնզելի: «Ազգային մարմինները իրենց արխիվը թուրքերի ձեռքը չթողնելու համար նախապես ուղարկել էին Էնզելի: Ես էլ իմ «Արմատական բառարանը» հանձնել էի նրանց: Բոլոր այդ ձեռագրերը բերել թափել էին հայոց դպրոցի սրահում»:

Նա մեծ հուզմունքով գտնում է «Արմատական բառարանի» ձեռագրերը և ուրախանում այնպես, ինչպես փոթորկոտ այդ օրերին պիտի ուրախանար իր հարազատ որդուն գտնող որևէ մեկը:

Մենք չենք ուզում մանրամասն նկարագրել արկածալից այն ուղին, որ անցել է Աճառյանը Նախիջևանից մինչև Էնզելի, այնտեղից՝ Թեհրան: Հետաքրքրվողները կարող են կարգալ նրա արժեքավոր հիշողություններում:



### է. ԹԵՀՐԱՆՈՒՄ

Աճառյանը ղեռնա էնգելիում էր, որ նրա ծանոթներից Կարապետ Պիոնյանը նամակով հայտնում է, թե Թեհրանում բացվել է «Մնողական» կոչվող մի նոր դպրոց, որի տեսուչ էլ եղել է ինքը: Աճառյանին հրավիրում է այնտեղ պաշտոնավարելու: Այս հրավերի վրա Թեհրան է մեկնում: 1918-1919 թթ. ուսումնական տարում աշխատում է վերոհիշյալ դպրոցում: Դասավանդել է հայոց լեզու, ֆրանսերեն, հաշվապահություն:

1919 թ. ամռանը ծրագրում է վերադառնալ Հայաստան, սակայն Կովկասում տիրող անորոշ վիճակը, քաղաքական իրադարձությունները միառժամանակ հետաձգում են մեկնումը: Բարբառներ ուսումնասիրելու նպատակով մեկնում է Սպահան, ճանապարհին 28 օր մնում նոր Զուղայում, նույն նպատակով:

1919-1920 ուսումնական տարվանից պաշտոնավարել է Թավրիզի հայոց Թեմական դպրոցում:

Բանաստեղծ Գեղամ Սարյանը, որ եղել է այդ դպրոցի

աշակերտ, իր ուշադրավ հիշողություններում գրում է.

«Եվ ահա Թավրիզում և հատկապես աշակերտների մեջ լուր տարածվեց, թե Հրաչյա Աճառյանը հրավիրված է Թավրիզ՝ իբրև դասատու: Աշակերտներից նրանք, ովքեր լսել էին նրա մասին, գիտեին նրա աշխատությունները, պատմում էին մյուսներին, ոմանք էլ տնային ու հասարակական գրադարաններում, հին ու նոր թերթերում ու ամսագրերում նյութեր էին փնտրում նրա մասին, մեծ հետաքրքրություն կարգում և ոգևորություն սպասում էին այդ մեծ մարդուն, սպասում այն ցանկալի օրվան, երբ մեծ գիտնականը կմտնի իրենց դասարանը և իրենք ցնձագին ծափահարություններով կընդունեն նրան.

Եվ այդ օրը եկավ... Եվ ահա այգու մուտքից ներս մտավ նա՝ մեր դպրոցի տեսուչի ուղեկցությամբ: Միջահասակ մի մարդ էր, աշխույժ, գլխին դեղնավուն անգլիական սաղավարտ»<sup>44</sup>:

Սարյանը նկարագրում է, թե որքան ընկերական է եղել Աճառյանի վերաբերմունքը աշակերտների նկատմամբ, որքան օգնող, հոգատար: Այդ տարիներին նրան աշակերտած այլ մարդիկ էլ նույնն են վկայում: Նա դասավանդել է Պոլսի Կենտրոնական վարժարանի մեթոդներով, այսինքն՝ աշակերտի անհատականության կոփումը, նրա արժանապատվության ճանաչումը, աշակերտական ղանցանքների, մեղանչումների ուղղումը ոչ թե բիրտ միջոցներով, այլ համոզելով, բացատրելով:

Նույն այդ հիշողություններից երևում է նաև, որ Աճառյանն այդ տարիներին գտնվել է շատ դյուրագրգիռ վիճակում, ամեն առիթից հուզվող, անգամ լաց լինող, իսկ առիթ՝ ամբողջ շրջապատը, ամենուր գաղթականներ, որբեր, սովահար մարդիկ, աշակերտների թվում՝ ցնցոտիներով երեխաներ, որոնց օգնել է որքան կարողացել է, օգնել է անաղմուկ, թաքուն: Նրա այդ տարիների աշակերտներից մեկը՝ մեր խնդրանքով գրած հիշողություններում պատմում է, որ ոչ միայն սնունդով, գրքով ու տետրերով է օգնել իր աշակերտներին, այլ և փողով, անգամ նրանց համար զգեստ գնելով:

Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, որը կենդանի մնացած մտավորականներից շատերին էլ հասցրել էր խելագարության կամ մտավոր խախտման, ինչպես Աճառյանի ընկերներից

Կոմիտասին, Մ. Շամտանճյանին, Հովհ. Ասպետին, ճնշող ազդեցութիւն էր թողել զգայուն մարդու վրա ժամանակակիցները պատմում են, որ նա ազատ ժամերին կնոջ Հետ թախծոտ նստում էր որևէ ծառի տակ, փորձում մխիթարել իր ընկերուհուն, բայց հաճախ ինքն էր փղձկում, հեկեկում: Հոգեկան ծանր վիճակից դուրս գալու, կատարվածը մոռանալ փորձելու համար դիմում է լարված աշխատանքի: Գաղթականական հոսանքը թավրիղ էր թափել Հայաստանի տարբեր գավառներից եկած հարյուրավոր մարդկանց, որոնք խոսում էին իրենց բարբառով: Աճառյանը լինում է նրանց միջավայրում, զրուցում, ուսումնասիրում գավառաբարբառները, հավաքում նրանց բառապաշարը: Հետազոտում է Մարաղայի, Ագուլիսի, Սալմաստի, Նոր Զուղայի և այլ բարբառներ:

Նրա այդ տարիների գիտական կյանքը այնքան արդյունավետ չի եղել, որքան եղել են նախորդ երկու տասնամյակներում և լինելու էին մանավանդ Հայաստանյան տարիներին: Չի ցանկացել Պարսկաստանում մնալ, մայր հայրենիքը ձգել է նրան ղեպի իրեն, բայց ուշացել է բաղձալի օրը: 1920 թ. նա դիմել է դաշնակների կառավարութեանը, որպեսզի դուրսընթանան ստեղծեն և գա Հայաստան: Դիմումը մնացել է անպատասխան:

Նույն թվականի նոյեմբերի 26-ին Ն. Ակինյանին ուղղած մի նամակում դառնորեն գրում էր. «Ես ալ երկրե երկիր ինկա, ամեն ինչ կողոպտվեցավ. գրադարանս մնաց Ռոստով և չեմ գիտեր, թե ողջ է թե այրած. մինակ ձեռագիր աշխատութիւններս կրցա փախցնել. ուրիշ ամեն բան կորսնցուցի. Տեր ետ, տեր էառ»<sup>45</sup>:

Հայաստանում հաստատվում են սովետական կարգեր: Նոր կառավարութեան առաջին գործերից մեկը լինում է ժողովրդական համալսարանի հիմնումը մայրաքաղաքում: 1920 թ. դեկտեմբերի 28-ին Հայաստանի առաջին լուսժողովոմ Ա. Հովհաննիսյանը ստորագրում է Երևանի ժողովրդական համալսարանի կազմակերպման հրամանը: Չանցած մեկ ամիս, 1921 թ. հունվարի 23-ին տեղի է ունենում Համալսարանի հանդիսավոր բացումը:

Համալսարանի ղեկավար նշանակվում է Հ. Մանանդյանը:

Աճառյանն այս բոլորը լսել է թերթերից, թավրիզում, և անսահման խանդավառովել, որ վերջապես կատարվել է իր երազը, Հայաստանն ունեցել է առաջին Բարձրագույն ուսումնական Հաստատությունը: Նույն թվականի մայիսին նա Հատուկ նամակ է գրում Ալ. Մյասնիկյանին, խնդրում օժանդակել Հայաստան գալու գործում<sup>46</sup>:

Առաջին ուսումնական տարին սկսելով տեղում ապրող դասախոսներով, համալսարանի վարչությունը ծրագրված աշխատանք է կատարում աշխարհի տարբեր վայրերում ապրող կարող ուժերին հրավիրելու ուղղությամբ:

Աճառյանը և Ալ. Թամանյանը ուրախառիթ այդ հրավերը ստանում են 1922 թ. սեպտեմբեր ամսին, այսինքն համալսարանի երկրորդ տարվա պարապմունքները չսկսած:

«Ձեռն մոռացել վերջին օրը,- գրում է Աճառյանի այդ տարիների աշակերտներից Անդրանիկ Դավթյանը,- թավրիզի կայարանը հավաքված՝ ուսուցիչներով և աշակերտներով ճամփու դրինք մեր բոլորի սիրելի Աճառյանին, իր կնոջ հետ: ... Բոլորի հետ ցտեսություն արավ,... Հուզված էր: Վերջին զանգը հնչեց, գնացքը շարժվեց. ես նայում էի գնացքի հետևից այնքան ժամանակ, մինչև որ անցավ բլուրների հետևը»<sup>47</sup>:

## Գլուխ յոթներորդ

### Գ Ի Տ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը 1898 - 1923 Թ Թ .

Հայր Ն. Ակինյանը, որ եղել է Հ. Աճառյանին բարձր գնահատողներից և «Հանդես ամսօրյայի» էջերը լայնորեն բաց է արել նրա առաջ, մեծ լեզվաբանի մահվան առիթով տպագրած մի հոդվածում գրում է. «Աճառյան միայն առանձին ստեղծեց հոյակապ գործեր, տարակույս չկա, թե անոնք լավագույն պայմաններում մեջ ավելի կատարյալ պիտի ըլլային»<sup>1</sup>:

Ակինյանի այս դիտողությունը առավելապես վերաբերում է Աճառյանի նախասովետական տարիների գործերին: Ոչ մի հայագետ այնպիսի ծանր պայմանների մեջ չի աշխատել, որքան նա: Նստակյաց, հանգիստ, գեթ օրվա ապրուստի հոգսից ազատ մի կյանք հնարավորություն կտար նրան ավելի երկար ու ծրագրված աշխատելու որևէ գործի վրա, մշակելու, լրացնելու այն, միաժամանակ ծառայելու միայն լեզվաբանություն, մինչդեռ արտաքին հանգամանքների բերումով այդ քառորդ դարում ինչով ասեք որ չի զբաղվել նա՝ լեզվաբանություն, բանասիրություն, գրականագիտություն, պատմագրություն, հնագիտություն, հրապարակախոսություն, թարգմանություն և այլն:

Բնագավառների այս բազմազանությունն անշուշտ վկայում էր նրա հանրագիտակ իմացություն, մասնավորապես հայ հին մատենագրության ու լեզվի լայն իրազեկություն մասին, սակայն է՛ր կարող բացասաբար չհանդրադառնալ աշխատություններից մի քանիսի գիտական մշակման վրա: Սովետական տարիներին՝ ապահովված ապրուստի պայմաններով, զբաղվեց միայն լեզվաբանությամբ, էլի շատ արտադրեց, բայց չչտապեց, ոչ մի երկ տպագրության չհանձնեց հապճեպ:

Այս բոլորով հանդերձ, ինչ որ կատարել է Աճառյանը 1898-

1923 թվականներին, առասպելական կարող է թվալ մի մարդու համար:

Այս գլխում մեզ զբաղեցնելու են այն աշխատությունները, որոնք ավարտվել են, տպագրվել և որոնց այլևս չի անդրադարձել հեղինակը հետագայում: «Արմատական բառարանի» և այլ նշանավոր երկերի մասին կխոսենք հաջորդ գլուխներում՝ քանի որ տպագրվել են սովետական շրջանում:

Աճառյանի նախասովետական տարիների երկերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ պատմա-բանասիրական երկեր և լեզվաբանական երկեր:

Նախ՝ առաջինի մասին, որը բավականաչափ մեծ տեղ է բռնում այդ տարիների նրա հրատարակություններում:

Ժամանակագրական կարգով առաջին ծավալուն աշխատությունն է «Հայոց նոր վկաները»: Այս գործը Աճառյանը և Մանանդյանը պատրաստել են միասին: Ամենայն իրավամբ կարելի է ասել, որ հայ հին մատենագրություն և ոչ մի նմուշ մինչ այդ լույս չէր տեսել գիտական այնպիսի բժախնդիր ու մանրակրկիտ ստուգմամբ, տարբեր ձեռագրերի համեմատությամբ, ինչպես «Հայոց նոր վկաների» գիտական հրատարակությունը՝ 1903 թ., որը նախորդ տարին էլ լույս էր տեսել առանց վերոհիշյալ համեմատությունների<sup>2</sup>:

Չնայած գիրքը լույս է տեսել Մանանդյանի և Աճառյանի անունով, սակայն աշխատանքի մեծագույն մասը կատարել է Աճառյանը, 734 էջից 541-ը պատկանում է նրան: Մանանդյանը իր առաջաբանում նշում է, թե որքան մեծ է եղել ընկերոջ աշխատակցությունը, թե ինչպես նա, չբավարարվելով էջմիածնում նայված հազարից ավելի ձեռագրերով, նյութեր է բերել տվել Վիեննայից, Կարինից:

Արտաքուստ կարող է թվալ, թե մեծ չէ «Հայոց նոր վկաներ» գրքի արժեքը, մանավանդ մեր օրերում, քանի որ պարունակում է բացառապես կրոնի համար նահատակված մարդկանց կենսագրությունները, հետևաբար՝ գաղափարախոսությունը՝ քրիստոնեության գովաբանությունն է:

Իհարկե այդպես չէ:

Հրատարակողներն ունեցել են միանգամայն այլ ելակետ: Նախ՝ նրանք այդ վկայությունների մի մասը դիտել են որպես միջնադարյան հայ գրականությունն ընդհանուր: Դրանց մեջ կան



Հատվածներ՝ արձակ կամ չափաժող, որոնք գրված են գեղարվեստական շնչով, հուզական են ոչ թե պատմվող դեպքի ողբերգական էությունը, այլ նյութի գեղարվեստական մատուցմամբ, երբեմն հոգեբանական նրբություններով: Հայ միջնադարյան գրականությունն ուսումնասիրողը չի կարող հաշվի չառնել դրանք:

Վերահիշյալ վկայաբանությունները, մյուս կողմից, հարուստ նյութ կարող են տալ մեր պատմաբաններին՝ ժամանակի քաղաքական դեպքերի, մասնավորապես տիրապետող մահմեդական և հպատակ քրիստոնյա ժողովուրդների փոխհարաբերություն մասին:

Լեզվաբան Աճառյանին հետաքրքրել է նաև նրանց լեզուն, որը մնալով հանդերձ գրաբար, կրում է ժամանակի տարբեր գավառների խոսվածքի նկատելի ազդեցությունը և ատաղձ կարող է հանդիսանալ հայ գավառաբարբառների ուսումնասիրման համար: Հենց այդ բանը գիտակցելով է, որ Աճառյանը և Մանանդյանը համեմատել և նշանակել են ձեռագրական բոլոր տարբերությունները: «Լեզվաբան մասնագետները կարող են միանգամայն ապահով լինել, որ մեր տված ձեռագրական տարբերություններն ուրիշ հրատարակությունների սովորական թերություններից և անբարեխղճությունից ազատ են»<sup>3</sup>, - ասված է առաջաբանում: Թե Աճառյանը որքան բառեր է քաղել այդ ձեռագրերից, ստույգ չգիտենք, բայց որ մեծապես օգտվել է դրանցից՝ կասկածից վեր է:

Աճառյանի այդ տարիների բանասիրական աշխատանքի ուրույն մի բնագավառն է տարբեր վայրերի հայ ձեռագրերի ցուցակների կազմումը գիտական նույն հիմունքներով, ինչպես կազմել էր հայր Հ. Տաշյանը Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի ձեռագրերի ցուցակը, որը լույս է տեսել Վիեննայում, 1895 թվականին, հայերեն և գերմաներեն լեզուներով, սովորաժամավալ մի հատորով: Աճառյանը այն ընթերցել էր ամբողջապես, քաղել նյութեր իր բառարանագրական և այլ աշխատությունների համար:

Վերահիշյալ գրքի թարմ տպավորություն տակ է, որ 1895 թ. կազմել էր Կարևո Սանասարյան վարժարանի ձեռագրերի ցուցակը, հրատարակել «Հանդես ամսօրյայում»:

Հետագայում, պաշտոնավարելով տարբեր քաղաքներում,

կազմել էր այդ վայրերում գտնվող հայերեն ձեռագրերի ցուցակները, որոնք բոլորն էլ լույս են տեսել «Հանդես ամսօրյայում»: Այսպես, նույն Հանդեսի 1905-1909 թթ. համարներում շարունակաբար տպագրվել են Թավրիզի Ղալա թաղամասի եկեղեցու մատենադարանում պահված ձեռագրերի ցուցակը՝ «Ցուցակ ձեռագրաց Թավրիզի» խորագրով: Հազիվ թե այն ավարտված՝ «Հանդես ամսօրյայի» 1909 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսվում է «Ցուցակ ձեռագրած Նոր Բայազեդի» շարքը, որը շարունակվել է մինչև 1913 թ.:

Ավելորդ ենք համարում խոսել վերոհիշյալ «ցուցակների» մասին, քանի որ կազմված են նույն ընդունված սկզբունքով: Տրվում է ձեռագրի նկարագրությունը՝ երկի անունը, էջերի քանակը, ձեռագրի մեծությունը, գրությունը (գրի տեսակը, թանաքը, նյութը՝ թուղթ կամ մագաղաթ, կազմը, վիճակը, հիշատակարանները, որոնք հաճախ տրված են մանրամասնորեն և հետաքրքիր տեղեկություններ են պարունակում ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի մասին):

\* \* \*

«Հայոց նոր գրականությունը» որոշակի նպատակով հրատարակ եկած աշխատություն է, կապված իր ուսուցչական գործունեության հետ: Թավրիզում և Նոր Բայազեդում նա հայ գրականություն դասավանդելիս շարադրել է նյութը, մշակել, տվել տպագրության: Մինչ այդ հայ դպրոցը չի ունեցել նման որևէ ձեռնարկ: Լեոյի «Ռուսահայոց գրականությունը», տպագրված նախ «Գեղունիում», ապա առանձին գրքով Վենետիկում, 1903 թ., ուսումնական ձեռնարկ չէր, պատմաբանի կողմից շարադրված հետազոտական աշխատություն էր, այն էլ միայն արևելահայ գրականությունն ընդգրկող:

Իր առաջաբանում Աճառյանը անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Հայոց նոր գրականության մասին թեև մասնական աշխատություններ շատ կան, բայց մի ամբողջական գրվածք չկար մինչև այժմ: Իբրև առաջին փորձ հրատարակում եմ այս հատորը..., որպեսզի ոչինչ ի լրո և հիշողության վրա հիմնված չլինեն, ես հարկ եմ համարել նորից կարգալ

հեղինակների բոլոր գործերը, որոնց ամփոփումը դրել են այստեղ: Շատ հեղինակներ կան, որոնց գործերը անկարելի է գտնել Կովկասում. այսպես են տաճկահայ հեղինակներից շատերը, որոնց անունն անգամ չի մտել այս երկիր. կան և ռուսահայ հեղինակներ, որոնց գործերը գրաքննությունը չի թույլատրել: Երկար ժամանակ ապրած լինելով հայություն գրելիս բոլոր կենտրոններում՝ Տաճկահայաստան, Կովկաս, Պարսկաստան ու Եվրոպա, առիթ են ունեցել տեսնել ու ճանաչել մոտիկից այդ գրվածքները»<sup>4</sup>:

Այս տողերից արդեն երևում է, թե ինչ է եղել նրա նպատակը՝ ընթերցողներին ներկայացնել հայ նոր գրականության լրիվ մի դասընթաց, որն ընդգրկեր մեր գրականության երկու հատվածներն էլ՝ հավասարապես, սակայն հետագայում նա ժամանակ չի ունեցել գլուխ բերելու այդ գործը:

Ներածական ընդարձակ մի գլխից հետո, որտեղ փորձում է մի համառոտ ուրվագիծ գցել Մխիթարյան միաբանության գործունեության և Մխիթարյան հեղինակների վրա, կանգ առնելով նաև լեզվապայքարի վրա, հատուկ գլուխներ է հատկացնում Մխիթարյան մի քանի հեղինակներին, այդ թվում՝ Մխիթար Սեբաստացուն, Արսեն Բագրատունուն, Ղևոնդ Ալիշանին, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյաններին:

Գրքի երկրորդ մասում, որը վերնագրել է «Ոչ Մխիթարյաններ», առանձին գլուխներով խոսում է Գևորգ Դպիրի, Սերովբե Պատկանյանի, Գրիգոր Փեշտիմալճյանի, Հովհան Միրզա Վանանդեցու, Հարություն Ալամդարյանի, Մեսրոպ Թաղիադյանի և Սրապիոն Հեքիմյանի մասին:

Տարիներ անց արդեն Նոր Նախիջևանում աշխատելու շրջանում, նա տեղի «Լույս» պարբերականում տպագրել է մի քանի այլ արևմտահայ գրողների դիմանկարները, ինչպես Նահապետ Ռուսինյանի, Մկրտիչ Պեչիկթաչյանի, Պետրոս Դուրյանի, Հովսեփ Շիշմանյանի և Գրիգոր Օտյանի:

Այս է Աճառյանի «Պատմություն հայոց նոր գրականության» գրքի ընդգրկումը, առաջին մասը՝ 104 էջ, լույս է տեսել 1906 թվականին Վաղարշապատում, Բ մասը՝ Նոր Նախիջևանում 1910 թվին, Գ մասը՝ դարձյալ Նոր Նախիջևանում, 1912 թվականին:

Անշուշտ դժվար է այս գիրքը համարել հայոց նոր գրա-

կանության պատմութեանը վերաբերվող ամբողջական մի ձեռնարկ նախ այն պատճառով, որ ինչպես երևաց մեր թվարկումից, այն ընդգրկում է միայն արևմտահայ հատվածը:

Սկզբունքը եղել է հետևյալը. առաջին մասում խոսել է Մխիթարյանների գրական-մշակութային գործունեության մասին և այն հեղինակների, որոնք գրել են գրաբար: Հետագա մասերը արդեն արևմտահայերենով գրող հեղինակների մասին է:

Անկախ իր թերութիւններից, Աճառյանի «Հայոց նոր գրականութեան պատմութիւնը» մինչև մեր օրերն էլ չի կորցրել իր այժմեականութիւնը: Այդ է վկայում նրա վերահրատարակութիւնը Սփյուռքում, 1939 թվականին:

Ամենից առաջ գիրքը աչքի է ընկնում փաստական շատ հարուստ նյութով, այն էլ Մխիթարյան միաբանութեան այնպիսի գործիչների մասին, որոնք քիչ էին հայտնի, բայց իրենց դերն ունեին մեր գրականութեան պատմութեան մեջ: Դա վերաբերում է ոչ միայն Բագրատունուն, Փեչտիմալճյանին, Հովհան Միրզա Վանանդեցուն, որոնց գրաբար աշխատութիւնները կարդացողների թիվը միայն մատների վրա կարելի էր հաշվել, այլև Սերովբե Պատկանյանին, Սրապիոն Հեքիմյանին, որոնց ստեղծագործութիւնները նույնպես քիչ էին հայտնի արևելահայերին: Այսպես, Աճառյանը ներկայացնում է Արսեն Բագրատունու «Հայկ Դյուցազնի» և Գրիգոր Փեչտիմալճյանի ամենախրթին գրաբարով գրված մի քանի երկերի մանրամասն բովանդակութիւնը, որոնց մինչև այժմ էլ դիմում են մեր բանասերներն ու գրականագետները, որովհետև դժվար է հավատալ, թե այժմ կարող է որևէ մեկն ամբողջութեամբ կարդալ և հասկանալ «Հայկ Դյուցազնը»:

Աճառյանի «Պատմութիւն հայոց նոր գրականութեան» շարունակութիւնը մնացել էր անտիպ նրա ձեռագրերի մեջ ավելի քան 30 տարի և լույս տեսավ «էջմիածին» պարբերականում 1947-1948 թվականներին՝ Մ. Մամուրյանի, Սրվանձտյանցի և ուրիշների դիմանկարները: Մեկ-երկու դիմանկար էլ դեռ ձեռագիր վիճակում պահվում են նրա անտիպ երկերի մեջ: Դրանց բոլորի ի մի հավաքումն ու առանձին հատորով հրատարակելը օգտակար կարող է լինել շատերին:

Աճառոյանի բանասիրական աշխատութիւնների մեջ ուրույն տեղ է գրավում պոլսահայ ժողովրդական բանահայտութեան հավաքումը: Դեռևս Կենտրոնական վարժարանում սովորելու տարիներից նա առանձին տետրի մեջ սկսել էր հավաքել պոլսահայերի մեջ տարածված երգեր, հեքիաթներ, մանրավեպեր, առածներ, ասացվածքներ: Մեր ձեռքի տակ կա շատ ուշագրավ մի փաստաթուղթ, որը վկայում է, որ անգամ Փարիզում սովորելու եռուն տարիներին շարունակել է հավաքել բանահայտական նյութեր: Ակնարկված փաստաթուղթը Աճառոյանի մոր՝ Ընծա Աճառոյանի 1897 թվին Պոլսից Փարիզ՝ որդուն ուղարկված նամակն է, որից պարզվում է, որ Աճառոյանը նրանից խնդրել է ժողովրդական սովորութիւնների հետ կապված նյութեր: Եվ ահա մայրը, փոխանակ իրենց մասին մանրամասն տեղեկութիւն տալու, երեք էջ ամբողջ հատկացրել է նման սովորութիւնների, խոսել ասենք մեռելիկոխի մասին, պատմելով, թե ինչպես են բուժում նման դեպքում, ինչ աղոթքներ են արտասանվում, ծիսակատարութիւնները ինչպիսին են և այլն<sup>5</sup>:

Ըստ երևույթին Աճառոյանի նպատակն էր Եվրոպայից վերադառնալ Պոլիս և շարունակել նման նյութերի հավաքումը, բայց դեպքերի բերումով եկել էր Կովկաս: Այստեղ արդեն քիչ բան կարող էր հավաքել: Խնդրել էր քրոջը նույնպես, որն իր հետ Պոլսից բերել էր բավականաչափ նյութ: Առանց սպասելու, հետագայում հարստացնելու այդ շատ կարևոր ժողովածուն, դժբախտաբար նա շտապում է հրատարակութեան տալ արդեն հավաքվածը:

1902 թ. Երվանդ Լալայանի «Աղգագրական հանդեսում» լույս է տեսնում Աճառոյանի և քրոջ՝ Արմենուհու հավաքած նյութերը «Հավաքածո պոլսահայ ռամկական անգիր գրականութեան» խորագրով: Առաջաբանում հեղինակը հայտնում է, որ ժողովածուի նյութերը սկսել է հավաքել 1890 թվականից, հիմնականում իր ընտանիքի անդամների միջոցով և արդարև, նրա պատրաստմանը մասնակցել են ոչ միայն Արմենուհին, այլև վաղամեռիկ Հայկ եղբայրը և Ընծա մայրը, անշուշտ

պատմելով, քանի որ վերջինս եղել է անգրագետ:

«Ազգագրական Հանդեսում» լույս տեսած ժողովածուն պարունակում է ա. ավանդական աղոթքներ, բ. ժողովրդական երգեր և օրորներ, գ. մանկական խաղեր, դ. զվարճալիքներ, ե. շուտասելուկներ, զ. հանգավոր խոսքեր, է. զվարճալի հեգաբան, ը. հանելուկներ, առածներ և առակավոր ասացվածքներ, երգումներ, օրենքներ և բարեմաղթություններ, անեծքներ և հանդիմանություններ:

Ինչպես հեշտությունը կարելի է նկատել, այստեղ չկա և ոչ մի հեքիաթ մինչդեռ հեղինակը խոսում է իր առաջաբանում բազմաթիվ հեքիաթների մասին: Բանն այն է, որ Աճառյանը Լալայանին էր հանձնել ավելի շատ նյութ, քան տպագրված է: Լալայանը պարզապես դուրս է թողել ամբողջ արձակը, հետագայում հրատարակելու խոստումով, բայց գծովելով Աճառյանի հետ, այլևս չի անդրադարձել դրան և նյութը վերադարձրել է հեղինակին, և այդպես՝ Պոլսի անգիր գրակա-նություն ժողովածուն մնում է անտիպ մինչև մեր օրերը:

Անկախ այն դրդապատճառից, որով Լալայանը դուրս է թողել հեքիաթները, ժողովածուն ինքնին հիմնականում գրի առնված լինելով մի ընտանիքի պատերից ներս, շատ թերի էր և չէր կարող հավակնություն ունենալ Պոլսի նման մի խոշոր հայկական կենտրոնի ժողովրդական բանահյուսությունը ներկայացնելու:

Աճառյանը, որն այլ հարցերում այնքան մանրակրկիտու-թյուն էր հանդես բերում, չէր կարող իր ծննդավայրի բա-նահյուսությունն անկատմամբ այդքան անտարբեր լինել: Պար-զապես Կովկասի պայմաններում հնարավորություն չի ունեցել պոլսահայ միջին և ստորին խավի հետ չփոխելու և նյութեր քաղելու: Ինքն էլ չի հավանել իր այդ գործը, այլապես կհրատարակեր որևէ ձևով:

Իր բարբառագիտական մյուս աշխատություններում բանա-հյուսական նյութերին բավականաչափ ընդարձակ տեղ տվող Աճառյանը 1941 թ., երբ լույս ընծայեց «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատությունը, վերջում պոլսահայ բարբառից բերեց աննշան նմուշներ միայն, ընդամենը երկու էջ, այն էլ ոչ թե իր կողմից գրի առնված նյութեր, այլ Հ. Պարոնյանի «Ծիծաղից»:

Անկախ պոլսահայ խոսվածքից օգտվելու այս սահմանափակությունից, նա տարիների ընթացքում նկատելի դեր է կատարել տարբեր գավառների ժողովրդական անգիր բանահյուսությունից հավաքման ուղղությունը: Զանազան գավառաբարբառներով նրա գրի առած նման նյութերից, որոնք զետեղված են բարբառագիտական համապատասխան աշխատությունների վերջում, կարելի է ստեղծել գողտրիկ մի ժողովածու:

\* \* \*

Աճառյանի այդ տարիների բանասիրական աշխատությունների մեջ կարևոր տեղ է բռնում Եզնիկի նրա կողմից հայտնաբերված ձեռագրի մանրակրկիտ քննությունը: Արդեն ասել ենք, որ դեռևս 1902 թ. էջմիածնի ձեռագրերը նայելիս հայտնաբերել էր Եզնիկ Կողբացու միակ ձեռագիրը, որի վրայից կատարվել էին Զմյուռնիայի, հետագայում Վենետիկի և այլ բոլոր հրատարակությունները, բայց ձեռագիրը համարվում էր Զմյուռնիայի հրդեհի ժամանակ այրված:

Աճառյանը այնքան է խանդավառվել իր այս գյուտով, որ իսկույն, նույն օրերին, հայտնել է Վիեննայի Մխիթարյաններին: «Հանդես ամսօրյան» 1902 թվի հունիսի համարում ընթերցողներին իմացնելով լուրը, նշել է. «Կըրնա երևակայվիլ, թե բանասերներն ինչպիսի հետաքրքրություններ ասոնց վաղընփույթ հրատարակման կսպասեն, որոնք շատ մը խնդրական խնդիրներու լուծումը պիտի տան»<sup>6</sup>:

Եզնիկի նորագյուտ ձեռագրի քննությունը, կատարված Աճառյանի և Գալուստ Տեր-Մկրտչյանի կողմից, նախ լույս է տեսնում «Հանդես ամսօրյայի» 1904 թ. փետրվար-օգոստոս համարներում, ապա առանձին գրքով որպես «Աղգային մատենաշարի» հատորներից մեկը:

Աշխատությունը բաղկացած էր վեց գլուխներից:

Ա գլխում տրվում է ձեռագրի մանրամասն նկարագրությունը, Բ գլխում խոսվում է ընդհանուր տարբերությունների մասին, Գ գլխում՝ ձեռագրական տարբերությունների մասին, Զ գլխում՝ Եզնիկի ձեռագրի կորած հատվածների մասին:

Եզնիկի վերոհիշյալ ձեռագրի քննության ամենից արժեքավոր մասերն են Դ և Ե գլուխները, որտեղ Աճառյանը հան-

դես է գալիս որպես լեզվաբան, ստուգաբանող:

Նա բացի Հարյուրավոր մանր տարբերություններից, որ նկատել է էջմիածնի Համար 1111 ձեռագրի և տպագիր օրինակի միջև, հատուկ քննություն է ենթարկում 11 բառ կամ արտահայտություն, որոնք սխալ են տպագրված եղել բոլոր հրատարակություններում: Դրանցից մի քանիսը մանավանդ ներկայացնում են բացառիկ հետաքրքրություն: Բերենք երկուսը:

Աճառյանը նկատել է, որ Եզնիկի ամբողջ ձեռագրում **ապստամբ** բառը գործածվել է ընդամենը 7 անգամ, յոթն էլ **ապաստամբ** ձևով և եկել է այն եզրակացություն, որ ոչ թե սխալ արտագրության հետևանք է ա-ի հավելումը, այլ այդ բառի նախնական ձևը եղել է **ապաստամբ** և հետագայում է, որ ա-ն սղվել է և մեր մատենագրության մեջ մուտք գործել որպես **ապստամբ**: Իր տեսակետը նա հիմնավորում է տալով **ապստամբ** բառի գիտական ստուգաբանությունը, թե այդ բառը կազմված է պհլ. apastamb ձևից, կազմված apa- մասնիկով և stamb արմատից: Այս ստուգաբանությունը մուտք է գործել նրա «Արմատական բառարանը»:

Ավելի կարևոր է Եզնիկի օգտագործած մի այլ բառի վերականգնումը: «Եղծ աղանդոցի» բոլոր հրատարակություններում տպագրվել էր այսպիսի մի նախադասություն. «Քանզի յորժամ մեք ասեմք թե սիք շնչէ, **ասորնեայք** ասեն այս շնչէ»: **Ասորնեայք** բառն էլ սխալ կերպով հասկացվել է ասորիներ: Աճառյանը նկատել է, որ ձեռագրում ոչ թե **ասորնեայք** է այլ՝ **ստորնեայք**: Նա սրբագրում է սխալը և դրանից հանում մեր բարբառագիտության համար մեծ կարևորություն ունեցող եզրակացություն, թե դեռևս 5-րդ դարում Հայաստանում գոյություն է ունեցել երկու բարբառ, մեկը վերին բարբառ, մյուսը՝ ստորին, այլ խոսքով՝ հյուսիսային հայոց և հարավային հայոց բարբառներ: «Եզնիկա այս բաժանումը, - գրում է նա, - կը համապատասխանե ճիշտ մեր այժմյան վիճակին, ինչ որ հոն վերին կըսվի, մեր այժմյան արևելյան կամ ուսահայոց բարբառն է, իսկ ինչ որ ստորին կըսվի՝ այժմ արևմտյան կամ տաճկահայոց բարբառն է»<sup>7</sup>: Աճառյանը հետագայում այս բնութագրումն օգտագործել է տարբեր առիթներով, նաև «Հայոց լեզվի պատմության» Բ. հատորում:



Աճառյանի այս շրջանի բանասիրական աշխատությունների մեջ իր ծավալով և առաջադրված հարցերի բազմակողմանի ու խորապես գիտական քննությունը բացառիկ արժեք է ներկայացնում «Հայոց գրերը», որ նախ լույս է տեսել «Հանդես ամսօրյայում», հետագայում առանձին գրքով, որպես Վիեննայի Մխիթարյանների «Ազգային Մատենադարանի» կթ (69-րդ) հատոր: Լեզվաբանին նվիրված աշխատություններում այս գրքի մասին կան սեղմ հիշատակություններ միայն, առանց գեթ բովանդակության ծանոթացման: Եվ դա հասկանալի է. «Արմատական բառարանի», «Հայոց լեզվի պատմության», «Հայոց լեզվի լիակատար քերականության» նման կոթողային աշխատությունները, առհասարակ լեզվաբան Աճառյանի փայլը ստվերի մեջ է պահել բանասիրական այս հետազոտությունը, մինչդեռ այն տվյալ ժամանակաշրջանի հայագիտության բարձրակետում կանգնած գործ է հայերեն գրերի ծագման, այլ ժողովուրդների գրերի հետ նրանց ունեցած հարակցության, մեր տառերի հնչյունային և այլ կարգի առանձնահատկությունների մասին: Պատահական չպետք է համարել, որ դեռևս ձեռագիր վիճակում, 1905 թ. աշխատությունն արժանացել էր Լազարյան ճեմարանի կողմից հայտարարված Քանանյան մրցանակի:

«Հայոց գրերի» ամենամեծ արժանիքը լայն ու ամբողջական ընդգրկումն է. ոչ նրանից առաջ ոչ էլ նրանից հետո՝ մինչև մեր օրերը հայոց գրերի ծագման հարցը չի քննարկվել այնքան բազմակողմանիորեն, նյութի ամենախոր իմացությունը, համոզիչ ու կուռ փաստարկումներով, որքան այս գրքում: Այն մի տեսակ ամփոփումը հանդիսացավ մամուլում և առանձին գրքերով երկար տասնամյակներ բորբոքված վեճի, որին մասնակցողների թիվը՝ հայ և օտար, կարող է հասնել մի քանի տասնյակի: Գրքի առաջին մի քանի գլուխները պատասխանն էին առաջադրված կարծիքների, և հաստատումը, թե հայերը 5-րդ դարից առաջ չեն ունեցել գիր ու գրականություն, և որ չպետք է գայթակղվել ոչ գրաբարի մշակված լեզու լինելու փաստով, և ոչ էլ մանավանդ մեր մատենագրությունից վերցված որոշ արտահայտություններով, որոնց սխալ մեկնաբանությունն է առիթ տվել թյուրիմացությունների, հիմք դարձել Իս. Հարությունյանի, Ն. Տաղավարյանի և այլ

բանասերների համար: Հայ բանավեճային գրականության ամենափայլուն էջերը կարող են համարվել «Հայոց գրերի» այն գլուխները, որոնցում հեղինակը հերքում է վերոհիշյալ բանասերների սխալ, պարզունակ տեսակետները, հանգելով հետևյալ եզրակացություն «Հայերը նախքան Մեսրոպ գրականություն ունեցած չեն, եղած է միայն բանավոր գրականություն, որուն հատակոտորներն են վիպասանական երգերը... Մեսրոպեն առաջ հայերեն գրականություն ղնելը, որ իբր թե ջնջեց Լուսավորիչ՝ այրելով բոլոր հայերեն գրքերը, անմիտ հեքիաթ մ'է միայն» և որ բերված բոլոր փաստերը «անապացույց ենթադրություններ են, հիմնված պատմիչներու ավելի անապացույց ենթադրությանց վրա» և վերջապես «Դանիելյան գրերը հայերեն չէին և Հայոցմե երբեք գործածված ալ չէին»<sup>8</sup>: Նրա անառարկելի փաստարկումներից մեկն էլ այն է, թե մինչդեռ մեզ հասել են հեթանոսական դարերից եկող ասորեստանյան, ուրարտական և այլ բևեռագրական կամ հունարեն, լատիներեն բազմաթիվ արձանագրություններ, հայերեն չի հասել և ոչ մի բեկոր՝ թեկուզ օտար գրերով:

Անցած հիսնամյակի պեղումները, բազմապիսի պրպտումները հաստատեցին Աճառյանի համարձակ դիրքորոշումը, մերժեցին զգացմունքային խթանումով հրապարակ նետված տեսակետները: Այս առումով՝ «Հայոց գրերը» պատասխանն էր ոչ միայն մինչ այդ իշխող սխալ մտայնության, - որը այդ գրքի լույս ընծայումից հետո երկար տասնամյակներ կենդանության նշան ցույց չտվեց, - այլև պատասխանն է մեր օրերում որոշ բանասերների կողմից նորից հրապարակ նետված նույն սխալ տեսակետի, առանց ամենափոքր նոր տվյալների: Նման տեսակետների հերքման համար միշտ պետք է դիմել «Հայոց գրերի» 1910-1911 թվականներին տպված հատվածներին:

«Հայոց գրերը» աշխատության երեք քառորդը հատկացված է մեր այբուբենի ստեղծմանը: Բանասիրական մանրակրկիտ վերլուծության ենթարկելով պատմիչների վկայությունները հայերեն տառերի ստեղծման շարժառիթների, ընթացքի, տառերի թվի, անջատական և կցական այբուբենների տարբերության, հայերենի անջատական լինելու առանձնահատկությունների, ձայնավորների դերի, տարբեր այբուբեններից Մեսրոպ Մաշտոցի օգտվելու և այլ հարակից հարցերի

մասին, Աճառյանն անցնում է հայերեն գրերի համեմատութեանը օտար այբուբենների հետ, տառ առ տառ բաղդատելով մեր այբուբենը մյուս ժողովուրդների գրերի հետ: Գրանք այնքան ընդարձակորեն են տրված, որ յուրաքանչյուր տառի համեմատությունը կարելի է համարել առանձին մի ուսումնասիրություն: Այս բաժնում ի հայտ է եկել հեղինակի բացառիկ իրազեկությունը հնագույն բոլոր տառերի ոչ միայն արտաքին ձևական կողմին, այլև տվյալ լեզվում նրա ունեցած հնչյունական դերին, տարբեր ժողովուրդների գրի արվեստի առանձնահատկություններին:

Այս բաժնում էլ նա բանավիճում է տասնյակ բանասերների հետ (Մենեվիչյան, Սարգսյան, Մալխասյան, Փառնակ, Մարկվարտ, Իս. Հարությունյան, Ն. Տաղավարյան, Մյուլլեր և այլն): Ընդունում է սրամիտ ու ճիշտ որոշ առաջարկներ, բայց դժվար չէ նկատել, որ փաստարկումներով ավելի հարուստ են ու տրամաբանական իր հիմնավորումները, որոնց մոտ մանավանդ Տաղավարյանի ու Իս. Հարությունյանի տեսակետները - երկուսն էլ այնքան քիչ տեղյակ հին աշխարհի տառարվեստին ու առհասարակ մշակույթին - շատ են պարզունակ ու սխալ:

Աճառյանի եզրակացությունն այն է, որ Մաշտոցը ոչ թե իր ձեռքի տակ ունեցել է այբուբենի որևէ տախտակ և այն լրացնելով հարմարեցրել է մեր լեզվին, այլ ստեղծել է հայոց այբուբենը՝ օգտվելով հունարեն, պարսկերեն, ասորերեն տառերից, հաշվի առնելով հայոց լեզվի հնչյունային առանձնահատկությունները:

Նվազ արժեքավոր չեն «Հայոց գրերը» գրքի վերջին մի քանի գլուխները՝ «Մեսրոպյան գրերու դասավորությունը», «Գրերու անունները», «Մեսրոպյան գրերու հնչումը կամ արժեքը», «Մեսրոպյան գրերու տեսակները և զարգացումը»: Այս բոլոր հարցերը նա քննություն է առնում նույն սկզբունքով, ինչ նախորդ գլուխներում արծարծված հարցերը, այսինքն՝ տարբեր լեզուների համեմատությունամբ, ներքին օրինաչափության բացահայտմամբ: Շատ ուշագրավ են «Օտար լեզվե տառադարձված բառերը հայերենի մեջ» և «Հայերենի տառադարձված բառերը օտար լեզուներու մեջ» ենթագլուխները:

Մենք ընդհանուր գծերով ներկայացրինք «Հայոց գրերը»

մեծարժեք հետազոտությունը, որը մինչև այժմ էլ,- երբ մանավանդ բեռագրություն ուսումնասիրությունը գտնվում է իր զարգացման նոր փուլի մեջ,- չի կորցրել իր արժեքը և դեռ երկար տասնամյակներ առատ նյութ կարող է տալ հայոց գրերի ծագումն ուսումնասիրողներին, թեև դժվարանում ենք հավատալ, թե մի ուրիշը կարող է այդ հարցը քննել այնքան բազմակողմանի իմացությամբ, ինչպես արել է Աճառյանը:

Ոստեցիք բանասիրական այն աշխատությունների մասին, որոնք լույս են տեսել առանձին գրքերով, բայց դժվար է համոզվել, որ Եղնիկի՝ մեր հիշատակած «ստորնեայք» բառի ստուգաբանությունն ու վերականգնումը հայագիտության համար շատ ավելի մեծ արժեք ունի, քան ասենք երկամյա տքնաջան աշխատաքի արդյունք «Հայոց վկաները», կամ՝ ասենք առանձին գրքով լույս տեսած «Տաճկահայոց հարցի պատմությունը», որին կարիք էլ չեղավ անդրադառնալու:

Հայ և օտար պարբերականներում (Փրանսերեն, գերմաներեն, ռուսերեն) լույս են տեսել Աճառյանի մի քանի տասնյակ հոդվածները, գրախոսությունները, որոնք պարունակում են ուշագրավ շատ հայտնագործություններ, բառերի ստուգաբանություններ, տեքստաբանական սրբագրություններ և այլն. դրանց մի մասը հետագայում օգտագործվել է հեղինակի ծավալուն աշխատություններում, մասնավորապես «Արմատական բառարանում» և «Հայոց լեզվի պատմությունում», սակայն շատ արժեքավոր դիտողություններ, առաջարկներ, գնահատումներ, այնպես էլ մնացել են «Հանդես ամսօրյայի», «Բազմավեպի», «Արարատի», «Բանասերի», BSL-ի և այլ գիտական հանդեսների էջերում և սպասում են հոգատար մի ձեռքի, որպեսզի ամփոփվեն հատուկ ժողովածուի մեջ:

Եթե «Մանիսացիներն իբրև գաղթական Ուարբերդի», «Պալաթու ս. Հրեշտակապետ եկեղեցին», «Մծբնա ս. Հակոբը Մասիսի քրդերուն մոտ» և այլ այս կարգի հոդվածներ շատ բան չեն ավելացնում Աճառյանի գիտական ժառանգության վրա, ապա «Հայոց ծագումը և նախապատմական շրջանները»<sup>9</sup>, «Հայ լեզվաբանությունն անցյալն ու ներկան»<sup>10</sup> և այլ նման հոդվածներ ցույց են տալիս, թե դեռևս այդ տարիներին նա որքան հստակ կերպով ձևակերպել է իր հետևած լեզվաբանության, այսինքն՝ հնդեվրոպական ուղղության սկզբունքներին:

Համառոտակի կանգ առնենք դրանցից մեկի՝ «Ոստանում» տպագրված հոդվածի վրա:

Այդ հոդվածում Աճառյանը սեղմ գծերով ներկայացնում է Հայոց լեզվի ուսումնասիրման ընթացքը հնագույն դարերից մինչև մեր օրերը:

Առաջին շրջանը համարում է 5-13-րդ դարերը, երբ հայ պատմագիրները կատարել են փորձեր՝ հայերեն այս կամ այն բառը ստուգաբանելու, այլ լեզուների բառերի հետ համեմատելու ուղղությամբ:

Երկրորդ շրջանը 14-րդ դարից երևան եկած այն տեսությունն է, որի կողմնակիցները՝ հենվելով Նոյի տապանի Արարատ սարի վրա կանգ առնելու ավանդության վրա, հայերենը համարում էին մարդկության նախալեզու, գտնում, որ երկրագնդի վրա երևացող առաջին մարդիկ խոսել են հայերեն: Այս տեսության կողմնակիցները Մխիթարյան Միաբանության հին սերնդի որոշ ներկայացուցիչներն էին (հայր Ղ. Ինճիճյան և ուրիշներ), օտարներից Շրոյդերը: Միանգամայն հակադիտական և ծիծաղելի համարելով այդ կարծիքը, նա դարմանում է, որ «հայերենը նախալեզու համարելու դրությունը միայն միջնադարյան վարդապետներու տարտամ մասնագիտությունը չմնաց, այլ հասավ մինչև նոր ժամանակները»<sup>11</sup>:

Հայ լեզվաբանության երրորդ դպրոցը համարում է 19-րդ դարի սկզբներից հանդես եկած այն տեսությունը, թե հայերենը իրանական լեզու է, այսինքն՝ հնդեվրոպական լեզվախմբի քույր լեզուներից արիական ճյուղի մի զավակը: Արիական ճյուղի մեջ մտնում էին հնդկերենը, ղենդերենը, պարսկերենը, պահլավերենը, նոր պարսկերենը, ավղաներենը, պելուճերենը, օսեթերենը, քրդերենը և հայերենը:

Հայ լեզվաբանության չորրորդ դպրոցը համարում է այն տեսությունը, որի համաձայն հայերենը անկախ հնդեվրոպական լեզու է: Այս այն դպրոցն էր, որին հարում էր ինքը: «Հյուսիսային հասավ այն եզրակացության,- գրում է նա,- թե հայերենը արիական ճյուղին մեկ զավակը չէ, այլ անկե անկախ, անոր համապատիվ քույր լեզու մըն է, առանձին ճյուղ մը»<sup>12</sup>:

Նա հայ լեզվաբանության հինգերորդ դպրոցը համարում է Հյունքյարպեյնտյանի թուրանական տեսությունը, վեցե-

րորդը՝ Ս. Թագվորյանի տառական դրույթունը, յոթերորդը՝ Ն. Յա. Մառի Հարեթարանությունը, որոնք երեքն էլ մերժում է, համարում հակազիտական, իսկ դրանցից Թագվորյանինը՝ «հիմարական վարդապետություն, որ իբր անհամ սրախոսություն միայն կարելի էր լսել, իր հեղինակեն դուրս հետևող մը ունեցած չէ»<sup>13</sup>:

Այս յոթը դպրոցներից վեցն ունեցել են իրենց քիչ թե չատ կողմնակիցները, հետևորդները, պիտի դարմանալ, թե ինչու էր նա «լեզվական դպրոց» համարել Թագվորյանի տեսությունը, քանի որ չէր ունեցել ոչ մի հետևորդ:

Հայ և օտար գիտական մամուլում Աճառյանը հրատարակել է բազմաթիվ հոդվածներ՝ Մեյեի, Մառի, Պետերսենի, Ֆ. Կ. Գրայֆենհորսթի, Մաքսուտյանի, Ամատունու և այլոց լեզվաբանական աշխատությունների մասին: Դրանցից մի քանիսը այս կամ այն գիրքը ներկայացնող սովորական գրախոսություններ են, բայց մեծ մասը արժարժում են գիտական լուրջ հարցեր, պարունակում արժեքավոր դիտողություններ:

Այդպիսին է, օրինակ, Ֆ. Կ. Գրայֆենհորսթի «Studien zum Armenisch-Turkischen» հետազոտությանը նվիրված գրախոսությունը, որը տպագրվել է Փարիզի լեզվաբանական ընկերության տեղեկագրում:

Ֆ. Կ. Գրայֆենհորսթը, ուսումնասիրելով հայատառ թուրքերեն գրականության լեզուն, նույն թվականին հրատարակած իր մի աշխատությունում հանգել էր այն սխալ տեսակետին, թե հայերի կողմից օգտագործվող այդ լեզուն թուրքերենի մի բարբառն է, որն ունի առանձին բառեր, քերականական կանոններ, որոնք իբր թե չկան բուն թուրքերենում, և թե այն պետք է կոչել հայաթուրք բարբառ:

Աճառյանն իր գրախոսությունում համոզիչ փաստերով ցույց տալով, որ գերմանացի գիտնականի սայթաքումն առաջացել է թուրքերենի չիմացությունից, ապացուցում է, թե դա նույն թուրքերենն է, որ խոսում են թուրքերը, թե տարբերությունը միայն ազգային կամ կրոնական բովանդակություն ունեցող որոշ բառերի օգտագործումն է: Գրայֆենհորսթը սխալ է տառադարձել թուրքերեն բառերը, սխալ ընթերցել, հանել այդպիսի արտառոց եզրակացություն:

Մեյեի ջերմ հավանությանը արժանացած այս հոդվածը

չնայած ոճի խստութեանը, հումորին, այնքան ճիշտ էր ու խորապես գիտական, որ գերմանացի գիտնականը չի համարձակվել մամուլում հանդես գալ և պաշտպանել իր տեսակետները:

\* \* \*

Այժմ համառոտակի խոսենք Աճառյանի նախասովետական տարիների բարբառագիտական և բառարանական աշխատությունների մասին: Գրանցից ամենակարևորին՝ «Արմատական բառարանին» անդրադառնալու ենք հետագայում: Առանձին բարբառների ուսումնասիրությունը նվիրված աշխատություններից մի քանիսի մասին նույնպես կխոսվի հաջորդ գլուխներում, քանի որ դրանք մեծ մասամբ լույս են տեսել սովետական տարիներին:

Ուզում ենք ծանոթացնել «Թուրքերենի փոխառյալ բառերը», «Գավառական բառարանը» և «Համակարգություն հայ բարբառագիտություն» աշխատությունը:

Ինչպես ասել ենք իր տեղում՝ Աճառյանը հայ բարբառների ուսումնասիրությամբ զբաղվել էր դեռևս ուսանողական տարիներից, հրատարակել էր հետազոտություններ Ասլանբեկի, Սուչովայի, Ղարաբաղի բարբառների մասին. դրանք եվրոպացի գիտնականների կողմից բարձր գնահատվեցին, սակայն քննադատվեցին հայ բանասերների կողմից: Վերջիններս, ամենևին չնսեմացնելով Աճառյանի լեզվաբանական հետազոտությունների, այդ թվում բարբառագիտական երկերի արժեքը, գտնում էին, որ բարբառների ուսումնասիրության առաջին նախապայմաններից մեկը պետք է լինի լայն շփումը տվյալ բարբառով խոսող ժողովրդի հետ, որևէ երևույթի բազմակի ստուգումը տարբեր մարդկանցից: Առաջին տարիներին լեզվաբանի թափառական կյանքը նրան զրկել էր նման հնարավորությունից. նա ուսումնասիրել էր այս կամ այն բարբառը մի քանի հոգու, հաճախ մեկ հոգու հետ զրույց ունենալով: Այսպես Ասլանբեկի, Սուչովայի բարբառի նյութերը հավաքելիս նրա հիմնական աղբյուրը եղել էին Փարիզում կամ էջմիածնում սովորող մի քանի ուսանողներ: Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությունն էլ նա շտապել էր տպագրել նախքան Ղարաբաղում լինելը, վերջապես՝ հրատարակել էր

գերմաներեն հոդված՝ Վանի բարբառի մասին:

Մ. Սերոբյանը «Բյուրականում» ցույց տալով, թե որքան սխալներ կան Ասլանբեկի բարբառին նվիրված երկում, եզրակացրել էր, թե Աճառյանի ուսումնասիրությունը արժանի էր այն գովեստներին, որ շոյվվել էին օտարների կողմից:

Ակնարկը վերաբերում էր Մեյեի և այլոց ղրական կարծիքին:

Սերոբյանի հոդվածը պարունակում էր նաև անձնական վիրավորանքներ, որոնք որոշ չափով թուլացնում էին գիտական խոսքի ուժը, բայց երբ «Հանդես ամսօրյան» էլ զգուշացրեց հետազոտման նման մեթոդից, Վանի բարբառին նվիրված վերոհիշյալ գերմաներեն հոդվածի առիթով գտնելով, թե արդյունքը շատ ավելի անկասկածելի պիտի լիներ, եթե հեղինակն իր քննությունները «Բուն իսկ տեղվույն վրա կատարեր»<sup>14</sup>, - Այս բոլորից լեզվաբանը հանեց լուրջ եզրակացություն: Դրանից հետո շարունակեց հանգամանորեն ուսումնասիրել հայ բարբառները, որոնք հնարավորություն տվին հայտնաբերելու ներքին օրինաչափությունները. գրեց «Համակարգությունը», բայց խուսափեց առանձին բարբառների մասին գրած իր հետազոտությունները հրատարակելուց, մինչև որ տեղերում, Մարաղայինը՝ Մարաղայում, Ագուլխսինը՝ Ագուլխում, Ջուղայինը՝ Ջուղայում, Համչենինը՝ Գագրայում մանրամասն չստուգեց ու չլրացրեց: Իսկ այն վայրերում, որ հնարավորություն չունեցավ լինելու, ինչպես Վանի բարբառը, նա ստուգեց ու ճշտեց բարբառը լավ իմացող տասնյակ մարդկանց միջոցով:

Նույն այդ բարբառների ուսումնասիրության արդյունք էր «Գավառական բառարանի» հրապարակ գալը, քանի որ ամեն մի բարբառի հետազոտման ընթացքում նա հավաքել էր տվյալ բարբառի բառերը: Ի վերջո դարձյալ այս աշխատանքի հետ է կապվում «Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ» գիրքը, քանի որ այն էլ պոլսահայ բարբառի հետ է առնչվում:

Ժամանակագրական կարգով առաջինը հենց «Թուրքերենն փոխառյալ բառեր» աշխատությունն է:

Անկախ այն հանգամանքից, թե որքան կարճ ժամանակամիջոցում է գրվել ու պատրաստվել, այս գիրքը լուրջ ներդրում էր հայ բառարանագրություն մեջ և լրացնում էր



խոշոր բաց: Բանն այն էր, որ չնայած պարսկերենից հետո հայերեն լեզուն ամենից շատ փոխառություններ կատարել էր թուրքերենից՝ արդյունք երկու ժողովուրդների 400-ամյա համակեցությունն ու թուրքերի տիրապետության, մինչ այդ չէր ուսումնասիրվել այդ ազդեցությունը: Մինչդեռ դա ուներ գործնական նշանակություն, որովհետև հայ ժողովրդի մի մեծ հատվածի գրականությունը զարգանում էր թուրքիայի պայմաններում և հակառակ հայ գրողների բոլոր ջանքերին, գրականության մեջ սպրդում էին թուրքերեն բազմաթիվ բառեր, շարահյուսական ազդեցություններ:

1900 թ. հունվարի 25-ին Գր. Խալաթյանին ուղարկած նամակում Աճառյանը հետևյալ տողերով է ներկայացնում գիրքը. «Աշխատության հիմը կլինի Պոլսի ոսմիկ հայ բարբառը, որին իբր պոլսեցի բնիկ կարող եմ քաջածանոթ համարվիլ: Պոլսահայ ձևերի հետ քննության կառնվեն նաև Նոր-Նախիջևանի, Ղարաբաղի և Վանի բարբառները, ուրիշ խոսքով՝ հայ ազգաբանության չորս ծայրերը»<sup>15</sup>: Արդարև՝ գիրքը լույս բնծայելիս՝ նա վերնագիրը ճշտել է հետևյալ կերպ. «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերենն փոխառյալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզվին մեջ, համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն»:

Գիրքը սկսվում է Ֆրանսերեն և թուրքերեն համառոտ առաջաբաններով, դրան հաջորդում է ավելի քան հիսուն էջանոց մի ընդարձակ ներածություն, որտեղ հեղինակը քննության է առնում հայ և թուրք հարաբերությունները անցյալում, համառոտ մի ակնարկ գցում չորսհարյուրամյա թուրքական տիրակալության վրա, խոսում փոխառությունների բնույթի և ժամանակի մասին, հետո մանրամասնորեն կանգ առնում թուրքերենի ձայնաբանության վրա, մեկ առ մեկ ծանոթացնում բաղաձայները, նշելով ձայնավորները, ժողովրդական թուրքերենում և գրականում նկատվող տարբերությունները, հայկական փոխառություններում նրանց ներկայացրած վիճակը և այլն:

Ուշագրավ է այն եզրակացությունը, որին հանգել է Աճառյանը հետազոտական այս ընդարձակ բաժնում: Ըստ նրա՝ պոլսահայերի կողմից օգտագործվող թուրքերեն բառերը

Հայերը վերցրել են ոչ թե Պոլսում, այլ «Փոքր Ասիական բարբառն մը և այն գավառն, ուր կը բնակեր պոլսահայոց գաղթականութեան գլխավոր և առաջնակարգ ճյուղը»<sup>16</sup>: Միաժամանակ նա չի ժխտում այն փաստը, որ «Պոլսո թուրք ժողովրդական լեզուն խիստ մեծ ազդեցություն ունեցած է մեր թրքական բառերուն վրա, և ասոնցմե մաս մը, և թերևս մեծ մաս մը՝ թողելով իր նախնական ձևը, առած է Պոլսո թրքական ձևը»: Դժբախտաբար չի ճշտվում, թե Հայերը փոքրասիական որ բարբառից են փոխ առել թուրքերեն բառերը:

Այս ընդարձակ գլխից հետո սկսվում է բուն բառարանը. զբաղեցնում է զրբի ավելի քան 300 էջը:

Դա այն բառարաններից չէ, որտեղ տրվում է բառը և նրա նշանակությունը մյուս լեզվում: Ըստ էության ստուգաբանական այնպիսի բառարան է, ինչպես «Արմատականը»՝ հատվածների որոշ զեղչով: Տրվում է թուրքերեն բառը, նշվում, թե Հայերեն որ բարբառում (Պոլիս, Նոր-Նախիջևան, Ղարաբաղ, Վան) ինչպես է արտասանվում բառը, ինչ նշանակություն ունի, ապա տրվում է նույն իմաստի ֆրանսերեն թարգմանությունը, որին հաջորդում է բառի ստուգաբանությունը, որոշումը, թե այն պարսկերենից է, արաբերենից, թե բնիկ թուրքերեն: Այս բաժինը ուշագրավ է թուրքերենի այն ժամանակվա վիճակը ցույց տալու համար: Մեր մանրամասն հաշվումը ցույց տվեց, որ թուրքերենից փոխ առնված բառերի բացարձակ մեծամասնությունը թուրքերեն էլ վերցրել են արաբերենից և պարսկերենից: Այս բաժնում բառը զրվում է արաբերեն կամ պարսկերեն տառերով և լատինական տառադարձություններով:

Հիմնական կառուցվածքն այս է, սակայն բազմաթիվ բառեր ունեն նաև լրացուցիչ բաժին՝ վկայություններ ժողովրդական լեզվից՝ դարձյալ ֆրանսերեն թարգմանություններ:

Բերենք մի նմուշ.

«Նաթր Պ., Նաթրո Ն., Նաթրը Վ. Ղ.», Հարգ, ակնածություն, estim, egard, amour. 2. որպիսություն կենաց. état de sante, condition, օր. խաթր հարցունել «որպիսությունը հարցնել. demander la sante», խաթեր համար «ի սեր, ի հարգանս, par egard, pour l'amour de»=արար. xator ոճով կրսվի խաթրը մնալ «ղժգոհ լինել, վշտանալ, se fâcher, se dépiter»,

խաթրը նայիլ «աչառուլթյուն ընել. faire acception de personnes», խաթրը ավրել, կոտրել «ըսածը չկատարել, դժգոհ կացուցանել, fâcher, blesser, rendre mécontent», խաթրը խոչ ընել «ուզածը կատարել, գոհ կացուցանել, contenter, satisfaire», խաթրը անցնիլ «ազդեցիկ ըլլալ, մեկուն քով հարգ կամ արժեք ունենալ, être considéré, estimé».

Ինչպես երևում է այս օրինակից, որոշ բառեր բավականաչափ լայն բացատրությունը են ներկայացված, կան բառեր էլ, որոնք զբաղեցնում են 2-3 տող:

Աճառյանը սկզբում նպատակ չի ունեցել բառի, արտահայտություն ոճական օրինակի ֆրանսերեն թարգմանությունը տալ, և թվում է, թե անհրաժեշտ էլ չէր, քանի որ դա բազմալեզվյան մի բառարան չէր, ինչպիսին քանիցս հրատարակել են Մխիթարյանները, սակայն այդ առաջարկը կատարել է Գր. Խալաթյանը և ինքը չի ցանկացել մերժել, թեև դրանով բավականաչափ դժվարացրել է գործը, մեկ առ մեկ գրելով այդ բոլոր բառերի, ոճական օրինակների ֆրանսերեն թարգմանությունը:

«Թուրքերենն փոխառյալ բառերը» օտար գիտական մամուլում մեծ արձագանք չի գտել, բայց հայ մամուլում ջերմորեն ողջունվել է: Առաջին ողջունողներից մեկը եղել է հեղինակի պոլսական ընկերներից Ա. Չոպանյանը:

\* \* \*

Աճառյանի այդ տարիների ամենածավալուն գիրքը «Հայերեն Գավառական բառարանն» է: Իր աշխատությունների նույնիսկ արտաքին՝ ծավալային կողմին կարևորություն տվող գիտնականը չի հավանել 1140 էջից բաղկացած այս բառարանը: Դրա բացատրությունը տալուց առաջ ծանոթանանք բովանդակությունը:

Գրքի սկզբում զետեղված ընդարձակ առաջաբանում հեղինակը խոսում է հայերենի 31 բարբառների և նրանց դասակարգման մասին, կանգ առնում այն հարցի վրա, թե ինչպիսի բառեր են օգտագործում այդ բարբառները (բնիկ, օտար և գավառական բառեր), տալիս է գավառական բառարանների պատմության տեսությունը, թե որ դարերից են մեր մատենագիրներն օգտագործել ժողովրդական, ռամկական

նման բառեր, երբվանից դրանք հիշատակվել են բառարանային սկզբունքով, նման ինչպիսի բառարաններ են եղել հայ իրականությունում, կանգ է առնում գավառական բառերի ուղղագրության վրա, որին հաջորդում է հայ բարբառների ընդհանուր մանրակրկիտ տեսությունը, վերջում խոսում բառարանի ստեղծագործական պատմության, նրա նպատակի, բնույթի, ընդգրկման մասին:

«Գրքիս մեջ առնված են զուտ գավառական բառերը, այսինքն անոնք միայն, որ հին մատենագրությունք ավանդված չեն կամ ավելի պարզ խոսելով՝ վենետիկի Առձեռն բառարանին մեջ չկան: ... Օտար բառերը անխնա կերպով վտարված են աշխատությունես, ինչքան ալ գեղեցիկ և օգտակար ըլլան անոնք. իբրև հազվագյուտ բացառություն ընդունած եմ միայն քանի մը այնպիսի օտար բառեր, որոնք բոլորովին հայացած են, ինչպես պելս, թոկ, պոռչ, թոզակ և այլն»<sup>17</sup>:

Հեղինակի այս մոտեցումը, որով բառարանից դուրս են թողնվել թուրքերենի միջոցով եկած պարսկերեն, արաբերեն հազարավոր բառեր, նաև տեղական շփման հետևանք այլ լեզուներից եկած մեծաքանակ բառեր, օգնել է զուտ հայկական գավառական մի բառարանի ստեղծմանը: Իսկ դա գրականության չբարձրացած, բայց ժողովուրդի բերանում իր կենսունակությունը, պահած բառազանձի վերականգնման առաջին լուրջ փորձն էր:

Մեր բառարանագիրներից Նորայր Բյուզանդացին առաջինն էր, որ իր «Փրանսահայերեն բառարանը» պատրաստելիս չբավականացավ գոյություն ունեցող հայերեն գրական լեզվի բառապաշարով՝ ֆրանսերեն որոշ բառերի, ոճերի համապատասխան բացատրությունը վերցրեց ժողովրդական լեզվից: Ոմանց դուր չեկավ նրա այդ «ժողովրդայնությունը», բայց ժամանակի առաջավոր մտածողները, այդ թվում Արփիարյանը ողջունեցին՝ հայտարարելով, որ ժողովուրդի բերանը շատ ավելի տոկուն է, քան դարավոր մագաղաթները, և որ հազարավոր բառեր կարող էին օգտագործված չլինել մեր մատենագիրների կողմից, բայց պահված լինեին խոսակցական լեզվում, օգնեին հայոց լեզվի անգամ ամենահնագույն շրջանի հետազոտմանը<sup>18</sup>:

Այս տեսակետից Աճառյանի օտարագերծ բառարանը գիտություն համար կարող էր ներկայացնել մեծ հետաքրքրություն:

«Գավառական բառարանը» կազմված էր ճիշտ սկզբունքով, օժտված էր գիտական արժեքավոր առաջաբանով, պարունակում էր ավելի քան 30.000 բառ, այս երեք հատկանիշները բավական էին, որ այն ողջունվեր հայ և օտար բանասերների կողմից, քաջալերվեր: Այդպես չեղավ սակայն:

Առաջին դժգոհը եղավ ինքը՝ հեղինակը և «Արարատ» ամսագրի խմբագրությունն ուղղած մի նամակով հայտնեց, թե գիրքը տպագրություն է հանձնվել առանց իր գիտություն, դուրս են մնացել հազարավոր բառեր, որոնք գտնվում են իր մոտ:

Նա աշխատությունը ներկայացրել էր «Էմինյան ազգագրական ժողովածուի» խմբագրություն, ստացել էր Գր. Նալաթյանի դրական կարծիքը, բայց չէր որոշվել ճակատագիրը: Լազարյան ձեռնարանի մասնագիտական դասարանների խորհուրդը 1910 թ. նոյեմբերի 5-ին Բառարանը ճանաչել էր արժանի Քանանյան մրցանակի, իսկ 1912 թ. որոշել էր հանձնել տպագրության: Գր. Նալաթյանի մահը և Կ. Կոստանյանի փոխարինումը նրան՝ վնասել էր գործին: Աճառյանի նկատմամբ միշտ անբարյացակամ դիրք զբաղում այդ մարդը, առանց հեղինակի համաձայնությունն ստանալ, նրան հարավորություն տալու, որ լրացումներ, ճշտումներ կատարի, գիրքը հանձնել էր տպագրության:

Ու այսպես «Գավառական բառարանը» լույս է տեսնում չատ թերի ու բազմաթիվ սխալներով: Մինչև կյանքի վերջին տարիներն էլ Աճառյանն իր այդ գրքի մասին խոսում էր տհաճությամբ, ասում, թե հայերեն գավառական բառերի թիվը հասնում է 60.000-ի, մինչդեռ իր գիրքը պարունակում է դրա կեսը: Նույն միտքը հայտնեց նա 1946 թ. մեր հետ ունեցած հարցազրույցի ընթացքում, որը լույս տեսավ մամուլում իր հավանություններով:

Մեր կարծիքով հեղինակային այս անբավականությունը ամենևին էլ չէր առաջացել բառերի քանակից, ի վերջո ինքն էր հանձնել Հանձնաժողովին և եթե հետագայում 10.000 բառ էլ ավելացվեր չատ բան չէր փոխվի, կարող էր ոչ թե 30.000, այլ

20.000 բառ պարունակներ, սակայն բավարարներ և՛ Հեղինակին և՛ բանասերներին, եթե գիտական մեղանչումներ չունենար: Բանն այն է, որ «Գավառական բառարանը» տառապում էր այդ թերությամբ: Լույս տեսնելուց անմիջապես հետո գրավոր, բանավոր, մամուլում եղել էին բավականաչափ դիտողություններ, մատնանիչ արվել սխալ բացատրություններ: Ամեն մի փաստի ստուգման համար այնքան բժախնդրություն հանդես բերող գիտնականը այս գրքում հաճախ էր վրիպել և դա չէր կարող չվշտացնել նրան: Թյուրիմացությունները արդյունք էին առաջին հերթին հապճեպություն, սրանից նրանից վերցված փաստերը մեկ առ մեկ ստուգել չկարողանալուն, բայց կային անգամ տգեղ կատակի արդյունք սխալներ, երբ որոշ մարդիկ պարզապես խաբել էին, թե իրենց գավառում այսինչ բառը նշանակում է այսինչ բանը:

«Գավառական բառարանի» մասին շատերն են կարծիք հայտնել, անչուչտ նաև դրական խոսքեր ասել: Ծանոթանանք երկու ականավոր դեմքերի՝ հայր Ն. Ակինյանի և Հովհ. Թումանյանի կարծիքներին:

Ակինյանը շատ զգույշ, փափկանկատ ոճով, սակայն հասկացրել է, թե հայերենի բարբառների ուսումնասիրումը, գավառական բառերի հավաքումը պետք է կատարվի ոչ թե գաղթօջախներում, այս կամ այն քաղաքը թափված օրեցօր իրենց բարբառը մոռացող, նոր միջավայրի ազդեցությունը կրող մարդկանց միջոցով, այլ «հայ բարբառին օրրանին մեջ ... հոն ուր գրական ազդեցությունը արձագանք չէ գտած, ուր արտաքին ազդեցությունք չեն թափանցած և ուր հայ ժողովուրդը միշտ անդրենածին եղած է, Կարին և շրջակայքը, Խոտորջուր, Մուշ յուր գյուղերով, Վան և շրջակայքը և այլն և այլն: Այս եղանակով միայն կարելի է հայ անխառն բարբառույն բառագանձը կորզել թաքնութենեն և պահպանել կորստենեն»<sup>19</sup>:

Այս տողերի արանքից դժվար չէ նկատել կշտամբանք թե ինչու Աճառյանը այդպես չի վարվել:

Հովհ. Թումանյանը, իրեն հատուկ անմիջականությամբ ավելի որոշակի է հայտնել իր կարծիքը՝ «Գործ» հանդեսում տպագրած գրախոսությունում: Նա գնահատում է «Գավառական բառարանը», գտնում, որ աշխատությունը «չատ

կարևոր մի գործ» է և եթե ինքը անում է դիտողություններ, ապա պարզապես հեղինակին օգնելու նպատակով, այն էլ իմանալով, որ «եթե լեզվի խնդրում Աճառյանը կարող է սխալի մեջ ընկնել, անկարելի բան է, որ ես ազատ լինեմ սխալներից»<sup>20</sup>:

Բայց անում է լուրջ դիտողություններ, որոնցից մի քանիսը եթե չունեն գիտական հիմք, ապա մեծ մասը համոզիչ է: Նրա ամենալուրջ մեղադրանքը այն է, թե Աճառյանը մի քանի բարբառ չփոթում է իրար հետ, օրինակ, Երևանի բարբառի մեջ է դնում Շուլավերի բարբառը, մինչդեռ, ասում է նա, «Շուլավերը Ղարաբաղի կողմից դուրս եկած մի գաղութ է», թե նա Ղարաբաղի բարբառի մեջ է դնում Դիլիջանը, Լոռին և Ղարաբլիխան, «որոնք Այրարատի մեջ են մտնում, նրա ճյուղերն են»<sup>21</sup>:

Անցնելով բառական և ոճական դիտողությունների, բերում է մոտ 40 բառ, որոնք, նրա կարծիքով, սխալ են բացատրված. դրանցից են աճար, առնելացուկ, սիրտ կտրվել և այլն:

Աճառյանը մամուլում չի պատասխանել Թումանյանի դիտողություններին, բայց իր բացատրությունները տվել է անձնական մի նամակում, որից երևում է, որ բարբառային բառերի նշանակության վերաբերյալ դիտողությունները ընդունել է, քանի որ դրանց մասին չի խոսում, չի ընդունում Թումանյանի ստուգաբանական կարծիքները, մանավանդ հատուկ անունների խնդրում, օրինակ՝ Միս Մասիս բառերի Թումանյանական բացատրությունը: Թումանյանի կարծիքով Մասիս անունը առաջացել է սանսկրիտ Մա և Միս- գազաթ բառերից, մինչդեռ Աճառյանն իր նամակում գտնում է, որ Մասիս բառի հին ձևը եղել է Մասիք, թե Մասիս նրա հայցական ձևն է, ուրեմն բուն բառը պետք է լինի մասի, արմատը մաս և այլն:

Այս առիթով Աճառյանը հիշեցնում է, որ հատուկ անունների ստուգաբանությունը կապված է շատ դժվարությունների հետ: Երկու տարբեր լեզուների բառերը միմյանց հետ համեմատելիս, ասում է նա, առաջին նկատելի բանն է ձայնական նույնությունը, և երկրորդ՝ նշանակության նույնությունը: «Հասարակ անունները համեմատելու ժամանակ երկու պայմաններն էլ կան հյ. մայր և պրս. mater կարող են համեմատվել

իրար հետ, որովհետև թե՛ ձայնական նույնությունը կա, և թե՛ նշանակություն նույնությունը... Հատուկ անունները այդպես չեն»<sup>22</sup>:

Այդ դժվարությունը նկատի ունենալով Աճառյանի տարիներ առաջ սկսած «Տեղանունների բառարանը» այնպես էլ տպագրության չհանձնեց և մինչև այժմ մնում է թերի և անտիպ: Նա հաճախ էր ասում, թե հին տեղանունների ստուգաբանությունը մեծ մասամբ անհնարին է, մանավանդ, եթե դրանք այս կամ այն անհատի անվան հետ չեն կապվում: Հյուբլանին էլ իր «Հին Հայոց տեղվո անունները» հետազոտության մեջ շատ արդյունքների չհասավ: Ականավոր Հայագետը հարկադրված է եղել ավելի շատ խոսել տեղանունների հնագույն վկայությունների, տարբեր լեզուներում նրանց ինչ ձևով գրվելու մասին, քան տվել է ճշգրիտ ստուգաբանություններ: Նա լավագույն դեպքում կարող էր հերքել և հերքել է, ասենք, **Երևան** անվան հայկական ավանդական բացատրությունը, բայց չի կարողացել ստուգաբանել: Ու այդպես՝ նրա բերած ցուցակի մեծ մասը<sup>23</sup>:

Հակառակ լեզվաբանական վեճին, Հովհաննես Թումանյանը մնաց Հ. Աճառյանի բառարանը գնահատողներից: Այդ բառարանը լույս ընծայված տարում նա գրել է, թե այն «Առաջին լուրջ գործերից մին է մեր լեզվի ուսումնասիրության, մեր լեզվական գանձերի, բառերի ու ոճերի ամբարումին»<sup>24</sup>, իսկ 1917 թվականին, իր վերոհիշյալ գրախոսությունը գրելու ամիսներին, լեզվաբանին հղած նամակներից մեկում ասում էր.

«Հայկական համալսարանը, լինի թե չլինի, Ձեր խնդիրը ես համարում եմ վերջացած: Հայկազյան ընկերությունը միայն համալսարանի համար չէ, այլև նա՝ իրենց կողմնակի պաշտոններից ազատելու է մեր գիտության, գրականության ու գեղարվեստի մարդկանց (հարկավ ոչ ամեն մեկին) և նրանց հնարավորություն է տալու, որ իրենց գործով ու իրենց մասնագիտությունով զբաղվեն. էդ մարդիկ պետք է ընտրվեն աչնանը, բայց էն շատ քչերից մեկը, որոնց մասին խոսք է եղել և որոնց վիճակը նախորոշված է՝ դրանցից մեկը դուք եք»<sup>25</sup>:

Աճառյանը հետագայում, արդեն սովետական տարիներին, ցանկացավ նորից անդրադառնալ «Փավառական բառարանին», օգտագործելով տարիների ընթացքում իր հավաքած



նոր բառերը և սփյուռքից ստացված հարուստ նյութը, սակայն առավել կարևոր աշխատանքներ ընդհատեցին սկսված գործը:

Իր բոլոր թերություններով հանդերձ՝ «Գավառական բառարանը» Ամատունու «Հայոց բառ ու բանի» հետ միասին ամբողջական գաղափար է տալիս Հայոց լեզվի զարգացման մի ամբողջ բնագավառի մասին և այսօր էլ չի կորցրել իր արժեքը:

Լեզվաբանի թողած հարուստ ժառանգությունյան հրատարակման ընթացքում, անշուշտ, այդ գիրքն էլ կարժանանա վերահրատարակության հենց հեղինակի հավաքած բառերի ներմուծումով:

Ականավոր հայագետի նախասովետական տարիների աշխատությունների թագն ու պսակն է կազմում «Classification des dialectes armenien» գիրքը, որի ստեղծագործական պատմությանը ծանոթացանք նախընթաց գլուխներում: Հայ բարբառագիտական գրականության մեջ դարագլուխ կազմող այս գրքում առաջին անգամ տրվում են հայ բարբառների գիտական դասակարգումը, նրանցից առավել կարևորների մանրամասն նկարագրությունը, բարբառների միմյանց հետ ունեցած կապերն ու տարբերիչ գծերը, վերջապես մայր լեզվի՝ գրաբարի հետ նրանց ունեցած ընդհանրությունները, միաժամանակ առաջադրվում է այն սխտեմը, որը հիմք դարձավ այնուհետև հայ բարբառների ուսումնասիրման համար:

Ինչպես իր տեղում ասել ենք, 1909 թ. Փարիզում լույս տեսած այդ գիրքը ընդարձակելով հեղինակը տպագրել էր 1911 թ. որպես «Էմինյան Ազգագրական ժողովածուի» Ը. հատոր:

Գիրքն ընդգրկում է հետևյալ բաժինները: Ընդարձակ ներածություն մեջ խոսվում է հայ բարբառագիտության պատմության, մինչ այդ կատարված բարբառագիտական աշխատությունների թերությունների մասին, ապա ներկայացվում է բարբառների ուսումնասիրության ծրագիրը, բերվում գիտական այբուբենը, բացատրվում բարբառներն ուսումնասիրելու եղանակները, տրվում նոր հայերենի և հին հայերենի ձայնական, բառական, ձևախոսական և համաձայնական տարբերությունները:

Հաջորդ բաժիններում խոսվում է հայերի բնակած վայրերի

և օտարախոս հայերի մասին, որից հետո հեղինակը անցնում է իր հիմնական խնդրին՝ հայ բարբառների դասակարգմանը:

Ինչ խնդիրներ են արծարծվում արժեքավոր այս աշխատության ներածական և հաջորդ գլուխներում:

Մանրամասնորեն ուսումնասիրելով 31 տարբեր բարբառներ, Աճառյանը եկել է այն եզրակացություն, որ աշխարհագրական, քաղաքական առանձնահատկությունների հետևանքով է, որ հայ լեզուն ունի այդքան շատ բարբառներ, թե դրանք համաժողովրդական լեզվի՝ գրաբարի ճյուղավորումներն են, որ դարերի ընթացքում բառապաշարով, քերականական և ձայնարանական կառուցվածքով հեռացել են գրաբարից, նաև միմյանցից այն աստիճան, որ հաճախ մի բարբառով խոսողը չի կարող հասկանալ մյուսին: Նա գտնում է, որ հինգերորդ դարում նման բաժանում չի եղել. գոյություն են ունեցել առնվազն երկու բարբառներ, որոնց մասին ակնարկում է Եզնիկը, սակայն նրանք շատ հեռու չեն եղել միմյանցից. մեկով խոսողը հեշտությամբ հասկացել է մյուսին: Հետագայում, հատկապես 6-9-րդ դարերում է, որ ձևավորվել են ներկա առումով հայերեն բարբառները և հաջորդ դարերի ընթացքում աստիճանաբար ավելի է խորացել տարբերությունը:

Նա բարբառները քննություն է առնում ելակետ ունենալով այն, թե տարբեր բարբառներում մեր լեզուն զարգացման ինչպիսի էվոլյուցիա է ապրել, որքան է հեռացել գրաբարից, ինչն է պահել նրանից, անշուշտ ենթարկելով իր հնչյունական օրենքներին, ինչ բնույթի են եղել փոփոխությունները, պարզում է, թե բարբառները ինչ են պահել նախահայերենից, որ բարբառներում է այդ տարրը ավելի նկատելի, այսինքն մատնանիչ է անում բռներ, որոնք չկան գրաբարում, բայց ստուգաբանվում են նախահայերենով, ունեն հնդեվրոպական ծագում: Եվ վերջապես ցույց է տալիս, թե ինչ են ստեղծել բարբառները դարերի ընթացքում, որոնք ոչ գրաբարի հետ են կապվում, ոչ նախահայկականի, այլ պարզապես արդյունք են օտար լեզուների (պարսկերենի, թուրքերենի և այլն) ազդեցություն:

Այս բոլորի մանրակրկիտ հետազոտությունը հնարավորություն է տալիս ոչ միայն որոշելու բարբառների առաջացման

ժամանակը, այլև ճշտելու նրանց դասակարգումը: Նա գտնում է, որ նման դասակարգման համար չի կարող հիմք դառնալ աշխարհագրական գործոնը, քանի որ միմյանցից շատ հեռու գտնվող բարբառների մոտ հաճախ նկատելի է նմանություն, իսկ մոտիկ տարածություն վրա գտնվող երկու բարբառ երբեմն շատ հեռու են միմյանցից:

Հնչյունական տարբերությունը նույնպես մերժում է որպես դասակարգման հիմք, դարձյալ ցույց տալով, որ տարածություն միմյանցից հեռու գտնվող մի շարք բարբառներ ունեն հնչյունական նույն առանձնահատկությունները, մինչդեռ երբեմն նույն բարբառի տարբեր խոսվածքներ ունեն հնչյունական տարբեր օրենքներ:

Լեզվաբանը գտնում է, որ հայերեն բարբառների դասակարգման համար գիտական հիմք կարող են ծառայել ձևաբանական տարբերությունները և այդ տարբերությունների մեջ էլ առավել բնորոշը նկատում է սահմանական եղանակի ներկայի և անցյալի անկատարի կազմությունը:

Ի դեպ 1914 թվականից ֆրանսիական լեզվաբաններն էլ սկսեցին բարբառների դասակարգման հիմքում դնել ձևաբանական տարբերությունները, ինչպես այդ տեսնում ենք A. Terracher-ի «Étude de géographie linguistique» գրքում, որի մասին Մեյեն գրախոսություն է տպագրել Փարիզի լեզվաբանների ընկերության տեղեկագրում (BSL, հատ. XX):

Առաջնորդվելով ձևաբանական տվյալներով, Աճառյանը տալիս է հայ բարբառների հետևյալ դասակարգումը.

**ՈՒՄ ճյուղ.**– այս ճյուղի մեջ դասում է Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Շամախի, Աստրախանի, Զուղայի, Ագուլիսի բարբառները:

**ԿԸ ճյուղ.**– այս ճյուղի մեջ դասում է Մշո, Վանի, Տիգրանակերտի, Խարբերտ–Երզնկայի, Շապին–Գարահիսարի, Տրապիզոնի, Համչենի, Մալաթիայի, Կիլիկիայի, Սուրիայի, Արաբկերի, Ակնա, Սեբաստիայի, Եվդոկիայի, Զմյուռնիայի, Նիկոմիդիայի, Պոլսո, Ռոզոստոյի, Ղրիմի, Ավստրո–Հունգարիայի հայերի բարբառները:

**ԵԼ ճյուղ.**– այս ճյուղի մեջ դասում է Մարաղայի, Խոյի, Արզվինի բարբառները:

Սրանց բոլորի մասին խոսում է հանգամանորեն, կանգ

առնում ձայնաբանական և քերականական առանձնահատկությունների վրա, ցույց տալիս, թե բարբառներն ինչ ձայներ ունեն, որոնք հատուկ են հին հայերենին, ինչպիսի նոր ձայներ են ձեռք բերել բնական ձայնաչրջությունամբ ավելացած, ինչպիսի ձայնական փոփոխություններ են նկատելի բաղաձայների մեջ: Քերականական վիճակին անցնելով, խոսում է հոլովների քանակի, բայի բնույթի և այլ հարցերի մասին, ըստ յուրաքանչյուր բարբառի պատկերի:

Աճառյանը մշակել է բարբառների ուսումնասիրման ուրույն սիստեմ, որը հիմք դարձավ հետագայում հայ բարբառագիտության համար: Ըստ այդ սիստեմի՝ քննություն է առնվում նախ բարբառի հնչյունական համակարգը, ապա հնչյունափոխությունը, ձևաբանությունը, նոր միայն շարահյուսական որոշ երևույթներ: Հետագայում նրա այս սիստեմը որոշ չափով լրացվեց, տարբեր բարբառներ քննությունն առնելիս ուշադրություն դարձվեց նաև բառային կազմի վրա, ինչպես պիտի տեսնենք հաջորդ գլուխներից մեկում:

Թե գիտական ինչպիսի մեծ արժեք է ներկայացրել Աճառյանի «Համակարգություն հայ բարբառագիտության» գիրքը, երևում է այն ջերմ գնահատականներից, որ տվել են օտար հայագետները այդ գրքին: Ա. Մեյեն 1909 թվականին, այսինքն գրքի ֆրանսերեն լեզվով լույս ընծայման տարում «Ժուռնալ Ադիատիկում», խոսելով աշխատությունն արժանիքների մասին, հեղինակի անձնավորությունը ներկայացնում է հետևյալ տողերով:

«Ես, որ գիտեմ, թե որքան կամք,- պիտի ասել որքան հերոսական կորով,- է գործադրել նա իր գիտական հմտությունը ձեռք բերելու համար, հակառակ նյութական և բարոյական աննպաստ պայմանների, անխոնջ հարատևությունամբ երկար տարիներ հետապնդելով իր ուսումնասիրությունները, որոնք գրեթե չեն արժանացել քաջալերության,- հարկ եմ համարում այստեղ ասելու, թե հիանում եմ ոչ միայն իր ներհունությամբ, ոչ միայն աշխատելու հազվագեպ կարողության, այլև մանավանդ իր բնավորության վրա»:

Հայտնի հայագետ Կարստը, որ Ստրասբուրգում գրավեց Հյուբշմանի տեղը, «Համակարգության» մասին գրել է. «Աճառյանի նոր գործը կոչված է հայ բարբառագիտության

խարիսխ հանդիսանալու, այն կղառնա ռահվիրան ապագա ուսումնասիրությունների: Նույնիսկ մեծագույն աշխարհայեզունները չունեն նման գործ, կամ թեկուզ հեովից սրան մոտեցող համարժեք մի երկ»:

Հնդեվրոպական լեզուներին նվիրված մի աշխատություն մեջ Աճառյանի «Համակարգությունը» համարված է «հրաշալի գործ»:

Ոսոցիւնք Աճառյանի բառարանագրական և բարբառագիտական այն աշխատությունների մասին, որոնք ծավալուն գործեր են և լույս են տեսել առանձին հատորներով: Բայց, ինչպես բանասիրության, այս բնագավառում էլ նա ունի մեծ ու փոքր շատ երկեր, որոնք տպագրվել են մամուլում, մի մասը արտատպվել գրքույկներով, մի մասը՝ մնացել ամսագրերի էջերում:

Հիշատակության արժանի է երկարատև ու քրտնաջան այն աշխատանքը, որ նա կատարել է հայ մատենագրությունից անձանոթ, այսինքն «Նոր հայկազյան բառարանում» և այլ բառագրքերում տեղ չգտած բառերը քաղելու ուղղությամբ: Դրանք նա հրատարակել է սկսած 1908 թվականից մինչև կյանքի վերջին տարիները՝ «Հայերեն նոր բառեր» ընդհանուր խորագրով: Այսպես, «Հանդես ամսօրյայի» 1908 թվականի հուլիսի համարում տպագրել է «Հայերեն նոր բառեր նորագյուտ Մնացորդաց գրոց մեջ» երկը, որը լույս է տեսել նաև առանձին գրքով, որպես «Ազգային մատենադարանի» ԾԶ հատոր: Դարձյալ նույն ամսագրի 1908 թ. դեկտեմբերի և 1909 թ. փետրվարի և մայիսի համարներում տպագրել է «Հայերեն նոր բառեր Տիմոթեոս Կուզի Հակաճառության մեջ»: Սերեոսի պատմությունից հանված նոր բառերն էլ տպագրել է «Արարատ» ամսագրում, 1911 թ.: 1912 թ. վենետիկի Մխիթարյանների տպարանում լույս է ընծայել «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ» գրքի Ա հատորը, բաղկացած 212 էջից: Այնուհետև այս շարքը տպագրում է «Բազմավեպում» 1913-1926 թթ., ինչպես Մովսես Կաղանկատվացուց, Զենոբ Գլակից, Մխիթար Գոշի «Առականերից», «Կնիք հավատոյից», «Մաշտոց» ժողովածուից, «Ժամագրքից», «Ճաշոցից», «Պարապմանց գրոցից», Մխ. Սկևռացու «Պատասխանաց»-ից, Լարուրնայից, Ուխտանեսից, Առաքել Սյու-

նեցու «Աղամգրբից», Գր. Մագիստրոսի «Թղթերից», Ոսկերե-  
րանի ճառերից և այլ մատենագրական երկերից հավաքած  
բառերը: 1926 թ. նա հրատարակել է դրանք որպես «Հայերեն  
նոր բառեր հին մատենագրություն մեջ» գրքի Բ. հատորը և այդ  
տարվանից էլ հիմնականում զբաղվելով «Արմատական բա-  
ռարանով», գրելթե ընդհատել է «Նոր բառերի» տպագրու-  
թյունը թեև շարունակել է հավաքել ու նախորդների հետ  
միասին բոլորն էլ օգտագործել է «Արմատական բառարա-  
նում»: Միայն 1935 թվականից հետո հավաքված բառերը,  
որոնց մի մասը տպագրվել է Գիտությունների Ակադեմիայի  
«Տեղեկագրում», - դուրս են մնացել «Արմատականից», քանի  
որ այն լույս էր տեսել:

Աճառյանի վաստակը այստեղ այդ անծանոթ բառերը  
հավաքելու, հայ հին մատենագրություն մեջ օգտագործված  
բառերի թիվը մի քանի հարյուրով ավելացնելու մեջ չէ միայն:  
Նախ՝ նա վերոհիշյալ բառերից շատերի ստուգաբանությունն է  
տալիս, հանգում երբեմն գյուտերի, և հետո՝ մի քանի մատե-  
նագիրների անծանոթ բառերը քննություն է առել հետա-  
զոտական լայն ծրագրով: Այդպիսիք են, օրինակ, «Մնացոր-  
դաց» գրքից և «Տիմոթեոս Կուզից» հանված բառերը: Հայտնի  
է, որ Աստվածաչնչի երկու թարգմանություն է հասել մեզ,  
մեկը այն, որ կատարել են Սահակն ու Մեսրոպը, հայ գրերի  
ստեղծման առաջին շրջանում, երբայերեն բնագրից: Այդ  
թարգմանությունից հասել են միայն հատվածներ, որոնց  
թվում «Մնացորդաց գիրքը»: Ուստի՝ այն հանդիսանում է հայ  
հնագույն թարգմանությունը, որի պարունակած բառերի  
ուսումնասիրությունը գիտական մեծ հետաքրքրություն պիտի  
ներկայացնեն: Մխիթարյանների տրամագրություն տակ  
չլինելով վերոհիշյալ ձեռագիրը, նոր Հայկազյան բառարանից  
դուրս են մնացել երեսունից ավելի բառեր, որոնք շատ կարևոր  
են Մեսրոպյան Հայերենի ուսումնասիրման համար:

Այսքան լայնածավալ ստեղծագործական կյանքում մեծ լեզ-  
վաբանը անշուշտ կարող էր և ունենալ որոշ վրիպումներ: Դրան-  
ցից մի քանիսի մասին աններելի մեծամտությամբ խոսել է  
«Հանդես ամսօրյայում» Ա. Վարդանյանը, վիրավորական տողե-  
րով մերժելով մի քանի ստուգաբանություններ: Այլ դեպքերում  
այնքան սրամիտ, անգիջող և բանավեճի մեջ սուր լեզու գոր-  
ծածող Աճառյանը պատասխանելով Վարդանյանին, գրում է.

«Ցավ զգացի կարդալով Հ. Վարդանյանի հոդվածը, ուր

անարդար կերպով կաշխատի դատապարտել ինձ. ամենուս ալ նպատակն է հասնել ճշմարտության: Մարդ իր պրպտումներուն մեջ հաճախ կրրնա սխալիլ, բայց ասոր համար զինքը դատապարտել ոչ ոք իրավունք ունի, եթե միայն սխալը չարամտությամբ և դիտմամբ եղած չէ... Ճոխ մատենադարանի մը մեջ նստած, ամեն տեսակ հարմարություն ունեցող անձի մը դյուրին է ազատորեն խոսիլ. բայց նույնիսկ այսպիսիներն ալ կրրնան դարձյալ սխալիլ ու թերանալ»<sup>26</sup>:

\* \* \*

Ամփոփելով Աճառյանի նախասովետական տարիների գիտական գործունեությունը, ուրվագրիքը, կրկնենք, որ նա քառորդ դարի ընթացքում լույս ընծայած իր լեզվաբանական և բանասիրական հետազոտություններով իրավամբ նվաճել էր ականավոր հայագետի համբավ, ճանաչված հեղինակություն էր համաշխարհային լեզվաբանության մեջ:

Հիմնովին ուսումնասիրելով հայ լեզվաբանության պատմության ամբողջ նախընթացը՝ սկսած ավանդական դպրոցից մինչև գիտական նորագույն տեսությունները, նա ամուր կանգնել է հնդեվրոպական դպրոցի դիրքերում, վերցնելով այն առավելագույնը, որ տվել էին այդ դպրոցի ներկայացուցիչները:

Նախընթաց հիանամյակում հնդեվրոպական լեզվաբանությունը անցել էր զարգացման ուշագրավ շրջան: 1830-ական թվականների վերջերից Հայնրիխ Պետերմանը, Ֆրիդրիխ Վինդիչմանը, Ռիխարդ Գոչեն, Պոլ դը Լագարդը և ուրիշներ լեզուների ծագումն ուսումնասիրելով համեմատական մեթոդով, եկել էին այն եզրակացություն, որ հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին և կապվում է իրանական լեզուների հետ: Առաջինը նրանք էին, որ սկսեցին հայերեն բառերի գիտական ստուգաբանությունը: Բազմաթիվ բառեր, համեմատելով գենդերենի, սանսկրիտի, հին պարսկերենի և այլ լեզուների հետ, նշարեցին նկատելի կապ հայերենի և արեական լեզուների միջև:

Այս դպրոցի ձեռք բերած արդյունքները ամփոփել էր Պոլ դը Լագարդը նախորդների և իր կողմից ստուգաբանված հայերեն բառերի թիվը հասցնելով մոտ 2500-ի, որի զգալի մասն ըն-

դունվեց նաև հետագայում: 1870-ական թվականների կեսերից ասպարեզ էր իջել Հյուբըմանը՝ անառարկելի փաստերով ցույց տալով, որ հայերենը ոչ թե իրանական լեզուների մի ճյուղն է, այլ հնդեվրոպական լեզվախմբի ինքնուրույն մի ճյուղը, հավասար հունարենին, լատիներենին, սլավոներենին և այլն: Հյուբըմանի ծառայությունը, սակայն, հայ լեզվաբանությունը դրանով չի սպառվում: Նա վերոհիշյալ եզրակացությունը հանգեց բացահայտելով հայոց լեզվի հնչյունական փոփոխությունների օրենքը, որոշեց, թե իրանականի հետ կապվող հազարավոր բառերից որոնք են պարզ փոխառություն, որոնք են բնիկ հայերեն:

Այդ եղանակով նա ստուգաբանեց հայերեն բազմաթիվ բառեր և տեղանուններ:

Հյուբըմանի տեսությունը սկզբում հանդիպեց նախորդ դպրոցի ականավոր ներկայացուցիչներ Մյուլլերի և այլոց ընդդիմությունը, առիթ տվեց բուռն վեճերի, սակայն աստիճանաբար հանդարտվեցին կրքերը, բոլորն էլ ընդունեցին նրա տեսակետների ճշտությունը: Հետագա հայագետների համար ելակետ հանդիսացավ Հյուբըմանի մեթոդը: Այդ մեթոդին էր հետևում Աճառյանի ուսուցիչ Անտուան Մեյեն, իր ուրույն ըմբռնումներով հանդերձ<sup>27</sup>:

Նույն այդ հիսնամյակում հայ լեզվաբանության զարգացման գործում նկատելի դեր է կատարում Վիեննայի Մխիթարյան միաբանությունը իր մի քանի ականավոր ներկայացուցիչներով:

Եթե Վենետիկի Մխիթարյանները, սկսած Մխիթար Աբրահոն «Հայկազյան բառարանից», տասնյակ հայ և օտար բառարաններից մինչև «Նոր Հայկազյան բառարանի» հրատարակությունը (1837) և դրանից էլ հետո՝ վիթխարի աշխատանք էին կատարել բառարանագրական ասպարեզում, առատատաղձ տալով հայ լեզվի զարգացման պատմությամբ զբաղվողներին, ապա Վիեննայի Մխիթարյաններին ենք պարտական մեր լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների, Մեսրոպյան և հետմեսրոպյան գրաբարի տարբերության բացահայտումը, «Նախնյաց ռամկորենի», այսինքն հնագույն բարբառների և գրաբարի առնչությունների պարզաբանման ուղղությամբ ձեռք բերված նվաճումները՝ Հովսեփ Գաթրճյա-



նի, Մատաթիա Գարագաշյանի, Ղևոնդ Հովնանյանի և այլոց ջանքերով, մանավանդ աշխարհաբարի մանրագնին հետազոտումը Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» նշանավոր երկով, որը իրավամբ կոթողային է համարում պրոֆեսոր է. Աղայանն իր «Հայ լեզվաբանություն պատմության» Ա հատորում, որտեղ էլ հանգամանորեն խոսում է Վիեննայի դպրոցի մասին<sup>28</sup>:

Աճառյանն իր գիտական գործունեությունն սկսեց այնպիսի մի ժամանակ, երբ հայագիտությունն անցել էր այդքան բեղմնավոր ուղի, պարզել էր շատ սկզբունքներ, սահմանել լեզվաբանական օրինաչափություններ, գրեթե ավարտել հայոց լեզվի ծագման, ցեղակցության հետ կապված ամենակնճոտ հարցերը, իսկ բառապաշարի ստուգաբանությունը հասցրել նկատելի քանակի:

Հիմնովին յուրացնելով այս բոլորը, նա շարունակեց և այդ գիտությունը բարձրացրեց մի նոր աստիճանի՝ Աճառյանական աստիճանի:

Ո՞րն էր նրա բերած նորությունն այս բնագավառում:

Մինչ այդ Հայ լեզվաբանությամբ զբաղվել էին հիմնականում օտար գիտնականները և Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամները: Առաջին խմբին պատկանող մարդիկ մեր լեզուն ուսումնասիրել են գերազանցապես բառարանական ատաղձի հիման վրա, շատ ընդհանուր ծանուցություն ունենալով հայկական մատենագրությունը: Ժողովրդական զանգվածների հետ գործ չեն ունեցել:

Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանները օտար այդ լեզվաբանների համեմատությամբ ունեին մի առավելություն՝ սքանչելի գիտեին հայ մատենագրությունը, ուսումնասիրել էին այն նաև լեզվաբանական տեսանկյունից և հանգել ուչագրավեզրակացությունների, անգամ գյուտերի, որոնցից էլ հենց մեսրոպյան և հետմեսրոպյան գրաբարների տարբերությունը:

Ուրեմն նրանք իրենց ձեռքի տակ ունեին և բառարանագրական ատաղձը, և մատենագրական նյութը, բայց ապրելով կրոնական միաբանության սեղմ շրջանակների մեջ, դարձյալ կտրված էին բնաշխարհից: Հայոց լեզուն նրանք ուսումնասիրում էին գերազանցապես գրավոր աղբյուրներից, մինչդեռ հնդեվրոպական դպրոցի ամենամեծ նվաճումներից

մեկն այն էր, որ բացահայտել էր, թե որևէ լեզվի ուսումնասիրման առաջին նախապայմաններից մեկը ձայնաբանությունն է, թե լեզուների հնչյունական համակարգը ամենից ավանդապահն է: Այդ միտքն էր պաշտպանել Հյուբշմանը, որն իր ծավալուն աշխատություններում և արևելահայ ու արևմտահայ տառադարձությունների մասին «Հանդես ամսօրյայում» տպագրված նամակում, - որտեղ պնդում էր, թե հայկական այդ երկու տառադարձություններից մեկն ու մեկը մերժելը գիտականորեն սխալ կլինի, քանի որ երկուսն էլ եկել են դարերի խորքից, - գտնում էր, որ բարբառների ուսումնասիրությունը միակ ճիշտ ուղին է որևէ լեզվի ընդհանուր օրինաչափությունները ճանաչելու համար:

Աճառյանի առավելությունը, այսպիսով, նախորդ երկու լամբի ներկայացուցիչների համեմատությամբ այն էր, որ նա մեր լեզուն ուսումնասիրում էր վերոհիշյալ գիտություն ձևեր բերած նվաճումներով գինվելուց բացի տասնյակ այլ բարբառների քննությամբ:

Հայերեն բարբառների հանգամանալից հետազոտությունը, այդ բարբառների համակարգություն սահմանումը, դրանց ուսումնասիրման սկզբունքների որոշումը՝ ահա այն նորը, որ բերեց Աճառյանը հայոց լեզվի ուսումնասիրություն մեջ:

Նա հայ լեզվաբանությունը զարգացրեց նաև այլ կողմերով: Եթե մինչև 1870-ական թվականները ստուգաբանված էին փոքր թվով հայերեն բառեր, Հյուբշմանի բժախնդիր ցնցուղով անցնելուց և լրացվելուց հետո դրանց թիվը կրկնապատկվել էր, ապա Աճառյանը օգտվելով վերոհիշյալ ատաղձից, ստուգաբանված բառերի թիվը հասցրեց մեծ քանակի, որին առիթ կունենանք անդրադառնալու, երբ խոսենք «Արմատական բառարանի» մասին: Վերջապես մինչև Աճառյանը գիտնականներն զբաղվել էին հիմնականում այն հարցով, թե ինչ ազդեցություն է կրել հայերենը ցեղակից կամ հարևան լեզուներից, նրանց չէր զբաղեցրել այն խնդիրը, թե հայերենն էլ իր հերթին ազդե՞լ է այլ լեզուների վրա: Աճառյանը առաջինը լրջորեն զբաղվեց նաև այդ հարցով, արդյունքները տալով «Արմատական բառարանի» ուչագրավ բաժիններից մեկում, որն ինքնին հարուստ ատաղձ կարող է հանդիսանալ բանասիրական նորանոր հետազոտությունների:

## Գլուխ ութերորդ

### ԱՃԱՌՅԱՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ

Երկարատև ու տառապալից թափառումներից հետո, 1922 թվականի վերջերին Հրաչյա Աճառյանը տեղափոխվում է Երևան: Նա գիտեր, որ Երևանը լինելու է իր վերջին կայանը, որտեղ անցկացնելու էր ամբողջ կյանքը: Երկու բան հրապուրում էր նրան: Նախ, զալիս էր ոչ թե մի օտար երկիր, այլ մայր հայրենիք, որը մագնիսական ուժով իրեն էր ձգում աշխարհի չորս կողմը սփռված հայերին: Եվ երկրորդ՝ պաշտոնավարելու էր ոչ թե ծխական կամ թեմական որևէ դպրոցում, ինչպես եղել էր նախընթաց ամբողջ տասնամյակների ընթացքում, այլ իր պետականությունը ձեռք բերած ժողովրդի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ Երևանի պետական համալսարանում: Իր տեղում ասել ենք, որ նման մի համալսարանի հիմնումը եղել էր նրա երազը, խանդավառվել էր թումանյանի ծրագրով, նրա նամակներով, անգամ ինքը փորձություն էր ունեցել մտածելու սեփական ուժերով լեզվաբանական բարձրագույն հաստատություն ստեղծելու մասին, առանց հաշվի առնելու, որ դա մի անհատի ուժերից վեր էր, թողնենք, որ քաղաքական պայմաններն էլ միանգամայն աննպաստ էին նման ծրագրի կենսագործման համար:

Հեշտ չէր նման մշակութային մի խոշոր կենտրոնի ստեղծումը հետամնաց այնպիսի երկրում, ինչպիսին էր պատերազմի սարսափներից, կոտորածներից, սովից դեռ նոր դուրս եկած, իր վերքերը լրիվ չբուժած Հայաստանը: Հայ իրականության մեջ առաջին անգամն էր, որ պետք է նախադրյալներ ստեղծվեին համալսարանի համար: Կային ոչ միայն նյութա-տեխնիկական դժվարություններ՝ կապված տնտեսական հնարավորությունների հետ, քանի որ Հայաստանի ղեկավարները հարկադրված

էին նախ մտածել նորաստեղծ պետութեան սահմաններից ներս թափված տասնյակ հազարավոր գաղթականներին տեղավորելու, նրանց տնտեսական վիճակը բարելավելու հարցով, նաև գիտական գործի կարգավորման հետ կապված դժվարություններ: Այդ էր պատճառը, որ համալսարանի հիմնադրման որոշումը, ողջունվելով հանդերձ աշխատավորական լայն զանգվածների և մտավորականության կողմից, ունեցավ իր հակառակորդները թե երկրի ներսում, թե արտասահմանում:

Գիտական աշխատանքի հետ կապված ամենալուրջ դժվարությունը դասախոսական կազմի ապահովումն էր: Տարբեր երկրներում ապրող հայ ժողովրդի այն զավակները, որոնք Ռուսաստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլ երկրներում ստանում էին բարձրագույն կրթություն, հնարավորություն չունեին աշխատելու մայր երկրում, ծառայելու սեփական ժողովրդի մշակույթի զարգացմանը: Այդպես էին մասնավորապես ճշգրիտ գիտությունների գծով ավարտողները, որոնք ցրված էին տարբեր քաղաքներում (Մոսկվա, Պետերբուրգ, Նարկով, Կիև, Օդեսա, Բաքու, Թիֆլիս և այլն):

Երկրորդ դժվարությունը ուսանողների անհրաժեշտ քանակի ապահովումն էր: Այդ տարիներին ամբողջ Հայաստանի բնակչությունը 720 հազար մարդ էր: Հանրապետության դրպրոցների ընդհանուր քանակը չէր անցնում 166-ից, իսկ աշակերտների թիվը հազիվ հասնում էր 120 հազարի: Եթե սրա վրա ավելացնենք նաև այն, որ վերոհիշյալ դպրոցների ճնշող մեծամասնությունը տարրական դպրոցներ էին, որոնց չրջանավարտները չէին կարող ընդունվել որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն, ապա պարզ կարող է դառնալ, թե ինչու առաջին տարում Երևանի պետական համալսարանի ուսանողների թիվը հազիվ հասել է 255-ի, երկրորդ տարում բարձրացել 580-ի, այն էլ ճնշող մեծամասնությամբ դրսից եկած աշակերտների՝ առաջին հերթին Վրաստանից և Ադրբեյջանից եկածների հաշվին:

Պետական ղեկընտով հենց սկզբից համալսարանին հատկացվել է 57 հաստիք, որից 30-ը պրոֆեսորների, մինչդեռ առաջին տարում հնարավոր չի եղել ապահովել այդքան ուժեր<sup>1</sup>:

Բարեբախտաբար աշխարհի տարբեր վայրերում ապրում և գործում էին այնպիսի ականավոր մասնագետներ, որոնց հրա-

վիրումով կարող էր մեր համալսարանը կանգնել զարգացած որևէ երկրի բարձրագույն հաստատությունների մակարդակին: Սկսվում է ծրագրված ու համբերատար աշխատանք: Մոսկվայից, Պետերբուրգից, Նարկովից, Թիֆլիսից, արտասահմանյան շատ երկրներից (Թավրիզ, Փարիզ, Վիեննա և այլն), հրավիրվում են դասախոսներ: Ընդամենը մեկ-երկու տարում Երևանի համալսարանի շուրջն է համախմբվում ականավոր գիտնականների այնպիսի մի հույլ, որի մասին միշտ էլ պիտի խոսվի պարծանքով:

Հասարակագիտական ֆակուլտետի դասախոսներն էին Մանուկ Աբեղյանը, Հայկ Գյուլիքեխյանը, Արսեն Տերտերյանը, Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը, Ալեքսանդր Թամանյանը, Հայկ Ազատյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Գուրգեն Էղիլյանը, Թորոս Թորամանյանը, Լեոն, Գևորգ Ասատուրը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Աշխարհբեկ Քալանթարը, Գրիգոր Ղափանցյանը, Թադեոս Ավդալբեկյանը, Ստեփան Լիսիցյանը, Գրիգոր Զուբարը, Յուլյա Սանգաղյանը և ուրիշներ, ճշգրիտ գիտությունների դասախոսներից էին Վահան Արծրունին, Հովակիմ Բեղեկյանը, Համբարձում Քեչեկը, Գրիգոր Արեշյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Արշակ Տոնյանը, Հարություն Անժուրը, Բահաթուր Բահաթրյանը, Լևոն Հովհաննիսյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Ստեփան Ղամբարյանը, Գրիգոր Մեղնիկյանը, Պապ Քալանթարյանը և ուրիշներ, բոլորն էլ Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում կամ արտասահմանում բարձրագույն կրթություն ստացած, օտար լեզուների հմուտ մասնագետներ:

Համալսարանի հիմնադրման առաջին տարում ոեկտորն էր պատմաբան Հակոբ Մանանդյանը: Հետագայում ոեկտոր դարձավ Հակոբ Հովհաննիսյանը<sup>2</sup>:

Աճառյանը, ահա, այս ընտանիքի մեջ էր, նրա ամենաչոզչողուն ու պայծառ ղեմքերից մեկը: Առաջին տարիներին նա Երևանի պետական համալսարանում դասավանդել է հայոց լեզվի պատմություն և ֆրանսերեն, իսկ հետագայում արդեն բազմաթիվ առարկաներ (գրաբար, պարսկերեն, համեմատական քերականություն և այլն):

Համալսարանի առաջ կանգնած ղվարություններից ամենից մեծը, որի հաղթահարումը պահանջեց տասնյակ տարի-

ներ՝ մայրենի լեզվով ուսումնական ձեռնարկների, դասագրքերի ստեղծումն էր: Յուրաքանչյուր մասնագիտութան գծով անհրաժեշտ էր ունենալ ձեռնարկներ, որի համար հարկավոր էր ստեղծել մասնագիտական բառեր, տերմիններ: Այս հարցում մեծագույն դեր է կատարել Հրաչյա Աճառյանը, որին դիմել են հարյուրավոր տեխնիկական բառերի ստեղծման հարցով: Եվ եթե մենք այժմ մայրենի լեզվով սեղանի վրա ունենք հանրահաշվական, երկրաչափական, քիմիայի, ֆիզիկայի, բժշկության և այլ բնագավառների մասին տասնյակ ձեռնարկներ, ապա դրանք ստեղծվել են վերոհիշյալ դասախոսներից մի քանիսի, առաջին հերթին Աճառյանի, Արեղյանի, Վահան Արծրունու և ուրիշների լարված ջանքերով:

Պոսեցիինք Աճառյանի համալսարանական միջավայրի մասին, այժմ՝ ընտանեկան: Ասացինք, որ Երևանի պետական համալսարանը բացվում էր այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ երկիրը գտնվում էր տնտեսական ծանր վիճակում և պետությունն իր վտիտ բյուջեի վերջին ռուբլիներն էր տրամադրում նրա կարիքներին: Հրատապ հարցերից էր պրոֆեսորադասախոսական կազմին բնակարաններով ապահովելը: Փոշիների մեջ կորած, կիսաքանդ, ավերակ մի երկիր էր ժառանգել սովետական իշխանությունը, որի մայրաքաղաքն էին լցվում Առաջին համաշխարհային պատերազմի մեծ աղետից հետո Ռուսաստանով մեկ սփռված գաղթականները, գալիս էին նաև Պարսկաստանից, արտասահմանյան երկրներից: Բնակարանի հարցը տագնապալից էր:

Համալսարանի վարչությունը մի խումբ պրոֆեսորների տեղավորում է Աբովյան փողոցի վրա գտնվող մի շենքում, որի առաջին հարկը տրամադրվում է Վրաստանից և այլ վայրերից եկած ուսանողներին, երկրորդ հարկը՝ դասախոսներին:

Աճառյանին ու Մանանդյանին հատկացվում է մեկական սենյակ, նույն հարկաբաժնում, նեղ միջանցքի երկու կողմերին: Կից հարկաբաժիններում, նույնպիսի պայմաններում ապրել են Արչակ Տոնյանը, Պապ Քալանթարը և Համբարձում Քեչեկը:

Ականավոր այս գիտնականները զրկված են եղել առօրյա կենսական հարմարություններից, որոնք ընդհանուր էին բոլորի համար և զետեղված էին բակում: Կենցաղային այդ վիճակը հատուկ էր այն ժամանակ բոլորին, բանվորից սկսած՝ մինչև

պրոֆեսորներին ու պետական պաշտոնյաներին: Հեղափոխութեան առաջին տարիների ոգին՝ վառ ոռոմանտիզմով տոգորելով մարդկանց և խանդավառելով ապագայի հեռանկարով, մոռացնել էր տալիս քաղքենիական պերճանքի ձգտումը: Այդ տարիների մեր մայրաքաղաքի կյանքն ու կենցաղը, մանավանդ հոգեբանությունը մեծ տաղանդով ներկայացրել է 1926 թվականին Հայաստան այցելած Ջ. Եսայանն իր «Պրոմեթեոս ազատագրված» հուշագրական աշխատություն մեջ՝ ցույց տալով, որ բոլորի մոտ էլ տիրապետողը եղել է համեստ կյանքը, նորի հոգեբանությունը, վարակիչ լավատեսությունը<sup>3</sup>:

Մեզ հասել է մի շատ արժեքավոր լուսանկար 1923 թվականից, այն օրերից, երբ նոր էր Աճառյանը Թավրիզից եկել Հայաստան: Դա Երևանի պետական համալսարանի դասախոսական կազմի նկարն է: Բազմազան ու տարբեր տարազներով մարդիկ, բոլորն էլ նշանավոր գիտնականներ՝ Աբեղյան, Աճառյան, Մանանդյան, բայց բոլորն էլ հազնված համեստ: Ամենից անշուք Աճառյանի հագուստն է: Կարծեք երկար ու փոշոտ ճանապարհից նոր եկած ու դեռ իրեն կարգի չբերած նստել է լուսանկարչական գործիքի առաջ: Հազել է խունացած վերարկու, ձախ ձեռքին ձեռնափայտ, մազով-միրուքով: Սպիտակ ակնոցները գրեթե անտեսանելի են դարձրել աչքերը:

Այժմ մտնենք նրա բնակարանից ներս:

Աբովյան փողոցի համար 75 շենքի բակը մտնելուց հետո՝ աջ կողմի աստիճաններով բարձրանալիս՝ դուք ձեզ կգտնեիք մի ընդարձակ պատշգամբում, կառուցված շենքի ամբողջ երկայնքով: Մանանդյան եղբայրների ու Աճառյանի բնակարանների դրսի դուռը ընդհանուր էր: Ներս մտելուց հետո՝ նեղ միջանցքի աջ կողմում Մանանդյանների սենյակն էր, ձախ կողմում՝ Աճառյանի:

Քեչեկի, Տոնյանի և Պապ Քալանթարի հարկաբաժինը գտնվում էր երկարավուն պատշգամբի մյուս ծայրին:

Աճառյանի զբաղեցրած տարածությունը հազիվ լիներ 20 քառակուսի մետր, որը նա վարագույրով բաժանել էր երկու մասի. ետեի մասը դարձրել էր ննջարան, առաջամասը՝ ընդունարան, ճաշարան, աշխատասենյակ: Նրա ձախ կողմին դրված էր մի պահարան, բաժանված երկու մասի՝ վերևը հագուստեղենի, ներքևը՝ սննդեղենի համար: Գրքերը պահում էր ննջա-

րանում, լուսամուտի մեջ, գետնին: Ննջարանում ուներ փայտյա մի հասարակ թախտ, մի մահճակալ և մի սնդուկ Արուսյակի շորերի համար:

Սենյակում կար մի խարխուլ սեղան՝ ջարդված ոտքով, մի հին, խունացած բազկաթոռ և մեկ-երկու ամենահասարակ տեսակի աթոռ: Ձմռանը վառում էր փայտի վառարան, տանելով նրա բոլոր անպատեհությունները:

Ձուգարանը և ջուրը ընդհանուր էր, գտնվում էր բակում: Աճառյանն այդ տարիներին տառապում էր հողացավով, հագնում էր հաստ վալիսկաներ: Հաճախ կարելի էր նրան տեսնել դրանք ոտներին աստիճաններով ջուր բարձրացնելիս:

Նա ավելի թափթփված էր դարձել կնոջ մահից հետո, որ տեղի ունեցավ 1925 թվականին: Այդ մահը նրա համար հոգեկան ծանր հարված էր: Բաժանվում էր կյանքի ընկերուհուց, որը մոտ 20 տարի եղել էր մերձավոր օգնականը, տառապել, բաժանել նրա վիշտն ու ուրախությունը, խնամել էր նրան ամենամեծ գուրգուրանքով, հանդուրժել բնավորության տարօրինակություններին, կամակորոթյանը, բժախնդրությունը, զինվորական կարգապահության հասնող ճշտապահությունը:

Հիմա մնացել էր մենակ: Կար ավելին: Արուսյակը չէր մահացել սովորական հիվանդությամբ, այլ վերջին տասնամյակի փոթորկահույզ իրադարձությունները նրան հասցրել էին մտավոր որոշ խանգարման: Առօրյա կենցաղային հարցերում անձարակ ամուսինը չէր կարողացել բուժել տալ հիվանդին: Նրան թվում էր, թե մեղավոր է կնոջ մահվան համար: Գեթ այդպես է երևում արտասահման ուղարկած մի նամակից, որտեղ դառնություն ասում է, թե, եթե ճիշտ դեղեր տրվեին, կարող էր Արուսյակը չմահանալ:

Իհարկե, այդպես չէր, բժշկական ոչ մի օգնություն չէր կարող բուժել հիվանդ կնոջը, բայց հարվածը ծանր եղավ ամուսնու համար: Այն մարդը, որ երեսուն տարի շարունակ ենթարկվել էր բազմապիսի փորձությունների, բայց չէր հուսահատվել, Արուսյակի մահից հետո կորցրեց իրեն: Մերձավորները պատմում էին, որ նա ամեն անգամ երեխայի նման լաց էր լինում, երբ հիշում էր կնոջը: Այս առիթով ավելի ընդգծված արտահայտվեցին նրա որոշ տարօրինակությունները: Որ նա գրեթե ամեն շաբաթ այցելում էր Արուսյակի գերեզմանին,



բնական էր, տարօրինակն այն էր, որ իր համար էլ պատրաստել է տվել շիրմաքար, վրան արձանագրել անուն ազգանունը, ծննդյան թիվը, մահվան տեղը թողնելով ազատ:

Երբ 1925 թ. վերջերին արտոնվեց «Արմատական բառարանի» հրատարակությունը, իր ձեռքով այդ բառարանի առաջին էջը զարդարեց հետևյալ ձևով:

«Անմոռաց հիշատակ սիրելի հորս՝ Հակոբ Աճառյանի, † 1910 սեպտեմբերի Նոր-Նախիջևան, սիրելի մորս՝ Ընծա Աճառյանին, † 1921 Պոլիս, և քան զամենայն սիրելի և անմոռանալի վաղամեռիկ կնոջս՝ Արուսյակ Աճառյանին, ծն. 1885, հունիս 6/18, Շուշի, † 1925, հունիս 25, Երևան»:

Ապա «Քան զամենայն սիրելի» կնոջ նկարի տակ զետեղել է հետևյալ քառյակը.

**Ծաղիկ էիր, իբրև ծաղիկ թռչնեցար,  
Երազի պես աչքիս առաջ հալեցար.  
Ոնեղձ ամուսնուդ ինչո՞ւ այստեղ մոռացար,  
Հոգիս խավար թողեցիր, ո՞ւր հեռացար<sup>4</sup>:**

Հետագայում էլ Արուսյակը շարունակեց զբաղեցնել նրա միտքը: Արուսյակի կենդանությունը նրան նկարել էր Ստեփան Աղաջանյանը: Յուզաներկ այդ նկարը կախել էր ննջարանում, իր մահճակալի վերևը: Թախտի վրա դարսել էր կնոջ անկողինները ու ծածկել սավանով: Նույնությամբ պահել էր նրա գործածած բոլոր իրերը՝ թեյի բաժակը գզալը միջին, այնպես, ինչպես թողել էր վերջին օրերին, նրա ափսեները և այլ իրեր:

Ընթերցողի ներողամտությունը խնդրելով՝ ուզում ենք պատմել մի մանրադեպ, որը բնութագրական է ոչ միայն կնոջ նկատմամբ տածած սիրո համար, այլև ինքնին իրական մի գեղեցիկ դրվագ է:

Արուսյակի մահից հետո Աճառյանը նրա շրջագրեստը կախել էր իր գրասեղանի վերևում և օրվա ընթացքում մի քանի անգամ խոսում էր նրա հետ, իր ապրումներին հաղորդակից դարձնում, բացատրություններ տալիս օրվա աշխատանքի մասին: Ասում էր, թե այդ ձևով միշտ զգում է կնոջ ներկայությունը, ուրեմն իր հետ է:

Մի օր գողացվում է շրջագրեստը: Աճառյանն ընկնում է հոգեկան ապրումների մեջ, գրեթե կորցնում մտավոր հավա-

սարակչուութիւնը: Դիմում է միլիցիայի բաժանմունք, խոստանում արժեքից տասնապատիկ ավելի նվեր տալ գտնողին, բայց բոլոր ջանքերն անցնում են ապարդյուն:

Մի քանի ամիս անց Արովյան փողոցում տեսնում է անծանոթ մի կնոջ, հագին Արուսյակի շրջագգեստը: Ցնցվում է ամբողջ էութեամբ, առաջարկում իսկույն, հենց փողոցում հանել շորերը: Հավաքվում են մարդիկ, հանգստացնում: Գալիս են և միլիցիոներներ, կնոջն ու Աճառյանին տանում քաղմաս: Այստեղ ամեն ինչ պարզվում է: Անծանոթ կինը համաձայնվում է վերադարձնել շրջագգեստը գողին վճարած գումարն ստանալով:

Անցնում են օրեր: Աճառյանի ընկերներից Գրիգոր Չուբարը, որ լսել էր պատմութիւնը, հանդիպելով նրան, հարցնում է, թե այժմ հանգիստ է հոգեպես, դարձյալ Արուսյակը իր հետ խոստում է ամեն օր:

– Ո՛չ,– պատասխանում է լեզվաբանը:

– Ինչո՞ւ, նախկին տեղը չե՞ս կախել, հետը չե՞ս խոսում:

– Կախել եմ, խոսում եմ, բայց նա այլևս չի պատասխանում: Այդ շրջագգեստի միջից ինձ հետ զրուցում է ուրիշ կին, այդ շորերը հագնող կինը,– պատասխանում է:

Ուղիղ մեկ տասնամյակ նա ապրում է ամուրի մարդու առօրյայով, դառնում ավելի անտարբեր դեպի կյանքը, մանավանդ հագուստ-կապուստը: Նրա սենյակը աստիճանաբար զգացնել է տալիս կանացի ձեռքի բացակայութիւնը: Պահարանների փեղկերին կպցրած լրագրերը դեղնում են, խունանում, ապակիները կորցնում են թափանցիկութիւնը, կոտորվածները չեն վերանորոգվում: Ճիշտ է՝ անձնական կյանքում լինելով մաքրասեր, պարբերաբար մաքրել էր տալիս սենյակը, բայց միևնույնն է, կենցաղը մնում է թափթփված, կոտորված սեղանի ոտքի տակ արկղ է դրվում, վառարանի վրա շարունակ երևում է անհրապույր կերակրամանը:

Մնվել է դրսում: Այժմյան ունիվերմազի դիմաց եղել է մի ճաշարան, որը կոչվել է «Աբխտողոմ աղա»: Դա յուրահատուկ ժամադրավայրն է եղել 20-ական թվականների մեր մտավորականութեան, մասնավորապես պոլսահայ մտավորականութեան, քանի որ այնտեղ պատրաստել են գերազանցապես պոլսական համեղ կերակուրներ: Այստեղ են ճաշել Աճառյանը, Արա Սարգսյանը, Վահան Թոթովենցը, Մկրտիչ Զանանը և ու-

րիչներ: Աճառյանի մասին ստեղծված մանրադեպերից մի քանիսը վերաբերվում են նշանավոր այս ճաշարանին:

Հայաստան գալու առաջին օրերից Աճառյանը ձեռնամուխ է լինում «Արմատական բառարանի» տպագրությունների:

Սակայն հակառակ այդ գրքի նկատմամբ եղած բացարձակ դրական վերաբերմունքին, կային արգելակող հանգամանքներ:

Նախ Հայաստանի այն ժամանակվա տպագրական հնարավորությունները անբավարար էին նման ստվարածավալ և բազմալեզու ու բազմատառ մի գործ գլուխ բերելու համար:

Երևանի փոքրաթիվ տպարաններում կարելի էր գտնել ընդամենը երեքից չորս լեզվի տառեր՝ հայերեն, ռուսերեն, թուրքերեն, գուցե և վրացերեն, այն բերելով Թիֆլիսից, մինչդեռ «Արմատական բառարանում» օգտագործված էին աշխարհի տասնյակ լեզուների տառեր, նաև գաղափարագրեր, սեպագրեր և այլն, որոնք անհնար էր ճարել հեշտությամբ, թողնենք որ տառերի ձևաբերումն էլ դեռ չէր կարող վերացնել գիրքը շարելու, տպագրելու հետ կապված բազմապիսի դժվարությունները:

Վերջապես՝ կար շատ ավելի լուրջ մի խոչընդոտ՝ ուղղագրությունը: Հայտնի է, որ 1922 թ. Սովետական Հայաստանի կառավարությունն որոշմամբ ավանդական ուղղագրությունը փոխարինվեց նորով, ելակետ ունենալով մի տառ մի հնչյուն սկզբունքը<sup>5</sup>: Դա, ինչ խոսք, հեշտացրեց հայերենի ուղղագրությունը և գրությունն ըստ հնարավորին մոտեցրեց արտասանության:

Բայց ուներ լուրջ թերություններ. նախ փոխվում էր 1500 տարվա մշակույթ ունեցող մի ժողովրդի ուղղագրությունը, որով գրվել էր ամբողջ աշխարհին հայտնի տասնյակ հազարավոր ձեռագիր մատյաններ, տպագրության գյուտին հաջորդող տասնամյակներից սկսած աշխարհի տարբեր երկրներում նույն այդ ուղղագրությամբ էին տպագրվել հայերեն բոլոր գրքերը<sup>6</sup>:

Արեղյանի ուղղագրության թերություններից մեկն էլ այն էր, որ մեր լեզվից հանվել էին է և օ տառերը: Որ բառամիջում օ և ո հնչյունները պետք է փոխարինվեին մեկ տառով, ո-ով դա գուցե հասկանալի էր, սակայն, բառասկզբից էլ է և օ տառերը հանելը ոչ միայն չէր պատճառաբանվում, այլև առաջացնում էր մեծ դժվարություն: Բազմաթիվ բառեր, որոնք առաջ գրվում էին ե-ով և ո-ով, այժմ պիտի գրվեին երկու տառով, կամ վո կա-

պակցութեամբ, կամ յե (յերջանիկ, փոխանակ գրելու երջանիկ):

Բառարանագրութեան համար շատ կարևոր էր բառի նախնական ուղղագրութեան պահպանումը: Եթե հոտ նշանակում էր բուրմուռք, իսկ հօտ ոչխարի խումբ, ապա բառարանագիրները երեք չէին համաձայնվի նոր ուղղագրութեամբ դրանցից մեկնումեկի գրելակերպը փոխել, այդպիսի բառեր շատ կային ինչպես սեր՝ կաթի սեր, իսկ սէր՝ սիրել, և վերջապես մեր հիշատակած յ-ով սկսվող բայց հ հիշվող բազմաթիվ բառերը:

Հրապարակի վրա կար երեք բառարան, որոնցից երկուսը՝ Հ. Դադբաշյանի «Ռուս-հայերեն բառարանը» և Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» արդեն պատրաստ էին տպագրութեան, իսկ Ստ. Մալխասյանի «Բացատրական բառարանը» ընթացքի մեջ էր: Ի թիվս բազմաթիվ մտավորականների, այս երեք բառարանագիրները հրապարակով մերժեցին իրենց գրքերը հրատարակել նոր ուղղագրութեամբ: Դրանց մեջ առավել համառը և իր սկզբունքներին հավատարիմ մնացողը եղավ Աճառյանը:

Նա համառում էր նոր ուղղագրութեամբ տպագրվել, միաժամանակ որոնում էլք, դիմումներ կատարում ամեն կողմ, բացատրում բառարանագրութեան առանձնահատկությունները:

Վերջապես գտնվում է ելքը. նկատի ունենալով, որ նոր ուղղագրութեան պետական օրենքը տարածվում էր միայն տպագիր խոսքի վրա և ոչ ձեռագիր, առաջարկում է թույլ տալ իրեն գրքերը հրատարակել ձեռագիր, ապակետիպով: Այս հարցում նրան մեծապես օժանդակում է Պետական համալսարանի ոեկտոր Հակոբ Հովհաննիսյանը, որը եղել է մեծ լեզվաբանին լավագույն գնահատողներից: Կառավարությունը ընդառաջում է:

Անշուշտ ապակետիպի արտոնությունը չէր վերաբերում միայն հրապարակմանը, այլ այն բոլոր դասախոսներին, որոնք ուսումնական ձեռնարկներ էին պատրաստում և ցանկանում էին հրատարակել փոքր տպաքանակով: Այսպես Լեոն էլ հրատարակեց համալսարանական իր դասախոսությունները, հրատարակեցին և ուրիշներ, բայց ապակետիպով լույս ընծայելու արտոնությունից ամենամեծ օգտվողը եղավ Հրաչյա Աճառյանը, հասարակությունը ներկայացնելով ոչ միայն «Արմատական բառարանը», այլև մի քանի այլ աշխատություններ: Այս բոլորի ընդհանուր ծավալը անցնում էր 10.000 էջից, ամբողջությամբ գրված իր ձեռքով, գերծ որևէ վրիպակից:



**Հայաստան գալու առաջին տարիներին**



**Ակադեմիայի նիստերից մեկը**




**«Նոր կադրեր» երկչաբաթաթերթի և «Նոր ուսանող» ամսագրի անվանաթերթերը:**

**ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ**



**ՎԱՀԱՆ ԱՎԱԿՅԱՆ**



**ՀԱՅԿ ԱԶԱՏՅԱՆ**



**ՄՏԵՓԱՆ ՄՈՒՇԵՂՅԱՆ**



**ՄՈՒՇԵՂ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**



Համալսարանի մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնի  
առաջին շրջանավարտներն իրենց դասախոսների հետ (1925 թվական)

Առաջին շարքում (ձախից)՝ Վ. Հարությունյան, Ն. Տադևոսյան, Ե. Ասլանյան, Հ. Կարինյան, Լ. Մարուքյան, Ա. Պլուզյան, Ս. Տոնոյան, Մ. Զաքարյան, Մ. Բերբերյան: Երկրորդ շարքում՝ Ստ. Լիսիցյան, Մ. Աբեղյան, Հ. Մանուկյան, Հ. Հովհաննիսյան (ուկտոր), Հ. Գյուլի-Քեօկյան, Հ. Աճառյան, Ս. Հակոբյան, Լեո, Աչ. Հովհաննիսյան: Երրորդ շարքում՝ Գ. Ասատուր, Պ. Ստանիկյան, Ս. Մանուկյան, Մարգարյան, Վ. Թոթովենց, Յ. Սանդղազյան, Ա. Մեֆիկյան, Մ. Ծարանդեղյան, Պ. Զանոյան: Զորրորդ շարքում՝ Գ. Միքայելյան, Ստ. Ներսիսյան, Բ. Գևորգյան, Հ. Մանուկյան, Ս. Մաղաթեղյան, Հ. Գալստյան, Ա. Դովլաթյան, Մ. Կզարթեղյան, Դ. Լևոնյան, Ա. Գնթունի, Վ. Պողոսյան, Ե. Գասպարյան, Հ. Լևոնյան, Ս. Հովսեփյան, Ս. Պարսաթյան:





Համալսարանի դասախոսական կազմը 1923 թվականին

Առաջին շարքում (ձախից) **Լ. Ռոտինյանց**, **Պ. Քալանձարյան**, **Ռ. Ֆալանձարյան**, **Ա. Ներսիսյան**, **Հ. Աճառյան**, **Ե. Պալյան**, **Հ. Հովհաննիսյան**, **Գ. Ասատուր**, **Վ. Աբժրուհի**, **Ս. Կամսարական**, **Կ. Զարյան**: Երկրորդ շարքում— **Հ. Անժուր**, **Գ. Գրճեկյան**, **Ս. Երիցյան**, **Մ. Այվազյան**, **Գ. Մեղնիկյան**, **Ե. Շեկ-Հովսեփյան**, **Գ. Արեւյան**, **Յու. Շեկովիչիկով**, **Արշ. Հակոբյան**, **Փ. Հակոբյան**, **Ավ. Տեր-Պողոսյան**, **Ա. Քալանձար**, **Ա. Խաչատրյան**, **Գ.**

**Զուգարյան**: Երրորդ շարքում— **Ժ. Միրզախանյան**, **Ց. Խանգապյան**, **Լ. Վարդապետյան**, **Պ. Ստոնիկյան**, **Ս. Տիգրանյան**, **Հ. Հովհաննիսյան**, **Ա. Տերտեղյան**, **Բ. Բաճաճեղյան**, **Գ. Շիրվազյան**, **Յու. Իզմայիլով**, **Ալ. Հակոբյան**, **Ս. Տոնյան**, **Հ. Նավակառիկյան**, **Մ. Վարունջյան**, **Գ. Հայրապետյան**, **Ա. Ղազարամանյան**, **Ստ. Ղամբարյան**, **Թ. Ավրաբեգյան**, **Կ. Մելիք-Օհանջանյան**, **Լ. Մանուչարյան**, **Զ. Խոջանեճյան**:

## Գլուխ իններորդ

### ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.

#### ԱՊԱԿԵՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1925 թ. նոյեմբերի 15-ին Հայաստանի Կենտրոնական Նախագահությունը Ա. Կարինյանի գլխավորությամբ հատուկ հրամանագրով թույլ է տալիս «Արմատական բառարանի» հրատարակությունը հին ուղղագրությամբ:

Դա բազմավաստակ գիտնականի ամենաերջանիկ օրն է եղել: Նա սկսում է լարված ու տքնաջան աշխատանքի մի շրջան, որը տևում է ուղիղ 10 տարի: Մեծագույն եռանդով, իր մարգարտաշար ձեռագրով, օր օրին, ապակետիպի համար արտագրում է բառարանը ընդամենը երկու տեխնիկական աշխատակցի օգնությամբ, բազմացնում 400 օրինակ:

Հայտարարվում է բաժանորդագրություն, որն ունենում է մեծ հաջողություն: Բաժանորդագրվում են ոչ միայն Սովետական Միությունում ապրող հայ մտավորականներից շատերը, այլև արտասահմանից: Նա կազմում է մի մեծ մատյան, որտեղ գրում է բաժանորդների անունները: Յուրաքանչյուր պրակի լույս ընծայումից հետո անձամբ բաժանում է քաղաքում գտնվող բաժանորդներին, իսկ մյուսներին ուղարկում է փոստով<sup>1</sup>:

Աշխարհի տարբեր կողմերից ստացվում են պահանջներ, մանավանդ Եվրոպայի ու Ամերիկայի կենտրոնական քաղաքների գրադարաններից, այդ թվում Վաշինգտոնի Կոնգրեսի Հայտնի գրադարանից<sup>2</sup>:

Հաջողությունը ավելի է խանդավառում հեղինակին: Նա գոհ էր, որ թույլ էր տրվել գրքի հրատարակությունը: Գեթ այդ տարիների համար ապակետիպն էլ ավելի նախընտրելի էր համարվում, քանի որ հնարավորություն էր ունենալու օգտագործել աշխարհի շատ լեզուների տառերը, լինեին դրանք հընչունային, վանկագրեր թե գաղափարագրեր: Բացի այն լեզու-

ներից, որոնք գրվում էին լատիներեն կամ արաբերեն տառերով, իսկ դրանց թիվը մեծ էր, — ազատորեն կարող էր օգտագործել վրացերեն, հունարեն, եբրայեցերեն, ասորերեն, պահլավերեն, չինարեն, ճապոներեն, ղենդերեն, ույղուրերեն և այլ տառեր, նաև բևեռագրեր:

«Արմատական բառարանի» առաջին երեք հատորները լույս տեսան Երևանի պետական համալսարանի կողմից, իսկ հետագա հատորները՝ Մելքոնյան ֆոնդի: Ա հատորը պարունակում է Ա-Բ տառերը և բաղկացած է 1232 էջից, լույս տեսավ 1926 թվին, Բ հատորը պարունակում է Գ-Թ տառերը, գրեթե նույն ծավալով, լույս տեսավ 1928 թ., Գ հատորը (Ժ-Կ տառեր) լույս տեսավ 1930 թվին, Դ հատորը (Հ-Յ տառեր)՝ 1930 թ., Ե հատորը (Ն-Ռ տառեր)՝ 1931 թ., Զ հատորը (Ս-Ֆ տառեր)՝ 1932 թ.:

Ապակետիպով տպված վերջին հատորի վերջին էջում Աճառյանը նշել է իր ծանր աշխատանքի ավարտման ոչ միայն տարին, ամիսը, օրը, այլև անգամ ժամը հետևյալ սողերով. «1932 ղեկտեմբեր 21, ժ. 10 եր.: Ընդամենը 8344 էջ»<sup>3</sup>:

Վերոհիշյալ սողերից երևում է, թե նա այդ օրը ինչպիսի ուրախ վիճակի մեջ է եղել, ունեցել է երկար ճանապարհ անցած մարդու զոհունակութունը: Իր այդ ուրախությանը մասնակից է դարձրել նաև ուսանողներից մեկին ու նրա ներկայությամբ է գրել վերոհիշյալ սողերը:

\* \* \*

Այժմ տեսնենք, թե ինչ է ներկայացնում իրենից երկար տարիների աշխատանքի արդյունք «Արմատական բառարանը»: Հեղինակը առաջաբանում հետևյալ սեղմ բնութագրումն է տալիս. «Ներկա աշխատությունս ամբողջական ցանկն է հայերեն լեզվի արմատների, իրենց բացատրությամբ և ստուգաբանության հետ միասին»<sup>4</sup>: Այս սողերին հաջորդող ընդարձակ բացատրություններից երևում է, որ այն շատ հեռու է սովորական մի բառացանկ լինելուց, թեկուզ այն բառարանների նման, որոնք տալիս են վկայություններ: Աճառյանի բառարանը լեզվաբանական, բանասիրական մանրամասներով օժտված աշխատություն է, որտեղ տրվում է ամեն մի բառի ամենաման-

րամասն կենսագրությունը, եթե կարելի է այդպես կոչել, բառի ծագման շրջանից մինչև նորագույն ժամանակները նրա կրած փոփոխությունները:

Յուրաքանչյուր արմատի մասին հեղինակը խոսում է հետևյալ հինգ բաժիններում.

**Ա. բաժին** – Բառագիտություն, խոսվում է արմատի մասին, ներկայացվում բառի արմատական ձևը, ցույց տրվում, թե ինչպիսին է եղել նա հին նախալեզվում, ապա տրվում է այդ արմատի հոլովման և խոնարհման ձևերը, նշանակությունը, այնուհետև վկայություններ, այսինքն մեջբերումներ մեր հին մատենագրությունից, թե այդ բառը առաջին անգամ որտեղ, որ ժամանակում, որ հեղինակի որ երկի որ հատվածում է գործածվել: Դրանից հետո հեղինակը դնում է ածանցները, այսինքն նույն արմատից առաջացած կարևոր բառերը՝ դարձյալ իրենց վկայությամբ, ցույց տալով, թե հայերեն լեզվի այս կամ այն արմատը ինչպիսի կենսունակություն ունի մեր լեզվի մեջ «կղզիացած և քիչ գործածական մի ձև» է, թե աճած ու զարգացած բառ»: Այնուհետև ներկայացնում է արմատական բառի և ածանցված ձևերի տարբեր գրչությունները: Սա շատ կարևոր է, որովհետև ինչպես ցույց է տալիս Աճառյանը, կան բառեր, որոնց սխալ ձևն է ընդունված լեզվի մեջ, իսկ ճիշտը մնում է ձեռագրերում իբրև տարբերակ:

**Բ. բաժնում**, որը բառարանի հիմնական և կարևորագույն մասն է, Աճառյանը տալիս է բառի գիտական ստուգաբանությունը, թե որտեղից է ծագել արմատը, բնիկ հայերենն է, թե փոխառյալ, ցույց տալով դրանց ցեղակից բառերը այլ լեզուներում: Բառարանն օգտագործողը տեսնում է տվյալ արմատի կապը բազմաթիվ լեզուների հետ, իմանում է, թե որ լեզվից ինչ ճանապարհով է այն անցել հայերենին: Նա տարբեր նշաններով ցույց է տալիս բնիկ հայ բառերը, օտար փոխառյալ բառերը, բնաձայն բառերը, հայակերտ բառերը և սուտ ու չինծու բառերը:

**Գ. բաժնում** տրվում է արմատի ստուգաբանությունների պատմությունը, 5-րդ դարից մինչև մեր օրերը՝ անկախ նրանց վավերականությունից: Այդ բաժնում բերված են միամիտ ու հակադիտական շատ մեկնաբանություններ, նաև այնպիսի ստուգաբանություններ, որոնք տվյալ շրջանում «ղեռ ան-

ստույգ և տատանատու են, բայց կարող են թերևս հետո մի նոր օրենքի գորությամբ վավերական դառնալ»: Աճառյանը հաճախ է ասել թե եթե ծավալային նկատառումը խանգարի «Արմատական բառարանի» ամբողջական տպագրությունը, ապա հնարավոր է կրճատել կամ սեղմել միայն այդ մասը:

Ուշագրավ է բառարանի չորրորդ բաժինը, որը հեղինակը վերնագրում է «գավառական»: Այս բաժնում տրվում է յուրաքանչյուր արմատի ստացած ձևերը զանազան գավառական բարբառներում, հետևաբար և պատկերացում է տալիս բառի կենսունակության մասին, թե նա որ բարբառներում ապրում է դեռ ու գործածվում ժողովրդի կողմից ու ինչպիսի փոփոխություն է ենթարկվել: Այժմ մենք ունենք բարբառագիտական բազմաթիվ աշխատություններ, որոնց մի մասի վերջում տրված է նաև բառարան. դրանից կարելի է իմանալ, թե այս կամ այն բառը ինչ կերպարանափոխություն է կրել տվյալ բարբառում, բայց թե նույն բառը ինչ ձևափոխությամբ է օգտագործվում մյուս բարբառներում, այսինքն դրանց համեմատական տախտակը տալիս է միայն Աճառյանը «Արմատական բառարանի» այս բաժնում, մեծապես օգնելով բարբառների հնությունը, տեղաբաշխումը ուսումնասիրողներին:

Հինգերորդ բաժնում ասվում է, թե տվյալ արմատը որ լեզուներն են փոխ վերցրել հայերենից: Ինչպես մենք տեսանք նախորդ էջերում, հայոց լեզվի զարգացման պատմության հետ կապված այս կարևոր հարցը առաջին անգամ քննության էր առել Աճառյանը և նրան ենք պարտական, թե հայերենը իր հերթին որ լեզուներին է բառեր տվել:

Իր տեսակի մեջ եզակի այս աշխատության համար հեղինակն օգտագործել է ծովածավալ գրականություն, որոնց համառոտագրությունը տպեց հետագայում գրքի առաջաբանում: Նախ ուսումնասիրել, կարդացել, նյութեր է քաղել հայ հին ամբողջ մատենագրությունից, որի պարունակած գրքերի թիվը հասնում է մոտ հազարի:

Հիմնական ատաղձ ունենալով մեր հայ հին մատենագրությունը, տարբեր բաժինների համար օգտագործել է անհրաժեշտ առավելագույն գրականությունը: Այսպես, առաջին բարբառագիտական բաժնի համար օգտագործել է Մխիթար աբբայի եռահատոր «Քառգիրք Հայկազյան լեզվի» աշխատությունը<sup>5</sup>

Մխիթարյանների հայտնի «Նոր բառգիրք Հայկազյան լեզվի» բառարանի երկու հատորները<sup>6</sup>, որը հանդիսանում է հայերեն լեզվի ամենից կատարյալ բառարանը, Մխիթարյաններից Մ. Զախճախյանի հայ-իտալերեն բառարանը<sup>7</sup>, Մ. Ավգերյանի «Հայկազյան առձեռն բառարանը», Փեչտիմալճյանի «Բառգիրք Հայկազյան լեզվի»<sup>8</sup> և այլն, ինչպես նաև Ղ. Ալիչանի «Հայ բուսակը»<sup>9</sup>, Ս. Գափամաճյանի ու Մ. Քաջունու, Նորայր Բյուզանդացու<sup>10</sup> և ուրիշների բազմաթիվ բառարանները:

Օգտագործելով հանդերձ վերոհիշյալ բոլոր աղբյուրները, նաև Աստվածաշնչի համաբարբառը, կատարել է բազմաթիվ ճշգրտումներ, լրացումներ: Արդյունք՝ իր ընթերցումների և եզրակացությունների: Այսպես, պարզել է, որ անգամ կոթողային գործ հանդիսացող «Նոր Հայկազյան բառգրքում» բառերի շատ հոլովաձևեր տրված են ենթադրաբար, ուստի վերջերել է միայն այն հոլովումները, որոնց ինքը հանդիպել է մեսրոպյան հայերենում, հետևաբար առավել վավերական են:

«Հասկանալի է թե որքան ծանր գործ էր, — գրում է նա, — ամբողջ ոսկեդարյան մատենագրությունը կարդալ և հոլովներ շոկել»:

Ստուգաբանական բաժնի համար հիմնականում օգտագործել է իր ուսուցիչ Հյուբշմանի «Հայոց լեզվի քերականությունը»: Բացի Հյուբշմանից, օգտագործել է Մեյեի, Պետերսոնի և այլ հայագետների ընդունելի ստուգաբանությունները: Վիթխարի թիվ են կազմում այն ստուգաբանությունները (մոտ 1600 բառ, որոնցից 136 բնիկ հայ), որ կատարել է ինքը: Այդ մասին գրքի առաջաբանում ասում է. «Գիտունների առաջարկած ստուգաբանություններից դուրս, ինքս էլ ունիմ բազմաթիվ ստուգաբանություններ, մի մասը արդեն հրատարակված զանազան տեղեր, մի մասը՝ անտիպ: Այն ստուգաբանությունները, որոնք այժմ անճիշտ են համարում, տրված են պատմականի շարքում, իսկ այն ստուգաբանությունները, որոնք ենթարկել են Հյուբշմանի և Մեյեի հավանություն, և կամ քննություն խիստ բովից անցկացնելով կարծում են թե համապատասխան են գիտություն պահանջներին, համարձակվել են դնել ուղիղ ստուգաբանությանը շարքը, բայց նշանակելով միշտ Աճ. ստորագրություն, առ ի զգուշություն ընթերցողների»<sup>11</sup>:

Աճառյանն այստեղ պարզապես համեստություն է անում, այն տարիներին, երբ հրատարակվում էր «Արմատական բառարանը», հայագիտության համար մեծագույն հեղինակ էին ոչ թե Հյուբըմանն ու Մեյեն, այլ ինքը, որի երախտիքը այդ բնագավառում գիտական աշխարհում գնահատվում էր բոլորի կողմից:

Բառարանի երրորդ բաժնի համար Աճառյանը օգտագործել է այն բոլոր հեղինակներին, որոնք սկսած հենց 5-րդ դարից մինչև մեր օրերը փորձել են ստուգաբանել այս կամ այն հայերեն բառը, անկախ այն բանից, թե որքանով է հաջողվել նրանց: **Փավառական** բաժնի համար օգտվել է տասնամյակների ընթացքում իր հետազոտած բազմաթիվ բարբառների ատաղձից, նաև բարբառագիտական այն աշխատություններից, որ լույս էին տեսել մինչ այդ:

Բացի լեզվաբանական արժեքից «Արմատական բառարանը» ունի ընդհանուր մշակութային նշանակություն:

Այստեղ էլ նկատում ենք կողմնակի շեղումների այն սովորությունը, որ հատուկ է առհասարակ նրա բոլոր երկերին: Այս կամ այն բառի քննություն ընթացքում սիրում է մեջ բերել հարակից դեպքեր, եղելություններ, որոնք լեզվաբանության հետ չունեն որևէ առնչություն, բայց կապվում են նյութի, տվյալ բառի «կենսագրության», ճակատագրի հետ, ցույց են տալիս բառի «գաղթականության» շարժառիթները: Բերենք մի օրինակ:

Տալով բնիկ հայերեն **Մած** բառի վկայությունները, ստուգաբանությունը, այդ բառի պատկերը հնդեվրոպական քույր բոլոր լեզուներում, և եզրակացնելով, որ արմատի բուն նշանակությունը լավագույն ձևով պահած է հայերենը, որի ցույց տված զանազան առումները գեղեցիկ կերպով միացնում են մյուս լեզուների երևան հանած նորանոր նշանակություններ, անցնում է **Մած**, **մածուն**, **մածուցիկ** բառի փոխառություններին մեր լեզվից: Տալիս է շատ ուշագրավ տեղեկություններ, թե ինչպես այդ բառը անցել է վրացերենին, թուրքերենին, հունարենին և այլ տասնյակ լեզուների, անում է հետևյալ եզրակացությունը. «Հիշված ազգերի մեջ կարող է ոչ միայն հայ բառը, այլև նրա հետ նյութը կամ մածուն պատրաստելու եղանակը Հայաստանից մտած լինել, ինչպես որ այդ բանը տեղի է ունե-

ցել վերջին ժամանակներս ուրիշ տեղեր»։ Ապա նա ասում է, մածուն պատրաստելու եղանակը և այդ ճանապարհով մածուն բառը մուտք է գործել նաև Ամերիկա և անգլերեն լեզվի մեջ, կեսարացի բժիշկ Տատրյանի միջոցով, որը սկզբում մածունը որպես բժշկական սնունդ է հանձնարարել, ձեռք բերել մենաչնորհ, հետագայում արդեն տարածվել է ամբողջ Ամերիկայում։

Նման հետաքրքրական շատ շեղումներ կարելի է գտնել «Արմատական բառարանում»։

Ահա այսպիսի մի հսկա կոթող է, որ գիտական աշխարհի առաջ գրվում էր 1932 թվականի վերջերին «Արմատական բառարանի» վերջին հատորի ավարտումով։

Ծանր, հոգնատանջ աշխատանքը խարխուլում է Աճառյանի առողջությունը. առանց այն էլ հոդացավերից տառապող գիտնականը 1932 թ. վերջերին ծանր հիվանդանում է։ Ապաքինվելուց հետո, 1933 թ. հունվարի 10-ին հ. Ն. Ակինյանին գրում էր. «... վրա հասավ բավական ծանր հիվանդություն մը։ Երկու շաբաթ տունը պառկելից հետո ինձ հիվանդանոց փոխադրեցին։ Երկու շաբաթ այ հոն պառկեցա և դուրս եկա՝ այցելու հիվանդ լինելու պայմանով։ Հիմա լավ եմ, ապաքինյալ, բայց ոչ լիովին կազդուրյալ»<sup>12</sup>։

Բառարանը իսկույն իր վրա հրավիրեց աշխարհի չորս կողմերում գտնվող խոշորագույն հայագետների ուշադրությունը։ Մենք արդեն տեսանք թե նրա մասին ինչպիսի գրվատալի կարծիքներ էին հայտնել Խալաթյանն ու Մառը դեռևս ձեռագիր վիճակում։ Տպագրվելուց հետո հայ և օտար մամուլում լույս են տեսնում բազմաթիվ գրախոսություններ, լի հիացական խոսքերով։ Աճառյանն իր բառարանի վերջաբանում դրանցից մի քանիսը մեջ է բերել։ Ավելորդ չենք համարում դնել նաև այստեղ, ավելացնելով մի քանի այլ գնահատականներ, որոնք լույս են տեսել հետագայում։ Աճառյանի ուսուցիչը, Մեյեն «Արմատական բառարանի» մասին հետևյալն է գրել Փարիզի լեզվաբանական ընկերությունից բյուլետենում.

«Մեր պաշտոնակից եղբայրը, Հ. Աճառյանը՝ Երևանի համալսարանից, իր հայերենի ստուգաբանական բառարանով կանգնեցրել է մի կոթող։ Ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան։ Հպարտ եմ,



որ ունեցել եմ պր. Աճառյանին երկար տարիներ իմ աշակերտների թվում. նա մեկն է նրանցից, որոնք պատիվ են բերում այն դպրոցին, որից անցել են»<sup>13</sup>;

Հայագետ և վրացագետ Հանզ Ֆոկլթր 1938 թ. Նորվեգիայի «Լեզվաբանական հիշատակարանի» մեջ «Արմատական բառարանի» մասին գրել է. «Բարձրարժեք և անհրաժեշտ մի գործ է: Լեզվաբանություն մեծ ծառայություն մատուցած կլինի այն գիտնականը, որը հանձն կառնի Հ. Աճառյանի ընտիր ու թանկագին այս բառարանը առձեռն ու համառոտ ներկայացնել մեզ եվրոպական որևէ լեզվով»<sup>14</sup>:

Վիեննացի լեզվաբան Կեորգ Սոլթան, որի հայագիտական աշխատությունները տպված են նաև «Հանդես ամսօրյայում», մի քանի տարի աշխատել է «Արմատական բառարանի» վրա, ուշադրություն դարձնելով հատկապես հնդեվրոպական արմատների վրա:

Հայերեն գրախոսականներից հիշատակություն արժանի է «Հանդես ամսօրյայի» երկարամյա խմբագիր Հ. Ն. Ակինյանի ընդարձակ գրախոսությունը՝ լույս տեսած այդ պարբերականում: Ակինյանը գրում է.

«Հայերեն արմատական բառարան». այսպես անպաճույճ որակած է հեղինակը յուր աշխատասիրությունը. բայց այս վերնագիրը չի ներկայացնում ճշգրիտ գաղափար բովանդակությանը մասին. ես պիտի նախընտրեի կոչել բառագանձ հայերեն լեզվի, արմատական, ստուգաբանական, գավառաբանական և պատմական ուսումնասիրության բառերու: Այս հորջորջումը լիովին պիտի համապատասխաներ այն բովանդակության, զոր կրնդգրկե բառգիրքս: ... զզլխիչ ծրագիր արդարև: Ի տես այս ծրագրին պիտի բացականչեի, թե հեղինակը ձեռնամուխ եղած է յանհնարինս: Անհատական ուժը չէր կարող հասնիլ ընդարձակաձավալ կառուցվածքին կատարման, բայց Աճառյան հասած է բարյավ: Նա տված է աշխատություն մը, որ կը մնա աննախընթաց օրինակ նույնիսկ համաշխարհային գրականության մեջ»<sup>15</sup>:

Ակինյանը կատարել էր նաև մի շարք դիտողություններ: Մտածելով, որ Աճառյանը կարող է դժգոհել զրանից, անձնական մի նամակում հարցրել էր, թե չի՞ նեղացել:

Աճառյանը, պատասխանելով այդ նամակին, գրում էր.

«Գալով այն մի քանի դիտողությունցանց, որ ըրած եք, փոխանակ ինձի ցավեցնելու, առիթ պիտի տան ինձի ավելի խորամուխ ըլլալու քննությունց մեջ և հասնելու ավելի կատարյալին: Չկա գործ մը, որ ինքն իր մեջ կատարյալ ըլլա: Եվ ես ամենքեն ավելի լավ գիտեմ աշխատությունս պակասները: Բայց կատարելագույնին հասնելու համար միայն մի միջոց կար, ըլլալ Վիեննայի Մխիթարյանց Մատենադարանին առընթեր: Եվ այս էր իմ ծրագիրս ու նպատակս 1900 թվեն ի վեր: Միայն կուզեի ինչքան հայկական կարևոր կեդրոն կա, պտըտիլ, տեսնել, հավաքել և հետո անցնիլ Վիեննա, հոն լրացնելու համար մնացած պակասը: Բայց որքան որ առաջին մասը հաջողությամբ լրացուցի, երկրորդ մասը անկարելի եղավ: Չկրցա Վիեննա գալ: Եվ ավելի երկար սպասել աշխատությունս տպագրության՝ անմիտ էր: Բարեբախտաբար գիրքը ապակետիպ է և օր մը, երբ ամբողջ օրինակները կսպառին, (միայն 150 օր. մնաց ծախու), անշուշտ ավելի հմուտ մեկը պիտի գտնվի, որ նորեն մշակե աշխատությունը և թերևս իմ մահվանես հետո տպագրությամբ լույս ընծայե»<sup>16</sup>:

«Արմատական բառարանի» վեցերորդ հատորի լույս ընծայման տարում արդեն դժվար էր ճարել առաջին հատորը: Բառարանի այդքան շուտ սպառումը, գիտական աշխարհում ամենաջերմ գնահատականի արժանանալը, անհրաժեշտություն են դարձնում նրա վերահրատարակությունը արդեն ոչ թե ձեռագիր, այսինքն ապակետիպ, այլ տպագիր: Սովետական Հայաստանի լուսավորության ժող. կոմիսարիատի 1930–34 թվականներին ձեռնամուխ է լինում այդ շատ կարևոր, բայց միաժամանակ նյութական մեծ զոհողություններ պահանջող և տեխնիկական դժվարություններ ներկայացնող գործին:

Լուսժողկոմատի հանձնարարությամբ Պետհրատի առաջին տպարանի դիրեկտոր Էդվարդ Չոփուրյանը կատարում է նախապատրաստական աշխատանք: Մոսկվայից, Լենինգրադից բերում են լեզվաբանական աշխատությունների համար անհրաժեշտ տառատեսակներ, այդ թվում արաբերեն, եբրայերեն և հունարեն: Վրաստանից բերվում են վրացերեն տառեր: Տպարանում առանձնացվում է մի փոքրիկ սենյակ, որտեղ դասավորվում են վերոհիշյալ տառերը պարունակող տառարկաները: 1934 թ. վերջերից սկսվում է աշխատանքը: Որոշվում է

նախ հրատարակել «Արմատական բառարանի» առաջաբանը, վերջաբանը և հավելվածային մասը՝ լրացուցիչ մի հատորով, ապա անցնել առաջին հատորին:

Այս դժվարին, բայց միաժամանակ պատվավոր աշխատանքի շարվածքն է, որ վստահվեց մեզ և առաջին անգամ Աճառյանի հետ ծանոթացանք այդ առիթով: Միասին զանազան տառեր կտրելով, խարտոցելով ստեղծում էինք այնպիսի տառանմուշներ, որոնք պակասում էին մեր տպարանում: Այսպես մենք պատրաստեցինք պահլավերեն մի քանի բառեր, որոնք երբ տպագրված տեսավ Աճառյանը, անսահման ուրախացավ և ասաց, որ չի տարակուսում, թե կտեսնի «Արմատական բառարանը» լրիվ տպագրված: Նպատակ ուներ շատ դժվար շարելի մի շարք բառեր տալ կլիշեով:

«Արմատական բառարանի» 7-րդ հատորի տպագրությունն ամիսները Աճառյանի կյանքի ամենաներջանիկ օրերն էին: Սանդավառ պատանու նման՝ ձեռագրերը դրած թևի տակ՝ վազում էր տպարանից տուն, տանից համալսարան:

Ուրախություն պատճառը ոչ միայն այն էր, որ 9000 էջանոց մի սովոր գործ հասել էր իր վախճանին, սկսվել էր տպագրությունը այն գիտական աշխարհին ներկայացնելու հնարավորություն, այլև այն, որ կառավարությունը թույլ էր տվել, որ հավելվածային այդ 7-րդ հատորը լույս տեսնի հին ուղղագրությունը: Դա առաջին դեպքն էր, որ Սովետական Հայաստանում Աճառյանից լույս էր տեսնում որևէ բան՝ հին ուղղագրությանը և առհասարակ միակ բացառությունը մնաց ուղղագրական ռեֆորմից հետո: Եվ վերջապես Լուսժողկոմ Լ. Արիսյանը խոստացել էր արտոնությունը տարածել ամբողջ «Արմատական բառարանի» վրա, անգամ «Հայոց լեզվի պատմություն», այն դիտելով վերոհիշյալ բառարանի շարունակությունը: «Արմատական բառարանը» փառք ու պատիվ էր ոչ միայն հեղինակի համար, այլև իր զարգացման առաջին տասնամյակի մեջ գտնվող երիտասարդ Սովետական Հայաստանի համար, որը Աճառյանի, Աբեղյանի ու Մանանդյանի շնորհիվ արդեն հայագիտական կենտրոնի իր իրավունքները ամրապնդում էր և գրավում ուշադրություն:

7-րդ հատորը լույս տեսավ 1935 թ. ընտիր տպագրությամբ, աննշան վրիպակներով: Հեղինակն իր վերջաբանում, ծանր մի

աշխատանք պատվով կատարողի օրինական գոհունակութեամբ հայտնեց իր վերաբերմունքը այն բոլոր մարդկանց նկատմամբ, որ օժանդակել էին այս վիթխարի գործի ավարտմանը:

\* \* \*

«Արմատական բառարանի» հրատարակութեանը զուգընթաց այդ տասնամյակում Աճառյանը ապակետիպով լույս է ընծայել տարբեր բնագավառներ շոշափող 10-ից ավելի այլ աշխատություններ:

Դրանցից ամենից ծավալունները բարբառագիտական երեք աշխատություններ են: Առաջինը «Քննություն Նոր Նախիջևանի (Խրիմի բարբառի)» գիրքն է, որ հրատարակվեց 1925 թվականին, այսինքն՝ «Արմատական բառարանի» ապակետիպի աշխատանքներն սկսվելու տարում: Դրան հաջորդեցին «Քննություն Մարաղայի բարբառի» և «Քննություն Ագուլխի բարբառի» աշխատությունները<sup>17</sup>:

Բարբառագիտական այս երեք աշխատություններին անդրադառնալու ենք հետագայում, երբ ուրվագծենք սովետական տարիներին այդ ուղղությամբ նրա կատարած աշխատանքը:

Բացի վերոհիշյալ երկերից, ապակետիպով հրատարակել է մի քանի դասագիրք-ձեռնարկներ: Դրանցից են «Պարսկական հատընտիրը» (1925 թ.), որով նա երկար տարիներ պարսկերեն է դասավանդել Պետական համալսարանում ու 1937 թվականին վերջապես տպագրել:

«Պարսկական հատընտիրը» դյուրուսույց լավագույն մի ձեռնարկ է, որտեղ նախ տրվում է պարսկերենի այբուբենը, 2 տառով և 3 տառով կապերը, նմուշներ բազմատառ կցումներից, ձայնավորները, որին հաջորդում են հոլովումները, դերանունները, ցուցականները, վերջապես խոնարհումը, անկանոն բայերի ցանկով: Քերականական այս հիմնական գիտելիքներից հետո, որի վերջում տրված են թվերը, գալիս են ընթերցանության նյութերը՝ առածներ, առակներ, նմուշներ Օմար Խայամի, Սաադիի, Խաբանիի, Ջալալեդդին Ռումիի, Հաֆըզի, Ֆիրդուսիի, Անսարի ստեղծագործություններից:

Այս կարգի աշխատություններ են «Գրաբարի ուսուցիչը»

(1935 թ.) և «Գրաբարի ծաղկաքաղը» (1936 թ.), որոնք հետագայում արժանացել են կրկնակ տպագրություն և երկար տարիներ օգտագործվել են համալսարանում որպես գրաբարի ձեռնարկներ:

Առաջինը պարունակում է գրաբարի քերականության հետ կապված ամենաէական գիտելիքները, մատուցված մանկավարժական հանրամատչելի սկզբունքներով, իսկ երկրորդը՝ որ ըստ էության նախորդի շարունակությունը պետք է համարել և այդպես էլ տպագրված է հետագայում (1954), պարունակում է ընթերցանության համար ընտրված նմուշներ՝ գրաբարի տարբեր շրջաններից (վիպասանական, մեսրոպյան և հետմեսրոպյան շրջաններ):

Աճառյանը 1926 թվականին հրատարակել է մի այլ աշխատություն էլ «Ձեռագրական սրբագրություններ հայ մատենագիրների մեջ»:

Մենք արդեն թվարկել ենք նրա այս կարգի աշխատություններից մի քանիսը, առանց խոսելու, թե ինչ բնույթի սրբագրություններ է, որ նա կատարում էր: Կատարել է ձեռագրական երկու կարգի սրբագրություններ, դրանց մի մասը վերաբերում է գրիչների սխալ արտագրության, բառերի աղավաղման: Երկրորդ կարգի սրբագրությունները վերաբերում են տպագիր գրքերին, որտեղ աղավաղումները առաջացած կարող են լինել կամ գրիչների սխալ արտագրությունից, կամ հրատարակիչների ոչ ձիշտ ընթերցումից և կամ լինել տպագրական վրիպակներ:

1926 թ. հրատարակված «Ձեռագրական սրբագրությունները» ամբողջովին վերաբերում են մեր մատենագիրների կամ տաղերգուների տպագիր գրքերին (Եզնիկ, Բուզանդ, Փարպեցի, Թովմա Արծրունի, Միխայել Ասորի, Մատթեոս Ուռհայեցի, Նահապետ Քուչակ, Կոստանդին Երզնկացի և այլն). ճշտումների ընդհանուր թիվն է 87: Դրանցից մի քանիսը կարող են վիճարկվել, բայց մեծ մասը առարկություն չվերցնող ուղղումներ են, սրամիտ կոահումներ և ունեն գիտական նշանակություն, գործնական արժեք: Հատուկ ուսումնասիրության հարց է թե տարիների ընթացքում Աճառյանի առաջարկած այս կարգի հարյուրավոր սրբագրություններից քանիսն է հաշվի առնվել համապատասխան պատմագիրների կամ տաղերգուների նոր

հրատարակություններում, քանի որ համոզիչ ու փաստարկված ամեն մի ճշտում՝ ասենք Եղիշեի, Փարպեցու, Եզնիկի և այլոց ձեռագրերում կամ տպագիր օրինակներում՝ օգտակար է:

Մեր մասնակի համեմատությունը ցույց տվեց, որ Աճառյանի սրբագրությունների նկատելի մասը հաշվի առնվել են, եթե համապատասխան երկերի նոր հրատարակությունները պատրաստողները ծանոթ են եղել լեզվաբանի առաջարկներին, իսկ եթե անտեղյակ են եղել, սխալը տարերայնորեն կրկնվել է:

Աճառյանի սրբագրությունը հաճախ օգնել է հրատարակիչներին ավելի սրամիտ կոահումներ անելու: Բերենք մեկ օրինակ: Նա Նահապետ Քուչակի տաղերի փարիզյան հրատարակության մեջ<sup>18</sup> հանդիպող ճաղան կոտու անհասկանալի արտահայտությունը սրբագրել է ճաւշան «գրահ» բառով, որը հիանալիորեն իմաստավորել է քառյակը, թեև ճաւշանին հաջորդող կոտու բառի բացատրությունը նրա մոտ մնացել է մի քիչ անորոշ:

Ա. Չոպանյանը հետագայում «Հայրեններու Բուրաստանը» ժողովածուն հրատարակելիս ոչ միայն հաշվի է առել Աճառյանի սրբագրությունը, այլ «գրահ»-ի իմաստը նրան հուշել է գտնել կոտու բառը և այդ տողը դարձրել է «Չար փուշ պատողին ճրկրուն՝ ես հագնիմ ձօջանը կոտու» այսինքն՝ կոպի գրահ հագնեմ<sup>19</sup>:

Այսպիսով վերջնականապես սրբագրվել է և իմաստավորվել քառյակի մուժ բովանդակությունը:

Դժբախտաբար այս գրքի տպաքանակի չափազանց քչությունը (50 օրինակ) այն չի դրել շատ բանասերների տրամադրության տակ, և ոմանք Հնարավորություն չեն ունեցել հաշվի առնելու շատ սրամիտ ու ճիշտ ուղղումներ: Բերենք մի նմուշ:

Աճառյանը սրբագրել է մի բառ Կոստանդին Երզնկացու տաղերի մեջ: Այդ տաղերի վեներտիկյան (1905) հրատարակության մեջ նրա ուշադրությունը գրավել է հետևյալ քառյակը...

Ձերդ ըզլուսին սուրաթ բոլոր,

Շուրջ երեսին մազերն ոլոր.

Այնով արեր է շատ մոլոր.

Ոնցտի լուսով յիս ցաթեցաւ:

Այստեղ միանգամայն անիմաստ է Ոնցտի լուսով արտա-

Հայտույթյունը, մանավանդ որ **ոնցտի** բառը ոչ հանդիպում ենք մեր հին մատենագրույթյան մեջ և ոչ էլ գավառաբարբառներում: Աճառյանը այն սրբագրում է **ոնց տի** լուսով յիս ծաթեցաւ, որը և լուսավորել է մթագնած իմաստը: Գծբախտաբար այս ճշտումը անձանոթ լինելով Կոստանդին Երզնկացու տաղերի սովետական հրատարակույթյունը պատրաստողին, սխալը կրկնվել է այստեղ<sup>20</sup>:

Բերված երկու օրինակները բավական են ցույց տալու համար, թե գիտական ինչպիսի մեծ արժեք են ներկայացնում Աճառյանի արտաքուստ մանր թվացող սրբագրույթյունները:

1927 թ. ապակետիպով Աճառյանը հրատարակել է մի գրքույկ էլ «Վավերագրեր հայ պարսկական հարաբերույթյանց մասին»: Պարունակում է 6 պարսկերեն և 1 թուրքերեն վավերագրերի բնագիրը, նրանց լատիներեն տառադարձույթյունները և հայերեն թարգմանույթյունը:

Առաջաբանից իմանում ենք, որ այդ վավերագրերը Մոսկվայի արխիվներում հայտնաբերել է ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը և նրա խնդրանքով էլ, ըստ երևույթին, թարգմանել է, մանավանդ, որ դրանցից միայն մեկն է եղել Հայտնի գիտույթյանը, օգտագործվել Կ. Եղյանի կողմից:

Ինչպես նկատում ենք, այս ամբողջ տասնամյակում Աճառյանը համռոտ է նոր ուղղագրույթյամբ որևէ գիրք տպագրել, նախընտրել է ապակետիպը, և եթե մի քանի գրքույկներ տպագրել է, ինչպես «Գրաբարի ծաղկաքաղը», «Պարսկական հատընտիրը», ապա աշխատել է, որպեսզի և չխախտի պետական ղեկրետը, ոչ էլ իր սկզբունքը: «Գրաբարի ծաղկաքաղը», օրինակ, ոչնչով չէր խախտում, որովհետև ուղղագրույթյան ղեկրետը չէր վերաբերվում գրաբար լեզվին:

Բացի առանձին գրքերով լույս ընծայած աշխատույթյուններից՝ նա այդ տարիներին շատ ավելի աշխատակցել է սփյուռքահայ գիտական հանդեսներին («Հանդես ամսօրյա», «Բազմավեպ», «Անահիտ» և այլն), քան սովետահայ մամուլին, որտեղ գտնում ենք մեկ-երկու փոքր հոդված համալսարանի գիտական տեղեկագրում և Մանուկ աղա ծածկանունով երկու երգիծական թղթակցույթյուն «Կարմիր մոծակում»: Նկատառումը դարձյալ եղել է ուղղագրույթյունը:

Ահա ամենը, որ նա տպագրել է 1923–1937 թվականներին:

## Գլուխ տասներորդ

### ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Տասնամյա գիտական հեիհե վազքից հետո Աճառյանի կյանքում շատ բան է փոխվում 1935 թվականին: Ամուրիի վիճակը նրան այն աստիճան էր քայքայել, որ ի վերջո որոշում է ամուսնանալ, չնայած Արուսյակի մահից հետո երզվել էր նման քայլի չդիմել:

Ամուսնանում է այդ ժամանակ անասնաբուժական ինստիտուտում սովորող մի ուսանողուհու՝ Սոֆիի հետ:

Կար տարիքային մեծ տարբերություն: Աճառյանը դիմել է իր պաշտոնակից ընկերների խորհրդին, այդ թվում Արեղյանի, որը ասել էր նրան, թե կարիք չկա զագսով պսակվելու, համատեղ կյանքը թող որոշի, թե կարո՞ղ են ամուսիններ լինել:

Աճառյանը Սոֆիի հետ կնքում է յուրօրինակ պայմանագիր, որի մեջ նրանք խոստանում են մինչև իրենց կյանքի վերջը հավատարիմ մնալ միմյանց: Ինչպես պիտի տեսնենք հետագա էջերում, գուցե եկեղեցական ոչ մի պսակ կամ զագսային ոչ մի գրանցում այնպիսի ամուր կապերով չեն կապել ամուսիններին միմյանց, որքան արտաքուստ ծիծաղելի թվացող այդ թղթի կտորը, որ այժմ էլ պահվում է Աճառյանի ձեռագրերի մեջ:

Նրա այդ օրերի կյանքը մենք արդեն ուրվագծում ենք ականատեսի վկայությունը, քանի որ 1933 թվականից այցելում էինք նրան, իսկ ամուսնություն օրերին նրա գրաշարն էի, չարում էի «Արմատական բառարանի» հավելվածային 7-րդ հատորը և այդ առիթով օրը երկու անգամ լինում նրա մոտ: Առավոտները, համալսարան զնալուց առաջ տանում էի սրբագրությունները, իսկ համալսարանական պարապմունքներից հետո՝ վերցնում ուղղումները:

Ահա այդ օրերին է, որ անտեղյակ Աճառյանի ծրագրերից, մի օր, մտնելով Աճառյանի սենյակը, նկատեցի պատուհանները մաքրված, պահարանի խունացած ու դեղնած թղթերը հան-



ված, ճաշասեղանի վրայի լրագրերի փոխարեն մաքուր սփռոց գցված, ննջարանի թախտը պատշգամբ տարված: Մի խոսքով, ամբողջ սենյակը կարգի բերված: Ոորհրդավոր մի ձեռք անուձ էր այս բոլորը և դեռ աննշմարելի էր մնում:

Աճառյանը, որ մինչ այդ եղել էր վերին աստիճանի ճշտապահ, մի օր ասաց, թե սրբագրությունները դեռ չի կատարել, առաջարկեց հաջորդ օրը գալ. հաջորդ օրն էլ նույնը կրկնեց, երրորդ օրն էլ, երբ սեղանի մոտ նստել էր արտաքուստ բավական համակրելի մի կին:

– Լավ, վաղը կգամ, – ասացի:

– Հա, բայց չե՞ս դարմանում, որ ինձ նման ճշտապահ մարդ առանց հիվանդ լինելու հինգ օր ձգձգում է աշխատանքը:

– Երևի որևէ կարևոր գործով եք զբաղված, պրոֆեսոր:

– Այո, շատ կարևոր: Ամուսնական գործով: Այ ծանոթացիր, կինս է՝ Սոֆիկը: Զբաղված ենք տունը տեղը կարգի բերելով, գնումներ կատարելով:

Այդ օրվանից սկսվեց նրա նոր կյանքը: Աճառյանը ամեն կերպ աշխատում էր, որ կատարի Սոֆիկի պահանջները, պայմանով, որ Արուսյակի հիշատակը մնա անաղարտ՝ մեծադիր նկարը իր տեղում, զգեստները, իրերը իրենց տեղերում և այլն:

Նա սկսեց ավելի ճաշակով հագնվել, ուշադրություն դարձնել իր արդուզարդի վրա, որին մինչ այդ ամենևին կարևորություն չէր տվել: Ածիլեց տասնամյակների կենցաղ դարձած մորուքը, կատակով ասելով. էհ, Սոֆիկը տուն ու տեղը կարգի բերելուց հետո հիմի էլ ուզում է ամուսնու դեմքը կանոնավորել:

Փոփոխությունները չսահմանափակվեցին միայն կենցաղային մանրուքներով, ճաշատեսակների փոփոխմամբ, որոշ կահույքի ձեռք բերմամբ:

Տիկին Սոֆիկը հեղաշրջեց նրա հոգեկան աշխարհը, դուրս բերեց նրան ճգնավորական վիճակից, զեթ մասամբ կտրեց ձեռագրերի դեզերից, լեզվաբանական անդնդախոր հետախուզումներից, քաչեց դեպի կյանքի մակերեսը: Աճառյանը սկսեց կնոջ հետ երևալ հասարակական միջավայրում, թատրոնում: Ճիշտ է, այս բոլորը մասամբ արտաքին էր, զբոսանքի մեջ էլ, զվարճություն վայրերում էլ նրա ուղեղը զբաղված էր ստուգաբանություններով, սակայն, այնուամենայնիվ հոգով շատ էր

փոխվել, դարձել ավելի կատակախոս, զրուցասեր:

Տիկին Սոփիկը դուրս բերեց նրան նաև Երևանից, մղեց դեպի երկարատև հաճելի ճանապարհորդություններ:

1935 թվի ամառը Աճառյանի կյանքի ամենաերջանիկ ու հաճելի ամիսներն էին: Նա համալսարանից վերցնելով գործուղում, իր տիկնոջ հետ մեկնում է Բաթում, այնտեղից Եվպատորիա, որտեղ ամբողջ մեկ ամիս հանգստանում են սանատորիայում: Ապա գնում են Սևաստոպոլ, Ալուչկա, Միմֆերոպոլ, հետո վերադառնում Յալթա: Յալթայից ծովային ճանապարհով հասնում են Օդեսա, որպեսզի գնան Լենինգրադ, բայց անախորժ մի դիպված փոխում է ծրագիրը և հրաժարվում են Լենինգրադից, վերադառնում Բաթում, որտեղ մնում են 15 օր: Երկարատև այդ ճանապարհորդության ընթացքում Աճառյանը հոգեպես գտնվել է շատ հանգիստ վիճակում, վայելել ծովի ու ծովափի գեղեցկությունը, վերհիշել Պոլխաը, բայց և ունեցել ճանապարհային բազմաթիվ արկածներ, որոնցից գեթ մեկը ուզում ենք պատմել, քանի որ այն կապվում է նրա մասնագիտական հետաքրքրությունների հետ:

Օդեսայի ճամփին ամուսինները նավում ընկնում են տարբեր խցիկներ: Հաջորդ առավոտ՝ Նովորոսիյսկի մոտ, Սոփիկը ամուսնու մոտ գնալիս մեկի ձեռքին նկատում է սպիտակ շորերի մեջ փաթաթված մի ճամպրուկ: Ամուսնուն հարցնում է, թե իրենց պայուսակը տեղո՞ւմ է: Աճառյանը, չնայած զարթուն է եղել, չի պատասխանում: Երրորդ-չորրորդ անգամ է հարցնում, երբ մարդը արդեն իջել էր Նովորոսիյսկ Աճառյանը զայրացած բղավում է.— Ինչու ես խանգարում, ես ... բառն էի ստուգաբանում:

Հետագայում էլ Աճառյանը հաճախ էր ասում, որ այդ բառը ստուգաբանել է մի ճամպրուկ վճարելով:

1936 թ. ամռանը նորից են մեկնում Բաթում, մնում մի շաբաթ, որտեղ նա արևմտահայերի միջավայրում իրեն զգում է շատ լավ, զրուցում նրանց հետ, բարբառներ քաղում: Այնտեղից մեկնում են Սոչի, ապա անցնում Յալթա, Օդեսա, բայց արդեն ոչ նույն լավ տրամադրությունը: Անհատի պաշտամունքի հետևանք կամայականություններն սկսվել էին: Հայաստանի Կոմկուսի քարտուղար Ա. Խանջյանի անձնասպանությունից լուրը անցնում էր ականջից ականջ, լուռ, անձայն դրոշմվում

մարդկանց սրտերին, յուրահատուկ մի թախիժ գցում բոլորի դեմքին:

Աչնանը, երբ վերսկսվում են համալսարանական պարապմունքները, ծանր մի սարսափ արդեն պատել էր բոլորին: Ամեն առավոտ լսվում էին նորանոր ձերբակալությունների լուրերը: Հետագա ամիսները շատ էին հոգեմաչ: Անվերջանալի ժողովներ, անմեղ մարդկանց «մերկացումներ», բանտարկություններ:

Համալսարանում ոչ մի խոսք, իսկ տանը, շատ մոտիկ մարդկանց ասում էր մի նախադասություն. «Ի՞նչ է կատարվում, մի՞թե ճիշտ է», ավելին չէր ասում նույնիսկ հարազատներին, բայց մտածում էր, դատում...

1937 թվականի մայիս ամսին Աճառյանը տեղափոխվում է նոր բնակարան՝ Տերյան փողոցի համար 62: Նա հուզվել է, լաց եղել հին բնակարանից բաժանվելիս, համբուրել է պատերը, ասել, թե ինչ անակնկալներ պիտի բերի արդյոք նոր տունը: Իհարկե, սովորական նախապաշարման արդյունք չէր նրա այս երկյուղը: Ձերբակալվել էին նրա ամենամերձավոր պաշտոնակիցներից ու ընկերներից շատերը՝ Արչակ Տոնյանը, Հակոբ Զորյանը, Պապ Քալանթարը և ուրիշներ:

Այս պայմաններում, 1937 թվականի գարնանից սկսեց տպագրվել Աճառյանի «Պարսկերենի հատընտիրը», որը 1931 թվականին հրատարակվել էր ապակետիպով և որպես ձեռնարկ օգտագործվել համալսարանում:

Դարձյալ ինձ վիճակվեց այդ գրքի գրաչարությունը: Համալսարանական պարապմունքներից հետո աշխատում էի Գիտհրատի տպարանում, որտեղ տպագրվում էին համալսարանի հրատարակությունները:

Ամռան ամիսները Աճառյանը անցկացրեց Դիլիջանում, որտեղ ուղարկել էին նրան Ուսուցիչների վերապատրաստման կուրսերում դասախոսելու: Իսկ աչնանը, հաղիվ համալսարանական պարապմունքներն սկսած՝ խփեցին նաև նրա դուռը, ավելի քան երկու տարի կտրելով աշխատանքից մի մարդու, որը մինչ այդ երկու օրով էլ չէր կարողացել ընդհատել գիտական տենդոտ վազքը: Բանտում էլ նա հաճախ է հայտնել բախտակից ընկերներին, թե իր համար չկա ավելի մեծ պատիժ, քան չաշխատելը:

1939 թ. դեկտեմբեր ամսին նա ազատվեց: Վերականգնվեց համալսարանում նրա դասախոսելու իրավունքը:

Ձեռն կարող չպատմել երկու տարվա ընդմիջումից հետո առաջին անգամ համալսարան գալը, ասպիրանտական պարապմունքի մեր առաջին ժամը: Նախորդ օրը համալսարանի ռեկտոր Հր. Բունիաթյանը կանչել էր մի խումբ ասպիրանտների և ասել, թե պրոֆ. Հրաչյա Աճառյանը վերսկսելու է իր դասախոսությունները, ովքեր ցանկանում են նրա ասպիրանտը լինել, կարող են գնալ նրա լսարանը:

Ո՞վ չէր ցանկանա:

Հաջորդ օրը բոլորս սպասում էինք դասախոսներին հատկացված սենյակում: Հիմա մեզնից մի քանիսը նույնպես դասախոսներ էին, մեկը՝ պարսկերենի, մեկը՝ գրաբարի, մյուսը՝ լատիներենի:

Անբացատրելի մի հուզում համակել էր բոլորիս. կարծես չէինք հավատում, որ նորից տեսնելու ենք մեր այնքան սիրելի պրոֆեսորին...

Եկավ. նույն ծանոթ քայլվածքով, ձեռնափայտը աջ ձեռքին, դասախոսություն նյութերը՝ թերթի մեջ դրած՝ ձախ ձեռքին:

Ոմանք ողջագուրվեցին, ոմանք ձեռքի սեղմումով արտահայտեցին իրենց գոհունակությունը. նստեց մեր մեջտեղը: Աչքերին արտասուք տեսանք: Հետաքրքրվեց ասպիրանտուրայի փիճակով, յուրաքանչյուրիս աշխատանքով ու ծրագրերով:

Այդ պահին սենյակից ներս մտավ նաև պրոֆ. Ղափանցյանը. չնկատեց վերադարձած պաշտոնակցին. ուղիղ շարժվեց դեպի դիմացի բազմոցը: Ասացին, թե Աճառյանը եկել է: Նայեց, թույլ ժպտաց և տեղից բարևեց: – Նրա աչքերն էլ տկարացել են, ասաց Աճառյանը, ակնարկելով Ղափանցյանին, լեզվաբանների ճակատագիրն այդ է. Տաշյանը կուրացավ, Մեյեն կուրացավ, ես գրեթե կույր եմ. և ահա նա էլ վատ է տեսնում, ինձ չճանաչեց...

Մենք դիտում էինք նրան. շատ էր փոխվել. ոչ այնքան նիհարել էր, որքան գունատվել, կարծեք ավելի կքել: Սովորական հարցուփորձից հետո գրեթե չխոսեց:

Սկսվեց ասպիրանտների հետ նրա առաջին պարապմունքը. հինգ թե վեց հոգի էինք, գրեթե բոլորն էլ հետագայում ակադեմիկոս լեզվաբաններ դարձան:

Աճառյանը ոչինչ չխոսեց պատահածի մասին. կարծեք նա-  
խորդ օրը ընդհատված դասն էր, որ շարունակում էր: Հաջորդ  
օրերն էլ նույն ձևով անցան. նա տալիս էր գրաբար և պարս-  
կերեն:

Ամեն անգամ որ բաց էի անում «Պարսկական Հատընտի-  
րը», աչքս բնազդաբար ընկնում էր վերջին էջի սև տառերով  
սպիտակի վրա տպված քառյակին<sup>1</sup>...

Այդ մարդու ամբողջ կյանքը ընթացել էր ուրախ և տխուր  
դեպքերի հերթափոխի մեջ: Այժմ նորից կյանքը ժպտում էր:  
Ամբողջովին նվիրվեց Համալսարանական պարապմունքներին  
ու ստեղծագործական ծրագրերի կատարմանը: Առատորեն  
տալիս էր ուսանողներին իր գիտելիքները, սովորեցնում լսա-  
րաններում, դասերից դուրս, ոմանց նաև՝ տանը. սովորեցնում  
էր սիրով, առանց որևէ ակնկալություն. կարծեք երկու տարվա  
կուտակված պաշարն էր բեռնաթափում հաճույքով, բաժանում  
սիրահոժար:

Աշխատանքը, չփումը մարդկանց հետ, աստիճանաբար նո-  
րից բացեց նրա տրամադրությունը, դարձավ նույն կենսուրախ  
մարդը, աջ ու ձախ շաղ տալով իր սրախոսությունները, կա-  
տակները:

Հիմա մտածում էր իր գրքերը տպագրելու մասին: Ապա-  
կետիպի շրջանն ավարտվել էր: 1935 թվականին խոստացել  
էին «Հայոց լեզվի պատմությունն» էլ թույլ տալ հին ուղղա-  
գրությունը տպել, որպես «Արմատական բառարանի» մասը:  
Բայց նախապատրաստվում էր լեզվական մի նոր ոեֆորմ, որը  
կարող էր նման հարցեր լուծել արմատապես:

Տերմինաբանական կոմիտեում քննարկվում էր արեղյանա-  
կան ուղղագրության անպատեհություններից գեթ մասամբ  
հրաժարվելու առաջարկը: Կոմիտեի նիստերին մասնակցում  
էին Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ստ. Մալխասյանը, Գր. Ղա-  
փանցյանը, Ա. Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Ս. Ղազարյանը  
(որպես կոմիտեի քարտուղար). թեև անկանոն, ես էլ մասնակ-  
ցում էի որպես «Որոհողային Հայաստան»-ի ներկայացուցիչ,  
քանի որ այդ տարիներին թերթի ոճաբանն էի: Աճառյանը ու-  
զում էր, որ ամբողջովին վերականգնվի ավանդական ուղղա-  
գրությունը: Առաջարկը չանցավ: Որոշվեց վերականգնել է և օ

տառերը, որոնք վերացնելու էին բառասկզբում նկատվող անպատեհությունները:

1949 թ. օգոստոս ամսին «Նորհրդային Հայաստան» թերթում տպագրվեց Տերմինաբանական կոմիտեի որոշումը Հայոց լեզվի ուղղագրության մասնակի փոփոխության մասին: Որոշումը ուներ երկու մաս. մի կողմից վերականգնվելու էին է և օ տառերը, մյուս կողմից՝ մեր լեզվի ամենագործածական բառերից մի քանիսը փոխարինվում էին օտար համապատասխան բառերով:

Դեպքերի բերումով ինձ վիճակվեց գրել թերթի առաջնորդող Հոդվածն այդ մասին: Իսկույն շտապեցի ուսուցչիս մոտ, Հայտնեցի ուրախ լուրը, ասացի, թե Հաջորդ օրվանից բոլոր թերթերը տպագրվելու են բարեփոխված ուղղագրությամբ, թե առաջնորդողն էլ ես եմ գրելու, բայց սրտովս չէ, որ կուսակցություն, հեղափոխություն, սահմանադրություն, նստաչրջան բառերը փոխարինվելու են եվրոպական բառերով՝ պարտիա, ռևոլուցիա, կոնստիտուցիա և այլն:

Աճառյանը արտակարգ լավ տրամադրությամբ ընդունեց լուրը, ասաց թե ոչ թե հինգ. այլ հինգ Հարյուր բառ էլ գրվի օտար ձևով, դարձյալ մեր լեզուն չի տուժի. կարևորը է և օ տառերի վերականգնումն է, կյանքը աստիճանաբար նորից դեպի մեր լեզուն կրերի փոխված բառերը, դեկրետով բառեր չեն կարող պարտադրվել, իսկ եթե մի օր իւ և եա հնչյուններն էլ վերականգնվեն, ամեն ինչ կարգի կընկնի:

«Նորհրդային Հայաստան» թերթի 1940 թ. օգոստոսի 28-ի համարում տպագրվեց Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի որոշումը՝ Հայոց այբուբենի և գրության մեջ է և օ տառերը վերականգնելու և միջազգային դարձած մի շարք տերմիններ Հայոց լեզվում արմատացնելու մասին:

Հաջորդ օրվանից մեր բոլոր թերթերը լույս տեսան բարեփոխված ուղղագրությամբ:

Ուղղագրության մասնակի փոփոխությունը ուրախացրեց մեր ամբողջ մտավորականությունը՝ լինի երկրի ներսում թե սփյուռքում: Բայց ամենից շատ ուրախացել էր Աճառյանը, միակ գիտնականը, որ այնքան համառորեն, ի գին շատ զոհողությունների, դեմ էր կանգնել այդ ուղղագրության: Այժմ

անիմաստ էր համառելը, դեպի ապակետիպը վերադառնալը: Վերջապես, 18 տարվա համառ դիմադրությունից հետո նա համաձայնվել էր իր գրքերը տպել նոր ուղղագրությունը, «Հայոց լեզվի պատմությունը» հանձնել հրատարակության: Դժբախտաբար աշխատությունը արտադրություն իջած լինելով 1940 թվի հունիս ամսին, այսինքն ուղղագրության փոփոխությունից մեկ ամիս առաջ, գիրքը շարվեց և տպագրվեց արեղյանական ուղղագրությամբ:

Կար շատ ավելի բարդ՝ գաղափարական, մեթոդոլոգիական մի հարց: Այդ ժամանակ դեռ սովետական լեզվաբանության հիմքը Մառի լեզվի նոր ուսմունքն էր, որը համարվում էր միակ գիտական, մատերիալիստական ուղղությունը: Մերժվում էր հնդեվրոպական լեզվաբանությունը որպես հակագիտական բուրժուական գիտություն, իսկ Աճառյանն ամբողջովին մերժում էր Մառի լեզվաբանությունը, հետևում հնդեվրոպական ուղղության:

Դրա ելքն էլ գտնվել էր Ռուսաստանում, մերժելով հանդերձ հնդեվրոպական լեզվաբանությունը որպես ուղղություն, գնահատվում էր այն դրականը, որ կատարել էին այդ ուղղության հետևորդները՝ տարբեր լեզուների փոխադարձ ազդեցությունների որոշման, լեզվախմբերի բաժանման ուղղությունը: Մառը՝ մնալով հանդերձ բացարձակ հեղինակություն՝ ուսանողների համար որպես օժանդակ ձեռնարկ տպագրվում էին Մեյերի, Սոսյուրի և այլ հնդեվրոպաբանների աշխատությունները:

Եվ ահա պրոֆ. Գ. Սևակի համառոտ մի առաջաբանով, — որտեղ խոսվում էր Աճառյանի գրքի արժանիքների, փաստական հարուստ նյութի, նաև նրա մեթոդոլոգիայի անընդունելի լինելու մասին, — 1941 թ. սկզբներին հրապարակ եկավ «Հայոց լեզվի պատմության» Ա. հատորը:

Առաջինը մեզ վիճակվեց «Գրական թերթում» տպագրված մի գրախոսությամբ մամուլում արտահայտվել գրքի մասին, նշել առավելությունները, խոսել թերությունների մասին, անգամ «սովորեցնել» պատկառելի գիտնականին, թե գիրքը կարող էր չահել, եթե Մառի և մառական այլ լեզվաբանների աշխատություններն էլ օգտագործվեին<sup>2</sup>: Դիտողության մեջ կար որոշ ճշմարտություն. նա ամենևին հաշվի չէր առել ոչ միայն Մառի տեսությունը, այլ մառական Ղափանցյանի այնպիսի

կարևոր գրքերը, ինչպիսիք էին «Ռեթո-արմենիքան», «Ուրար-տուի պատմությունը» և այլն, սակայն, իհարկե երիտասարդական համարձակություն էր մեր արածը, որ այնքան ներողամտությամբ ընդունվեց մեծ գիտնականի կողմից, երբ թերթը լույս տեսած օրը ասպիրանտական պարապմունքների ժամանակ խոսք բացվեց այդ մասին:

«Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորը, սակայն, ունեցավ արկածալից ճակատագիր: Հազիվ էր ներկայացվել հրատարակության, որ վրա հասավ Հայրենական մեծ պատերազմը: Հնդեվրոպական լեզվաբանությունը նորից ընկավ սուր քննադատության տակ, ոմանց կողմից համարվեց բացարձակապես վնասակար տեսություն: Լեզվաբանության նժարի վրա սկսեց նոր ուժ ստանալ Մառի ուսմունքը: «Հայոց լեզվի պատմությունը» հանձնվեց հրատարակության, 1945 թ., երբ արդեն ավարտվել էր տպագրությունը և մնում էր կազմելը, հրապարակ նետվեց ծիծաղելի մի փաստարկում այդ գրքի դեմ, թե այնտեղ հինգերորդ դարի մեր լեզուն համարվել է «ոսկեդարյան»: Իրականում դա սովորական մի բնութագրում էր, որ գալիս էր Վիեննայի Մխիթարյաններից և նպատակ ուներ մեսրոպյան հայերենը տարբերել հետ-մեսրոպյան շրջանի գրաբարից:

Արգելվեց գրքի հրապարակ գալը, մեծ հուզում պատճառելով հեղինակին: Միայն տարիներ անց, երբ մերժվեց Մառի ամենագոր և ամենաճիշտ համարված ուսմունքը, թույլատրվեց վերստին տպագրել, «ոսկեդարյան» բառի փոխարինումով մեսրոպյան հայերենով և հեղինակի ընդարձակ բացատրությամբ այդ մասին:

Պատերազմական տարիները ելևէջներով լի տարիներ եղան Աճառյանի համար: Գարձյալ միմյանց հաջորդեցին հուսադրող և վհատեցնող իրադարձությունները:

Պատերազմի ամենածանր շրջանում, 1943 թ. հիմնադրվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան: Ականավոր բոլոր հայագետները՝ Ջր. Աճառյան, Ստ. Մալխասյան, Մ. Աբեղյան, Հ. Մանանդյան, Գր. Ղափանցյան և ուրիշներ ընտրվեցին հիմնադիր կազմում:

Այժմ Աճառյանը ոչ միայն Համալսարանի դասախոս էր, այլև Ակադեմիայի իսկական անդամ: Մեծ եռանդով մասնակցում էր



նախագահութեան նիստերին, Հայագիտութեան հետ կապված ընթացիկ աշխատանքների իրագործմանը:

Անշուշտ շարունակվում էր վերապահութիւնը նրա լեզվաբանական ուղղութեան նկատմամբ: Այդ էր պատճառը, որ Ակադեմիայի հիմնադրման տարում նրա վրա պարտականութիւն դրվեց ոչ թէ լեզվաբանական որևէ աշխատութիւն, այլ՝ պատմագրական: Պատմութեան ինստիտուտի հետ կնքված պայմանագրով նա 1943 թ. ընթացքում պարտավորվել էր ինստիտուտին հանձնել 30 մամուլից բաղկացած «Հայ գաղութների պատմութիւնը», ամսական հաշվելով երկու մամուլ: Աճառչանի թղթերում պահպանվում է Պատմութեան ինստիտուտի դիրեկտորի տեղակալի 1944 թ. հունվարի 3-ի գրութիւնը, որից պարզվում է, որ Աճառչանը չի կարողացել այդքան ընդարձակ մի գործ ավարտել և ներկայացնել մեկ տարվա ընթացքում, այլ ինստիտուտին հանձնել է մոտ ինը մամուլ...

Այդ տարիներին Աճառչանի կյանքում կատարվեց մի շատ ուշագրավ իրադարձութիւն էլ: Դա միութենական Ակադեմիայի անդամութեան համար նրա թեկնածութեան առաջադրումն էր, հաճելի ու տհաճ պատմութիւնների մի ամբողջ շարան, որոնք բնութագրական են անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի բարքերի համար, միաժամանակ վկայում են, թէ շարքային մարդիկ, Աճառչանի պաշտոնակիցները, Հայաստանի գրեթէ բոլոր գիտական հիմնարկները որքան բարձր են գնահատել մեծ գիտնականին: Որքան լայնախոհ են եղել ու Աճառչանին գնահատել են նաև սովետական գիտական մտքի ականավոր ներկայացուցիչները:

1942 թվի աշնանը միութենական Ակադեմիան Հայտարարում է վեց թափուր տեղ՝ արևելագիտութեան գծով: Հայաստանում աշխույժ հետաքրքրութիւն է ստեղծվում այս առթիվ: Ո՞ւմ ներկայացնել այդ պատվավոր կոչման համար: Ո՞վ կար Աճառչանից ավելի բազմաբեղուն ու համաշխարհային ճանաչման արժանացած անձնավորութիւն: Աճառչանի նախկին ուսանողներից մի խումբ, որոնք այդ տարիներին դարձել էին պրոֆեսորներ, դոկտորներ, պետական պաշտոնյաներ, նրանց հետ նաև գիտական մի շարք հիմնարկներ՝ Մատենադարանը, Հանրային գրադարանը, Պետական համալսարանի Հայոց լեզվի ու գրականութեան ամբիոնները և այլն, առաջադրում են ու

պաշտպանում Աճառյանի թեկնածուիթյունը: Սրանց է միանում նաև Արմֆանը:

Բայց հանկարծ քաղաքում տարածվում է լուր, թե Արմֆանի նախագահ ակադեմիկոս Օրբելին դեմ է դուրս եկել Աճառյանի թեկնածուիթյանը, դրել է միայն Աբեղյանի թեկնածուիթյունը, պատճառաբանելով, թե Աճառյանը քաղաքականապես անվստահելի է, թե Մոսկվայում առաջադրվելու է ոուս գիտնական Բարդուղը: Արգելվում է Աճառյանի թեկնածուիթյունը դնել Համալսարանի գիտխորհրդի նիստին:

Աճառյանի Համար գաղտնիք չէր, որ դա չէր կարող գալ Օրբելուց, մի ականավոր հայագետից, որը եղել էր նրա գնահատողներից սկզբից ևեթ: Շուտով պարզվում է, թե վերադաս մարմիններում ով է զբաղվել այդ գործով և ով է հրահանգել՝ հանել թեկնածուիթյունը:

Մեծ լեզվաբանը, որ իր ամբողջ կյանքում եղել էր համեստության օրինակ և երբեք իր անձը ցուցադրելու ձգտում չէր ունեցել, գրում է ընդարձակ մի դիմում Կենտկոմի երկրորդ քարտուղար Սահակ Կարապետյանին, մեկ առ մեկ թվարկելով իր կատարած աշխատանքը թե որպես լեզվաբան գիտնական և թե որպես երկարամյա մանկավարժ:

«51 տարվա ուսուցչական գործունեություն ունիմ,— գրում է նա,— որից 20 տարին Համալսարանի դասախոս եմ և ծառայում եմ Սովետական երկրին գիտության ասպարեզում, տալով հազարավոր աշակերտներ: Ճիշտ 50 գիտական աշխատություն եմ հրատարակած և 105 գիտական հոդվածներ հայ և օտար գիտական ժուռնալներում: Ուսումնասիրել եմ հայերեն, ֆրանսերեն, պարսկերեն, ռուսերեն, թուրքերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, քրդերեն, հնդկերեն (սանսկրիտ), խալդերեն, զենդերեն, արաբերեն, լազերեն, հունարեն, լատիներեն, պահլավերեն, վրացերեն: Կազմել եմ 129 լեզվի համեմատական քերականությունը, դեռ անտիպ, բոլորը պիտի լինի 600 լեզու, որի նման աշխատություն դեռ գիտությունը չէ տեսած: Գլուխգործոցս է «Արմատական բառարանը»՝ վեց հատոր, 9000 էջ, որի համար եվրոպական քննադատությունը գրել է. «Ոչ մի երկիր, ոչ մի ժամանակ, ոչ մի լեզու այսքան կատարյալ գործ չէ արտադրած»<sup>3</sup>: Իսկ Սովետական Միության մեծագույն հայագետը՝ Մառը գրում է. "Труд Р. Ачаряна составит крупное яв-

ление в лингвистической литературе, пообщеного которому нет нечего не только в армянской, но и в европейской научной литературе". Արժանացել եմ հինգ գիտական մրցանակի... Ընտրվել եմ 1897 թ.՝ անդամ Փարիզի Լեզվաբանական միջազգային ընկերության, 1898 թ.՝ անդամ արևելագետների միջազգային կոնգրեսի (Փարիզ), 1937 թ.՝ Թղթակից-անդամ Չեխոսլովակիայի Ակադեմիայի... 1930 թվին Հրավիրվել եմ Փարիզի Համալսարանի (Սորբոն) կողմից իբրև ռեկտորի օգնական: Ես մերժեցի գնալ, չուզելով թողնել մեր երկիրը»<sup>4</sup>:

Աճառյանը, իհարկե, գիտեր, որ այդ բոլորը հայտնի էին գիտական լայն հասարակայնությանը, որ խանգարող հանգամանքները այլ էին, հիմնականում նրա որդեգրած լեզվաբանական ուղղությունը, որը և առիթ էր տվել որոշ մարդկանց «անվստահելի» մակդիր տալու բազմաչարչար ու բազմավաստակ այդ մարդուն: Իր դիմումում նա պատասխանում է նաև այս հարցին, պատասխանում համարձակ, կրքոտ, առանց սեթևեթանքի, չքմեղանքի, խնդրարկուի կեղծ համեստության:

«Բոլորովին սխալ է վերագրել ինձ քաղաքական անվստահություն,— գրում է նա,— 20 տարի ամբողջ ծառայել եմ ամենամաքուր կերպով խորհրդային երկրին: Ո՞վ կարող է մի կեղտ զցել իմ վրա: Այս մասին կը վկայեն պետական համապատասխան օրգանները: Հենց իմ անունը և գիտության մատուցած ծառայությունները պրոպագանդա են արտասահմանյան հայ և օտար հասարակության մեջ, սովետական երկրի և գիտության փառքի ու պատվի համար... Պատերազմի այս երկու դաժան տարիներում, չնայած իմ ծերության և հաշմանդամ վիճակին, բեմ եմ բարձրացել, ուր որ պետք է, համալսարանում կամ Արմֆանում և ուրիշ տեղեր, խոսելու, ճառելու և ոգևորելու ժողովրդին: Գրել եմ բազմաթիվ հոդվածներ «Սովետական Հայաստան» և «Կոմունիստ» թերթերում, թղթակցել եմ հեռվից Ամերիկայի «Բանվոր» խորհրդային թերթին, Սովիտֆորմբյուրոյին, ՏԱՍՍ-ին: Եթե այս բոլորը քիչ է, պատրաստ եմ դիմելու ուր որ կը կոչի խորհրդային պետությունը»:

Բաջ իմանալով, որ ի վերջո դա էլ չէր բուն պատճառը, քանի որ բոլորը գիտեին նրա ազնիվ նկարագրի մասին, նա մատը դնում է ուղղակի վերքի վրա և գրում է.

«Մի վերջին խոսք էլ այն մասին, թե ես Մառին հակառա-

կորդ եմ: Իմ վերջին 20 տարվա գործունեությունս մեջ չեք գտնի գրված մի բառ կամ արտասանված մի խոսք՝ Մառի դեմ: Մառը զբաղվում է լեզվի նախնական ծագման քննություններ, որ լեզվաբանություն փիլիսոփայությունն է, ինչ որ իմ մասնագիտությունից շատ ավելի բարձր է: Ես զբաղվում եմ հայ բարբառների և արդիական լեզուների պատմություններ ու քննություններ և չեմ ձգտում այդքան բարձր, ուստի չեմ էլ կարող խոսել կամ վիճել այդ մասին»:

Դիմումը եզրափակում է հետևյալ տողերով.

«Դիմումիս միակ նպատակն է՝ խոնարհաբար խնդրել ձեզանից, որ չարգելվի որևէ առանձին խմբակի կամ հիմնարկի (և հատկապես մեր պետական համալսարանի վարչություն), դնելու իմ թեկնածությունը մեր ակադեմիային, ինչպես իրենց ցանկությունն է»<sup>4</sup>:

Արտաքուստ կարող է շատ տարօրինակ թվալ Աճառյանի դիմումը, որտեղ ամեն կերպ աշխատում է համոզել թե ինքը արժանի է ակադեմիկոս առաջադրվելու: Գաղտնիքը հեշտություններ կարող է պարզվել, երբ ասենք, որ նա շատ ավելի հեռավոր նպատակ ուներ, քան ակադեմիկոս դառնալու տենչը: Այդ օրերին իր հարազատներին ասել է, թե ինքը համոզված է, որ եթե Միությունական Ակադեմիայի անդամ ընտրվի, տգետ ու մորթապաշտ մարդիկ այլևս չեն համարձակվի անհանգստացնել իրեն Հայաստանում և հնարավորություն կունենա լույս ընծայելու տարիների ընթացքում կուտակված ձեռագիր աշխատությունները: Որ դա այդպես էր, երևում է այս պատմության վերջին գրվագներից:

Աճառյանի թեկնածությունը այնպես էլ պաշտոնապես չենք կայացվեց Մոսկվա՝ չնայած վերոհիշյալ բոլոր հիմնարկների ցանկությունը:

Քաջ համոզված, որ իր դեմ սկսված նոր հալածանքը գալիս է ոչ թե Սովետական Միության գիտական կենտրոնից, այլ Երևանում ապրող որոշ մարդկանցից, նա որոշում է շարունակել պայքարը: Ակադեմիկոս Ա. Ալիխանյանն առաջարկում է նրան բոլոր փաստաթղթերը թարգմանել ռուսերեն և հանձնել իրեն, խոստանալով դրանք հասցնել տեղ:

Լարում է բոլոր ուժերը և մի քանի մարդկանց օժանդակություններ արագորեն թարգմանել է տալիս այդ բոլորը, հանձնում

Ալիխանյանին, ու հանգիստ սրտով սպասում պատասխանի:

Գալիս է և երջանիկ օրը. միութենական մամուլում կարդում է իր անունը առաջադրված թեկնածուների շարքում:

– Այս էր իմ ուզածը, թե Սովետական Միության գիտությունների ակադեմիայի ղեկավարնե՞րն են արդյոք ինձ դեմ, թե Հայաստանում մեկ-երկու անձնավորություն,– ասել է հրճվալից:

Բայց հաղթեց ոչ թե Աճառյանը, այլ հաղթեցին «մեկ-երկու» անձնավորությունները: Աճառյանը չբավարկվեց Մոսկվայում և չընտրվեց ակադեմիայի անդամ, ոչ էլ Մ. Աբեղյանը:

Մառի հակազիտական, բայց օրենք դարձած լեզվաբանական ուղղությունը չենթարկվելը հետագայում էլ շատ ծանր նստեց Աճառյանին:

Հասկանալի է, որ նման պայմաններում չէր կարող լույս ընծայել աշխատություններ, որոնց մեջ հստակ կերպով պաշտպանվում էր հնդեվրոպական ուղղությունը, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ հրապարակով, մամուլում արդեն այդ ուղղությունը համարվում էր ֆաշիստական: Ուրեմն գեթ միառժամանակ հրաժարվելու էր «Հայոց լեզվի պատմություն» Բ. Հատորը, «Համեմատական քերականությունը» տպագրության ներկայացնելու մտքից: Անհրաժեշտ էր հրապարակի վրա դնել այնպիսի գրքեր, որոնք համեմատաբար քիչ կրքեր կարող էին բորբոքել:

Նա հինգից-վեց տարի մեծ եռանդով նվիրվում է «Հայոց անձնանունների բառարանի» հրատարակությանը:

Երևանի Պետական համալսարանը 1942 թվականից ձեռնամուխ է լինում այս շատ ծավալուն աշխատության հրատարակելու գործին, որպես պետական համալսարանի գիտական աշխատությունների հերթական հատորներ<sup>5</sup>:

Կարծեք ճակատագրական մի կանխորոշված հաջորդականությամբ Աճառյանի բոլոր աշխատությունները, սկսած դարասկզբից, տպագրվել են ոչ առանց աղմուկի և միշտ հեղինակին պատճառել անախորժություններ: Այդպես էր եղել վերջին «Հայոց լեզվի պատմությունը», այդպես եղավ և «Անձնանունների բառարանը», որի հինգերորդ հատորը առիթ տվեց մեծ աղմուկների, հասավ մինչև դատարան և այնպես էլ հեղինակը այն տպագրված չտեսավ իր կենդանության օրոք:

Այս ձգձգման պատճառը գիտական որևէ նկատառում չէր, կապված էր նյութական վարձատրություն հետ: Համալսարանի նոր ռեկտոր Գ. Պետրոսյանը, — որն ամենից շատ էր վայելել Աճառյանի բարյացակամությունը նրա տանը, հյուրընկալ հարկի տակ երկար ժամանակ սովորել արաբերեն, խլելով բազում թանկագին ժամեր, — հրաժարվել էր վերջին Գ. հատորի հոնորարը վճարելուց, պատճառաբանելով, թե հեղինակը այդ հատորի համար պայմանագիր չունի, մինչդեռ Ա. և Բ. հատորների պայմանագրերը տարածվել էին Գ. հատորի վրա և նա ստացել էր հոնորար: Իզուր է Աճառյանը փաստարկում իրավացի լինելը, միջամտում են այլ մարդիկ, անօգուտ: Քաջ գիտակցելով, որ պայմանագրի հարցը արտաքին ձևական կողմն է, իրականում իր անձնավորությունն է պատճառը, Աճառյանը որոշում է հենց դատարանով ապացուցել, որ ինքը արդարացի է: Այն գիտնականը, որ «Արմատական բառարանի» նման ծովածավալ մի աշխատություն համաձայնվել էր լույս ընծայել առանց հոնորարի և բավարարվել էր ապակետիպ գրքի մի քանի հարյուր օրինակով, այժմ արտակարգ եռանդով փորձում է ապացուցել իրավացի լինելը: Ու միայն այն ժամանակ, երբ դատարանն էլ հօգուտ իրեն վճիռ չի կայացնում, համոզվում է, որ նաև «Անձնանունների բառարանը» դուր չի գալիս մարդկանց և որ ռեկտորը կատարում է այդ մարդկանց կամքը:

Բարեբախտաբար աշխատություն հրատարակությունը մոտենում էր ավարտին: Ա—Գ հատորներն ընդգրկում էին Ա—Ս տառերը: Մնում էին Վ—Ֆ տառերը, «Հավելվածը», հարակից մի քանի նյութեր, որոնք բոլորը միասին լույս տեսան հեղինակի մահից մոտ մեկ տասնամյակ անց՝ 1962 թվականին, պրոֆ. է. Աղայանի ջանքերով, դարձյալ նույն Պետական համալսարանի հրատարակությամբ:

## Գլուխ տասնմեկերորդ

### ԱՃԱՌՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Աճառյանի կյանքի վերջին տարիները լի էին իրարամերժ դեպքերով, ուրախառիթ կամ անախորժ իրադարձություններով, որոնք հոգեկան մեծ ցնցումներ են պատճառել նրան:

Հայրենական պատերազմը նոր էր վերջացել, բայց նրա ծանր հետևանքները դեռ իրենց զգացնել էին տալիս: Սովետական ամբողջ երկիրը, այդ թվում հայ ժողովուրդը տվել էր մեծ զոհեր, հաղթանակը ձեռք էր բերվել մարդկային և նյութական ծանր կորուստներով: Դեռ շարունակվում էր նորմավորված մատակարարումը, կենսական սպառման համար անհրաժեշտ որոշ մթերքների պակասը:

Նկատելի չափով նոսրացել էին մտավորականության շարքերը, պատերազմին զոհ էին գնացել բազմաթիվ ուսուցիչներ, դասախոսներ, խոստումնային ասպիրանտներ, երիտասարդ գրողներ: Ոմանք վերադառնում էին ռազմաճակատից հաղթական զինվորի փառքով, իրենց հետ բերելով ուրախություն և խինդ, թարմ լավատեսություն ապագայի նկատմամբ, ծանոթներին, հարազատներին պատճառելով անսահման հրճվանք, բայց և դեռ ստացվում էին «անհայտ կորածների» թղթերը, ճշտվում էին շատ մարտիկների զոհված լինելու լուրերը:

Նա լսում էր այս բոլորը, մասնակից դառնում ժողովրդին համակած ընդհանուր տրամադրությունը, միշտ պահելով իր լավատեսությունը: Նրան այցելում էին հին ու նոր շատ ծանոթներ, գրուցում իրենց հետաքրքրող հարցերի մասին: Ժամանակի արժեքը այնքան թանկ գնահատող լեզվաբանը երբեմն խախտում էր օրվա ռեժիմը, գրույցի բռնվում անգամ անծանոթ մարդկանց հետ, բաժանում նրանց ուրախություններն ու վշտերը:

Կային և այնպիսի իրադարձություններ, որոնք հայ ժողովրդի համար ունեին համազգային նշանակություն: Դրանցից

էր կառավարութեան որոշումը սփյուռքահայութեան ներգաղթ կազմակերպելու վերաբերյալ: Տասնյակ հազարավոր տարագիրներ, որոնք Առաջին համաշխարհային պատերազմից հետո ազատվել էին մեծ ջարդից և երեսուն տարի թափառել էին երկրից երկիր միշտ սպասելով հայրենիքի կանչին, այժմ խումբ առ խումբ գալիս էին իրենց երազած Սովետական Հայաստան: Ներգաղթի առաջին ողջունողներից մեկը եղավ Աճառյանը:

Մամուլում տպագրեց հուզիչ մի նամակ, ուղղված սփյուռքահայերին: Այդ նամակում կարդում ենք.

«Այն օրից, երբ տաճկական յաթաղանից հաղիվ ազատված, ձեր սիրտն արյունով և ձեր աչքերը արցունքով լցված, հայրենի տան ծխացող ավերակներից փախաք ապաստան որոնելու օտար աստղերի տակ, սպասում էինք ձեզ:

Քառորդ դարը մոռացութեան անդունդը գլորվեց, բայց դուք չմոռացաք ձեր երկիրը, ձեր մարմնական վերքերը բուժվեցին, բայց ձեր հոգին չբուժվեց, դուք միշտ հիշում էիք հայրենի հյուղակը...

Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսերով, մեր հոգիները հույսերով, և մեր ձեռքերը ծաղկեպսակներով լցված՝ սպասում էինք ձեզ: Կգա գարունը, կգա հայրենի տան մուրհակը՝ արագիլը, կգան հին օրերի պանդուխտ ծիծեռնակները ձեր նորակառույց տների կտուրների տակ կշինեն իրենց բույները»<sup>1</sup>:

Նա հուզումով, արտասուքով կարդում էր թերթերում նորանոր կարավանների ժամանման լուրերը, տկար աչքով դիտում «Ռոսիա» նավից Բաթումի նավահանգիստը իջնողների նկարները թերթերում:

Աստիճանաբար բացվեցին Սփյուռքը մայր երկրից անջատող դռները, այժմ հայաստանյան հրատարակությունները գնում էին արտասահման, սփյուռքահայ կենտրոններից գալիս էին գիտական, գեղարվեստական գրքեր, մամուլ: Աճառյանը, որ մի ամբողջ տասնամյակ զրկված էր նման հրատարակություններ ստանալու հնարավորությունից, նորից կարդում էր «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա» և այլ պարբերականներ:

Տրամադրությունը լավ էր, ապրում էր օրվա հուզող բոլոր խնդիրներով: 1946 թ. սկզբին նշվեց Ե. Շահազիզի ծննդյան 90-ամյակը: Նա այդ օրերին տկար էր. չկարողացավ ներկա լինել հորեյանական հանդեսին, բայց ուղար-



կեց հետևյալ ջերմ գրությունը.

«Սիրելի եղբայր Շահազիզ,

«Ճիշտ 40 տարի միասին պաշտոնավարել ենք. տեսել ենք աշխարհի լավն ու վատը: Տարիներ առաջ, Նոր-Նախիջևանում ես էի, որ նախաձեռնություն ունեցա և կազմակերպեցի Ձեր 35-ամյա հորեկյանը, որի համար էլ մի փոքրիկ գիրք գրեցի Ձեր կենսագրության և գրական ու մանկավարժական գործունեության նվիրված: Դուք, թեև ինձանից մի քիչ ավելի երեց, այնուամենայնիվ առույգ ու առողջ մնացիք: Սրտանց ցանկանում էի անձամբ գալ և ողջագուրել Ձեզ, բայց առողջական վիճակս արգելում է դուրս գալ մանավանդ գիշերով և ցրտին: Թեև մարմնով բացակա, բայց հոգով ներկա եմ այդտեղ: Համբուրում եմ Ձեզ՝ իբրև իմ մեծ եղբորը, իբրև իմ վաղեմի բարեկամին, իբրև իմ հին պաշտոնակցին, իբրև իմ տասնյակ տարիների տեսչին և վերջապես մի ավագ հեղինակի, որի աշխատություններից ես էլ օգտվել եմ գուցե ամենից ավելի: Սրտանց մաղթում եմ Ձեր այս 90-ամյակի պայծառ օրը, որպեսզի 10 տարի հետո միասին տոնենք նաև Ձեր հարյուրամյակի փառապանծ օրը: Մնացյալի հաշիվն էլ հետո կտեսնենք:

Ձեր անկեղծ բարեկամ և կրտսեր եղբայր Հ. Աճառյան  
12 հունվ. 1946 թ. Երևան.»<sup>2</sup>:

Այդ տարիներին նրա միտքը զբաղեցրեց նաև տուն կառուցելու հարցը: Այժմ նրա բնակարանային պայմաններն անհամեմատ ավելի լավ էին, քան երեսնական թվականներին: Լենինի պողոտայի № 99 շենքում զբաղեցնում էր երեք սենյակ հարակից հարմարություններով: Բայց ակադեմիկոսներին հնարավորություն էր տրվում կառուցելու առանձնատներ, այն էլ քաղաքի լավագույն մասերից մեկում՝ Բաղրամյան փողոցի վրա, այգիների մեջ: Մասամբ կնոջ ցանկություններ, մասամբ էլ այն նկատառումով, որ իր բնակարանը գտնվում էր շենքի երրորդ հարկում և ղժվարանում էր բարձրանալ, խանդավառվեց սեփական տուն կառուցելու գաղափարով: Միակ ցանկությունն այն էր, որ բնակարանը կառուցվի իր հավատարիմ ու սիրելի աշակերտներից մեկն ու մեկի հարևանությունում: — Կյանքիս վերջին տարիներն են,— ասում էր, պետք է անդավաճան, անկեղծ ու սիրելի, մտերիմ մեկը ինձ հետ լինի, ուժ տա իմ ջլատված հոգուն: Կից սենյակներում նրա ներկայությունը ինձ

արիություն կներշնչի, երեկոները պատշգամբում միասին կրնասենք, կգրուցենք, ժամանակ կանցկացնենք, կյանքի վերջալույսի ջերմությունը կվայելեն: Այս տարիքում, հոգեկան այս վիճակի մեջ շատ դժվար է մենակ ապրել:

Կնոջ հետ երկար ու բարակ ծրագրեր կազմելուց հետո նախընտրությունը տվել էր աշակերտներից մեկին, որն ապրում էր Կոնդում, խոնավ, խարխուլ մի տնակում: Աճառյանը մի առավոտ կանչում է նրան իր մոտ, այն էլ գրաբար խոսելով, որը նշան էր ուրախ տրամադրության: Հայտնում է իր և կնոջ կազմած ծրագիրը, հեռանկարները: Իմանալով աշակերտի նյութական վիճակը, առաջարկում է որոշ գումարով օգնել, որպեսզի չենքը կառուցվի: Նույն օրը մեծագույն խանդավառությունով միասին գնում նայում են հողամասը, որ գտնվում էր Ակաղեմիայի այժմյան կենտրոնական շենքի տարածության վրա: Մանկական հրձիվանքով որոշում է, թե որ սենյակը որտեղ պիտի կառուցվի, պատշգամբը ինչպես պետք է լինի, փոքրիկ հողամասում ինչ ծաղիկներ կարող են աճեցնել:

Ծրագիրը չստացվեց. հաշվի առնելով իր հնարավորությունները, աշակերտը հրաժարվեց: Փոխվեց նաև հողամասի տեղը: Աճառյանը նոր բնակարանը կառուցեց Բաղրամյան փողոցի մուտքի մոտ: Պատանեկան եռանդով կպավ աշխատանքի. մինչ այդ կենցաղային հարցերում այնքան անտարբեր գտնված մարդը այժմ ամեն կողմ դիմումներ էր անում, գրություններ ուղարկում, մեկից շինանյութ էր խնդրում, մյուսի օգնությունը դիմում, որ արագացվի գործը: Սկսեց նրան զբաղեցնել նաև բնակարանի կահավորումը: Նա մինչ այդ մազաչափ կարևորություն չէր տվել բնակարանի կահավորմանը. բավարարվել էր խիստ կենսական նվազագույն հարմարություններով: Հիմա համաձայնվեց, որ կինը Մոսկվայից բերի բազկաթոռներ, սեղաններ: Հաճախ էր ցույց տալիս դրանք այցելուներին ու ասում. «Սոֆիկն է բերել, թող ուրախանա, նա էլ կին է, նման բաների կարևորություն է տալիս»:

Բայց երկար չտևեց այս անդորրը: Մառականներն սկսեցին իրենց պայքարը: Տպագրությունը գրեթե ավարտված «Հայոց լեզվի պատմության» աշխատանքները դադարեցվեցին: Սկզբում առարկություններն իբր թե առանձին արտահայտությունների էր վերաբերում, հատկապես «Ոսկեդարյան հայե-

րեն» բնորոշմանը: Աճառյանը համաձայնվեց փոխել և դարձնել «Մեսրոպյան հայերեն»: Կարծեք լուծվում էր հարցը: 1946 թ. հունվար ամսին մամուլում երևաց լուր, թե «Հայոց լեզվի պատմությունը» շուտով լույս կտեսնի: Նույն օրերին, հակառակ Աճառյանի անձի ու գործի շուրջ սկսված նոր արշավանքի առկայությունը, նրա լավագույն աշակերտներից է. Աղայանը մամուլում համարձակվում էր գրել, թե «Պրոֆ. Աճառյանի այս աշխատությունը մի մեծարժեք գանձ է հայ լեզվաբանական գրականություն մեջ»<sup>3</sup>:

Մառականները, սակայն չէին դադարեցնում հարձակումները: 1945 թ. ակադեմիայի «Տեղեկագրում» լույս տեսած «Հայագիտության պատմության հիմնական փուլերը» հոդվածում<sup>4</sup> խոսվում էր Հայագիտության զարգացման նախընթաց երկու փուլերի մասին, սուր քննադատության ենթարկվում հնդեվրոպական ուղղությունը, ասվում, թե նա այլևս որևէ նոր բան չունի ասելու գիտությունը, և միանգամից, առանց Աճառյանի անունն անգամ հիշատակելու ասվում էր, թե «Հայագիտության պատմության երրորդ փուլն սկսում է Ն. Յա. Մառը»:

Բայց աստիճանաբար սկսեցին հիշատակել Աճառյանի անունը, ... որպես «վնասակար» գաղափարներ տարածող:

Նույն այն անձնավորությունը, որ հոդված էր գրել «Հայագիտության պատմության «հիմնական փուլերի» մասին, բայց չէր նկատել Աճառյանին, 1948 թ. սկզբներին տպագրած «Սովետական Հայագիտության հիմունքները»<sup>5</sup> հոդվածում անվերապահորեն պաշտպանելով Մառի այն տեսակետը, թե հնդեվրոպական լեզվաբանությունը «Կառուցված է եվրոպացիների կողմից իրենց գաղութային քաղաքականությունը արևելյան ժողովուրդներին ճնշելու համար», Աճառյանին, Մանանդյանին, Աբեղյանին, Լեոնին, Մայխասյանին համարում էր այդ տեսության հետևող, գտնելով թե նրանք եթե Հայագիտության զարգացման գործում կատարել են որոշ դեր, ապա այդ կատարել են «մտքի և ոգու ստորագրություն ցուցաբերելով դեպի եվրոպական բուրժուական գիտնականները»: Այս ամբողջ հոդվածում հեղինակը սովետական Հայագիտություն ասելով բացարձակապես հասկանում է իրեն, ճգնում ապացուցել, թե որքան հավատարիմ է մնացել Ն. Յա. Մառի «մատերիալիստա-

կան» սկզբունքներին, իսկ ուրիշներ գլորվել են դեպի բուր-  
ժուական ճահիճը:

Աճառյանի դեմ գրում էին նաև ուրիշներ: Դրանց մեջ առա-  
վել եռանդ, ատելություն հասնող մոլեռանդություն էր ցու-  
ցաբերում հայ-վրացական լեզվական ընդհանրություններով  
զբաղվող մի լեզվաբան, որը պատկանում էր Աճառյանի աշա-  
կերտների միջին սերնդին: Մի քանի տարի Աճառյանին աշա-  
կերտած, բայց մառական քարացած տեսություն վրա աճած  
այս երիտասարդը ամեն կերպ փորձում էր նսեմացնել հայ-  
վրացական լեզվական ընդհանրությունների բացահայտման  
ուղղությամբ Աճառյանի կատարած աշխատանքը, նպատակ  
ունենալով հիմնավորել Մառի այն տեսակետը, թե հայերենը ոչ  
թե հնդեվրոպական լեզվախմբին է պատկանում, այլ առաջա-  
ցել է կովկասյան մի շարք լեզուների խաչաձևումից, խառնա-  
ծին լեզու է:

Զարմանալին այն կիրքն էր, որ ցուցաբերում էր այդ լեզ-  
վաբանը Աճառյանի հետ վիճելիս, նրա տեսակետները «հեր-  
քելիս»։ նրա մոտ չէր նկատվում ոչ միայն տարրական հար-  
գանք ուսուցչի, գիտնականի հանդեպ, այլ առհասարակ մար-  
դու: Կարծեք վիճում էր գիտություն հետ առնչություն չունեցող  
մեկի հետ, այն էլ թշնամու հետ:

Այսպիսին էր մթնոլորտը, երբ 1948 թ. գարնանը Թբիլիսիում  
հրավիրվեց Հայաստանի և Վրաստանի գիտությունների ակա-  
դեմիաների Հասարակական բաժանմունքների միացյալ գիտա-  
կան սեսիան: Հակառակ մառականների դիմադրությունը Ակա-  
դեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի ղե-  
կավարությունը հաջողվեց Աճառյանի անունն էլ մտցնել ցու-  
ցակի մեջ, որ նա էլ մեկնի Թբիլիսի:

Այնտեղ, մայիսի 24-ի նիստում նա զեկուցեց հայերեն ղ  
հնչյունի ւ-ի փոխվելու ժամանակի մասին: Նրա հաղորդումը  
բարձր գնահատվեց վրացի լեզվագետների կողմից, պրոֆ.  
Շանիձեն նչեց Աճառյանի մեծ ծառայությունները հայագիտու-  
թյանը և հիմնավորված համարեց նրա եզրակացությունները:  
Վրաստանի ԳԱ իսկական անդամ Գ. Ախվլեղիանին Աճառյանի  
զեկուցումը համարեց օրինակելի:

Բայց ինչ նշանակություն ուներ այս բոլորը, հազիվ էր  
Աճառյանը վերադարձել Երևան, որ մարդիկ սկսեցին «մշակել»

նրա զեկուցումը, խորհուրդ տալ «Տեղեկագրի» խմբագրու-  
թյանը չտպագրել պատմա-համեմատական մեթոդով գրված  
այդ հոդվածը: Խմբագրությունը չլսեց այս շշուկները և տպա-  
գրեց այն որպես «Հայկականքի» հերթական շարքերից մեկը:

Աճառյանի դեմ սկսած հարձակումները սաստկացան հա-  
ջորդ տարվա հունվարից, իրենց գազաթնակետին հասան ամ-  
ռանը:

Ակադեմիայի «Տեղեկագրում» տպագրվեց «Լենինյան պար-  
տիականություն սկզբունքը և լեզվաբանությունը» հավակնոտ  
հոդվածը, որտեղ կարդում ենք.

«Զի կարելի մոռանալ, որ Մառի մատերիալիստական  
դրույթների ընդունման և զարգացման շնորհիվ Սովետական  
Հայաստանի լեզվաբանները զգալի հաջողությունների են  
հասել»<sup>7</sup>: Ապա հողմնածագիրը թվարկում է այդ հաջողու-  
թյունները, հայոց լեզվի պատմության ու բարբառագիտու-  
թյան բնագավառը տալով Ա. Ղարիբջանին, լեզվի տեսություն  
ու աշխարհաբարի պատմության ուսումնասիրումը՝ Գ. Սևա-  
կին, հայ-վրացական լեզվական ընդհանրությունները Ա.  
Մուրվալյանին: Իսկ Աճառյանի<sup>8</sup>... քողարկված մեղադրանք-  
ներ: Բայց չէ՞ որ այս բնագավառների մեծ մասը Աճառյանն էր  
հետազոտել տասնամյակների ընթացքում, անգամ հայ-վրա-  
ցական ընդհանրություններով զբաղվել դեռևս 1890-ական  
թվականների վերջերին:

Նույն օրերին մի այլ լեզվաբան հայտնագործել էր այն տե-  
սակետը, թե «Պրոֆ. Հ. Աճառյանն իր բարբառագիտական  
բոլոր ուսումնասիրությունները կատարել է ֆորմալիստական  
մեթոդով», թե «Բարբառային լեզվական երևույթները գրա-  
բարի հետ համեմատելու արատավոր մեթոդով են գրված  
պրոֆ. Աճառյանի բարբառագիտական բոլոր աշխատություն-  
ները, պրոֆ. է. Աղայանի «Քննություն Մեղրու բարբառի»  
աշխատությունը և բարբառագիտական բոլոր դիսերտացիա-  
ները»<sup>8</sup>:

Դարձյալ ժողովներ, գիտական նստաչրջաններ, որոնց մեջ  
չաղակրատականքը գարեջրի փրփուրի պես հորդում էր, իսկ  
զրպարտանքը անարգել չպրտվում ամենաազնիվ մարդկանց,  
ամենաականավոր գիտնականների, այդ թվում Աճառյանի  
վրա: Քննադատում էին նրան և արժանավորները, և մանա-

վանդ անարժանները, գիտական ոչնչությունները:

1949 թ. հունիս ամսին ղեկավար մարմինները հատուկ որոշում ընդունեցին Հայաստանում լեզվաբանությունից բնագավառում տիրող դրությունից մասին: Ի կենսագործումն այդ որոշման նոր նիստեր տեղի ունեցան Ակադեմիայում, համալսարանում, տարբեր ինստիտուտներում: Մամուլում լույս տեսան Մառի «Լեզվի նոր ուսմունքը» թմբկահարող, հնդեվրոպաբանությունը ժխտող բազմաթիվ հոդվածներ, պայքարի հիմնական թիրախ դարձնելով Հր. Աճառյանին և Գր. Ղափանցյանին: Ինչևէր ասեք որ չգրվեցին Աճառյանի դեմ: Նրա գիտությունը համարվում էր «կեղծ, հակապատմական և հակագիտական», «ոեակցիոն բուրժուական», «իդեալիստական», Մառի «մատերիալիստական ուսմունքը վարկաբեկող» և այլն, առաջարկվում էր անհապաղ «ջախջախել», «արժանի հակահարված տալ», «մերկացնել» այդ վտանգավոր տեսությունն ու քարոզողներին:

Աճառյանին քննադատողների մեջ քիչ չէին այնպիսի մարդիկ, որոնք լեզվաբանությունից բացարձակապես ոչինչ չէին հասկանում, բայց ոչ միայն քննադատում էին, այլև վճիռներ կայացնում:

Կարգում էր այս բոլորը լեզվաբանը սուրճի գավաթը սեղանին, կարգում էր ու դարմանում, թե մի՞թե մարդիկ այդքան անտարբեր են դեպի գիտական ճշմարտությունը: Իր համար չկար ավելի վեհ բան, քան գիտական դավանանքին հավատարիմ մնալը, իսկ ուրիշները ինչպես էին խաղում իրենց սկզբունքների հետ, հարմարեցնում անձնական շահերին, զբաղեցրած աթոռին, կարծիքները փոխում էին այնքան բնական ձևով, ինչպես պիտի փոխեին իրենց սպիտակեղենները, գրում էին բաներ, որոնց չէին հավատում:

Չէր ափսոսում իրեն: Կյանքի մայրամուտն ապրող մարդու համար դա առաջնային չէր, բայց ափսոսում էր գիտությունը, որ այսպես խաղալիք էր դարձել բախտախնդիրների ձեռքին:

Ջղաձգական մթնոլորտը ավելի ծանրացավ, վրա հասան քաղաքական դեպքեր:

Աճառյանն ամբողջ էությունը ապրում էր իր ժողովրդի մեծ վիշտը: Ծատ անքուն գիշերներ անցկացրեց այդ տարիներին, ունեցավ ավելի ծանր ապրումներ, քան 1937 թվականին:

Միշտ լավատես գիտնականը, որ նույնիսկ բանտարկություն տարիններին պահել էր հոգու արիությունը, կատակներով, սրամիտ մանրադեպեր պատմելով զբաղեցրել էր բախտակից ընկերներին, այժմ ապրում էր որոշ հուսալքում: Կյանքում առաջին անգամ նա հիասթափվում էր նաև ընտրած մասնագիտությունից: Նրա այս մտորումները ցայտուն կերպով ի հայտ են եկել Լենինգրադ մտերիմներից մեկին գրած մի նամակում, որտեղ կարդում ենք. «Երանի ձեզ, որ ձեր մտքի արտադրությունները կարողանում եք հրատարակել և ոչ միայն ներկա, այլև ապագա տարիներին խոսել: Իսկ մենք, դժբախտներս, ընտրել ենք մի այնպիսի նյութ, ողորմելի, փոքրիկ մի ժողովրդի լեզուն, մենք էլ ձանձրանում, ուրիշներին էլ ձանձրացնում ենք, եթե պատահաբար մի երկու ընթերցող ճարվի: Ավելի վատը այն է, սակայն, որ մեր աշխատությունները չեն էլ հրատարակվում, հազար տեղ դիմի և անվերջ սպասի, որ տպեն, երանի ձեզ»:

Այդ օրերին է, որ նա մի անգամ դառնորեն կնոջն ասել է. «Սոֆիկ, ավելի լավ չի լինի գյուղ գնանք, մի կով պահենք, ապրենք»<sup>9</sup>:

Մեծ գիտնականին պաշարել էր նաև կասկածատությունը, դարձել էր ճակատագրի հավատացող: Այժմ նոր կառուցվող բնակարանն էլ նրան չէր հրապուրում: Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում այդ մասին, ուրախանալու փոխարեն մոռյվում էր. – Թող ուշ ավարտվի, – ասում էր, – մանավանդ վերջնականապես ավարտված թող չհամարվի, պիտի աշխատել, որ վերջին մեխը ուշ խբվի, վերջին ապակին ուշ գցվի, մի խոսքով, չհամարվի լրիվ ավարտված: Երբ հարցվում էր պատճառը, բերում էր արարելեն մի առած. միտքն այն էր, թե երբ շենքը ամբողջապես ավարտվում է, առաջին հանդիսավոր շնորհավորողը լինում է մահը: Թվարկում էր օրինակներ, թե քանիքանի մարդիկ մահացել են նոր բնակարան տեղափոխվելուց անմիջապես հետո, հենց նույն գիշերը, կամ մի շաբաթից, մի ամսից: – Ձէ, ասում էր, – գոնե մի բան պակաս պիտի մնա:

Աճառյանի բնակարանը կառուցվեց: Նա միայն մի գիշեր կարողացավ քնել այնտեղ, այն էլ ինչ–որ հսկողություն համար, բայց շենքի կառուցումը լրիվ չէր վերջացել, որ փվեց ինքը:

Հոգեկան այս ծանր օրերին, 1949 թվի ամռանը Աճառյանը որոշում է կնոջ հետ մեկնել Լենինգրադ, թե չընթացապատի ճահ-ճացած մթնոլորտից միառժամանակ կտրվելու և թե նյութեր քաղելու: Մինչ այդ նա հայոց լեզվի լիակատար քերականու-թյան համար կարդացել էր ավելի քան 500 լեզուների քերա-կանություններին վերաբերող աշխատություններ: Մնացել էր մի քանի տասնյակ լեզու: Նամակագրությունը պարզել էր, որ դրանք կան Լենինգրադի Շչեդրինի անվան գրադարանում<sup>10</sup>:

Նա միշտ ասել է, թե աշխատանքը լավագույն սպեղանին է հոգեկան հարվածների, որքան էլ նրանք խոր լինեն: Ու այս-տեղ, Նևայի ափին, նա ոչ թե հանգստանում է, զբոսնում, այլ աշխատում է այնքան լարված, որ զարմանք է պատճառում անգամ գրադարանի մարդկանց: Նրանք կասկածում են, թե արդյո՞ք այդ բոլոր գրքերը, որ ուղարկվում են հյուրանոց Աճառյանին, օգտագործվում են նրա կողմից: Բանն այնտեղ է հասնում, որ ակադեմիկոս Ստրուվեն ինքն էլ է հետաքրքրվում, այցելում նրան, ծանոթանում աշխատանքի ընթացքին, նրա կազմած առասպելական ծրագրին՝ հայոց լեզվի քերականու-թյունը 600 լեզուների համեմատությամբ ներկայացնելու վե-րաբերյալ: Դիտողություն է անում, թե այդ տարիքում չպետք է այդքան լարված աշխատել: Աճառյանն ասել է, թե հենց ծեր լինելն է հարկադրում շատ աշխատել, ուզում է մահից առաջ ավարտել «Լիակատար քերականությունը», վախենում է հանկարծ անավարտ թողնի: – Ո՛չ,– պատասխանել է Ստրու-վեն, երբ գիտնականները որևէ նպատակ են հետապնդում, չեն մեռնում, մինչև այդ նպատակը չի կենսագործվում: Դուք այն-պիսի մի ապշեցուցիչ գործ եք ձեռնարկել, որ բնությունը մե-ղանչած կլինի խլելով ձեր կյանքը նախքան այդ գործի ավարտը<sup>11</sup>:

Աճառյանը շատ գոհ է եղել լենինգրադյան այդ ուղևորու-թյունից: Ռուս և հայ գիտնականները օժանդակել են նրան ինչով որ կարողացել են. «Թե ինչպիսի մեծ հյուրընկալություն գտա այս բոլոր գրադարանների վարչության կողմից,– գրել է նա հետագայում,– անկարող եմ նկարագրել: Այդ գրադարան-ների վարիչները սիրահոժար տվին ինձ եվրոպական լեզուներ իմացող օգնականներ, որոնք ամեն ջանք գործ դրին ցուցակ-



ներ պրպտելով և գրադարանների հեռավոր խորշերը որոնելով դուրս բերել ամեն տեսակ անձանոթ լեզվի քերականությունները»<sup>12</sup>;

Տրամադրությունն էլ այնտեղ շատ լավ է եղել. կտրվել է երևանյան հոգեմաշ մտատանջություններից, զբաղվել նաև ստուգաբանություններով: Այս ճանապարհորդությունյան ընթացքում է, որ հենց վագոնում նա ստուգաբանել էր Սեդա անունը, որ հաջորդ տարի տպագրեց «Տեղեկագրում», «Հայկականք» շարքում: Պետք էր տեսնել նրան՝ այդ ստուգաբանությունյան պահը նկարագրելիս. – Պառկած էի, աչքերս փակ, բայց արթուն էի. հանկարծ խավարի մեջ կարծեք գրվեց – արաբերեն բառը... Սուրբ Մեսրոպի հետ էլ այդպես պատահած պիտի լինի, շարունակ նույն բանի մասին մտածելուց՝ մարդու աչքին կարող է երևալ: Այդպես եղավ Սեդան: Իսկույն գրի առի գյուտս, բացատրեցի Սոֆիկին, բան չհասկացավ. ներկայացրի Օրբելուն. Հաստատեց:

1949 թ. օգոստոսի վերջերին ուրախ տրամադրությամբ վերադառնում է Երևան, պատրաստվում վերսկսել Համալսարանական պարապմունքները, որ նրան հանձնում են չարագուշակ մի թուղթ.

«Հրաման № 70, Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական Համալսարանի: 31 օգոստոսի, 1949 թ.

Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի արևելյան լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Հրաչյա Հակոբի Աճարյանին ազատել ամբիոնի վարիչի և դասախոսի պարտականություններից սեպտեմբերի 1-ից, լեզվի նոր ուսմունքի դասավանդումը չապահովելու համար: Ռեկտոր Գ. Պետրոսյան»<sup>13</sup>:

Ականատեսները պատմում են, որ այս տարօրինակ հրամանը կարգալուց հետո նա ապրել է հոգեկան շատ ուրույն վիճակ. սկզբում իրեն հատուկ հումորով ցանկացել է կատակել, ուշադրություն դարձրել անգրագետ ոճի վրա, շարահյուսական սխալների վրա, նաև այն բանի, որ նույնիսկ Աճառյան ազգանունը դարձել էր Աճարյան. նա ը. տառի տակ գծել է, ինչպես մատենագրական նման սխալները տպագրելիս էր անում. հետո աչքը բեռոված է մնացել ստորագրությունյան վրա. դա այն անձնավորությունն էր, որը գուցե ամենից շատ էր ստացել Աճառյանից, ստացել ձրի, խլել նրա թանկագին շատ ժամերը,

նրա տանը «սովորել» արաբերեն, վայելել առատ հյուրընկալությունը, սեղան նստել, ստացել էր առատորեն – ու հիմա վարձահատույց էր լինում այս ձևով: Հետո աստիճանաբար մոայլվել է, այլայլվել, դողդոջուն ձեռքերով թուղթը գցել սեղանին, ասել. «Թող ինձ նորից բանտարկեին, թեկուզ քսո՞րեին, բայց չհեռացնեին համալսարանից: Ես չեմ կարող ապրել առանց համալսարանի, համալսարանը իմ օդն էր, թթվածինը, հիմա ինձ զրկում են այդ օդից, ես երկար չեմ ապրի. թող ինձ պահեին համալսարանում որպես դոնապան, հսկիչ, միայն չհեռացնեին, գոնե իմանայի հանցանքս»:

Հաջորդ օրերին ընկնում է ջղաձգություն այնպիսի վիճակի մեջ, որը լրջորեն մտահոգում է նրա մերձավորներին, այդ թվում ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանին, որի օգնությունն էր նա դիմում ամենափոքր տկարությունից: Դառնում է ավելի քչախոս, մելամաղձ, տառապում անքնություն, ցնցող մղձավանջային երազներ տեսնում:

Մարդիկ տեսել են համալսարանին հրաժեշտ տալու սրտառուչ տեսարանը, համալսարանի պատերը համբուրելուց հետո արտասովոր աչքերով հեռանալը իր համար սրբատեղ դարձած այդ հաստատությունից: Հեռացվել էր նաև Գր. Ղափանցյանը:

Հետո: Մի ամբողջ տարի նստում է տանը. չի սիրում մարդկանց հետ շփվել, իր մեծ վիշտը մերթ փորձում է ամոքել աշխատանքի մեջ, Լենինգրադից բերած նյութերը տեղադրել Լիակատար քերականության համապատասխան հատորներում, մերթ կնոջ թելադրանքով հետաքրքրվել բնակարանի կառուցման ընթացքով, շարունակելով կապը ամենամերձավոր բարեկամների ու աշակերտների հետ:

Տիկ. Սոֆիկը վկայում է, որ այդ օրերին մի օր կանչել են նրան և խորհուրդ տվել չհամառել Մառի դեմ, տալ յուրահատուկ ղեկավարացիա, թե հրաժարվում է հնդեվրոպաբանությունից, պիտի ուսումնասիրի Մառի ուսմունքը: Այլպես, ասել են, ձեր վիճակը կարող է ավելի ծանրանալ:

Չարագուշակ այս նախազգուշացմանը Աճառյանը պատասխանել է. «Ես արդեն 73 տարեկան եմ, ինչպես կարող եմ սովորել այդ նոր ուսմունքը»: Վերադարձին, ճամփին կնոջն ասել է. «50 տարի այդ գիտությունն եմ դասավանդել, աշակերտներ

հասցրել, որոնք հիմա դասախոսներ, պրոֆեսորներ են, այժմ կանգնեմ ասեմ թե բոլորը սխալ էր: Ապուշներ, տխմարներ, ի՞նչ ապացույց ունեին, թե այդ գիտությունը ճիշտ չէ»:

Բայց սրանով չի վերջանում: Մարդիկ են այցելում նրա տունը, անձանոթ մարդիկ, որոնք ասում են, թե ուզում են նրա աշխատանքներին ծանոթանալ, իմանալ թե որևէ բանի կարիք ունի: Միաժամանակ խորհուրդ են տալիս գրել նման մի մեղադրական, սահմանազատվել հնդեվրոպական դպրոցից, ուսումնասիրել Մաոի ամենահաղթ ուսմունքը:

Եվ ... Աճառյանը գրում է այդ բացատրագիրը: Ուղարկե՞լ է այն որևէ տեղ, թե հրաժարվել է, մեզ չհաջողվեց պարզել: Նրա թղթերում մնացել է պատմական այդ փաստաթղթի սեպագրությունը, այն էլ անավարտ: Աճառյանն իր այդ գրություն մեջ բացատրում է, թե ինչ բան է հնդեվրոպական ուղղությունը և ասում, թե այն գիտական աշխարհի կողմից ընդունված ուսմունք է, օգտագործվում է նաև Մոսկվայի բուհերում, իսկ որպես ձեռնարկ թարգմանված է իր ուսուցիչ Մեյեի լեզվաբանության «Ներածությունը», որը երեք անգամ տպագրվել է Մոսկվայում: Ապա ասում է, թե Մոսկվայում իրեն էլ խնդրել են մասնակցել այդ առարկայի ծրագրերը կազմելու աշխատանքներին, թե Մեյեի գրքին կցված առաջաբանի վերջում բառացի ասված է. «Ով որ ուզում է կովել ֆաշիզմի դեմ, իր զենքերը այս գրքից պիտի վերցնի»:

Այս բոլոր բացատրությունները տալուց հետո գրում է. «Ոչ մի բառով չեմ արտահայտվել Մաոի դեմ, ոչ դասախոսությունաց մեջ, և ոչ էլ գրականության մեջ»: Ասում է, թե գիտությունը կանգնած չի լինում մի կեսում: Մաոը ստեղծել է լեզվի նոր ուսմունք, որը ընդունվել է պետականորեն, ուստի ինքը պարտավոր է հաշվի առնել այդ. դրա համար էլ վերջին ուսումնական տարում (1948 թ. սեպտեմբեր) հանվել է իր առարկան և այդ օրվանից սկսած ինքը համեմատական քերականություն չի դասավանդում, այլ միայն պարսկերեն լեզու, թե նույնիսկ ուսանողների հին տեսրակները հավաքելով տարել է տուն, պատռել այն բոլոր թերթերը, ուր հնդեվրոպական բառը գործածված է:

Ուշագրավ են փաստաթղթի հետևյալ տողերը.

«Այժմ էլ... 26 տարի համալսարանում ծառայելուց և առ-

Հասարակ 54 տարվա ուսուցչական գործունեությունից հետո, երբ աշխատանքից ուժասպառ, քայլելու անկարող, մի աչքս բոլորովին կույր, մյուս աչքս գրեթե կուրացած, կարդալու անընդունակ, այնուամենայնիվ չեմ ձեռք քաշում աշխատանքից և գրում եմ 600 լեզուների ընդարձակածավալ քերականությունս, որ «Արմատական բառարանից» ավելի մեծ փառք պիտի լինի մեր սովետական մեծ հայրենիքին, ինձ քննադատում են ասելով, թե ես հետևում եմ և շարունակ դասավանդել եմ հնդեվրոպական լեզվաբանությունը: Այս գիտությունը ես չեմ հնարել. դա 150 տարվա գիտություն է և ավանդվել է շարունակ Մոսկվայի և Լենինգրադի համալսարաններում, մինչև անգամ Մաոի անվան լեզվի ինստիտուտում»<sup>14</sup>:

Ոչինչ չօգնեց: Ծարունակվեց պայքարը Աճառյանի դեմ ավելի ու ավելի մոլեգին: Կարգադրվեց այրել չորս տարի տպարանում դարսված «Հայոց լեզվի պատմություն» տպագրված մամուլները: Այրեցին:

Լսեց Աճառյանը այս ահավոր լուրը. և այլևս չկարողանալով իշխել քայքայված ջղերի վրա, փորձեց ձեռագիրն էլ ինքը այրել տանը, սենյակի հատակին ստեղծելով յուրահատուկ մի խառույկ.— թող վերջանա՛, թող վերջանա՛, քանի որ ոչ ոքի հարկավոր չէ այս գիտությունը, ասել է:

Տան ծառայող Ջոյա Իվանովնան հազիվ է կարողանում հանգցնել կրակը և փրկել տունը հրդեհից: Հետո Աճառյանը բարձր ձայնով լաց է եղել ու ասել. «40 տարվա քրտնաթոր աշխատանքս կորավ, ինչպիսի չարչարանքով այս ձեռագրերը ուսիս դրած՝ ման էի եկել երկրից երկիր, բերել հասցրել այստեղ, ու հիմա ահա վախճանը: Ապա դառնալով կնոջը հարցրել է. «Սոֆիկ, դու ի՞նչ կզգայիր, եթե Քնարիկին քո աչքերի առաջ մորթեին, այս պահիս ես այդպիսի զգացում եմ ապրում»:

Բայց կային և բարի մարդիկ: Ու մի օր խփում են դուռը, բաց է անում տիկ. Սոֆիկը. տպարանական մի բանվոր արագորեն հանձնում է «Հայոց լեզվի պատմություն» տպագրված օրինակների մամուլներն ու անհայտանում: Աճառյանը հուզված նայում է. գրեթե ամբողջ գիրքն էր, բացառությամբ վերջին մի քանի մամուլների, որոնք էլ լրացվում են սրբագրական թերթիկներով: Նա կազմում է այդ բոլորը, ասեղով կարում ու դարձնում է գիրք, որն այժմ պահվում է նրա ձեռագրերի մեջ:

Տիտղոսաթերթից երևում է, որ առաջին մամուլները տպագրված են եղել 1945 թ.:

– Սոֆիկ, այս բանվորները որքան մարդասեր են, ասել է կնոջը, որքան բարի:

Մեր նկարագրած դեպքերից երկու ամիս առաջ ամբողջ Սովետական Միությունում նշվել էր Ն. Յա. Մառի ծննդյան 85-ամյակը և մահվան 15-ամյակը: Հունվարի 6-ին տեղի էր ունեցել Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը, իսկ հունվարի 9–11-ին Ակադեմիայի Մառի անվան Լեզվի ինստիտուտի գիտական սեսիան: Տրվել էին Հետևյալ ղեկուցումները. «Մառը սովետական Հայագիտության հիմնադիր», «Մառի պայքարը Հնդեվրոպաբանության դեմ», «Շարահյուսության հարցերը Ն. Մառի ստադիականության ուսմունքի լույսի տակ», «Ն. Մառի ուսմունքը Կովկասյան ժողովուրդների եղբայրության և լեզուների միասնական կապի մասին» և այլն:

Այս նիստերում մարդիկ հարկադրված էին Հայագիտության բոլոր ճյուղերի հարցերը լուծել Մառի ուսմունքի «Լույսի տակ», նրա առաջարկած քարացած օրենքներով:

Այդ հոբեյանը Վրաստանում նշվեց ավելի շոնդալից կերպով, տևեց 1949 թվականի դեկտեմբերի սկզբից մինչև 1950 թ. մարտի վերջը՝ ուղիղ չորս ամիս: Տեղի ունեցան գիտական նստաշրջաններ, հուշ հավաքույթներ, մամուլը ողողվեց Ն. Յա. Մառի կյանքին ու գործին նվիրված հարյուրավոր հոդվածներով: Թբիլիսիի համալսարանը ձեռնամուխ եղավ հրատարակելու Մառի լեզվաբանական երկերը՝ վրացերեն թարգմանությամբ: Գիտական տարբեր հաստատություններում կարդացված ղեկուցումների թիվը անցնում էր հարյուրից:

Մառի աստվածացման այդ տենդոտ օրերին էլ, Հենց Վրաստանում մի քանի առաջավոր լեզվաբանների ջանքերով, որոնց մեջ նկատելի էր Զիկորավայի եռանդը, լուռ սկսվում է ճեղքվածքը: Այդ լեզվաբաններին հաջողվում է միութենական կառավարության ուշադրությունը հրավիրել այն հարցի վրա, թե ինչպես Մառի ուսմունքը կասեցրել, արգելակել է սովետական լեզվաբանության զարգացումը՝ հակագիտական, քարացած օրենքներով, թե ինչպես Վրաստանում ու Հայաստանում հալածվում, պաշտոններից հեռացվում են ականավոր այն

բոլոր գիտնականները, որոնք այս կամ այն չափով դեմ են դուրս գալիս Մաոին: Հարցը հասցվում է մինչև Կենտրոնական Կոմիտե, անձամբ Ստալինին: Նա դբադվում է այդ խնդրով, կարգադրում վերականգնել հեռացված մարդկանց, հականեանվանե հիշատակելով Հ. Աճաոյանի և Գր. Ղափանցյանի անունները:

Աճաոյանը լսում է այս չշուկները. ու մի օր էլ նրան հանձնում են Երևանի պետական համալսարանի ոեկտորի նոր հրամանը ստորագրված 1950 թ. ապրիլի 13-ին: Այնտեղ ասված էր.

«Ի փոփոխումն № 170 պար. 17-31/8 1949 թ. հրամանի Հրաչյա Հակոբի Աճաոյանի իրավունքները վերականգնել ապրիլի 13-ից ս/թ որպես ֆիլոլոգիական ֆակուլտետի արեվեյան լեզուների ու գրականության ամբիոնի վարիչի և դասախոսի»<sup>15</sup>:

Գրված էր նույն կիսագրագետ ոճով, դարձյալ Աճաոյան անվան տառասխալով, նույն ոեկտորի կողմից: Բայց արտաքին այս գավեշտականը չգբաղեցրեց մեծ լեզվարանին, նա ավելի մոայլ ընդունեց նոր հրամանը, քան ընդունել էր հեռացմանը: Ծատ էր ընկճվել: Հասկացավ միայն, որ հաջորդ օրվանից իրավունք ունի նորից մտնելու իր սիրած համալսարանի դռներից ներս:



**Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը (ձախից) և Ակադեմիայի իսկական անդամ Հ. Աճաոյանը սեսիայի նախագահությունում**

Վերականգնվել էր նաև Գր. Ղափանցյանը. ականջից ականջ շարունակվում էին շշուկները, ամրապնդում այն լուրը, թե Ստալինը անձամբ հետաքրքրվել է հեռացվածներով: Բայց դեռ շուտ էր եզրակացություններ անելը. կարծվում էր, թե պարզապես ուղղվում է անարդարացի մի քայլ: Մառականները դեռ շարունակում էին իրենց երկյուղած աղոթքը առ «լեզվի նոր ուսմունքը»: Դեռ մամուլում լույս էին տեսնում հնդեվրոպաբանությունը քննադատող հոդվածներ: Սկսվեցին վիճաբանությունները «Պրավդայի» էջերում:

Եկավ սպասված օրը: «Պրավդան» 1950 թ. հունիսի 20-ի համարում տպագրեց Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմի վերաբերյալ լեզվագիտություն մեջ» աշխատությունը, որը կոչված էր սովետական լեզվաբանությունը դուրս բերելու ճահճացումից և դնելու զարգացման ճիշտ ուղու վրա:

«Առաջնորդը» իրեն հատուկ վճռականությամբ ու կտրուկ ոճով, պատասխանելով այն հարցին, թե «ճիշտ է արդյոք, որ լեզուն վերնաշենք է բաղիսի վրա», ազդարարում էր՝ ո՛չ, ու հիմնավորում համոզիչ փաստարկումներով: Պատասխանելով մյուս հարցին, թե «ճիշտ է արդյոք, որ լեզուն միշտ եղել և մնում է դասակարգային, որ հասարակության համար ընդհանուր ու միասնական, ոչ դասակարգային, համաժողովրդական լեզու գոյություն չունի», գրում էր՝ ո՛չ, ճիշտ չէ: Ու հիմնավորում համոզիչ կերպով, ապացուցելով, որ «Ազգային լեզուն ազգային կուլտուրայի ձևն է, որ ազգային լեզուն կարող է սպասարկել և՛ բուրժուազիային, և՛ սոցիալական կուլտուրային», թե «Ա) Լեզուն որպես հաղորդակցության միջոց միշտ եղել է և մնում է հասարակության համար միասնական և նրա անդամների համար ընդհանուր լեզու: Բ) Բարբառների և ժարգոնների առկայությունը չի ժխտում, այլ հաստատում է համաժողովրդական լեզվի առկայությունը, որի ճյուղավորումներն են հանդիսանում դրանք և որին ենթակա են դրանք. Գ) Լեզվի «դասակարգայնություն» ֆորմուլան սխալ, ոչ մարքսիստական ֆորմուլա է»<sup>16</sup>:

Բայց սրանք հենց այն տեսակետներն էին, որ պաշտպանել էր Աճառյանը երկար տարիներ, և որոնց համար այնքան քրննադատվել էր ու հալածվել:

«Պրավդայի» այն համարը, որ պարունակում էր Ստալինի

այս հոգվածը, Երևանում դեռ չէր ստացվել, որ այն հաղորդվեց ռադիոյով Մոսկվայից և ահա Աճառյանը գերագույն հրձվանքով լսում էր եթերից եկող հետևյալ պատգամը.

«Ն. Յա. Մառը պատմա-համեմատական մեթոդը ճղճղան կերպով նշավակում է որպես «իդեալիստական»։ Այնինչ պետք է ասել, որ պատմա-համեմատական մեթոդը, չնայած նրա լուրջ թերություններին, այնուամենայնիվ ավելի լավ է, քան Ն. Յա. Մառի իրոք իդեալիստական քառատարր անալիզը, որովհետև առաջինը մղում է դեպի աշխատանք, դեպի լեզուների ուսումնասիրություն, իսկ երկրորդը մղում է լոկ այն բանին, որ մեջքի վրա պառկեն և գուշակություններ անեն տխրահույզակ չորս տարրերի շուրջը»<sup>17</sup>։

Ապա նա եզրակացնում է. «Ես կարծում եմ, որ որքան ավելի շուտ ազատագրվի մեր լեզվագիտությունը Ն. Յա. Մառի սխալներից, այնքան ավելի շուտ կարելի է նրան դուրս բերել ճգնաժամից»<sup>18</sup>։

Սովետական Միության մեջ ո՛չ մի լեզվաբան այնքան չէր տառապել Մառի պատճառով, որքան Աճառյանը։ Մորթապաշտ, ամեն քամու առագաստ բաց անող որոշ գիտնականներ, իրենց գիտական խիղճը փակած փողի քսակի մեջ, կամ կապած զբաղեցրած աթոռի ոտքերին, թուժակի նման կրրկնում էին Մառի բանաձևերը, առանց հավատալու, թե զրանով հնարավոր է լուծել լեզվաբանական որևէ խնդիր։ Աճառյանը մինչև վերջը համառել էր ու չէր ընդունել այդ հակագիտական տեսությունը, որքան էլ մարդիկ փորձել էին մարքսիզմի քող գցել նրա վրա։

Ոմանք կարծում էին, թե դա նրա տարօրինակություններից մեկն է. ինչպես որ երկար տարիներ մերժել էր Աբեղյանի ուղղագրությունը, այնպես էլ մերժում էր լեզվի նոր ուսմունքը։

Իհարկե այդպես չէր։ Դա փորձով ստուգված գիտական ճշմարտություններին հավատարիմ մնալու սկզբունքայնությունն էր այնպիսի հավատքով, ինչպիսին անցյալում ունեցել էին Զորդանո Բրունոն, Գալիլեյը։

Ու հիմա միանգամից փոխվել էր ամեն ինչ։ Որքան հեշտությունամբ, պարտադրանքի կարգով բարձրացել էր Մառը, նույնքան հեշտ գահավիժեց, հերքվեց նրա ամենազոր կարծված ուսմունքը։ Հերքվեց ո՛չ միայն լեզվաբան Մառը, այլև բանա-



սեր, պատմաբան, հնագետ Մառը, առհասարակ Մառը: Այժմ ո՞վ կարող էր խոսել նրա որևէ դրական գործի մասին: Այս բանի համար էլ ամենից շատ ցավեց Աճառյանը:

Ուրախալին այն էր, որ այժմ մարդիկ չէին կարող իրեն թշնամի համարել միայն այն բանի համար, որ հետևել էր հնդ-եվրոպական ուղղության:

Մառի ուսմունքի ջախջախումից հետո տհաճ վիճակի մեջ ընկան Հայաստանի գրեթե բոլոր լեզվաբանները, այնպիսի մի ժամանակ, երբ դեռ չէր ավարտվել պարտադրված հորեյանական հավատամքի արարողությունը, դեռ չէր չորացել աստվածացման ծառայեցվող թանաքը, ամենուր զգացվում էր խընկարկման բուրմունքը:

Հիմա ի՞նչ անել: Սկսվեց ինքնախարազանման յուրահատուկ մի շրջան, շատ նման միջնադարյան մոլեռանդ ճգնավորների մարմնական խարազանման: Եթե ճգնավորները ճիպոտահարում, տանջում էին իրենց հոգեկան կարծեցյալ մեղանշումների համար, ապա նոր ճիպոտահարները ձաղկում էին իրենց գաղափարական աններելի սայթաքումների համար, ավելի անողոք կերպով ոչնչացնելով իրենց մարդկային արժանապատվություն, գիտական հավատամքի ողջ կառուցվածքը: Բայց կատարվում էր այս բոլորը շատ սովորական ձևով:

Ընդամենը մի շաբաթ առաջ Մառին երկինք մղող, նրա չորս տարրերի տեսությունը գիտություն վերջին խոսքը համարող մարդիկ «պատմական» ճառից մի ժամ հետո հրաչքով կերպարանափոխվեցին, նոր տեսության «լույսի տակ» սկսեցին ապացուցել հակառակը, կուրծք ծեծել, թե ինչու չեն հասկացել ճշմարտությունը մինչև այդ օրը:

Ու նորից ճառեր, գիտական ժողովներ, նիստեր, այս անգամ էլ Մառին զգզող անթիվ-անհամար ելույթներ, հողվածներ: Մառականության խնկարկմամբ մինչև ակադեմիկոսություն հասած մի լեզվաբան, որի համար Մառի ոչ միայն խոսքը, այլև տառը սրբություն էր, այժմ խղճի կատարյալ հանդարտությամբ «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը» հողվածում հայտարարում էր, թե Ի. Վ. Ստալինը «Նորտակիչ հարված հասցրեց Մառի այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքին», թե «Սովետական լեզվաբանությունը դուրս բերվեց փակուղուց և դրվեց զարգացման լայն ուղու վրա», թե «ստալին-

յան հանճարով մերկացվեց Ն. Մառի այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքը» ... որի գրույթները արմատապես սխալ են և ոչ գիտական», թե հայերենի բարբառները պետք է ուսումնասիրել «գիտելով բարբառները իբրև համաժողովրդական լեզվի ճյուղավորումներ»<sup>19</sup>:

Ահա և ինքնախարազանումը.

«Մառի այս սխալ ֆորմուլան մեզ մոտ, հատկապես իմ կողմից, ըմբռնվել էր այնպես, իբր երբեմնի անկախ տոհմական լեզուները աստիճանաբար խաչավորվելով՝ վերածվել էին իրար նման խոսվածքների, բարբառների, իբրև թե ցեղական անկախ լեզուների յուրաքանչյուր խմբի ներսում բոլորի մեջ ընդհանրանում էին յուրաքանչյուր լեզվի բառերի և քերականական ձևերի առանձին մասերը... Հետևաբար սխալ կերպով կարծվում էր, թե բարբառների մեջ եղած նմանությունները խաչավորման, սինթետիզացիայի հետևանք են, իսկ բարբառների մեջ եղած տարբերությունները նախկին անկախ լեզուների առանձին ձևերի վերապրուկներ են... ստացվում էր այն սխալ գրույթը, որ ժողովուրդը իր լեզվի կերտողը չէ, որ ամեն մի լեզու իսկական կարկատան է («մոզայիկա»), զանազան լեզուների զանազան տարրերից», մինչդեռ, զարմանքով նկատում է այդ լեզվաբանը, թե Ստալինը գրել է. «Ուսչավորումը ոչ թե տալիս է ինչ որ մի նոր, երրորդ լեզու, այլ պահպանում է լեզուներից մեկը. պահպանում է նրա քերականական կառուցվածքն ու բառային ֆոնդը ու նրան հնարավորություն է տալիս զարգանալու իր ներքին օրենքներով»<sup>20</sup>:

Իհարկե ճիշտ էր այդ: Բայց չէ՛ որ Աճառյանի բարբառագիտության հիմքում ընկած սկզբունքը նույնն էր, նա այդ մասին գրել էր դեռևս իր առաջին աշխատություններում, սկզբունք դարձրել «Համակարգություն հայ բարբառագիտության» գրքում:

Որքա՞ն հեշտ էին մարդիկ դավանափոխ դառնում, առանց զգալու, որ Ստալինի աշխատությունը ջախջախելով Մառի ուսմունքը, — որի մասին այնքան հաճույքով գրում էին այժմ, — ըստ էության ջնջում էր նաև իրենց անունը լեզվաբանություն պատմությունից, քանի որ մասնավորապես վերոհիշյալ լեզվաբանը բարձրացել էր իր բարբառագիտական աշխատություններով, հայ բարբառների առաջացման մասին կառուցել մի

ամբողջ տեսություն, որն այժմ քանդում էր հիմքից հենց ինքը, որպեսզի կառուցի նորը, կառուցի ըստ Հր. Աճառյանի ելակետի և դասակարգման:

Մեր ակնարկած լեզվաբանը եթե լիներ այնքան բարեխիղճ, որ խոստովաներ թե հայ իրականությունում այդ ճիշտ ուղղությունը հետևողներ եղել են, բայց հալածվել են իր նմանների կողմից, մենք այսքան խիստ չէինք գրի:

Կանգ առանք միայն մեկի վրա. մեղայական այսպիսի հոգվածներով հանդես եկան շատերը, բայց չկարողացան ճշմարտության աչքին նայել համարձակ, գնահատման նվազագույն խոսք ասել իրենց պատկառելի ուսուցչի հասցեին: Այսպես, մի այլ լեզվաբան, որը հնդեվրոպաբանությունյան դեմ հայհոյելով, ժխտելով բարձրացել էր մինչև դոկտորի աստիճանի, իր «Հայոց լեզվի բառային կազմը և քերականության կառուցվածքը» հոգվածում, խոսելով հանդերձ Մառի «սխալ, ոչ մարքսիստական» եզրակացությունների մասին, այնուամենայնիվ Աճառյանի անունը չէր ուզում տալ, կարծեք այդ մարդը հայոց լեզվի բառային կազմով չէր էլ զբաղվել:

Աճառյանի աշակերտներից մեկը միայն համարձակվեց առաջինը մամուլում խոսել հնդեվրոպական լեզվաբանության նվաճումների մասին, Ակադեմիայի «Տեղեկագրում» տպագրած «Պատմա-համեմատական մեթոդը և նրա դերը լեզվաբանության մեջ» հոգվածով, սակայն այստեղ էլ դեռ հեղինակը զգուշանում էր Աճառյանին յականե-անվանե գնահատելուց»<sup>21</sup>:

Ու այսպես, բոլորը հարձակվում էին Մառի վրա ու քննադատում, ոմանք անկեղծորեն, ուրախ, որ վերջապես լեզվի զարգացման հարցերի ուսումնասիրությունը դուրս եկավ փակուղուց, ոմանք՝ սրտի մղկտոցով, թե ինչո՞ւ, ինչո՞ւ այդպես պիտի լիներ և իրենց գահավեժ անկումը ցուցադրվեր այնքան հրապարակայնորեն և հզոր մի լույսի տակ երևար իրենց մտավոր ամոթալի մերկությունը:

Միայն մի մարդ չքննադատեց Մառին, այն գիտնականը, որն ամենից շատ տուժել էր Մառի պատճառով և երբեք տուրք չէր տվել նրա լեզվաբանական հակադիտական տեսակետներին: Դա Աճառյանն էր, բարի, անհիշաչար, ազնիվ նկարագրի տեր մի մարդ, որն իր պաշտոնակիցների բարոյական անկումից ամենևին չէր ուրախանում, ընդհակառակը, ափսոսում էր թե

ինչու էր եղել այնպես, ինչու էր այժմ լինում այսպես:

Թվում էր, թե այժմ հնարավորություններ էին ստեղծվելու Աճառյանի գրքերի անարգել տպագրություն. առաջնորդն էր խոսել հնդեվրոպաբանությունյան առավելությունների մասին, ո՞վ կհամարձակվեր շարունակել դիմադրել:

Բայց այդպես չեղավ. շարունակվեց հալածանքը նրա դեմ հին փաստարկումների նոր դրսևորումներով:

«Առաջնորդը» պատմահամեմատական մեթոդը գերադասելի էր համարել Մառի «քառատրոփ անալիզից», բայց թողել էր մի դուռ, գնահատել էր հնդեվրոպաբանությունը «չնայած նրա լուրջ թերություններին» և այդ թերություններից էր համարել «նախալեզվի» տեսությունը:

Բոլորը գիտեին, որ «նախալեզվի» տեսությունը այն ստեղծողների համար էլ պայմանական հասկացողություն էր, օժանդակ միջոց՝ լեզուների ցեղակցություն աստիճանը որոշելու համար, սակայն շարունակվեց Աճառյանի քննադատությունը: Նորանոր դժվարություններ էին հարուցվում նրա գրքերի տպագրության համար:

Այդ բանն իր ցայտուն արտահայտությունը գտավ նրա «Հայոց լեզվի պատմություն» Բ. հատորի և «Լիակատար քերականություն» Ներածություն տպագրության գործում:

Ինչպես ասել ենք «Հայոց լեզվի պատմություն» Բ. հատորը տպագրության էր հանձնվել պատերազմի տարիներին, սակայն նրա շուրջ ստեղծված աղմուկի հետևանքով արգելվել էր ու այրվել:

Այժմ, Մառի ուսմունքի անփառունակ վախճանից հետո մեղադրանքի հիմնական մասը՝ թե գրված է պատմահամեմատական մեթոդով, կորցրել էր ուժը, բայց հեղինակին առաջարկվեց վերանայել աշխատությունը, հրաժարվել «ոսկեդարյան» արտահայտությունից և վերակառուցել ըստ առաջնորդի ցուցումների:

Առաջին պահանջը դժվար չէր կատարել. Աճառյանը ամենուր «ոսկեդարյան» բառը փոխարինեց «մեսրոպյան»-ով և ամեն ինչ վերջացավ. բացի այդ էլ գրքի վերջում գետեղեցյուրահատուկ մի վերջաբան, որտեղ բացատրում էր «ոսկեդարյան» արտահայտության պայմանականությունը և գտնում, որ հայ ժողովրդի քաղաքական կյանքի համար 5-րդ դարը ո՛չ թե

ոսկյա, այլ փայտյա էլ դժվար է կոչել, մշակութային կյանքն էլ առանձնապես շատ փայլուն չէ, ուրեմն այդպես է կոչվել պարզապես գրաբար լեզվի գեղեցկության համար, հետևաբար հեշտությամբ պետք է կոչել առաջին անգամ այն գրի առնողի Մեսրոպի անունով<sup>22</sup>:

Աճառյանի հակառակորդների երկրորդ պահանջի կենսագործումը անհնար էր. պահանջվում էր ամբողջ աշխատությունը վերանայել Ստալինի գնահատումների լույսի տակ: Այստեղ է, որ նորից համառեց նա և ի վերջո որոշվեց յուրովի մի բացատրություն էլ տալ այդ մասին և գիրքը լույս աշխարհ բերել:

Աճառյանը համաձայնվեց, որ գրքի սկզբում դրվի մի բացատրագիր, որտեղ ասված էր. «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորը ավարտված և պատրաստ էր հրատարակության 1939 թվին, այսինքն այն ժամանակ, երբ տպագրության հանձնվեց առաջին հատորը: Չնայած անցած տասնամյա ժամանակաշրջանին, հեղինակը աշխատելով այլ գործերի վրա, այլևս չի անդրադարձել այս հատորին և անփոփոխ կերպով հրատարակության է հանձնել 1949 թվին: Սակայն հենց տպագրության միջոցին սովետական լեզվաբանության մեջ տեղի ունեցան մեծամեծ իրադարձություններ: 1950 թ. լեզվաբանական դիսկուսիայի ժամանակ և նրանից հետո լույս տեսան ընկեր Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունները, որոնք և արմատական հեղաշրջում առաջացրին լեզվաբանության մեջ: ... Բնական է, որ սույն հատորը կարիք ուներ վերանայման ընկեր Ստալինի հանճարեղ դրույթների համաձայն: Հեղինակը խորապես գիտակցում է այդ, սակայն զառամյալ հասակը, մշտական հիվանդագին վիճակը և, մանավանդ, տեսողության գրեթե կատարյալ կորուստը զրկել են հեղինակին այդ բանը կատարելու հնարավորությունից: ... Հեղինակը համոզված է, որ ստալինյան լեզվաբանական ուսմունքը յուրացրած երիտասարդ սերունդը կարող է օգտագործել սույն գրքում ամփոփված նյութը քննադատական մոտեցմամբ»<sup>23</sup>:

Իհարկե, այսքանով չապահովագրվեց գիրքը. անհրաժեշտ դարձավ, որ նրան կցվի ընդարձակ մի առաջաբան, որտեղ մեկ առ մեկ նշվում էին այն կետերը, որոնք պիտի հաշվի առնվեին գիրքը օգտագործողների կողմից:

Գրանցից առաջինը չարաբաստիկ «նախալեզվի» հարցն էր, որի հետ կապվում էր ժողովուրդների պատմությունը գաղթների ու տեղափոխություններով բացատրելը, ժողովուրդների կազմավորման ներքին պրոցեսի օրինաչափությունների անտեսումը, թե ցեղակից լեզուները ինչ որ նախալեզվի պարզ շարունակությունը չեն, այլ պատմական ընդհանրությունների հիմքի վրա զարգացած ուրույն որակներ և այլն:

Եվ այսպես, տասնամյա ընդմիջումից հետո լույս տեսավ «Հայոց լեզվի պատմության» Բ. հատորը պրոֆ. է. Աղայանի վերև հիշված առաջաբանով, այն ժրաջան գիտնականի, որին շատ բան ենք պարտական Աճառյանի թողած վիթխարի ժառանգության հրատարակության համար:

Ավարտված էին «Արմատական բառարանը», «Հայոց լեզվի պատմությունը», «Անձնանունների բառարանը», մնում էր ավարտին հասցնել «Հայոց լեզվի լիակատար քերականությունը», որը վերջին տասնամյակում ամենից շատ էր զբաղեցրել նրա միտքը և կոչված էր հայ լեզվաբանության անկյունաքարերից մեկը լինելու: Նա շարունակ խոսում էր այդ գրքի մասին, գրեթե կուրացած վիճակում գնում էր տարբեր քաղաքներ՝ գրադարաններում գրքեր նայելու, հին ու նոր, կենդանի կամ կորած լեզուների քերականություններն ուսումնասիրելու:

Գրեթե ավարտել էր 10 ստվար հատորներից բաղկացած այդ «արտակարգ» քերականությունը, մնում էին որոշ նյութերի տեղադրումներ, լրացումներ: Հույս չունեք, որ կտեսնի վերջին հատորի տպագրությունը, բայց ուզում էր տեսնել գեթ մեկ-երկու հատորները: Առաջինը կոչել էր «Ներածություն», ստվարածավալ մի հատոր, որին անդրադառնալու ենք հետագա էջերում: Չտեսավ այս հատորը տպագրված: Աճառյանի հակառակորդները, որոնք ջղաձգական վիճակ էին ապրում իրենց բարոյական տապալումից, գիտական սնանկությունից հետո, չհամարձակվելով հնդեվրոպաբանությունը դարձնել վահան ու կովել, այս անգամ էլ հրապարակ նետեցին այն զրպարտանքը, թե ընդհանուր լեզվաբանության նվիրված այդ հատորը պարունակում է հակամատերիալիստական տեսակետներ, քանի որ այնտեղ խոսվում է կենդանիների լեզվի մասին, մինչդեռ կենդանիները մտածողություն չունեն, թե Աճառյանը անքննադատ մեջ է բերել լեզվի առաջացման իդեալիս-

տական տեսակետներ և այլն: Իրականում այս դիտողություններից և ոչ մեկը հիմք չունեն: Երբեք էլ Աճառյանը չէր ասում, թե կապիկները մարդկանց նման են մտածում, խոսում: Կենդանիների «լեզվի» մասին խոսվում էր պարզապես որպես հնչյունային միավորների, որոնցով բնագրով միմյանց հասկանում էին նրանք, իսկ լեզուների առաջացման աստվածաչնչային առասպելը Աճառյանը մերժել էր դրանից հիսուն տարի առաջ և չէր կարող այժմ նման ցնդաբանություն ընդունել:

Այսպես էր, բայց հաղթեցին հակառակորդները, մերժվեց լեզվի «Ներածություն» հատորի տպագրությունը մի քանի ամսվա հոգեմաշ պայքարից հետո: Զգձգվեց նաև 2-րդ և 3-րդ հատորների տպագրությունը: 1952 թվականին, վերջապես, լույս տեսավ 4-րդ հատորը՝ որպես առաջին հատոր. Ակադեմիայի լեզվի ինստիտուտը, գրքին կցած առաջաբանում ասում էր. «Սույն գիրքը, որ կազմում է մեծավաստակ հայագետ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հրաչյա Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատության առաջին հատորը, մի փորձ է բազմաթիվ լեզուների փաստական նյութի ուսումնասիրության... Սույն գիրքը ըստ նախնական դասավորության կազմում էր «Լիակատար քերականության» 4-րդ հատորը, սակայն նախորդ հատորները հրատարակության պատրաստելու հետ կապված որոշ դժվարություններ նկատի ունենալով, ինչպես և աշխատության տպագրությունը արագացնելու համար՝ նպատակահարմար համարվեց այս գիրքը տպագրել որպես առաջին հատոր»<sup>24</sup>:

Դժվար չէ նշմարել, որ Լեզվի ինստիտուտի ղեկավարությունը ինքնաապահովման նպատակով դարձյալ առաջ է քաշել մինչև այդ շարունակ ծամծամված այն տեսակետը, թե Աճառյանի գիրքը «փորձ է բազմաթիվ լեզուների փաստական նյութի ուսումնասիրության», մինչդեռ հայոց լեզվի մասին գրված ոչ մի աշխատություն չի շոշափում այնքան շատ ու բազմապիսի տեսական հարցեր, չի հանում ուշագրավ եզրակացություններ, որքան «Լիակատար քերականությունը», ինչպես պիտի տեսնենք ստորև:

Այս բոլորով հանդերձ՝ մեծ հաջողություն էր գեթ նման վերապահություններով, նյութի տեղաբաշխման խախտումներով

Ա հատորի հրապարակ գալը:

Ես ներկա եմ եղել գերերջանիկ այն պահին, երբ Աճառյանը հոգեկան մեծագույն հրճվանքով շոշափում էր տպարանից նոր ստացված օրինակը, շոշափում կազմը, ծավալը, թղթի որակը: Նրա աչքերը այդ ժամանակ չէին տեսնում:

Աճառյանի կյանքի վերջին տարիների տհաճ իրադարձություններից մեկն էլ նրա անվան օգտագործումն էր այն իսկապես հակագիտական պայքարի համար, որ որոշ մարդիկ հրահրեցին արևմտահայերենի դեմ: Բարեբախտաբար վերջինը եղավ այս մեկը, բայց նվազ հուզող չեղավ այն մարդկանց համար, որոնք առնչվում էին արևմտահայ մշակույթի ուսումնասիրման հետ:

Արևմուտքի նկատմամբ ստորաքարշուխան քննադատության բարձրից եկած հրահանգը իր ուրույն արտահայտությունը գտավ Հայաստանում և զարմանալիորեն պայքարի թիրախ դարձրեց հայ ժողովրդի տառապած, աշխարհով մեկ ցրված հատվածի գրական լեզուն:

Արևմտահայ գրականությունից ոչ մի էջ չկարդացած, լեզվաբանական հարցերի մասին գաղափար չունեցող որոշ մարդիկ, օգտագործելով իրենց պաշտոնն ու դիրքը, մինչև կուսակցություն համագումարի ամբիոնը բարձրացրին այն ծիծաղելի տեսակետը, թե արևելահայերենը գրական է, արևմտահայերենը՝ բարբառ, այն էլ իբր թե թուրքերեն, հունարեն բառերով կեղտոտված բարբառ:

Ասում են մի խենթ քարը ջրհորն է գցել, 40 խելոք չեն կարողացել հանել: Հրապարակ էր նետվել այս տգիտությունը, մնում էր «հիմնավորել», բայց հեշտ էր Վարուժանի, Զոհրապի ընտիր լեզուն համարել կեղտոտ բարբառ, իսկ Պոռչյանինը՝ մաքուր: Չէ՞ որ մինչև անգամ Հովհաննես Թումանյանի նման մտքի հսկայի մոտ որքան ասեք կարող եք գտնել բարբառային արտահայտություններ, օտար բառեր, սկսած վրացերեն ճոնդերձակ բառից, վերջացրած հլա, միթոմ և այլն, բայց ո՞ւմ մտքով կանցնի Թումանյանի՝ աղբյուրի նման գուլալ լեզուն համարել կեղտոտ:

Եվ սկսվեց այդ արտառոց տեսակետի «հիմնավորումը» մեր լեզվաբանների կողմից: Դարձյալ նստաչրջաններ, ճառեր, հոդվածներ, ապացուցելու համար, թե արևմտահայ գրական լեզու



գոյություն չունի, դա բարբառ է: Այս բոլորի մեջ ամենից ամոթալին ու տգեղը այն էր, որ մարդիկ սկսեցին վերոհիշյալ տեսակետը «հիմնավորել» Աճառյանին վկայակոչելով, քանի որ նա գրել էր, թե արևմտահայ գրական լեզուն զարգացել է Պոլսի բարբառի հիման վրա, իսկ Պոլսի բարբառը նկատելի չափով ազդվել է թուրքերենից: Բայց չէ՞ որ արևելահայերենն էլ զարգացել է Երևանի բարբառի վրա, որի մեջ պակաս թիվ չեն կազմել աղբյուրներն բառերը<sup>25</sup>: Այլ բան է գրական լեզվին հիմք դարձած որևէ բարբառը, այլ բան է նրա հիման վրա ստեղծված գրականը: Տրամաբանությունը, սակայն, չէր կարող մրցել հրահանգների հետ, որոնց տրվում էր քաղաքական երանգ, որպեսզի բանականությունը զինաթափ լինի:

Իհարկե, այս փոթորիկն էլ անցավ, բայց ավելի ու ավելի խարխլեց մեծ լեզվաբանի առանց այն էլ օրեցօր վատացող առողջությունը: Այժմ նրա սիրտը լավ չէր աշխատում, մի քանի անգամ փոքր նոպաներով տվել էր վտանգի ազդանշաններ, արդեն տառապում էր անքնություն, մղձավանջային երազներով: 1952 թ. վերջերին գրած կիսապաշտոնական մի գրություն մեջ նա ասում է. «Գիշերը հիվանդացա. արյան ճնշման բարձրացում, գլխի պտույտ, խառնիխուռն երազներ և անքնություն: Անհրաժեշտ է կատարյալ հանգիստ»<sup>26</sup>:

Այնուամենայնիվ աշխատում էր, շարունակում դասախոսությունները, «Լիակատար քերականություն» մշակումը:

Չնայած Աճառյանի շուրջ ստեղծված աննպաստ մթնոլորտը տևել էր ավելի քան 10 տարի, նրա կյանքի այդ վերջին տասնամյակը եղավ ստեղծագործական ամենաբեղմնավոր շրջանը: Այդ ժամանակամիջոցում ավարտեց բազմաթիվ գործեր: Նոր աշխատությունների չանցավ և իմաստ էլ չուներ: Նրա աշխատելու մեթոդներից մեկն էլ, ինչպես ասել ենք, այն էր, որ տպագիր և ձեռագիր աղբյուրների դիմելիս նյութեր էր քաղում իր ձեռնարկած բոլոր աշխատությունների համար և հիմնականում որևէ գրքի վրա աշխատելիս էլ զուգահեռ անդրադառնում էր մյուսներին, տեղադրում նյութեր, մշակում, կատարում լրացումներ: Դրանով պետք է բացատրել, որ այս տասնամյակում միմյանց հետևից լույս տեսան «Հայոց լեզվի պատմության» երկու հատորները: «Հայոց անձնանունների բառարանի» չորս հատորները, հիմնականում ավարտվեց «Հայոց լեզվի լիակա-

տար քերականությունը», որի մեկ հատորն էլ լույս տեսավ հեղինակի կենդանության օրերին: Վերջապես այդ տարիներին հրապարակ եկան բարբառագիտական մի քանի գրքեր, օտար աղբյուրներից նրա կատարած թարգմանությունները, գիտական բազմաթիվ հոդվածներ և այլն:

## Գլուխ տասներկուերորդ

### ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

#### 1. «ՀԱՅԿԱԿԱՆՔ» ՇԱՐՔԸ

Նախքան ծավալուն հետազոտություններին անցնելը՝ հպանցիկ մի ակնարկ գցենք գիտական հոդվածների վրա:

Այլուր ասել ենք, որ 1928-ից մինչև 1930-ական թվականների վերջերը Աճառյանը գիտական հանդեսներում գրեթե չէր տպագրել որևէ հոդված, չընդունելով նոր ուղղագրությունը:

1940 թվականից գիջեց: Պատերազմի տարիներին «Սովետական Հայաստան» և այլ թերթերում տպագրեց Հայրենասիրական հոդվածներ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հիմնադրումից հետո սկսեց աշխատակցել Հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագրին», օգտագործելով տասնամյակներ առաջ ընդհատած «Հայկականք» ընդհանուր խորագիրը:

«Հայկականքի» Ա. չարքը լույս տեսավ «Տեղեկագրի» 1944 թվի 5-րդ համարում, Բ. չարքը՝ հաջորդ տարվա 1-2 միացյալ համարում: Այդ երկու հոդվածները պարունակում են 13 ստուգաբանություն, որոնցից ուշագրավ է հատկապես թուղթ բառի ծագման բացատրությունը:

1945 թ. «Տեղեկագրի» 3-4 միացյալ համարում նա տվեց 7 նոր բառերի ստուգաբանությունը և «Մեր առաջին պատմագրերի թվականը» բանասիրական տեսությունը, որը մտքերի աշխույժ փոխանակություն առաջացրեց հայագետների շրջանում: Պատասխանով հանդես եկավ Ստեփան Մալխասյանը:

«Հայկականք» չարքի Դ և Ե մասերը դարձյալ նվիրված էին բառերի ստուգաբանությունների ու բանասիրական դիտողությունների, որոնցից ուշագրություն արժանի են «Սարը յարի հայերը» և «Գաղտնիք կանանցը»:

«Տեղեկագրի» 1948 թ. 5-րդ համարում նա տպագրեց «Երբ

լ դարձավ ղ հողվածը որպես «Հայկականքի» Զ շարք. դա այն գեկուցումն էր, որ նա կարդացել էր Թբիլիսիում Հայաստանի և Վրաստանի Գիտությունների ակադեմիաների Հասարակական բաժանմունքների միացյալ նստաշրջանում:

Դրանից հետո ավելի քան երկու տարի ընդհատում է «Հայկականքների» տպագրումը: Այդ այն շրջանն է, երբ նա գտնվում էր տեական քննադատություն տակ: 1950 թ. հունիսից, այսինքն Մառի ուսմունքի հրապարակային դատապարտումից հետո նորից սկսեց գիտական հողվածներ տպագրել: «Տեղեկագրի» նույն տարվա 12-րդ համարում լույս տեսավ «Հայկականքի» է շարքը, դարձյալ մի շարք բառերի ու հատուկ անունների ստուգաբանությունը, այդ թվում հեղինակին այնքան շատ ոգևորած Սեղա անվան:

Հաջորդ տարվա հունվար ամսին տպագրեց «Հայկականքի» Ը շարքը, իսկ նոյեմբեր ամսին՝ Թ շարքը, որը եղավ վերջինը: Պարունակում էր բանասիրական ուշագրավ դիտողություններ («Հայ թվագրություն մի սխալ ձև», «Հայերենի մատուցած նպաստը պարսկերենին», «Մի նոր ծածկագիր 1339 թվից», «Ե դարից հայերեն ձեռագիր» և այլն):

Աճառյանի «Հայկականքների» նշված շարքը կարևոր է մի քանի տեսակետից: Նախ, ինչպես նշեցինք, այնտեղ միայն բառային ստուգաբանություններ չեն, որ տեղ են գտել, այլ պատմա-բանասիրական սրամիտ նշմարներ, որոնք կարող են հետաքրքրել Հայ մշակույթի տարբեր բնագավառներն ուսումնասիրողներին: Երկրորդ՝ ստուգաբանությունները մեծ արժեք են ստանում այն պատճառով, որ գրված լինելով «Արմատական բառարանի» հավելվածային հատորի տպագրումից շատ տարիներ անց, չեն օգտագործվել այնտեղ: Ուստի այդ 74 ստուգաբանությունների ու բանասիրական դիտողությունների ի մի հավաքումն ու առանձին գրքով հրատարակելը նույնքան օգտակար է, որքան հեղինակի ձեռագիր աշխատություններից մեկն ու մեկի տպագրությունը:

Անշուշտ անհրաժեշտ է վերոհիշյալ «Հայկականքներին» միացնել նախասովետական տարիներին նույն վերնագրով լույս տեսած հողվածները, որոնք ստուգաբանական բնույթ չեն կրում և չեն օգտագործված «Արմատական բառարանի» մեջ, այլ խոսքով ունեն բանասիրական բնույթ:

## 2. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

1945 թ. մի հարցազրույցի ընթացքում Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմություն» մասին ասել է. «Իմ գործերի պսակն է, եզրակացությունը, վերջ ի վերջո նրա մասն է կազմում նաև «Արմատական բառարանը»<sup>1</sup>:

Աշխարհում քիչ լեզուներ կան, նույնիսկ զարգացած ժողովուրդների լեզուներ, որ այնքան բազմակողմանիորեն հետազոտված լինեն, որքան հետազոտել է Աճառյանը հայոց լեզուն՝ տալով նրա կազմավորման ու զարգացման ամենամանրակրկիտ պատմությունը, բառակազմի ու քերականության կրած փոփոխությունները դարերի ընթացքում:

Այո, որոշ իմաստով այս աշխատությունը եզրակացությունն է այն ամենի, որ նա արել էր մինչ այդ հրատարակած կամ տպագրության պատրաստած տասնյակ աշխատություններով: Այնտեղ գտնում ենք «Արմատական բառարանի», «Համակարգություն բարբառագիտության» գրքի պարունակած նյութի ամփոփումն ու եզրակացությունները, «Հայոց գրերը» աշխատության այն հատվածները, որոնք վերաբերում են նախահայկական գրերի շրջանին և այլն:

Հեղինակը պատմահամեմատական մեթոդով ներկայացնում է մեր լեզվի ողջ պատմությունը սկսած հնագույն ժամանակներից, երբ խարխափումներով միայն հնարավոր է որսալ փաստեր, — մինչև գիր ու գրականության բարձրանալուց հետո ապրած առավել վավերական շրջանը:

«Հայոց լեզվի պատմություն» այն գլուխները, որոնք վերաբերում են նախագիր շրջանին, ընդգրկում են վաղ ժամանակներից մինչև մեր թվականության 5-րդ դարը, մյուս գլուխները գրերի գյուտից մինչև մեր օրերը: Գրքի առաջին հատորն ամբողջովին և երկրորդ հատորից երկու գլուխ հատկացված է նախագիր շրջանին, որտեղ հիմնականում խոսվում է հնդեվրոպական նախաշրջանի, հնդեվրոպական բարբառների՝ հաթերենի, թրակերենի, փրյուգերենի ու փոքրասիական այլ լեզուների, վերջապես խալդերենի, միտաներենի, ասուրերենի, հունարենի, երբայցերենի մեր լեզվի վրա ունեցած ազդեցությունը մասին:

Այս ամբողջ շրջանի մասին հեղինակը խոսում է՝ օգտագոր-

ծելով փաստական այն ամբողջ նյութը, որ մշակվել էր անցած հարյուրամյակի ընթացքում՝ օտար և հայ լեզվաբանների կողմից, որոնց շարքում խոշոր դերը պատկանում է իրեն: Ինչ խոսք՝ հարցը որքան հին շրջանին է վերաբերում, այնքան ավելի իշխող է դառնում ենթադրությունը, իսկ որքան մոտենում ենք վավերական պատմաչրջանին, փաստարկումներն այնքան անառարկելի են դառնում, ճշգրտվում են հարակից վկայություններով: Նախապատմական շրջանին վերաբերող որոշ ստուգաբանություններ հնարավոր է, որ հերքվեն, բայց հայերենի նախնական վիճակին վերաբերող փաստերը շատ կողմերով են օգտակար:

Աճառյանը լեզվական ատաղձի քննարկմամբ ներկայացնում է ոչ միայն մեր լեզվի կազմավորման ընթացքը, այլև ուրվագծում է հին Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքը այնպիսի մանրամասնություններով, որոնց չենք հանդիպում պատմագրական որևէ աշխատությունում:

Լեզվաբանին քննադատողների փաստարկումներից մեկն էլ այն է, թե նա գերազանցապես խոսում է ազդեցությունների մասին, անտեսելով լեզվի ներքին զարգացումը:

Սխալ է այս կարծիքը: Նա ազդեցությունների մասին խոսում է առավելապես մեր լեզվի կազմավորման, այսինքն հնագույն դարերի պատկերը ուրվագծելիս: Նրա հետազոտական մեթոդը համառորեն մերժող պրոֆ. Գր. Ղափանցյանն էլ, երբ կյանքի վերջին տարիներին գրեց հայոց լեզվի հնագույն շրջանի պատմությունը, նույն ձևով վարվեց և իր գրքի «Ներածություն» գլուխը սկսեց հետևյալ տողերով.

«Որևէ կոնկրետ լեզվի կազմավորման և զարգացման հին փուլերի ուսումնասիրության համար, երբ մանավանդ բացակայում են նրա գրավոր վկայությունները, միակ հնարավոր այդպիսի ուսումնասիրության աղբյուրներ, թեպետև սահմանափակ, կարող են հանդիսանալ այդ լեզվի հին հարևան և ազգակից լեզուները, որոնք գրավոր հիշատակարաններ ունենան: Այս հանգամանքը ամենանպաստավորն է»<sup>2</sup>:

Այդպես էլ վարվել է Գր. Ղափանցյանը: Եթե Աճառյանն իր աշխատության համապատասխան գլուխները վերնագրել է «Ռալդերենի ազդեցությունը հայերենի վրա», «Միտանենների ազդեցությունը հայերենի վրա» և այլն, ապա Գր. Ղափանց-

յանը նույն հարցերին անդրադառնում է «Հայերենի աղբսը խուռի և ուրարտական լեզուների հետ» և այլ նման արտահայտություններով:

Պայմանական են ազդեցություն և աղբս բառերը: Ի վերջո՝ երկու հայագետներն էլ խոսում են այդ լեզուների ընդհանրությունների մասին:

Իսկ ինչ վերաբերում է հնդեվրոպական նախալեզվի ընդունմանը Աճառյանի կողմից, որն այնքան սուր քննադատության է ենթարկվել մառականների կողմից, — նույնպես գիտական մեղանշում չէ: Արհեստական, երևակայական այդ նախալեզուն ստեղծող գիտնականներն իրենք առաջինը վերապահություն են արել և գրել, որ դա պայմանական մի վերականգնում է, բայց կարևոր\*:

Հնդեվրոպական նախալեզուն ստեղծվել է որպես գիտական միջոց՝ տարբեր լեզուների, առաջին հերթին ցեղակից լեզուների ուսումնասիրման գործը հեշտացնելու համար և չէր կարող անտեսել այն Հր. Աճառյանը ու չդիմել դրան՝ ճշգրտելու համար իր ստուգաբանությունները:

Այս ընդհանուր դիտողություններից հետո տեսնենք, թե ինչ ընդգրկում ունի իր շուրջն այնքան աղմուկ հարուցած «Հայոց լեզվի պատմությունը», որոնք են այդ գրքում բարձրացված հիմնական հարցերը և վերջապես ի՞նչն է դնում Աճառյանը Հայոց լեզվի պատմության հետազոտման հիմքում:

Վերջին հարցի մասին նա ունի շատ հստակ ձևակերպում.

«Պատմել մի որևէ լեզվի պատմությունը՝ նշանակում է նկարագրել այն բոլոր ձևափոխությունները, որոնց ենթարկվել է այդ լեզուն իր գոյության ընթացքում, սկսած իր նախնական շրջանից մինչև տվյալ րոպես: Այդ ձևափոխությունաց ամենամեծ մասը առաջացած է լինում ներքին, այսինքն բնական ճանապարհով՝ իբրև արդյունք բարեշրջության (էվոլուցիայի) և բնական զարգացման. մի ուրիշ ստվար մաս առաջացած է լինում արտաքին ճանապարհով, այսինքն փոխառությամբ, իբրև

---

\* Հետագայում ևս հնդեվրոպական նախալեզվի մասին գրքեր են գրվել: Տե՛ս, օրինակ, **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. 1, г. Тбилиси, 1984 (ծան. լամբ.):

արդյունք օտար ազդեցությունաց և վերջապես երրորդ՝ ավելի փոքր մասը առաջացած է լինում անհատական ճանապարհով, այսինքն գրական նորամուծություններով: Այսպիսով, ամեն մի ձևափոխություն ունի իր բուն պատճառը, ներքին, արտաքին կամ անհատական, որոնց միջոցով էլ լեզվի պատմությունը կապվում է նույն ազգի քաղաքակրթություն պատմության, քաղաքական պատմության և գրականության պատմության հետ»\*:

Հենց այս սկզբունքով էլ առաջնորդվել է: Աշխատությունն առաջին հատորի բոլոր գլուխները վերնագրված լինելով հանդերձ այս կամ այն լեզվի «ազդեցությունը հայերենի վրա», ամենևին էլ չեն անտեսում հայերենի ներքին զարգացման օրինաչափությունը, իսկ երկրորդ հատորը մեծ մասամբ հատկացված է այդ օրինաչափությունների բացահայտմանը:

Աճառյանը լեզուն դիտում է որպես հասարակական, տնտեսական կյանքի արտացոլում, հաղորդակցություն միջոց, միանգամայն գիտական մոտեցում, որը կիրառված է գրքի առաջին էջերից մինչև վերջը:

Առաջին հատորի ամենաընդարձակ և ամենաարժեքավոր մասն է «Հնդեվրոպական բարբառները և հայերենի դիրքը նրանց միջև» գլուխը, որը հանդիսանում է հայոց լեզվի կազմավորման սեղմ ուրվագիծը:

Պաշտպանելով հայերենի հնդեվրոպական լեզու լինելու, ցեղակից լեզուների շարքում նրա գրաված տեղի վերաբերյալ Հյուբշմանի և Մեյերի տեսակետները, մանրակրկիտ կերպով քննություն է ենթարկում և սեղմ կերպով ներկայացնում այդ նյութին վերաբերող ու գիտական աշխարհում ընդունված եզրակացությունները, հնդեվրոպական ցեղակից լեզուների ընդհանրությունները, բաժանելով դրանք 16 խմբի: Ցույց է տալիս մի խումբ բառեր, որոնք գոյություն ունեն միայն բալթիկ-սլավոնական, գերմանական, կելտական և իտալական լեզուներում, բայց չկան հնդեվրոպական այլ լեզուների մեջ, ինչպես արիական, հայ, հույն լեզուներում: Ապա մեկ առ մեկ խմբավորում ու ներկայացնում է թե՛ հնդեվրոպական նախալեզվի բաղաձայն և ձայնավոր հնչյունները ցեղակից լեզուներից յու-

\* «Հայոց լեզվի պատմություն», հտ. I, էջ 7:



րաքանչյուրում ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել:

Այս բոլորի հիման վրա Հնդեվրոպական ցեղակից լեզուները բաժանում է երկու բարբառի՝ արևելյան և արևմտյան: Առաջինի մեջ մտնում են արիական, բալթիկ-սլավոնական, հայկական լեզուները, իսկ արևմտյան ճյուղի մեջ՝ իտալական, կելտական և գերմանական լեզուները. հունարենը գրավում է միջին դիրք: Սրանից էլ ելնելով՝ որոշվում է վերոհիշյալ բարբառներով խոսող ցեղախմբերի աշխարհագրական դիրքը, հայերենին տեղ տալով արիականի, հունականի և սլավոնականի միջև:

Գրքի նույն այս գլխում մոտ 45 էջ զբաղեցնող ընդարձակ մի աղյուսակով ներկայացվում է «Արմատական բառարանում» ստուգաբանված և Հնդեվրոպական ծագում ունեցող 713 հայերեն բառերի և ցեղակից լեզուների (սանսկրիտ, իրանական, հունարեն, լատիներեն, լիթվաներեն, հին սլավոներեն, գերմաներեն, կելտերեն) համեմատական տախտակը, որից հստակ կերպով երևում է, թե այս կամ այն բառը որ լեզուներում առկա է: Առաջին ակնարկից, մանավանդ Հնչյունափոխություն օրենքներին անձանոթ մարդկանց համար անհամոզիչ կարող է թվալ որոշ բառերի նույնությունը այդ լեզուներում, բայց երբ նկատի ենք ունենում լեզվական այս կամ այն օրենքը, ասենք այն, որ հայերեն նախաձայն **գ** առաջանում է Հնիւ. v ձայնից, վերանում է կասկածը և համոզվում ենք, որ հյ. **գարուն**-ը, սանս. *vasantā*-ն, ռուսերեն *вечар* կամ հյ. **սիրտ**, լատ. *cordis*, ռուս. *сердце*, կելտ. *cride* նույն բառերն են:

«Հայոց լեզվի պատմություն» Ա. հատորի արժեքավոր գլուխներից է «Նախահայերեն լեզուն և նախահայերի քաղաքակրթության ուրվագիծը»:

Աճառյանը բառերի յուրահատուկ խմբավորմամբ մեր առաջ ուրվագծում է նախապատմական Հայաստանի կյանքի, կենցաղի, սովորությունների, առհասարակ քաղաքակրթության վիճակը, վերակենդանացնում մեռած ու անէացած մի ամբողջ աշխարհ: Դժվար թե որևէ պատմաբան կարողանար ստվարածավալ մի հետազոտությանը այնքան համոզիչ կերպով ցուցադրել հին Հայաստանի երկրագործության, խաչնարածություն, արհեստների, վաճառականության, կրոնական հավատալիքների, գեղագիտական ճաշակի պատկերը, որքան Աճառ-

յանը այդ մի քանի սեղմ էջերում: Նա յուրաքանչյուր բառի տակ տեսնում է կյանքի որևէ թրթիռը, իսկ այդ բառերի ընդհանուր շաղկապման մեջ՝ մշակութային նկատելի զարգացման հասած մի ժողովրդի գոյավիճակը:

«Հայոց լեզվի պատմության» Ա. հատորի հետագա գլուխները, ինչպես և Բ. հատորի առաջին երկու գլուխները նվիրված են նախագիր չըջանում տարբեր լեզուների ազդեցությունը հայերենի վրա: Մերժելով այն տեսակետը, թե լեզուների խաչաձևումից առաջանում են նոր լեզուներ, հիմնավոր կերպով հաստատվում է, որ նման խաչավորումների ժամանակ լեզուներից մեկն ու մեկը, — անշուշտ առավել կենսունակը, — պահում է իր քերականական և բառարանային հիմնական կառուցվածքը, իսկ մյուս լեզուն կամ լեզուները ձուլվում են նրա մեջ, նպաստելով այդ լեզվի հարստացմանը: Այդպես է հասկանում հեղինակը խալդերենի ազդեցության հարցը, գտնելով, որ խալդերենից հազարավոր բառեր կարող են անցած լինել մեր լեզվին, և որ «Արմատական բառարանում» չստուգարանված, անհայտ համարված ավելի քան հինգ հազար բառերի ճնշող մասը գուցե հետագայում ստուգարանվեն խալդերենով:

«Սխալ չի լինի ասել, — գրում է նա, — որ եթե խալդիական արյունը չարունակում է ապրել մեր արյան մեջ և խալդիական երկիրը չարունակում է իր գոյությունը Հայաստանում, նույնպես և խալդիերենը չարունակում է ապրել հայերեն լեզվի ծալքերում, հայկական շրթունքների վրա»<sup>3</sup>:

Ուալդական գրականությունն ուսումնասիրված չլինելը, վերծանված արձանագրությունների բառամթերքի սահմանափակությունը գեթ մինչև այժմ անհնար են դարձրել այդ իրողության գիտական հիմնավորումը, մի բան, որ այնքան հեշտությամբ կատարվել է պարսկական ազդեցության բացահայտման գործում: Հայերը պարսկերենից վերցրել են 1400 բառ, մեծ մասամբ առօրյա գործածության ամենասովորական բառեր: Լեզվաբանն այդ երևույթը բացատրում է հայ և պարսիկ ժողովուրդների 1600 տարվա հարևանությամբ և չփումով, մանավանդ այն բանով, որ հայերը մոտ 900 տարի պարսիկների հետ եղել են ոչ թե հավասարների վիճակում, այլ հպատակ ժողովրդի, կրելով դրա բոլոր հետևանքները:

Եթե նախագիր չըջանի ազդեցությունների մեջ ամենից

նկատելին պարսկականն է, ապա քրիստոնեություն արչարույսին հունարենն է ազդել հայերենի վրա: Այդ կրոնի հետ մուտք գործելով Հայաստան՝ մոտ հազար բառ է մուտք գործել մեր լեզվի մեջ: Աճառյանը, խոսելով այդ ազդեցությունների քաղաքական, կրոնական և մշակութային դրդապատճառների մասին, մեջ է բերում վերոհիշյալ բառերի լրիվ ցանկը: Բավական է մի հարևանցի ակնարկ գցել դրանց վրա, համոզվելու համար, թե որքան է տարբեր ժողովուրդների շփումից առաջացած ազդեցությունը գրական ճանապարհով եկած ազդեցությունից. մինչդեռ պարսկերենից անցած բառերի ճշող մեծամասնությունն այժմ էլ օգտագործում ենք մենք (բժիշկ, մարդ, հրաման, նամակ և այլն), հունարենից եկած բառերի հազիվ մեկ քառորդն է մնացել մեր լեզվում, այն էլ ոչ թե կենցաղային բառեր, այլ բացառապես կրոնական, գիտական, գեղարվեստական (ակադեմիա, ամբիոն, դափնի, եկեղեցի, թատրոն, կիթառ, հոետոր, մեղեդի և այլն):

Շատ ավելի փոքր թիվ են կազմում երբայերեն բառերը, որոնք մեծ մասամբ եկել են Աստվածաշնչի ճանապարհով:

Իր սուր ու խորաթափանց մտքով խոր անցյալի մշուշի մեջ թաղված իրողությունները իմաստավորելուց, մեր լեզվի նախնական վիճակը ուրվագծելուց հետո, Աճառյանը դուրս է գալիս լայն ճանապարհ, երբ հասնում է վավերական չրջանին, որի առաջին փուլը նա համարում է վիպասանական հայերենը: Հետևողականորեն պնդելով այն կարծիքը, թե նախքան հինգերորդ դարը հայերը գրավոր խոսք չեն ունեցել, թե «մինչև այդ ժամանակ հայերեն լեզվով ոչ մի տող, ոչ մի տեսակ գրությունը կամ այբուբենով գրի չի առնված», նա մանրամասնություններ քննության է ենթարկում մեր անգիր բանահյուսության 14 նմուշների մեջ պարունակված 183 բառերը, գտնում, որ դրանցից 73-ը բնիկ հայերեն են, 30-ը պարսկերենից փոխառյալ բառեր, մնացածը անծանոթ, մի բան, որ հաստատում է նախորդ չրջանի վերաբերյալ նրա հանած եզրակացությունները:

«Հայոց լեզվի պատմություն» ամենաընդարձակ, փաստալից ու վավերական բաժինն են ներկայացնում այն գլուխները, որոնք վերաբերում են մեր գրավոր լեզվի զարգացման տարբեր աստիճաններին: Եթե նախագիր չրջանի մասին խոսելիս հեղինակն օգտագործել է օտար հայագետների ձեռք բերածը՝

դրան ավելացնելով իր ստուգաբանություններն ու եզրակացությունները, ապա գրավոր չըջանին վերաբերող և մոտ 1500 տարվա մի ժամանակաշրջան ընդգրկող ժամանակաշրջանի լուսաբանությունը գերազանցապես իրենն են: Այստեղ էլ նա օգտագործում է և՛ օտար հնդեվրոպաբանների և՛ Միսիթարյանների ու այլոց ընդունելի տեսակետները: Բայց դժվար չէ նկատել, թե 5-րդ դարի գրականության ու լեզվի այնպիսի պատկառելի հետազոտող, ինչպիսին Նորայր Բյուզանդացին է, որին ենք պարտական մեսրոպյան հայերենի մի շարք առանձնահատկությունների բացահայտումը, շատ է նսեմանում Աճառյանի առաջ, որը վերանայում, ճշտում, հաճախ մերժում է նրա սահմանումները, ստորաբաժանումները, ցույց տալով բազմաթիվ անհամապատասխանություններ, չեղումներ:

Մեսրոպյան հայերենի մանրակրկիտ հետազոտումից հետո Աճառյանն անցնում է այն կնճռոտ հարցին, թե գրաբարը խոսակցական լեզու՞ էր 5-րդ դարում: Գտնելով, որ «արվեստական լեզվի գաղափարը հակառակ է գիտական լեզվաբանության սկզբունքներին և օրենքներին», և որ «ոչ մի տեղ մարդկային պատմության ընթացքում տեսնված չէ ինքնահնար արվեստական մի լեզու կամ այդպիսի մի լեզվով գրված գրականություն», և Սահակն ու Մեսրոպն էլ չէին կարող նման մի լեզու ստեղծել, նա զարգացնում է այն ճիշտ տեսակետը, թե լեզուն հաղորդակցության միջոց է մարդկանց համար, իսկ 5-րդ դարում համաժողովրդական անհրաժեշտություն էր գիր ու գրականություն ունենալը և գրականության կարող էր բարձրանալ միայն ժողովրդի բոլոր խավերի համար հասկանալի մի լեզու, որպեսզի հնարավոր լիներ քարոզել քրիստոնեական կրոնը, Աստվածաշնչի ու Ավետարանի գաղափարները, մի բան, որ հաստատվում է մեր մատենագիրներից բերված տասնյակ վկայություններով:

Ապա, առարկելով այն մարդկանց, որոնք մինչև մեր օրերում էլ զարմանք են հայտնում, թե ինչպես կարող էր նման մի ճոխ ու մշակված լեզու լինել ժողովրդի բերանում, նա հիշեցնում է, թե այդ երևույթը լեզուների պատմության մեջ եզակի չէ, թե նույնն է վիճակը արաբերենում, որի մասին Ռընանի նման ականավոր մի մտածող ասել է. «այդ լեզուն նախապես անհայտ, երևում է մեզ հանկարծակի իր ամբողջ կատարելություն

մեջ, իր ձկունությունամբ, իր անհուն հարստությունամբ, մի խոսքով այնքան կատարյալ, որ այն օրվանից մինչև այսօր չի կրել ոչ մի կարևոր փոփոխություն»:

Կարծեք ասված լինի գրաբարի մասին:

Ո՞վ է ստեղծել, ուրեմն, 5-րդ դարի մեր սքանչելի գրաբարը: «Մի ամբողջ ժողովուրդ և նրա գլխով անցած հազարավոր տարիների ժամանակը, – ահա սրանք են եղել հայերեն լեզվի հեղինակները և այս հեղինակները շատ ավելի մեծ բան են կատարել, քան իրենց ծնած հանճարեղ զավակները»:

Համարելով գրաբարը համաժողովրդական խոսակցական լեզու 5-րդ դարում, նա ընդունում է տարբեր բարբառների գոյությունը, բայց ոչ այնպիսի բարբառների, ինչպես հասկանում ենք այժմ, երբ մի բարբառով խոսողը հաճախ չի հասկանում ուրիշ բարբառով խոսողին: 5-րդ դարում դեռևս բարբառները միմյանցից այդքան հեռացած չէին, մարդիկ հասկանում էին միմյանց, դրա համար էլ նա դրանք կոչում է ոչ թե բարբառներ, այլ ենթաբարբառներ, որոնք իրենց կնիքն են դրել մեր մատենագիրների լեզվի վրա:

Հայերեն բարբառների հետագա ճակատագիրն ու վիճակը շատ ավելի մանրամասնորեն քննություն է առնում Աճառյանը գրքի 26-րդ և 27-րդ գլուխներում: Նկատի ունենալով, որ այդ հարցերին մենք անդրադարձել ենք մեր աշխատության նախասովետական տարիներին վերաբերող հատվածում, ավելորդ ենք համարում կրկնելը:

Հայոց լեզվի ներքին զարգացման, բառարանային ու քերականական փոփոխությունների համար շատ բնորոշ են գրքի այն գլուխները, որոնք վերաբերում են հունարան դպրոցին, արաբերենի ու թուրքերենի ազդեցություններին՝ հայերենի վրա: Այստեղ էլ նկատվում է նույն երևույթը. մինչդեռ գրավոր ճանապարհով եկող ազդեցությունը, ինչպես հունարան դպրոցի ներկայացուցիչների արհեստական ներմուծություններն էին, քիչ հետք է թողել մեր լեզվի վրա, ժողովուրդների շփման միջոցով եկած ազդեցությունը հետք է թողել ոչ միայն բառերով, հոլովներով, խոնարհումով ու ոճերով, այլև համաձայնությունամբ ու շարադասությունամբ:

«Հայոց լեզվի պատմություն» հիմնական արժանիքներից մեկն է աշխարհաբարի ձևավորման ու զարգացման պատմու-

Թյան հմտալից շարադրանքը: Աճառյանը ըստ էության այս հարցին անդրադառնում է միջին հայերենին նվիրված գլխից, պաշտպանելով այն տեսակետը, թե 5-րդ դարում համաժողովրդական լեզու եղող գրաբարը գրքերում չարունակել է իր գոյությունը կրելով հեղինակների կամ արտագրողների որոշ ազդեցությունը, մինչդեռ խոսակցական լեզուն դարերի ընթացքում գնալով ավելի ու ավելի է հեռացել գրավոր խոսքից: Աշխարհաբարի հետքեր որոնելով հանդերձ Փավստոսի, Փարպեցու մոտ, Աճառյանը կանգ է առնում 7-րդ դարի հեղինակ Հովհ. Մամիկոնյանի վրա, բերում նմուշներ և եզրակացնում. «Այսպես, ուրեմն է դարում արդեն ծլած պետք է համարենք այն ժողովրդական լեզուն, որին հետո աշխարհաբար անունը պիտի հատկացնենք»:

Նմուշներ բերելով նաև հետագա դարերի հեղինակներից, նա անցնում է միջին հայերենի, այսինքն Կիլիկյան շրջանի հայերենի քննությունը, որը գրական նկատելի զարգացում է ապրել 12-րդ դարի երկրորդ կեսից (Ներսես Շնորհալի, Մխիթար Հերացի և այլն):

Նա մանրամասնորեն խոսում է միջին հայերենի հնչյունային առանձնահատկությունների, ձայնավորների, բաղաձայների կրած փոփոխությունների մասին:

Այս աշխատությունից ամենաընդարձակ գլուխներից մեկը նվիրված է բուն աշխարհաբարի զարգացմանը: Բերելով հնագույն ժամանակներից գրական նմուշներ, Աճառյանը աշխարհաբարի և գրաբարի տարբերությունների հիմնական նշաններից մեկը համարում է զ նախդիրի բացակայությունը աշխարհաբարում, թեև կան բարբառներ, որոնք մինչև այժմ էլ պահել են այդ նախդիրը: Աշխարհաբարի տիրապետության շրջանը նա համարում է 19-րդ դարը, երբ դարասկզբից միանգամայն գրաբարագերծ աշխարհաբարով սկսում են լույս տեսնել Մխիթարյանների «Տարեգրությունը», «Եղանակ Բյուզանդյանը», հետագայում Հնդկաստանում էլ արևելահայերեն պարբերականներ: Գրական այդ երկու ճյուղերը աստիճանաբար հղկվում, մշակվում, զտվում են օտարաբանություններից. մեկի՝ արևելահայերենի հիմքը կազմում է Երևանի բարբառը, արևմտահայերենինը՝ Կ. Պոլսի բարբառը, քանի որ Մխիթարյանների սաների մեծ մասը եղել են այդ քաղաքից, մյուս կողմից այդ բար-

բառի քերականությունը նույնն էր Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի Հայ բարբառների քերականության հետ. բոլորն էլ սահմանական ներկան և անկատարը կազմում էին կը մասնիկով:

Աշխարհաբարի վերջնական հաղթանակի համար մղված պայքարի տարբեր փուլերին է նվիրված «Հայոց լեզվի պատմության» այն գլուխը, որ վերնագրված է «Գրապայքար, վերամշակումներ և միություն փորձեր»:

Այսպիսով, Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» մեր լեզվի առնվազն երկու հազար տարվա զարգացման ամենամանրակրկիտ պատմությունն է, առատ նյութի օգտագործմամբ և գիտական արժեքավոր եզրակացություններով:

### 3. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Հայ հին մատենագրությունը բառաքաղը խնամքով կատարող լեզվաբանը չէր կարող զանց առնել տեղանուններն ու անձնանունները: Նա դրանք էլ հավաքել է մեծ զգուշությամբ, դասավորել այբբենական կարգով, նպատակ ունենալով կազմել Հայոց տեղանունների և անձնանունների բառարաններ:

Սկզբում ավելի շատ խանդավառվել է տեղանուններով. հրապուրվել է մանավանդ այն բանով, որ մի շարք վայրերի անունների ստուգաբանությունը վերականգնելու էր հնագույն ձևը, իսկ դա ուներ ոչ միայն լեզվաբանական արժեք, այլև հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության, աշխարհագրության և այլ բնագավառների հետազոտողներին կարող էր հուշել արժեքավոր մտքեր: Վերջապես՝ տեղանուններից շատերի հետ կապվում էին ժողովրդական ավանդություններ, պատմական իրադարձություններ, որոնք ընթերցանության հաճելի նյութ լինելու հետ մեկտեղ՝ ատաղձ կարող էին հանդիսանալ Հայ մշակույթի հետազոտման:

Սակայն հնագույն տեղանունների մեծ մասի գիտական ստուգաբանության դժվարությունը, եթե չասենք անհնարիությունը, ստիպում է նրան իր ժամանակը չվատնել մի բնագավառի համար, որտեղ հիմնականը պիտի լիներ ոչ թե ճշգրիտ փաստարկումը, այլ ենթադրությունը: Ահա թե ինչու նա «Տեղանունների բառարանը» այնպես էլ թողնում է անա-

վարտ: Այն բաղկացած է երկու մասից: Մի մեծ տետրում այբբենական կարգով նշված են մի քանի հարյուր տեղանուններ և այն աղբյուրները, որտեղից քաղել է դրանք: Ստվար այս տետրի թղթերը գրեթե դատարկ են: Համեմատաբար ավելի նյութ է պարունակում քարտարանը, որտեղից փաստերը անցկացնելու էր մեծ տետրի մեջ: Քարտերի թիվը անցնում է հազարից: Յուրաքանչյուրը պարունակում է մի տեղանուն՝ աղբյուրների մանրամասն թվարկմամբ: Ստուգաբանություններ, հարակից տեղեկություններ չկան, թեկուզ տեղագրական այնպիսի տրվյալներ, ինչպես ունեն Ս. Եփրիկյանի «Բնաչխարհիկ բառարանը» և ուրիշ նման գրքեր: Սակայն նույնիսկ սոսկ որպես տեղանունների ցուցակ՝ այն ամենից ընդարձակն է մինչև այժմ եղածներից: Ոչ Ղ. Ինճիճյանի հայտնի «Հնաստուությունը» և «Աշխարհագրությունը», ոչ Հյուբանի «Հին հայոց տեղվո անունները» և ոչ էլ շատ արժեքավոր, բայց անավարտ մնացած «Բնաչխարհիկ բառարանը» չունեն այդքան մեծաքանակ տեղանուններ\*:

«Հայոց անձնանունների բառարանը» կառուցվածքով ու սկզբունքներով նման է «Արմատական բառարանին»: Եթե «Արմատական բառարանում» այբբենական կարգով ներկայացված են հայոց լեզվի արմատներն իրենց ծագման ու զարգացման պատկերով, այստեղ էլ ներկայացվում են հայ մատենագրության մեջ գործածված բոլոր անձնանուններն իրենց ստուգաբանությամբ, վկայություններով, հասցնելով մինչև 1500 թիվը, հետագայում ապրած որոշ հայտնի մարդկանց բացառությամբ:

«Այս աշխատության նպատակն է,– գրում է հեղինակը,– հավաքել, դասավորել և ուսումնասիրել այն բոլոր անունները, որ պատմության ընթացքում որևէ հայ անհատ կրել է երբևիցե, անկախ իր ունեցած դիրքից ու աստիճանից, ընդունած կրոնից ու դավանանքից, և ապրած շրջանից կամ երկրից: Այս հավաքածույիս մեջ տեղ են գտել, ուրեմն, մի կողմից Հայկը, որ

---

\* Հայոց տեղանունների բառարան կազմվեց միայն մեր օրերում, տե՛ս Թ. Ս. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Ս. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1–5, Երևան, 1986–2001 (ծան. խմբ.):



Հայ ազգի նախահայրն է համարվում ըստ ավանդույթյան, և Տիգրանը, որ Հայ պետության քաղաքական ազդեցությունը Կովկասյան լեռներից մինչև Միջերկրականի ափը հասցրեց, և Մեսրոպը կամ Մաշտոց, որ Հայ մատենագրությունն հիմքը դրավ, և մյուս կողմից Դավիթ Ծարեցի ջաղացպանը, դերձակ Խնդուբեկը, բաղնեպան Հովհաննեսը և այլն»<sup>4</sup>:

Հեղինակը ամեն մի անվան մասին խոսում է հետևյալ ձևով: Նախ տալիս է անունը (Արշակ, Հովհաննես, Մարկոս և այլն), որի մոտ գրված է ար. կամ իգ., որով որոշվում է անվան արական կամ իգական լինելը: Դրան հետևում է անվան ծագումը կամ ստուգաբանությունը, նրա համապատասխան ձևերն այլ լեզուներում, անվան փաղաքշական ու ժողովրդական ձևերը Հայ բարբառներում:

Վերահիշյալ առաջին հատվածից հետո ժամանակագրական կարգով թվարկվում են նույն անունը կրած բոլոր հայերը սեղմ կենսագրականներով, ապա այն աղբյուրները, որտեղ հիշատակված են այդ մարդիկ, ընդգրկելով մեր ամբողջ Հին մատենագրությունը:

Բերենք մեկ օրինակ.

«Գրիգոր, ար. <Հուն. Γρηγόριος անունից, որ բուն նշանակում է «արթուն». ծագում է γρηγορέω «արթուն մնալ, հսկել» բայից: Փոխառությունը անցել է բոլոր քրիստոնյա ազգերին. ինչ. ասոր. Grigor, լատ. գերմ. Gregorius, անգլ. Gregory, ֆրանս. Grégoire, ռուս. Григорій (փղբջ. Грива), վրաց. Գրիգուլի, Գիգուլի, թուշ. Գրիգոլ և այլն (Հյուբշ. 334)»<sup>5</sup>:

Ապա թվարկվում են այդ անունով Հայտնի օտար նշանավոր մարդիկ, ասվում, թե անունը հայերի մոտ մուտք է գործել քրիստոնեությունից արշալույսին, Գրիգոր Լուսավորչից սկսած:

Այս ընդհանուր տեղեկություններից հետո իրենց համառոտ կենսագրություններով հիշատակվում են 745 Գրիգորներ, որոնք ապրել են 4-րդ դարից մինչև 16-րդ դարը, մի քանիսն էլ մինչև 19-րդ դարը:

«Անձնանունների բառարանը» իր գիտական արժեքով դրժվար է համեմատել «Արմատական բառարանի», «Հայոց լեզվի պատմության» կամ մյուս նշանավոր աշխատությունների հետ, բայց դրանով մեկտեղ այն Հայ մշակույթի պատմության համար ունի խոշոր կարևորություն, թեկուզ այն բանի համար,

որ հանդիսանում է հայ հին մատենագրությունյան մեջ գործածված անձնանունների լիակատար ցանկը, արդյունք երկար տարիների տքնաջան ու հոգեմաշ այնպիսի աշխատանքի, որը դժվար թե մի ուրիշը հանձն առներ կատարել երբևէ: Դրա համար անհրաժեշտ է եղել աչքի անցկացնել ամբողջ մեր հին մատենագրությունը, մատչելի վիճական արձանագրությունները և քաղել բազմահազար մարդկանց կենսագրությունը:

Հեղինակի ընդունած այս սկզբունքը շատ է ծանրաբեռնել աշխատությունը, հասցնելով մինչև հինգ ստվար հատորների, բայց հեղինակի նպատակը եղել է հենց այդ, այսինքն անձնանունների լիակատար ցանկի պատրաստումը և ոչ տվյալ անվան սոսկական ստուգաբանությունը, որ նա հեշտությամբ կարող էր կատարել այդ անձնանունները ձուլելով «Արմատական բառարանի» մեջ:

Նշեցինք աշխատությունյան արժանիքներից մեկը միայն՝ անձնանունների լիակատար ցանկը լինելու հանգամանքը: Իրականում այն ունի գործնական խոշոր նշանակություն. անսպառ աղբյուր է, փաստական նյութի շտեմարան այն բոլոր գիտնականների համար, որոնք ուսումնասիրում են հայ մշակույթի այս կամ այն բնագավառը, լինի դա լեզվի պատմությունը, հին գրականությունը, արվեստը, թե մի այլ ճյուղ: Իրավացի է Աճառյանը, երբ գրում է, թե նրա հիման վրա մեկը կարող է ուսումնասիրել անունների պատմությունը հայոց մեջ, մի ուրիշը կազմել նախարարական տոհմերի ճյուղագրությունը և այլն:

Բառարանը պարունակում է մեր մատենագրության մեջ գործածված բոլոր անունները. հենց դրանով էլ հանդիսանում է նաև ճշգրտված ցուցակը այն բոլոր անձնավորությունների, որոնք դարերի ընթացքում ծառայել են հայ մշակույթին. լինեն ականավոր դեմքեր, ինչպես Մաշտոցն ու Սորենացին, թե գրչի այն համեստ մշակները, որոնք ինչպես Ա. Իսահակյանն է ասում՝ «Մի կու՛մ ջրով, մի նշխարով» մթամած ու խոնավ խցիկներում, մոմի աղոտ լույսի տակ արտագրել ու նկարագարողել են մեր հին մագաղաթները, կազմել են դրանք կամ չինել են կամուրջներ, եկեղեցիներ, զբաղվել են երաժշտությամբ և այլն: Բառարանի ամենամեծ արժանիքը հենց հայ հին մշակույթին ծառայած այդ մարդկանց վավերական կենսագրությունների

չարադրանքն է: Զաղացականին ու դերձակին վերաբերող փաստերը գուցե չունեն գործնական արժեք, կամ ունեն շատ քիչ, մյուս կողմից ականավոր դեմքերի (Եղիշե, Կորյուն, Ագաթանգեղոս) մասին հնարավոր էր նյութեր քաղել տասնյակ գրքերից, բայց մշակութային շարքային գործիչների մասին չկա ոչ մի այլ աղբյուր:

Մեր ասածը հիմնավորենք արդեն հիշատակված **Գրիգոր** անվան տվյալներով:

745 Գրիգորներից մի քանիսը Հայտնի դեմքեր են (Գր. Նարեկացի, Գր. Մագիստրոս, Գրիգոր Տաթևացի և այլն), որոնց մասին առատ գրականություն կա, բայց սրանց թիվը տասից չի անցնում: «Բառարանում» կան մոտ վաթսուն Գրիգոր էլ, որոնք ունեցել են մշակութային գործունեություն և որոնցից մի քանիսի մասին միայն հիշատակություններ կան տարբեր հրատարակություններում: Դրանք տաղասացներ են, մանր մատենագիրներ, ծաղկողներ, թարգմանիչներ, երաժիշտներ, քարկուփ վարպետներ և այլն: Նկատի չենք ունեցել գրիչները, մագաղաթ հղկողները, կազմարարները, որոնք բոլորն էլ ծառայել են Հայ մատենագրական արվեստին և որոնց թիվը կարող է անցնել հարյուրից: Անգամ այն արհեստավորները (դերձակ, ջաղացական և այլն), որ հիշատակված են բառարանում, իրենց կենսագրական որոշ դրվագներով լույս են սփռում ժամանակաշրջանի տնտեսական կյանքի այս կամ այն կողմի վրա, իսկ մի քանի տասնյակ գրիչների կամ ձեռագրեր ստացողների թվարկումը կարող է օժանդակել նույն այդ ձեռագրերի թվականների ճշտմանը, եթե նրանց հիշատակարաններում բացակայում են թվականները:

Այս բառարանի միջոցով հնարավոր է գաղափար կազմել Հայ հին մշակութային օջախների, վանքերի ու դպրոցների գործունեության մասին, դուրս բերել այդ վանքերում կրթություն ստացած հարյուրավոր անուններ, բոլորն էլ այս կամ այն չափով մեր մշակույթին ծառայած մարդիկ:

«Անձնանունների բառարանը» ունի մի ուրիշ առանձնահատկություն էլ, որը կարող է ոմանց թերություն թվալ: Դա կողմնակի փաստերի, եղելությունների, չեղումների առկայությունն է: Անգամ «Արմատական բառարանում» նման չեղումներ կատարող լեզվաբանը այստեղ ավելի ազատ է զգացել

իրեն, բազմաթիվ մարդկանց գործունեությունը ներկայացնելիս պատմում է ժամանակաշրջանի քաղաքական, հասարակական կյանքի հետ կապված դեպքեր, իրադարձություններ: Տեղ-տեղ կարծեք պատմաբան է, պատմական դեպքերը վերլուծող, տեղ-տեղ գրող է, երբ սրտառուչ տողերով ներկայացնում է այս կամ այն մարդու անձնական ողբերգությունը, մեծ մասամբ արդյունք տիրապետող տարրի կրոնական մոլեռանդություն:

Այս բոլորի շնորհիվ Աճառյանի գիրքը պահելով հանդերձ գիտական արժեքը, դառնում է ընթերցանության հաճելի նյութ, որից կարելի է սովորել և՛ պատմություն, և՛ գրականություն և՛ այլ գիտելիքներ:

Բառարանը լույս տեսած լինելով հեղինակի խոր ծերություն տարիներին, պարունակում է բավականաչափ վրիպակներ, հատկապես արաբատառ գրված անուններում: Միաժամանակ գրքի վրա զգալի է անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի կնիքը: Յուրաքանչյուր փաստի նկատմամբ մեծ բժախնդրություն հանդես բերող, թվականների անունների հիշատակությունը խստորեն պահպանող գիտնականը, օրինակ, Գրիգոր Նարեկացուն նվիրված էջերում հիշատակել է անգամ երկրորդական աղբյուրները, բայց զանց է առել ականավոր այն գրականագետի անունը, որը եղել է Նարեկացու առաջին զնահատողը դեռևս 1890-ական թվականներին, գրել է ընդարձակ հետազոտություն նրա մասին<sup>6</sup> և հետագայում էլ Նարեկացուն ծանոթացրել է օտարներին թե կուռ տրամաբանությունները գրված հոդվածներով և թե թարգմանություններով:

Չհամարձակվելով Ա. Չոպանյանի անունը հիշատակել, այս կարևոր փաստը տվել է անտրոշ այսպիսի տողերով. «Ինչպես ցույց տվեց Փրանսահայ մի բանաստեղծ», իսկ թե ով է եղել այդ «Փրանսահայ բանաստեղծը», միջին ընթերցողին այնպես էլ անհայտ պիտի մնա:

Բերենք մի ուրիշ օրինակ էլ. նա հարկադրված եղավ Սեղա անվան հետ կապված ստուգաբանությունից, որ նախ տպագրվեց ակադեմիայի «Տեղեկագրում» ապա բառարանի 4-րդ հատորում, հանել այն շատ կարևոր փաստը, որ այդ անունը հին դարերում մի քանի անգամ օգտագործվելուց հետո մոռացվել էր և մեկ էլ վերակենդանացել 1912 թվականին Լ.

Շանթի «Հին աստվածների» բեմադրությունն ազդեցությունը<sup>7</sup>:

Վերջապես «Անձնանունների բառարանը» չունի օգտագործված գրականությունն համառոտագրությունն բացատրությունը, առանց որի հիշատակված շատ աղբյուրներ կարող են մնալ անծանոթ և դժվարացնել բառարանից օգտվողների աշխատանքը:

#### 4. «ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ»

Հրաչյա Աճառյանի ամենաընդարձակ աշխատությունն է «Լիակատար քերականություն հայոց լեզվի» գիրքը, բաղկացած 10 ստվար հատորներից: Այդպիսի քերականություն աննախադեպ է առհասարակ համաշխարհային լեզվաբանության պատմության մեջ: Այն ըստ էության ոչ թե լեզվի, տվյալ դեպքում հայոց լեզվի, ամենաընդարձակ քերականությունն է, համեմատած տարբեր լեզուների քերականական երևույթների հետ, այլ աշխարհի ուսումնասիրված գրեթե բոլոր լեզուների քերականության սեղմ շարադրանքն է, միահյուսված հայոց լեզվի քերականության հետ, որը առանցքայինն է ու հիմնականը:

Մյուս կողմից՝ դա լոկ լեզվաբանական աշխատություն չէ, թեկուզ իր աներևակայելի տարողությունը: Տարբեր ժողովուրդների կյանքը, կենցաղը, սովորությունները, հոգեբանությունը ներկայացնող փաստերի, իրողությունների յուրահատուկ շտեմարան է, որտեղ վառ կերպով ներկայացված է մարդկային բանականության զարգացման պատմությունը, սկսած նախապատմական սաղմնային վիճակից մինչև զարգացման բարձր աստիճանի հասած ժողովուրդների մոտ: Դըժվար է գտնել մեսրոպատառ մի այլ աշխատություն, որի ճանաչողական արժեքն այնքան մեծ լինի, որքան Աճառյանի այս իսկապես զարմանալի քերականությունը:

Փրանսիացի լեզվաբան Վանտրիեսը ափսոսանքով է նշել, որ մինչև այժմ չի գտնվել մեկը, որն ուսումնասիրեր աշխարհիս բոլոր լեզուները և կազմեր նրանց ընդհանուր համեմատական քերականությունը: – Արդյոք պիտի գտնվի՞ այդպիսի մի անձ, – հարց է տվել նա և գրել, թե եթե անգամ գտնվի, ի՞նչ նյութի մասին պիտի խոսի:

Ուրեմն նման մի աշխատություն անհրաժեշտությունը գագացվել է գիտություն մեջ, բայց չի գտնվել կատարողը: Ո՞վ կարող էր հանձն առնել խելացնոր նման մի գործ և գրքերի օվկիանոսային ճանապարհով թափանցել հնագույն ժամանակներից մինչև մեր օրերում խոսված լեզուների գաղտնաբանները, ծանոթանար նրանց քերականական կառուցվածքին, առանձնահատկություններին և այդ լեզուների միջոցով ուսումնասիրել ժողովուրդների մտավոր զարգացումը, համեմատել գրանք միմյանց հետ, դուրս բերել տարբերություններ և ընդհանրություններ, հանգել սրամիտ եզրակացությունների և այդ բոլորին զուգընթաց ներկայացնել հայոց լեզվի քերականության պատմությունն իր զարգացման բոլոր փուլերով:

Աճառյանը «Հայոց լեզվի լիակատար քերականության» մասին գրած հոդվածում, հիշելով Վանդրիեսի վերոհիշյալ բաղձանքը, ասում է. «Սովետական Միության հեռավոր մի անկյունում, Հայաստանի մայրաքաղաք Երևանում, գտնվեց մի անձ, որ համարձակություն և համբերություն ունեցավ այդ գործը կատարելու»<sup>8</sup>:

Արդարև, եթե չլինեք Աճառյանի առասպելական աշխատասիրությունը, նպատակադրած ծրագիրը կենսագործելու համառությունը և այն անսպառ գիտելիքները, որ նա կուտակել էր տասնամյակների ընթացքում, նման մի աշխատություն չէր կարող հրապարակ գալ:

Աճառյանը հետևյալ ընդհանուր տեղեկություններն է տալիս իր գրքի մասին: Ասում է, թե աշխարհում մեռյալ և կենդանի 1500 լեզու կա, որոնցից 600-ը առնվազն մեկ քերականությունը ուսումնասիրված է: Նրա նպատակն է եղել կարգալ այս 600 լեզուների քերականությունը Սովետական Միության տարբեր գրադարաններում, մի մասն էլ բերել տալ արտասահմանից: Նրան հաջողվել է կարգալ 562 լեզվի քերականություն, մնացել է 38 լեզու, որ այնպես էլ չի կարողացել ճարել, ուստի նրա «Հայոց լեզվի քերականությունն» էլ գրված է ոչ թե 600 լեզուների համեմատությամբ, այլ 562 լեզվի:

«Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունը բաժանված է վեց մասի:

Լեզվաբանության ներածություն.

Զայնարանություն.

Զևարանություն.

Շարահյուսություն.

Իմաստարանություն.

Բառագիտություն:

Հետագայում, տպագրություն հանձնելիս հեղինակն այն բաժանեց տասը հատորների, ներածությունը, գոյականին, ածականին ու թվականին, դերանունին, բային, դերբային, նախադասությունն ու շաղկապին հատկացնելով մեկական հատոր: Հրատարակության ընթացքում ինչ ինչ նկատառումով նորից կատարվեց որոշ վերագրասավորում: «Ներածությունը», որ հեղինակը ծրագրել էր տպագրել որպես առաջին հատոր, հրատարակվեց հետմահու, առանց հատորային համարակալման, 1955 թ.:

Առաջին հատորը, միակը, որ հեղինակը տեսավ իր կենդանությունը և հրատարակվեց 1952 թվականին, պարունակում է «Ածականը» և «Թվականը», բաղկացած է մոտ 500 մեծադիր էջից:

Երկրորդ հատորը (1954) ծավալով նույնքան, հատկացված է միայն «Դերանունին»:

Երրորդ հատորը (1957) բաղկացած հազար էջից, ընդգրկում է գոյականի բազմակողմանի ուսումնասիրությունը:

Չորրորդ հատորը՝ ծավալով ամենաընդարձակը, հրատարակվել է երկու գրքով, յուրաքանչյուրը բաղկացած մոտ 600 էջից, ամբողջովին նվիրված բային: Ա. գրքում (գլուխ Ա-Զ) ներկայացվում է բայի տարբերացումը գոյականից, բայական կարգերը, բայական բունը, խոնարհում, բայը հնդեվրոպական լեզուներում, բայը հայերենում, իսկ Բ. գրքում՝ (գլուխ է-ԺԱ) ներկայացվում է խոնարհումը աշխարհաբարի մեջ, էական կամ օժանդակ բայը, բարդ և բաղադրյալ ժամանակներ, թեական և պատմողական եղանակներ, բայերի զանազան տեսակներ: Հինգերորդ հատորը նվիրված է դերբայների և չթեքվող խոսքի մասերի համեմատական և պատմական ուսումնասիրությունը և պարունակում է հետևյալ գլուխները՝ Դերբայ, Նախդիր և Նախադրություն, Մակբայ, Շաղկապ, Զայնարկություն:

Յուրաքանչյուր հատոր ունի հավելվածային բաժիններ, որոնց մեջ՝ լեզուների ցանկերը\*:

Այս է մոտավորապես ընդգրկումը ծովածավալ այն աշխատությունների, որ կոչվում է «Լիակատար քերականություն հայոց լեզվի»:

Այժմ ընդհանուր գծերով ծանոթանանք բովանդակությանը.

«Ներածություն» հատորի Ա. մասում հեղինակը տալիս է ընդհանուր այն բոլոր տեղեկությունները, որոնք առնչվում են լեզվաբանության հետ և անհրաժեշտ են լեզուների զարգացման օրինաչափությունները հասկանալու համար. քննության է առնում լեզվաբանությունն իբրև գիտություն, պատասխանում է այն հարցին, թե ինչ է լեզուն, ներկայացնում է լեզվի ծագումը, սոցիալական, հոգեբանական, բնախոսական հասարակական յուրահատկությունները, խոսում լեզվի էվոլյուցիայի, կենսաբանության մասին (միավանկ լեզուներ, կցական լեզուներ, թեքական լեզուներ և այլն), նրա հատկությունների մասին, այսինքն թե ինչու ենք ասում կատարյալ լեզու (լեզվի գեղեցկությունը, հարստությունը, համառոտությունը, կանոնավորությունը, մաքրությունը), խոսում է լեզուների պատմական զարգացման ընթացքում օտար ազդեցությունների կատարած դերի և այլ հարցերի մասին:

Նույն հատորի Բ. մասում ներկայացվում է լեզուների դասակարգումը (լեզուների ցեղակցությունը, լեզուների վիճակագրությունը և դասակարգումը, լեզվաընտանի բների բնորոշումը, նախալեզուների վերականգնումը, ընդհանուր նախալեզու և այլն):

Այս բոլորը Աճառյանը ներկայացնում է ամենամանրակրկիտ պրպտումների արդյունք համողիչ փաստերով: Միայն այս կամ այն լեզվի սեղմությունը, համառոտությունը ցույց տալու համար հիշատակում է թե տվյալ լեզուներով գրված և հրատարակված ավետարանները քանի բառ ունեն, որն ավելի շատ բառ է պարունակում, որն ավելի համառոտ է: Այդ ծանր աշխատանքի մի մասը կատարված է օտար լեզվաբանների կող-

---

\* Աճառյանի «Լիակատար քերականության» բոլոր հատորները, «Արմատական բառարանը» (տպագիր) և այլ գործեր լույս տեսան ակադեմիկոս Է. Աղայանի շնորհիվ (ծան. խմբ.):



մից, մի մասը արդյունք է իր հոգնեցուցիչ հաշվումների: Ինչպես իր շատ գործերում, «Ներածությունում» էլ քննությունն է առել տեսական բազմաթիվ հարցեր, հանել ուշադրավ եզրակացություններ: Գրքի բովանդակության թվարկումն ինքնին ցույց է տալիս, թե լեզվի բնորոշման, ծագման, զարգացման, միմյանց հետ ունեցած նմանությունների ու տարբերությունների մասին խոսելիս ինչպիսի տեսական հարցեր են նրան զբաղեցրել և ինչ սկզբունքներ է մշակել:

Աճառյանը հիմնական բոլոր հարցերում կանգնած է միանգամայն ճիշտ ուղու վրա, նա լեզուն համարում է հասարակական երևույթ, որը կարող է գոյություն ունենալ միայն մարդկային հասարակության մեջ, ծառայել որպես հաղորդակցության միջոց, թե լեզուն և մտածողությունը սերտորեն կապված են միմյանց հետ, առանց լեզվի չի կարող լինել մտածողություն, առանց մտածողության՝ լեզու, հետևաբար կենդանիները, որոնք զուրկ են բանականությունից, չեն կարող ունենալ լեզու, նրանք միմյանց հասկանում են բնազդական ճիշերով: Այս հարցը մանրամասնորեն քննության է առնվում «Ներքին լեզու և արտաքին լեզու» գլխում: Գիտական մեծ արժեք են ներկայացնում «Ներածության» այն գլուխները, որոնց մեջ քննության են առնվում լեզուն որպես հասարակական երևույթ, լեզվի փոխանցումը, լեզվի էվոլյուցիան, լեզվի կենսաբանությունը: ... Բնորոշելով լեզուն որպես հասարակության հաղորդակցության միջոց՝ հեղինակը փաստերով ցուցադրում է լեզվի համաժողովրդական բնույթի էությունը՝ հասարակական կյանքի տարբեր պայմաններում, ցույց տալիս այդ ընդհանրության աստիճանը՝ տարբեր հասարակական քաղաքական հանգամանքներում: ... Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Լեզվի կենսաբանությունը» գլուխը, որ նվիրված է լեզուների ձևաբանական դասակարգմանը, ձևաբանական տարբեր տիպերի քննությանը և յուրաքանչյուր տիպի համար որևէ բնորոշ լեզվի քերականության համառոտ նկարագրությանը: Առանձնապես կարևոր են «Օտար ազդեցություններ» և «Անհատական կամքը լեզվի մեջ» գլուխները. հեղինակը լեզվաբանական նյութի խոր ու մանրակրկիտ քննությամբ ցույց է տալիս, որ լեզուների խաչավորումից, նրանց փոխազդեցություններից, նրանց ձուլումից չի կարող առաջանալ ինչ որ նոր,

խառնածին լեզու: Նա լեզվական հարուստ փաստերով ցույց է տալիս, որ առհասարակ խառնածին լեզու չկա և որ հայերենը խառնածին լեզու չէ, որ նա երկցեղ բնույթ չունի, այլ պարզապես հնդեվրոպական լեզու է, որ դարերի ընթացքում հարուստացրել է իր բառային կազմը, մի կողմից՝ սեփական բառակազմություններով, մյուս կողմից այլ լեզուներից կատարած փոխառություններով:

«Ներածություն» գրքի Բ. մասում արծարծվող հարցերի՝ այսինքն լեզուների ցեղակցություն, տարբեր լեզուների միջև եղած ընդհանրությունների, նախալեզուների մասին խոսել ենք այլ առիթով, ավելորդ ենք համարում կրկնել: Ասենք միայն, որ այս բաժնի ամենաուշագրավ հատվածն է հանդիսանում «Ընդհանուր նախալեզու» գլուխը, որտեղ հանգամանորեն շարադրելով եվրոպական լեզվաբանների այն տեսությունները, թե բոլոր լեզվաընտանիքներն էլ իրենց հերթին առաջացել են մի ընդհանուր նախալեզվից:

Աշխատությունը պարունակում է վիճելի դրույթներ, գուցե և անընդունելի որոշ տեսակետներ, սակայն լեզվաբանության հիմնական հարցերը այնտեղ ներկայացված են միանգամայն ճիշտ և գիտականորեն: Պրոֆ. է. Աղայանը, խոսելով այս գրքի մասին, իրավացիորեն գրում է. «Նույնիսկ այն դեպքերում, երբ այս կամ այն հարցի մասին նա տեսական ոչ ճիշտ դրույթ է պաշտպանում իր ուսումնասիրությունների մեջ, վերջին հաշվով հանգում է ճիշտ եզրակացության՝ լեզվական երևույթների պատմական վերլուծությամբ: Այս տեսակետից առանձնապես հատկանշական է լեզվի զարգացման պատմական պրոցեսի նրա բացատրությունը: ... Լեզվի զարգացման հարցում Հ. Աճառյանը կանգնած է լեզվաբանական անընդհատականության տեսության դիրքերում... սակայն, չնայած դրան, իր ուսումնասիրությունների մեջ, լեզվական փաստերի խոր և բազմակողմանի վերլուծությամբ նա, մի կողմ թողնելով այդ տեսական դրույթը, ցույց է տալիս, թե ինչպես երկար դարերի ընթացքում տեղի ունեցող փոփոխություններով աստիճանաբար մահանում է հին լեզուն և «ծնունդ առնում», ձևավորվում նորը: Այս տեսակետից առանձնապես բնորոշ է Հ. Աճառյանի տեսությունը գրաբարի մահացման և միջին հայերենի գոյացման մասին: Փաստերի օբյեկտիվ վերլուծությամբ ու հայերենի պատմության խոր ու բազմակողմանի ուսումնասիրությամբ

նա ցույց է տալիս, թե ինչպես աստիճանական փոփոխություններով դարերի ընթացքում առաջանում է նոր որակի մի նոր լեզու՝ միջին հայերենը, և մահանում է հին որակը՝ գրաբարը»<sup>9</sup>:

«Ներածություն» հատորը, այսպիսով, պարունակում է այն բոլոր հարցերը, որոնք առնչվում են ընդհանուր լեզվաբանության հետ: Բուն համեմատական քերականությունը ներկայացված է մյուս հատորներում, ըստ վերևում հիշատակված բաժինների:

Հեղինակը յուրաքանչյուր քերականական երևույթ քննության է առնում 562 լեզուների համեմատությամբ: Նախ նկատի է առնում այն լեզուները, որոնք գտնվում են զարգացման նախնական աստիճանում, ապա աստիճանաբար բարձրանալով հասնում է ամենից ավելի զարգացած լեզուներին, այսպիսով երևան հանելով երևույթի աստիճանական զարգացման ամբողջ պատկերը:

Վերջենք հոլովի զարգացման պատմությունը: Պարզվում է, որ նախնական վիճակում ոչ մի լեզու հոլով չի ունեցել: Եղել է միայն ուղղականը, այսինքն՝ բառի պարզ ձևը, որը «չեչտի կամ խոսքի մեջ բռնած իր դիրքի միջոցով ստացել է այս կամ այն հոլովի իմաստը: Այդպես է, օրինակ, շատ հին գրականությունում օժտված չինարենը, որ մինչև այժմ չի կարողացել կազմակերպել հոլովական շոչափելի քերականական դրություն: Չինարենի մեջ, երբ գոյականը դրված է բայից առաջ, ուղղական է, իսկ եթե դրված է բայից հետո, հայցական է: Երբ երկու գոյական իրար կողքի են, առաջինը սեռական է, երկրորդը՝ ուղղական: Երբ 2 գոյական դրված են բայից հետո, առաջինը հայցական է, երկրորդը՝ տրական:

Սեմական լեզուները ունեն երեք հոլով՝ ուղղական, հայցական, սեռական:

Զարգացման երրորդ աստիճանը կազմում են այլթայական, հնդեվրոպական և այլ լեզուները, որոնք ունեն 6–10 հոլովներ: Կան լեզուներ, որոնց հոլովների թիվը հասնում է մինչև 52-ի, ինչպես թաբասարան լեզուն, որի հոլովներից 42-ը տեղ են ցույց տալիս:

Լեզուների նախնական վիճակում հոգնակի նույնպես գոյություն չի ունեցել: Գոյականի մոտ դրված մի թիվ կամ քանակություն ցույց տվող բառ արտահայտել է հոգնակիի գաղա-

փարը: Հետագայում, հոգնակի կազմելու համար կրկնվել է բա-  
որը, օրինակ «քաղաք քաղաք ման եկանք», այսինքն քաղաք-  
ներ ման եկանք: Վերջապես առաջացել են հոգնակի կազմող  
մասնիկներ, տարբեր լեզուներ ունեցել են տարբեր թվով նման  
մասնիկներ, օրինակ Հիմալայի վրա խոսվող մի փոքրիկ լեզու  
ունի նման վաթսուս մասնիկ, իսկ կան լեզուներ էլ, որոնք ոչ մի  
մասնիկ չունեն, ինչպես ամերիկյան բնիկներից մայա լեզուն,  
այդ պաշտոնը տալով որոշ խմբի բայերի, որոնք արտահայտում  
են հոգնականի իմաստ:

Ուշագրավ պատկեր է ներկայացնում դերանվան գործածու-  
թյունը տարբեր լեզուներում: Կան լեզուներ, որոնք ունեն քսա-  
նից ավելի դերանուններ.

«Նրանք գիտեն երեք տեսակ նա. 1) այն որ խոսակցության  
ներկա է, բայց չի մասնակցում, 2) այն, որ խոսակցության ներ-  
կա չէ, 3) այն, որ երբեք չպիտի տեսնենք: Իմ ասելու համար  
Ֆիջի կղզու բնակիչները 3 ձև ունին. 1) իմ գլուխը (որ անբա-  
ժանելի է իրենից), 2) իմ գլուխը (ոչխարի այն գլուխը, որ  
ձեռքին բռնած ուտում է), 3) իմ գլուխը (ոչխարի այն գլուխը,  
որ չի ուտում և պետք է անպատճառ վաճառի ուրիշին): Այս-  
պես կինը, զենքը, ձին, պատկանում են առաջին տեսակին,  
որովհետև իրենից անբաժանելի պետք է մնան, քույրը երկրորդ  
տեսակին է պատկանում, որովհետև պետք է ամուսնանա,  
ուրիշ առարկաներ կարող են պատկանել երրորդ տեսակին,  
որովհետև պիտի վաճառվեն կամ տրվեն ուրիշին»<sup>10</sup>:

«Վերջապես,– եզրակացնում է Աճառյանը,– քերականական  
ամեն մի կարգի մեջ այնքան մանրամասնություններ և նուրբ  
երանգներ են գրած մեր «վայրենի» կոչած լեզուները, որ «քա-  
ղաքակիրթ» մարդը զարմանքով պիտի դիտի»<sup>11</sup>:

Աճառյանը հիշատակում է այս բոլոր փաստերը, առանց  
տեսական լայն ընդհանրացումների, բայց ընթերցողի առաջ  
բաց է անում մարդկային հասարակութայն զարգացման ողջ  
պատմությունը: Այդ քերականությունը ծանոթացողը լրիվ գա-  
ղափար է կազմում աշխարհի մոտ 600 լեզուների լեզվական  
սիստեմների, դրանց միմյանցից ունեցած տարբերության կամ  
մոտիկության մասին, ծանոթանում բազմաթիվ ժողովուրդնե-  
րի մտածողության եղանակին, կենցաղին, բարոյական ըմբռ-  
նումներին: Այսպես, մեր բերած օրինակներով ներկայացնում է

Ֆիջի կղզու ժողովրդին իր բարոյական, ընտանեկան, հասարակական ըմբռնումներով, մի ժողովուրդ, որի մոտ կինը, զենքը և ձին անբաժանելի մասն են ընկալվել տղամարդու համար, ինչպես կովկասյան շատ ժողովուրդների մոտ է, որոնք ունեն առած\* թե կինն ու ձին չի կարելի ուրիշին վստահել:

Լեզուների ընդհանուր քննությունը կատարելուց հետո Աճառյանը անցնում է հնդեվրոպական նախալեզվի նկարագրմանը, ցույց է տալիս նախալեզվի քերականական ձևերը և նրանից հետո եկող ժառանգորդ մայր լեզուների մեջ այդ ձևերի կրած փոփոխությունները, խոսելով հատկապես սանսկրիտի, հին պարսկերենի, հունարենի, լատիներենի, գերմանական, սլավոնական և այլ ճյուղերի լեզուների մասին:

Նա քերականական յուրաքանչյուր երևույթ քննության է առնում հենց այդ սկզբունքով ու հաջորդականությամբ: Վերևում հիշատակվածների նման ընդհանուր, բայց շատ օգտակար տեղեկություններ տալուց հետո է, որ յուրաքանչյուր հատորում խոսքը մասնավորեցնում է հայերենի վրա և քննության է առնում նախ՝ հինգերորդ դարի առաջին կեսի մեսրոպյան լեզուն, գրաբարի բոլոր երևույթներն իրենց մանրամասնությամբ, բացառությունների հիշատակությամբ, բազմաթիվ աղյուսակներով, ցուցակներով, յուրաքանչյուր երևույթ բացատրելով նրան ելակետ ծառայող հնդեվրոպական նախալեզվի միջոցով: Այս բաժինը հենց հայերենի համեմատական քերականությունն է ամենալայն ընդգրկումով:

Գրաբարից հետո Աճառյանը անցնում է միջին հայերենի քերականական կառուցվածքի քննությանը, միջին հայերենը դիտելով որպես գրաբարից աշխարհաբարին անցնելու միջանկյալ մի շրջան: Չնայած այն հանգամանքին, որ միջին հայերենը, այսինքն՝ կիլիկյան հայերենը մինչև այժմ լավ չի ուսումնասիրված և Նորայր Բյուզանդացու քառահատոր բառարանի անմատչելիության պայմաններում միակ հավաստի աղբյուրը մնում է Կարստի գերմաներեն քերականությունը, այնուամենայնիվ նա հմտալից դիտողություններով ցույց է տվել

---

\* Միջին հայերենի բառարան մեր օրերում հրատարակել են Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանը:

միջին հայերենի տեղը գրաբարի և աշխարհաբարի միջև\*:

Միջին հայերենից հետո անցնում է հայոց լեզվի բարբառներին, որոնց մի մասն է միայն ուսումնասիրված, այն էլ գլխավորապես իր կողմից (Ղարաբաղ, Նոր-Նախիջևան, Ագուլիս, Նոր Զուղա, Մարաղա, Պոլիս, Համչեն, Վան, Զեյթուն, Սվեդիա և Առտիալ): Ուսումնասիրված այս տասը բարբառի նյութը ամբողջությամբ, մնացածների քերականական երևույթներն իրենց ընդհանուր գծերով քննությունն առնելուց հետո նա ներկայացնում է աշխարհաբարի քերականությունն իր երկու գրական ճյուղավորումներով՝ արևելյան և արևմտյան, օգտագործելով իրենից առաջ այդ մասին գրված բոլոր աշխատությունները, մասնավորապես Այտրնյանի «Քննական քերականությունը»:

Այսպիսով՝ «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ քերականական ամեն մի երևույթ քննությունն է առնվում վեց բաժնում, նախ՝ ընդհանրապես, ապա՝ հնդեվրոպական նախալեզվում, գրաբարում, միջին հայերենում, բարբառներում և աշխարհաբարում:

Հեղինակի հավաստիացմամբ գրքի մեկ երրորդ մասը վերաբերում է ընդհանուր լեզուներին, իսկ երկու երրորդ մասը՝ հայերենին իր բոլոր ճյուղավորումներով:

Հայոց լեզվի լիակատար քերականության համար Աճառյանն օգտագործել է հայագիտական 4000 հոդված և գիրք, որից 200 գիրք ուսերեն և եվրոպական լեզուներով՝ նվիրված ընդհանուր լեզվաբանության հարցերին, 380 գիրք նվիրված գանազան լեզուների քերականության՝ գրված յոթը լեզուներով. անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, պորտուգալերեն և ուսերեն:

## 5. ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ զբաղեցնող ժամանակաշրջանում լույս են տեսել Աճառյանի բարբառագիտական հետևյալ աշխատությունները.

1. Քննություն պոլսահայ բարբառի – 1941 թ.:
2. Քննություն Համչենի բարբառի – 1947 թ.:
3. Քննություն Վանի բարբառի – 1953 թ.:
4. Քննություն Առտիալի բարբառի – 1953 թ.:

Նախասովետական տարիներին նա հրատարակել էր Սու-  
չովայի, Ասյանբեկի և Ղարաբաղի բարբառները, 1930-ական  
թվականներին՝ Ազուլիսի և Մարաղայի բարբառները: Բարբա-  
ռագիտական երկու աշխատությունն էլ «Քննություն Կիլիկիո  
բարբառի» և «Քննություն Սվեդիո բարբառի», մնում է ան-  
տիպ:

Այսպիսով, Աճառյանի ուսումնասիրած բարբառների թիվը  
հասնում է 12-ի:

Նախորդ գլուխներում խոսել ենք Աճառյանի բարբառագի-  
տական ուղղության ու որդեգրած սկզբունքների մասին, որոնք  
հիմք են դարձել ոչ միայն իր հետագա բոլոր աշխատություն-  
ների, այլև նրա աշակերտ լեզվաբանների համար: Ուստի ավե-  
լորդ ենք համարում կրկնել, թե ինչ ընդգրկում ունեն 1941-  
1953 թվականներին լույս տեսած վերոհիշյալ չորս գրքերը:

Ցանկանում ենք անդրադառնալ վերոհիշյալ աշխատու-  
թյուններում արժարժված պատմաբանասիրական մի քանի  
խնդիրների, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ մշա-  
կույթի պատմության համար:

Ինչպես արդեն ասվել է, նա յուրաքանչյուր բարբառը քըն-  
նության առնելիս խոսում է տվյալ բարբառն օգտագործող հա-  
յերի բնակության վայրի, աշխարհագրական դիրքի, հայերի  
բնակության ժամանակի, գաղթականական հոսանքների, քա-  
ղաքական շարժառիթների և այլ հարցերի մասին:

Այս տեսակետից մեծ արժեք են ներկայացնում պոլսահայ և  
Համչենի բարբառների քննության ընթացքում արժարժված  
հարցերը:

Հայտնի է, որ Պոլիսը նախասովետական շրջանի ամենա-  
խոշոր հայաշատ կենտրոնն է եղել, ունեցել է 150–200 հազար  
հայ բնակիչ: Այն միաժամանակ եղել է արևմտահայ մշակույթի  
խոշորագույն կենտրոնը և վերջապես պոլսահայ բարբառը  
հիմք է դարձել արևմտահայ գրական լեզվի համար: Եվ, որ  
ամենից ուշագրավն է, մինչդեռ ամբողջ Փոքր Ասիայի հայերը  
կորցրել են մայրենի լեզուն և թրքական հզոր ազդեցությամբ  
տակ թրքախոս են դարձել, Պոլսի հայությունը պահպանել է  
այն, շրջապատված լինելով հանդերձ միլիոնավոր թուրքերով,  
մյուս կողմից՝ «մինչդեռ բուն Հայաստանի շատ գավառներ  
խոսում են մի այնպիսի հայ բարբառ, որ ձայնաբանությամբ և

քերականությամբ մեծ չափերով հեռացած է հին հայերենից, Պոլսի բարբառը ընդհակառակը շատ լավ պահել է հին հայերենի հարազատ գծերը: Համեմատությամբ Ղարաբաղի, Ագուլիսի, Վանի և նույնիսկ ավելի մերձավոր Կիլիկիայի և Ասորիքի բարբառների՝ Պոլսի բարբառը շատ ավելի մոտիկ է գրաբարին»:

Աճառյանը Պոլսի բարբառը ավելի մոտ է համարում Նոր-Նախիջևանի բարբառին, քան Պատմական Հայաստանի կենտրոններում խոսվող բարբառներից մեկն ու մեկին. և դա բացատրում է շատ համոզիչ փաստարկներով: Նա մերժում է տարածված այն տեսակետը, թե Պոլսի հայ գաղութի հիմքը կազմել են Փոքր Ասիայից այնտեղ փոխադրված հայերը: Մեջ բերելով Համմերի այն հավաստիացումը թե Ֆաթիհ Մեհմեդը Ղրիմից 1475 թ. Պոլիս է փոխադրել 40.000 անձ, գտնում է, որ տեղափոխվածներից գեթ կեսը հայեր կարող էին լինել, որոնք Պոլսում պահել են իրենց լեզուն և հոգևոր կյանքը: Եվ որովհետև Նոր-Նախիջևանի հայերն էլ գաղթեցվել են Ղրիմից, դրանով լուծվում է այս երկու բարբառների նմանության գաղտնիքը:

Պոլսահայ բարբառից հետո ամենակենսունակը, որով այժմ էլ խոսում են մոտ 100.000 հայեր Արևազիայում և մոտ 60.000 թուրքեր էլ Թուրքիայում, Համչենի բարբառն է: Չափազանց հետաքրքրական տեղեկություններ է տալիս Աճառյանն այս բարբառով խոսող հայերի ճակատագրի մասին: Տրապիզոնից արևելք, Ճորոխի հովտում գտնվող Համչեն գավառում 17-րդ դարում ապրելիս են եղել 10.000 տուն հայեր, առհասարակ գավառը եղել է զուտ հայկական: 18-րդ դարի սկզբներից թուրքերը հարձակվել են այդ գավառի 70-ից ավելի հայկական գյուղերի վրա, կոտորել են մի մասին, մի մասը փախել է դեպի Տրապիզոն, այնտեղից ձանիկ, Սինոպ և այլն, հարկադրված եղել ընդունել մահմեդական կրոնը, սակայն պահել են լեզուն, այսինքն Համչենի բարբառը: Հետագայում Համչենից փախած, ծովեզերյա տարբեր քաղաքներ ապաստանած հայերը՝ թուրքական նորանոր կոտորածների, պատերազմների ժամանակ (1878, 1895–1896, մանավանդ 1923) թափվել են Սև ծովի ուսական ափերը՝ Սուխումից մինչև Սոչի ընկած տարածության վրա (Սուխում, Նոր Աֆոն, Գագրա, Աղլեր, Մծարա և այլն): Մի



մասն էլ անցել են դեպի Կուբան, ձուլվել<sup>12</sup>:

Վերոհիշյալ տեղեկությունների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում այն իրողությունը, որ թուրքացած համչենցիները պահել են իրենց լեզուն: Աճառյանի օգտագործած գրավոր աղբյուրները, որոնցում արձանագրված է այս կարևոր փաստը, ունեն անովազն 50–60 տարվա հնություն: Իսկ ի՞նչ ճակատագիր ունեցավ թուրքացած հայերի կողմից խոսվող բարբառը վերջին հարյուրամյակում, չէ՞ որ այդ ժամանակամիջոցը գրեթե կեսն է թուրքացման օրերից հաշված:

Այս հարցով է, որ այժմ հետաքրքրվում է Փարիզի Կոլեժ դը Ֆրանսի և Բարձրագույն ուսումների դպրոցի դասախոս, հայագետ Ժորժ Դյումեզիլը: Նա մի քանի տարուց ի վեր զբաղվում է թուրքիայում ապրող փոքր համայնքների բարբառների ուսումնասիրությամբ: Այդ աշխատանքի ընթացքում 1963 թ. ծանոթացել է թուրքացած համչենցիների բարբառին, համեմատել Աճառյանի տված տվյալների, օրինակների հետ, գտել է, որ այժմ էլ պատմական համչենի (թուրքերեն Հեմչեն) գավառում 60 գյուղ խոսում են նույն այն բարբառով, որ խոսում են մեզ մոտ արխաղահայերը: Երկու հատվածների օգտագործած լեզուների միջև եղած տարբերությունը վերաբերում է բառամթերքին և հնչյունաբանական որոշ օրենքների. թուրքացած հայերի մոտ թուրքերեն բառերի քանակն ավելի շատ է, ձևաբանությունը պահած լինելով հանդերձ գրաբարի հին ձևերը, անկայուն է:

Բելգիացի հայագետը Համչենի բարբառի երկու հատվածների տարբերությունից հանում է շատ ուշագրավ եզրակացություն, նա դա չի բացատրում միայն թուրքական ազդեցությամբ. հնարավոր է համարում, որ Տրապիզոնում և այլուր հաստատված համչենցիներն էլ, այլ խոսքով այժմյան արխաղահայերը, կրած լինեն իրենց նոր չրջապատի հայերեն բարբառների ազդեցությունը: Մյուս կողմից, նկատի ունենալով, որ հայ համչենցիների բարբառը ուսումնասիրված է մի շարք մարդկանց կողմից, այդ թվում Աճառյանի նման ականավոր հայագետի, իսկ թուրքացած համչենցիների լեզուն ղեռ նոր է ուշադրություն գրավում, Դյումեզիլը անհավանական չի համարում հնուց եկած այնպիսի բառերի, ձևերի առկայությունը թուրքական շերտում, որը կորցրած լինեն հայ համչենցիները:

Աճառյանի համար ինչպիսիք անակնկալ պիտի լիներ իմանալը, թե 250 տարի առաջ թուրքացած հայ համչենցին 1963 թվականին էլ դեռ երգում է

Սիրոյն էլաւ էրյէնցաւ  
ձերմակ արձէշտ հետն ի վեր  
Եէս ալ էլլէ էրկէնա  
Նէշանլուխ հետն ի վեր:

Կամ՝

Կաննի կէմէցէ գէլխուն իմ,  
Տասվերկու տարեցէ մէշն իմ,  
Տասվերկու տայցան հետև,  
Կարմի աղչկունն հետն իմ<sup>13</sup>:

Դյումեզիլը ուշադրություն է դարձրել այս երկու քառյակներում օգտագործված սիրող և արձեշք բառերի վրա, որոնք անծանոթ են և դժվար է բացատրել հարևան լեզուներով: Արդյոք հնուց մնացած բառեր չե՞ն:

Եթե պոլսահայ և համչենի բարբառներն ուշագրավ են որպես այժմ էլ իրենց կենսունակությունը պահած բարբառներ, ապա Առտիայի և Վանի բարբառները բնութագրական են առաջինը որպես ձուլման ճանապարհով անհետացած մի հայ հատվածի խոսած լեզուն, երկրորդը՝ Վանի բարբառը, որպես այն խոսող հատվածի դեպի գրական լեզուն զալով անհետացող մի բարբառ:

## 6. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այլ առիթով ասել ենք, որ Աճառյանն իր երիտասարդ հասակում զբաղվել էր նաև թարգմանությունամբ, սանսկրիտից թարգմանել էր «Բհագավան»: Հետագայում պարսկերենից և թուրքերենից թարգմանել էր մի քանի վավերագրեր և լույս ընծայել ապակետիպով:

1940 թվականին Երևանի պետական համալսարանը ձեռնամուխ է լինում «Օտար աղբյուրները Հայերի մասին» մատենաշարի լույսընծայմանը:

Մատենաշարն սկսվում է Հր. Աճառյանի թարգմանած «Ստրաբոնով»: Երկրորդ գիրքը դառնում է «Իբն ի Բատուտան»՝ արաբերենից, 4-րդը «Ֆիրդուսին»՝ պարսկերենից, բոլորն էլ թարգմանված Աճառյանի կողմից<sup>14</sup>: Վերջին երկուսի տվյալները՝ Հայաստանի և Հայերի մասին շատ քիչ են, հարևանցի ակնարկներ: Իբն ի Բատուտան արժեքավոր մի քանի տեղեկություններ է տալիս Հայաստանի որոշ քաղաքների տնտեսական վիճակի, արհեստների մասին, իսկ Ֆիրդուսին բացի Մուշեղ Մամիկոնյանի հետ կապված հայտնի հատվածից աննշան տեղեկություններ ունի: Չնայած դրան՝ Աճառյանն իր մանրակրկիտ ծանոթագրություններով իմաստավորում է, խոսեցնում շատ ակնարկներ, որոնք առաջին Հայացքից կարող են թվալ անորոշ, հայերի հետ չկապված արտահայտություններ:

Թե ծավալով և թե նյութի ընդգրկմամբ ու կարևորությամբ ամենից արժեքավորը «Ստրաբոնն» է, քանի որ նա տեղեկություններ է տալիս, այն էլ գրեթե ժամանակակցի իրազեկությամբ, հայ պետականության սկզբնավորման շրջանի վերաբերյալ: Աճառյանը Ստրաբոնի «Աշխարհագրությունից» քաղել հանել ու թարգմանել է այն բոլոր հատվածները, որոնք վերաբերում են Հայաստանին ու Հայերին:

Վերոհիշյալ երեք թարգմանություններն էլ կատարված են բնագրերից, ձեռքի տակ ունենալով դրանց օտար թարգմանությունները: Նա գրքի ձախ էջում տալիս է բնագիրը՝ (հունարեն, արաբերեն, պարսկերեն), աջ էջում հայերեն թարգմանությունը, իսկ վերջում արժեքավոր ծանոթագրություններ, բացատրություններ:

\* \* \*

Իհարկե հայոց լեզվի ուսումնասիրումը չէր սկսվել Աճառյանով և նրանով չի ավարտվում: Մեր լեզվի բառարանային կազմի և քերականական երևույթների հետ կապված բազմաթիվ հարցեր են մշակվում այժմ, նյութ դառնում ծավալուն հետազոտությունների, բայց սխալված չենք լինի, եթե ասենք, որ Աճառյանը խտացումն է հայագիտության մի ամբողջ պատմաչրջանի և նրանով ավարտվում է հայ լեզվաբանության դասական շրջանը, սկսվում մի նոր շրջան՝ հետ-աճառյանական

չրջանը, որը նկատելի զարգացում ապրեց մասնավորապես վերջին երկու տասնամյակներում: Հրապարակ եկան արժեքավոր բազմաթիվ աշխատություններ լեզվաբանությունից այն կամ այն բնագավառին վերաբերող, ելակետ ունենալով նախընթաց շրջանում բացահայտված օրինաչափությունները, հիմնականում Աճառյանի կողմից սահմանված օրենքները: Այդպես է, օրինակ, բարբառագիտությունից ուսումնասիրությունից գործը. բարբառագիտական տասից ավելի գրքեր են լույս տեսել վերջին տարիների ընթացքում, բոլորն էլ նույն այն սկզբունքներով, որ սահմանել է Աճառյանը ավելի քան 60 տարի առաջ:

Եվ եթե կան հարցեր, որոնք չեն պարզարանվել մինչև այժմ և կարող են մեր լեզվաբաններին զբաղեցնել դեռ երկար տարիներ, ապա դրանք գերազանցապես վերաբերում են հայոց լեզվի կազմավորման հետ կապված հարցերին, որոնցից է, օրինակ, ուրարտերենի և հայերենի առնչություն, մեր լեզվի վրա ուրարտերենի թողած ազդեցությունից հարցը: Բայց դրա հաղթահարումն էլ, դժբախտաբար, սերտորեն կապված է ուրարտերեն նոր գրավոր հիշատակարանների հայտնաբերման, այդ լեզվի առավել հանգամանալից հետազոտման, մասնավորապես բառապաշարի հարստացման հետ:

Այդ բաց դուռը մատնանիչ է արել հենց Աճառյանը, հայտարարելով, թե «Արմատական բառարանում» անձանոթ համարվող հազարավոր բառեր գուցե հետագայում ստուգարանվեն ուրարտերենով: Կատարվում են ջանքեր այդ ուղղությամբ, և արդյունքը քաջալերական է:

## Գլուխ տասներեքերորդ

### ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐԸ

Ոչ մի հայ գիտնականի շուրջ, այն էլ դեռևս կենդանություն օրերից այնքան աշխույժ հետաքրքրություն չի ստեղծվել, նրա հետ կապված դեպքեր, անեկդոտներ չեն պատմվել, որքան Աճառյանի: Քսանական թվականների սկզբներից մարդիկ միմյանց պատմել են այդ «տարօրինակ» մարդու կյանքից զվարճալի դեպքեր, որոնք հետագայում հավաքվել են, գրի առնվել մի քանիսի, այդ թվում Աճառյանի կողմից:

Դեպքեր պատմվում են ու տարածվում բացառիկ մեծությունների մասին, հաճախ անգամ ուրիշների հետ պատահածներն էլ վերագրելով նրանց: Այդպես է համաշխարհային գրականության մեջ Բերնարդ Շոուն:

Աճառյանին վերաբերող մանրադեպքերը, որոնք մեծ մասամբ իրական դեպքեր են, երևան են հանում նրա զարմանալի աշխատասիրությունը, մաքրասիրությունը, գիտական համոզմունքների մեջ ունեցած համառությունը, հետևողականությունը, սրամտությունը, միաժամանակ՝ պարզամտությունը, անսահման բարությունն ու անհիշաչարությունը, մեծ մարդկանց հատուկ՝ հազուատ կապուստի թափթփվածությունը և այլն, գծեր, որոնք ի մի գումարած՝ բացահայտում են մարդն ու գիտնականը:

Նախ խոսենք նրա բնավորության այն գծերի, սովորությունների մասին, որոնք բնութագրական են գիտնական մարդուն:

Առաջին յուրահատկությունը, որ աչքի էր ընկնում Աճառյանի մոտ, նրա զարմանալի աշխատասիրությունն է: Նա իր աշխատությունները գրելու համար մի քանի անգամ կարդացել է գրաբար մեր ամբողջ մատենագրությունը, հազարավոր մասնագիտական և այլ կարգի գրքեր, նայել է հայ ճոխ պար-

բերական մամուլը: Մանավանդ երիտասարդ հասակում չի իմացել ինչ է հոգնությունը, աշխատել է մինչև աչքերը փակվելը, հաճախ իր նյութի հետ շարունակելով ապրել նաև քնի մեջ: Իմացել է ժամանակի միավորի արժեքը, չի թողել, որ մի րոպե կորչի:

Նա իր ստեղծագործական բեղմնավորությունը բացատրում էր ոչ այնքան աշխատասիրությունը, որքան աշխատանքային ռեժիմի խիստ պահպանմամբ: Ասում էր, որ մարդ եթե օրական երկուսուկես էջ գրի, տարեկան անում է հազար էջ, այսինքն քառասուն մամուլանոց մի գիրք, իսկ հիսուն տարի ստեղծագործողը իր դարակում կունենա հիսուն հատոր գիրք: Կան մարդիկ, ասում էր նա, որոնք մի օր գրում են 10–15 էջ, բայց մի քանի ամիս չեն գրում և ոչ մի տող: Ինքը խստագույն կերպով հետևում էր ռեժիմին: Նրա աշխատանքային ժամերը չէր կարող խանգարել և ոչ ոք, լիներ դա ընտանիքի անդամներից, թե իր ամենասիրելի մարդկանցից մեկը: Երկար տարիներ նա իր տանը հեռախոս չի ունեցել: Միայն վերջին բնակարանում ուներ: Մանկական ինչպիսի հրճվանքով ասում էր. Աստված հոգիդ լուսավորի, էդիսոն, որ այսպիսի օգտակար գյուտ ես արել, հիմա մարդիկ առանց զանգահարելու չեն գա և ինձ խանգարի, հնարավոր է ժամադրվել, ժամ ու րոպեներ որոշել: Ձայրանում էր, երբ մարդիկ գալիս էին առանց զանգահարելու: Ժամանակի արժեքը չիմացող որոշ մարդկանց պատժում էր շատ յուրովի: «էհ, մի քիչ նստեցեք, հիմա կվերջացնեմ գրելիքս», – ասում էր ու շարունակում գրել: Բայց չէ՞ որ դա ոչ նամակ էր և ոչ էլ արագություն պահանջող դիմում, որ շուտ վերջացներ, իր ընթացիկ զբաղմունքն էր, որն սկիզբ էր առել 90-ական թվականներից, ավարտվելու էր կյանքի վերջին օրը: Նա այդպես էր անում իր սահմանած աշխատանքային ժամը արդյունավետ օգտագործելու համար, չէր կարող համաձայնվել, որ խլիճն նրանից թեկուզ մեկ ավելորդ րոպե: Պատմվում է, որ մի օր առանց զանգահարելու նրա տունն է գալիս մի կին, դուռը խփում: Աշխատանքն ընդհատելով բաց է անում Աճառյանը: Եկողն ասում է, թե հինգ րոպե ուզում է խլել նրա ժամանակը, ինչ որ բան հարցնելու համար: Կինը ծեքծեքումներով, հինգ րոպեում հազիվ է վերարկուն հանում, հայելու առաջ հարդարվում, Աճառյանը ժամացույցը ձեռքին սպասում է. հենց որ

Ժամանակը լրանում է, ասում է. – «է, տիկին, ձեր խնդրած հինգ ռուպեն վերջացավ, ես պետք է աշխատեմ»:

Իրակա՞ն է այս դեպքը, թե հնարված: Եթե հնարված է, ապա Աճառչանին ճանաչող բոլոր մարդիկ կարող են վկայել, որ դա հենց Աճառչանն է:

Աշխատանքային ոեժիմի պահպանման հետ սերտ կերպով կապում էր ճշտապահությունը: Ճշտապահ էր և՛ տանը, և՛ համալսարանում: Նրա օրվա ոեժիմի մեջ մտնում էին անկողնից վեր կենալը, լվացվելը, ճաշելը և այլն:

Սովորաբար զարթնում էր առավոտ վաղ՝ 6 անց կեսից 7-ի ընթացքում, աշխատում էր մոտ մեկ ժամ, կարճ ժամանակ հանգստանալուց հետո նախաճաշում էր՝ ժամը 10–11-ի մոտերքը, ապա շարունակում աշխատել: Հոգնելիս շուտ-շուտ հանգստանում էր, պառկում 10–15 ռուպե, երբեմն էլ ոչ թե հանգստանում էր, այլ փոխում աշխատանքի բնույթը: Ճշտապահ էր հատկապես համալսարանական պարապմունքների ընթացքում, գալիս էր ճիշտ նույն ռուպեին, գնում նույն ռուպեին: Չէր սիրում դասերից հետո պրոֆեսորական սրահում նստել ու զրույցի բռնվել: Եթե մեկն ու մեկը ցանկանում էր նրան բան հարցնել, կարող էր ուղեկցել մինչև տուն: Առհասարակ փոխադրական նստել չէր սիրում, ոտքով էր գնում և՛ ակադեմիայի ժողովներին, և՛ համալսարանական պարապմունքներին: Բարեբախտաբար Երևանում ապրած իր երեսուն տարիների ընթացքում զբաղեցրած երեք բնակարաններն էլ քաղաքի կենտրոնում լինելով (մեկը Աբովյան փողոցում, մյուսը՝ Տերյան, երրորդը՝ Լենինի պողոտայի վերևի մասում), դժվարություն չէին հարուցում, ոտքով գալը ավելի ևս հնարավոր էր դարձնում պահպանել ճշտապահությունը, գիտեր թե քանի ռուպեից տանից կարող էր հասնել համալսարան: Ճանապարհին երբեք խոսելու համար չէր կանգնում, նրան ուղեկցող մարդիկ մի կողմից կարող էին տալ իրենց հարցերը, ստանալ պատասխան, շարունակել քայլել: Անբաժանելի ձեռնափայտը ձեռքին, իր դասախոսությունների նյութերը սովորական մի թերթի մեջ դրած ձախ թևի տակ, հանդարտ քայլում էր ու զրուցում: Հանդիպած կողմից եկողներին ընդհանրապես չէր ճանաչում աչքերի տկարություն պատճառով: Ով բարևում էր, գլխի խոնարհումով պատասխանում էր ու կողքի մարդուն հարցնում: – Ո՞վ

էր: – Այսինչն էր,– տրվում էր պատասխանը: Առանց վերաբերմունքի շարունակում էր ճանապարհը: Աճառչանի ճշտապահության մասին տարածված անեկղոտներից ամենից բնորոշը հետևյալն է. մի օր համալսարանի դասախոսներից մեկը ցույց տալով կախված ժամացույցը, ասում է. «Մտեք լսարան, ժամը ինն է»: Ուսանողներից մեկը պատասխանում է՝ ժամը ինը չէ, Աճառչանը դեռ չի եկել:

Հակառակ իր հետ պատահած այդքան անախորժություններին, լավատես էր. հուսահատությունը, հուսալքումը անծանոթ էր նրան: Որևէ ծրագիր կազմելուց հետո այլևս նահանջ չգիտեր: Քանի քանի անգամ «Արմատական բառարանը» մատնվել է անհաջողության, պատճառել հոգեկան տանջանքներ, բայց երբեք չի նահանջել ու բառարանը չի գցել վառարան, պահել է, մոտ 40 տարի լրացրել է, արտագրել տվել լծակից ընկերուհուն՝ կնոջը, ու հազարավոր էջերի կապոցները շալակած՝ ինչպես գաղթական հայ մայրը շալակած որդուն՝ թափառել է երկրից երկիր, քաղաքից քաղաք, շատ հաճախ որպես փոխադրամիջոց չունենալով անգամ որևէ գրաստ: Ու երբ հոգնաբեկ իջևանել է որևէ տեղ, առաջին հերթին բաց է արել ձեռագրերի կապոցները, ստուգել է, և սկսել աշխատել...

Ուներ գործելու ուրույն մեթոդ: Չնայած ամեն ինչից խանդավառվող ոռմանտիկ բնավորությանը, որևէ գործ սկսելուց առաջ մտածում էր նրա կենսագործման հնարավորության մասին, ծանր ու թեթև անում, նույնիսկ հարցնում այդ բնագավառի հետ քիչ առնչվող մարդկանց: Ուրույն էր նյութի հավաքման նրա մեթոդը: Վերցնում էր թերթերից ու մամուլից այն ամենը, ինչ իրեն պետք է գալու ծրագրված մի քանի աշխատանքների համար՝ միաժամանակ: Երբ վերցնում էր անհրաժեշտ նյութերը, ընդմիջտ փակում էր հաշիվը այդ հրատարակության հետ: Օգտագործած գրքերը չէր սիրում պահել տանը: Գոնե Երևանի պայմաններում երբեք գրադարան չունեցավ, նրա գրքերի թիվը հարյուրից չանցավ, որի կեսից ավելին իր ստեղծագործություններն էին, մյուս մասը հնատիպ հազվագյուտ մի քանի մասնագիտական գրքեր, բառարաններ, երրայերեն մի աստվածաչունչ, Փարիզի լեզվաբանական ընկերության բյուլետենների հավաքածուն և այլն: Ստանում էր նվեր հարյուրավոր գրքեր թե երկրի ներսից և թե արտասահմանից: Նայում էր,



եթե իրեն նյութ տվող գիրք էր, կարդում էր ու տալիս որևէ մեկին, իսկ եթե այնպիսի գիրք էր, որ կարող էր իզուր տեղը իրենից ժամանակ խլել, առանց կարդալու բաժանում էր: Սկզբում, 20-ական թվականներին, այդ գրքերը նվիրում էր համալսարանի գրադարանին, բայց հետո, երբ մի անգամ ստուգել էր, որ համալսարանին տված իր արժեքավոր գրքերից մեկը անհայտացել է, այլևս ոչ մի գիրք չէր տալիս, բաժանում էր իր սիրած աշակերտներին:

Նման տասնյակ գրքեր էլ տվել է մեզ, մի մասը ընծայականով գրքեր: Մի գիրք միայն՝ տալուց մեկ տարի անց հետ է վերցրել. ուզում ենք պատմել այդ դեպքը, քանի որ այն կապվում է ծննդավայրի ոգեկոչման հետ: Գիրքը Պետրոս Կարապետյանի «Հնգադարյան հիշատակարան Սամաթիո Ս. Գևորգ եկեղեցավո» աշխատությունն էր, որտեղ կենսագրական տեղեկություններ կային սամաթիացի հայտնի մարդկանց մասին: Անկազմ էր: Ուրախությունք վերցրեցի, կազմել տվեցի: Ամիսներ անց՝ մի օր հետ ուղեց, իսկույն տարա: Վերցրեց, շոշափեց, նկատեց, որ կազմվել է, հարցրեց, թե քանիսո՞վ են կազմել. ասացի, թե փող չեմ տվել, տպարանի իմ ընկերներից մեկն է կազմել. – Ձէ, առհասարակ նման մի գիրք քանիսո՞վ են կազմում, հարցրեց խորամանկելով, որպեսզի իմանա արժեքը և վճարի: Ոոստացա իմանալ և հայտնել: Հետո ասաց, թե անպատշաճ է նվերը հետ ուղելը, բայց սխալվել է սկզբից՝ տալով, չէ՞ որ այդ գիրքը իր ծննդավայր Սամաթիայի մասին է, իր միջավայրի, ծանոթների, հենց իր մասին նյութեր կան: Վերհուշի համար լավ կլինի, որ իր մոտ պահի:

Յուրահատուկ ձևով էր օգտագործում պարբերական մամուլը: Պահում էր մի փոքրիկ գրպանի տետր, որտեղ գրել էր բոլոր թերթերի, ամսագրերի անունները, տարիները, համարները: Ոչ թե նշում էր կարդացածն ու օգտագործածը, գրի առնելով համարը, այլ ընդհակառակը կարմիր մատիտով ջնջում էր պարբերականի այն համարը, որ օգտագործել էր, ասելով թե դրա հետ ընդմիջտ մաքրել է իր հաշիվը:

Հայ լեզվաբանությունից նվիրված գրքերն ու հոդվածներն օգտագործելիս կիրառում էր այլ սկզբունք, մանրամասն նշում էր տվյալ աշխատության անունը, հեղինակի ով լինելը, որտեղ տպագրվելը, էջը և այլն, ստեղծելով իր ամենաարժեքավոր

աշխատութիւններէց մեկը՝ «Հայ լեզվաբանութեան մատենագիտութիւնը»:

Կողմնակի գրքեր քիչ էր կարդում: Կարդացել էր արեւմտահայ և արեւելահայ բոլոր գրողներին: Դրանցից մի քանիսի գործերը կարդացել էր նոր բառեր որոնելու համար, մի մասին, մասնավորապես պատանեկան տարիներին, կարդացել էր հոգեկան բավականութեան համար: Իր «Հայ գրականութեան պատմութեան» մեջ խոսում է բազմաթիւ գրողների մասին, որոնց բոլորի երկերը կարդացել էր բարեխղճորեն, անգամ այնպիսի դժվար հասկանալի մի գործ, ինչպիսին Բագրատունու «Հայկ Դիւցազն» է, բայց ուներ իր նախասիրութիւնները: Դրանց մեջ բացառիկ տեղ էին գրավում Պետրոս Դուրյանն ու Հակոբ Պարոնյանը: Դուրյանի շատ ոտանավորներ անգիր գիտեր, արտասանում էր հուզված, դողդողացող ձայնով, կատարյալ վիշտ ապրելով այն փաստից, որ վաղամեռիկ բանաստեղծը աշխարհից հեռացել էր առանց գեթ մի համբույր ձաշակելու: Պարոնյանը նկարագրել էր այն աշխարհը, որի մեջ ապրել ու մեծացել էր ինքը: Կյանքի վերջին տարիներին էլ այս երկու հեղինակները գրավում էին նրան: Վեպեր քիչ էր կարդում, այն էլ պետք է ասել գեղարվեստական տեսակետից շատ թույլ գործեր, որոնք ընթերցել էր պատանեկան տարիներին, տպավորվել և այժմ, կյանքի վերջին օրերին ճարում էր ու նորից ընթերցում, խորհուրդ տալով ուրիշներին էլ անպայման կարդալ: Դրանցից էր ոմն Հ. Հաճյանի «Բերայի գիշերները» գեղարվեստական ոչ մի արժեք չներկայացնող արկածային վեպը, լույս տեսած 1860-ական թվականներին Պոլսում: 1944 թվին նա գտել էր այդ գիրքը, կարդացել և զարմանալին այն է, որ նորից հափշտակվել էր ու խորհուրդ էր տալիս առաջարկել Պետհրատին, որ վերահրատարակի: Պատմաբանասիրական աշխատութիւններից գովեստով էր խոսում ու հանձնարարում Հ. Կ. Տեր-Սահակյանի «Հայ կայսերք Բյուզանդիոնի» երկհատոր աշխատութիւնը, որը բյուզանդական գահի վրա բարձրացած Հայ թագավորների կյանքն է տալիս կիսավիպային ձևով: Ընթերցվում է հաճույքով, մանավանդ պալատական ոճիներին, խոսվութիւններին նվիրված տասնյակ էջերը, բայց թույլ է հավաստիութիւնը: Աճառյանն այդ գիրքը կարդում էր ոչ այնքան նրա գիտական արժեքի համար, որքան արկածային բովանդակութեան:

Հաճույքով էր խոսում մի գրքի մասին էլ, որն այնպես էլ մեզ չհաջողվեց գտնել Երևանում: Դա սամաթիացի Մ. Պիտար Արապաճյանի «Իքի Գափու յոլդաշլարը» («Երկու հարևաններ») հայատառ թուրքերեն վեպն էր, որը խորհուրդ էր տալիս գտնել և անպայման թարգմանել հայերեն ու տպագրել: Այդ միտքը նրա մեջ արմատավորվել էր «Ագապի» հայտնի վեպի երևան գալուց հետո: Կյանքի վերջին տարիներին հաճույքով կարդաց նաև երկու այլ վեպեր: Դրանք Լևոն Մեսրոպի «Զարե» և «Հաչիչին» վեպերն էին, որ հեղինակը նվիրել էր Աճառյանին: Լևոն Մեսրոպը Կենտրոնականում եղել էր իր աշակերտը: Բայց Աճառյանը այն մարդկանցից չէր, որ ինչպես ասում են խաթեր համար գիրք կարդար: Ամենայն հավանականությամբ այդ վեպերը գրավել էին նրան: Մեր ասածը հիմնավորելու համար բերենք մի քանի տող Լևոն Մեսրոպի քրոջը, Աղավնի Մեսրոպյանին գրած նրա նամակից (1946, մարտի 28):

«Հուզմունքից փոթորկված այս տողերը գրում եմ ձեզ, գրում է Աճառյանը, երկու շաբաթ առաջ պարզ հետաքրքրություն համար ձեռքս առի «Զարե»՝ Ձեր եղբոր գրած վեպը: Չկրցա թողնել ձեռքից, այնքան հետաքրքիր էր, որ իմ ամենասիրելի աշխատանքները մոռացա և ամեն բան ընդհատելով և նույնիսկ ճաշելը մոռանալով, շարունակեցի ընթերցումը, յոթը ժամից վերջացրի: Այսքան խոր ընտրություն Պարսկաստանի ներքին կյանքին, անսպասելի էր Սամաթիացիե մը»<sup>1</sup>:

Նույնպիսի դրվատանքով այդ նամակում խոսում է «Հաչիչին» վեպի մասին:

1945 թ. դարձյալ մի գիշերվա մեջ կարդաց մի այլ գիրք՝ «Մղձավանջային օրերը», առավոտ կանուխ կանչեց հեռախոսով հեղինակին, վերադարձրեց գիրքը և ասաց.

– Տա՛ր, այսպիսի գրքեր հիմա դժվար է կարդալ, հանկարծ Սոֆիկա կտեսնի և կկարդա: Կանայք այսպիսի բաներ չպետք է կարդան: Ես ամբողջ գիշեր չեմ քնել: Այդ որքա՛ն արյուն, որքա՛ն դիակներ:

Սիրում էր լսել: Բանավոր խոսքը նրան մեծ ատաղձ էր տալիս, հատկապես բարբառների ուսումնասիրման համար: Սիրում էր չփվել ժողովրդի հետ, խոսքի բռնվել անգրագետ ծերունիների հետ, հարցեր տալ, առիթներ ստեղծել, որ նրանք

խոսեն և խոսեն իրենց բարբառով և ոչ թե գրական լեզվով: Ինչպես ասել ենք իր տեղում՝ դեռևս աշակերտական տարիներին, Պոլսում մի պատահական լազից սովորել էր լազերենը, որը հետագայում հնարավորություն տվեց նրան՝ աշխատություն գրելու լազերենի մասին և ներկայացնելու Փարիզի լեզվաբանական ընկերությունը: Սիրում էր գրույցի բռնվել սափրիչների հետ: Սափրիչները, — ասում էր նա, — չաղակրատ են լինում, գրույցի ընթացքում հանկարծ օգտակար, ինձ անծանոթ որևէ բառ կարող են գործածել:

Ասացինք, որ փողոցում կանգնած խոսելը համարում էր ժամավաճառություն: Պատմվում է մի դեպք, երբ խախտելով այդ սկզբունքը, Արուսյանով անցնելիս, մոտենում է մի խումբ դասախոսների, բարևում ու կանգնում: Դրանց մեջ եղել են Ն. Գյուլիքեվիսյանը, Յուլիկ Սանդաղյանը, Ն. Մանանդյանը և ուրիշներ: Ավելի քան մեկ ժամ նրանք խոսում են, վիճում, իսկ Աճառյանը միայն լսում է, հետո հանկարծ ասում է. — է՛հ, ես գնացի, դատարկ խոսքեր լսելու ժամանակ չունեմ, մի ժամ խոսեցիք, ինձ անծանոթ ոչ մի բառ չլսեցի:

Եթե սա Աճառյանին բնութագրող անեկղոտ է, մենք կարող ենք հիշատակել արդեն միանգամայն իրական մի այլ դեպք: Մի օր նա կոպում է կնոջ՝ Սոֆիկի հետ, արհեստականորեն բորբոքում կոիվը, այնքան բարձր բղավում, որ կինը հուսահատ սկսում է լաց լինել: Աճառյանը դրան էլ կարևորություն չի տալիս, շարունակում է վեճը: Հանկարծ ընդհատում է, փափկում և ասում. — Կատակ էր, Սոֆիկ ջան, ուզում էի որ ջղայնացած խոսես և տեսնեմ թե Ախտայի բարբառում ինձ համար ի՞նչ նոր բառեր կան: — Դե ասելիք էլի, ինչի՞ էիր կոպում: — Որ ասելի, դու կխոսելիք գրական լեզվով, բան դուրս չէր գա: Մարդիկ զայրացած ժամանակ են բարբառին դիմում և իրենց բերնից փախցնում բառեր, որոնք կարող են պետք գալ լեզվաբանին:

Հիսուն տարի շարունակ, 1903 թվականից մինչև 1953 թվականը նրա ուսանողների մեջ եղել են Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից եկած հարյուրավոր երիտասարդներ, որոնք իրենց ծնողներից լսելով մայրական բարբառը, իմացել են այն: Նրանք եղել են Աճառյանի ամենասիրելի ուսանողները: Սիրում էր նաև անգրագետ մարդկանց հետ գրույցի բռնվել: Եթե առիթը ներկայանում էր, սիրով գրուցում

էր նրանց հետ միշտ նույն ակնկալութեամբ, որ կարողանա որևէ բան վերցնել: Ինքն էլ սիրում էր այդ մարդկանց հետ խոսել նրանց բարբառով: Հաճախ է պատահել, երբ որևէ վայր այցելելիս հենց սկզբից տեղացիների հետ խոսել է նրանց բարբառով, երբեմն այնքան վարժ, որ մարդիկ կարծել են, թե իրենց երկրացի է:

Սիրում էր գրաբարը: Իսկ սա արդեն հոգեկան հաճույք էր նրա համար: Սիրում էր հատկապես 5-րդ դարի ոսկեդարյան գրաբարով խոսել իր աղջկա Քնարիկի և իր ուսանողներից մի քանիսի հետ, մանավանդ երբ տրամադրութունը տեղն էր լինում: – Մեր նախահայրերը այսպես էին խոսում,– ասում էր մի պահ տեղափոխվելով խոր անցյալը,– երբ կարդում ենք, չենք կարող պատկերացնել թե ինչպես էին հնչում, պետք է բարձր խոսել, որ այդ լեզվի համբ առնենք: Այսպես, հաճախ էր պատահում, որ հեռախոսով խոսելիս, իմանալով խոսակցի ով լինելը, գրույցը փոխում էր գրաբար և ասում.

- Զո՞ւվ խոսի ընդ ինձ:
- Գառնիկ խօսի ընդ ձեզ:
- Եկ այսր:
- Յորո՞ւմ ժամում:
- Յայսմ ժամում:
- Գամ:

Թատրոն, համերգ, կինո հազվադեպ էր գնում: Թատրոն սիրում էր, հայտնի է, որ ինքն էլ կազմակերպել էր «Մեծապատիվ մուրացկանների» ներկայացումներ, կատարել Մանուկ աղայի դերը, բայց չէր սիրում օպերան: Օպերային արվեստը համարում էր կեղծ ու անբնական: Ո՞վ է կյանքում,– ասում էր նա,– երգելով բարևում, միմյանց առողջութունը հարցնում: Սիրում էր հայ եկեղեցական երաժշտութունը, հաճախ ունկընդրում ուրիշների կատարմամբ, հուզվում,– մեր նախահայրերի խոսքն ու մրմունջն է, որ դարերի խորքից եկել հասել է մեզ,– ասում էր: Երբեմն էլ ինքն էր մրմնջում որևէ շարական, պատարագից որևէ հատված, մանավանդ կյանքի վերջին տարում: Մեծ սեր ուներ դեպի ժողովրդական երաժշտութունը, հայրենասիրական երգերը: Նրա առաջին կինը՝ Արուսյակը, օժտված է եղել գեղեցիկ ձայնով, հաճախ է երգել ժողովրդական երգեր, մեծ հաճույք պատճառելով ամուսնուն: Իր սիրած

երգչուհիներից էր Շողիկ Մկրտչյանը, որը երեսնական թվականներին ռադիոյի մենակատարն էր և շարունակ հանդես էր գալիս ժողովրդական երգերի կատարմամբ:

\* \* \*

Փորձը նրա ամենասիրած բանն էր: Մի փաստը սիրում էր տասնյակ անգամ ստուգել: Երբ Ա. Պայազատ անունով մի անձնավորություն օգտվելով Աճառյանի անսահման բարությունից հրապարակ հանեց «Ուարդերենի բանալին», սկզբում կասկածեց, որոշ բառեր հարցրեց ուրիշներին, ի վերջո տեղի տալով մարդու թախանձանքներին այդ գրքի մասին գրեց խիստ դրվատական առաջաբան, իսկ երբ գիրքը ջախջախվեց արտասահմանում Ն. Ադոնցի կողմից, խոր ծերություն հասակում հանձն առավ Գուրգեն Սևակի հետ զնայ Վարդաչեն և Նիժնի, տեղում ստուգելու համար Պայազատի բառերը. երբ վերջնականապես համոզվեց, որ խաբվել է, հոգեկան ծանր վիշտ ապրեց: Բայց Պայազատը չկար, որ վրեժը լուծեր:

Փաստերը փորձով ստուգելու տեսակետից հետաքրքրական է հետևյալ իրական դեպքը, որ մեզ պատմել է պրոֆ. դոկտոր Կարո Ղաֆաղարյանը: Մի օր Աճառյանը կանչում է իր ուսանողներից երկուսին՝ Կարո Ղաֆաղարյանին և Ա. Ղանալանյանին, ասում, թե լեզվաբանություն մեջ կա երկու տեսակետ, ոմանք գտնում են, որ մարդիկ խոսելուց առաջ բառերով են մտածում, ուրիշներ կարծում են, թե նախադասություններով են մտածում: Այս բանը ճշտելու համար լավ կլինի լսել Աչխարհրեկ Քալանթարի դասախոսությունը, քանի որ նա սովորություն ունի մտածելով խոսելու և բառերի կամ նախադասությունների վերջում մի քիչ կանգնելու ընդ ասելու: Առաջարկում է երեքով լսել դասախոսությունը, ստուգել, թե բառերից հետո է շատ ընդ ասում, թե նախադասությունից հետո: Մեկին հանձնարարում է առաջինը, մյուսին՝ երկրորդը, ինքն էլ հետևում է: Աչխարհրեկ Քալանթարը՝ անտեղյակ Աճառյանի մտադրությունից, ուրախանում է, որ նա աշակերտներով եկել է իր դասախոսությունը լսելու: 20–25 րոպե լսելուց հետո Աճառյանը հանկարծ տեղից բարձրանում է և բարձր ձայնով ասում. — Է՛հ, բավական է, բանի պետք չեկավ Աչխարհրեկի

գեկուցումը: Այս մարդը ո՛չ միայն բառերից ու նախադասու-  
թյուններից է ըըը ասում, այլ չինացիների նման վանկերից հե-  
տո էլ: Դասախոսը նոր միայն իմանում է, որ Աճառյանն ու իր  
աչակերտները լուռ նստել էին ոչ թե գեկուցումը լսելու, այլ  
ըըը-երը հաշվելու համար<sup>2</sup>:

Աճառյանը հետևողական էր իր համոզմունքների մեջ: Նա  
այն բացառիկ գիտնականներից էր, որոնք պաշտոնի, փողի  
համար երբեք իրենց կարծիքը չէին փոխում, չէին գործում  
իրենց խղճի դեմ: Կային լեզվաբաններ, որ համոզված լինելով  
հանդերձ Մառի ուսմունքի հակագիտականությունյան մեջ, հետե-  
վում էին նրան, իրենց թեզերը կառուցում նրա բանաձևերով և  
հետագայում էլ նույնքան հեշտությամբ փոխեցին:

Աճառյանը մերժեց այդ կեղծ ուսմունքը, հակադրվեց նրան՝  
կրելով այդ համառություն դառն հետևանքները ինչպես տե-  
սանք, անգամ այն օրերին, երբ վարչական որոշ գործիչներ,  
իրենց տգիտությունը միացնելով անսահման դաժանությունը,  
նրան հռչակում էին մարքսիզմի թշնամի, չխնայելով նրա ոչ  
տարիքին, ոչ գիտական վաստակին, ցուցադրում էր զարմա-  
նալի տոկոսություն, համբերություն: Կարծեք մի մարտիրոս  
էր, որ ամեն վիշտ, հոգեկան հարված տանում էր հանուն գի-  
տություն: Երբ հարվածը գալիս էր բարձրաստիճան պաշտոն-  
յաներից, նրանց նկատմամբ չէր գործածում որևէ վիրավորա-  
կան նախադասություն, ասելով թե պետությունը ընտանիքի  
հայրն է, որ իր որդիներին կարող է ծեծել և սիրել: Նրա այս  
բացատրությունը շատերն են լսել: Միշտ չէ որ, — ասում էր  
նա, — ընտանիքի հայրերը որդիներից լսելոք են լինում, կարող է  
պատահել հակառակը, բայց այդ չպետք է պատճառ դառնա,  
որ մարդիկ չհարգեն իրենց ծնողներին, դեմ դուրս գան նրան:  
Այդպիսի վերաբերմունք ուներ Հայաստանի այն ժամանակվա  
ղեկավարությունն նկատմամբ, սկսած բարձրից մինչև շրջկոմ-  
ների քարտուղարները:

Այդպես չէր վարվում, երբ հարվածը գալիս էր իրենց սկզբ-  
բունքը աճուրդի հանած լեզվաբաններից, որոնք հաճախ խո-  
սում կամ գրում էին անգամ իրենց սեփական կարծիքների դեմ,  
նայած թե քամին որ կողմից էր փչում: Նրանց նկատմամբ ան-  
ներող էր: — Երկերեսանիներ, տգետներ, ասում էր, — որն է ձեր  
դավանանքը:

Միսալ է տարածված այն կարծիքը, թե Աճառյանն առհասարակ մերժում էր Մառի արժանիքն ու դերը Հայագիտությունից զարգացման գործում: Մերժում էր լեզվաբան Մառին, ավելի ճիշտ՝ նրա ուսմունքը լեզուների առաջացման մասին, նրա հաբեթաբանությունը, բայց ընդունում էր ծառայությունները Հայագիտության մի շարք ճյուղերում: Բարձր էր գնահատում նրա աշխատանքը Վարդան Այգեկցու առակների գիտական հրատարակության, հետազոտման գործում: Գնահատում էր նրան որպես խոշոր հնագետ, մանավանդ Բագրատունիների մայրաքաղաք Անի քաղաքում նրա կատարած պեղումները, այդ պեղումների արդյունք նրա հնագիտական հետազոտությունները, նրա նշանավոր «Անի» աշխատությունը: Մառին համարում էր Անիի մշակույթի երևան հանողն ու բացահայտողը: Եվ վերջարպես, ասում էր նա, Մառին ենք պարտական Հայ քանդակագործությունից երևան հանումը Գագիկի Հայտնի քանդակի շնորհիվ: Երբ 1950 թ. Մառի լեզվաբանական ուսմունքը ենթարկվեց արդարացի քննադատությունից, դժգոհ էր, որ ժխտվելով լեզվաբան Մառը, երևան չէր հանվել ու գնահատվել հայագետ, կովկասագետ Մառը, որ առիթ պիտի տար մերժելու մեծ ու երախտավոր գիտնականի ամբողջ ժառանգությունը:

Աճառյանի համառությունից երկրորդ առիթը Մ. Աբեղյանի նոր ուղղագրությունն էր: Նախորդ էջերում տեսանք, թե որքան համառորեն մերժել էր այդ ուղղությունը ի գին նյութական և բարոյական մեծ վնասների:

Աճառյանի գիտական աշխատությունների համար բնորոշ է մտածողությունից հստակությունը, պարզությունը և որոշակիությունը: Դա արտահայտվում էր և՛ նրա ստեղծագործություններում, և՛ դասախոսություններում, և՛ առանձին զրույցների ժամանակ: Օժտված էր ամենաբարդ միտքը ամենապարզ ձևով բացատրելու զարմանալի կարողությամբ: Նրա լեզվի պարզությունը կարելի է համեմատել միայն Հ. Թումանյանի ու Հ. Պարոնյանի հետ: Բայց վերջիններս գեղարվեստական երկեր են գրել. այլ է գիտությունը, այն էլ լեզվաբանությունը, որը նրա գրչի տակ կորցնում էր իր բարդությունը, ձանձրալիությունը, դառնում հեշտ ընթերցվող, հեշտ ընկալվող ուսմունք: Դասախոսություններում, անգամ ստեղծագործություններում նա մատուցվող միտքը հեշտ տեղ հասցնելու համար սիրում էր



օժանդակ միջոցների դիմել, բերել բնորոշ օրինակներ, պատմել անեկղոտներ: Նրա գլուխգործոց երկերում անգամ, ինչպես «Արմատական բառարանում», «Հայոց լեզվի պատմության» մեջ սփռված են մանրադեպեր, կենսագրական մանրուքներ, հարակից եղելություններ, որոնք ավելորդ չեն և օգնում են տվյալ փաստի ընկալմանը: Դեմ էր Մառի ուսմունքի ոչ միայն բովանդակությունը, այլև նրա ոճին, համարում էր այն բարդ ու մանվածապատ, ստիպելով ընթերցողին, նույնիսկ մասնագետ ընթերցողին, մի քանի անգամ կարդալու որևէ հատված:

Այժմ կանգ առնենք Աճառյանի բնավորության այլ գծերի վրա, որոնք բնութագրական են մարդ քաղաքացու համար: Իր խառնվածքով շատ ակտիվ նկարագիր էր: Անտարբեր չէր շըրջապատում կատարված դեպքերի նկատմամբ, լինեին դրանք քաղաքական թե կենցաղային: Ճիշտ է, զգուշ էր քաղաքական կյանքի մասին անտեղի շաղակրատություններ անելուց, բայց արտահայտում էր վերաբերմունքը շատ զուսպ: Բացառիկ հետաքրքրություն էր հանդես բերում հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված հարցերում: Հայտնի է, որ 1915 թ. մի ամբողջ գիրք էր գրել այդ մասին, մի գիրք, որը ոչ մի կապ չուներ իր մասնագիտություն հետ: Իր խնայած նյութական միջոցներով ցանկացել էր Արևմտյան Հայաստանում հիմնել լեզվաբանական դպրոց, եթե Արևմտյան Հայաստանին տրվեր ինքնավարություն: Լենինականի երկրաչարժից տուժածների, Կուբանի սովյալների համար կատարված հանգանակությունների օրերին նա այնպիսի մեծաքանակ օգնություն էր մասնակցել, որ անեկղոտներ են ստեղծվել դրանց մասին:

Սովորություն ուներ օգնելու կարիքավոր մարդկանց, հատկապես ուսանողներին, եթե նրանք խոստումնալից պատանիներ կամ աղջիկներ էին: Գրեթե միշտ 1-2 ուսանող նրանից ստացել են ամսական օժանդակություն այնքան կանոնավոր, որ կարծեք պետականորեն սահմանված օգնություն լիներ: Դրանցից մի քանիսը հետագայում դարձել են ականավոր գիտնականներ:

Ծնված արհեստավորական ընտանիքում, մեծացած չարքաչ կյանքով, տոգորված ամբողջապես մարդասիրական գաղափարներով, ամենաանկեղծ զգացումներով կապված էր աշխատավորական խավերի հետ, միայն ուսանողներին չէր, որ օգ-

նություն էր ցույց տալիս, քանի՛ քանի՛ կարիքավորներ, աքսորից վերադարձած մարդիկ իրենց առաջին օրերի դժվարությունները հաղթահարել են նրա նյութական օժանդակությամբ: Նա նրանց տվել է անվերադարձ գումարներ, նույնիսկ հագուստներ է պատվիրել:

Այս բոլորի ընթացքում միշտ պահել է իր հիմնական տարօրինակութունը հանդիսացող կոպեկի հաշիվը. պատահել է, որ իր գրաչարի հիվանդության ժամանակ նրա տունն է ուղարկել հազար ուրբի, բայց նույն գրաչարին վշտացրել է ինչ որ հինգ կոպեկի համար: Պատմվում է այսպիսի մի իրական դեպք: Մի անգամ նրա ասպիրանտներից մեկը փողի կարիք է զգում կոչիկ առնելու համար: Դիմել է ընկերներին, խորհուրդ են տվել խնդրել Աճառյանից, լավ իմանալով, որ իր ուսանողական ամբողջ տարիները ծայրաստիճան աղքատության մեջ անցկացնող լեզվաբանը կընդառաջի: Աճառյանը սիրով համաձայնվել է բայց իսկույն էլ ասել.

– Վերադարձնելո՞ւ պայմանով ես ուզում, թե անվերադարձ:

– Վերադարձնելու:

– Բայց դա ավելի դժվար է, եթե վերադարձնելու պայմանով ես ուզում, պիտի ասես, թե երբ ես վերադարձնելու և նույն օրը պիտի վերադարձնես, իսկ եթե անվերադարձ է, հարցը հիմա կվերջանա, կամ կտամ, կամ չեմ տա, երկու դեպքում էլ հետագայի գործ չի մնա:

– Վերադարձնելու պայմանով, համառում է ասպիրանտը:

«Կամ կտամ, կամ չեմ տա»՝ իհարկե թեական չէր, նա կտար անպայման, քանի՛ քանիններն էին ստացել նրանից այդպիսի գումարներ: Իսկ երբ ժամկետ էր սահմանում, նշում էր իր մոտ ու նույն օրը պահանջում գումարը, նրա բնավորութունը չհասկացող մարդկանց վրա թողնելով այն տպավորությունը, թե գործ ունեն դաժան մարդու հետ: Աճառյանի այս տարօրինակութունը ցուցադրող լավագույն մանրադեպքը, որ արդեն մոտ քառասուն տարի է պատմվում է մեր մտավորականության շրջանում, կապված է ինժեներ Աշոտ Մոխսեիչի հետ, կենսուրախ, կատակասեր, շատ հետաքրքիր անձնավորություն, որն ավելի շատ սիրում էր բաժակ խփել վարորդների հետ, քան իր պաշտոնակից պրոֆեսորների հետ սեղան նստել: Ըստ երևույթին չմերժելու համար մեծ լեզվաբանին, նա էլ է բաժա-

նորդագրվում «Արմատական բառարանին», որից իհարկե ոչինչ էլ չի հասկանա: Ամեն անգամ, որ պրակ առ պրակ ապակետիպով բազմացնում էր Աճառյանը «Արմատական բառարանը», թեև տակ դրած, ցրիչի փոխարեն անձամբ տանում բաժանում էր բաժանորդներին: Պրակը արժեր երեք ուրբի: Նա հանձնում է նաև Աշոտ Մոխսեիչին: Վերջինս առնում է, առանց անգամ վրան նայելու գցում դարակի մեջ: Աճառյանը պահանջում է արժեքը: Ասում է, թե չունի, հետո կտա: Բայց հետո էլ չի տալիս: Զվարճասեր մարդն ամիսներով ձգձգում է: Մի անգամ Աճառյանը տեսնում է, որ Աշոտ Մոխսեիչը կանգնած գարեջուր է խմում: Մոտենում է: Աշոտը կանչում է և գարեջուր պատիվ անում: Աճառյանը հրաժարվում է և բոլորի ներկայությամբ ասում.— Գարեջրի փող ունես, «Արմատական բառարանի» պարտքը տալու փող չունե՞ս: Աշոտը ծիծաղում է: Աճառյանը մոտենում է նրան, քաշում մի կողմ և ասում.— Աշոտ, եթե փող ունես և չես տալիս, անամոթություն է, եթե փող չունես, ես տամ երեք ուրբին, վճարիր պարտքդ: Աշոտը համաձայնվում է, բայց հենց որ երեք ուրբին առնում է, փոխանակ պարտքը տալու, ընկերներին հրավիրում է գարեջուր խմելու և այնպես էլ տասնյակ տարիներ խաղացնում է Աճառյանին: Մահվան օրը՝ Աճառյանի դագաղի վրա անկեղծորեն լաց լինողներից մեկը եղավ Աշոտ Մոխսեիչը:

Օգնում էր աղքատներին, բայց օգնում էր հետևելով քրիստոնեական այն սկզբունքին, թե աջ ձեռքի տվածը ձախը չպետք է իմանա: Շատ հավաքարարների, պահակների և համեստ ոռճիկով ապրող այլ մարդկանց օգնել է փողով: Գրանցից միայն մեկն է իմացվել ու տարածվել ժողովրդի մեջ: Այդ էլ ցանկանում ենք գրի առնել ու հանձնել պատմությունների: 20-ական թվականների վերջերին Երևանում եղել է մի մուրացիկ՝ Նաչիկ անունով, սովորություն է ունեցել չրջագայելու ընդհանուր առմամբ Արովյան և այլ փողոցներում, հաճախ է առիթ ունեցել փող խնդրելու Աճառյանից: Աճառյանը մի օր հրավիրում է նրան իր սենյակը, հետաքրքրվում նրա անցյալով, հարցնում է, թե մուրացկանությունը որքան է փող վաստակում: Երբ իմանում է, որ նա չնչին գումար է չահում, հազիվ հացի փող, որը չի անցնում ամսական երեսուն ուրբուց, ասում է.

– Խաչիկ եղբայր, հայ ժողովուրդը աշխատասեր ժողովուրդ է, ամոթաբեր է մուրացկանությունը, թո՛ղ այդ արհեստը: Ես քեզ ամեն ամիս երեսուն ուրլի կվճարեմ, պայմանով, որ այլևս ձեռք չերկարես մարդկանց, ես էլ շատ ծանր օրեր եմ ունեցել, բայց մուրացկանության չեմ դիմել, հետո կաշխատես կամաց-կամաց կարգի կընկնես: Խաչիկը համաձայնվում է, խոստանում կատարել: Հաջորդ օրվանից նա փողոցներում չի երևում, բայց ամեն ամիս կանոնավոր ստանում է փողը:

Այս բոլորից հետո ծիծաղելի թշուրհմացություն պիտի համարել Աճառյանին մոտիկից չճանաչող մարդկանց այն կարծիքը, թե նա ժլատ է եղել: Նա կոպեկի հաշիվ պահել է, բայց դա ոչ թե եղել է արդյունք նրա ժլատության, այլ տարօրինակ սովորության: Տարօրինակ սովորության, որին նա այնքան հավատարիմ էր, որքան իր գիտական սկզբունքներին:

Արդուզարդի նկատմամբ զարմանալի անփույթ էր: Անցյալում փորձել է համեմատաբար մաքուր հագնվել, բայց հատկապես վերջին քառասուն տարիների ընթացքում դրան ուշադրություն չէր դարձնում: Ինչպես ցույց են տալիս նրա հին նկարները, Շուշում պաշտոնավարելիս փողկապ էր կապում, այն էլ մոդեռն ձևի փողկապ, ապա Երևանում, հատկապես կոջ մահից հետո, երբեք չէր սիրում փողկապ կապել ու չկապեց, միայն լուսանկարվելու առիթով, այն էլ շատ մեծ անախորժություններով տիկին Սոֆիկը կապում էր և հենց որ լուսանկարվում էր, իսկույն հանում էր, կարծեք խեղդում էր այդ փողկապը իրեն: Մի հետաքրքիր մանրադեպ էլ կապված է նրա այս սովորության հետ: Մի օր Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը փողոցում հանդիպում է Աճառյանին և հարցնում թե ուր է գնում.

– Համալսարան, դասախոսություն,– պատասխանում է Աճառյանը:

– Այդ արտաքինո՞վ,– հարցնում է Հովհաննիսյանը:

– Ի՞նչ վատ արտաքին է:

– Առանց փողկապի՞:

– Ես սովորություն չունեմ փողկապ կապելու:

– Բայց դուք դասախոս եք և պարտավոր եք կապել: Անկուտուրականություն է առանց փողկապի լինելը:

– Մի՞թե,– հարցնում է Աճառյանը զարմացած:

– Այո՛,– պատասխանում է Հովհաննիսյանը կտրուկ:

– Եթե անկույտուրականություն է, ապա ինչու ընկեր Ստալինը երբեք փողկապ չի կապում, ես նրան եմ հետևում:

Ամռանը Աճառյանը սիրում էր հագնել բաճկոն, սպիտակ վերնաշապիկ, որի օձիքները դարձնում էր բաճկոնի վրա: Շալվարը որքան էլ որ արդուկեին միշտ ճմրթված էր լինում: Քայլում էր թույլ կաղալով, որը նկատելի էր հատկապես կյանքի վերջին տասնամյակում:

Ձմռանը հագնում էր մեծ քուրք, որը հաճախ չէր հանում նաև դասախոսությունների ժամանակ, եթե ցուրտ էր լինում համալսարանը: Ընդհանուր առմամբ սիրում էր ման գալ գրլխաբաց, բայց ուներ մի լավ փափախ:

Մինչև 1935 թվականը սիրում էր պահել մորուք և բեղեր, անգամ ոլորել բեղերը դեպի վեր, սակայն հետագայում կտրեց դրանք:

Հագուստ կապուստի մեջ անփույթ լինելով հանդերձ, արտակարգ մաքրասեր էր: Ճիշտ է, նրա ամուրիություն չըջանում տանը ամեն ինչ կարգին չէր, դեղնել էին սննդամթերքի պահարանի փեղկերին փակցված լրագրերը, բայց հետևում էր անձնական մաքրությունը: Սովորություն չուներ ատամները լվանալ վրձինով: Ինչ որ բժիշկ խորհուրդ էր տվել զգուշանալ վրձինից, նախահայրերի օրինակին հետևելով մաքրում էր ցուցամատով և ուներ շատ առողջ ատամներ: Սովորություն ուներ պարբերաբար գնալ ատամնաբույժի մոտ և ստուգել տալ, թե որևէ ատամ փչանո՞ւմ է: Արտակարգ զգույշ էր միկրոբներից, որևէ բան չեր ուտում առանց լվանալ տալու: Նրա աշակերտներից մեկը ուշագրավ մի դեպք է պատմում Թավրիզի շրջանից: Մի անգամ նրան ուղարկում է միս բերելու: Պատվիրում է: – Կգնաս չուկա, կգնես երկու կիլո միս, պետք է նոր մորթած լինի, որձ ոչխար լինի, մսագործը մաքուր հագնված, ածիլված լինի, ձեռքի եղունգները կտրված լինեն:

Կյանքի վերջին տարիներին էլ պահում էր նույն բժախընդրությունը, զգույշ էր մարդկանց հետ խոսելիս: Սափրվում էր շաբաթը մեկ անգամ: Սափրվելու օրը տրամադրությունը տեղն էր լինում:

Գրում էր աշակերտական թանաքաման օգտագործելով, մի թանաքաման, որի մեջ հաճախ թանաքն այնքան քիչ էր լինում,

որ գրիչը թաթախելիս մի քանի անգամ ցնցում էր այն: Սիրում էր գրել անչնորհք կտրված թղթերի, նամակների ազատ մասերի, հաճախ նույնիսկ օրվա լրագրերի լուսանցքների վրա, որոնք նա սոսնձով կպցնում էր միմյանց, մանավանդ երբ անհրաժեշտ էր լինում կատարել որևէ հավելում: Կարդում էր խոշորացույցով, կիսավնասաված միակ աչքը պահելով խոշորացույցի վրա:

Ուներ շատ զգայուն հոգի, կարծեք մի քնքուշ ծաղիկ էր, որ ամենափոքր զեփյուռից ազդվում էր: Անցյալի վերհուշի ժամանակ հազվադեպ էր պատահում, որ պատմի որևէ տխուր դեպք, մանավանդ իր սերնդակից մտավորականությունից մասին և չհուզվի, անգամ լաց չլինի: Այդպես զգայուն էր և՛ անձնական զրույցների ժամանակ, և՛ դասախոսությունների: Երբ դասախոսելիս նյութի հետ կապված լիրիկական շեղումներ էր ունենում, տեսնում էինք, թե ինչպես է խոնավանում նրա աչքերը: Հոգեպես ավելի շատ կապված էր ոչ թե մոր հետ, այլ կոչիկներ նորոգող հոր հետ, որը նստած էջմիածնի խարխուլ տնակներից մեկում առավոտից մինչև երեկո կոչիկներ էր նորոգել ու ապահովել ընտանիքի կարիքը, թեթևացրել Աճառյանի բեռը: Հոր մասին խոսելիս իսկույն թրթռում էր նրա ձայնը, հուզվում էր, արտասավում: Նրա կարճ հերունը, որով նա փայտիկներ էր խփում կոչիկների ներբաններին, որպես հիշատակ պահել էր մինչև կյանքի վերջը և երբեմն մտերիմ մարդկանց ցույց էր տալիս, կարծեք Լուվրի թանգարանի գանձերից մեկը լիներ: Այդ բացառիկ սերը հաշվի առնելով՝ նրա մահից հետո, երբ Գրականություն և արվեստի թանգարանում ստեղծվեց անկյուն մեծ լեզվաբանի համար, ի թիվս նրա սիրած իրերի՝ սուրճի բաժակի, աշակերտական թանաքամանի և այլն, արժանի տեղը գտավ նաև հերունը, որը պատմում է Աճառյանների ամբողջ գերդաստանի նախասովետական տարիների տառապալից ու չարքաչ կյանքը:

Բայց նա ոչ մի դեպքի ու անձնավորությունից մասին պատմելիս այնքան չէր հուզվում, որքան իր դժբախտ կնոջ մասին խոսելիս: Նրա զրուցակիցները խուսափում էին Արուսյակի մասին ակնարկելուց, որովհետև հուզվում էր, գրեթե հեկեկում, վերհիշելով նրա դառը ճակատագիրն ու դժբախտ վախճանը:

Շատ էր սիրում ծաղիկներ: Իմանալով այդ, նրա ուսանող-

ները հաճախ թարմ ծաղիկներ էին բերում ու դնում կամ լսա-  
րանում կամ տանը՝ նրա գրասեղանին: Տանն իր ընդունարա-  
նում ստեղծել էր ծաղիկների, կանաչ թփուտների մի անկյուն:  
Նստած նրանց մոտ՝ հաճախ ասում էր. – Այսպես կանաչների  
մոտ՝ մարդ իրեն զգում է անտառում, ինչ լավ է, ինչ հաճելի:  
Ծաղիկը, – ասում էր թրթռացող ձայնով, – չունչ ունի, հոգի  
ունի, մարդու պես զգայուն է, չպետք է տրորել այն, մանա-  
վանդ որ մարդ արարածը հնարավորություն ունի իր վշտերը  
հայտնելու, պահանջելու, իրեն տրորողների դեմ բողոքելու, իսկ  
ծաղիկը հնարավորություն չունի: Լուռ կարող է արտասվել:

Սիրում էր նաև կենդանիներ: 1931–32 թվականներին պա-  
հում էր մի շնիկ, որին ինքն էր կերակրում, խնամում, հաճախ  
զրուցում նրա հետ, հանդիմանում: Անպիտան, – ասում էր, ին-  
չո՞ւ ես սենյակը տակն ու վրա արել: Այդ ժամանակ տանը նրա  
միակ ընկերը այդ շնիկն էր: Պատերազմի տարիներին կինը հա-  
մոզեց նրան՝ մի կով գնել, որը պահում էին գյուղում, օգտվում  
կաթից ու մածնից: Այս «անասնապահությունը» այնքան էլ  
սրտովը չէր: Պետք էր տեսնել Աճառյանի ուրախությունը սա-  
կայն, երբ կովը հորթ ունեցավ, կարծեք նրանց տանը երեխա  
էր ծնվել: Հորթը բերել տվեց քաղաք, պահում էր սենյակում,  
կերակրում անձամբ, հացի վրա կարագ քսում ու դնում բերա-  
նը: Կենդանին այնքան էր սովորել, որ սեղան նստելիս դունչը  
երկարում էր նրա թևի տակից դեպի սեղանը, Աճառյանը հացի  
կտորը դնում էր բերանը, խոսում հորթի հետ, ինչ որ բաներ  
բացատրում, փաղաքշում, իսկ կենդանին իր ախորժալուր մա-  
յունով խանդավառում էր նրան: Ուներ և մի կատու, որին  
նույնքան սիրում էր, շարունակ նստեցնում ծնկներին, շոյում:  
Այսպես շարունակվում է մինչև այն օրը, երբ չարաճճի ու խա-  
ղասեր կատուն՝ օգտվելով մենակությունից, տակն ու վրա է  
անում «Տեղանունների բառարանի» քարտարանը: Գալիս է,  
տեսնում պատահածը, նոր միայն զայրանում, դուրս գցել տա-  
լիս կատվին, բղավելով. «Այս կատուն էլ X-ի նման սրիկա  
դուրս եկավ»: Դրանից հետո այլևս կատու չէր պահում:

Հետևում էր առողջությունը, սնվում էր լավ, ուներ ախոր-  
ժակ, սիրում էր պոլսական կերակուրներ: Երբ ամուսնացավ  
տիկին Սոֆիկի հետ, դրած պայմաններից մեկն էլ այն էր, որ  
Սոֆիկը պարտավոր էր կարճ ժամանակում սովորել պոլսա-

կան կերակուրները, հատկապես ձիթայուղով պատրաստված կերակուրները: Պատահում էր, որ երեկոյան 10-ին անգամ ուտում էր դժվարամարս բաներ՝ ձկնկիթ, ձուկ, ձու, ապուխտ և մարսում էր: Բացատրում էր նրանով, որ ատամներն առողջ են: Արաբերեն մի առած էր ասում, որի իմաստն այն էր, թե առողջ ատամը առողջ մարմնի բանալին է:

Իր մանկությունն ու պատանեկությունն անցկացնելով այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ամբողջ ճակատով պայքար էր մղվում կրոնի և միստիցիզմի դեմ, մանավանդ Փարիզում չփոխելով ֆրանսիական առաջավոր մտքի հետ, դերժ էր մնացել կրոնական կաշկանդումներից: Բայց ֆրանսիական կենցաղի որոշ կողմեր ազդել էին նրա վրա: Ուներ նախապաշարումներ, օրինակ հետևելով շատ ֆրանսիացիների օրինակին 13 թվանշանը չէր գործածում: Այդ թվանշանի վրայից անցնում էր 12+1 գրելով, իսկ եթե նամակ էր գրում, ամսաթիվը դնում էր 12 կամ 14: Երբ հարցնում էին նրան, թե ինքն այդքան ազատամիտ լինելով ինչու է հետևում նման նախապաշարման, պարզապես սովորություն է, ասում էր: Անհատական գրույցի ժամանակ ամենեկին կարևորություն չէր տալիս դրան և առհասարակ չէր տառապում կասկածամտություններ, վերջին տարիներին ասում էր, թե բանտում նրա այցելությունն սահմանված օրերը, ուրեմն իր համար ամենաթանկագին օրերը դուրս գալիս էին ամսի 13-ին, թեև բանտից դուրս գալուց հետո էլ զարմանում էր, թե ինչու Ստալինի երկերի ժողովածուի տպագրությունը 13-րդ հատորի վրա կանգնեց, երբ նա ուներ դեռ շատ երկեր ու ինքն էլ ողջ էր: Չէր հավատացել Աստծո գոյությունը, բայց սիրում էր հայոց եկեղեցին որպես ազատության պահպանման կենտրոն, սիրում էր հատկապես հնագույն տարիներից սերունդներին փոխանցված պատարագի երաժշտությունը<sup>3</sup>:

Աճառյանի համար բնութագրական է ակտիվ վերաբերմունքը հասարակական սեփականություն պահպանման նկատմամբ: Լինելով ջանասեր, օրինապահ մարդ, չէր կարողանում հանդուրժել պորտաբույծներին, անբաններին, ուրիշի աշխատանքով պարողներին, խաբողներին, հատկապես հանրային սեփականությունը հափշտակողներին: 1920-ական թվականների վերջերին հանրային զրադարանում կատարվեց մեծ գո-



դուլթյուն: Գողացվեցին հարյուրավոր գրքեր: Գողերը բռնը-վեցին: Տեղի ունեցավ հասարակական բաց դատ և ինչ եք կարծում որպես հասարակական մեղադրող հանդես եկավ մի մարդ, որն ամբողջ կյանքի ընթացքում դատ դատաստանի հետ գործ չէր ունեցել՝ Հրաչյա Աճառյանը: Նա խոսեց ցասուժնալից մի ճառ, պահանջելով խստորեն պատժել այն մարդկանց, որոնք գողանալով գրքեր, սերունդներին զրկում էին դրանք օգտագործելու հնարավորությունից:

Այսքան անզիջող դիրք գրավելով գողերի ու անբանների նկատմամբ, սիրով իր նյութական միջոցները, դրանից ավելի թանկ, ժամանակի զգալի մասը տրամադրել այն մարդկանց, որոնց մեջ տեսնում էր ապագա, վստահ էր, որ կարող են օգտակար հանդիսանալ գիտությունը: Այլ չափանիշ չուներ: Ձեր պատկերացնում ինքնանպատակ գիտություն՝ գիտության համար: Մեր այժմյան հայագետներից շատ շատերը վայելել են մեծ գիտնականի ժամանակը օգտագործելու լայն հնարավորությունը: Սուսափում ենք այստեղ անուններ հիշատակելուց, այդ ընկերների ինքնասիրությունը չվիրավորելու համար, բայց արդարությունը պահանջում է արձանագրել, որ Աճառյանը, ինչպես այդ կատարել էին իր սիրելի ուսուցիչները՝ Մեյեն և Հյուբշմանը Փարիզում ու Ստրասբուրգում, բազմաթիվ ուսանողների հետ տանը պարապում էր առանց որևէ ակնկալություն ու նյութական վարձատրություն, ավելին՝ նրանց առաջ բաց էր անում իր մտքի գանձարանների դռները, տրամադրում ձեռագրերը, հաճախ հայտնում տեսակետներ, որոնք գուցե դեռ գրի չէին առնվել: Փողի հարցում այնուամենայնիվ հաշիվ պահելու որոշ տարօրինակություն ունեցող մարդը գիտության հարցում չուներ ոչ մի պայման, զգուշացում, նկատառում: Դրանք բոլորը ամփոփված էին հովանավորչալի ապագա խոստանալու հավաստիացման մեջ: Ընդունում էր նման ուսանողներին մեծ սիրով, առանց որևէ տրտունջի, դժգոհություն, դժկամություն արտահայտող որևէ երանգի: Եվ սովորեցնում էր, և նրանց հետ սուրճ վայելում, հաճախ էլ խնդրում, որ սեղանակից լինեն իրեն: Այսպիսի հյուրասիրական, ամենամտերմիկ պայմաններում օժանդակել է տասնյակ մարդկանց, որոնցից հատկապես երեքը իրենց ապագա գիտական ամբողջ հաջողությունը պարտական են մեծ ուսուցչապետին: Դրանցից

մեկը, որից նա ուզում էր իրեն փոխարինող պատրաստել, արդարացրեց ուսուցչի հույսերը, դարձավ նշանավոր գիտնական, Աճառյանի մահից հետո մեծ դեր կատարեց նրա գրական ժառանգության հրատարակման ուղղությունը, ավելի ժամանակ հատկացրեց այդ ժառանգության հեղինակի կողմից չհասցված մասերը ուղղելու, շտկելու, տպագրելու վրա, քան գուցե իր սեփական աշխատությունները:

Այդ գիտնականն իմ դասընկեր է. Աղայանն էր:

Շղան նաև աշակերտներ, որոնք ապերախտ գտնվեցին և՛ նրա կենդանության օրերին և՛ կենդանությունից հետո: Այդպիսին էր այժմ դարձյալ բարձր դիրքերի հասած մի անձնավորություն, որին Աճառյանը տանը անկեղծ, բարեկամական միջնորդություն, առատաձեռն հյուրասիրություն պայմաններում մի քանի տարի շարունակ սովորեցրեց լեզու, որովհետև առանց այդ լեզվի նրա ընտրած բնագավառը փակ սենյակ կարող էր մնալ մինչև վերջը: Նա մի քիչ սովորեց, դարձավ դոկտոր, ունեցավ բարձր պաշտոններ, բայց զարմանալի ապերախտությամբ խորապես խոցեց իր բարերարին ու հովանավորողին, այն աստիճան, որ Աճառյանը դառնացած, անզամ հուսահատ, այլևս չէր էլ ուզում նրա անունը լսել, երբ ցանկանում էր պատմել այդ մասին, «այդ հերիֆը» արտահայտությամբ հասկացնում էր թե ում մասին էր խոսքը:

Հակառակ իր բազմազբաղ վիճակին, սիրահոժար համաձայնվում էր ընդդիմախոս լինել շատ դիսերտացիաների, կարծիքներ տալ այս կամ այն աշխատության մասին: Ի բնե բարի, ազնիվ, վատություն անելու անկարող գիտնականը, որ իր ամենաոխերիմ հակառակորդների նկատմամբ անզամ չէր կարողանում չարություն բանեցնել, բոլորի աշխատությունների մասին դրական էր գրում: Դժբախտաբար երբեմն խաբվում էր, հաճախ օգտագործում էին նրա անսահման բարությունը և դրական կարծիքներ կորզում այնպիսի երկերի, գիտական աշխատությունների մասին, որոնք իրենց մանկամիտ էությունը այլ դեպքերում Աճառյանից կարող էին ծիծաղ միայն լսել: Բայց արժանանում էին նրա լուրջ ու ծանրակշիռ ստորագրությամբ գնահատականներին, որը հետագայում որպես վահան օգտագործում էին իրենց քննադատների դեմ: Այդպես վարվեց Աբգար Պայազատն իր «Սալդերենի բանալին» գրքի համար:

Այդպես վարվեց Աճառյանի կնոջ ազգականներից մեկը, որ բարձրացավ մինչև դոկտորություն աստիճանի առանց մեծ արժանիքներ ունենալու: Գիտական բարեխղճություն մեջ օրինակ հանդիսացող մեծ գիտնականը նման բարերարություններով անուղղակի կերպով քաջալերում էր պատահական մարդկանց մուտքը դեպի գիտություն տաճարը, որը ինքը նվաճել էր այնքան ծանր, տառապալից կյանքով, հազարավոր անքուն գիշերներով:

Աճառյանը միամիտ էր, մանկան չափ միամիտ: Այս հարցում դժվար է գիտական աշխարհում գտնել մի ուրիշին էլ, որ մրցի նրա հետ: Աշխարհ տեսած, կյանք տեսած, բազմաթիվ երկրներ թափառած, տարբեր բնավորություն տեր մարդկանց հետ չփում ունեցած, հաճախ խաբված, հետևաբար խաբեբայի էությունը ճանաչած մարդը մնացել էր նույն միամիտը, նույն երագողը, ոտմանտիկը, որն իր հոգու նման հստակ էր տեսնում գիմացիին, անկախ այն բանից, թե որքան էր փոխվել աշխարհը, ապականվել բարքերը, խաթարվել բարոյական շատ հասկացողություններ ու ըմբռնումներ:

Նրա մասին հյուսված անեկդոտներից շատերը բնութագրական են այս տեսակետից: Մենք դրանք չենք պատմի, բայց գրի կառնենք իրական մի դեպք, որ պատահել է նրա բանտարկության շրջանում: Բանտում նա ուզում է դիմում գրել Ստալինին, բացատրել, թե ինքը մի ծեր գիտնական, հիսուն տարի աշխատել է միայն գիտություն համար, քաղաքական գործունեություն չի ունեցել և որ այժմ իզուր իրեն բանտարկել են: Գրում է դիմումը: Բայց վստահ չէ, թե այն տեղ կարող է հասնել: Մտածում է և գտնում մի միջոց, միամիտ, պարզունակ, երեսխայական միջոց, որը սակայն կիրառում է: Նա իր ոտսերեն դիմումի սկզբում լատիներեն լեզվով գրում է «Հայր մերը»: Երբ իր բախտակից ընկերները հարցնում են, թե ինչու է այդպես անում, պատասխանում է: — Երկու նպատակով: Նախ լատիներեն տառեր տեսնելով պիտի կարծեն թե արտակարգ ինչ-որ բան է և ուզեն չուզեն դեն չպիտի գցեն ու պիտի կարդան, զեկուցեն նրան՝ ում հասցեագրված է, և երկրորդ՝ այդ հասցեն շատ փառասեր է, կարող է Աստծո համար ասված այդ բոլոր խոսքերը վերագրել իրեն, շարժել գուլթը և ազատել Աճառյանին:

Քանի՛ք քանի՛ նման փաստեր կարելի է բերել նրա միամտությունը ցույց տալու համար: Պետք էր տեսնել՝ որքան համոզված խոսում էր այն մասին, թե գազարը շոկոլադից ավելի օգտակար է, բայց մարդիկ չիմանալով նրա օգտակարությունը և հաշվի առնելով նրա էժանությունը, չեն ուտում, եթե իմանան նրա օգտակարությունը, գազարի կիլոն տասնյակ ուրբիների կբարձրանա...

Ասացինք, որ անսահման հոգատար էր խոստումնալից երիտասարդների նկատմամբ, բայց և քաջալերող չէր ծուլերին ու այն երիտասարդներին, որոնք սխալ ընտրելով իրենց մասնագիտությունը, իզուր ժամանակ էին վատնում: Ճիշտ է նա դասախոսությունների ընթացքում երբեք չէր կիրառում թվանշաններով ուսանողներին պատժելու մեթոդը, շատ հազվադեպ էր պատահում, որ մեկն ու մեկը նրանից անբավարար գնահատական ստանար, բայց և չէր հանդուրժում ծուլերին, առաջարկում էր նրանց հստակ պատկերացնել իրենց ապագա մասնագիտությունը, սովորել օր ու գիշեր: Իսկ երբ նկատում էր, որ այս կամ այն ուսանողի մոտ բթամտությունը, ծուլությունը միանում էր ամբարտապանություն, հարզանքի պակասի դեպի առարկան, այդպիսիների նկատմամբ լինում էր անողորմ: Այսպես նրա ուսանողներից մեկը գրաբարի հետ գլուխ չուներ, չէր հասկանում մանավանդ քերականական օրենքները, որքան էլ երկար բացատրվեին դրանք: Մի օր, երբ նորից ու նորից բացատրեց հայցական հոլովի կիրառությունն ու այդ ուսանողը այնուամենայնիվ չհասկացավ, նա սաստիկ դայրացած, հարկադրված եղավ ասել. – Քեզնից լեզվաբան դուրս չի գա, տղաս: – Հապա ի՞նչ դուրս կգա, ասաց ուսանողը ծիծաղելով: – Գնա դղում ծախիր, ավելի հեշտ է, ասաց, բայց իսկույն էլ փափկեց, մոտեցավ ուսանողին, շոյեց գլուխը, հանգիստ բացատրեց, թե չիմանալը ավելի փոքր հանցանք է, քան չսովորելը:

## Գլուխ տասնչորսերորդ

### ՄԱՀԸ

Կան մարդիկ, որոնք ինչքան մոտենում են ճակատագրական վախճանին, այնքան սարսափում են նրանից, միջոցներ որոնում այն իրենցից հեռու վանելու, գեթ մի քանի տարի էլ, մի քանի ամիս ու շաբաթ էլ, անգամ մի քանի օր ու ժամ էլ ավելի ապրելու համար, նվաճված ժամանակամիջոցին հատկացնելով այնքան կարևորություն, որքան չէին հատկացրել գուցե իրենց ամբողջ կյանքին: Նրանք շատ են խոսում մահվան մասին, հանդիպած մարդուց անուղղակի ճանապարհով օգնություն աղերսում մահվան դեմ պայքարելու համար, թեև առերես չեն վարանում ասել, թե չեն վախենում, թե կյանքը տառապանք է այդ տարիքում: Ասում են, բայց բարձի տակ պահում դեղահատիկներ ու դեղորայքի սրվակներ:

Այդպես չէր Աճառյանը: Նա կյանքից հեռացավ մահվան գաղափարի հետ վաղուց հաշտված, անկեղծորեն հաշտված, հոգեկան զարմանալի գոհունակությամբ, պատրաստ վիճակում:

Յուրաքանչյուր մարդ մահվան հետ սակարկելիս առաջ է քաշում այն պատճառաբանությունը, թե դեռ գործեր ունի ավարտելու, ունի ծրագրեր կազմած, որոնց կենսագործումը ժամանակ է պահանջում: Տարիներն անցնում են, բայց այդ ծրագրերը չեն ավարտվում: Վերջացված գործին փոխարինում է նորը, կազմվում են նոր ծրագրեր ու դրա հետ կապված նորից աղերսանք կյանքի նկատմամբ, պահանջ, նորից դեղահատներ ու դեղատոմսեր, խորամանկ մի սակարկություն՝ անգամ Աստծո հետ:

Տարբեր էր մեծ լեզվաբանը: Այն օրվանից, որ հաշտվել էր մահվան գաղափարի հետ, հայտարարում էր, թե ավարտել է բոլոր գործերը, հասել է նպատակին: Մահվան հետ հաշտվելու գաղափարն էր ստիպում մտածելու այդպես, թե իսկապես

ավարտել էր ամեն ինչ ու պատրաստ էր մահվան: Առաջինն էր: Գուցե ոչ մի հայկաբան այնքան կիսատ գործեր թողած չմեկնեց աշխարհից, որքան Աճառյանը:

Երբ 1946 թ. մի առիթով այցելեցինք նրան և տեղեկություններ խնդրեցինք ստեղծագործությունների մասին, հաճույքով նկարագրելով իր գրած ու գրելիք գործերը, զրույցի վերջում գոհունակություն ժպիտը դեմքին կանգնեց ձեռագիր դեղերի առաջ, ձախ ձեռքը դրեց «Լիակատար քերականություն» հաստափոր կապոցների վրա ու ասաց.

– Կարծում եմ 6–7 տարուց կկարողանամ բոլոր ձեռագրերիս հետ հաշիվս մաքրել: Իմ մեծագույն հաճույքն է ձեռագրերս տպագրված տեսնել ու ազատվել այս դեղերից:

Ես նրան հարցրի՝ ինչու 6–7 տարի և ոչ ավելի: Նա պատասխանեց, թե ուղիղ այդքան է ապրելու: Այ կտեսնենք,– ասաց:

Նրա հետ ունեցած իմ զրույցը տպագրվեց մամուլում, արտատպվեց Սփյուռքում: Փափկանկատությունը չէի գրել մահվան մասին, բայց դիտմամբ հիշատակել էի 6–7 տարուց աշխատանքը ավարտելու միտքը, որը հետագայում էլ շարունակ կապում էր իր մահվան հետ, ասելով, որ իր ասած տարիներին մեռնելու է: Այն մարդը, որ նման նախապաշարումների շատ էլ չէր հավատում, այժմ ուներ այդ մտասևեռումը: Ճակատագրական մի զուգահիսություն էր, որ Աճառյանը մեռավ ուղիղ յոթ տարուց, թե այդ սևեռուն զաղափարը նախապատրաստեց մահը, դժվարանում ենք ասել, բժիշկների գործն է դա:

Վերջին տարիներին, հատկապես վերջին օրերին մեծ պահանջ էր զգում խոսել անցյալի մասին, պատմել հին դեպքեր: Դրա արդյունքն էր նրա հիշողությունների արագ գրառումը, թելադրում էր մեծագույն հաճույքով ոչ այնքան մի գիրք ավելի թողնելու ցանկությունը, որքան հոգեկան պահանջ բավարարելու համար, առաջին հերթին իրեն հաճույք պատճառելու համար:

Պետք էր տեսնել նրան պատմելիս այն դեպքերը, որոնք պատանեկական տարիներին հուզել էին իրեն: Դեմքի ինչպիսի՛ հարափոփոխ արտահայտություններ էր, որ պատմում էր, մերթ ուրախանալով, մերթ հուզվելով: Դա յուրահատուկ մի հաշվահարդար էր կյանքի հետ: 70-ամյա մի կյանքի վերապրումը մի քանի ամսում: Հոգով, երևակայությունը տեղափոխվում էր

խոր անցյալը, ապրում հին օրերի զգացումներով, հին մարդկանց շրջապատում: Տկար աչքն էլ այլևս չէր տեսնում, համարյա կույր էր, բայց տեսնում էր հոգու աչքերով, դարձել էր զարմանալի հստակատես: Պոլիսը, կախարդական Պոլիսը իր հակասական ու բարդ առօրյայով փոխադրվել էր նրա հոգու խորքը: Լսում էր հին հին երգեր, լաթերնայի նվազներ, եկեղեցական արարողություններ, որոնց հնչյունների տակ վերակենդանանում էին պատանեկան տարիների ապրումները: Նրա ուղեղը հաճախ էր զբաղվում Պոլսի Կենտրոնական վարժարանի մթնոլորտով, առօրյայով ու մարդկանցով, մասնավորապես Ե. Տեմիրճիպաչյանով, նրա ողբերգական վախճանով:

Մահվանից 7 օր առաջ կանչում է սասունցի բանասեր Վարդան Պետոյանին, որ եղել է Պոլսի Կենտրոնական վարժարանի շրջանավարտներից, այնտեղ սովորել 1915 թ.: Հարցեր է տվել նրան Կենտրոնական վարժարանի մասին, համեմատել իր ժամանակաշրջանի հետ, դեպքեր պատմել:

Հին օրերի այդ վերհուշի հետ սերտորեն կապված մի երեվոյթ պետք է համարել այն, որ պատանեկան տարիքից կրոնական կաշկանդումներից ազատ Աճառյանը կյանքի վերջին օրերին ավելի մեծ սեր ցույց տվեց դեպի եկեղեցական երաժշտությունը: Նրա ցանկությունը ծանոթներից մեկը չարաթը երկու անգամ այցելում էր նրան, դաշնամուրի վրա նվագում Կոմիտասի Տեր ողորմյան: Նրան ձայնակցում էր Աճառյանը, որ հազվադեպ էր երգել վերջին տարիներին: Ավելին՝ մեծ գիտնականը սկսել էր քնելուց առաջ աղոթել՝ հոր, մոր, կնոջ և իր համար, և որպեսզի չմոռանա, յուրաքանչյուր անգամ ազուցում էր թաշկինակի մի ծայրը, երբ չորս ծայրն էլ ազուցված էր լինում, հանգիստ քնում էր:

Այս բոլորը, որոնք նրա կենցաղի մեջ մտել էին վերջին ամիսներին, անշուշտ սերտ կերպով կապված էին տեսողության իսպառ կորուստի հետ: 1953 թ. հունվար ամսին նա գրիպով հիվանդացավ, որից հետո աչքերը ավելի վատացան: Մարդկանց ճանաչում էր միայն ձայնից, չէր կարողանում գրել, թելադրում էր, ապրելով դրա հետ կապված վրիպումների պատասխանատվությունը: Նրան այցելել էր բժիշկ Մեխիք-Մուսյանը, հայտնել, թե աչքի կատարը դեռ լրիվ չէ, մի փոքր անցք

կա, պետք է մի քիչ էլ սպասել: Ապրիլի 14-ին բժիշկը նորից էր նայել և ասել, թե արդեն կարելի է գործողություն ենթարկել և բուժել: Խորհուրդ էր տվել մայիսին անել: «Բժիշկն ասաց թե,— գրում էր Աճառյանը մահվանից մեկ օր առաջ,— մայիսի կեսին, երբ օրերը տաքանան, օպերացիա կկատարի իրենց հիվանդանոցում»:

Բայց, ինչպես ասում են, չաբաթը ավելի շուտ եկավ, քան ուրբաթը: Այդ նամակը գրելու հաջորդ օրը նրա աչքերը փակվեցին ընդմիջտ:

Զարմանալի յուրահատկություններով լի է Աճառյանի վերջին օրը: Կարծեք նա հանդիսավորապես էր պատրաստվել ընդունելու այնպիսի մի ծանրակշիռ հյուր, ինչպիսին մահն էր, ընդունել նրան վայել վեհություն, հոգով հանգիստ, մարմնով մաքուր, շորերը փոխած, սափրված: Առավոտյան սովորականի նման գնում է համալսարան, դասախոսություն կարդում պարսկերեն լեզվից, վերադառնում է տուն: Չնայած սափրվում էր ուրբաթ օրերը և շատ հետևողականորեն պահպանում էր այդ կարգը, այնուամենայնիվ այդ օրը, հինգշաբթի, գնում է սափրվելու, վերադառնում լավ տրամադրություն, ճաշում ախորժակով, ինչպես հատուկ էր նրան առհասարակ, հետո նրստում է ճոճաթոփ վրա, գոհունակությամբ ասում կնոջը՝

– Սոֆիկ, ես երջանիկ եմ, փառք Աստծո, կինս առողջ է, աղջիկս առողջ է, այսօր էլ կարողացա համալսարան գնալ և դասերս էլ հաջող անցան, հիմնական գործերս վերջացրել եմ, ապրել եմ 77 տարի, կախարդական երկու թվանշան կողք կողքի, վայելել եմ ամեն ինչ, տեսել այն օրերը, որ երազում էի: Հիմա ինձ համար ամեն ինչ վերջացել է: Սրանից հետո ամեն մի օր որ ապրեմ, արդեն ավելորդ է:

Որ նա այդ օրը բառացիկ լավ տրամադրություն մեջ է եղել, երևում է ապրիլի 15-ին իր փեսային՝ Վիլիկին գրած նամակից, ամբողջովին լցված կատակաբանությամբ<sup>1</sup>:

Այդ օրը Աճառյանը օպերայի տոմս էր վերցրել, կինն ու աղջիկը գնալու էին «Ալմաստ» լսելու: Կինը չի ուզում, Աճառյանը ստիպում է գնալ և խորհուրդ է տալիս լավ շորեր հագնել:

– Ինչո՞ւ ես ուզում լավը հագնեմ, չէ որ դու այլևս չես տեսնում:

– Ոչինչ, ուրիշները պիտի տեսնեն ու ասեն, թե Աճառյանի



կինն է:

Հագնվում է: Ըստ սովորույթյան համբուրվում են: Աճառյանը ավելի ուժգին է սեղմում կրծքին թե կնոջը և թե աղջկան: Տարօրինակ կերպով հուզվում է: Կինը զգում է այդ և հարցնում.

– Հրաչյա, այսօր ի՞նչ է պատահել քեզ, արտասովոր բաներ ես ասում, հուզված ես:

– Ոչինչ, ուրախությունից է, զնացեք, այսօր իմ ամենաերջանիկ օրն է:

Գնում են:

Տանը բացի Աճառյանից կար նաև կնոջ ընկերուհիներից մեկը՝ ուսուցչուհի Մարուսյան: Ժամը 10-ին Աճառյանը նրան խնդրում է թեյ պատրաստել, ասում է թե մինչև թեյը լինի, ինքը մի քանի բոպե կքնի, իսկ երբ Սոֆիկը վերադառնա՝ կզարթնի ու կթեյեն:

Այժմ խոսքը տանք տիկին Սոֆիկին, որը եղավ նրա վերջին երկու տասնամյակի հոգատար ընկերուհին:

– Երբ վերադարձանք,– պատմում է տիկին Սոֆիկը,– միջանցքում հարևաններից լսեցինք, որ համալսարանի դասախոսներից մեկը կաթվածահար է եղել: Մի տեսակ նախազգացում պատեց ինձ, հուզված մտա սենյակը, ոտների ծայրերին կոխելով մոտեցա Աճառյանի ննջասենյակին,– առհասարակ այդպես էի քայլում, երբ նա քնած էր լինում, որովհետև նրա քունը թեթև էր ու ամեն մի փոքր աղմուկից զարթնում էր: Մոտեցա: Հանգիստ քնած էր, ձախ ձեռքը գլխի տակ: – Հրաչյա, Հրաչյա,– չչնջացի կամաց, ձայն չհանեց, ավելի բարձր կանչեցի, պատասխան չտվավ, մոտեցա ու կամաց շարժեցի գլուխը, կարծելով, թե կատակ է անում: Գլուխը թեքվեց այն կողմը, որ հրել էի... ձչացի, ինչպես պարզվեց հետագայում, մեր գալուց 15 բոպե առաջ էր մեռել: Ձեռքին մնացել էր թաչկինակը՝ երեք ծայրը ազուցված, մեկը՝ ոչ...

## Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

### Գլուխ առաջին – ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

1. **Ս. Եփրեկյան**, *Բնաշխարհիկ բառարան*, Հոս. Ա, Վենետիկ, 1905 (տե՛ս **Թեքիրտաղ**):
2. **Հրաչյա Աճառյան**, *Կյանքիս հուշերից*, Երևան, 1967, էջ 22:
3. **Հ. և Զ. Ասատուր**, *Թանգարան հատրնտիր հատվածներու, արձակ և ոտանավոր. բարձրագույն դասընթաց*, Կ. Պոլիս, 1911, էջ 291–292:
4. **Հ. Պարոնյան**, *Երկեր*, Հոս. 3, էջ 200–205:
5. Սամաթիա թաղի մասին մանրամասն տե՛ս **Պետրոս Կարապետյան**, *Հնգադարյան Հիշատակարան Սամաթիո ս. Գևորգ եկեղեցվո*, Կ. Պոլիս, 1935:
6. 1870 թ. Սամաթիայում ստեղծվել է Սահակյան դերասանական ընկերությունը, որը Հետագայում վերանվանվել է Հայկական ընկերություն և կանոնավոր ներկայացումներ է տվել 1870–1871 թվականներին, բացառապես բեմադրելով Հայ պատմական ողբերգություններ, ինչպես Հովհ. Միրզա Վանանդեցու «Մեծն Ներսեսը», Հ. Պահլավունու «Հայ դյուցազնը», Մ. Պեչիկթաչյանի «Կոռնակը», «Արչակ Բ»-ն և այլն:
7. Այդ քայլերգը հիշողությամբ գրի է առել Աճառյանը «Կյանքիս հուշերից» գրքում (էջ 37): Հետագայում համիդյան խստությունների շրջանում արգելվել է հայրենասիրական այդ երգը, հորինվել նոր քայլերգ, որի բառերը և եղանակը տե՛ս **Պ. Կարապետյանի** «Հնգադարյան Հիշատակարան» գրքում (էջ 333):

### Գլուխ երկրորդ – ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

1. **Ա. Ալպոյաճյան**, *Մինաս Զերազ*, Գահիրե, 1927, էջ 240:
2. Նույն տեղում, էջ 241:
3. «Հանդես մշակույթի» (Հրատարակություն Կեդրոնական վարժարանի Սանուց միություն), 1953, ղեկտեմբեր, թիվ 16–20, էջ 66:
4. Նույն տեղում, էջ 65–75:
5. Նույն տեղում:
6. *Կյանքիս հուշերից*, էջ 75:

7. «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, թիվ 8, էջ 265–266:

8. Կյանքիս հուշերից, էջ 95:

9. Նույն տեղում, էջ 99:

10. Սկզբունք տրամաբանության, հորինյաց Ա. Մ. Վ. Գարագաչյան, Կ. Պոլիս, 1864:

11. Ճաշակ ոսկեղեն դպրութեան, հանդես ամսօրեայ, պատմական, գիտական, բանասիրական այլովքն հանդերձ ընդ խնամով Ա. Մատաթիայ Գարագաչեան և Հ. Գուրգենի, Կ. Պոլիս, 1887: Այս պարբերականը, որտեղ առօրյա լուրերն անգամ գրվում էին 5-րդ դարի մեսրոպյան գրաբարով, խստորեն քննադատվել է ժամանակի առաջավոր մտածողների կողմից, այդ թվում՝ Հ. Պարոնյանի, Ա. Արփիարյանի, Գր. Զոհրապի: Ունեցել է կարճ կյանք:

12. Ա. Մ. Գարագաչյան, Բնական պատմություն հայոց, ըստ նորագույն պատմական, լեզվաբանական և բանասիրական տեղեկությունաց. Մասն Ա. Նախնական ժամանակ. մասն Բ և Գ. Պատմական ժամանակ, մասն Դ. Ժամանակ անտեքստության, մինչև ի վախճան Ե դարու (Թիֆլիս, 1895):

13. Ե. Տեմիրճիպաչյանի գեղարվեստական երկերից լավագույնները (արձակ էջեր, նամակներ, քերթվածներ) լույս են տեսել հատուկ ժողովածուով, Փարիզում, 1955 թ.՝ «Նահատակ գրողներ» մատենաշարով:

14. Տեմիրճիպաչյանի այս ուշագրավ բանաստեղծությունը զգուշացել են «Մասիս» հանդեսում տպագրել Գր. Զոհրապը և Հր. Ասատուրը: Այն մնացել է հեղինակի թղթերում և լույս է տեսել հետմահու, Թեոդիկի «Ամենուն տաբեցույցում» (1911, էջ 19):

15. Հ. Սերովբե Տերվիչյան, Հնդեվրոպական նախալեզու, Կ. Պոլիս, 1885, էջ 3:

16. Կյանքիս հուշերից, էջ 105:

17. ԲՀազավազգիթան մեր օրերում (1957), սփյուռքում լույս է տեսել Հ. Ս. Տետեյանի նոր թարգմանությամբ, որպես ձեռնարկ ավետարանական ինչ որ ընկերության անդամների ուսուցման, ծանրաբեռնված ավետարանի հետ համեմատվող ծանոթագրություններով ու քմահաճ բացատրություններով: Հրատարակիչները առաջարանում նշելով հանդերձ, թե «Գիրքը հայտնություն մը պիտի ըլլա հայության համար ընդհանրապես և հայ մտավորականության համար մասնավորապես», ոչ մի խոսք չեն ասում Աճառյանի թարգմանություն մասին, հավանաբար չեն էլ իմացել փաստը: Տետեյանի թարգմանությունը կատարված է անգլերենից:

18. Կյանքիս հուշերից, էջ 105:

19. Հակոբ Մարթայանը (Գիլաչար, ծն. 1895 թ.), երկար տարիներ եղել է Անկարայի թուրքական լեզվի ինստիտուտի ղեկավար աշխատողներից: Նա այդ պատվին արժանացել է 1932 թ. Անկարայում գումարված թուրք լեզվաբանների առաջին համաժողովում կարդացած մի գեկուցման շնորհիվ,

որտեղ փորձում էր ապացուցել, թե թուրքերենը աշխարհի հնագույն լեզուներից է, պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին: Եղել է այն շարժման ղեկավարներից, որի նպատակն էր թուրքերենից դուրս գցել արաբերենն և պարսկերենն բոլոր բառերը, առհասարակ լեզվական ազդեցությունները և լեզուն մոտեցնել հնագույն վիճակին, մշակութային, գիտական կյանքի թելադրանք նոր փոխառությունների համար դիմելով եվրոպական լեզուներին, մասնավորապես ֆրանսերենին: Ժամանակակից թուրքերենի զարգացման ընդհանուր ոգին այդ էր: Մարթայանը հրատարակել է լեզվաբանական բազմաթիվ աշխատություններ, գերազանցապես թուրքերեն: Զբաղվել է նաև հայ լեզվաբանությունից հարցերով, հոգված է գրել Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» մասին («Հանդես մշակույթի», 1951, թիվ 11–12): Աշխատակցել է պոլսահայ մի շարք պարբերականների («Ազգային հիվանդանոցի Ընդարձակ տարեցույց», «Հանդես մշակույթի» և այլն):

20. Աշխարհաբար Նարեկը Մ. Գոչունյանի թարգմանությունը լույս է տեսել Կ. Պոլսում, 1902 թվականին, նախ «Մանղումեի էֆքյար» թերթում, մաս մաս, ապա առանձին գրքով, մամուլում առիթ տալով թեր ու դեմ կարծիքների, բանավեճերի: Հետագայում առավել ընտիր թարգմանություններ են կատարել Թ. Գուշակյանը (Գահիրե, 1927), Գ. Տրապիզոնին (Ֆրեզնո), Մ. Ուերանյանը (Երևան, 1960), Վ. Գևորգյանը (Հատվածներ):

21. Կյանքիս հուշերից, էջ 58:

22. Նույն տեղում, էջ 65:

## Գլուխ երրորդ.— ԴԵՊԻ ԿՅԱՆՔ

1. Լույս Փարիզի, 1957:

2. «Պանդուխտի կյանքեն» ընդհանուր խորագրով տպագրված գրական այդ ակնարկները հետագայում ամփոփվել են առանձին ժողովածուի մեջ, լույս տեսել Փարիզում, 1931 թ. «Նահատակ գրողներու բարեկամներ» մատենաշարով:

3. «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1984, օգոստոսի 20:

4. Նույն տեղում:

5. Հ. Աճառյան, «Պոլսեն Կարին» («Հացի կտոր գեյթունցուն» ժողովածու) (Նոր Նախիջևան, 1919):

6. Նույն տեղում:

7. Նույն տեղում:

8. Կարինում 1873 թ. հայ թատրոնի մասին ուշագրավ ճառ է արտասանել հայտնի հասարակական գործիչ, հրապարակախոս խմբագիր Մ. Աղաբեկյանը:

9. Մանրամասն տե՛ս **Ղ. Զարրզ**, Հուշամատյան Բարձր Հայքի – Կարինապատում, Պեյրուիթ, 1957, էջ 186–236:

10. «Հանդես ամսօրյա», 1896, թիվ 1, 3, 11, 12, 1897, թիվ 1, 9, 10, 11, 12:

11. **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, է. Հատ., Երևան, 1935, էջ 201:

12. Ե. Զարենցի անվան Գրականություն և արվեստի թանգարան, Կ. Կոստանյանի ֆոնդ:

13. Այդպիսի ոգով է գրված, օրինակ, Էրզրումցի ուսուցիչ Աբդուլբերահիմ Շերիֆ Բեյկուի գիրքը (1936), որտեղ ընդարձակ տեղեկություններ են տրվում Կարինի աշխարհագրական դիրքի, տեղադրության, անցյալի պատմության, բյուզանդական շրջանի հնությունների, սելջուկների օրով կառուցված հուշարձանների մասին, բայց ակնարկ անգամ չի արվում Հայ մշակույթի գոյության մասին: Ավելին. Հայկական մի շարք վանքեր էլ ներկայացված են որպես թուրքական կրոնական շինություններ, թյուլյակներ:

14. «Հացի կտոր զեյթունցուն»:

15. Նույն տեղում:

16. «Հայրենիք» ամսագիր, 1954, դեկտեմբեր:

17. «Հացի կտոր զեյթունցուն»:

18. Նույն տեղում:

## **Գլուխ չորրորդ – ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ**

1. Կյանիս Հուշերից, էջ 153–154:

2. Նույն տեղում, էջ 155:

3. Մելիք Ս. Դավիթ Բեկի ամենածավալուն հետազոտությունն է «Արարկիրի գավառաբարձր» («Հանդես ամսօրյա», 1900, թիվ 9, 10, 11, 12, 1901 թիվ 10, 11, 1902, թիվ 1, 2, 6, 7, 8, 12):

4. Կյանքիս Հուշերից, էջ 164:

5. Նույն տեղում, էջ 165:

6. Նույն տեղում:

7. Ա. Չոպանյանի «Անահիտ» Հանդեսի Ա թիվը լույս է տեսել 1898 թ. նոյեմբեր ամսին: Նրա մուտքը Թուրքիա արգելված էր: Հանդեսը սպառվել է հիմնականում Հայ զաղութներում և Կովկասում, որտեղ նույնպես որոշ տարիներ արգելված է եղել:

8. Ս. Գափամաճյան, Գրպանի օրացույց, Կ. Պոլիս, 1932:

9. Նույն տեղում:

10. Կյանքիս Հուշերից, էջ 184:

11. ԳԱԹ, Աճառյանի ֆոնդ:

## Գլուխ Հինգերորդ – ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾ ՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. «Բազմավեպ», 1898, Հուլիս:
2. Կյանքիս Հուշերից, էջ 138–139:
3. «Բազմավեպ», 1898, թիվ 1, 2:
4. «Բազմավեպ», 1898, թիվ 4, 6–8:
5. «Հանդես ամսօրյա», 1898, թիվ ???

6. Մ. Սերոբյանը գրել է. «Կուզենք մատնանիչ ընել սա պարագան թե պ. Աճառյանի ուսումնասիրությունը չարժեք այն բերանալի շնորհավորությունները, որով ոմանք անոր երևումը ողջունեցին»: Ապա, իր դիտողություններն անելուց հետո շարունակում է. «Իրաց այս վիճակին մեջ մենք խճրճողի մը դերը վրանիս առնելե ավելի կը բաղձանք տեսնել ճշմարտությունը և անոր հետևանք եղող բանավոր հետևություններու որոշ հանգամանքը: Ապա թե ոչ լեզվաբանական քննությունն ալ՝ սխալ ստուգաբանությունն նման՝ կրլլա սոսկ անպարարություն մը» «Բյուրակն», 1900, Հոկտեմբերի 24:

7. «Արարատ», 1898, Հուլիս:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. «Հայրենիք» ամսագիր, 1953, 12:
11. «Հայրենի փոխառյալ բառեր ու կոչ մը գավառացի բանահավաքներուն» («Բյուրակն», 1898, 20):
12. «Բյուրակն», 1898:
13. «Բյուրակն», 1898, Հուլիսի 20:
14. «Բյուրակն», 1898:
15. Մովսես Կաղանկատվացի, «Քննություն անոր գրություն ժամանակին վրա» («Բազմավեպ», 1897, 8):
16. «Բյուրակն», 1898, 30, 36, 37, 38, 49–50, 51–52, 1899, 13, 15, 18:
17. «Բազմավեպ», 1898, Հունիս:
18. «Արարատ», 1898, 11–12:
19. «Հանդես» ամսօրյա, 1953:

## Գլուխ վեցերորդ – ԹԱՓԱՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԻՆԵՐ

1. Կյանքիս Հուշերից, էջ 196:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում, էջ 197:
4. Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960:
5. «Վերջին աստիճան կոմիկ մարդ էր Կոմիտաս վարդապետը և որով-

Հետևես ես էլ սիրող եմ եղել զավելչտի, ուստի մտերմական շրջանում Հաճախ երկուսով ներկայացնում էինք Պարոնյանի «Պաղտասար աղբարի» այն տեսարանը, երբ ազգային ժողովի անդամները դռնից մտնելու համար երկար բարակ իրար համեցեք են անում: Մենք, տեսարանը ավելի զարգացնելով, ծաղրանքի բարձրագույն աստիճանին էինք հասցրել: Ընկերները շատ էին ծիծաղում և Հաճախ խնդրում էին կրկնել այդ տեսարանը («Կյանքիս հուշերից», էջ 210):

6. Կյանքիս հուշերից, էջ 224:

7. Նույն տեղում, էջ 238:

8. Նույն տեղում, էջ 240–241:

9. Առաճյանն իր դասախոսություններից մեկում, խոսելով «Թուրքերենի փոխառյալ բառերի» լույսընծայումից Հետո Ա. Չոպանյանի գրած տողերի մասին, թե որքան ծանր ու երկարատև աշխատանք է պահանջել նման մի գիրք, ծիծաղելով ասում էր. «Միամիտ մարդ, ինչ ժամանակ, պարզապես ծայրն ծայր կարդացի Արիկյանի բառարանը, որ բառերը Պոլսի հայերենում կա, կողքին նշան դրի. էջմիածին վերադառնալուց Հետո արտագրեցի դրանք, գրեցի բացատրությունները, վերջացավ»:

10. Աճառյանն իր այդ արտագրած նյութերը Հետագայում, քսանական թվականներին Երևանում հանձնել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Ն. Ակիկյանին, որն իր Հետ տարել է Վիեննա:

11. «Աշխատությունը պարունակում է 1. հայերեն ամբողջ արմատները՝ այբբենական կարգով. յուրաքանչյուրի մոտ ըստ սովորականին բառի հոլովումը, նշանակությունը, գործածության ժամանակը, նրանից ծագած ածանցները և այլն: 2. Բառի գիտականորեն ընդունված մեկնությունը, ստուգաբանությունը, համապատասխան օտար ձևերը՝ մանրամասնորեն և ընդարձակ: 3. Սկզբից մինչև 1900 ինչ մեկնություններ տրված են այդ բառի մասին, ուրիշ խոսքով՝ ստուգաբանությունաց պատմությունը, ով է եղել, որ առաջին անգամ տվել է գիտական և ճիշտ մեկնությունը: 4. Նույն արմատին գավառական ձևերը: 5. Թե արդյոք նույն բառը փոխառնված է օտար լեզուների կողմից և ինչ ձևով: Առաջին երկուքը, ինչպես հայտնի է, կա Հյուրըմանի աշխատության մեջ, բայց մյուս երեքը իսկապես իմ աշխատության արդյունքն է: 3 կետի մասին ??? ունի, բայց գոնե 4 և 5՝ զուտ իմ աշխատությունն է, կազմած և հավաքած եմ արդեն 14 բարբառով բառարան, այսպես Պոլսո, Վանա, Մշո, Ասլան բեգի, Ղարաբաղի, Սուչավայի, Ջեյթունի և այլն, որոնք բոլորը ես իմ ականջովը լսելով միայն պատրաստած եմ: Վերջինի մասին թեև իսկապես ոչ մի աշխատություն չկա, բայց ես իմ աշխատությամբ պատրաստել եմ արդեն 1900-ի չափ վրացերեն, 50-ի՝ թուրքերեն, նմանապես կովկասյան բազմաթիվ լեզուներով, ինչպես և քրդերեն, շատ փոխառյալ բառեր

Հայերենից: ... Մի բառ էլ աշխատություն ընդարձակություն մասին: Աշխատությունն ունի մոտ 1500 էջ՝ նամակի մեծությամբ էջերով: Միայն Ա տառը, որ գրաքննության ուղարկելու համար մաքուր գրված է, պատրաստ է, ունի 256 էջ, ինչ որ կազմում է աշխատության մեկ վեցերորդը» (ԳԱԹ, Գր. Խալաթյանի ֆոնդ):

12. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, է. Հատոր, էջ 202:

13. ԳԱԹ, Գր. Խալաթյանի ֆոնդ:

14. Նույն տեղում:

15. Մանրամասն տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի Հայոց թեմական Հոգևոր դպրոցի (1833–1913), Թիֆլիս, 1914:

16. Կյանքիս Հուշերից, էջ 256:

17. Պետական մատենադարան, Գ. Տեր-Մկրտչյանի ֆոնդ:

18. Այդ մասին Աճառյանը 1904 թ. դեկտեմբերի 18-ին Գր. Խալաթյանին գրում է.

18 դեկտ. 1904, Թավրիզ

### Մեծապատիվ

#### Տեր Ուսուցչապետ

Պր. Գր. Խալաթյանց.

Նամակես քանի մը օր առաջ (երկու փոստ առաջ) պատիվ ունեցա ուղարկելու Ձերդ Մեծապատվության Հասցեին՝ ապահովյալ ծրար մը «Ս. Մեսրոբի կենսագրությունը և Հայոց այրուբնները». բավական ընդարձակ աշխատություն մ'է այն, զոր կներկայացնեմ Լաղարյան ճեմարանիդ կողմն առաջարկյալ մրցանակին: Այս առթիվ հարկավոր կհամարեմ ավելցնել ի տեղեկություն թե՛

1. Աշխատությունը թեև ավելի կանուխ պատրաստած, սակայն Շուշինն էջմիածին, անկե Թավրիզ փոխադրվելու, խոլերայի պատճառով զանազան նեղություններ կրելու, բավական աստանդական կյանք վարելու պատճառով ուշանալով, ստիպված եղա տետրակն այրոց արտագրել տալ, որով առաջ եկավ այն անախորժությունը, որ տետրակը գրված է 3–4 տեսակ գրությամբ, մուտ գործեցին հոն զանազան տառասխալներ, որոնց անշուշտ Հաշտ աչքով կհաճիր նայել, բնագրի մեջ չգտնվելու պատճառով:

2. Կարելի չեղավ աշխատության մեջ մտցնել քանի մը նկարներ, որոնք տպագրության մեջ պիտի մտնեն. այսպես՝ 1. Նկար Ս. Մեսրոբի (նույն Թովիչյանի Ս. Մեսրոբի հետ). 2. Նկար Ս. Մեսրոբի (նույն Մեյլանի Ս. Մեսրոբի հետ). 3. Օշականի տաճարի նկարը. 4. Քարտեզ ճանապարհորդությանց Ս. Մեսրոբի (Փոքր Ասիա, Հայաստան, Կովկաս, Միջագետք). 5. Փոքրիկ քարտեզ Մշո գյուղերուն, ուր որոշվի Հացիկի դիրքը, եթե հարմար դատվի, կրնա ավելցվիլ նաև Մարվանիսի և Ս. Սահակի նկարները:



3. Առաջին պատճառարանությունները, այսինքն ուշ մնալու վախով՝ հապաված եմ նոր գլուխ մը «Ս. Մեսրոբ գրականություն մեջ» ուր երևան գային բոլոր այն բանաստեղծական տպավորությունները, խանդավառ գրվածները, ոտանավորներու նյութը, շարական, գանձ են, որոնք գրված են Ս. Մեսրոբի վրա: Կուզեի դնել շարական Ս. Մեսրոբա ձայնագրյալ: Նույնպես հապաված է ուրիշ համատոտ գլուխ մը «Տառերու ձևափոխությունները» Ե դարեն մինչև այժմ, երկավթագիր, նոտրագիր են:

Ահավասիկ աշխատությունս կամավոր թերությունները, որոնք լիովին լրացած են ինձ քով մնացած բնագրին մեջ: Կինդրեի որ հաճեիք ուշադրություն առնել այս հանգամանքը և այնու նայիլ աշխատությունս վրա: Ցանկալի էր ինձ լսել նաև աշխատությունս ողջամբ և փութով Ձեր ձեռքն հասնիլը, երկրորդ թե արդյոք շա՞տ են մրցակիցներս, և վերջպես երրորդ կարող պիտի լինե՞մ անոնց մեջ նկատելի տեղ մը գրավելու: Անհամբեր սպասելով Ձեր պատասխանին և միշտ հուսալով թե ներող աչքով կնայեք իմ ակամա թերությունս:

Մնամ

Խոնարհ հարգանք

ն. ծ.

Հ. Հ. Աճառյան:

19. «Հանդես ամսօրյա», 1902:

20. «Հանդես ամսօրյա», 1904, թիվ 1–9:

21. Կյանքիս հուշերից, էջ 276:

22. Մեզ հասել է Արմենուհի Աճառյանի՝ այդ թվականներին գրած մի նամակ, հասցեագրված բանասեր Հ. Տեր-Աստվածատրյանին: Ընդառաջելով վերջինիս խնդրանքին, նա կենսագրական տեղեկություններ է հաղորդել եղբոր մասին: Հակիրճ այդ գրություն տվյալները հանրահայտ փաստեր են. ճշտվում է միայն Ստրասբուրգից Կովկաս գալու ամիսը (1898, հուլիս), որ այլ աղբյուրներում չենք հանդիպում:

23. Կյանքիս հուշերից, էջ 278:

24. ԳԱԹ, Գր. Խալաթյանի ֆոնդ:

25. Կյանքիս հուշերից, էջ 304:

26. Ժամանակակիցներից մեկը հետևյալն է գրում Աճառյանի նորրայագրեղյան օրերի մասին. «Ընդհանրապես դասամիջոցներին սիրում էր աշակերտություն մեջ լինել, ամբողջովին լսողություն դառած՝ հետևում էր աշակերտների խոսակցություն, մի նոր բառ որսալու համար: ... աշխատում էր մտնել որևէ արհեստանոց, մանրակրկիտ հարցնում էր բոլոր գործիքների, առարկաների անունները... երբ մեկտեղ վեճ ու աղմուկ էր լինում, ուշադրությամբ լսում էր վիրավորական, հայհույանքի վերաբերող բառերը, ստուգում և ապա նոտագրում ձեռատետրի մեջ» («Ալիք», 1953, հունիսի 17):

27. ԳԱԹ, Գր. Ոսլաթյանի ֆոնդ:
28. Նույն տեղում:
29. ԳԱԹ, Ե. Շահազիզի ֆոնդ:
30. Կյանքիս Հուշերից, էջ 211:
31. Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Հատ. Ը, էջ 274–282:
32. Ս. Մեսրոպի և գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը: «Բանասեր», 1907, նաև արտատպություն նույն տարում:
33. Արմատական բառարան, Հտ. է, էջ 202:
34. Նույն տեղում, էջ 202–203:
35. Ե. Տեր-Մինասյանին ուղարկված նամակները տե՛ս «Պատմա-բանասիրական Հանդես», 196:
36. Մ. Շամտանճյանն այդ տարիներին Կ. Պոլսում խմբագրում էր «Ուստան» գրական եռամսյա Հանդեսը, որին աշխատակցել է Հ. Սվաճյանը:
37. «Արմատական բառարան», Հտ. է, էջ 203:
38. Նույն տեղում:
39. Տաճկահայոց Հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915), Նոր-Նախիջևան, 1915:
40. ԳԱԹ, Հ. Թումանյանի ֆոնդ:
41. Նույն տեղում:
42. Նույն տեղում:
43. Կյանքիս Հուշերից, էջ 339:
44. «Գրական թերթ», 1968, № ???
45. «Հանդես ամսօրյա», 1953:
46. Այդ նամակը, որ մինչև վերջին տարիներս անձանոթ էր բանասերների և նոր միայն տպագրվել է մամուլում, Հետևյալն է. «Սիրելի Ալեքսանդր Մյասնիկյան. այն ժամանակ, երբ դուք բանակի գլուխն անցած Մոսկվայից Ռոստով էիք արչավում, դժբախտաբար ես գործի համար ճանապարհորդեցի Բաբու: Այնտեղից Հետո ես կորցրեցի ձեր Հետքը. այժմ ուրախությունը լսում եմ, որ եկել եք Հայաստան, խոշոր պատասխանատու պաշտոնով: Ես երկու տարի է, որ գտնվում եմ Թավրիզում, իբրև ուսուցիչ. ցանկանում եմ անցնել Երևան, ինձ վախեցնում է միայն ճանապարհի անապահովությունը և երկրորդ այն միտքը, թե ինձպեսների համար կա՞ր որձ աշխատելու և թեկուզ շատ Հասարակ կերպով ապրելու: Ոնդրում եմ բարի եղևք, եթե կարելի է, Ձեր բազմազբաղ ժամերի մեջ մի ազատ բույս գտնեք, երկտողով Հայտնեք ինձ այդ մասին: Ես լավ ծանոթ եմ ընկեր Աշոտ Հովհաննիսյանի Հետ: Քանի անգամ գրել եմ նրան, բայց երևի իմ նամակները չհասան նրան, որ չպատասխանեց ինձ: Բարևներով Հրաչյա Աճառյան, Թավրիզ, 1921, մայիս»

(փաստաթուղթը պահվում է Հայկ. ՍՍՀ ՀԳՍՏԿԱ, ֆոնդ 978, ց. 1, գործ 490–9 թ. 66):

47. Տարիներ անց Աճառյանը հետևյալ կերպ է նկարագրել Հայաստան հրավիրող գրություն իր վրա թողած տպավորությունը. «Թավրիզում էի, Հայաստանի Սովետական կառավարության կողմից համալսարանի համար դասախոս էի հրավիրվել. որպիսի հրճվանքով կարդացի ոսկեգույն տառերով գրված Պետական համալսարան վերտառությունը առաջին անգամ» («Սովետական ուսանողություն», 1951, մայիսի 26):

### **Գլուխ յոթներորդ – ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1898–1923 ԹԹ.**

1. «Հանդես ամսօրյա», 1953:

2. «Հայոց նոր վկաներ» (ժողովրդական հրատարակություն, 2 հատոր), Վաղարշապատ, 1902: Հ. Մանանդյանի հետ միասին: «Հայոց նոր վկաներ» (գիտական հրատարակություն) մեկ հատորով, Հ. Մանանդյանի հետ միասին, Վաղարշապատ, 1903:

3. «Հայոց նոր վկաներ» առաջաբանը:

4. Պատմություն Հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906, էջ 3:

5. Քանի որ այդ նամակը գրավոր միակ հիշատակն է Աճառյանի ծնողների, ավելորդ չենք համարում բերել մի քանի հատված նրանից, մանավանդ, որ մեծ լեզվաբանը, որ առհասարակ արխիվ պահելու սովորություն չի ունեցել, ոչնչացրել է անգամ Մեյքի, Հյուբշմանի նման ականավոր լեզվաբանների շատ արժեքավոր նամակները, մոր նամակը պահպանել է սրբություն մոտ 60 տարի: Նամակը ուշագրավ է նաև այլ տեսակետից. ըստ երևույթին Աճառյանը խնդրել է մորից, որպեսզի իր պահանջած նյութը գրվի ոչ թե արևմտահայ գրական լեզվով, այլ պոլսահայ բարբառով: Պետք է ենթադրել, որ մայրը թեևազրել է, գրի է առել քույրը՝ Արմենուհին, քանի որ նա արդեն եղբոր հետ Պոլսում գրադվել էր պոլսահայ անգիր բանահյուսությունից նմուշներ հավաքելով և որոշ փորձ ձեռք բերել էր:

Բերում ենք նամակից որոշ հատվածներ.

1897 9/21 Հուլիս, Սարը Յար

#### **Միրելի գավակս**

Նամակիդ ուշանալուն համար արդեն կասկածիլ սկսած էինք և նամակ մը գրել դրկել կուզեինք, և ահա այդ մտմբտուկին մեջը ստացանք ուրախությամբ նամակդ: Այս անգամ գրելիք բան չունենալնուս, միմիայն հարցումներուդ պիտի պատասխանենք. հա մեյմնալ հոգդ չընես Տերն ողորմած է հարկավ ուրիշ դուռ մը կրանա»:

Ապա որդու առաջին և երկրորդ հարցերի մասին համառոտ տեղեկու-

թյուններ տալուց հետո երրորդ հարցի մասին գրում է.

«3. Ամենքնին մեկ սեղան նստած ատեննին, կտոր մը աղ կառնեն, սեղանին նստողները չը տասած կամացուկ մը սեղանին տակը կղնեն, ամենը սեղանեն ելլանեն ետքը կտանին հիվանդին բարձին տակը կղնեն, ամենը պառկեցնեն ետքը՝ կես գիշերուն կելլան բարձին տակեն աղը կառնեն, սոխախին դուռնեն կը պաղջային մինչև հիվանդին պառկած օտան կցանեն, ալըն, սիգին աղզընըզըն տատը, վերին հաստանըն սաղլըզընը, ըսելով մեկ կերպ մըն ալ կա որ, հորեն խովա մը ճուր կբաչեն մաքուր ամանի մը մեջ կլեցունեն, հիվանդին շապիկին թեեն կպատոնեն, ան ճուրին մեջը կվլան, կբամեն, հիվանդին չորս բոլորը կսրբեն, ան լաթով հիվանդին պառկած օտան մինչև սոխախին դուռները կսրբեն, 3 պատառ հաց, 3 կտոր խունկ, 3 դուղի շեքեր կղնեն ան լաթին մեջը բարձին տակը 3 գիշեր կպահեն, ատ 3 գիշերը ասնելեն ետքը, առջի գիշերը կելլան ամենը ամենը պառկեցնեն ետքը, բենճիրենն վար կնետեն, ատ 3 պատառ հացը, առեք, ձերին կշտանալիքը, տվեք հիվանդին առողջությունը, ըսելով: Ետքի գիշերը 3 կտոր խունկը կնետեն, առեք ձերին ծխելու խունկը, տվեք հիվանդին առողջություն ըսելով, յուշյունճի գիշերն 3 դուղի շեքերը կնետեն, առեք ձերին բերանուղ անուշությունը, տվեք հիվանդին աղեկությունը ըսելով»:

6. «Հանդես ամսօրյա», 1902, № 6;

7. «Հանդես ամսօրյա», 1904, № 6;

8. «Հայոց գրերը», Վիեննա, 1928, էջ 106;

9. «Վտակ», ժողովածու, 1901:

10. «Ոստան», 1911, թիվ 4:

11. Նույն տեղում:

12. Նույն տեղում:

13. Նույն տեղում:

14. «Հանդես ամսօրյա», 1902, № 6:

15. ԳԱԹ, Գր. Ոսպարթյանի ֆոնդ:

16. **Հ. Աճառյան**, Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ, Վաղարշապատ, 1902 (առաջարանը):

17. **Հ. Աճառյան**, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 18:

18. Աճառյանը մեծ հիացմունքով է խոսում Ն. Բյուզանդացու «Բառգիրք ի գաղղիբրեն լեզվե ի հայերեն» (1884) գրքի մասին, գրելով, «Հոյակապ գործ, որ ոչ թե լոկ ֆրանսերեն բառարան է, այլև հավաքածո բազմաթիվ գավառական, միջին հայերեն և նոր աշխարհիկ բառերի, առանձին վկայություններով ճշտված և ստուգաբանված են բազմաթիվ հին հայերեն անստույգ բառեր» («Արմատական բառարան», է հատոր, էջ 9):

19. «Հանդես ամսօրյա», 1914, № 2:

20. **Հովհ. Թումանյան**, Երկերի ժողովածու, Հատ. 4, Երևան, 1951, էջ 402–403;

21. Նույն տեղում:

22. ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ:

23. Հյուբըմանի գիրքը չնայած կոչվում է «Հին Հայոց տեղվո անունները», սակայն ունի պատմա-աշխարհագրական բնույթ, տեղանունների տառադարձություններով, ճշգրտումներով և մատենագրական վկայություններով: Բուն տեղանունների ցանկում (էջ 293–422) նույնպես նա զգուշացել է ստուգաբանական ենթադրություններ անելուց: Նա գրում է. «Շատ անգամ այս արդի անունները չափազանց աղավաղված են և անոնց հարազատ Հայկական ձևը ճշտելն վերջը՝ հարկ է դանոնք հին Հայերենի վերածել, որպեսզի կարելի ըլլա ստուգաբանական տեսակետն անոնց վրա դատաստան ընել, այս վերլուծումն որչափ ալ պարզ ըլլա սկզբունքի տեսակետն, սակայն մասնական դիպաց մեջ միշտ ամեն տեսակ տարակուսի տեղ կը թողու և ասով՝ անվանց քննություն ասպարեզին մեջ արդեն տիրող անստուգությունը կստվարացնե: Այս բանս երևան կելլե ամենն ավելի՛ երբ տեղվո անվան մը նշանակության կամ իմաստին վրա դատաստան կրնենք» (Հ. Հյուբըման, Հին Հայոց տեղվո անունները, Հայոց աշխարհին պատմական տեղագրության մասին ուսումնասիրություններով, 1907, էջ 289):

24. **Հ. Թումանյան**, Երկեր, Հատ. 4, էջ 404:

25. ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ:

26. «Հանդես ամսօրյա», 1920:

27. Հայագիտության դարգացման այս շրջանի մասին մանրամասն տե՛ս պրոֆ. Է. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմության» Ա հատորում, էջ 161–368:

28. Նույն տեղում:

## **Գլուխ ութերորդ – ԱՃԱՌՅԱՆԸ ԵՐԵՎԱՆԻ**

### **ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ**

1. Մանրամասն տե՛ս **Լ. Ղարիբջանյան**, Երևանի պետական Համալսարանը (1920–1930), Երևան, 1965, էջ 21–36:

2. Նույն տեղում, էջ 51–57:

3. **Ջ. Եսայանը** այսպես է նկարագրել Հայաստանյան իր առաջին տպավորությունները. «Ամեն ինչ գեղեցիկ է, ամեն ինչ հաճելի է, ամեն ինչ լավ է: Այս է տիրապետող կարծիքը անոնց, որ նոր եկեր կամ դարձեր են երկիր: Մեր հանդիպումները կարծարծեն մեր ուրախությունը: Դեմքերը ժպտուն են, գոհունակ, երջանիկ: Չենք ուզեր անդրադառնալ մեր ետևը թողուցած կյանքին,

մտեր ենք տարբեր կյանքի մեջ և բուսականները որ կանցնին ծանրաբեռն են ամեն կարգի գոհունակություններով» (**Զ. Եսայան.**— Պրոմեթեոս ազատագրված, Փարիզ, 1928, էջ 132): «Տասնյակ մը օրեր հաջորդաբար հաճախեցի Պետական համալսարանը և մեծ հաճույքով ապրեցա անոր մթնոլորտին մեջ: ... Համալսարանի պատմագրական բաժինը ունի մեր իրականություն մեջ արժեք ներկայացնող անձեր, մանկավարժներ, լեզվաբաններ, գրական և պատմական հմտություն ունեցող պատրաստված դասախոսներ, որոնց մեջ Հ. Աճառյան արդեն իսկ Հայաստանի սահմաններեն դուրս ևս կը համարվի հեղինակություն՝ իր մասնագիտության մեջ» (Նույն տեղում, էջ 190—193):

4. «Արմատական բառարան», Ա հատոր, սկիզբը:

5. Նոր ուղղագրության մասին Մ. Արեղյանի առաջին զեկուցումը լույս է տեսել էջմիածնում, 1921 թ. առանձին գրքույկով, հետագայում նա տպագրեց ավելի ծավալուն մի գիրք «Ուղղագրության ռեֆորմը» խորագրով (Վաղարշապատ, 1925 թ.):

6. Արեղյանի ուղղագրության նկատմամբ շատ ավելի ժխտողական դիրք գրավեցին սփյուռքահայ հայագետները, գրողները, հրապարակախոսները և մանկավարժները, մամուլում, մասնավորապես Մխիթարյանների «Բազմավեպում» և «Հանդես ամսօրյայում» լույս տեսան տասնյակ հոդվածներ, տպագրվեցին նաև գրքույկներ, սփյուռքահայերի փաստարկումների մեջ՝ բացի ավանդականության ոչ նվազ կարևոր հարցից, առաջ էր բաշվում նաև նոր ուղղագրության մի այլ թերությունը, այն, որ Արեղյանը ամենևին հաշվի չէր առնում արևմտահայ գրական լեզվում մուտք գործած հնչյունային որոշ երևույթներ, ասենք թուրքերենի ազդեցությամբ եկած **իւ** հնչյունը, որ անհնար է **յու**-ով արտահայտել, օրինակ, մինչև այսօր էլ չի լուծված այն հարցը, թե նոր ուղղագրությամբ ինչպես պետք է գրել **իւթիւնճյան**, **իւսկւտար** և այլ տասնյակ անուններ, որոնք մեզ մոտ գրվում են ազավաղված ձևով Յությունճյան, Յուսկյուտար: Այս անպատեհությունը սուր կերպով զգացվեց Հենց Հ. Պարոնյանի երկերի լույսընծայման ժամանակ: Վերադաս մարմինները հարկադրված եղան հաշվի առնել հայ գրականության ուրույն մի հատվածի առանձնահատկությունները և թույլ տալ, որ բացառության կարգով Պարոնյանի երկերում պահպանվի **իւսկիւտար**, **իւթիւնճյան** ձևերը: Բայց այս բացառությունը չէր կարող ունենալ իր գիտական հիմնավորումը. կամ պետք էր վերականգնել **իւ** հնչյունը, կամ օրինականացնել սխալը և գրել ծիծաղելի Յությունճյան ձևով: Եվ արդարև, Հ. Պարոնյանի երկերի լրակատար ժողովածուի (1931—1943) հատորներում պահպանվելով հանդերձ այդ բացառությունը, որը մեր բազմահազար ընթերցողների համար միայն տարօրինակ կարող է թվալ, հետագայում կյանքը մերժեց այդ ձևը, մղեց սխալը օրինա-

կանացնելու ուղին: Մեր կարծիքով արևմտահայ լեզվի առանձնահատկությունների անտեսմանը պետք է վերագրել այն իրողությունը, որ սփյուռքահայ գրականությունն ու մամուլը այնպես էլ մինչև օրս չի կարողացել անցնել նոր ուղղագրություն, չնայած 1940 թ. մասնակի վերականգնմանը:

**Գլուխ իններորդ – ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅՈՒՆԸ.  
ԱՊԱԿԵՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «Արմատական բառարանի» բաժանորդների հիշյալ մատյանը ի թիվս այլ փաստաթղթերի մեր միջոցով հանձնված է Գրականության և արվեստի թանգարանին և այժմ պահվում է Հ. Աճառյանի ֆոնդում:
2. Վաչինգտոնի կոնգրեսի գրադարանը «Արմատական բառարանը» ձեռք է բերել բանասեր Մ. Թիրյաքյանի օժանդակությամբ (տե՛ս Մ. Թիրյաքյան, «Մտքի շողեր», Հ. Աճառյանին նվիրված գլուխը (Պելյուրթ, 1965, էջ 211–231):
3. «Արմատական բառարան», Հատ. 2, էջ 1626:
4. «Արմատական բառարան», Հատ. է, էջ 3:
5. **Մխիթար Սեբաստացի**, Բառարան Հայկազեան լեզուի, բաժանեալ երկու հատորս, Վենետիկ, 1769:
6. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Հատ. Ա, Վենետիկ, 1836, Հատ. Բ, 1837:
7. Բառգիրք ի բարբառ Հայ և իտալական, Վենետիկ, 1837:
8. **Գր. Փեշտիմալձյան**, Բառգիրք Հայկազեան լեզուի, Կ. Պոլիս, 1841:
9. **Ղ. Ալիշան**, Հայրուսակ, կամ Հայկական բուսաբառություն, Վենետիկ, 1895:
10. **Նորայր Բյուզանդացի**, Բառգիրք ի գաղղիերեն լեզվի ի հայերեն, Կ. Պոլիս, 1884:
11. «Արմատական բառարան», Հատ. է, էջ 17:
12. «Հանդես ամսօրյա», 1953, թիվ 7–9:
13. «Արմատական բառարան», Հատ. է, էջ 204:
14. Նույն տեղում:
15. «Հանդես ամսօրյա», 1930:
16. «Հանդես ամսօրյա», 1953, թիվ 7–9: Աճառյանը, Ակինյանի այն դիտողություններին, թե «Արմատական բառարանի» հեղինակը լավ կաներ, եթե Երևանի և Էջմիածնի բոլոր ձեռագրերի վրա ստուգեր բառերը, փորձեր «վերականգնել հին բնագիրը ձեռագիրներու ուսումնասիրությամբ» Աճառյանը պատասխանել է. «Բայց ինչո՞ւ չստուգեի նաև Վիեննայի, Վենետիկի, Երուսաղեմի, Նոր Զուղայի, Պոլսի Անտոնյան միաբանության և այլ տասնյակ

Հազարավոր ձեռագիրների վրա: Եվ ինչու միայն այդ նորագյուտ բառերը ստուգելի և ոչ թե ամբողջ հայերեն բառերը: Լավ կլիներ անչուշտ: Բայց կարելի՞ է մի մարդուց այդքան բան պահանջել: ... Շատ գեղեցիկ ցանկություն արդարև, և այնքան գեղեցիկ, որ չեմ կարող նրա իրագործումը չխնդրել Վիեննայի միաբանությունից բազմաշխատ անդամներից» («Արմատական բառարան», Հտ. է, էջ 10–12):

17. «Մարաղայի բարբառի» վրա գրված է 1926, սակայն դա Ֆ առաջին էջի բազմացման ժամանակն է, իրականում աշխատությունն ավարտվել է 1931 թ. մարտ ամսին, ինչպես երևում է վերջին՝ 456-րդ էջում կատարված նշումից: «Ագուլիսի բարբառի» քննությունն էլ լույս է տեսել 1935 թ., բայց քանի որ նրա տիտղոսաթերթը թույլ է տրվել տպարանական տառերով տպելու, այսինքն ամբողջ աշխատությունը բազմացվելուց հետո, ուրեմն դա էլ այդ տարվա գործ չէ, հենց «Մարաղայի բարբառն» ավարտվելուց հետո է սկսվել Ագուլիսինը, ավարտվել 1935 թ.: Այս ձգձգումների պատճառը «Արմատական բառարանի» Հազարավոր էջերի արտագրումն ու ապակետիպով օրը օրին բազմացվելն էր, որ այնքան շատ ժամանակ էր խլում լեզվաբանից, կտրում նրան ստեղծագործական աշխատանքից:

18. Նահապետ Քուչակի Դիվանը, Փարիզ, 1902, էջ 64:

19. Հայերեններու Բուրաստանը, Համախմբեց և լույս ընծայեց քննական ուսումնասիրությունը մը և ծանոթագրություններով Արշակ Չոպանյան, 1940, էջ 141:

20. Կոստանդին Երզնկացի, Տաղեր. աշխատասիրությունը Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962, էջ 163–164:

## **Գլուխ տասներորդ – ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ**

1. Հ. Աճառյանի մասին դեռ շատ աշխատություններ պիտի գրվեն անչուշտ ավելի կատարյալ ու ամբողջական, քան մեր ներկա նախափորձը, բայց աստիճանաբար անհետանում են այն մարդիկ, որոնք նրան ճանաչել են մոտիկից, անձնական կյանքում, զրույցներ են ունեցել մեծ լեզվաբանի հետ, Հաղորդակից դարձել նրա մտորումներին, խոհերին: Նրանք շատ բանով կարող են օգտակար լինել հետագա սերունդներին, նրան ավելի ամբողջական ճանաչելուն: Ուստի չցանկանալով հանդերձ անձնական հիշողություններով ծանրաբեռնել այս աշխատությունը, չեմ կարող զանց առնել «Պարսկական Հատընտիրի» տպագրության հետ կապված որոշ դեպքեր, որոնք բնութագրական են այդ օրերի նրա վիճակին:

Հանդիպում էինք գրեթե ամեն օր: Ճիշտ է, դարձյալ խոսում էր, կատա-



կում, բայց նախկինը չէր: Ձէր անդրադառնում մանավանդ քաղաքական հարցերի: Ընդհանուր առմամբ մոայլ էր, կարծեք դարձել էր ավելի կասկածամիտ, Հենց որ անծանոթ մի մարդ էր հայտնվում, ընդհատում էր գրույցը կամ խոսում բացառապես լեզվաբանական հարցերի մասին, Մոսկվայից նոր ստացված պարսկերեն տառերի տեսակների, հատուկ այդ նպատակի համար պատրաստված տառարկղում դրանք դասավորելու առավել ճիշտ սկզբունքների մասին, ցույց էր տալիս, թե որ տառերը որ փոսիկների մեջ պետք է դնել, միասին ձուլված տառերը որտեղ պետք է դնել և այլն: Ասում էր, թե ինքն էլ է արաբերեն տառերի գրաչարութիւնն արել, երբ էջմիածնում տպագրվելիս է եղել «Թուրքերենն փոխառյալ բառեր» գիրքը:

Վերջապես սկսեցի շարել: Տխողոսաթերթի վրա գրված էր «Կազմեց Հ. Աճառ.»: Շարեցի լրիվ՝ Հ. Աճառյան: Սրբագրութիւնը երբ բերեց, նկատեցի, որ նորից դարձրել էր Հ. Աճառ.: Լուռ կատարեցի ուղղումը առանց հասկանալու, թե ինչու չէր ուղում Աճառյան: Առաջին մամուլի շարվածքն ու սրբագրութիւնը վերջացել էր, մնում էր տպագրելը, բայց պարսկերեն անկանոն բայերից մեկի դիմաց հայերենը չէր գրել: Դա չէր կարող արդյունք լինել չիմացութեան կամ մոռացութեան: Խնդրեցի գրել այդ բայի բացատրութիւնը, որպեսզի տպագրութիւնը չուշանա:

– Վաղը մի բան կմտածեմ,– ասաց ու գնաց: Հաջորդ օրը երբ եկավ, հիշեցրի, ասաց,– չարիւր ջրով մաքրել: – Բայց ջրով մաքրել նշանակում է լվանալ, ինչո՞ւ այդպես չգրե՞ք,– համարձակվեցի հարցնել: Ծիծաղեց: «Ուրեմն դեռ գլխի չե՞ս ընկել, միամիտ տղա, Աճառյանը Աճառ. դարձրի, էլի գլխի չընկար: Ինչպես կարող եմ լվանալ գրել, ճիշտը լուանալ ձեն է, որ իրավունք չունիմ: Ջրով մաքրելը չի մեղանչում ոչ իմաստի դեմ, ոչ էլ նոր ուղղագրութեան կանոնների: Հիմա որ գաղտնիքն ասացի,– շարունակեց,– լավ նայիր հայերեն բացատրութիւններին և տես ինչ միջոցների եմ դիմել՝ նոր ուղղագրութեան դեմ չմեղանչելու համար»:

Նրա գնալուց հետո նայեցի ամբողջ գիրքը, հաջորդ օրը ասացի,– գտել եմ, պրոֆեսոր, բոլորը նկատել եմ:

– Ի՞նչ ես նկատել:

– Օրինակ՝ «2 տառով կապեր», «3 տառով կապեր» եք գրել, որպեսզի **յերկու, յերեք** ձևերից խուսափեք:

– Է՞լ:

– «Ձայնավորներ» բառը գրել եք «Ձայնակիրներ»:

– Է՞լ:

– Ստորոգյալ, ներկա, կատարյալ բառերը կրճատ եք գրել, որպեսզի չխախտեք ուղղագրութեան կանոնը: Օմար Նայամը գրել եք **Ումար** Նայամ:

– Պարսկերենում **Ումար** էլ է կարդացվում: Է՞լ:

– էլ ոչինչ չեմ նկատել:

– Մեկն էլ կա: Թվականներին վերնագիր չեմ դրել:

Ասաց, ծիծաղեց ու գնաց: Վերջին ծիծաղն էր, որ տեսա: Մի քանի օր տպարան չեկավ: Գրքի ամբողջ տպագրությունը ավարտվել էր, մնացել էր վերջին մամուլը: Մի առավոտ գրաշարանոց մտավ թույլ ու դողդոջուն քայլերով: Տրամադրությունը վատ էր, հուզված: Բարեկեց, մի թուղթ տվեց՝ ասաց, որ լավ կլինի գրքի վերջում դնել: Պարսկերեն մի քառյակ էր: – Ի՞նչ է նշանակում,– հարցրի:

– Իմ մասին է,– ասաց ավելի հուզված ու թարգմանեց. «Գրված կմնա սեր սպիտակի վրա, որ այս գրողի համար չկա վաղվա հույս»:

Քառյակի չարագուշակ բովանդակությունը, իր վրդովված դեմքը հուզեցին և ինձ. հասկանում էի, թե ինչ էր ակնարկում: Ոչինչ չասացի: Նա էլ չխոսեց, վերցրեց ձեռնափայտը և գնաց:

Քառյակը չարեցի ու տպագրվեց գրքի վերջում, ոչ ոք չիմացավ, նույնիսկ Հետազայում այդ գրքով պարսկերեն սովորող ուսանողները չիմացան, թե ինչու էր այն դրվել «Պարսկական հատընտիրի» վերջում:

2. «Գրական թերթ», 1940:

3. Այս փաստաթղթի մի պատճենը պահվում է Աճառյանի ընտանեկան արխիվում, մեզ տրամադրել է տիկ. Սոֆի Աճառյանը, շատ այլ նյութերի հետ, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

4. Նույն տեղում:

5. «Անձնանունների բառարանի» Ա հատորը, բաղկացած 633 էջից, լույս է տեսել 1942 թ. որպես պետական համալսարանի «Գիտական աշխատությունների» 21-րդ հատոր, Բ հատորը՝ 1944 թ. որպես 24-րդ հատոր, Գ հատորը՝ 1946 թ. որպես 25-րդ հատոր, Դ հատորը՝ 1948 թ.՝ որպես 26-րդ հատոր:

6. Աճառյանի ընտանեկան արխիվում պահվում է 3 էջանոց ուշագրավ մի փաստաղուղթ՝ «Անձնանունների բառարանի» տպագրության և վարձատրությունների հետ կապված վեճի առթիվ իր բացատրությունը: Գրված է սուր, անգամ վիրավորական ոճով, բայց կուռ տրամաբանություններ: Նա կետ առ կետ հիմնավորում է համալսարանի ղեկավարի պատճառաբանությունների անհիմն լինելը: Անցնելով այն հարցին, թե համալսարանի դասախոսները պարտավոր են ամեն տարի առանց հոնորարի տպագրել 5 մամուլ աշխատություն, ասում է. «Ես համալսարանին տվել եմ, առանց հոնորարի, «Արձատական բառարանի» 6 հատոր, բոլորը 8442 էջ, որ 5 մամուլի հաշվով եթե հաշվենք, մինչև 100 տարեկանս բավ է: Բացի այս ահռելի գործից, 19-ից ավելի ուրիշ հատորներ էլ ձրիաբար նվիրել եմ համալսարանին» (ապա բերում է դրանց ցանկը):

1. «Սովետական Հայաստան» ամսագիր, 1946:

2. Փաստաթղթի պատճենը պահվում է Աճառյանի ընտանեկան արխիվում:

3. «Տեղեկագիր», 1945, № 1:

4. «Տեղեկագիր», 1945, № 1–2:

5. «Տեղեկագիր», 1948, № 1:

6. «Տեղեկագիր», 1948, № 5:

7. «Տեղեկագիր», 1949, № 1:

8. «Տեղեկագիր», 1949, № 5:

9. Փաստաթուղթը պահվում է Հ. Աճառյանի արխիվում:

10. Աճառյանի մասին գրված աշխատություններում չի խոսվում այն մասին, թե երբ է սկսել լեզվաբանն իր այդ սովորածավալ հետազոտությունը: Առկա կցկտուր տեղեկություններից երևում է, որ նա այդ միտքը հղացել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներից առաջ, Նոր-Նախիջևանում և սկսել է հավաքել տարբեր լեզուների բառարաններ ու քերականություններ: 1917 թ. Նոր տարվա օրը պաշտոնակիցներից մեկը նրան նվեր է տվել այդպիսի մի քերականություն, մեծ ուրախություն պատճառելով թե լեզվաբանին և թե նրա տիկնջը. «Երբ տուփը բացին ու գտան, որ վայրենի մի ցեղի լեզվի գրքույկն է, այնպիսի անչափելի ցնծություն մեջ ընկան, որ կարծես թե իրենց առջև մի նոր աշխարհ բացվեց» («Հայրենիք» ամսագիր, 1954, № 5): Հայաստան գալուց, «Արմատական բառարանը» հիմնականում ավարտելուց հետո նա ավելի մեծ ժամանակ է հատկացրել քերականությունը: 1935 թ. բանասեր Մ. Թիրյաքյանին գրած մի նամակից իմանում ենք, որ այդ թվին արդեն բավական նյութ հավաքել էր: «Ձեզմե ծանր խնդրանք մը ունիմ,— գրում է նա,— ձեռնարկած եմ կազմելու ընդհանուր քերականություն մը, որ միանգամայն հայերենի համեմատական քերականությունը պիտի ըլլա իր բոլոր բարբառներով միասին... Նկատի առած եմ առայժմ 85 լեզու, որոնց մեջ են ճարտներեն, չինարեն, աննամերեն, հոթենիթոթ, սվահեյլի, հինդուստանի, չուվաչերեն, ջավայերեն և այլն և այլն: Այս բոլոր լեզուներու քերականությունը կարդացած եմ: Ամերիկյան լեզուներեն ունիմ միայն կարիետ կոչված լեզուն, բայց պետք ունիմ կարդալու դեռ շատ ուրիշ լեզուներու քերականություններ, որոնք ձեռք բերել շատ դժվար էր: Կարո՞ղ եք օգնել ինձի այս գործին մեջ: Ամերիկայի մեջ վայրենիներու 400 լեզու կա, որ մեկին հասնիմ» (Մ. Թիրյաքյան, «Մտքի չողեր», Պեյրուիթ, 1965): Թիրյաքյանը ուղարկել է 10 լեզուների քերականություն:

11. Այս և նման քանի այլ մանրադեպեր գրի ենք առել դեռևս Աճառյանի

կենդանությունը, լսելով անձամբ իրենից: Հետագայում որոշ փաստեր պատմել է տիկ. Սոֆի Աճառյանը:

12. Նամակի պատճենը պահվում է Աճառյանի ընտանեկան արխիվում:

13. Պահվում է Աճառյանի ընտանեկան արխիվում:

14. Նույն տեղում:

15. Նույն տեղում:

16. **Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանություն**ի հարցերը, Երևան, 1950:

17. Նույն տեղում:

18. Նույն տեղում:

19. «Տեղեկագիր», 1950:

20. Նույն տեղում:

21. «Տեղեկագիր», 1951:

22. **Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն**, Հատ. Բ, Երևան, 1951:

23. Նույն տեղում:

24. **Հ. Աճառյան, Լիակատար քերականություն** Հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1952:

25. **Խ. Աբովյանի բառապաշարի մեջ նկատելի թիվ են կազմում թուրքերեն բառերը, արդյունք հայերի և աղբյուրների դարավոր համակեցություն**:

26. Նամակի պատճենը պահվում է Աճառյանի ընտանեկան արխիվում:

### **Գլուխ տասներկուերորդ – ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

1. «Սովետական Հայաստան» ամսագիր, 1945:

2. **Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն**, Հին շրջան, Երևան, 1961, էջ 11:

3. «Հայոց լեզվի պատմություն», Հտ. Ա, էջ 190:

4. «Հայոց անձնանունների բառարան», Հտ. Ա, էջ VII:

5. Նույն տեղում, էջ 519:

6. «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, թիվ 4, 5, 6:

7. Այդ անվան դիմաց կարդում ենք. «Սեղա անունը գործածված է մեր մեջ թ-ԺԳ դար, այնուհետև խափանվեց, նորից կենդանացավ 1912 թվից սկսած և այժմ շատ տարածված անուն է» («Անձնանունների բառարան», Հատ. 4), իսկ թե ինչու 1912 թվից՝ իմացվում է վերոհիշյալ կրճատված տողերից:

8. «Սովետական Հայաստան» ամսագիր, 1952:

9. **Է. Աղայան, Հայ լեզվաբանություն**ի պատմություն, Հատ. Բ. Աճառյանին նվիրված հատվածը, էջ 153–197:

10. **Հ. Աճառյան**, «Լիակատար քերականություն Հայոց լեզվի», Հատ. 4:

11. Նույն տեղում:

12. Քննություն Համչենի բարբառի:

13. Հիշատակված քառյակները վերցրել ենք Փարիզի «Աշխարհ» թերթից (1965, թիվ 225):

14. Օտար աղբյուրները Հայերի մասին, № 1, Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, № 2, Իրն Ի Բատուտա, Երևան, 1940, № 4, Ֆիրդուսի, Երևան, 142:

### **Գլուխ տասներեքերորդ – ԱՃԱՌՅԱՆԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐԸ**

1. Նամակի պատճենը պահվում է Աճառյանի ընտանեկան արխիվում:

2. Հիշատակված մանրադեկատի մի մասը վերցրել ենք Աճառյանի հավաքած ժողովածուից, մի մասն էլ մեր կազմած ժողովածուից, որտեղ նման անեկզոտների թիվը հասնում է հարյուրի: Դրանք ժամանակին կարդացել ենք իր մոտ, բարեմտորեն ժպտացել է և ասել. մեծ մասը ճշմարիտ է, մի քանիսն էլ ճշմարտանման:

3. Մի անգամ միասին համալսարան գնալիս հարցրեցի, թե երբեք հավատացե՞լ է Աստծո: – Ոչ մի խելոք մարդ նման ցնդարանությունների չի հավատա,– ասաց, սակայն հավատքը հավասարակշռում է մարդկային հարաբերությունները:

### **Գլուխ տասնչորսերորդ – ՄԱՀԸ**

1. Նկատի ունենալով, որ այդ նամակը Աճառյանի մտքի վերջին գրավոր բողոքումն էր, միաժամանակ այնքան բնորոշ նրա բնավորության համար, մեջ ենք բերում որոշ կրճատումներով. «Միրելի Վիլիլ ջան.

Շատ ժամանակ է, որ դու նամակ չես գրել: Դա քո հին սովորությունն է և ես չպիտի նեղանայի, եթե չլսեի, որ դանազան մարդկանց նամակներ ես գրել, այսպես՝ Վիկտոր Հյուգոյին, Շատոբրիանին, Սամարղանդյանին, Փորրմիշտ-կուշտյանին և ուրիշ շատերի: Իսկ ինչո՞ւ ինձ չես գրել: Ահա այդ պատճառով նեղացել էի և երբեք նամակ չպիտի գրեի քեզ, եթե մի նոր և կարևոր պատճառ չպատահեր:

Հունվարի կեսից հետո գրիպ ունեցա: Երկրորդ օրը հանկարծ աչքերս վատացան, առաջ բավական լավ էի տեսնում, մինչև անգամ գրում-կարդում էի, և սակայն, մի օրվա մեջ այնպես վատացան աչքերս, որ այլևս ոչինչ չեմ տեսնում:

Հայրդ՝ Գարիկը, բժիշկ Մելիք-Մուսյանին բերեց ինձ մոտ գիշերով՝ աչքս քննելու: Մեր տանն էին Հայրդ, մամադ, Լիլիկը և մերոնք՝ բոլորը: Գործիքով դիտեցին աչքս և բժիշկը ցույց տվեց նրանց, թե ինչպես աչքիս չորս կողմը փակվել է և մնում է միայն մի ասեղի ծակ: Ես էլ ուզեցի վեր կենալ՝ աչքս դիտել, բայց որովհետև աչքս չէր տեսնում, ուստի, չվերկացա: Բժիշկն ասաց, որ մի ամիս հետո էլի կգա:

Հայրդ անցյալ օրը՝ ապրիլի 14-ին, նորից բերավ բժշկին ինձ մոտ: Բժիշկը քննեց և ասաց, որ այն ասեղի ծակն էլ է փակվել, ուստի կարելի է արդեն վիրահատել:

Բժիշկն ասաց, թե մայիսի կեսին, երբ օրերը տաքանան, կվիրահատի իրենց Հիվանդանոցում:

Ոմանք կարծում են, թե Մոսկվայում ավելի լավ վարպետներ կան: Հետաքրքրվիր, եթե գտնես, ասա, որ գամ այդտեղ:

Մնդրեմ այս խնդիրքս շուտ կատարես:

Բոլորս լավ ենք, հատկապես Հայրդ, մայրդ և Լիլիկը, բոլորն էլ բարևում են քեզ:

Հասցեն նույնն է, ինչպես նաև անունս և ազգանունս:

15 ապրիլի

Հ. Աճառյան

Երևան»:

Տիկ. Ս. Աճառյանը, խոսելով Աճառյանի այդ օրվա ուրախ տրամադրություն մասին, գրում է. «Նամակը շտապ թեղադրելուց հետո նա գնաց դասախոսություն: Վերադարձին սափրված, ուրախ տրամադրությամբ մտավ ներս և ասաց.

– Մի՞թե չեք նկատում ինձ:

Նա սովորություն ուներ, ամեն անգամ վարսավիրանոցից վերադարձին, այդպես կատակել և ողջագուրվել հարազատների հետ»:

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Առաջաբան</b> . . . . .	3
<b>Գլուխ առաջին. – Մանկություն</b> . . . . .	9
<b>Գլուխ երկրորդ. – Կենտրոնական վարժարանում</b> . . . . .	20
<b>Գլուխ երրորդ. – Դեպի կյանք</b> . . . . .	48
<b>Գլուխ չորրորդ. – Արտասահմանյան տարիներ.</b> . . . . .	66
<b>Գլուխ հինգերորդ. – Գիտական գործունեությունը.</b> . . . . .	83
<b>Գլուխ վեցերորդ. – Թափառական կյանքի տարիներ</b> . . . . .	101
<b>Գլուխ յոթներորդ. – Գիտական գործունեությունը 1898–1923 թթ.</b> . . . . .	151
<b>Գլուխ ութերորդ. – Աճառյանը Երևանի պետական համալսարանի ղասախոս.</b> . . . . .	187
<b>Գլուխ իններորդ. – Գիտական գործունեությունը, ապակետիպ հրատարակություններ.</b> . . . . .	202
<b>Գլուխ տասներորդ. – Փոփոխություններ Աճառյանի անձնական կյանքում</b> . . . . .	216
<b>Գլուխ տասնմեկերորդ. – Աճառյանի կյանքի վերջին տարիները</b> . . . . .	231
<b>Գլուխ տասներկուերորդ. – Գիտական գործունեությունը.</b> . . . . .	259
<b>Գլուխ տասներեքերորդ. – Աճառյանի բնավորությունյան մի քանի գծերը</b> . . . . .	293
<b>Գլուխ տասնչորսերորդ. – Մահը.</b> . . . . .	319
<b>Ծանոթագրություններ</b> . . . . .	322

**ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

**ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆ**

**Կյանքը և գործը**

**Խմբագիր՝ Ա. Տեր-Ստեփանյան**  
**Սրբագրիչ՝ Վ. Դերձյան**  
**Համակարգչային շարվածքը՝ Ս. Գասպարյանի, Թ. Վարդանյանի**  
**Էջադրումը՝ Ա. Աղուզումցյանի**  
**Կազմի ձևավորումը՝ Գ. Սարոյանի**  
**Տեխ. խմբագիր՝ Վ. Զաղայան**

**Չափս՝ 60x84 1/16:**  
**Տպագր. 21.5 մամուլ:**  
**Պատվեր՝ 91:**

**ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1**

---

**ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52**